

ՆՈՐ ԾՐԱԲՈ

1 ՏԱՐՐ

# ՄԱՐԻՊՈ

ԳՐԱԿԱՆ, ՀԵՂԱՐԿԱԿԱՆ ԵԽՎԱԼԵՐԱՆ

ԱՄՈԱԳԻՐ

№ 4

Ա. Գ. Ե. Ւ.

1901

Թ. Ե. Ձ. I, Բ. II

Տպոգրաֆիա Գրալ. Խաչ. Տ—ոս, | Տարբան Գրաց Հրատ. Ընկերութեան  
1901

## № 4

### ԲՈՎԱՆԴԱԿԱԿԱՐՔԻՒՆ

1.	ԿիրԱԿԻ ՕՐԸ, պատմուտծք Միննա Կանչի, թարգմ. Ա. Օ.	5
2.	ՄԻ ՄՈՀ, պատմուածք Ս. Ելիսահի . . . . .	18
3.	ՄԻՐԸ ԵՒ ԾՈՎ, բանաստեղծութիւն Ալ. Մատուշեանի.	32
4.	ՄԵՆԱԿ ՄԱԼՈՒԻԿ, զրամա Գերհար Հառւակսանի, թարգմ. Ե.-Ա. . . . .	33
5.	ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ, Հրաշեալի . . . . .	47
6.	ՖՐՈՄԾՈՆ ԿՐՏՍԵՐ, մէր Ալիօնս Թորի, թարգմ. Տ. Յովհաննիսիսանի, . . . . .	58
7.	ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, Ա Հողից կարուածներ, Լիօի .	74
8.	ՀԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆԸ ԽՍ ԴԱՅԱՐ, Սկզբունք, Աս. Մալ- խասեանի . . . . .	101
9.	ՎՐԱՅ ՄԱՄՈՒԷԼ, Գ. Մ.	120
10.	ՓԵՐՈՒԱԾ ԾՍՂԱԱՆՈԹ, բանաստեղծութիւն Ապուխ- տինի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի . . . . .	134
11.	ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, առողջուպահական էտիւդ, քայ. Վ. Արծունու . . . . .	135
12.	ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՎԻ ԴԱՐՈՒՄ, Լիօի,	160
13.	Օ, ԵՐԳԵՐ, ԵՐԳԵՐ, բանաստեղծ. Նելքասովի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի . . . . .	194
14.	ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ, — 15. ԲԺ. Վ. Արծունի. «ՄԻՌ Խմիր», Լ. Ա. — 16. Տ. Տյառով, Զեմելինե վօրուստ, Ա. Ա. — 17. Բժ. Բուղուղանի գրքունիւրը, Ա. Ա. — 18. ԶԵ- թունցի. «ԶԵՅԹՈՒՆԻ անցեալին և ներկայէն», Հ. — 19. Schneider. Die Deutsche Bagdad, Ե. Թ. . . . .	195
15.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Մանդանէզդի արդիւնագործու- թիւնը մեր երկրում, Յայ. Կար. . . . .	207
16.	ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՃԵԱՐԴԱՒՑ, Հայոց ներկայացումները թիվլիսում, Վօհ . . . . .	213
17.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խվ. Խվ. Սիէդէնցօվ. — Կօմպարօմիս- ներ չը ճանաչող համարակական գործիչ, — Խվանօվիչի կարծիքը, «պետական օգտի» մտսին: — Նրա հակապատ- կերը Կովկասում, — Սնհեանաւես ազգայնական սրայքար. — Քաղաքալին ինքնավարութիւնների կազմը, — Ազգային և ազգականական ձգուում, — Ազգային տենդենցիան քա- ղաքալին գործերում անհեթեթութիւն է, — Խոկական և շինծու կուսակցութիւններ, — Քաղաքալին ինքնավա- րութեան գործունէութեան շրջանը, — Մեր բոլոր քաղ.	216

## ‘Առ շրջան 1 տարի.

Հրատ. XIII տարի

# ՄԱԿԱ

## ԳՐԱԿԵՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ԱՐՄԱԳԻՆ

No 4

U. S. E. B. L.

1901

Digitized by Google

Типографія Груз. Іздат. Т—ва. | სომერიშვ ჭავაგ პრას. ტესტების  
1901

Дозволено цензурою Тифлисъ, 17-го апрѣля 1901 г.

## № 4

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	Կիբակի ՕՐԸ, պատմուածք Միննա Կանտի, թարգմ. Մ. Օ.	5
2.	ՄԻ ՄԱՀ, պատմուածք Ս. Շինեանցի . . . . .	18
3.	ՄԻՐՏ ԵՒ ԾՈՎ, բանաստեղծութիւն Ալ. Ծատուրեանի.	32
4.	ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, զրամա Գերհար Հառւայտմանի, թարգմ. Ե.-Ա. . . . .	33
5.	ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ, Հրաչյալի . . . . .	47
6.	ՖՐՈՄԾՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Պողէի, թարգմ. Տ. Յովհաննեիսեանի, . . . . .	58
7.	ԴԻԻՂԻ ՄԱՐԴԻԿ, II Հողից կտրուածներ, Լ. Կօփ .	74
8.	ՀԱՅՈՂԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԽ ԴԱՐԻ ՍԿՂԲՈՒՄ, Ս. Մալ- խասեանի . . . . .	101
9.	ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼ, Դ. Մ. . . . .	120
10.	ՓԵՐՈՒԱԾ ԾԱՂԿԱՆՈԹ, բանաստեղծութիւն Ասլուխ- սինի, թարգմ. Կ. Կրասինիկեանի . . . . .	134
11.	ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էափւդ, բժայ. Վ. Արծունու . . . . .	135
12.	ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԽ ԴԱՐՈՒՄ, Լ. Կօփ,	160
13.	Օ, ԵՐԳԵՐ, ԵՐԳԵՐ, բանաստեղծ. Նեկրասովի, թարգմ. Կ. Կրասինիկեանի . . . . .	194
14.	ՄԱՏԵՎԱԿՈՍՈՒԹԻՒՆ,—15. Բժ. Վ. Արծունի. «Մի՛ Խմիր», Լ. Ա.—16. Տ. Տումանով, Յամելինո առօս, Լ. Ա. —17. Բժ. Յուզովանի գրքովները, Վ. Ա.—18. ՀՀ- թոնցի. «Հելթոնի անցեալէն և ներկայէն», Հ.— 19. Schneider. Die Deutsche Bagdad, Ե. Թ. . . . .	195
15.	ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Մանգանէջի արդիւնագործու- թիւնը մեր երկրութ, Յով. Կար. . . . .	207
16.	ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ, Հայոց ներկայացումները թիվլիսութ, Վօչ . . . . .	213
17.	ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իվ. Իվ. Սիշէնցօվ. —Կօմպրօմիս- ներ չը ճանաչող հասարակական գործիչ. —Կվանօվիչի կարծիքը „պետական օգտի“ մասին. —Կրա հակապատ- կերը Կովկասում. —Անհեռատես ազգայնական պայքար. —Քաղաքային ինքնավարութիւնների կազմը. —Ազգային և ազգականական ձգուում. —Ազգային տենդենցիան քա- ղաքային գործերում անհեթեթութիւն է. —Խոկական և շինծու կուսակցութիւններ. —Քաղաքային ինքնավա- րութեան գործունէութեան շրջանը. —Մեր բոլոր քաղ.	216

ինքնավ. ընդհանուր տե՛նչը. — Բուրժուազիայի ընդհանուր բնաւորութիւնը. — Աւները և չքաւոր զասակարգերի շահերը. — Զայնատութիւն մի — թէ՞ երեք ժողովներում. — Գործունէութեան որոշ ծրագիրներ և իսկական կուսակցութիւններ. — Չքաւոր զասակարգերին ևս կուլտուրական բարիքներ են հարկաւոր. — Զուբալօվի ժառանդների նույնը ժողովրդական Տան համար. — Միլիոնների նպատակաբարձր գործածութիւն. — Բարձրագոյն Հրովարտակ. — Ժող. լուսաւորութեան նոր մինիստրի հրամանը. — Կառավարչական հաղորդագրութիւն բարձրագոյն դպրոցների մասին, Ա. Ս.

220

18. ԳԱԻՍՈՒԱԿՈՆ ԿԵՍԱՆՔ. Երէցիտխանական հարցը զաւառներում. — Երա էութիւնը. — Ժողովուրդ և նրա իրաւունքները. — Օրինականութիւն. — Խնչի՞ց է առաջանաւմ ընդհարումը. — Ախալցխայի դէպքը. — «Լիազօր» քննիչ. — Երկու կողմերը. — Գամառ-Բաթիաբայի մահարձանը. — Նորհամսիջևանի Բարեգործական Ընկերութեան որոշումները. — Բազուի Մարդասիրական Ընկերութիւնը. — Բնուելիդենցիա և գաւառներ, Ա.

232

19. ԱՐՏԱՔԻՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ. Զինացիներից տուղանք արինով և ոսկով. — Մանջուրական հարցը. — Ձըլ կայ չորփիք առանց բարիքի. — Մերձաւոր Տրեելքի անշտութիւնը. — Իսամամկան կղերականութիւնը. — Հայերի կատարելիք զերը Պարսկաստանի վերածնութեան դործամ. — Պարսկահայերի դպրոցական հորցի կարմորութիւնը. — Հակակղերական ցողցեր Սպանիալում. — Աղասական մինիստրութեան առաջին քայլերը Սպանիալում. — Հակակղերական օրինագծի ընդունուելը ֆրանսիական պարլամէնտում. — Հողեփրկութեան համար հաւաքուած գումարներով առևտուր. — Դիպլոմատիական հակասութիւններ, Ա. Ս.

240

20. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻՑ. Նամակ Բերլինից,  
Ե. Թափչեանի

246

21. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿՈՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ,  
Յ. Քչարեանի

252

22. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՑՆԵՐ. Լ. Մ. Մամուրեան, Լ.

260

23. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . .

271

24. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. . . . .

278

25. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ . . . . .

279

26. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .

280

27. ՑԱՒԷԼՈՒՍԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», լէպ Լ. Տօլսովի, թարգմ.

81—112

Տովհաննիսեանի . . . . .

# Կ Ի Ր Ա Կ Ի Օ Ր Ը

Պատմուածք Ֆինլանդուի գրող

Միննա Կանտի

Երկու տարի սրանից առաջ Հէլսինգֆօրսում մնուաւ Ֆինլանդիայի առաջնակարգ կին-գրող Միննա Կանտ, որի դրամատիկական հեղինակութիւնները մեծ ընդունելութիւն են գտել ոչ միայն իր հայրենիքում, այլ և հարեւան Շվեյցիայում։ Ֆինուհի գրողի աշխատութիւնները նշանաւոր են ոչ այնքան զեղարուեստական տեսակէտից, որքան իր խոր հայեացքներով և ժողովրդի կեանքի բազմակողմանի ուսումնասիրութեամբ։ Միննա Կանտը պաշտպան է հանդիսանում բոլոր տառապեալիներին և ճնշուածներին, նամանաւանդ իրաւագուրի կանանց։ Նա գիտակական ֆէմինիստ էր։

Ուսանելի է հեռաւոր հիւսիսի այդ ևոանդուն զաւակի կենսագրութիւնը։

Միննա Կանտը ծնուել է Տամբէրֆօրս գործարանային քաղաքում 1844 թուականին։ Նրա հայրը, մի հասարակ ջուլհակ բանուոր, միշտ պարծենում էր իր փոքրիկ աղջկանով, որովհետեւ սա արդէն հինգ տարնեկան հասակում դիտեր կարդալ, երգել և նուագել։ Երբ Միննան ութ տարեկան էր, հայրը տեղափոխուեց Կուօպիո, ուր բացեց բրդեղէնի խանութ։ Այդ ժամանակուանից փոքրիկ աղջիկն սկսեց յաճախել տեղական շվեդական ուսումնարանը։ Տարրական դպրոցը վերջացնելուց յետոյ նա մանում է իւվակիւլայի ուսուցչական սեմինարիան, բայց ուսումը դեռ չաւարտած ամուսնանում է իր ուսուցիչ ի. Կանտի հետ։

Այդ ամուսնութիւնը բախտ չը բերեց նրան, ամուսինների բնաւորութիւնները շատ էին տարբեր միմեանցից։

Ի. Կանտը այդ ժամանակ մի լրագիր էր հրատարակում, որին աշխատակցում էր և իր կինը։ Այդպիսով՝ Միննա Կանտը

Ապրիլ, 1901.

մտնում է զրական ասպարէզը և իր կծու գրչով պատճառ է դառնում իր ամուսնու լրագրի խափանման։ Շուտով նրանք իրաւունք են ստանում հրատարակել մի ուրիշ լրագիր։ Դրա մէջ դուրս եկաւ Մինսա Կանտի առաջին դրամատիկական գըրուածքը՝ «Գողութիւն» անունով։

Այդ ժամանակ նրա ամուսինը մենանում է և թողնում կնոջն ու եօթ երեխաներին առանց որ և է միջոցի։ Սակայն այրին եռանդը չէ կորցնում և շարունակում է պարապել գրականութեամբ։

«Գողութիւն» դրաման արժանացաւ պարգեի «Ֆինական գրականական ընկերութեան» կողմից և շուտով երեաց բեմի վրայ, ուր մեծ աջողութիւն ունեցաւ և մտաւ մշտական բէպէրտուարի մէջ։ Զը նայած այդ աջողութեան, Մինսա Կանտը անկարող էր, իր ապրուատը հայթայթել միմիայն գրական աշխատանքի եկամուտով։ Նա ստիպուած էր հօր օրինակին հետևել և բայիլ բրդեղէնի խանութի։ Մի և նոյն ժամանակ նա ջանափութեամբ լրացնում էր իր կրթութիւնը նշանաւոր հեղինակներին ուսումնասիրելով։ Նրա բնաւորութեան կազմակերպուելու վրայ մեծ աղդեցութիւն ունէին Գէորգ Բրանդէսը, Տէնը, Սպենսէրը, Միլը, Բոկը և Տօլստոյը, որոնց մտքերը աշխատում էր տարրականացնել իր ազգակիցների մէջ։

Իր գրուածքներում նա պաշտպանում է ձնչուած ժողովրդի իրաւունքները, պաշտպանում է աղքատին հարուստի դէմ, կնոջը՝ հնացած և անարդար օրէնքների դէմ։ Այդ բոլորը գրուած է պարզ և հասկանալի ոճով։

1891 թուականին նա հրատարակեց մանր գրուածքների երկու ժողովածու, ուր անինայ և շեշտակի կերպով մատնամիշ է անում հասարակական կազմի պակասութիւնների վրայ, նըկարագրում է կեանքի դամնութիւնները, անհատի ու հասարակութեան միջև մղած պայքարը, և լոյս է հանում բանուորի ձնչուած դրութիւնը։ Իր մի քանի գրուածքներում, ինչպէս օրինակ՝ «Աղքատութիւն» և «Խանութպան կինը» վիպասանութիւնների մէջ, հեղինակը մեծ տաղանդով կարողանում է միացնել տէնդէնցիան գեղարուեստի հետ, հանդարտօրյեկտի կերպով ցոյց տալով իր վառ զգացմունքը դէպի աղքատներն ու ձնչուածները։

Մինսա Կանտի առաջին դրամաները («Գողութիւն» և «Քօնիլա») շատ թարմ են և բէալիզմից ոչ զուրկ։ Երկուսն էլ մի և նոյն պարզ բոլանդակութիւնն ունեն և վեր են առուած միջին դասակարգի կեանքից։ մինչդեռ հետևեալ դրամայով՝ «Բանուորի կինը», Մինսա Կանտը պաշտպան է հանդիսանում

բանուոր և չքաւոր դասակարգի: Այդ դրաման պատկերացնում է բանուորի կնոջ ծանր կեանքը: Մոյլ և արքեցող ամուսինը տանջում է իր կնոջը՝ վատնելով նրա աշխատած փողերը գինեաներում:

Կանտը շեշտում է այն երեսյթը, որ այդպիսի վատ ամուսիններին հովանաւորում է օրէնքը, որի համաձայն տղամարդը կատարեալ տէր է իր կնոջ ունեցածին: Դրաման վերջանում է նրանով, որ կինը չը դիմանալով չարչարանքներին՝ մեռնում է. իսկ մարդը պատրաստում է ամուսնանալ մի ուրիշ ազջկայ հետ, որին, ի հարկէ, սպասում է նոյն վիճակը: Գրուածքի մէջ թէս տէնդէնցիան շատ է աչքի ընկնում, բայց ամբողջը ջերմացրած է խորին համակրանքով և սիրով, իսկ լեզուն կենդանի է ու ազդու և հարուստ ժողովրդական դարձուածներով:

«Անբախտութեան զաւակներ» դրամայի նիւթը վերցրած է նոյնպէս աղքատ դասակարգի կեանքից, այստեղ նա պարսաւում է ընդհանուր կազմակերպութեան թերի կողմերը, որոնց չնորիշ շատ մարդիկ ստիպմամբ դիմում են գողութեան և անառակ կեանքի: «Քահանայի ընտանիք» գրուածքում հեղինակը նկարագրում է հօր և որդիերանց գաղափարների ու հայեացքների գանազանութիւնը: Մեծ պայքարից յետոյ, վերջապէս, հայրը մնալով առանց գաղափարակիցների՝ հաշտում է իր որդիերանց հետ, ընդունելով, որ նոր ծշմարտութիւնները պէտք է բռննն հների տեղը, և որ կեանքը պէտք է ազատ զարգանայ, եթէ միայն մարդ ուզում է առաջադիմել և բարդաւածել:

«Սիրվի» դրաման ներկայացնում է մի հոգեբարանական էտիւդ մի երիտասարդ և միամիա կնոջ, որ ստացած է լինում վատ և թերի կրթութիւն: Սիրվին ամուսնանում է տարիքով իրանից աւելի մեծ մի մարդու հետ, որին չէ սիրում: Նա շոտով դրաւում է մի երիտասարդով և ցանկանում է ամուսնական կապերը խզել, բայց ամուսինը արգելում է այդ, յենուելով օրէնքի վրայ: Այդ արգելքը Սիրվին աւելի է զրզըռում և նա թունաւորում է իր ամուսնուն:

Բայցի դրամաներից Միննա կանտը, ինչպէս վերև յիշատակեցինք, զրել է զանազան պատմուածքներ, որոնցից մէկի թարգմանութիւնը շվէդերէնից բերում ենք այստեղ՝ ընթերցողներին ցոյց տալու համար ֆինուհի հեղինակի ոճի և մաքերի արտայայտութեան ձեր:

## Կ Ի Բ Ա Կ Ի Օ Բ Լ

Երբ ես առաւօտը զարթեցայ, գլխումն մի ծանրութիւն էի զգում և հոգեպէս ճնշուած էի: Անկողնից իսկի չէի էլ ուզում վեր կենայ: Ամենամեծ ուրախութեամբ ես կը շարունակէի քնել, քնել նոյն իսկ մինչև կեանքիս վերջը:

Բայց իմ մշտական գլխացաւն ինձ հանգստութիւն չէր տալիս: Դա սովորական գլխացաւ չէր, և յամենայն դէպս ֆիզիկական ծագում չունէր: Հոգիս էր ցաւում ու ճնշում և՛ միտքս, և՛ զգացմունքներս: Բոլոր ոյժերս գործ դրեցի այդ ցաւը յաղթելու համար, բայց իզնւր... հարկաւոր էր համբերութիւն և համբերութիւն: Փամանակով կ'անցնի...

Ես փորձեցի ինքս ինձ ծաղրելով եռանդս բարձրացնել:

Երեկ սա մելանխոլիա է, կամ թէ այն է՝ ինչ որ գերմանացիք weltschmerz են անուանում—մտածում էի ես: Պէտք է վեր կենալ, մոռանալ, յաղթել այդ ամենը և սկսել աշխատել, այն ժամանակ առողջութիւնս էլ կը լաւանայ: Վերկացայ, լուացուեցի և հագնուեցի: Երեխերքս շուրջս աղմուկ էին բարձրացրել: Ես ցանկանում էի նրանց վրայ բարկանալ, բայց ինձ զսպեցի. աղմկավ իսազերը շատ նօրմալ և առողջարար են երեխաների համար—համոզում էի ինքս ինձ: Նրանց կոփւները ինձ աւելի էին բարկացնում, բայց ես ուզում էի ինձ մինչև վերջը զսպել:

Նեարդերս բոլորովին գրգռուել էին աղմուկից, ես

շատ շաապով սկսեցի հագնուել, կարծես, հրդեհի էի գնում: Դոզդոջուն ձեռքերով մազերս սարքեցի և վազեազ գնացի մի հեռու սենեակ, դահլիճի յետել. այնաեղ ոչ մի ձայն չէր լսում: Դուռը յետելիցս կողպեցի և աղատ շունչ առայր: Այնտեղ հանդարտ էր և խաղաղ, ես միայն իմ գրքերի հետն էի...

Վերցրի մի գիրք միւսի յետելից, թերթում և քիչ կարդում էի, բայց ես ոչինչ չէի հասկանում կարդացածիցս: Շուտով գիրքը ծնկներիս դրի և աչքերս փակեցի:

—Ա՞խ, եթէ հոգիս կարողանար քնել: Քնած ժամանակ նա չէր տանջուիլ անվերջ գրգռումներից և կեանքի դժուարութիւններից: Նա չէր յուսալ և չէր սպասիլ անկարելին: Ես չէի կարող մարտնչել տիրութեանս հետ, որ կարծես բոլորովին ջարդել էր ինձ ինչպէս մի քարիր ծանրութեամբ: Եւ դարձեալ հին, անիծուած հարցեր էին գալիս միտքս:

—Ինչո՞ւ համար ենք մենք այստեղ և արդեօք ի՞նչ նշանակութիւն ունեն մեր ձգտումները: Ի՞նչ դուրս կը գայ մեր աշխատանքից, տանջանքից և ցանկութիւններից: Եւ յանկարծ այդ ամենը անմիտ, դատարկ բաներ լինեն: Մարդկային կեանքը այնքան կարծ է, և ոչ մի ջանք չէ կարող նրան երկարացնել... և ինչի՞ համար: Ապրել՝ ուրախութեան, երջանկութեան համար: Բայց ի՞նչ է ուրախութիւն, ի՞նչ է երջանկութիւն. արդեօք կան այդպիսի բաներ...

Եթէ մեր երկրային կեանքը մեր յաւիտենական էութեան մի մասն է և եթէ մեր մէջ կայ անմահ հոգի, որտեղից է այս թուլութիւնը և հոգեկան ոյժերի պակասութիւնը: Եւ որտեղից է մահուան անհրաժեշտութիւնը, որի առջև մենք սարսափում ենք և ուժասպառ լինում և որ մթնացնում է մեր կեանքը:

Ո՞հ մահը...

Յանկարծ, կարծես, մորքերս կանգ առան և հոգիս լցուեց անհուն սարսափով: Տէ՛ր Աստուած, ի՞նչ տան-

ջալի է այդ սարսափը: Ինձ թւում էր, թէ ես կորած եմ, թէ արդէն մօտենում է ամեն բանի սարսափելի վախճանը, և ուղեղս բոլորովին մթնեց: Այդ ժամանակ եկեղեցու զանգի ձայները լսուեցին: Զայնի ալլքները գալիս լցնում էին սենեակս և ուշադրութիւնս գրաւում: Ես պատուհանից դուրս նայեցի. մարդիկ մոտախոհ, շտապով եկեղեցի էին գնում:

### ԵԿԵՂԵՑԻ:

Այն, ես էլ պէտք է գնամ այնտեղ: Ի՞նչպէս եմ ես մոռացել: Երեսի գժուել էի, չէի հասկանում հիւանդութիւնս և այդ պատճառով մոռացել էի այդ հիւանդութիւնը բժշկելու միակ միջոցի մասին: Հիմա յանկարծ ամեն բան պարզուեց: Հիմա հասկանում եմ, որ հոգուս խորքում կայ մի զգացմունք, որի մասին պէտք էր խնամք տանել, որ առանց խնամքի մեծ տանջանքներ է առաջացնում և տանում դէպի ժամանակակից ոգու հիւանդութիւնները: Եւ միթէ կարող է ուրիշ կերպ լինել: Մենք մոռանում ենք կենաց աղբիւրը և ծարաւ հոգին տանջում է, չիմանալով ինչով յագեցնել իր ծարաւը: Մենք չենք թոյլ տալիս նրան դիմել այդ աղբիւրին իր միակ ճանապարհովը, որ հաւատն է:

Շտապով հագնուեցի, վերցրի աղօթագիրքս և դուրս եկայ: Թարմ, պայծառ առաւօտ էր: Եկեղեցու սպիտակ պատերը փայլում էին առջևս: Երբ ես մտայ, օրգանը արդէն դղրդում էր և աղօթողները սաղմոս էին երգում:

«Լեր իմ Աստուած, ապաւէն և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես: Աստուած իմ, փրկեա զիս 'ի ձեռաց մեղաւորի, 'ի ձեռաց անօրինի և անիրաւի»:

Սիրտս մեղմացաւ: Այդ խօսքերը, կարծես, մի տաքութիւն և ուրախութիւն մտցրին սրտիս մէջ: Ես նըստեցի նստարանի վրայ, պատրաստ լսելու ժամասացութիւնը, ինչպէս մի փրկութեան լուր:

Քահանան սեղանի առջև կարդաց ապաշխարան-

քի աղօթքը Ես մեծ ուշադրութեամբ լսում էի ամեն  
մի խօսք. աղօթքի պարզութիւնը և վսեմութիւնը հիա-  
ցնում էր ինձ: Ամեն մի խօսք մտնում էր սիրտս և ինձ  
շարժում: Այդ բոպէին Ես բոլորովին երջանիկ էի և լիո-  
վին պատրաստ՝ ընդունել այդ ճշմարտութիւնը, դէպի  
որը Ես ծարաւ էի զգում:

Ապա քահանան բարձրացաւ ամբիոն և սկսեց խօ-  
սել մեղքի մասին: Նա պատմեց, թէ ինչպէս Աղամը և  
Եւան ընկնելուց առաջ կատարեալ էին և թէ ինչպէս  
մեղքը նրանց վայր ձգեց...

Քարոզի այդ սկիզբը ինձ սառցեց: Ի՞նչ հարկա-  
ւոր էր այդքան հին և հեռաւոր օրինակները վերցնել,  
երբ առօրեայ կեանկը անթիւ օրինակներ է տալիս  
մեզ: Բայց երեխ եկեղեցական սովորութիւնները ստի-  
պում են նրան այդպէս խօսելու, —ասացի Ես ինքս ինձ.  
շարժէ արտաքին ձեւերին այդքան նշանակութիւն տալ,  
երբ էութիւնը նոյնն է մնում:

Ես սպասեցի շարունակութեանը և լսում էի առա-  
ջուայ պէս ուշադրութեամբ:

Բայց, աւաղ, քահանայի խօսքերը մէկ ականջովս  
մտնում էին, միւսովը դուրս գալիս: Նրա ասածը միայն  
խօսքեր էին, ըմբռնելու և ընդունելու ոչինչ չը կար...

Ես սպասում էի գլխաւոր մտքին: Քարոզի նիւթը  
վերաբերում էր Քրիստոսի գալստեան:

Աւետարանում կարդացի.

«Թո՞ղ սէրն անկեղծ լինի. Երես թեքեցէք շարու-  
թիւնից, յարեցէք ճշմարտութեան, եղէք եղբայրասէր,  
վարուեցէք միմեանց հետ քնքութեամբ»:

Այդ խօսքերի մէջ կար խաղաղութեան, հաշտու-  
թեան և եղբայրութեան ոգի: Իսկ քարոզչի խօսքերը  
այդ ոգով չէին ասուած:

—Հաւատացէք, Քրիստոսի գալուստը մօտենում է:  
Եւ այն ժամանակը ընտրեաները երջանիկ կը լինեն.  
Իսկ աշխարհիս փառք ունեցողներից շատերը, որոնք

հիմա զուարճանում են, կ'ընկնեն յաւիտենական կրակը, ուր կը լինի լաց և ատամների կրճոոց Այստեղ նրանք վայելում են իրանց կարճատև զուարճութիւնները, այստեղ կը սկսուեն նրանց համար անվերջ տանջանքներ։ Ուստի զգո՞յշ լինենք այդպիսիների հետ, չը մօտենանք նրանց, որպէս զի չը պղծուենք Աղաչենք Տիրոջը, որ նա շուտով դայ, փրկէ մեղ և զատէ նրանցից...

Քարոզը բառ առ բառ չեմ յիշում, բայց միտքն այդ էր։ Իմ բարեպաշտ տրամադրութիւնը և տաք զգացմունքս անցան։

Մի առժամանակ անտարբեր լսում էի։ Սիրտս մի բարկութիւն մտաւ և մի վառ ցանկութիւն հակածառելու այդ քարոզչին, որ աղաւաղում էր Քրիստոսի պայծառ և պարզ վարդապետութիւնը։ Քահանան աղօթում էր՝ մեղաւորներին անմեղներից շուտափոյթ զատելու համար։ իսկ ես կ'ասէի։

—Տէր, թող Քո գալուստը կայանայ այն ժամանակ, երբ մեր մոլորեալ եղբայրները և քոյրերը ճշմարտութեան ճանապարհը կը գտնեն։

Ողորմիր նրանց, որպէս զի ոչ մէկը չը կորչէ յաւիտեան։

Իսկ արդարներին ես կ'ասէի.

—Գնացէք, ամբողջ աշխարհիս երեսին դժուկ մոլորեալներին և քարոզեցէք ճշմարտութիւն։

Մի խնայէք ձեր ոյժերը, որովհետեւ եթէ դուք արդար էք, դուք Քրիստոսի այդումը ջանասէր բանուոր պէտք է լինէք։

Բայց... ինչ հետեւանք կ'ունենար իմ այդ կոչք։ Ինձ խելագարի տեղ կ'ընդունէին, կը ծաղրէին, կը պատժէին՝ եկեղեցու մէջ աղանդ տարածելու համար։ Ինձ վրայ մատով ցոյց կը տային, ասելով. «Ինչո՞ւ որան խելագարանոց չեն տանում»։

Եւ գուցէ նրանք արդար լինէին։ Զէ որ ուրիշները բոլորովին հանգիստ նստած էին եկեղեցում և ոչ մէկում չէր երևում գրգռանք կամ կասկած։ Ժամասա-

ցութիւնից յետոյ նրանք կը ցրուէին բաւականութեամբ, ամեն մէկը հաւատացած լինելով, թէ հէնց ինքն էլ ընտրեալներից մէկն է, որոնց համար արքայութեան դռները բաց են։ Միայն ես էի տաճջում՝ խաղաղութիւն և հանգստութիւն շը գտնելով...

Աչքիս առաջին ամեն բան խառնուեց։ Քահանայի ձայնը կարծես թէ հեռուից լսուած մի դպրոց էր, եկեղեցում շարժուող ժողովուրդը մեռած մարմիններ էին երևում։

Ես ձեռքերս սեղմեցի երեսիս և վախեցած կորացայ ազօթագրքիս վրայ։ Ի՞նչ է կատարւում ինձ հետ։ Ինչու է արիւնը այդքան արագ շրջում երակներում։ Ինչու մի ինչոր բան խեղդում է ինձ և ես, կարծես թէ կրակի մէջ այրուելիս լինէի։ Ո՞րտեղից են այս փոթորկալի, տանջալի զգացմունքները, որոնց առջել ես թոյլ եմ։ Զէ որ ես հէնց այսօր զգում էի կեանքի ոչնչութիւնը։ Ուրիշներն ինձնից խելօք են. նրանք այդ չեն մոռանում և բաւականանում են քչով...

Այդ պատճառով նրանք բախտաւոր են և նրանց հաւատը իմ հաւատիցը հաստատ։

Իմ ուրախալի հանգստութիւնից մի նշոյլ էլ չէր մնացել. ամեն բան անհետացել էր, կարծես, թէ քամին էր տարել։ Երեւի ես սապնի պղպճակի յետեւիցն եմ վաղել։ Հիմա նա պայթեց եւ մնաց միայն դատարկութիւն եւ ափսոսանք անհետացած իղձերի համար։

Այժմ ես հաւատացած էի, որ կեանքի աղքիւրը այստեղ չէր բղխում, որտեղ ես նրան որոնում էի։ Արդեօք կը գտնեմ այդ աղքիւրը մի ուրիշ տեղ։

Տաք արտասուրքները թրջեցին երեսս։ Ես լալիս էի անմիսիթար։ Մի և նոյն ժամանակ ես զգում էի, որ մօտս նստած մարդիկ ինձ նայում էին զարմացած և ինձ խղճում։

Թո՞ղ նայեն, —մտածում էի ես լալով։ Բայց յանկարծ մի բարկութիւն եկաւ վրաս։ Ինչու են նրանք հետաքրքրութեամբ ինձ նայում։ Ի՞նչ եմ ես նրանց

համար։ Ես նրանց զգացմունքները չեմ ճանաչում, նրանց հաւատը չեմ հասկանում, նրանց յոյսերը ինձ համար օտարոտի են։ Նրանց ուրախութիւնը և տիրութիւնը ինձ չեն դիպչում։ Մենք զանազան աշխարհների ենք պատկանում։ Ուստի թող նրանք թողնեն ինձ հանգիստ, թող աղատեն ինձ իրանց կարեկցութիւնից։

Բայց հետաքրքիր հայեացքները հետևում էին ինձ... Տանջուած էի, այլ ևս չէի կարողանում տանել այդ բոլորը և վերկացայ, հեռացայ քարողի մէջտեղը։

Փողոցում ես ինձ բոլորովին մենակ զգացի։ Տէր իմ, ի՞նչ մենակութիւն։ Մարդիկ մօտովս անցնում էին, բայց նրանք ինձ համար օտար էին։ Նրանց հայեացքներումն էլ ես նշմարում էի այն՝ ինձ համար անդուրեկան հետաքրքրութիւնը։ Հոգիս ուզում էր փախչել մարդկութիւնից և հեռանալ անապատ։ Իսկ բնութեան խաղաղ գեղեցկութիւնը աւելի էր զգալի այսօր ինձ համար, քան երբ և իցէ։

Լիճը, ձմեռնային ծածկոցով պատած, ցածումը երեսում էր բոլորովին ճերմակ ու փայլուն։ Լեռնոտ և անտառով ծածկուած ափերը շրջանակ էին կազմում նրան։ Միւս ափի վրայ երեսում էին խրճիթներ։ Քիչ հեռու ջրազացն էր կանգնած։ Հեռուից երեսում էր լեռների շղթան։ Եւ այդ ամենի վրայ փայլում էր արեւը, սփռելով իր ուրախ և պայծառ ծառագայթները...

Մի առժամանակ ես կանգ առայ և դիտում էի այդ տեսարանը և քիչ-քիչ տիսրութիւնն ու գառնութիւնը ցրուեցան։ Ինձ թւում էր, թէ բնութիւնն ասում էր.

—Աստուծու տիեզերքը մեծ է։ Նրա տարածութեան մէջ ցրուած են բազմաթիւ աշխարհներ։ Ի՞նչ կը նշանակեն առանձին անհատների մոլորութիւնները մի փոքրիկ երկրագնատի վրայ, եթէ ամեն ինչ ընթանում է մի անդամից նախագծած շաւզով։ Ճշմարտութիւնը

չի կորչի, ինչքան էլ մարդիկ աղաւաղեն նրա արտաքին ձևերը:

Ինչպէս արեւը լուսաւորում է աշխարհը, այնպէս էլ ճշմարտութիւնը լուսաւորում է բոլորին, նոյն իսկ և նրանց, որոնք չեն ըմբռնում ճշմարտութիւնը: Իսկ եթէ պատահում էլ է մուլթ գիշեր, նրան անփոփոխ կերպով հետեւում է արշալոյսը: Եւ այսպէս գիտելով բնութեան քնքոյց գեղեցկութիւնը, ես հանգստացայ, ինչպէս մի լաց լինող երեխայ հանգստանում է մօր կրծքին:

Անհետացան վհատութիւն, վիշտ, տրտմութիւն ու դառնութիւն: Անհետացաւ ըարկութիւնս դէպի բնութեան համբերութիւնը: Բնութեան համար հազար տարիները մի և նոյն նշանակութիւնն ունեն, ինչպէս մի օր, և մի օրը նոյնն է, ինչ որ հազար տարին:

Չայներ լսեցի: կարծես երազիցս արթնացայ և յետ նայեցի: Իմ յետեւ երեւում էին քաղաքի գոները, փողոցները և հրապարակները. ինձ ամենից մօտ էր մեծ երկյարկանի հիւանդանոցը: Երկինքը հանդիսաւ էր, բայց սկսել էր մոխրագոյն ամպերով ծածկուել. իսկ երկրի վրայ մարդկային կեանքը եռում էր բազմատեսակ և բազմագոյն: Հարեւան բակից լսում էին սաղմոս երգողների ձայներ, իսկ մի ուրիշից կոռուզների և ազաղակների ձայներ: Այնտեղ մի քանի հարբած մարդիկ կուռում էին, իսկ նրանցից ոչ հեռու մի քանի երեխաներ խաղում էին առանց ուշադրութիւն դարձնելու: Փողոցում կանգնած էին մի խումբ զարդարուած աղջիկներ, որոնք ուրախ-ուրախ զրոյց էին անում: Նրանք մէկ մէկու ականջին փսփսում էին, ծիծաղում և դարձեալ փսփսում... Անշուշտ նրանք պատմում էին քաղաքի վերջին նորութիւնների եւ իրանց սիրահարների մասին...

Ահա անկիւնից երեւացին մի քանի երիտասարդներ՝ մերկ ձիեր հեծած: Նրանք արագութեամբ գնում էին սարի գլխից դէպի լիճը:

—Ճանապարհ, —բղաւում էին նրանք:

—Տէր, ողորմի՞ր, —բացականչեցին աղջիկները եւ փախան փողոցի միւս կողմը։ Նրանք շպրտեցին մի քանի բարկացած խօսքեր. բայց տղերքը այնքան էին գըրաւուած, որ չը լսեցին։ Զէ որ լաւ է՝ կեանքում գոնէ մի անդամ առաջ գնալ, ոչ մի խոչընդուռ չը ճանաչելով, մինչեւ անդամ լինի այդ... ձի հեծած։

Բոլորովին ուրիշ տեսք ունէին այն մարդիկ, որոնք գաւառական հիւանդանոցից էին գուրս եկել։ Մի միջին հասակի մարդ չորեքթաթ տալով գուրս եկաւ հիւանդանոցից եւ նոյնպէս չորեքթաթ տալով սանդուղներից ցաւ իջաւ. այնտեղ մի ուրիշ հիւանդ օդնեց նըրան նստել սահնակ։ Անդամանրոյժը գանդատում էր իր հիւանդութեան մասին, որ գլխաւորապէս ոտներին էր դիպել. երբ ձիու սահնձը դրեցին ձեռքերում, նա մենակ գնաց։

Ուրիշ հիւանդներ խմբով էին գուրս գալիս։ Այստեղ կային և՛ ծերունիներ, և՛ միջին հասակի մարդիկ, և՛ անչափահասներ, և՛ մանուկներ, որոնց մայրերը իրանց ձեռքերի վրայ էին տանում։ Մի քանիսը սահնակով էին տուն գնում, միւսները ոտով էին քայլում։ Ամենից շատ աչքի ընկաւ մի գունատ կին, որին մի տղամարդ զգուշութեամբ կոնից բռնած էր տանում—երեւի ամուսինն էր։ Նա այնքան զարհուրելի էր, որ խաղացող երեխաները յանկարծ լուցին, հէնց որ նրան տեսան. իսկ փսփսող աղջիկները մոռացան իրանց խօսակցութիւնները, երբ նա դանդաղ քայլերով անցնում էր նրանց մօտովը։

—Տէր իմ Աստուած—ասաց նրանցից մէկը։ —Ահա մեր կեանքը. մի շաբաթ առաջ ես այս կնոջը տեսայ բոլորովին առողջ, թարմ ծաղկի նման, իսկ հիմա ինչ զարհուրելի է նա։

Ես էլ էի հայեացքովս հիւանդին ուղեկցում, մինչեւ որ նա մտաւ մի տուն, իսկ յետոյ աչքերս դարձրի դէպի հիւանդանոցը։ Մահը եւ տանջանքը բռն էին դրել այդ շինութեան մէջ. բայց առջեւո միայն երկու շարք պա-

առուհաններ էին երեւում, որոնք ոչ մի բան չէին արտաշյայտում։ Պատուհանների վրայ միայն երեւում էին պարզ, ճերմակ, զարդարանքից զուրկ վարագոյրներ։ Փողոցում էլ հիւանդ չը մնաց։ Հիւանդանոցից դուրս եկաւ ինքը բժիշկը եւ կանգ առաւ սանդուխների վրայ։ Ինչի մասին էր նա մտածում։ Գուցէ նա պարզ օդում շունչ էր առնում, հանգստանում։ Հիւանդների յոգնեցուցիչ ընդունելութիւնից յետոյ։

Այս, այդ մարդը կենդանի գործով էր զբաղուած։ Նա չէր մերժում, չէր անիծում, չէր արհամարհում տկարներին, այլ նրանց պաշտպան էր։ Նա այդպիսիներին որոնում էր, բուժում եւ բժշկում, ինչքան կարելի է։ Նա կեանքի դաշնակիցն էր մահուան դէմ, եւ նա չէր վախենում մաքառելուց, մինչեւ որ մահը չը խլէր իր զոհը նրա ձեռքից։

Իսկ ո՞րտեղ են մեր հոգեւոր բժիշկները։ Ո՞րտեղ են նրանք, որոնք կարող են որոնել եւ մխիթարել հոգեւափէս տկարներին, առանց մերժելու եւ դատապարտելու։ Զէ որ այդպէս տկարների թիւը մեծ է։ Աշխարհս լի է տանջանքներով եւ տկարութիւններով... բարոյական տանջանքներով։ Ո՞րտեղ են բժիշկները։

Այս, ո՞րտեղ են նրանք մեր օրերում։

## Մ Ի Մ Ա Հ

Ո՞վ չէր ճանաչում սվազցի Գրիգորին. ում չէր յայտնի նրա կեանքը, նրա խելքը, նրա հմտութիւնը: Փորձառութեան մի անհուն, անսպաս աղբիւր էր նա, որից օգտում էին թէ իր համադիւղացիք և թէ անխտիր բոլոր պանդուխոները: Դա մի բարձրահասակ, յաղթանդամ տղամարդ էր՝ մօտ յիսուն տարեկան, համակրելի թուխ գէմբով, մեծ, խոշոր աչքերով, խիտ յօնքերով և լայն ճակատով: Զարմանալի յիշողութեան տէր՝ նա պարզ և անպաճոյն, բայց գրաւիչ ոճով կը պատմէր իր տեսածուածները, իր զլսին եկածւանցածները մանրամաս դետայներով: Խոկ ինչեր չէր նա տեսել, ինչեր չէր նա քաշել իր արկածով լի երկար ու ձիգ փոթորկալի կեանքի ընթացքում:

Դեռ երիտասարդ, գրեթէ նորապսակ, հազիւ չորս տարի անցած՝ Գրիգորը թողնելով հայրական օջախը, ձեռքն առաւ պանդխտական գաւազանը և վարդագոյն յօյսերով քայլերն ուղղեց գէպի Պօլիս: Անզրագէտ, անարհեստ՝ ինչ կարող էր անել, ինչ գործ, ինչ զբաղմունք պիտի նա գտնէր Բօսֆորի ափերում: Նա ստեղծուած էր, կարծես, միմիայն համալութեան համար. նրա զօրեղ կազմուածքը, անչափ ոյժը բնութիւնը օժտել էր նրան միմիայն հակեր կրելու համար: Եւ Գրիգորը զիմեց այդ աշխատանքին: Նա բանում էր նաւահանդստի վրայ: Ահազին բեռը նրա համար մի խաղալիք էր, կարծես վազելով, թոշկոտելով էր տեղափոխում մէկ տեղից միւսը: Նրա ոյժի համբաւը շուտով տարածուեց ամենուրեկը, նորեկ պանդխտի անունը արդէն յայտնի էր համարական աշխարհին:

Գրիգորը Պօլիս մնաց ութը տարի: Համեստ, պարկեշտ, ժուժկալ կեանք վարելով, նա իրան զրկում, իր բնորանից կըտրում, փարայ փարայի վրայ զնելով՝ մի փոքրիկ գումար էր շինում, տուն յղում՝ իր հօրն ու մօրը, որոնց խնամքին ու հըսկողութեանն էր յանձնուած նրա երիտասարդ, կայտակ ամուսինը և երկու փոքրիկ զոււակները: Գրիգորը օրեր էր համարում՝ թէ երբ պիտի վերադառնայ հայրենիք, զրկէ, համբուրէ,

փայփայէ չարաճճի սիրելիներին։ Գիշեր-ցերեկ նրա հոգաը, նրա միտքը, նրա սիրտը այն վոդրիկների հետ էր։ Նա յիշում էր նրանց նոյն իսկ այն բուլիներին, երբ ահազին բեռան տակ՝ թիկունքը կորացած, դէմքը կարմրած, աջքերը ուռած տնքում էր, գետինը թրջում ճակատից առաս հոսող քրտինքով։ Իր սիրելիների պատկերը նոր ոյժ, նոր եռանդ էր տալիս և նա անտրտունջ քաշ էր տալիս համալական չարքաշ կեամկը։

Գրիգորի նպատակը, նրա իդէալը—մի փաքրիկ գումար շինել, ապա վերադառնալ իրանց զիւղը։ Դատարկ ձեռքով նա ինչ երեսով կարող էր տուն դառնալ։ Իսկ այդ գումարը նա չէր կարողանում յետ զցել։ Զը նայած որ նա կրկնապատկում էր իր աշխատանքը, յաճախ բանում էր և գիշերները, բայց և այնպէս բան չէր գոյանում։ Ի՞նչ անել։

Գրիգորը լսել էր, նրան շատ էին պատմել, որ հեռու՝ ովկիանոսի միւս կողմին աշխատանք աւելի շատ կայ և աւելի լաւ է վարձատրում։ Իր հայրենակիցներից շատերն էին այստեղ գնում. քանից առաջարկել էին իրան ևս գնալ, բայց Գրիգորը միշտ մերժել էր. ոչ, նա պէտք է տուն վերադառնայ։ Իսկ վերագանակն էլ նրան չէր յաջողւում... Եւ Գրիգորն ստիպուած ընտրեց Ամերիկայի ճամբան։

---

Յուսախար, իղձը չիրագործուած, ցաւով և վշտով թողեց նա Պօլիսը։ Նրա սիրտը կծկւում էր, որ չը կարողացաւ հայրենիք դառնալ՝ իր ծնողների, իր ընտանիքի, իր սիրելիների մօտ, որոնցից նա այժմ կրկին հեռանում է, հեռանում է տասնեակ հազար մղոններով, և ո՛վ գիտէ քանի տարի, քանի ժամանակով...։

Ծանօթ նաւերից մէկի մէջ նա վարձուեց իբրև հասարակ մշակ և այդպէս հասաւ Մարսէլ, ուր նրան սպասում էին շատ նեղութիւններ։ Օրեր էին պատահում, որ նա քաղցած էր մնում. բայց և այնպէս նա չէր ընկնաւում, չէր վհատում։ Ամերիկա գնալը հեշտ չէր, փող էր հարկաւոր, այն էլ մեծ փող. որտեղից գտնէր այդ գումարը խեղճ պանդուխտը, որ Պօլիսը մեկնելիս իր վերջին փարան անդամ տուն էր ուղարկել։ Երկար ու ձիգ օրեր այս կամ այն կողմ թափառելուց յետ, Գրիգորին վերջապէս յաջողւում է ծանօթ նաւաստիների օգնութեամբ մըտնել մի նաւ, որ տաւար պիտի վորսադրէր Նիւ-Եօրք։ Գրիգորին վարձում են որպէս տաւարապահ, տաւարապահ չողենաւի վրայ։ Վարձը՝ իր փոխադրուելը—Մարսէլից Նիւ-Եօրք։ Թէև այն նաւը վեց շաբաթից հաղիւ պիտի հասնէր, բայց ի՞նչ արած, ուրիշ հնար չը կար։

Գրիգորը համնում է Ամերիկա՝ պանդուխտ և պրօլետարիատ ժողովրդի այդ աւետեաց նոր աշխարհը. համնում է նա Նիւ-Եօրք և հանդիպում է նոր գծուարութիւնների, նոր և անծանօթ թշուառութիւնների: Անծանօթ տեղական լեզուին, տեղական պայմաններին, գուրկ բարեկամներից և ծանօթներից: Ի՞նչ անէր նա, որ կողմը զնար, ում զիմէր Նիւ-Եօրքի նման փոթորկալի, վիթխարի քաղաքում: Հայ պանդուխտները այն ժամանակ գեռ քիչ էին, և ով զիտէ՝ ուր էին նրանք գտնուում, որ գործարանում, որ յետ ընկած, կորած փողոցի մի անկիւնում: Երկար ժամանակ Գրիգորը թափառական կեանք էր վարում շրջելով Նիւ-Եօրքի աղմկալի փողոցները: Գիշերում էր նա բաց երկնքի տակ, նաւահանգստի շրջակայքում: Անձրւ էր. հայ պանդուխտը կուչ եկած, կծկուած մի շինութեան մուտքի տակ, այդպէս էր լուսացնում աշնանային գիշերները, ցուրտ, երկար ու ձիգ, անվերջ գիշերներ. բայց մի ան չէր գուրս գալիս նրա կրծքից, ուր բարախում էր, սակայն, մի նուրբ և քնքոյշ սիրտ:

Գործ չը կար: Երբեմն նրան յաջողուում էր մի քանի հակեր փոխադրել: Դրանով նա հաց էր գնում, որ լինում էր նրա միակ ուտելիքը: Բայց Գրիգորը դարձեալ չէր լքում, չէր յուսահատում: Վհատութիւնը, կարծես, նրա համար գոյութիւն չունէր:

Այդպէս տեսում է շաբաթներ, ամիսներ: Տաճկահայ պանդուխտը կամաց-կամաց ընտելանում է անզլիներէնին, ընտելանում է քաղաքին. սկսում է պտըտել, փնտրել, հարց ու փորձ անել. վերջիվերջոյ նրան յաջողուում է գանել հայերի բնակատեղին, որնք օգնութեան ձեռք են հասցնում նորեկ հայրենակացին: Եւ ահա Գրիգորը մտնում է մի գործարան: Շարթի վերջին ստանում էր իր վարձը: Նա ուրախ էր. այդչափ օրսալարձ նա առաջին անգամն էր ստանում իր կեանքում:

Այդ շաբաթից սկսուում է նրա գործարանական, բանուորական կեանքը՝ լի զանութեամբ և անդադար, անխոնջ աշխատանքով: Գրիգորը գործից փախչոխ չէր. աշխատանքը նրա միակ միսթարութիւնն էր օտարութեան մէջ. նրանով էր միայն նա մօսանում, ննջեցնում իր ցաւերը, իր գարգերը: Բաւական էր, որ նա քիչ պարապ մնար, և պանդիստութիւնը դառնում էր անտանելի: Իսկ պարապ, անդործ ամիսներ շնոր: Գործարանը վնաս կրելով գոյուել է, կամ ընդհանուր գործադուլ է: Եւ ահա բանուորը՝ անգործ, պարապ, աննպատակ շրջում է փողոցից փողոց, գործարանից գործարան, մաշում նրանց շէմքերը. գործ չը կայ: Շաբաթների, յաճախ և ամիսների ընթացքում գործ չը ճարելով՝ պանդուխտը փոխուում է մի այլ քաղաք, այնտեղ ևս

բախում գործարանների դռները։ Դարձեալ անօգուտ։ Նա մեկնում է մի երկրորդ տեղ... Եւ այդպէս երկար ու ծիգ ամիսներ։ Լաւ է որ գեռ բարի հայրենակիցներ կան, որոնցից պարտք առնելով կարելի է լինում ծայրը-ծայրին հասցնելով մի կերպ ապրել։ Իսկ ինչ էր անում այդ ժամանակ, ինչով, ինչ միջոցներով էր ապրում հայրենիքում թողած ամբողջ ընտանիքը, որի միակ յոյսը, միակ նեցուկն ու ապաւէնը զարիք որդին կամ էրիկն է։ Գրիգորի սիրտը հծկում էր, երբ միան էր գցում իր սիրելիներին։ Նա տանջում, հալում էր, բայց լուս, անտրառունջ։ Ստոիկներին միայն յատուկ համբերութեամբ նա արիաբար տանում էր անողոք կեանքի հարուածները։ Նա երբէք չէր արտայայտել իր ցաւը, իր դարդը, որ սակայն նրան կորզում, մաշում էր։ Ոչ մի տրտունջ, ոչ մի հառաչանք չէիք լսիլ նրա բերնից։ Ծշտապէս խաղաղ էր նա, անվրդով, անխոռվ։ Կարծես, մի անզգայ լեռ էր, լեռ...»

Թէև ծննդավայրից հեռու, ընտանիքից, սիրելիներից կըտրուած, անջատուած, բայց ուշը-միտքը միշտ նրանց հետ էր։ Նըրանցով էր ոգերուում, նրանցով չնշում, նրանցով միայն ապրում։ Նա չէր խնայում նրանց համար ոչ մի բան։ Իր աշխատանքի մեծ մասը նրանց էր ուղարկում։ Հոգ չէ, որ ինքը լաւ հագուստ երբէք չէր ունենում, փոյթ չէ, որ ինքը նեղ ու մութ սենեակում է բնակում, քչով բաւականանում, իրան զրկում զուարծութիւններից և ուտելուց, միայն թէ իր ընտանիքը, իր սիրելիները պակասութիւն չղզան, սրան-նրան չը դիմեն՝ պարսպ կամ փոխ առնելու։

Տան և հինգ տարի են անյել այն օրից, որ Գրիգորը ոտք դրեց նիւթ-Եօրք։ Նրան գեռ չէր յաջողուել հայրենիք վերաշառնալ։ Պանդուխաններից որն էր կարսղանում այդ իզն իրազործել։ Իսկ նորեկների թիւը օր օրի վրայ աճում էր ու աճում։ Խումբներում գալիս էին նրանք, գալիս և երկիրը զատարկում իր արու զաւակներից... նիւթ-Եօրքից սկսած Բօստօն, Ռւսար, Լովէլ, Լորէսս, Նեաղուայ, Պօրտանդ, Ֆիլադելֆիա, Չիկագո... Նրանց տուտը հասել էր նոյն իսկ հեռու կալիֆօրնիա։

Այդ քաղաքներում տաճկահայ բանուորներն ապրում են զատ-զատ խմբերով։ Տասը-քասն համագիւղացիք, որոնք յաճախ միմեանց հետ ազգական կամ բարեկամներ լինելով, գտնուելով Ամերիկայի նման օտար հողի վրայ, բնականաբար, միանում, մի ընտանիք, մի օշաղ են կազմում։ բայց կիսատ, անկատար օջաղ։ պակաս էր նրա զլխաւոր սիւնը և նեցուկը՝ կինը, որի բացակայութիւնը նկատում էր խրաքանչիւր քայլափոխում։

Հայ բանուորները չեն խառնւում, չեն շփւում տեղացի բանուորների հետ. չեն ապրում նրանց կեանկքով, ոգեսրուում, ներջնչւում պտօլետարիատ դասակարգի սրտին-հոգուն մօտ, թանգ, սիրելի գաղափարներով և իդէալներով։ Նրա միտինդներին հայ բանուորը շատ սակաւ է յաճախում. տեղացիների գործադուներին նա գրեթէ չէ մասնակցում։

Ի՞նչիցն է այդ անտարբերութիւնը։

Ամերիկացի բանուորը աւելի լաւ է վարձատրւում, քան օտարերկրացին։ Գործադուների ժամանակ ամերիկացին հնարունի երկար ամիսներ առանց աշխատանք ապրել։ Տրադ-իւնօնի հարուստ գանձարանն է նրան այդ միջոցները մատակարարում։ Իսկ հայ բանուորներից շատ քչերին է յաջողւում մանել անզլիախօս պրօլետարիատի այդ հզօր կազմակերպութեան մէջ, որ ճիշդաւորուած, տարածուած է Միացեալ-Նահանգների արդինարերական բոլոր կէտերում։ Ամերիկացի բանուորը՝ զինուած ընտրողական և աղատ քաղաքացիի այլ իրաւունքներով, թէն սեփական տանից, հողից զուրկ, բայց իր ընտանիքում, իր հայրենիքումն է։ Իսկ տաճկահայը՝ վաժանից պոկուած, ընտանիքից կտրուած, անջատուած, անծանօթ տեղական օրէնքներին, լեզուին, պայմաններին,—առանձնացած, կղզիացած կեանք է վարում։ Նա այլ հոգսեր, այլ ցաւեր ունի, որ կորպում են նրա սիրու, մաշում նրա կեանքը։ Այդ ցաւերից ազատ են նրան վիճակակից իտալացի, կանադացի և այլ գաղթական բանուորները...

Այդպէս կղզիացած կեանք էր վարում և Գրիգորը, որի շուրջն էին ժողովուել իր համադիւղացիք։ Նրանք բնակւում էին մի անշուք տան մէջ, որ ընկած էր և. քաղաքի մի ծայրում։ Մի յարկանի, զրեթէ միայնակ կանգնած էր նա մի տափարակի վրայ. հարևան տներ չը կային։ Դրանց կրով ծածկած, որ տեղակ արգէն թափուել էր, պատոհանների ապակիներից շատեւրը կոտրտած, մղթով էին փոխարինած։ Անցորդի վրայ նա մի ինչոր տիտոր տպաւորութիւն էր գործում։ Ներսը աւելի անշուք, աւելի մռայլ և տխուր էր։ Չորս ցածառաստաղ սենեակ էր և մի խոհանոց։ Մի սեղան առանց սփոռցի, շուրջը մի քանի հատ կիսախարխուլ աթոռներ,—ահա ձաշարան-ընդունարանի կահակարասիքը, զարդ-զարդարանքը։ Պատերը մերկ, շպաները պատուտած, կեղտ ու մրից սեացած։ Միւս երեք սենեակները ննջարանների տեղ էին ծառայում. իւրաքանչիւրում երկ-երկու մահճակալներ, նոյնակէս խարիսուլ, թոկով կապկած, ամրացրած։ Վեց մահճակալ տասն և մէկ մարդու համար։ Տեղաշորերը առանց բարձերնեսի, առանց սաւանների, պատուտած, կեղտոտ-

Կեղտ ու փոշիով ծածկուած էին պատերը, պատուհաններն ու յատակը: Խսկոյն նկատուում էր հայ կնոջ բացակայութիւնը, որ ամենաղքատ խրճիթն անդամ դարձնում է վայելուչ, յստակ, սարքին-կարգին:

Տան մեծը Գրիգորն էր, որին յարգում, պատուում էին անխատիր բոլոր տանեցիք: Նրան յարգում էին ոչ միայն նրա տարիքի պատճառով, այլ և նրա խելքի, հմտութեան և այն խնամքի համար, որ նա չէր խնայում իր համագիւղացիներից ոչ ոքին: Մի նեղ ընկած բոպէին, մի դժուար կացութեան ժամանակ նրան էին դիմում, նրա կարծիքը, նրա խորհուրդը հարցնում, նրա օգնութիւնը խնդրում: Եւ այդ ոչ միայն տանեցիք, այլ և կ. քաղաքի միւս հայ պանդուխտներից շատ շատերը:

Գրիգորենց տունը—այդ անունով էր նա յայտնի կ. քաղաքում—բաց էր անխատիր բոլորի առջև երեկոները, մանաւանդ շարաթ երեկոները, երբ վեց օր գործարանում աշխատելուց յետոյ միւս օրը՝ կիւրակի, պիտի աղատ վնէին, այդ երեկոները պանդուխտների միւս տներից ժողովում էին Գրիգորենց մօտ զրոյց անելու: Թէե ուշ գիշեր էր վնում արդէն, բայց նրանց լոյսը դեռ վառ, պատմելիք, ասելիք շատ, այն էլ Գրիգորի պատմելիքը, ասպա շարաթուայ ընթացքում երկրից եկած նամակները, ստացած խարրիկները: Ծիծաղ և քրքիջ թէե պակաս չէր այդ ժողովներից, բայց տիսուր, մելամալձու նօտան միշտ զերակլուում էր: Հայրենիք վերադառնալ ով չէր նրանից ցանկանում, երազում: Բայց նրանք միմեանց երբէք չէին յայտնում, դրա մասին խօսակցութիւն անդամ չէր վնում: Խւրաբանցիւրի գէմքի վրայ զրոշմուած էր այդ իդը, այդ բաղձանքը:

Սյդաէս կիսախաղաղ սահում էր ժամանակը, փայլուն յոյսերով լի օրերը: Գալիս են այլ օրեր: Անցնում են շաբաթներ, ամիսներ՝ երկրից նամակ, լուր չը կայ: Ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել: Ծնկն է ուռել, բարձրացել, ջրհեղեղել, ծածկել ամեն ինչ, համաձարակ ման է անդթաքար հնձել, տարել բոլորին... Մի հատ նամակը, մի փաքրիկ խարրիկն անդամ չորացել է: Վրդովեցուցիչ անյայտութիւնը հալ ու մաշ է անում պանդուխտներին:

Տեղական թերթերի մէջ հեռագիրներ են լոյս տեսնում, որ գուժում են երկրում տեղի ունեցած խոչոր աղէտներ... Սյրել, քարուքանդ են արել տներ, աւաններ, ամբողջ գիւղեր. կոտորել, յօշոտել են հարիւրաւոր, հազարաւոր ընտանիքներ, կին, մանուկ, երեխայ...

Եարաք մեր գիւղին չեն դիսել, —յուսահատաբար հարց էին տալիս բանուորները: Եարաք մեր ընտանիքն ազատուեց. Ինչ եղաւ մայրս, ինչ եղաւ քոյրս. ուր է որդիս, ուր է կինս... Ա՛յս, ինչու, ինչու մենք ևս այսուեղ չենք...

Տխուր ու տրտում պանդուխտները գնում էին գործարան: «Նամակ չը կայ», —դա էր լինում առաջին խօսքը, որ արտասանում էր բանուորը երեկոյեան տուն դառնալիս. Դա էր այժմ նրանց սովորական քարի իրիկունը: Ընթրիքի ժամանակ ոչ մի խօսակցութիւն, ոչ մի զրոյց. լուս ու մունջ էին բոլորեկեան. նոյն իսկ Գրիգորը, այն Գրիգորը, որին ծանօթ չէր վհատութիւնը, որ միշտ ուրիշին սիրա էր տալիս, քաջալերում: Նա ևս լուս էր և մելամաղճու: Ընթրիքից յետոյ նրանք սովորաբար նստում էին զրոյցելու: Այժմ ոչ ոք չէր ուզում խանզարել սարսափելի լուսութիւնը: Երբեմն պանդուխտներից մէկն ու մէկի հայեացքը մեքենայաբար դառնում էր դէպի Գրիգորը, որ արմունկները յենած ծնններին, զլուխը խոնարհեցրած ծխում էր անընդհատ: Նա գիտէր, նա զգում էր, որ իրան սպասում էին և նա աշխատում, ճիգ էր թափում խօսել, միամտացնել խեղձներին. բայց լեզուն հրաժարուում էր և նա բառ չէր գտնում ասելու: «Աստուած ողորմած է», —արտասանում էր նա, բայց աւելի իրան, իր սիրտը, իր միաքը հանդսաւցնելու, խաղաղացնելու համար, քան միւսների...

Անցնուում են օրեր, շաբաթներ: Դարձեալ նամակ չը կայ: Միթէ բոլորն էլ մեռել, ոչ մի հոգի չէ մնացել որ մի տող, մի երկու բառ գոնէ գրէ: Անցնում է մի ամիս, երկու. բայց այն շարաբսատիկ թղթի կտորը չը կայ ու չը կայ:

Անանային երեկոյ էր: Ամպամած երկնաքը ցածրացել, իջել էր բոլորովին, մշուշով պատել, մշուշի մէջ թաղել և. քաղաքը և ձնշում, խեղզում էր նրան: Թանձր խաւար էր տիրում ամեն տեղ, բարակ անձրեն էլ մաղում էր անընդհատ: Ցուրտ էր, անտանելի ցուրտ: Ցուրտ էր ցուրտը. ցուրտ էր և խոնաւ անկրակ տներում, ուր կուշ եկած, իւրաքանչիւրը մի կողմ քաշուած լուս նստած էին պանդուխտներները: Ոչ ոք չէր շարժուում տեղից. կարծես, քարացել, անշնչացած էին: Միայն անձրենի վշշայն էր, որ խանդարում էր այդ սպանիչ լուսութիւնը: Նա թափուում էր շարունակ, խփում պատուհաններին, որոնցով կաթ-կաթ ծորալով եկել լիճ էր կապել յատակի վրայ:

Անքան անհամբեր, արտասարով սպասուող լուրն ստացուել էր վերջապէս: Կոռւնկ չէր այն խարբիկը բերողը, ոչ էլ նամակ. այլ մի ականատես, մի կենդանի վկայ, մի պատանի, որ

հրաշքով աղատուելով՝ միսսիօնարների օդնութեամբ ընկել էր Ամերիկա։ Դա Գրիգորի եղբօրորդին էր։

Լաւ էր, հազար անգամ լաւ առաջուայ անյայտութիւնը, քան այժմ։ Այն ժամանակ իւրաքանչիւրը դեռ մի փոքրիկ յոյս ունէր՝ թէ իր ընտանիքը, իրանց տնեցիք ողջ են, հրաշքավ աղատուել են սարսափելի աղջտից։ Իսկ այժմ։ Տխուը իրականութիւնը ահա այստեղ է, այստեղ՝ իւրաքանչիւրի աչքի առջև ցցուած։ Նա պարզ տեմնում է իրանց տունը այրուելիս, անյաղ բոցերը լափում են նրան։ Կրակի ճաթճթոցի միջից նա լսում է իր սիրելիների, իր հարազաների աղեկտոր ճիշն ու լացը, յուսահատ կոչն ու աղերսանքը… Կրակը մարել, վերջացել է։ Լերկ, խանձոխ գառած պատերի միջից մուխ է միայն բարձրանում. շուրջը լուսութիւն է տիրում. ոչ մի կենդանի չունչ, ամայութիւն կատարեալ…

—Կորսուան, լնոցաւ ամեն բան, իոր հառաչ քաշելով շնչաց Գրիգորը իմքն իրան։

—Մենք մարդ չենք, մարդ, —բայց կանչեց նա դառնացած, —այլ նամուսից, պատուից զուրկ անասուններ՝ անարժան այս ծածկելու, —ասայ նա գլխարկը գետնին զարկելով։ Ի՞նչ ենք անում մենք այս քանդուածում. ինչու մենք ևս այստեղ չենք, այստեղ։ Եթէ մեռնել-սպանուել է, այրուել-խորովուել է՝ բոլորս միասին մեռնէնք, բոլորս միասին կոտորուէնք, շաննահատակ լինէնք…

—Եյսուհետեւ էլ ում համար, էլ ինչու համար ենք մենք ապրում, —շարունակեց նա փոքր ընդմիջումից յետոյ, —ում համար ենք աշխատում։ Ա՛ս, բախտ, բախտ։ Այս ի՞նչ վաս աստղի տակ ծնուեցանք մենք։ Ի՞նչ մեղք, ի՞նչ յանցանք գործեցինք…

Գրիգորը երկար չէր լուս։ Գտուած, կատաղած, որպէս վանդակի մէջ փակուած մի առիւծ՝ շանթեր էր նա արձակում, դոռում, մոնչում… Բայց նրան պատասխանող չը կար. շուրջը կարծես ամայութիւն էր տիրում. աթոռների վրայ նստածները, կարծես, կենդանի մարդիկ չէին, այլ մի-մի ուրուականներ։

---

Արդէն ուշ դիշեր էր. անձրևն անդադար տեղում էր. կ. քաղաքը խոր քնի մէջ նիրում, հանգստանում էր։ Քնած չէր միայն Գրիգորը. միայնակ նստած սեղանի մօտ, գլուխը յենած աջ ձեռքի վրայ, երկար չէր կարողանում հանգստանալ. նա չէր ուզում, նրա ոյժից վեր էր, նա անզօր էր հաշտուել այն սարսափելի մոքի հետ, որ ինքը դեռ երէկ ընտանիքի, որդոց տէր, իսկ այժմ նրանցից զրկուած, որբնայրի, անհայր, անմայր, անտուն մի թշուառական է։ Արտասուքը խեղդում էր նրան. բայց

Նա այնքան ոյժ ունէր, որ կարողացաւ հայրենակիցների ներկայութեամբ իրան զագել: Այժմ միայնացած նա արտաւում, նա ողբում, նա հեկեկում էր որպէս մի մանուկ: Միևն բանուորները թէս պառկած, բայց նրանք ևս քնած չէին. անկողնում մի կողքից միւսի վրայ էին շուռ գալիս. քուն, հանգստութիւն, անդորրութիւն փախել էր նրանցից: Արտաստուքը նրանց ևս խեղում էր և թրջելով այտերը՝ խոչոր կաթիներով թափուում կոշտ բարձերի վրայ:

Լուսադէմին, երբ պանդուխաները զարթեցան, տեսան Գրիգորին նոյն տեղը՝ սեղանի մօս թեկն տուած, նստած: Այդ գիշեր նա անկողն չէր մտել, աչք չէր փակել: Բանուորները շտապ-շտապ հաղնուեցան և առանց սովորական նախաճաշին անելու ուղերուեցան դէպի գործարան: Գրիգորը մնաց մնակ: Գործարանի սուլիչի ձայնը նրան ցնցեց, սթափեցրեց: Նա տեղից բարձրացաւ և մտամոլոր, մեքենայաբար գուրս եկաւ տնից: Անձրիը գեռ չէր զադարել, այլ բարակ, հանդարտ կերպով մաղում էր: Հազարաւոր բանուոր-բանուորուհիներ ցրտից կուչ եւ կած, լուռ, անխօս շտապում էին գործարան: Գրիգորը միանալով նրանց հետ, անհետացաւ խանճաղանջ ամբոխի մէջ: Մի քանի բոպէից յետ նա արդէն գտնուում էր կտաւի գործարանում, իր մեքենաների առջև:

Գրիգորը իր ձեռքի տակ ունէր վեց մեքենայ, որոնց բանեցնելը պահանջում է մեծ հմտութիւն, մանսաւանդ մեծ ուշագրութիւն: Վեց մեքենաները գործում են միաժամանակ. յանկարծ մէկի իլիկի թելն է քօքք ընկնում կամ կարտում, անհրաժեշտ է անմիջապէս զաղել, կարգի բերել. մի այլ տեղ իլիկների թելն է վերջացել, հարկաւոր է նորը դնել. ասկա մաքրել գործուածքը դուրս ցցուող թելերի ծայրերից... Հանգստութիւն չը կար. շարունակ ոտքի վրայ, աշալուրչ, միշտ հսկելիս, միշտ զիտելիս, մի բոպէ անդամ անհնար է անուշաղիր լինել. դարան մտած որսկան շան նման, սպասողական գիրք ընդունած՝ պէտք է հսկել: Եւ այդպէս ամբողջ օրը՝ առաւօտեան ժամի երից մինչ կէսօր, ասկա մէկից—վեցը-եօթը:

Առաւօտեան վեցին գործարանի հինգ հազար բանուորները զինուորական ճշտապահութեամբ արդէն գտնուում էին մեքենաների առջև՝ իրանց պահականոցում: Եպյարկանի վիթխարի շինութիւնը նորից կենդանացած՝ ահաւոր, հուժկու դղրդիւնով գործում էր մոլեգնաբարար:

Գրիգորը ևս որպէս մի կենդանի մեքենայ գործում էր անդադար, բայց ոչ առաջուայ աշխատ-ժութեամբ և եռանդով: Մի քանի ժամ աշխատելուց յետոյ նրա ոյերը մատնում են նրան:

Վազուց էր, որ երկու մեքենայի մի քանի իլիկները՝ առանց թել պտոյտ էին դալիս աննապատակաբար: Եւ Գրիգորը այդ չէր նկատում: Նրա հարևան իրլանդացի ժակը, որ մի առանձին յարգանքով էր վերաբերում դէպի հայ բանուորը՝ վազելով մօտեցաւ նրան և ձեռքը մեկնելով դէպի այն երկու մեքենաները, յայտնեց եղելութիւնը: Գրիգորը լրացրեց, կարգի բերաւ իլիկները: Բայց մի ժամ յետոյ նրա մէկ մեքենան կանգնած, այլ ևս չէր բանում: Իրլանդացի բանուորը մնացել էր զարմացած: Դեռ առաւոտեան գործարան մտնելիս Գրիգորն իրան չը բարեւց, իր «բարի լոյսին» անգամ նա չը պատասխանեց: Հայ պանդիստի դժգուն, մթնած, տխուր դէմքը չէր հեռանում ժակի աշքից: «Ե՞նչ է պատահել սրան», — հարց էր տալիս իրլանդացին ինքն իրան: Նա մօտեցաւ Գրիգորին և ականջին բարձր ձայնով գոռաց, որ կառավարչից թոյլտութիւն խնդրէ և գնայ տուն, քանի որ հիւանդ է: — Գործարանում մեքենաների դզըրդիւց անհնարին է կամաց, ցածր խօսել Գրիգորը ոչինչ չասաց, միայն ձեռքով բացասական նշան արեց: Հինց այդ վայրկեանին եկաւ գործարանի վերակացուն, որ մի հեղ և բարի մարդ էր — մի երեսյիթ, որ շատ հաղուազիւտ է գործարանական կեանքում: Կառավարիչ ևս բարի... նա Գրիգորին երբէք նըսկատողութիւն չէր արել և առիթ էլ չէր ունեցել. Գրիգորի նման բարեխիղճ, մաքուր, յստակ բանով շատ քիչ կար: Այդ էր պատճառը, որ վերակացուն մի առանձին սիրով էր վերաբերում դէպի Գրիգորը: Երբ տեսաւ մեքենան կանգնած, նա սկզբում բոլորովին ապշեց, ապա տեսնելով հայ բանուորին այնպէս ընկածուած, գալկացած, յանկարծ յիշեց տեղական թերթերի Պօլմից ստացած հեռագիրները, թղթակիցները. մի սարսուռ անցաւ նրա մարմնով, և նա առանց մի բառ ասելու հետացաւ, գնաց այդ բաժանմունքից, որպէս թէ ոչինչ չէր նկատած:

Հնչեց ճաշի սուլիչը. մեքենաները կանգ առան: Գործարանի փակուած դռները բացուեցան և բանուորները դուրս խուժեցին դէպի հարեան ճաշարանները: Մարդ, կին, աղջկի, փոքրիկ տղաքը, բոլոր հասակի և աղգութիւնն: Դուրս եկաւ և Գրիգորը. միայն նա ճաշարան չը գնաց, այլ անցաւ գործարանի մօտ գտնուող մի խուլ փողոց և սկսեց յետ ու առաջ լել՝ չը նայած ցրտին և անընդհատ տեղացող անձրեին: Անդաւ ճաշի ժամը. նա մեղմ, ծանր քայլերով վերադարձաւ. իր մեքենաների մօտ:

Երկու ժամ գործելուց յետ, Գրիգորը՝ ուժասպառ, թուլացած, քիչ էր մնում, որ զոհ լինէր իր անզգուշութեան: Մեքենան ուղղելիս այնչափ մօտեցել էր նա միւս մեքենային, որ

վերջնիս անհւը՝ բռնելով նրա փեշը, ձգում էր. մի վայրկեան ևս՝ և նա պիտի նետուէր երկու մեքենաների նեղ արանքը, եթէ միայն իրանդացին չը լինէր: Ժակը՝ մի սատիւն գործելով, բռնեց Գրիգորին և այնպէս ոյժով դէպ իրան ձգեց, որ նրա վերի հագստի կէսը պատռուելով մնաց մեքենայի վրայ: Գրիգորը քիչ օրորուեց և որպէս մի դնտակ վայր ընկաւ յատակի վրայ: Ժակը՝ մի ակնթարթում կանգնեցնելով իրանց մեքենաները, սրտատրով վազեց նրա օգնութեան: Գրիգորին անմիջապէս կառք նստեցնելով իրանդացու հետ միասին տուն ուղարկեցին:

Պանդուխտների բնակարանը համելով, Ժակը չը հեռացաւ հիւանդի մօտից, թէն այդպիսով նա զրկւում էր կէսօրուայ աշխատանքից: Նա պատկեցրեց Գրիգորին, ինքն էլ մօտը նըստեց՝ սպասելով իր զժբախտ հարեանի հայրենակիցներին: Ժակը վազուց է որ ճանաչում է Գրիգորին. Նրա հետ հինդ տարուց աւել է, որ անքում են մի և նոյն զորձարանում, մի և նոյն մեքենաների վրայ: Նա երբէք այդ հայից մի վատ խօսք չէր լսել, վատ, անսաղնիւ զործ չէր տեսել. Ժակը նրան յարգում, սիրում էր. չէր թագինում նրանից ոչ մի բան, այնչափ մօտեցել, մտերմաշել էին նրանք միմեանց: Իրլանդացուն յայտնի էր Տաճկաստանի աղէտը: Բայց նրան դեռ յայտնի չէր Գրիգորի եղբօրորդու գալուստը, այժմ տեսնելով այդ պատանու լայը, հեկեկանքը և իմանալով նրա ով, ինչ լինելը, իսկոյն հասկացաւ ամեն բան և լուց:

Գրիգորը, աչքերը գցած առաստաղի մի կէտի վրայ՝ լուռ պառկած էր: Իրլանդացին նստած նրա զլիսատակին նոյնպէս լուռ էր և արտում: Նա մի բառ անդամ չարտասանեց. Նա չէր համարձակւում, լեզուն չէր պատում հարցնել կամ սիրտ տալ, միխթարել Սփոփել, մխիթարել սովորական դատարկ բառերով և ֆրազներով,—այդ և՛ անտեղի է, և՛ աւելորդ: Նրանցով պանդստի խոցուուած սիրտը պիտի նորից տրորուէր, կրակի վրայ նորից իւզ ածուէր:

Երեկոյ էր. գործարանի շշակը սուլեց. բայց մի այնպիսի մելամաղձու, չարագուշակ հնչւններով, կարծես, չոգենաւի սիրէնը (sirène) լինէր, որ փոթորկի, վտանգի ժամանակ յուսահատ, աղեկտուր, չարագուժ հնչւններով օգնութիւն է հայցում: Բայց ովկիանոսի անհուն հորիզոնի վրայ նաւ չէ երեսում. սիրէնը կրկին և կրկին սուլում է, սուլում. դարձեալ իզնուր: Նրա ձայնը ոչ մի տեղ արձագանք չէ գտնում: Գրիգորին թւում էր, թէ ինքը գտնուում է այդ չողենաւի վրայ՝ իր զաւակների և կնոջ հետ միասին: Նաւը խորտակւում է, նա սուզւում է ջրի

մէջ։ Գրիգորը ամուր գրկած իր սիրելիներին, նրանց բարձրացրել, պարզել է դէպի վիր, դէպի երկինք։ Զուրը ծփանկ տալով կամաց-կամաց նաւն է թափում։ Նրանք խրում, խեղդում են։ «Օգնութիւն, օգնութիւն», —աղաղակում է Գրիգորը և զարթնում։

Նրա շուրջը տիսուր և գլխակոր կանգնած էին պանդուխտ բանուորները, որոնք լսելով տեղի ունեցած զժքախտութեան մասին, շտապել եկել էին։ Եթէ նրա ներկայութիւնը, նրա կենդանի խօսքը ևս մնացնից պակսէ, ինչ կը լինի մեր գրութիւնը, —խորհում էին բանուորները։ Սակայն այս նոր զժքախտութիւնը տարօրինակ, անբնական չէր թւում նրանց. զոհերի երկար շարքի վրայ մի զոհ ևս է աւելանում. ուրիշ ոչինչ... Սրբատարութիւնը հեւալով շտապել էին նրանք տուն։ Տեսնելով Ժակին Գրիգորի մօտ նստած, նրանք գունատուեցան. բայց բարի ժակը միամտացրեց՝ յայտնելով, որ Գրիգորին ոչ մի երկիւղ չէ սպասում։ Եւ իրօք մեքենան նրան վնաս չէր տուել։

Մահճակալի շուրջը պանդուխտներով զիսարկիներով, առանց հանուելու, առանց լուսացուելու, կնշը ու մուրի մէջ թաթախուած, լուս, մտամոլոր շարունակ կանգնած՝ սպասում էին, կարծես Բոլորն էլ կիսահիւանդ գրութեան մէջ. վիշտը հալել, մաշել էր ամենին։

Սրդէն ուշ գիշեր էր, երբ իրլամսացին «բարի գիշեր» մաղթելով, տիսուր տպաւորութիւնների տակ հեռացաւ պանդուխտների բնակարանից։

Դուրսը անձրեն արդէն դադարել էր, երկինքը պարզուել. Ջինջ կապուտակում փայլում էին աստղերը վառվուուն։ Խաղաղ էր բնութիւնը և հանգարտ, միայն լսում էր հեռուից և. գետի ալիքների ծփանքը։ Նրանք մէկը միւսին հետեւելով գալիս, զարնը ըստ էին ժայռոտ ափերին, շառաչում, աղմկում և լալով, ողբալով յետ ու յետ նահանջում, զնում, զրկախառնուում էին միւսների հետ և այլպէս միացած նորից յորձանք տալիս ուժգին։ Բայց իզնուր։ Սակայն ալիքները չեն ընկճուում, չեն դադարում։ Կատաղաբար գոռալով և նորից ու նորից զարնուելով ափերին՝ ճիգ էին թափում, անդադար, անվերջ կուում ու կուում։

---

Մի անգամ անկողին ընկնելով Գրիգորը այլ ևս չը կարողացաւ թողնել նրան։ Նրա հայրենակիցները գիշեր-ցերեկ հոգում, աշխատում էին, չէին խնայում ոչ մի միջոց։ Նրանցից մէկն ու մէկը հիւանդի մօտ էր մնում, ցերեկները հերթով որպէս զի չը զրկուէին գործարանի տեղից, գիշերները՝ ով պատահէր։ Եւ այլպէս ամբողջ ձմեռ Բայց այդ ամեն ջանքերը՝

բժշկական օգնութիւն, դեղ և այլն բոլորը, բոլորն էլ, աւազ, իշղուր անցան: Գրիգորը օր օրի վրայ նիհարում, հալուում էր: Դէմքը բոլորովին գունատուել, աշքերը խորն ընկել, ձեռքերը, բանուորական կոշտ, կոպիտ ձեռքերը բարակել, քնքշացել էին: Գըլիսի մազերն ու միրուքը ձերմակել, ոչ մի հատ ու մազ չէր մնացել: Նախկին աշխոյժ, առոյդ, հսկյա, ուժեղ Գրիգորի ուրուականն էր միայն մնացել: Նա չէր խօսում, չէր պատմում. լուռ մտքերի մէջ խորասուզուած, անուշադիր ուրիշների պատմածներին, անտարբեր շուրջը վիտող, եռող, անյոզգոզդ ընթացող կեանքին:

Ապրիլ ամիսն էր, երբ բնութիւնը՝ պճնուած, զարդարուած, հրապուրում, զմայլեցնում է ամեն մի էակ: Խոտը բուսել, աձել, բարձրացել էր. ծառերը գոյնլդոյն ծաղիկներով և տերեններով էին ծածկուել, գեղեցիկապէս պճնուել. բուրում էր անոյշ հոտը: Թոշունների երգն ու ճլվոցը, արագահոս առուների կարկաչիւնը, երեխանների ուրախո-զաւարթ ճիշն ու քրքիջը... Կեանք էր չնշում, կեանք էր փչում ամեն մի կողմից, ամեն մի անկիւնից: Հաղար ու մի պշրանքներով զարդարուած բնութիւնը՝ մշտապէս կայտառ, մշտապէս աշխոյժ, հրաւէր էր կարգում. նա ձայն էր տալիս, նա կոչ էր անում՝ ապրել, վայելել իր բնւր և բիւր բարիքները:

Գրիգորը պատկած, աչքը յառել էր դէպի բաց որատուհանը. կարծես հիանում էր բնութեան այդ հրաշալիքներով: Ի՞նչ էր նա մտածում. ի՞նչ էր խորհում. ո՞ւմ էր նա յիշում... Երկար նայում էր նա. ամբողջ ժամերով նա չը հեռացրեց աշքը պատուհանից. բայց ոչ մի բացականչութիւն, ոչ մի բառ. միայն արտասուքի երկու խոչոր կաթիւներ դուրս ցոլացին նրա աչքերից և թրջելով գունատ, նիհար այտերը, ընկան բարձի վրայ:

Քիչ յետոյ հիւանդը՝ դիմելով իր մօտ նստած այդ օրուայ հերթապահ պանդիստին, ասաց.

—Թովմաս, այս տանը բոլորից մեծը դու ես այժմ: Ես գնում, ես մեռնում եմ... Մի խնդիրք ունեմ. նայիր այդ փոքրիկին, ինչպէս քո հարազատ որդու վրայ: Ես, զիտես որ, այլ ես ոչ և ոչինչ չունեմ. դա է միայն մնացել մեր ամբողջ տոհմից...

Այս խօսերի վրայ Թովմասը բռնեց հիւանդի ձեռքը և սեղմելով շրթունքներին, արտասուախառն ջերմ համբոյըններով նրան ծածկեց:

—Լաւ է, ի՞նչ ես անում, երեխայ չես դու, —հաղիւ լսելի ձայնով ասաց Գրիգորը:

Այդ եղաւ նրա վերջին խօսքը:

Այդ օրը, երեկոյեան դէմ, պանդուխտներից մէկը՝ ներս գալով հիւանդի սենեակը և տեսնելով թովմասին այլայլուած, չփոթուած,—շնչասպառ, հեալով շնչաց.

—ի՞նչ կայ:

—Մեռաւ,—պատասխանեց թովմասը խորհրդաւոր ձայնով: Նա տեղից բարձրացաւ և հանգուցեալի ձեռքերը կամացուկ, դգուշութեամբ կրծքին խաչելով՝ մնաց տեղը անշարժ մեխուած. աչքը յառած այն վշտամաշ, դժգոյն դէմքին նա, լուռ արտասւում էր: Միւս բանուորը մեքենայքար յետ ու յետ նահանջեց և թուլացած վայր ընկաւ մի աթոռի վրայ. զլուխն առնելով ձեռքերի մէջ՝ մնաց նոյնպէս անշարժ, արձանացած: Սիրտը կտոր կտոր էր լինում. նա ողբում էր այդ կորուստը. միայն նա լաց չէր լինում: արտասուքը չորացել էր նրա աչքերից:

Հետեւեալ օրը Գրիգորի թաղումն էր:

Մինչ քահանան կատարում էր թաղման հանդէսը, մի բուռն պանդուխտներ, որոնց մէջ էր և իրլանդացի Ժակը, զուխակոր, աչքները յառած նոր ծածկուած գերեզմանի վրայ, լուռ արտասւում էին:

Քահանան վերջացրեց. բայց բանուորները երկար չէին հեռանում գերեզմանատնից. նոր գոյացած թմրի շուրջը նստած՝ անխօս և լուռ էին նրանք: Լուռ էր և բնութիւնը՝ խազաղ, հանդիսաւ: Օրը պայծառ, գեղեցիկ, շուրջը հարուստ, փարթամ բուսականութիւն: Փչում էր մեղմ հովը և ծառերի տերեները կամացուկ շարժում: Սօսափում էին տերեները, շնչում, օրօր թովովում վշտով տոգորուած բանուորներին. մեղմ երգում, հանդիսաւ կարդում գերեզման իջած բազմատանջ ուկորներին:

Ս. Շինուած

## ՍԻՐՏ ԵՒ ԾՈՎ

Օ՛, երգչի սիրտ, միւս խանդավառ, քըրքոռուն,  
Դու էլ ծով ես—ծովի նման խո՞ր, անհո՞ւն.  
Միայն, խե՞ղճ սիրտ, դու փակուած ես կրծքի տակ,  
Որպէս գերի... իսկ ծովն ազա՞ս ու արձա՞կ:

Եւ ծովի կուրծք զոյ ալիքներն յուզելիս,  
Խռոված ծովը մարզարիս է մեզ տալիս.  
Դու էլ, ա՞յ սիրտ, փորուկայոյզ ժամերին  
Երգ ես ծընում, մարզարի պէս բանկագին...

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

# ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Ր Ա Մ Ա

Գերհար Հառապտմանի

(Շարունակութիւն \*)

Տիկին Ֆօկերատը և աղախինը ալդ միջոցին պատշգամբի վրայ սեղան են պատրաստում: Յանկարծ լսում է մեծ շառաչով ափսէների մի կոյտի թափուելը քարերի վրայ և փշոր-փշուր լինելը: Կարճ ճիշ է արձակում և աղախինը գունաս վաղում է սենեակի միջով, պատշկամբից դէպի մուտքը: Տիկ, Ֆօկերատը նոյնպէս ներս է մտնում յանդիմանելով աղախնուն:

Տիկին Ֆօկերատ. Ոչ, դա ուղղակի անտանելի է, Միննա: Օր չէ անցնում, որ մի բան չը կոտրէք: Փչացաւ հիանալի մայօնէզա:՝ (Աղախինը դուրս է գնում դրսի դռնից): Ինձ մօտ այսպիսի բան չէր կարող պատահել: Աղախինները ինձ մօտ գիտեն, թէ ինչպէս պէտք է վարուել:

ՑՈՀԱՆՆԵՍ. (Աղմաւկի վրայ դուրս գալով նեցարանից): Ի՞նչ է մայրիկ, ի՞նչ է պատահել: (Գրկում է նրան եւ աշխատում հանգստացնել): Հանդսոտացիր, հանդստացիր. չը պէտք է բարկանալ, թանկապին մայրիկ:

Տիկ. Կէթի. (Գրկում հանելով դռնից): Ի՞նչ պատահեց:

ՑՈՀԱՆՆԵՍ. Ոչինչ, ոչինչ:

Տիկ. Կէթի. (Գրկում յետ է հաշում դռնից):

Տիկ. Ֆօկերատ. Շատ շնորհակալ եմ—ոչինչ: Ամբողջ 10 մարկի ամաններ է փշուր-փշուր արել: Դեռ էլի ոչինչ: Եւ ամբողջ հիանալի մայօնէզը:՝ չէ... (Յետ է մղում Յոհաննեսին):

ՑՈՀԱՆՆԵՍ. Մայրիկ, սիրելի մայրիկ: Ե՞ն, մի անդամ էլ մայօնէզ չինք ուտի:

\*) ՏԵ՛Ա «Մուլճ» № 3.

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՞չ, ոչ! Դուք չափազանց թեթև էք վերաբերում: Դուք դէս գցելու փողեր չունէք: Զափից գուրս կակուղ էք ծառաների հետ և միայն երես էք տալիս նրանց:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բայց չի որ դրանք շարունակ ամանների հետ գործ ունեն և...

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ես խօ բոնակալ չեմ: Ինձ մօտ աղախինները ապրում են վեց, եօթ տարով: Բայց երբ մի որ և է բան կոտրում են, պարտաւոր են փոխարէնը գնել: Ի հարկէ, նրանք ձեր տանը կարկանդակ և խաւեար են ուտում: Բոլորը ձեր այդ նոր գաղափարներն են: Ազատեցէք ինձ դրանցից: Լսում էք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Չուարքադիմ): Դէ, մայրիկս, աւելի բարի եղիր:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ես հէնց բարի եմ, զաւակս: (Համբուրում է նրան): Ա՛խ դու մոքամոլոր գլուխ: Ասում եմ՝ ախր կեանքի մարդ չես դու:

Երեսում է ինչպէս աղախինը պատշկամբի վրայ սրբում է յատակը և հաւաքում ամանների կտորտանքները:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Եփորուած): Ճիշտ է, մայրիկ: (Ուրախ): Բայց ինչու դու միշտ այդպիսի աչքեր ես շնում... այդպիսի աչքեր: Մի ինչոր երկիւղ կայ աչքերումդ. մի ինչոր լարուածութիւն:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ե՞ս. Ա՛խ, ինչ ես ասում... Ես չը գիտեմ ճշմարիտ... ինչպէս թէ աչքերս մի տեսակ են:

ՅՈՀԱՆՆԵՍ. Մէկ էլ նայիր ինձ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Անխունք տղայ: (Յառած նայում է նրան):

ՅՈՀԱՆՆԵՍ. Այս, այժմ լաւ է:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Անխունք տղայ: Ես այնպէս կ'ուզէի, որ դու միշտ ուրախ լինէիր, ուրախ մարդ լինէիր, Հաննէս:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ, մայրիկ, դու երբէք չես տեսնիլ: Պոհմարդիկ վեթակում եղած արու մեղուների նման են. ողորմելի ոչնչութիւններ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչ օգուտ ույդ ամենից...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Աւելի լուրջ եւ մի եւ նոյն ժամանակ յուղուած): Եւ երեխան, որ այստեղ այժմ քնած է, նոյնպէս պէտք է ինձ նման լինի, մի խոկական դժգոհ մարդ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Աստուած չանչ, Հաննէս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ. Նա ընդհանրապէս ուրիշ տեսակ մարդ պիտի դառնայ, քան ես եմ: Ես դրա մասին կը հոգամ:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Մարդը ենթադրում է, իսկ Աստուած կարգադրում: Մենք ևս արել ենք, ինչ որ կարողացել ենք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Է՞ս, մայրիկ, ես էլ վերջապէս ուղղակի անաղողակ մէկը չեմ:

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. Ի հարկէ ոչ: Ես այդ տեսակ բան չեմ ասում: Այդ ես բնաւ չեմ էլ ուղում... Բայց դու հիմա հէնց ինքը ասացիր, որ միլիպար պէտք է ուրիշ տեսակ լինի: Եւ... և... լմիր. Դու չի որ չես հաւատում... Դու բոլորովին չես հաւատում ողորմած Աստուծուն: Դու՝ իսկն ասած, ոչ մի կրօն չունիս: Իսկ այդ պէտք է մնծ տանջանք պատճառի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Կրօն, կրօն: Իրաւ է ես չեմ հաւատում, որ Աստուծած մարդու տեսք ունի, մարդու պէս է գործում, որդի ունի և այդ օրինակ բաներ:

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. Բայց, Յոհաննէս, պէտք է հաւատալ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչ, մայր: Կարելի է չը հաւատալ և այնու ամենայնիւ ունենալ կրօն: (Մի ժիշ յափէսակուած): Ովզ ջանում է ճանաչել բնութիւնը, նա ճգում է ճանաչել Աստուծուն: Աստուծած՝ բնութիւնն է: «Ի՞նչ կը լինէր մի Աստուծած, որ միայն դրսից է ներգործում և ամբողջ տիսկերքը մատի նշանալ սպիտակ է պտոյտ գալ: Նրան վայել է տիեզերքը շարժել և կառավարել ներքուստ», ասում է Գէօթէն, մայրիկ. իսկ նա այդ աւելի լսւ էր հասկանում, քան աշխարհիս բոլոր պաստօրները և հոգեոր տեսուչները:

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. Ա՛խ, զաւակս: Երբ ես լսում եմ քո այդ խօսքերը... շատ ավասում եմ, որ դու աստուծաբան չը մընացիր: Ես յիշում եմ դեռ, թէ քո փորձնական քարողից յետոյ ինչ ասաց ինձ սարկաւագը...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Զուարենութեամբ) Մայր, մայր. անցած-գնացած ժամանակներ: (Լսում է դուան զանզը):

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. Դրսի դուռն է—բայց չի որ կողպուած չէ: (Մի ժանի ժալ և անում դեպի մուտքի դուռը: Բայլսում են մուտքի դուռը):

ԼՈՒՅՑԱՐԱՐՈՒԾԻ ԼԵՄԱՆ. (Հազին կապոյտ խունացած չը դերիա, եերս և մտնում վախսվանելով): Բարի լոյս:

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. { (Ոչ բոլորովին միաժամանակ): Բարի.

ՅՈՀԱՆՆԵՍ. { տիկին լէման:

Տիկ. ԼԵՄԱՆ. Ես միայն ուղում էի տեսնել թէ... Ներեցէք տիկին ֆօկերատ: Ես երկար որսնում էի անկիցիս:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչպէս չէ, տիկին լէման, ոլ. Բրառունը այստեղ է:

Տիկ. ԼԵՄԱՆ. Ծը, ծը՝ (Աչքի անցնելով սենակը): Եթէ կարողանայի այսպէս սարքուել:

Տիկ. ՖՕԿԵԲԱՏ. Ի՞նչպէս է ձեր քէֆը, ոլ. լէման:

Տիկ. ԱՅՄԱՆ. Է՞հ, ա. Ֆօկերատ, լաւ չէ բանս. իսկի լաւ չէ: Մերուկիս դուրս վռնդեցի: Ել անկարելի էր տանել: Այժմ ինքս էլ չը գիտեմ՝ ինչ անեմ երեխաներիս. հինգ երեխայ է, ինչպէս պահեմ...

Տիկ. ՖՈԿԵՐՍ. Ի՞նչ էք ասում: Բայց...

ԱՅՄԱՆ. (Աւելի ու անվի բացուելով): Գիտէք, ա. Ֆօկերատ. Եթէ ես ինքս էլ գոնէ այսքան թոյլ չը լինէի... Թէ չէ շատ եմ ձեռքից ընկել. չարութիւնը, հասկանում էք, մարդ արարածին բոլորավին փչացնում է ու ստորացնում. հէնց այդ պատճառով էլ ինձ ոչ ոք չէ կարող մեղադրել: Ես ասացի իմ ծերուկիս: Ա-դոլֆ, ասում եմ, ի սէր Աստուծոյ, գնա քո ընկերակիցների մօտ, ասում եմ: Գնա քո հարբան ընկերներիդ մօտ, ասում եմ: Ես ինքս կաշուից դուրս կը գամ և հինգ երեխաներիս կը պահեմ մենակ: Տես, ասում եմ, քեզնից ինչ օգուտ. քո աշխատածով քո կոկորդն ես թաց անում, ասում եմ: Դու խելք չունես, ասում եմ: Եթէ դու խելք ունենայիր, ասում եմ, երեխաներիդ և կնոջդ այս խեղճութեան չէիր հասցնի, ասում եմ: Տեսնում էք, տիկին Ֆօկերատ, ես նրան հէնց այդպէս ասացի. Թէն գիտէք, այդ բոլորը ինձ համար անտանելի էր: Ես կ'ուզէի այնպէս խօսել, որ վշի պէս ծակէր. բայց ինչ օգուտ այդ բոլորից: Էլի ճշմարտութիւնն ասել, այդ աւելի լաւ է:—Դէն, մտածում էի, Աստուծած ողորմած է, նա ինձ կը պաշտպանի իմ հինգ երեխաներիս հետ: (Խնչում է եւ սրբում աշերը):

Տիկ. ՖՈԿԵՐՍ. Մենք միշտ պիտի...

Տիկ. ԱՅՄԱՆ. Հա, հա, ես հէնց այդ ասացի: Գնա դու թէկուզ Հնդկաստան, ասում եմ: Գնա: Եթէ դու ազնիւ մարդ ես, ասում եմ, և մի երկու պիքնիդ յետ ձգես, ասում եմ, այն ժամանակ դեռ կարելի է ապրել: Խոկ ես ազնիւ կին եմ, տիկին Ֆօկերատ: Թնդ իմ առաջ ինչ ուզում է զրուած լինի: Ես մատովս չեմ կպցնիլ...

ՅՈՀԱՆՆԵՍ. Դուք կամ նույնում էիք պ. Բրաունի հետ խօսել, տիկին Լէման:

Տիկ. ԱՅՄԱՆ. Զէ, ես խօսապէս մոռացայ բոլորովին: Այս տեղ մի օրիորդ կայ, նա ուզում է նրան տեսնել: (Մուտքի դռնից ներս է երեւում օրիորդ Մառի գլուխը եւ խօսում: Յոհաննեսը տեսնում է նրան):

ՅՈՀԱՆՆԵՍ. Համեցէք... համեցէք, խնդրեմ. ներս մտէք: (Տիկիններին, որոնք ոչինչ չեին նկատել): Օրիորդը: Այդ օրիորդն էր: (Տիկին Լէմանին): Դուք պէտք է նրան ներս բերէիք: (Բաց անելով մուտքի դռւոք): Խնդրեմ, չնորհալի օրիորդ: Դուք կա-

մենում էք իմ բարեկամ Բրառունին տեսնել: Բարի եղեք, ներս  
չնորհ բերել:

Օրիորդ Աննա Մառ 24 տարեկան է. միջահասակ, փոքրիկ գլխով,  
մութ, հարթ անրած մազերով, նուրբ ջղային դիմագծով: Նրա համար-  
ձակ շարժուածքների մէջ կատ զրացիա և ոյժ: Մի որոշ ինքնալսուահու-  
թիւն նայուածքում, մի որոշ կալուառութիւն, որ միւս կողմից չափառը-  
ւում է համեստութեամբ և տակտով, այնպէս որ նա բնաւ չէ խախտում  
կանացիութեան տպառութիւնը: Աննան աև հագուստով է:

Օր. ԱՆՆԱ. ՄԱՌԻ. (Ներս է մենում): ԱՌԻ, աղաջում  
եմ ինձ ներեք: Ինձ չափազանց անախորժ է ձեզ անհանգըսու-  
տայնել:

ՅՈՒՀԱՆՆԵՍ. Ո՞չ, համեցեք, ինզրեմ, ինզրեմ:

Օր. ԱՆՆԱ. Տիկին Լէմանը յետ չը դարձաւ—իսկ ես ուզում  
էի նրան միայն ասել—որ արդէն... որ ես պարոն Բրառունին  
կարող եմ ուրիշ անգամ տեսնել:

ՅՈՒՀԱՆՆԵՍ. Բայց ոչ, ինզրեմ.—Ես իսկոյն կը կանչեմ  
Բրառունին: Նստեցեք, ինզրեմ:

Օր. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ: (Մենում է կանգնած):  
Ճշմարիտ, ինձ շատ անախորժ է, որ...

ՅՈՒՀԱՆՆԵՍ. Բայց ինզրում եմ, չնորհալի օրիորդ: Ես այս  
բոսէիս կը կանչեմ Բրառունին:

Օր. ԱՆՆԱ. Բայց ես ձեզ նեղութիւն եմ պատճառում,  
ես...

ՅՈՒՀԱՆՆԵՍ. Բնաւ, օրիորդ:—Ներեցեք, իսկոյն: (Դուրս է  
գնում պատզամբը):

Փոքր դադար ու թեթև շվաթութիւն:

Տիկ. ԼԷՄԱՆ. Դէ, ուրեմն, ես գնամ: (Օր. Աննային): Վե-  
րագրաբն դուք անշուշտ մենակ էլ կը գտնեք ճանապարհը:

Օր. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ, որ ինձ ուզեկցեցիք:  
Թոյլ առեք ձեզ մի չնչին... (Տալիս է երան փոյլ):

Տիկ. ԼԷՄԱՆ. Շատ չնորհակալ եմ, շատ չնորհակալ: (Տիկ.  
Ֆօկերատին): Ահա իմ վաստակը այսօր, տիկ. Ֆօկերատ: Աղնիւ  
խօսք: Թէ ես դա հեշտ բան չէ, բայց ես դարձեալ տառում եմ,  
յաւ է մարդ իր կաշին ծախի, քան ապրի մի այնպիսի հար-  
բանի հետ: Հու... Հարկաւոր է միայն հաւատալ ողարմած  
Աստուծուն: Գլխառատ Աստուծած դեռ ինձ երբեք անտես չի  
թողել: (Բռնելով դռան կորից): Հիմա ուզզակի կը գնամ յա-  
նութ, մի բան գնելու իմ հինգ ձագուկներիս համար: (Դուրս է  
գնում):

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. (Կանչում է նրա յետելից): Մաէք խոհանոց: Այստեղ քիչ-միշ բան կայ ձեզ համար: (Մօսեցնում է իր արռող Աննայի համար դրուած արռովն եւ նայում է): Խնդրեմ, օրիորդ, չբք կամենալ նստել:

Օր. ԱՆՆԱ. (Դանդաղութեամբ նսելով): Ես ամենակին յոգնած չեմ, ես...

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս կողմերին դուք ծանօթ եք:

Օր. ԱՆՆԱ. Ո՞չ:—Ես ուսաց Օստղէնան գաւառից եմ: Ես... (Նփոքուած լուռքիւն):

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս կողմերը շատ ստաղոտ են: Ինձ դուք չեք գալիս այստեղ: Ես Բրէսլաուի շրջակայքից եմ: Եւ ամեն բան այստեղ այնպէս թանգ է, դուք երևակայել անգամ չեք կարող: Իմ մարդս աղնուականների կալուածների կապալառու է: Գործը վաս չէ գնում, մենք կարողանում ենք երբեմն էլ մի՝ բան ուղարկել մեր երեխաններին: Լիճը դուք տեսնել եք: Իսկապէս շատ գեղեցիկ է: Պէտք է ասել, որ լիճը իսկապէս գեղեցիկ է: Մեր ամառանոցը շատ յարմար է: Ուղիղ եղերքի մօտ է: Մենք ներքեք պարտիզում երկու նաւակ ունինք: Բայց ես չեմ սիրում, երբ երեխանները նաւարկում են: Ես շատ վախկոտ եմ: —Թհյլ տուէք հարցնել դուք այժմ Բերլիննում եք ապրում:

Օր. ԱՆՆԱ. Այս:—Ես այնտեղ առաջին անգամն եմ: Ես կամենում եմ Բերլինը մի լաւ տեսնել:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Օ՛, ի հարկէ: Բերլինը արժէ տեսնել:—Բայց շատ աղմկալի է:

Օր. ԱՆՆԱ. Օ, ի հարկէ. շատ աղմկալի է: Մանաւանդ երբ մարդ սովոր է փոքր քաղաքներին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դուք որտեղից եք, եթէ թոյլ տաք...

Օր. ԱՆՆԱ. Ես գալիս եմ Ռէվէլից և վերագանում եմ ծիւրիս: Վերջին չորս տարիները ես ապրում էի Ցիւրիխում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Այս, գեղեցիկ Շվեյցարիա:—Դուք երեխ աղգականներ ունէք ծիւրիխում:

Օր. ԱՆՆԱ. Ո՞չ, ես ուսանում եմ:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դուք... համալսարաննում:

Օր. ԱՆՆԱ. Համալսարաննում:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Դա անկարելի է: Նշանակում է դուք ուսանողուհի եք: Ի՞նչ եք ասում: Դա շատ և շատ հետաքրքրական է:—Ուրեմն իրաւ ուսանողուհի եք:

Օր. ԱՆՆԱ. Այս, յարգելի տիկին:

Տիկ. ՖՕԿԵՐԱԾ. Ասացէք, խնդրեմ: Եւ ի՞նչ, այդքան շատ սովորելը հաճելի է ձեզ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Չուարը): Օ, ի հարկէ; Շատ—անշուշտ յայտնի ասաիման:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Կարելի բան է դա:

Յոհաննէսը և Բրառնը երեսում են պատշկամբում, Կանալք տեսնում են, որ նրանք մօտենում են, վեր են կենում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ճշմարիտ շատ եմ ցաւում, յարգելի տիկին, ձեզ անհանգստացնելուս համար:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Խնդրեմ, սիրելի օրիորդ. իսկապէս ինձ շատ ուրախացրեց երես առ երես տեսնել մի իսկական ուսանողուհի: Մեզ մօտ երբեմն զանազան անմիտ բաներ են պատմում զրանց մասին: Դուք ազգական էք պարոն Բրառնին:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ—մենք ծանօթացանք իրար հետ Պարիզում, ցուցահանդիսին:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. (Մեկնելով նրան ձեռքը): Մնաք բարով: Ինձ իրօք մեծ ուրախութիւն պատճառեց...

ՕՐ. ԱՆՆԱ. Խնդրեմ... կրկին խնդրում եմ, ներեցէք ինձ:

Տիկ. Ֆօկերատը գլուխ տալով հեռանում է մուտքի դռնով:

Յոհաննէսը և Բրառնը մի քանի վարկեան խորհրդակցում են պատշկամբում: Խորհրդակցութիւնը վերջացնելով, Յոհաննէսը մնում է պատշկամբում, մինչդեռ Բրառնը մտնում է սենեակը:

ԲՐԱՌԻՆ. (Չարմացած): Օրիորդ Մառ՝ Դուք.՝.

ՕՐ. ԱՆՆԱ. Այս—բայց և յուսով եմ, դուք ինձ այնքան անտակտ չէք համարի... մեղաւորը ձեր տանտիրուհին է. այդ տարօրինակ տիկին լէմանն է, որ ես ձեզ մինչև այստեղ...

ԲՐԱՌԻՆ. Նուիրական Բիմբամ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք չէք մոռացել ձեր նուիրական Բիմբամը:

ԲՐԱՌԻՆ. Բայց ես երազում անզամ այդ տեսակ բան չէի սպասում: Դա իսկապէս հիանալի է:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրիշն էլի մնում է ձեր նախկին «հիանալին»: Ձեզ համար ամեն ինչ միշտ հիանալի է: Դուք ես բնաւ չէք փոխուել, իրաւ:

ԲՐԱՌԻՆ. Կարծում էք: Բայց օրիորդ, հանեցէք ձեր վերաբերուն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ, ոչ:—ի՞նչ էք ասում: Ես միայն ուզում էի տեսնել, թէ ինչ էք անում դուք: (Չարանճի նենգուքեալք): Գլխաւորապէս ձեր մեծ նկարի մասին էի կամենում տեղեկանալ: Արդէն կարելի է նրանով պանչանալ:

ԲՐԱՌԻՆ. Ստուերը, գաղափարն անզամ գոյութիւն չունի, ոչ էլ կտան է զնուած, օր. Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Լաւ չէ. իսկ եմ ասում, շատ վատ է: Իսկ դուք այնպէս հաստատ ինձ խոստացաք:

ԲԻԱՌԻՆ. Մարդս մտածում է, իսկ կառապանը վարում է:  
Սակայն կրկին խնդրում եմ, հանուեցէք օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հիմա ես ձեզ տեսայ, պ. Բրառուն, և յոյս ու-  
նեմ...

ԲԻԱՌԻՆ. Ո՞չ, ոչ, դուք պէտք է այստեղ մնաք:

ՕՐ. ԱՆՆԱ. Եյտելու:

ԲԻԱՌԻՆ. Այս երեխ դուք չը գիտէք, որտեղ ենք մնաք:  
Մենք Յոհաննէս Ֆօկերատի մօտ ենք: Անկասկած դուք նրան  
բաւական ճանաչում էք իմ պատմածներից. բացի այդ  
այսօր այստեղ կնունք է կատարում: Դուք ճիշտ ժամանակին  
էք գալիս:

ՕՐ. ԱՆՆԱ. Ախ, ոչ, ոչ: Այդ բոլորովին անկարելի է:  
Մանաւանդ որ այսօր ես պէտք է քաղաքում շատ տեղեր գնամ:

ԲԻԱՌԻՆ. Այսօր բոլոր տեղերը փակ են:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ոչինչ: Ես պէտք է միայն լինեմ ծանօթ-  
ներիս մօտ: Բայց մի երեակայէք, որ դուք արդէն աղասւում  
էք ինձանից: Մենք պէտք է դեռ մի անգամ էլ երկար զրու-  
ցենք իրար հետ: Ես դեռ պէտք է ձեզ խրատ կարգամ: ա՞ս,  
դուք խոստինաղանց: Դուք, ինչպէս տեսնում եմ, առաջուայ  
նման պատկերներ միայն ձեր զլինում էք նկարում:

ԲԻԱՌԻՆ. Նախ պէտք է մարդ իր զլինում հոգեպէս պար-  
զի: Իսկ վրձինները չեն փախչի:

ՕՐ. ԱՆՆԱ. Հը, ով գիտէ:

ԲԻԱՌԻՆ. Բայց ես ձեզ հիմա չեմ թողնի, որ գնաք. լուք  
ինձ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՞չ, խնդրում եմ, պ. Բրառուն, թողէք ինձ  
հանդիսաւ:

ԲԻԱՌԻՆ. (Կանչում է): Հանս, Հանս:

ՕՐ. ԱՆՆԱ. Խնդրում եմ:

Յոհաննէսը մտնում է կարմրելով:

ԲԻԱՌԻՆ. Թայլ տուէք ձեզ ծանօթացնել: Իմ բարեկամ Յո-  
հաննէս Ֆօկերատ—օրիորդ Աննա Մառ:

ՕՐ. ՄԱՐ. (Միաժամանակ): Ես ձեր մասին այնքան  
ՅՈՀԱՆՆԵՍ. (շատ եմ լսել:

ԲԻԱՌԻՆ. Երեակայիր, Հանս, օրիորդն ուզում է արդէն  
գնալ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ իմ կնոջս և մեղ բոլորիս շատ կը վը-  
տացնի: Չիք ուզում նուիրել մեղ այս երեկոն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ճշմարիս ես չը գիտեմ... Բայց երբ դուք  
ինձ ասում էք, որ ես ձեզ անհանգստութիւն չեմ պատճառի—  
ուրախութեամբ ես մնում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ամենակին, ոչ մի կերպ: (Օգնում է նրան հանել վերեազգեստը եւ տալիս է Բրաունին): Կախիք, խնդրում եմ: Ես իսկոյն կնոջս կը կանչեմ... (Մօսենում է ննջարանի դռանը, եւ կանչում դեպի ներս): Կէթէ: (Մօսենում է ննջարանը):

ՕՐ. ԱՆՆԱ. (Ռւղբելով հայելու առաջ հազուսը): Զեր բարեկամը շատ սիրալիք է:

ԲՐԱՌԻՆ. Գուցէ մի քիչ էլ չափազանց:

ՕՐ. ԱՆՆԱ. Ա՛խ, ի՞նչպէս թէ:

ԲՐԱՌԻՆ. Ես կատակ եմ անում: Նա շատ լաւ տղայ է: Միայն երբ բանը նրա գրուածքին է զալիս, այն ժամանակ նա գժուարամարս է զառնում: Ահա կը տեսնէք. եթէ դուք երեկոյեան մնաք այստեղ, նա իր աշխատութիւնը անպատճառ կը կարդայ ձեզ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ի՞նչի մասին է նրա գրուածքը:

ԲՐԱՌԻՆ. Ինձ համար շատ դիտնական մի բան, ինչոր փիլիսոփայական-քննադատական-սպիրիո-ֆիլիոլոգիական մի գըրուածք: Ես ի՞նչ դիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ինձ հետաքրքրում է: Ես ինքս էլ, «Փիլիսոփայութեան հետ կազ ունեմ», ինչպէս ասում են սովորաբար:

ԲՐԱՌԻՆ. Դէ, օրինրդ, եթէ այդպէս է, դուք այնքան էլ շուտ չէք պըճի նրանից: Եթէ դուք սկսէք հետաքրքրուել նրա աշխատութիւնով, անասելի կերպով նրան կ'ուրախացնէք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դալով ննջարանից): Բրանեն:

ԲՐԱՌԻՆ. Ի՞նչ է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գնա կէթէի մօտ: Հանգստացրնւ նրան քիչ: Փոքրիկի մի կողիկը ինչոր շատ է դուրս ցցուած:

ԲՐԱՌԻՆ. Ի՞նչ ես ասում:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի հարկէ, զատարկ բան է. բայց էլի գնու կէթէն իդուր տեղը իր համար հոգսեր է ստեղծում:

ԲՐԱՌԻՆ. Լաւ, լաւ: Գնացի: (Մօսենում է ննջարանը):

ՅՈՀԱՆՆԵՍ. Կինս խնդրում է ննեքը, օրինրդ: Նա կը գայ մի քանի բոպէից յետոյ: Նա պատուիրել է ինձ առայժմ ցոյց առաջ ձեղ մեր պարտէզը: Եթէ ի հարկէ, դուք դէմ չէք...

ՕՐ. ԱՆՆԱ. Օ՛, մեծ ուրախութեամբ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Ժպտալով): Մենք իսկապէս զեղեցիկ անկիւն ունենք—այսինքն մենք միայն վարձել ենք: Այսուև ամենահրապուրիչը լիճն է: Դուք տեսել եք Մուղդէլեան լիճը: (Նա տալիս է օրիորդին հովանոցը: Երկուսն ել խօսակցելով զնում են դեպի պատճամիք դուռը): Ես ատում եմ քաղաքը: Իմ իդէալս է ընդարձակ պարկ՝ շրջապատած բարձր պատերով: Այնտեղ մարդ կարող է ապրել՝ անարդել նուիրուած իր նպատակներին:

ՕՐ. ԱՆՆԱ. Էպիկուր:

ՅՈՀԱՆՆԵՍ. Միանգամայն իրաւացի էք, այս: Բայց հաւատացնում եմ ձեզ, ուրիշ կերպ անկարելի է... Ձեզ համար դով չի լինի:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ՛, ոչ. Ես ինձ սովորացրած եմ ցրտի:

Յոհաննէսը թողնում է Աննային առաջ գնալ և հետևում է նրան դէպի պատշկամբը: Այստեղ նրանք մնում են մի քանի վարկեան: Նրկում է, թէ ինչպէս Յոհաննէսը ցոյց է տալիս և բացատրում օտարուհուն տեսարանները: Վերջապէս երկուսն էլ անհետանում են պարտիզում:

Բրառնը, իսկ նրա հետեւ Կէթէն, դուրս են գալիս ննջարանից:

ԲԻԱՈՒՆ. (Դուրջը նայելով) Նրանք գնացել են:

ՏԻԿ. Կէթէ. Հա:

ԲԻԱՈՒՆ. Ո՞չ, ոչ, ինչ վերաբերում է Կողին, այդ բոլորովին բնական է:

ՏԻԿ. Կէթէ. Իսկապէս ես բոլորովին ճնշուած տրամադրութեան մէջ եմ:

ԲԻԱՈՒՆ. Ճնշուած: Ինչո՞ւ:

ՏԻԿ. Կէթէ. (Ժայտալով): Ես ուղղակի սրտի բարախում ունեմ:

ԲԻԱՈՒՆ. Դուք դեռ ես ջղային դրութեան մէջ էք:

ՏԻԿ. Կէթէ. Նա շատ հպարտ է:

ԲԻԱՈՒՆ. Ո՞վ:

ՏԻԿ. Կէթէ. Այն օրիորդը:

ԲԻԱՈՒՆ. Մառը. հպարտ.—Ամենսին:

ՏԻԿ. Կէթէ. Ինչո՞ւ չէ. Կէթէ ես լինեի նրա տեղ, կարող էի...

ԲԻԱՈՒՆ. Ամենսին. ոչ, ոչ: Դուք իսկապէս նրան ստորացնում էք:

ՏԻԿ. Կէթէ. Ընդհակառակը.—Ես սաստիկ պատկառանք եմ զգում դէպի նա:

ԲԻԱՈՒՆ. Հա, ասենք... Նա լինում է երբեմն ճիշտ որ քիչ մեծամիտ, բայց հեշտ է նրան յետ սովորացնել այդ բանից:

#### Դադար:

ՏԻԿ. Կէթէ. Հանէսը այնտեղ մոռացել է իր ձեռագրից մի թերթիկ: Օրիորդը հասկանում է որ և է բան դրանից:

ԲԻԱՈՒՆ. Ի՞նչպէս չէ:

ՏԻԿ. Կէթէ. Հա, ալս.—ինձ նմանները զրանց պէս կըրթուած մարդկանց մէջ մի քիչ խղճալի դեր են կատարում:

ԲԻԱՈՒՆ. Ա—ախ: Իմ իմացածս էլ շատ բան չէ: Ես էլ

մեծ ուսում չեմ առել: Բայց այնուամենայնիւ ինձ չէ կարող զարմացնել այդ չնչին դպրոցական իմաստութիւնը:

Տիկ. Կէթէ. Օրփորդը, ի հարկէ, խօսում է փայլուն:

ԲԻԱՌՈՒՆ. Փայլուն: Ո՞չ: Նա խօսում է այնպէս... ինչպէս մենք բոլորս ենք խօսում: Նա շատ խելացի է—բայց այդ պատճառով...

Տիկ. Կէթէ. (Ժպտալով): Իմ աղջիկ ժամանակս կարծես մի ձպուռ էր: Մենք ամբողջ օրերով շարունակ չըթշրթում էինք զատարկ բաների մասին: Այդ գոնէ անցաւ: Իսկ հիմա ամենսկն չեմ համարձակում խօսել և առհասարակ վախենում եմ մի բան սասել (Մօտենում է դեպի պատշկամբը տանող դռան): Մայրիկ, մի բաժին աւելի դիր:

Տիկ. Ֆօկերս. (Պատշկամբից, ուր նա հացը գցում է): Եւ ապէ է լինելու:

Տիկ. Կէթէ. Օրփորդը:

Տիկ. Ֆօկերս. Ո՞վ:—Հա հասկացայ.—լաւ, լաւ, Կէթէ:

Տիկ. Կէթէ. (Նորից Բրաունին, հառաջելով): Ա՛խ, հիմա ամեն բան փչացաւ: Ոյժ ես գործ դնում.—բայց ինչ օգուտ դրանից: Արդէն շատ ուշ է: (Մօտենալով վարդի փեղին): Նայեցէք, ինչ գեղեցիկ է երևում: Դեռ վարդ են: (Մեկնում է փունջը Բրաունին հոտուելու համար): Եւ ինչպէս թունդ են բուրում:

ԲԻԱՌՈՒՆ. Հրաշալի:

Տիկ. Կէթէ. (Դնում է փունջը իր տեղը): Նա ջահել է:

ԲԻԱՌՈՒՆ. Ո՞վ:

Տիկ. Կէթէ. Օր. Մառը:

ԲԻԱՌՈՒՆ. Զը գիտեմ քանի տարեկան է:

Տիկ. Կէթէ. Ես արդէն քսան և երկու տարեկան եմ: Այն, մենք անցրել ենք մեր հասակը:

ԲԻԱՌՈՒՆ. Խիստ անցրել էք: (Ծիծաղում է):

Տիկ. Կէթէ. Ա՛խ, ինչպէս սահմանափակ է իմ միտքս:

Տիկ. Ֆօկերատը դռնից մտցնելով գլուխը:

Տիկ. Ֆօկերս. Սիրելիք, ինձ մօտ ամեն բան արդէն պատրաստ է: (Յետ է հաւում զլուխը: Կանչում է պատշկամբից դեպի պարտէզը): Հայրիկ, հայրիկ:

Պարոն Ֆօկերատը և պատրատը, երկուսն էլ շատ լաւ տրամադրութեան մէջ բարձրանում են պատշկամբի սանդուղներով:

Ֆօկերս. (Բայց դռներից, պատօրի վերակուն ձեռքին): Համար Զը ցանկանայ ներս մտնել և հանել ձեր զգեստը: Հահահա: (Մրտանց ծիծաղում է):

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** (Չեռքին բոճած զիխարկը, ձեռնափայտը եւ սիգար ծխելով): Հահահան: Խոկապէս որ շատ զուարձալի է. ինձ լսեցէք: Պֆ, պֆ—շատ զուարձալի է (Ծիծաղում է):

**ՖՕԿԵՐԱԾ.** Եւ ասում են, որ այդ ճիշտ եղելութիւն է, պարոն պաստօր: (Տանում է նրա հետեւց վերարկուն):

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** «Պարոն նոր ննջեցեալ»: (Ծիծաղում է): Պֆ, պֆ:—«Պարոն նոր ննջեցեալ, գուցէ էլի մի բան էք ցան կանում»: (Ծիծաղում է. կախում է պլեղը եւ զիխարկը, բասակը մնում է զիխին):

**ՖՕԿԵՐԱԾ.** (Ծիծաղելով նրա հետ միասին): «Պարոն նոր ննջեցեալ... (Իմմելով Բրաունին): Բանը պատահում է մեղ մօտ զիւղում, մի թաղման, պ. Բրաուն... Դաղաղի չուրջ կանգնած են յուզարկաւորները, զիտէք... (Սարափի արտայացելով, վլազ): Յանկարծ, մի ինչոր բան ժամ է դալիս: Գուցէ մէկն ու մէկը աթնոն է շարժում, կամ թէ մի այլ բան է շարժում: (Սարսափի արտայացելով): Բոլորը միտսին ցնցում են:—Միայն ժամհարը, հահահան, չը վախեց, երկչոտներից չէր: Մօտենում է զգուշութեամբ դադաղին, հահահան, ու թիվթխակացնում: (Զայնը նրանեցնելով ժամհարի ծայնին եւ մատներով թիվխակացնելով սեղանին): «Պարոն նոր ննջեցեալ—Պարոն նոր ննջեցեալ: Գուցէ էլի մի բան էք ցանկանում»:

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** (Ծիծաղելով): Այս, լսեցէք, Պֆ, պֆ: Այդ ճիշտ է, ևս ճանաչում եմ այդ ժամհարներին:

**ՏԻԿ.** ՖՕԿԵՐԱԾ. (Մտնում է): Դէ, հայրիկ, համեցէք, թէ ոչ ապուրը կը սառչի:

**ՖՕԿԵՐԱԾ.** Ուրիմն, պարոն պաստօր, համեցէք, խնդրեմ:

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** Լսեցէք, դուք այնու ամենայնիւ ձեր ասածն արիք: (Դէն է ձգում սիգարի մնացողը մոխրամանի մեջ եւ առաջարկում կուռք տիկին Ֆոկերատին): Տիկին Ֆոկերատ:

**ՖՕԿԵՐԱԾ.** (Կամենալով կուռք տալ Ակրեին): Բայց ուր է օռհաննէսը:

**ՏԻԿ.** ՖՕԿԵՐԱԾ. Խոկ օրիորդք.—Դա արդէն լաւ չէ Յոհաննէսի կողմից: Հիանալի ճաշը չէ որ...

**ՖՕԿԵՐԱԾ.** (Ուրախ): Հա, լսում էք, պ, պաստօր. «Քերանի և զինու թասի մէջ տեղ»: Հա հա հա:

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** «Մատանան միշտ այնտեղ». Հա հա հա: ՖՕԿԵՐԱԾ. Երեկ այդ այն կինն էր: Մենք տեսանք այնտեղ լնի վրայ մի զոյդ: Այնպէս չէ, պարոն պաստօր:

**ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ.** Ի հարկէ, ի հարկէ: Նրանք այնտեղ նաւարկում կը լինեն:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ա՛խ, ես կարծում եմ, լաւ է՝ մենք նըստենք ճաշի:

ՖՕԿԵՐԱՏ. Ով չի գալիս ժամանակին...

ԲՐԱՌԻՆ. (Որ նայում էր պատկամբից դեպի պարտեզը, վերադառնում է): Նրանք գալիս են, գալիս են:

ՖՕԿԵՐԱՏ. Եւ արդէն ժամանակն էր:

ՅՈՒԱՆՆԵՍԸ և օր. Աննան բարձրանում են պատշկամբ:

ՅՈՒԱՆՆԵՍ. Մենք ուշացամք:

ՖՕԿԵՐԱՏ. Հէնց ժամանակն է:

ՅՈՒԱՆՆԵՍ. Խնդրում եմ ներէք: Մենք... Այնպէս հրաշալի էր ջրի վրայ... Թոյլ կը տաք: (Ներկայացնելով): Պարոն պաստօր Կոլին՝ իմ հայրս՝ իմ մայրս՝

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Մենք արդէն ծանօթ ենք:

ՅՈՒԱՆՆԵՍ. Կինո—օրիորդ Մատ:

Կարգի են բերում իրանց և զիմում պատշկամբը: Տիկին ֆօկերատը թեանցուկ պաստօրի հետ, տիկին նէթէն ծեր ֆօկերատի հետ, իսկ օր. Մատին տանում է Յոհաննէսը: Մենակ և բոլորից վերջում զնում է Բրատինը:

Մենեալլը մնում է զատարկի: Անջարանից լսում է ծծմօր մեղմ երգը—«ռանի», նամի աց ինչ է շշնջում: Այդ ի՞նչ է այնունի յարդի մէջ շարժում: Այնունից էն սիրուն ստղիկներ, նրանք տկոր են և դեռ անիմուլուս: Պատշկամբից լսում է ափաէների աղմուկը, լանկարծ մրտնում է նէթէն, աւղանի արկղից ինչ որ հանելու: Նրա յետելոց մասնում է Յոհաննէսը:

ՅՈՒԱՆՆԵՍ. Բայց Կէթէ—քեզ գեռ կարելի չէ... Քեզ գեռ կարելի չէ վազել: Թոն, ես ինքս...

Տիկ. Կէթէ. Ա՛խ, ես այնքան էլ թոյլ չեմ:

ՅՈՒԱՆՆԵՍ. (Կրակոս եւ վառվունե): Գիտես դու: Նա մի հրաշալի էակ է:՝ Ինչովիս զիտութիւն և ինքնուրոյնութիւն դատողութեան մէջ՝ եւ երեակայիր մի այլպիսի էակ չարչարուելով հաղիւ հազ է ծայրը ծայրին հատցնում: Դու յիշում ես, Բրատինը մեզ միշտ պատմում էր նրա մասին: Իսկապէս մեր պարտքն է և պարտականութիւնը, որ նրան համողենք՝ մի երկու շաբաթ պատեղ ապրելու:

Տիկ. Կէթէ. Եթէ դու ցանկանում ես:

ՅՈՒԱՆՆԵՍ. Զէ, ես չեմ ցանկանում: Այդ շատ աւելի կարսոր է քեզ, քան ինձ. գու պէտք է ցանկատ: Այդպիսի մի էակից դու կարող ես շատ բան սովորել:

Տիկ. Կէթէ. Դու, ճշմարիտ, երբեմն շատ վատն ես, Հաննէս:

ՅՈՒԱՆՆԵՍ. Բայց միթէ ճիշտ չէ: Դու պէտք է տեսդային եւսանդով օգտուես ամեն մի տոիթից, որ կարող է մտաւորա-

պէս քեզ առաջ տանել քո զարգացման մէջ։ Դու պէտք է ձըդ-  
տես այդ բանին։ Դու պէտք է օրիորդին պինդ պահես այստեղ։  
Ես չեմ հասկանում, ինչպէս կարելի է այդքան անտարբեր  
լինել։

ՏԻԿ. ԿԵԹԵ. Ես, այն, համաձայն եմ քեզ հետ։  
ՅՈՀԱՆՆԵՍ. Զեր մէջ ամենաթեթև կրակ չը կայ. ամե-  
նաշնչին ձեռներէցութիւն։ — Սոսկալին է։

Պատորը դրսում զնզգնզացնում է բաժակը։

ՏԻԿ. ԿԵԹԵ. ԱՌ, Հաննէս, հիմա գնա, գնա։ Պատորը  
կենաց է առաջարկում։ Ես իսկոյն կը գամ։ Ես, հաւատա, հա-  
մակարծիք եմ քեզ… Զէ որ մենք չը պէտք է երկուսս էլ բացա-  
կայ լինենք այստեղից, երբ։

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, մի նեղանար, մի նեղանար, ԿԵԹԵ։ (Նա  
համբուրում է երա արտասուալից աչքերը եւ շապ գնում է  
պատշաճը)։

Լուսում է պատորի ձախնը, ծծմօր խուլ երգը դեռ ևս մեղմ հըն-  
չում է։ ԿԵԹԵ հետ ինչ-որ բան է պատահում։ Հէնց որ Յոհաննէսը դուրս  
է գալիս, նա միանգամից նուաղում է, թուանում և անհաստատ քայ-  
լուածքով զնում դէպի պատշաճմբը, ձեռքով որոնելով լենուելու մի բան։  
Մի քանի անդամ զլիի թեթև պոռյա է սկսում։ Վերջապէս ոյժ չու-  
նենալով գնալու, նա ընկնում է աթոռի վրայ։ Նրա աչքերը անշարժ  
ուղղած են մէկ կէտի, շրթոնքները անձայն շարժում են։ Աչքերում ար-  
տասուք է երևում։ Պատորը վերջացնում է կենացը։ Բաժակները իրար են  
զարկում, ԿԵԹԵն հաւաքում է ոյժերը, վեր է կենում աթոռից և դիմում  
պատշկամբը։

Ե. — Ա.

(Կը ռարունակուի)

# ԶԵՅԹՈՒԽԻ ԱՆՑԵԱԼԻՑ

## I

Զէյթունի ծագումը:

Ե՞րբ է ծագել Զէյթունը. հասարակական կամ քաղաքական ինչպիսի զրութիւն էր ներկայացնում այդ լեռնագաւառը Ռուբինսան հարստութիւնից առաջ, այդ միջոցում և յետոյ. նա ինչպէս պահպանեց գոյութիւնը մինչև այժմ և ինչ դէպքեր են տեղի ունեցել վերջին 4—5 դարերում.—ահա մի շարք կարևոր հարցեր, որոնք, ինձ թուում է՝ մինչև այսօր թողուել են անորոշութեան և մթութեան մէջ և որ պէտք ունեն բացատրութիւնների՝ հիմնուած պատմական փաստերի և ապացոյցների վրայ։ Այդ գաւառի պատմութիւնը, որ այնքան հետաքրքիր և կարևոր է ուսումնասիրել, որի օղակները անցնում են անտարակոյս Միջն-Դարու մեր ազգային կեանքի միջով և կազմում են մի շատ կարևոր գիծ մինչև նորագոյն ժամանակները, ուր լիքն են բազմակողմանի անցուղարձեր և պարզ կերպով տեսնում է գոյութեան ամենասուր կոփու՝ մղուած հերոսական և անհաւասար կերպով, երկար դարերի ընթացքում մի բուռն ժողովրդի կողմից ընդդէմ բազմաթիւ կիսավայրենից ցեղերի և անլուր բռնութիւնների, այսու հանդերձ, այդ ուսումնասիրուած է վայրիվերոյ և անձիշտ կերպով և կամ լուրջ ուսումնասիրել փորձողն էլ, գըժրախտաբար, չէ ունեցել իր ձեռքում անհրաժեշտ եղած նիւթերն ու տեղեկութիւնները։

Անցեալ, XIX-րդ, դարի կէսից յետոյ մի քանի եւրոպացի գիտնական ճանապարհորդներ, ինչպէս Վիկտօր Լանգլուա, Լէօն Պոլ և ուրիշներ տալիս են առաջին տեղեկութիւններն այդ խուլ, լեռնային երկրի և այնտեղ ապաստանած լեռնականների գոյութեան և նրանց նիստ ու կացի մասին։ Այսուհետեւ, երբ վաթսունական թուականների յայտնի դէպքերը արձագանք տուեցին ամեն կողմ, մեզանում էլ տեսնուեցին յիշտակու-

թիւններ, տեսութիւններ, որոնք սակայն անբաւական են որոշ գաղափար կազմելու, ճանաչելու գէյթունցուն, նրա անցեալը և այս երկիրը, ուր նա հաստատուել է, ապրել է և այդ երկար ժամանակի ընթացքում իր գոյութիւնը պահել կարողացել:

Կիլիկիայի հարստութեամ ժամանակակից հայ կամ օտարազգի պատմիչներ և կամ արձանագրութիւններ ոչ մի անդամ չեն յիշատակած Զէյթուն անունը, և այդ հանգամմանքը շատերին առիթ է տալիս մոլորելու այդ գաւառի անցեալի և նրա ծագման նկատմամբ: XI-րդ դարից յետոյ մի քանի յիշատակութիւններ և ձեռադրեր աւանդում են Ուլին կամ Ուլինը՝ ներկայ Զէյթունի շրջականները մատնացոյց անելով: Միայն XVI-րդ դարի վերջերը մաղաղաթէ ձեռագիր աւետարանների և եկեղեցական գրքերի կողքերին գրուած ժամանակագրութիւններ, վաճքի և եկեղեցու վոշինների միջից, յայտնում են մէկ ուրիշ, նոր՝ Զէյթուն անունը, երկրի զրեթէ նոյն լեռնային մասերը մատնացոյց անելով, սակայն նոր գէպքերի հետ միասին և բոլորովին անջաւուած հներից: XVI և XVII-րդ դարերի մէջ յիշատակուած է Զերուն, մի որոշ ժամանակ յետոյ Զելրուն, իսկ վերջերս ընդհանրապէս Զելրուն: Նախորդ և այս դարերի մէջ գրուած են առանց խարութեան Ուլինի կամ Զէյթուն, և կամ Զէյթուն-Ուլինիա միասին անունները \*):

Սակայն սոյն վերոյիշեալ անուններն ու ժամանակները և դրանց հետ գրուած, մի քանի կցկտուր և աննշան գէպքերի յիշատակութիւնները զրեթէ ոչնչի չեն ծառայում՝ հեռացնելու համար այն վարադրյը, որ մթնացնում է այդ երկրի անցեալը: Իդուր է, որ այդ գաւառն ուսումնասիրողները հետամուտ են լինում ստուգելու և որոնելու դրա անցեալը Զէյթուն կամ Ուլինիա անունների հետ, կամ ընդհանուր կապակցութիւններ ևն թագրել այդ անունների և անցեալի մէջ և կամ ճիգ են անում որ և է երեսուկայական կամ աւանդական բայցատրութիւններ սառ դրանց մասին: Զէյթուն անունը բոլորովին նոր է, թիւրքական բառ է, և օսմանցինների տիրապետութիւնից յետոյ միայն նշանակուած վերջինների կողմից, չնորհիւ իր շուրջը գտնուած ձիթենու անտառների. իսկ Ուլինիան անգիտակցաբար մինչեւ այժմ շփոթւում է Զէյթունի հետ, մինչդեռ այդ երկուսը առան-

\*) Աստուածածնի վանքում գտնուած հնութիւնները հետազոտելիս աջողութեաց գործել մագտաղաթէ մի ձեռագիր, XV-րդ դարու վերջերի աշխատանք, որի կողքում, յիշատակաղութեան Ռէջ, գրուած էր Զերուն անունը, որպէս զիւլ. միասին կային նաև յունարէն մաղաղաթէ ձեռագրեր: Այլ և այլ յարդելի պատճառներով անկարող եղալ առնել այդ յիշատակաղը պատճէնը կամ նոյն իսկ բնագիրը:

ձին-առանձին գիւղաքաղաքներ են և միմեանցից մօտաւորապէս 30—32 մղոն հեռի: Ուշնիա գիւղաքաղաքը գոյութիւն ունէր Ռուբինեան հարստութիւնից շատ ժամանակ առաջ և բնակուած էր յոյն բնակիչներով, երբ գեռ ևս ԶԵՅԹՈՒՆԻ բերդի շուրջը մի քանի տները միայն կային: Նախ քան հայերի քաղաքական իշխանութիւնը Սիսուանում, Ուշնիան կործանուեց, որի աւերակները այժմ էլ նկատւում են ֆոնուզ գետի աջակողմը, Սեկ լեռան ստորոտում:

Դարերի ընթացքում զանազան ազգերի յաջորդական տիրապետութիւնը կիլիկիայում, արինալից արշաւանքներն ու աւերումները, սրանց աւելացրած նաև հեռաւոր ժամանակներում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժները՝ քանից անգամներ բոլորովին կերպարանափխեցին երկրի մակերեսը, ոչնչացրին բազմաթիւ շէն քաղաքներն ու գիւղները, տեղափխեցին ազգաբնակութիւնը մի տեղից միւս տեղ: Մի երկու դար երկրը շէնանում էր, բարգաւաճում, բնութիւնը կեանք ստանում և քաղաքներն ու աւանները սփուռում ամեն կողմ. բայց քիչ յետոյ դրանք տեղի էին տալիս նորանոր ցեղերի արշաւանքներին, էլի հրդեհ, կոտորած, աւերածութիւն, մշակող ձեռքերը դադարում էին և երկիրը ծածկւում էր անտառներով ու ամայանում: Եւ այս անվերջ կրկնուում էր զանազան ընդհատումներով, մոռացում քաղաքների, բներդերի տեղերը, նրանց անտառները, հասաւատում նորերը, նոր դիրքերով ու նոր անուններով, որոնց չնորհիւ այժմ դժուարացել է, շատ անգամ անկարելի եղել, ստուգելու անցեալը, տեղերն ու հնութիւնները:

Այս արգելող հանգամանքը աւելի շեշտուում է մասնաւորապէս ԶԵՅԹՈՒՆ գաւառոի նկատմամբ, չնորհիւ իր աշխարհազրաւկան գիրքի: Սատուգելու և վեր հանելու համար նրա անցեալը, հարկաւոր է նկատի ունենալ պատմական գէպերի յարաբերութիւնները, հայ կամ զլաւորապէս օսար պատմիչների աշխարհազրաւկան և տեղագրական գրուածները և ներկայումս տիրող հասարակական կարգերը, սրանց հիմունքները՝ բաղդատելով անցեալի հետ Եւ դրանք վերաբերում են ոչ միայն ԶԵՅԹՈՒՆ գաւառի անցեալին, այլ նաև այն բոլոր յարաբերութիւններին ու գաղթականական ընդարձակ շարժումներին, որոնք կատարւում էին միջին և աւելի նախորդ դարերում Հայաստանի և Կիլիկիայի մէջ, երբ հայերը Միջին-Հայաստանից իրանց հասարակական և պետական կազմով փոխազրւում էին գէպի Բագրատուննեաց երկիրը, կամ գէպի Կիլիկիա՝ հիմնելով նոր հարստութիւններ (dynastie), նոր հայրենիք:

Նկատի ունենալով այդ ժամանակի տիրող քաղաքական և

տնտեսական դրութիւնները և գոյութեան կռուի պայմանները ժողովուրդների մէջ, Զէյթուն գաւառը կարեոր տեղ էր դրաւում ամբողջ Կիլիկիայում, չնորհիւ իր աշխարհազրական ու լեռնային դիրքի, ճոխ բուսականութեան և յարաբերութիւնների: Այդ գաւառը սահմանակից է Եփրատի հովտին, Սիւրիային և Կիլիկիայի Ընդարձակ տափարակին, որոնք ներկայանում էին Հին-Աշխարհի զիխաւոր անցքերը, ճանապարհները, որտեղերից անցնում էին և Ընդհարւում պարսկական, հոռվմէական, յոյների, արաբների, եղիպատացիների և այլն արշաւող բանակները, ինչպէս նաև գաղթական ցեղերից մեծագոյն մասը: Նա էր Կիլիկիայի արեելեան գուռը և պահպանում էր նրան այդ կողմից արշաւող ժողովուրդների գէմ, կզզիացած ու ամրացած լինելով լեռնային անանցանելի գօտիներով. բացի դրանից ասպատակող թշնամին գաւառի ամեն մասում հանդիպում էր նեղութան գաւառուր կիրճերի, անառիկ լեռների ու բերդերի, որոնք ներկայանում էին իբրև «Թակարդներ կամ սատանաների որջեր»:

Այսպիսի բնական առաւելութիւններով օժտուած մի գաւառի տէր էին հայ ազնուական իշխանները նախ քան Ռուբինեան իշխանութեան կազմուելը, գեռ ևս 10—11-րդ դարերում. մինչդեռ աւելի կանուխ այնտեղ բնակուած էին հայեր, կային հայկական գիւղեր: Այդ գաւառը եղաւ ծիլք, որի շուրջը կաղմակերպուեց հայոց Կիլիկիան: 8—9 դարերում Զէյթուն լեռնագաւառը ապաստանեցին կամ գաղթականներ, և Բագրատունիների քաջայումից յետոյ նրանց իշխանները և զօրապետները գտան այնաև հնուց հաստատուած եղբայրներ մի կողմից, միւս կողմից անառիկ բերդեր, և հիմնարկնեցին այդ ուժեղ դինաստին, որ մի քանի դարեր շարունակաբար նշանակելի դեր կատարեց Միջին-Դարում մեր ազգային կեանքի և Խաչակիրների պատմութեան մէջ: Այս բոլորը հետևում են պատմական ապացոյցներից: — Ժամանակագրութիւնների մէջ յիշատակուած ենք տեսնում, դեռ ևս IV-րդ դարում, Արքեղայոս, նախարար դ. հայոց, Ծոփաց իշխանը սպանելով Արէստակէսին՝ փախչում և ապաւինում է Կիլիկիա. այս արդէն բացատրում է, որ հայերը շատ առաջները ծանօթ էին Կիլիկիային և ունէին, ինչպէս տնտեսական-վաճառականական, որ մաստարակոյս է, նոյնպէս և քաղաքական յարաբերութիւններ: Արաբական պատմիչների համաձայն հայերը 809 թուին թողին իրանց «գեղեցկաշէն Խալալ քաղաքը և բնակուեցին Սիս», որ իբր թէ նորոգուել էր արաբացիների կողմից \*): 900—10 թուականներում բաղ-

\*) Տեսնել «Ծիսուան» էջ 214.

մաթիւ սասունցի աղնուականներ իրանց մարդկանցով գրաւում են Կիլիկիայում տեղեր և հաստաւում<sup>\*)</sup>; Աւելի վերջը Գէորգ Սլեհը, որի փորազրուած կնքը Պարիզի թանգարանումն է, առպատակում է Մարաշու կողմերը և գրաւում Մելտենին (Մալաթիա), 970—90 թ. Խաչիկ կաթողիկոսը կարգում է հայ եպիսկոպոսներ Կիլիկիայի գանազան կողմերում, ուր և կային մէկից աւելի եպիսկոպոսանիստ թեմեր; Այս թուականներից յետոյ արդէն պատմութիւնը աւելի և աւելի պարզում է և հայերը հոծ բազմութիւն էին կազմում այնտեղ: Բաւական ժամանակ վերջը Ներսէս Լամբրոնացին գրում է՝ «Հաղիւ կայ 60 տարի, որ Փրանկները տիրեցին այս կողմերը և այդ ժամանակի ընթացքում ամբողջ Սիւրբիան, Կիլիկիան, Պամպիլիան և Կապաղովկիան լքցուած էին հայերով: Նրանք չունեին եկեղեցի շատ գաւռներում և գտնուում էին մոլորուած զրութիւնն մէջ, մինչդեռ նորեկ Փրանկները երկրի ամեն մատերում կառուցանում էին եկեղեցիներ ու վանքեր...»<sup>\*\*)</sup>): Հայերը ապրում էին խառն յոյների և նորեկ Փրանկների հետ, առանց խտրութեան կրօնի, յաճախում նրանց եկեղեցիները և միասին տօնում քրիստոնէական տօները: Եւ այդ զրութիւնը շարունակուեց մինչև 10—11-րդ դարերը, ինչ ժամանակ բիւզանդական ընդարձակ կայսրութիւնը՝ ենթարկուած մի կողմից արաբական և այլ բազմաթիւ մահմենդական ազգերի, միւս կողմից Զենովացիների և Միջնա-Երոպայում կազմուած պետութիւնների յարձակումներին, հետզհետէ թուլանում, սպառուում էր: Զեյթունը, ինչպէս և Կիլիկիայի բոլոր գաւառները, գտնուում էին կիսանկախ աւատատէրերի ձեռքում: Հայերը հետզհետէ կարենոր զիրք գրաւեցին և XII-րդ դարի վերջը նախ յոյները և յետոյ Փրանկները հեռացան կամ կլանուեցին, ամեն կողմ կանգնեցին հարիւրաւոր վանքեր և եկեղեցիներ: Փրանկների և յոյների եկեղեցիներից կամ վանքերից շատերը անցան հայերի ձեռքը և արդէն XIII-րդ դարում լեզուն և հասարակական բոլոր կարգերը բաշարձակապէս հայկական էին: Դրացիական այդ ամենամօտ յարաբերութիւնների չնորհիւ կուլտուրապէս բարձր ազգերի հետ, հայերի կենաքում հետզհետէ առաջացաւ հասարակական և տնտեսական արագ և նշանակելի մի էվոլիւսիօն: Հայերն ընդունեցին եւրոպական և բիւզանդական կեանքից նորութիւններ, սովորեցին և քիչ յետոյ բոլորովին իւրացրին արհեստները, ճարտարապետու-

\*) Տեսնել «Սիսուանից ժամանակագրութեան կարգում»:

\*\*) Քաղուածքներ Վ. Լանդուալի *Le tresor des chartes d' Armenia*-ից:

թիւնը, հանգային արուեստը և մասնաւորապէս երկաթագործութիւնը, որ իր ժամանակի սիստեմով շահագործում և արդիւնաբերում էին մինչև վերջին ժամանակներս։ Անմիջական կերպով ընկաւ հայերի ձեռքը Միջին-Ասիայի և Հնդկաստանի ցամաքային վաճառականութիւնը, որ մինչև այդ ժամանակ բիւզանդական յոյների ձեռքին էր, որոնք վոնդուեցին այդ ասպարէղից Զենովյալի և Վենետիկի հասարակապետութիւնների աջակցութեամբ։ Կիլիկիայի հայ վաճառականները եղան, որ տարածեցին և զարգացրին Միջերկրական եւրոպական ափերի և Պարսկաստանի, Թիւրքեստանի և մինչև Հնդկաստանի միջև գտնուած առևտութը։ Մենք կարծում ենք, որ եթէ Հնդկաստանի հայոց անցեալ գարերի գրուածներն ու արխիվները ուսումնասիրուանն, կարելի է գտնուեն զօկումչնուներ այս նիւթերի վերաբերեալ Յոյների ճարտարապետութեան ազդեցութիւնը մինչև իսկ նկատելի է Զէյթունի հայոց բնակարանների, նրանց ձևերի և կազմութեան վրայ, որոնք հէնց այժմ զգալի կերպով տարբերուած են կիլիկիայի ստորին գաւառների բնակարանների ձևերից, մինչդեռ ընդհակառակը նմանութիւն ունեն Փաքր-Ասիայում լեռնադրներ յոյների տների կազմի և ոճի հետ եւ հէնց այս ուժեղ յարաբերութիւններով և շփումով կարելի է բացատրել հասարակական և վարչական այն նշանաւոր յեղափոխութիւնը, որի մասին գիտնական Վ. Լանգրուա զարմանք է յայտնում, որ այդպիսի կարճ ժամանակի ընթացքում, և, որ զլօաւորն է, առանց գծուարութիւնների կամ ծանր հետեւնքների, հայոց պետական ձեր և սկզբունքները, որոնք գոյութիւն ունէին նախարդ դինաստինների ընթացքում, ենթարկուեցին հիմնական փոփոխութիւնների և իսու Ա-ի օրով հաստատուեց նոյն այդ ժամանակի քրանսիականի և Միջին-Դարում Եւրոպայում գոյութիւն ունեցող պետութիւնների գրեթէ յար և նման պետութիւն՝ մինոյն ֆէօդալական և վարչական սկզբունքներով։

Նախ քամն Զէյթունի մասին մասնաւորելը, մենք գնանք գէպի յետ, 8, 9, 10-րդ դարերը՝ ստուգելու այն, թէ ի՞նչ ճանապարհներով, ինչպիսի ժամանակներ և հին Հայաստանի որ մասերից հայերը գաղթեցին կիլիկիա, և որ գաւառները։ Այդ ժամանակամիջոցում բիւզանդական կայսրութիւնը և Հայաստանը ենթարկուեցին արաբական, պարսկական և այլ ազգերի յարձակումներին։ Հայաստանն ընկածուեց և հայերը՝ իրանց գոյութիւնը փրկելու համար փախչում, գաղթում էին զանազան կողմեր, իսկ մինոյն ժամանակ Բիւզանդիան տառանուած էր, նրա աղբեցութիւնն ու ոյժը զգալի կեր-

պով ոչնչանում էին, նա մանաւանդ կիլիկիայում: Հայերի մածագոյն մասը դիմաց դէպի արևելք, Սիւնեաց աշխարհը, և ծնունդ տուեց Բագրատունիների գինաստիհն, մինչդեռ մէկ տրիշ մասը անցաւ դէպի արևմուտք, Կիլիկիա: Հայերը 8 և 9-րդ դարերում կիլիկիա անցան միմիացն հիւս.-արևելեան ճանապարհով, ներկայ Օւզուն-Եայլա կոչուած լեռնադաշտով ու Եփրատի հովիտով և հաստատուեցին Ալբիստանում, Զէյթունի զաւառը, Տերդուս, Մարաշա: Աւելի հնումն էլ ասորական, պարսկական, ինչպէս մի անգամ էլ Սրչակունեաց Տիգրանի, արշաւանքները, մակեղոնական, հոռմէական, յունական ընդհարումները պարսկաց հետ, ինչպէս նաև արաբների ու եղիպատացիների մուաքն ու արշաւանքները ամեն անգամ կատարւում էին կիլիկիայի արևելեան և հիւս.-արևելեան լեռնանեղուցներով և Եփրատի հովիտով: Այդ էր միակ միջոցը, որպէս զի հայերի ահազին գաղղթականութիւնը անց կմնար դէպի կիլիկիայի լեռնային գաւառները: Տաւրոսի ընդարձակ լեռնաշղթան, որ կիլիկիան բաժանում է բնական կերպով Փոքր և Միջին-Ասիայից, բաց է անում զլիսաւրապէս երեք կիրճներ կամ նեղուցներ, որոնցով բաղմաթիւ ազգեր, այդ կիսավայրենի դարերում, հնարաւորութիւն ունէին կատարելու իրանց չուն, գաղղթականութիւնը: Դըրանցից մէկը, Օւզուն-Եայլան (այժմ ընակուած են Դաղստանից զաղթած չէրքէզները) և Եփրատի հովիտն է, որոնց սահմաններում գտնուում է Զէյթունի անտոփի լեռնագաւառը. այդ ճանապարհով հազորդակցութիւն էին սահմանում կիլիկիան, Սիւրիան և Միջերկրականը՝ Պարսկաստանի և Միջին-Ասիայի հետ: Երկրորդը յայտնի Կուկլակայ Կապանն է, կապագովկիայի և Փոքր-Ասիայի մէջտեղ: Երրորդն է Դրւենք Սիւրիոյ կոչուածը, որտեղից ասպատակում էին ամեն անգամ արաբներն ու եղիպատացիները: 8 և 9-րդ դարերում, երբ Բագրատունեաց գինաստին կազմուկերպում էր և զօրաւոր գառնում, քաղաքական և կրօնական անհաշտութիւնների չնորհիւ, Բիւզանդիան հայերի հետ վարւում էր թշնամաբար և պատերազմում հետները: Այդ ժամանակ Կուկլակայ անցքը գտնուում էր բացարձակապէս յոյների ձևորում. զա հայերի համար ընդմիշտ փակուած էր. մինչդեռ արևելեան անցքն աղատ էր, յոյները թոյլ էին, հետզեւէ նահանջում և տեղի էին տալիս արևելեան ծայրերից: Պարզ է, որ հայերին մեռում էր անցնել այդ վերջին ճանասպարհով և, հետեւաբար, նրանց գաղթական ընտանիքները տարածուեցին և հաստատուեցին զլիսաւրապէս Զէյթունի, Կոկիսօնի, Ալբիստանի և Մարաշի գաւառներում, որոնց թւում ամենից անտոփիկը և աղանովը Զէյթունն էր:

Տ և XI-րդ դարերում, սակայն, Բագրատուննեաց դինաստին էլ քաջայուեց և Սիւնեաց աշխարհը դարձաւ աւերակ։ Դարեսոր ուրուականը հաղածում էր հայերին և նրանք հեռանում էին մի երկրից միւսը՝ պահպանելու գոյութեան իրաւունքը։ Նըրանց լնակուած երկիրը, միջնաշխարհնեան բնաւորութեան և յարաբերութիւնների, պատերազմների։ Հոսմէացիների, յօյների, ասիական բազմաթիւ ազգերի արշաւանքների և աշխարհակալութեան ճանապարհն էր հայոց երկիրը։ և նրանց դարերի աշխատանքը՝ մի մնագամից փշտում, ոչնչանում էր։ Բագրատունների ալիսուական իշխաններն ու գօրապեանները թողին իրանց երկիրը և դիմեցին էլլ գէպի արևմուաք, գէպի Կիլիկիա, ուր զնացել էին իրանց նախնիքները երկու-երեք դար առաջ։ Եւ սակայն այս տնգամբ Տ և XI-րդ դարերում քաղաքական հանգամանքները փոփոխուել էին, դրամի երեսը շուռ էր երեկո։ Բիւզանդական հզօր կայսրութիւնը՝ իր պատմական գերը կատարած, ցած էր ընկնում իր բարձրութիւնից։ Մահմեդական արշաւանքները, ուժեղ ալիքների նման, զարկուում էին նրան ամեն կողմից։ Նա յետ-յետ էր նահանջում, սեղմուում։ Բիւզանդիան ինքն էր այս անգամ հեշտացնում հայերի հաստատութիւնը կիլիկիայում։ Գուցէ հասկացել էր իր գործած ծանր սխալը Բագրատունների ժամանակ կամ աւելի առաջ։ Նա աջակցում էր հայերին այն նպատակով, որ ուժեղ դիրք գրաւելով՝ նրանք պատուար գառնային մահմեդական էնվագիօնի դէմ, որ բուռն հոսանքով գլուխում էր գէպի նրա սիրտը, կ. Պօլիսը։ Եւ այսպէս, 10 և 11-րդ դարերում հայերի առաջ փակուած, խափանուած էր Եփրատի հովտը և կիլիկիայի հիւս-առեկեան սնցքերը, մինչդեռ միւս կողմից, ընդհակառակը, բացուել էր Կուլիկայ կապանը, որ ներկայացնում էր ազատ ճանապարհ Բագրատունների երկրից գէպի կիլիկիա զիմով հայերին և նրանց իշխաններին։ Այս պարզ է և այն պատմական արձանագրութիւններից, որ Ռուբինեան հայերը կիլիկիայում բերդեր ձեռք բերեցին նախապէս Կուլլակայ սահմաններում։ Օշինը գրաւեց Լամբրոնը, նրա եղբայրը՝ Տարսօնը, Ռուբէնը և նրա որդին՝ հետզհետէ հիւսիսային լեռնային բերդերը, աւելի վերջ Մարաշը, Հոսմէլան և այն, ինչ ժամանակ մահմեդականները յետ էին մղուել և իսաչակիրները գրաւել ու քրիստոնեաց փոքրիկ պնտութիւններ հաստատել Սիւրիայում և Պալեստինում։

Երբ Ռուբէնը և միւս իշխանները անցկացան կիլիկիա, սեղացի հայերը, որոնք զաղթած էին Հայաստանից երկու-երեք դար առաջ Եփրատի հովտով և զանուում էին հին Զէյթունի, Կոկիսօնի, Ալիստամի և շրջակայ գաւառներում, համախմբուե-

ցին նրանց շուրջը: Նոյն ժամանակի պատմագիրը գրում է \*): «Յորժամ լուաւ զմահն Գագկայ յարուցեալ ամենայն ղարմիք իւրովք՝ (Մուբէն) եկն ի կողմանս Փոխոգիոյ, (նախ քան Գագիկի մահը Ռուբէնը բնակում էր Բագրատունեաց երկում, Կօսիտառայ բերդում) դիմելով ի գեօղ մի Կօզմօզօլազ անուն (յունական բառ) և անդ բնակեալ յորում ի լերին էին բնակեալ բաղումք յազգէն հայոց, դորս ամենեսեան զնոսա առ ինքն կոչեալ՝ Մեծն Ռուբէն, և նոքօք զօրացեալ՝ էառ զլեռնային կողմանս. զհոռոմն (յոյներ) անտի ի բաց մերժեալ, և զնոցա տեղիսն առեալ...» Այդ փորբաժիւ զաղթականութիւնը կարող էր անհետանալ, կը անուել միւս ազգութիւններից, եթէ Բագրատունիների գաղթային նոր հոսանքը չառաջանար, նոր հոսանք, որ բեղմնաւոր գարձաւ, վերածնեց ազգային կեանքը և նրան փրկեց անհետանալու վտանգից այդ խաւար և կիսավայրենի դարերում:

Վերոյիշեալ եղելութիւններն ու ապացոյցները մեզ տալիս են բաւական հաստատ հիմք յայտնելու որոշ կերպով, որ ներկայ Զէյթունը և գաւառող հայերով բնակուած էր 8 և 9-րդ դարերում, նախ քան Ռուբինեան դիմասալիի կազմութիւնը. նրանք գաղթել էին Հայաստանի այն նահանգներից, որոնք սահմանակից էին Կիլիկիային: Այդ հնուց եկած բնակիչներին միացան 10—11-րդ դարերում Բագրատուննեաց երկրից գաղթածները, որոնք գրաւելով նախապէս լեռնային գաւառներն ու բերդերը՝ հիմնեցին նոր հարատութիւն: Այդու ամենայնիւ, ստուգելու համար Զէյթուն գաւառի անցեալը, բացի տեղագրական և պատմական ապացոյցներից, մենք ի նկատի ունենք և քննում ենք նաև գաւառի և բնակիչների ներկայ հասարակա-տնտեսական հիմունքներն ու կազմը, և գրանց բազդատում Կիլիկիայի Միջին-Դարի հասարակական կազմի և պայմանների հետ Ընդհանրապէս խաչակիրների (գերմանայի, ֆրանսիայի, վենետիկյի և այլն) մտերիմ յարաբերութիւնների ազգեցութիւնը Ռուբինեանց թագաւորների և նրանց վարչական կարգների վրայ՝ առաջ բերեց Փէօդալական մի նոր ձև \*\*), որ հիմնապէս տարբեր էր Արշակուննեաց կամ Բագրատուննեաց ազնուապետական կարգերից. և ընդհակառակը շատ նման էր նրանց, որոնք գոյութիւն ունեին Միջին-Դարի Եւրոպայում: Այդ պիտաւոր տարբերութիւնը կայանում էր հողի տիրապետութեան հարցում և թագաւորի ու

\* ) Տե՛ս Սիսուան. 44 երես:

\*\*) Տե՛ս Le tresor des Chartes d'Armenie ou Carturair, par Victor Langlois, 1863, Venise. Constitution Sociale et politique de l'Arménie sous les Roupenienes.

ազնուտկամնների յարաբերութիւնների մէջ։ Հայոց անցեալ հասրակական կազմութեան մէջ հողը—մի գաւառ կամ նահանգ եր որոշ սահմանագծերով—ազատ էր և պատկանում էր ժառանգաբար այս կամ այն նախարարական տան, անկախ թաղաւորից կամ նրա անմիջական միջամտութիւնից. իսկ աղնուական հողատէրը պարտաւորում էր աջակցել թագաւորին, երբ այդ անհրաժեշտ էր հայրենիքի պաշտպանութեան համար պատերազմի կամ էնվազիօնի ժամանակ։ Մինչդեռ Ռուբինեանների ժօտ, ընդհակառակը, հողը—գաւառը կամ բերդը—պատկանում էր թագաւորին և վերջինս բացարձակ իրաւունք ունէր այդ յանձնելու այս կամ այն իշխանին կամ հասարակական հիմնարկութիւններին (ընդհանրապէս հայ կամ օտար եկեղեցիներին). և կամ յետ կորզելու։ Ի հարկէ այդ զանազանութիւնները առաջանում էին իր ժամանակի անտեսական ընդհանուր դրութեան կամ շրջապատող քաղաքական հանգամանքներից, որոնց բացարութիւնները անհրաժեշտ չենք տեսնում այստեղ մէջ բերել, այլ բաւականանում ենք միայն նկատել և արձանագրել որպէս իրողութիւններ։ Զէյթունն էլ, անտարակոյս, որպէս Կիլիկիայի մի կարևոր մասը, ժառանգել և ղեկավարուել է Միջն-Դարի մի և նոյն ֆէօդալական կազմակերպութեամբ, և ապացոյց է այն, որ ֆիօդալական միենոյն սիստեմն ու կազմակերպութիւնը մնենք տեսնում ենք նաև ներկայումս, հետզհետէ քայլայման դրութեան մէջ, մի և նոյն օրէնքները, հասարակական կարգերը՝ պահպանուած երկար գարերից ի վեր։ Եւ որանով աւելի ևս ապացուցւում է, որ Զէյթունը եղել է Կիլիկիայի նախնական գաւառներից մէկը, ի հարկէ մէկ ուրիշ անուշով, որի մասին քիչ յետոյ կը խօսենք, և իր աշխարհագրական կարեռը զիրքով ունեցել է մոծ նշանակութիւն։ Շրջակայ քիւրտ, թիւրք, թաթար և այլն ցեղերի մէջ գոյութիւն ունի նախնական ձեռվ աղնուապետական կազմութիւն, որ նմանապէս անհետանում է. մինչդեռ Զէյթունը մեկուսացած՝ զանազանում է իր որոշ կարգերով և հասարակական կազմով ոչ միայն այդ բոլորից, այլ նաև Մարաշում, Գեւառ-Դաղում և այլն բնակուող հայկական գաւառներից։ Խնչպէս նախորդ գլուխներից մէկում բաշարուած է։

Զէյթունում գոյութիւն ունին երկը գասակարգ (category).—աղնուական իշխանները, նրանց գերդաստանները, որոնք վայելում են որոշ իրաւունքներ. յետոյ գալիս են աղնուական հեռաւոր ընտանիքները, որոնք միջին տեղ են զրաւել իշխանների և զիւղացի, հասարակ ժողովրդի մէջ։ Յայտնի տեղագրական սահմաններով զիւղեր և օբաններ պատկանում են այս կամ այն իշխանին, որոնք թէն չունեն հո-

դային բացարձակ սեփականութիւն բնակիչների հողերում, ինչպէս Ռուբինեանց ազնուական տները \*), և սակայն բնակիչները, առանց խարութեան կրօնի կամ ազգի, կիսավասսալներ են այդ շրջանի իշխաննեն. Նրան վճարում են որոշ տուրքեր, ստանում հրահանգներ, կամ նրա զրօշակի շուրջն են համախմբում և կուռում հարկ եղած գէպքերում \*\*):

## ՀՐԱԶԵԱՑ

(Կը շարունակուի)

\*) Տեսնել Վ. Լանգլուալի և պատմագիր Սմբատի հաղորդած տեղեկութիւնները:

\*\*) Զէյթունում կղերական առաջնորդներն էլ ունեն իշխանների հաւասար իրաւունք և ինչպէս Ռուբինեանների ժամանակը (ուեսնել Սըմբատ պատմ. 647 եր.) նրանք էլ մասնակից, խորհրդակից են ազնուականների հետ՝ ինչպէս հասարակական, նոյնպէս պատերազմական գործերում:

# ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

## III

Բլոնդել փողոցի գարեջրատունը:

Ամուսնանալուց յետոյ Ռիսէրը ձեռք էր քաշել գարեջրատնից: Սիդօնին ուրախ կը լինէր, եթէ նա երևէ ուները տանից դուրս դար, զնար մի որ է ընտիր ժողովարան, ժամանակ անցնէր հարուստ ու լաւ հաղնուած մարդկանց շրջանում. բայց այս միտքը, թէ իր ամուսինը կարող էր վերադառնալ չիբուխների ծխով մի գարեջրատունը, հին ժամանակուայ բարեկամների, Սիդիդունդի, Դըլօրէլի ու իր հօր մօտ, ստորացնում էր Սիդօնիին ու անբախտացնում: Եւ Ռիսէրը այլ ևս չը գնաց այստեղ, թէև հեշտ ըան չէր այդ նրա համար: Նրա համար գրեթէ հայրենիքի յիշատակ էր այդ՝ հին Պարիդի մի յետ ընկած անկիւնում գանուող գարեջրատունը: Կառքների սակաւութիւնը, ներքին յարկի բնակարանները բարձր ու վանդակապատ լուսամուտներով, գեղագործական ապրանքների ու գեղանիւթերի թարմ հոտը՝ այդ փոքրիկ Բլօնդէլ փողոցին մի հեռաւոր նմանութիւն էին տալիս Բաղէլի կամ Ցիւրիիսի որոշ փողոցների հետ: Այդ գարեջրատունը պատկանում էր մի շվեյցարացու և լիքն էր լինում շվեյցարացիներով: Դուռը բացուելիս, չիբուխների ծխի մշուշի և հիւսիսային բարբառների ծանր մթնոլորտի միջով երեսում էր մի ցածիկ ու ընդարձակ սենեակ առաստաղի գերաններից կախուած խոզապուխտներով, շարէշար գարեջրատակառներով, մի թղաչափ բարձրութեամի շաղ առած փայտի թեփով և հաշուեսկզմնի վրայ մեծ-մեծ աղցանամաններում դարսած շազանականման վարդադոյն գետնախմնորներով ու զամբիւզների մէջ լցրած նոր թիսած աղի բեկսցէլերով:

Քսան տարի շարունակ Ռիսէրն ունէր այդտեղ իր երկար չիբուխը, որի վրայ գրուած էր իր անունը և որ պահուում էր մշտական յաճախորդների չիբուխակալում, և իր սովորական սեղանը, որի շուրջը նստում էին մի քանի համեստ ու լուսկեաց հայրենակիցներ, որոնք, առանց հասկանալու, բայց հիացմուն-

քով, լսում էին Շէրի և Դըլօբէլի անվերջ վիճաբանութիւնները։ Երբ Ռիսլէրը դադարեց գարեջրատուն դնալուց, այդ վերջին երկուան էլ ոտները կտրեցին այնտեղից, մի քանի յարգելի պատճառներով։ Նախ և առաջ, ապ. Շէրը շատ հեռու էր կենում այժմ։ Իր զաւակների մեծահոգութիւնան չնորհիւ նա, վերջապէս, իրականացրել էր իր ամբողջ կեանքի երազը։

—Երբ որ հարստանամ, ասում էր միշտ այդ փոքրիկ մարդը իր՝ Մառէյի տխուր բնակարանում, սեփական տուն կ'ունենամ Պարիզի մօտակացքում, զրեթէ գիւղում, մի փոքրիկ պարտէզով, որ ինքս իմ ձեռքով կը փորեմ ու կը ջրեմ։ Այդ իմ առողջութեանը աւելի օգուտ կը բերի, քան մայրաքաղաքի յուղմունքները։

Եւ ահա նա ունէր այժմ իր սեփական տունը, բայց, կարող էր հաւատալ խօպիս, որ նա ուրախ չէր զգում իրան այնտեղ։

Մօնուժումն էր այդ, Պարիզի շրջապատային երկաթուղու գծի վրայ, «փոքրիկ շալի, պարտէզով», ասում էր ստուարաթղթէ քառակուսի ցուցանակազդիրը, որի մեծութիւնը մօտաւորապէս ճիշտ գաղափար կարող էր տալ կալուածքի ծաւալի մասին։ Որմաթղթերը թարմ էին և գեղջկային, ներկերը բոլորովին թարմ, իսկ վայրի խաղողից հիւսուած տաղաւարի կողքին գրուած պարտէզ ջրելու տակառը ջրի աւագանի գեր էր իսուդում։ Աւելցրեք այդ բոլոր առաւելութիւններին և այն, որ միմիայն մի ցանկապատ էր բաժանում այդ դրախտը մի ուրիշ բոլորովին նոյնանման «պարտէզով շալէից», ուր ապրում էին գանձապետ Սիզիվմունդ Պլանուսն ու իր քոյրը։ Տիկին Շէրի համար այդ մի թանկագին հարեանութիւն էր։ Երբ իսեզծը ձանձրանում էր, վերցնում էր մի կոյտ ձեռագործ ու կարկատաններ և գնում օրիորդ Պլանուսի տաղաւարը, ուր շացնում էր այդ պառաւ օրիորդին, պատմութիւններ անելով իր փառաւոր անցնալի մտսին։ Դժբախտաբար նրա ամուսինը, ապ. Շէրը չէր կարողանում զուարձութիւն գտնել այդպիսի բաներով։

Դեռ սկզբում ոչինչ, ամեն բան լու էր գնում։ Ամառուայթունդ ժամանակն էր, և ապ. Շէրը, միշտ սիւրուուկը հանած, նոր տունը կարգի էր բերում։ Ամենափոքրիկ մեխը, որ պէտք էր լինում իսկեւ, առիթ էր տալիս գատարկ գատողութիւնների ու անվերջ վիճաբանութիւնների։ Նոյնն էր և պարտէզի վերաբերմամբ։ Նա սկզբում վճռել էր անզլիքական պարտէզ շինել նրանից, մշտադարար սիզամարգերով և թաւուաներով հովանաւորուած ոլորապտոյտ ծառուղիներով։ Բայց այդ անպիտան թաւուանները շատ գանդաղ էին աճում։

— է՞ն, ուզում եմ մրգատու պարտէզ շինել, ասում էր  
անհամբեր Շէքը:

Եւ ահա նա երազում է ունենալ եղերքներին կանաչեղին  
ցանած լոբու մարդեր և պատերի կողքին տնկած գեղձենիներ,  
ու ամբողջ առաւօտները փորում է պարտէզը, մտազբազ կեր-  
պով կիտելով յօնքերը և կնոջ առաջ ճակատը ցուցամոխարաք  
սրբելով, որպէսզի նրան ասել տայ.

— Դէ մի քիչ հանգստացիր, այ մարդ... սպանելու հօ չես  
քեզ,

Վերջ ի վերջոյ, պարտէզը խառը պարտէզ եղաւ—կէսը  
ծաղիկ, կէսը պատուիներ, մասամբ ծառաստան, մասամբ բանջա-  
րանոց, և պ. Շէքը, ամեն անդամ Պարիզ գնալիս, անպատճառ  
զարդարում էր կուրծքը՝ խրելով կոճակի մէրքի մէջ իր ծաղկա-  
նոցից քաղած մի վարդ:

Քանի որ լաւ եղանակներ էր դեռ անում, մարդ ու կնիկ  
հա հիանում էին ամրոցների յետեւմ մայր մտնող արևի վեր-  
ջալոյսից, ցերեկների երկարութիւնից, գիւղական հրաշալի օդից:  
Երբեմն-երբեմն երեկոները՝ բաց պատռեանների մօտ նստած  
նրանք երգում էին երկայն, և Ֆերդինանդը, դիտելով շրջա-  
պատային երկաթուղու լապտերների հետ միաժամանակ փայլել  
սկսող աստղերը՝ քնարերգական տրամադրութեան մէջ էր ընկ-  
նում... Բայց ինչ ախրութիւն պատեց նրանց, երբ սկսուեցին  
անձրեները և նրանք այլ հս չեին կարողանում տնից դուրս  
գալ: Տիկին Շէքը, իբր իսկական պարիզուհի, սկսեց ափսոսան-  
քով յիշել Մառէյի փոքրիկ փողոցները ու իր գնալ-գալը Բլան-  
Մանտո չուկան և թաղի վաճառատունները:

Լուսամուտը նրա դիտանոցն էր և կարուծեի տեղը, և նա  
ապակու միջով դիտում էր շարունակ իրանց փոքրիկ պարտէզը,  
—ուր սերմ ընկած պատաստուկներն ու ծաղկաթուփի հնդկակո-  
տիմները ցանկապատից պոկ եկած յետ էին քաշուել յոգնած  
տեւքով,—երկաթուղու մշագալար հողաթմբերի երկար և ու-  
ղիղ զիծը և մի քիչ հեռում, Պարիզի հանրակառքերի կայա-  
րանը, որտնց բոլոր կայարանները հրապարիչ տառերով գրուած  
էին ջնարակուած ոլատկերի վրայ: Ամեն անգամ, երբ այդ հան-  
րակառքերից մէկը աեղիցը շարժում էր ճանապարհ ընկնելու  
համար, նա աչքը ման էր ածում յետից, —ինչպէս կայէննում  
կամ նումէայում գտնուող մի ծառայող դիտում է ֆրանսիա  
վերադարձող շողենաւը,—երեակայութեամբ զնում էր հետը ու  
զիտէր թէ որ կէտում նա կանգ կ'առնի և ար կէտում նա ծանր-  
ծանր պայտ կը տայ՝ անիւններով քերելով խանութների պատռ-  
հանները...

Իսկ պ. Շերը զարհուրելի էր դարձել, փակուած մնալով տանը: Նա այլ ևս չէր կարողանում աշխատել պարտէզում: Կիրակի օրերը ամրութիւնների պատճեցը ամայի էր բոլորովին. այլ ևս հսարաւորութիւն չը կար զբօննելու խոտի վրայ նախաճաշող բանուոր ընտանիքների մէջ և գնալ մի խմբից միւսը, իբր դրայի, ասղագործ հողաթափներով և մօտակայքի հարուստ կալուածատէրի հեղինակաւորութեամբ: Այդ բանի պակասն էր առանձնատպէս զգում այդ մարդը, որ մնուած էր նրա համար, որ իրանով զբաղուեն: Այնուհետև անդործ մնալով և չունենալով մէկը, որի առաջ պարծենար, և որ լսէր նրա ծրագիրները, նրա պատմութիւնները և Օրիէանի գուգսին պատահած արկածը,— այդպիսի մի արկած էլ, գիտէք, իրան էր պատահել երիտասարդ հասակում,— գժբախտ ֆերդինանդը սկսեց յանդիմանութիւններ թափել իր կնոջ գլխին:

—Աղջիկ մեղ քշել է Պարիդից... Աղջիկ ամաչում է մեղնից...

Էլ ուրիշ խօսք չէր լուսում. հէնց հաւաղջիկդ... աղջիկդ... ու աղջիկդ...»: Որովհետեւ, լի զայրոյթով Սիդօնի դէմ, նա հրաժարւում էր նրանից, ինո՞չ վրայ միայն զցելով այդ հրէշաւոր և փչացած զաւակի պատասխանատութիւնը: Եւ խեղճ կնիկը կատարեալ սփոսիանք էր զգում, երբ ամուսինը նստում էր կայարանի հանրակառերից մէկը, որպէս զի գնար դանէր Դըլօբէլն, որ միշտ պարապ ժամանակ ունէր հետը մնան գալու, և սիրտը հովացնէր, պատմելով լողոր իր կսկիծները իր փեսայի ու աղջկայ դէմ:

Հոչակաւոր Դըլօբէն էլ չարացած էր Ռիսլէրի դէմ, և նրա մասին խօսելիս սիրում էր ասել, թէ նա «ընկերամոռ մարդ է»:

Մեծ մարդը յոյս ունէր նոր ընտանիքի անբաժան մասը կազմնլ, դառնալ այդ ընտանիքում տօնահանդէսների կազմակերպիչ, ճաշակի գատաւոր: Իսկ, ընդհակառակիլ, Սիդօնին սկսել էր նրան շատ սառն ընդունել և Ռիսլէրը մինչև անգամ այլ ևս գարնջրատուն չէր տանում նրան: Սակայն գերասմնը շատ էլ բարձրածայն չէր յայտնում իր տրտունջը, և ամեն անդամ Ռիսլէրին պատահելիս, չափազանց սիրավիր ու շողոքորթ կերպով էր վարւում հետը, որովհետև չուտով կարօտութիւն էր ունենալու նրանից:

Յողնելով խելացի թատրոնապետի սպասելուց ու տեսնելով, որ ոչ ոք չէ առաջարկում իրան՝ տարիների ընթագքում ակնկալած գերը, Դըլօբէլը վճռել էր մի թատրոն գնել ու անձամբ շահագործել: Փողի կողմից նա յոյս ունէր Ռիսլէրի վրայ:

Հենց այդ ժամանակները Տամով բուլվարում մի փոքրիկ թատրոն էր ծախւում՝ թատրոնավետի մնանկութեան պատճառով։ Դրօքէլը խօսեց այդ բանի մասին Ռիսլէրի հետ սկզբանում շատ անորոշ կերպով, ենթադրական ձևով. — «Շահաւէտ բան կարող է լինել»։ Ռիսլէրը լսում էր իր սովորական պաղարիւնութեամբ, ասելով՝ «Ճիշտ որ, այդ շատ լաւ բան կը լինէր ձեզ համար»... Իսկ յետոյ, երբ Դրօքէլը բացուեց ու ուղղակի ասաց, նա, չը համարձակելով «չէ» ասել, պաշտպանուում էր՝ «Կը մտածեմ... յետոյ չը տեսնենք... չէ չեմ ասում...» և այլն այդպիսի անորոշ բառերով. բայց ի վերջոյ արտասանեց այս չարաբաստիկ խօսքերը՝ «պէտք է տեսնել նախահաշիւը»։

Մի ամբողջ շաբաթ գերասանը գլուխ էր ջարդում, ծրագիրներ կաղմում, թուանշաններ շարում իրար կողքի, նստած կնոջ ու աղջկայ արանքին, որոնք զմայլած դիտում էին նրան և հարբում այդ նոր երազից։ Տնուորներն ասում էին՝ «պ. Դրօքէլը թատրոն է առնուում»։ Բուլվարում, գերասանների յաճախած սրճարաններում, էլ ուրիշ խօսակցութեան նիւթ չը կար. Դրօքէլը չէր թագինում, որ ինքը փողատէրի տեղ է արել և այդ բաւական էր, որ նրան շրջապատէին մի խումբ անպաշտօն գերասաններ, հին ընկերակիցներ, որոնք զալիս էին ու ընտանեար խփելով ուսին յիշեցնում նրան։ «Գիտես, բարեկամ...»։ Նա խոստանում էր գեր տալ, նախաճաշում էր սրճարանում, այնաղ նաևակներ էր զրում, մատների ծայրով ողջունում էր ներս մանողներին, այս ու այն անկիւնում տաք-տաք խօսում էր զանազան մարդկանց հետ, և արգէն երկու թերմաշ հեղինակներ կարդացնել էին նրա մօտ մի զրամա եօթ տեսարանով, որ նրա ներկայացումների բացման համար այնպէս յարմար էր, «ինչպէս մի ձեռնոց ձեռի համար»։ Նա ասում էր՝ «իմ թատրոնը» և նրան նաևակ ուղարկելիս հասցէն զրում էին «Պարոն թատրոնապետ Դրօքէլին»։

Ծրագիրն ու նախահաշիւը պատրաստելուց յետոյ՝ նա զընաց գործարանը Ռիսլէրին տեսնելու։ Ռիսլէրը, այդ բոպէին շատ զբաղուած լինելով, ժամադիր եղաւ պատահելու Բլօնդէլի փողոցում, և նոյն երեկոյ Դրօքէլը, առաջինը զալով գարեջրատուն, տեղ բռնեց իրանց հին սեղանի մօտ և, մի աման գարեջուր ու երկու բաժակ պահանջելով, սկսեց սպասել։ Նա երկար սպասեց, աչքը դռանը, ջղային անհամբերութեամբ։ Ռիսլէրը չը կար։ Ամեն անզամ, երբ մէկը ներս էր մտնում, զերասանը շուռ էր գալիս գէպի դուռը։ Նա թղթերը դրել էր սե-

զանի վրայ և կարդում էր զանազան շարժումներ անելով ձեռքերով, գլխով ու շրթսնքներով:

Հրաշալի, աննման գործ էր: Արդէն նա երեակայում էր իրան՝ իր սեփական թատրոնում ներկայացնելիս, —որովհետեւ այդ ամենաչական էտան էր, —յատկապէս իր համար յօրինուած գերեր, իր ձիքին արժանի գերեր, որոնց մէջ նա ահադին տպաւորութիւն է գործելու...

Յանկարծ գուոը բացուեց և չիբուխների ծխի մէջ երեաց պ. Շէքը, որ նոյնքան զարմացած ու դժողու մնաց Դըլօբէլին տեսնելով, որքան և Դըլօբէլը՝ նրան տեսնելով: Նա առաւօտեան զրել էր վիեսային, որ հետը շատ լուրջ խօսելիք ունի և կը սպասի նրան զարեջրատանը: Պատուի հարց էր այդ, որ պէտք է վճռէին միայն տղամարդիկ, իրար մէջ խօսելով: Այդ պատուի հարցը իսկապէս նրա մէջ էր կայանում, որ պ. Շէքը թողել էր Մօնութի փոքրիկ տունը և ամենաթունդ առետրական թաղում, Մայլ փողոցում վարձել մի վաճառատուն իր վրայի միջնայարկով... Մի վաճառատուն... Այն, վաճառատուն... Ու յետոյ սկսել էր մի քիչ վախ զգալ իր արած համարձակ քայլից, անհանդստանալով, թէ ինչպէս կը վերաբերուի այդ բանին իր աղջիկը, մանաւանդ որ վաճառատունը շատ աւելի թանգ արժէր, քան Մօնութի տունը և զեռ մեծ նորոգութիւններ պէտք էր անել մէջը՝ հէնց տեղափոխուելիս: Վազուց ի վեր ձանաշելալ իր վիեսայի բարութիւնը, պ. Շէքը վճռել էր նախ և առաջ նրան գիմել, յուսալով նրան գրաւել իր կողմը և նրա վրայ քցել այդ ընտանեկան յեղափոխութեան պատասխանատութիւնը: Եւ ահա Ռիսլէրի տեղ Դըլօբէլին էր նա տեսնում:

Նրանք յօնքերի տակից խեթ-խեթ նայեցին իրար, միենոյն լակամանի կողքին պատահած երկու շան նման: Նրանցից իւրաքանչիւրը հասկացաւ իսկոյն, թէ ինչի էր սպասում միւսը, և նրանք չը փորձեցին խաբս տալ իրար:

—Փեսաս այստեղ չէ, հարցեց պ. Շէքը, աչքի պոչով նայելով սեղանի վրայ փոած թղթերին և ստորագծելով «վիեսաս» խօսքը, լաւ ցոյց տալու համար, որ Ռիսլէրը իրան մարդն էր և ոչ թէ մի ուրիշինը:

—Ես սպասում եմ նրան, պատասխանեց Դըլօբէլը, հաւաքելով թղթերը:

Շրթունքները իրար հուալ տուած, նա աւելացրեց վեհ, խորհրդաւոր և, ըստ սովորականին, թատրոնական կերպով:

—Եատ կարեոր բան ունեմ հետը:

—Ես էլ նմանապէս... հաստատեց պ. Շէքը, որի ճաղատ

գլխի վրայ մնացած երեք հատ մաղերը ցցուեցին խոզուկի փշերի նման:

Եւ այդ ասելով, նա եկաւ նստեց Դըլօբէլի կողքի բաղմոցի վրայ ու նրա պէս պահանջնեց մի աման զարեջուր ու երկու բաժակ, ու յետոյ, ձեռքերը զրպանը խրած, մէջքը պատին դէմ տուած ու պինդ տեղումը նստած, սկսեց սպասել: Այդ երկու իրար կողքի դրուած և մինոյն բացակայ անձի համար պահանջուած դատարկ բաժակները կարծես կոռու էին կանչում միմեանց:

ՈՒԽԱԼՔՐՆ ԷԼ ՀԸ ԿԱՐ ՈՒ ՀԸ ԿԱՐ:

Մեր երկու լուս ու մունջ գարեջուր խմողները արդէն սկսում էին համբերութիւնները կորցնել, անհանգիստ շարժւում էին նստած տեղներումը և նրանցից իւրաքանչիւրը սպասում էր, թէ միւսը կը ձանձրանայ վերջապէս ու կ'երթայ:

Ի վերջոյ, նրանք չը կարողացան զավել իրանց դժգոհութիւնը և, բնականաբար, կուժն ու կուլան կոտրուեց խեղճ Ռիսլէրի զլիխն:

—Ի՞նչ անքաղաքավարութիւն է. կարելի՞ է միթէ այսքան երկար սպասեցնել իմ հասակի մի մարդու, սկսեց պ. Շէքը, որ միմիայն այսպիսի դէսքերում էր առաջ բերում իր մեծ տարիքը:

Պ. Դըլօբէլը վրայ բերեց.

—Կարծեմ, ճիշտ որ, ձեռ է առել մեզ:

—Անշուշտ ճաշին հիւրեր է ունեցել պարոնը, աւելցրեց պ. Շէքը:

—Եւ ինչ հիւրեր... արհամարհու եղանակով բացականչեց հոչակաւոր Դըլօբէլը, որի մէջ սկսել էին զարթնել կսկծակի յիշողութիւններ:

—Բանը նրանումն է... շարունակեց պ. Շէքը:

Նրանք մօտեցան իրար ու սկսեցին խօսել: Երկուսն էլ ոխ ունէին Ռիսլէրի ու Սիդօնիի դէմ: Սրաները բաց արեցին: Այդ Ռիսլէրը, չը նայելով իր միամիտ մանկական կերպարանքին, իսկապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ևսամոլ, մի նորելուկ: Նրանք ծիծաղում էին նրա արտասանութեան, նրա շէնք ու չնորհքի վրայ, և անում էին նրա սովորական տարօրինակ ձևերը: Յետոյ, նրանք խօսք բաց արին նրա ընտանեկան կեանքի մասին և, ձայները ցածացնելով, սկսեցին գաղտնիքներ յայտնել իրար ու մտերմաբար ծիծաղել, նորից բարեկամ դարձած:

Պ. Շէքը շատ հեռու էր զնում.—Թող զգոյշ կենայ. այնքան յիմար գտնուեց, որ թողեց որ ծնողներս հեռանանք միր զաւակից. եթէ զլիխն մի բան դալու լինի, մեղ մնդադրելու

ամենեին տեղիք չունի: Եթէ մի աղջիկ աչքի առաջ չունի այլ ևր ծնողների բարի օրինակը, հասկանում էք...

—Անշուշտ... անշուշտ... ասում էր Դըլօրէլը. մանաւանդ որ Սիդօնին շատ կօքէսն է դարձել... Ասենք, ինչ պէտք է լինի որ: Ռիսլէրը կը կրի միայն իր արժանի պատիժը: Միթէ նրա հասակն ունեցող մարդը պէտք է... Սընս եկաւ:

Ռիսլէրը մի բռպէտ առաջ մտել էր գարեջրատունը և մօաենում էր խօսակիցներին, աջ ու ձախ սղմելով ծանօթների ձեռքը:

Սկզբում մի քանի բռպէտ երեք բարեկամները վատ զգացին իրանց: Ռիսլէրը ներողութիւն խնդրեց, ինչպէս որ կարող էր: Տանն էր ուշացել, Սիդօնին հիւրեր ունէր,—Դըլօրէլը սեղանի տակին հրեց պլ. Շէրի ոտք,—և այդ բաները ասելիս խեղճ մարդը շուարած մտածում էր, թէ դատարկ բաժակներից որ մէկի առաջը պէտք է նստի ինքը:

Դըլօրէլը մեծահոգի գտնուեց:

—Դուք խօսելիք ունէք, պարոններ, խօսեցէք առանց քաշուելու:

Եւ քթի տակին ասաց, աչքով անելով Ռիսլէրին.

—Թղթերը բերել եմ:

—Թղթերը... բացականչեց Ռիսլէրը շուարած:

—Նախահաջիւը... շնչաց դերասանը:

Այնուհետև, ցոյց տալով, թէ ինքը ամենեին չէ ուզում լսել նրանց խօսակցութիւնը, նա քաշուեց մի անկիւն ու սկսեց կարդալ իր թղթերը, զլուխը կոթնած ձեռներին ու ձեռները դրած ականջներին:

Նրա կողքին, միւս երկուսը խօսում էին, սկզբում ցած ձայնով, յետոյ աւելի բարձր, որովհետեւ պլ. Շէրի զիլ ու ծղրատն ձայնը չէր կարող երկար ժամանակ չափաւորուել...—Ինքը հօայն հասակում չէր, որ կենդանի թաղուէր յետ ընկած անկիւնում... Նա ձանձրութիւնից կը մեռնէր Մօնուժում... Մայլ ու Սանտիէ փողոցները, առևտրական թաղերի աղմուկն ու կենդանութիւնը, ահա թէ ինչ էր պէտք նրան:

—Այն, բայց վաճառատունը... ինչի համար էր... վախիլիսելով համարձակուեց նկատել Ռիսլէրը:

—Ինչի՞ համար է վաճառատունը... ինչի՞ համար է վաճառատունը, կրկնում էր պլ. Շէրը, զատկական ձուի պէս կարմրած և բարձրացնելով ձայնը, որքան ուժումը կար... Որովհետեւ ես վաճառական եմ, պարոն Ռիսլէր: Վաճառական և վաճառականի որդի... Օ՛հ, զիտեմ ինչ էք ասելու: Թէ առևտուր չունեմ, չ՞... Բայց ոլ է մեղաւորը... Եթէ այն մարդիկ, որոնք

ինձ, ինչպէս մի զառամեալ ծերունու, փակել էին Մօնութում, Բիսէարի անկելանոցի մօտերքում, գրա փոխարէն խելք արած լինէին դրամագլուխ տալու ինձ մի որ և է առետրական ձեռնարկութեան համար...—Այդտեղ Ռիսլէրին յաջողեց լուցնել և նրան այնուհետեւ լուսում էին միայն կցկտուր խօսքեր՝ «...աւելի յարմար վաճառատուն... բարձր առաստաղով... օդը շատ է... ապագայի ծրագիրներ... հակայական դորձ... կը խօսեմ, երբ որ ժամանակը դայ... շատերը կը զարմանան»: Դըլօրէլը լսելով հանդերձ այդ հատ ու կտոր խօսքերը, հետզհետէ աւելի ու աւելի էր խորասուզում իր թղթերի ընթերցման մէջ ու եռանդուն կերպով մէջքը դէմ անում նրանց, լսել չուզող մարդու պէս Ռիսլէրը, շուարած, երբեմն-երբեմն մի կուժ գարեջուր էր խմում մի բան արած լինելու համար: Ի վերջոյ, երբ պ. Շէրը հանգստացաւ և ոչ առանց պատճառի, փեսան ժպտալով դարձաւ դէպի հոչակաւոր Դըլօրէլը, որ հանդիպեց նրան իր սատն ու խիստ հայեացքով, որ կարծես ասելիս լինէր՝ «Խսկ իսո...»:

—Ա՛յս, Տէր Աստուած... ճիշտ որ... մտածեց խեղձ մարդը:

Եւ իսկոյն փոխելով աթումն ու բաժակը, նա եկաւ նստեց դերասանի առաջը. բայց պ. Շէրը չը դիմէր այնպէս պահել իրան, ինչպէս Դըլօրէլը: Փոխանակ համեստօրէն հեռու քաշուելու, նա մօտեցրեց իր բաժակը ու միացաւ նրանց խմբին, այնպէս որ մէծ մարդը, որ չէր ուզում նրա ներկայութեամբ խօսել, երկրորդ անդամ հանդիսաւոր կերպով գրապանը դրեց թղթերը ասելով Ռիսլէրին.

—Յնուոյ կը տեսնենք:

Շատ յետոյ, իսկապէն, որովհետեւ պ. Շէրը այսպէս էր զատել.

«Փեսաս շատ բարեհովի է... Եթէ այս լոթու հետ թողնեմ, ով գիտէ նրան փող դուրս կը քաշի նրանից»:

Եւ նա մնում էր, որ հակիր Դերասանը կատաղել էր: Դործը ուրիշ օրուայ յետաձգիր: Անհնար էր: Ռիսլէրը հէնց նոր ասաց նրանց, որ միւս օրը ինքը մի ամսով գնալու էր Սալլինի:

—Մի ամսով Սալլինի... բացականչեց պ. Շէրը, յուսահատուած, տեսնելով՝ որ փեսան դուրս է պըծնում ձեռքիցը..., Խսկ գործերը:

—Է՞՞ն, ևս ամեն օր Ժօրժի հետ կը գամ Պարիզ... Պ. Գարդինուայի բաներն է, ուզում էր տեսնել փոքրիկ Սիդօնիին: Պ. Շէրը թափ տուեց գլուխը: Նրա կարծիքով, այդ շատ

անխոհեմ բան էր: Գործը միշտ գործ է: Մարդ պէտք է միշտ գործի վրայ լինի, միշտ աչքը վրան պահի: Ով գիտէ, ինչ կարող է պատահել գործարան է, կարող է գիշերը յանկարծ կրակ ընկնել: Եւ նա կրկնում էր խրատական եղանակով՝ «Տիրոջ աչքը, սիրելիս, ուրիշ բան է»: մինչդեռ նրա կողքին նստած գերասանը, որի բանին նոյնպէս չէր գալիս Ռիսլէրը զնալը, չուում էր իր խոշոր աչքերը ու տալիս նրանց միանգամայն և սուր և հեղինակաւոր արտայայտութիւն, իսկ և իսկ այնպիսի արտայայտութիւն, որ պէտք է ունենայ տիրոջ աչքը:

Վերջապէս, կէս գիշերին մօտ, Մօնուուժի վերջին հանրակառը տարաւ բռնակալ աներոջը և Դըլօրէլը հնարաւորութիւն ստացաւ խօսելու:

—Նախ և առաջ ծրագիրը, ասաց նա, չուղենալով իսկոյն և կիթ խօսք բանալ թուանշանների մասին, և պէնսնէն դնելով քթին, նա սկսեց ճոռումաբաննորէն և, ինչպէս միշտ, բեմի վրայ զգալով իրան՝ «Երբ մարդ սառը կերպով քննութեան է առնում զառամութեան այն ասափճանը, որին հասել է Ֆրանսիայում զրամատիկական արտեսատը, երբ մարդ չափում է այն տարածութիւնը, որ բաժանում է Մօլիէսի թատրոնը...»: Եւ այդպէս զնում էր մի քանի երես: Ռիսլէրը լսում էր, ծծելով չիւսուխը և չը համարձակուելով շարժ գալ, որովհետև Դըլօրէլը կարգավախ ամեն բռպէ նայում էր նրան պէնսնէի վրայից տեսնելու համար, թէ ինչ տպաւորութիւն են զործում նրա վրայ իր խօսքիրը: Դժբախտաբար, երբ գեռ ծրագրի մէջտեղումն էին, սրճարանը փակեցին, ճրագնները հանգցնում էին, պէտք էր զնալ... Իսկ նախահաշիւը... Պայմանաւորուեցին, որ այդ թուղթը կը կարդան փնալիս, ճանապարհին: Ամեն լսալուերի մօտ կանգ էին առնում: Դերասանը առաջ էր բերում իր թրւանշանները... Այսքան գահինձի համար, այսքան լուսուորութեան համար, այսքան իրին տուրք յօկուտ աղքատների, այսքան գերասաններին... Այդ գերասաններին վերաբերեալ հարցի վրայ նա պնդում էր:

—Գործի լաւութիւնը նրանումն է, ասում էր նա, որ մենք ոչինչ չենք վճարելու առաջին գերակատարին... Մեր առաջին դերակատարը Բիբին կը լինի... (Իր մասին խօսելիս, Դըլօրէլը սիրում էր Բիբի անուաննել ինքն իրան...) Առաջին գերակատարներին առնասարակ քսան հաւար ֆրանկ են տալիս... ստիպուած չը լինելով այդ փողը վճարել, կարող էր այնպէս համարել, թէ զրպաններդ էր զնում այդ քսան հաղար ֆրանկը: Ճիշտ չիմ ասում, հը՞:

Ռիսլէրը պատասխան չէր տալիս: Նրա գէմքը բռնազրօսիկ

Էր և աչքերը շաղուած էին, ինչպէս լինում են մտքով ուրիշ տեղ գտնուող մարդու գէմքն ու աչքերը: Նախահաշուի ընթերցումը վերջացնելուց յետոյ, սարսափով տեսնելով, որ մօտենում է Վիէլ-Օդրիէտ փողոցի պտուտանքը, Դըլօրէլը շիֆ-շիտակ դրեց հարցը: Ուզում էր արդեօք նա թէ ոչ ձեռնարկել այդ գործը:

—Ո՞չ... չեմ ուզում, ասաց Ռիսլէրը, ոգեորուած մի հերոսական քաջութեամբ, որ ներչնչում էր նրան զլիսաւորապէս գործարանի մօտիկութիւնը և այն միտքը, թէ նա վտանգի էր ևնթարկելու իր ընտանիքի բախսաք: Դըլօրէլը շմմց: Նա կարծում էր, թէ բանը սարքուել է արդէն, և այժմ, չափազանց յուզուած և թղթերը ձեռքին բոնած, նայում էր Ռիսլէրին չոած աչքերով:

—ԶԵ, չարունակեց Ռիսլէրը... Ես չեմ կարող կատարել ձեր խնդրածը... ահա թէ ինչու:

Ծանր ու բարակ, իր սովորական դանդաղկոտութեամբ, նա սկսեց բացատրել, որ ինքը հարուստ մարդ չէ: Թէ նշանաւոր առևտրական տան ընկերակից էր, բայց արամազընկի փող չունէր: Փօրմն ու ինքը ամեն ամիս որոշ գումար էին ստանում զրամարկղից: Իսկ յետոյ տարեվերջի հաշուեկչոփ համաձայն բաժանում էին մէջները եղած արդիւնքը: Տուն-տեղ գնելը թանգ էր նստել նրան,—ինչ որ յետ քցած փող ունեցել էր, ծախսել էր: Մինչև տարեվերջն էլ դեռ չորս ամիս կար: Ո՞րտեղից էր վերցնելու այն 30,000 ֆրանկը, որ իսկոյն և եթ պէտք էր վճարել թատրոնը գնելու համար: Եւ բայց այդ, չէ որ գործը կարող էր անաջող գնալ:

—Այդ անկարենի բան է... Բիրին հօ չի մեռել:

Եւ այդ ասելիս, իւելճ Բիրին ձգւում, շիտկում էր. բայց Ռիսլէրի վճիռը հասաւած էր, և Բիրիի բոլոր դատողութիւնները դէմ էին առնում նոյն բացասական խօսքերին. «Յետոյ, երկու տարի, երկք տարի անցած, չեմ ասում, թէ...»:

Դերասանը երկար մաքառեց, քայլ առ քայլ պաշտպանելով հողը: Նա առաջարկեց փոկովսութիւններ մուցնել նախահաշուի մէջ: Կարելի էր այնպէս անել, որ աւելի էժան նստէր... «Ի՞նչ էլ լինի, ինձ համար այդ շատ թանգ է, ընդհատեց Ռիսլէրը... Իմ անունը ինձ չէ պատկանում: Նա ամբողջ առետրական տան անուան մի մասն է կազմում: Ես իրաւունք չունեմ վտանգի ևնթարկել անունս: Ի՞նչպէս դուր կը գայ ձեզ, ևթէ սնանկանամ»:—Իեղձի ձայնը դողում էր մնանկանալ բառը արտասաննելիս:

—Բայց չը որ ամեն ինչ իմ անունովս է լինելու, առարկեց

ԴԵԼՈԲԷԼԸ, որ այդպիսի նախապաշարմունքներ չուներ սնանկանալու վերաբերմամբ:

Նա ամեն ինչ փորձեց, մէջ բերեց գեղարուեստի նուիրական շահները, այնտեղ հասաւ նոյն իսկ, որ սկսեց խօսել սիրունիկ դերասանուհիների մասին, որոնց հեշտագրգիռ հայեացքները... Ռիսլէրը քանի քանի ծիծաղեց.

—Ե՞ս, ինչ կատակներ էք անում... ինչեր էք ասում... Մոռանում էք, որ երկուսս էլ պսակուած մարդիկ ենք, և, ի դէպ, այժմ շատ ուշ է, այնպէս որ մեր կանայք մեզ անպատճառ սպասելիս կը լինեն... Զէք նեղանալ, այնպէս չէ... Ես չեմ մերժում, դուք հօ հասկանում էք... Հա, տարեվերջի հաշուից յետոյ եկէք ինձ մօտ: Նորից կը խօսենք... Այ, Աշիլլքեռին հանդցնում է գաղը... Ես գնացի: Մնաք բարե:

Գիշերուայ ժամի մէկից անց էր, երբ դերասանը վերադարձաւ տուն:

Կինն ու աղջիկը սպասում էին նրան, ինչպէս առհասարակ, աշխատանքը ձեռներին, բայց անսովոր կերպով կենդանացած ու տենդու գրութեան մէջ: Այն մնձ մնդաւը, որով տիկին ԴԵԼՈԲԷԼԸ կտրտում էր արոյրէ թելերը, անդադար դողդողում էր տարօրինակ կերպով, և Դէզիրէի բարակ մասները, պաճուճանքները պատրաստելիս, այնքան արագ-արագ էին շարժում, որ եթէ նայող լինէր, աչքէրը կը շաղուէին: Կօլիբրիների երկար փետուրներն էլ, որոնք գարսած էին նրա առաջ սեղանի վրայ, կարծես նոյնպէս սովորական օրերից աւելի ճոխ զոյներ ունէին և ինչ-որ մի առանձին փայլ: Բամը նրանումն է, որ Յոյս կոչուող գեղեցկուհի այցելուն այդ երեկոյ եկել էր այդտեղ: Նա նեղութիւն էր կրել մութ սանդուխներովք բարձրանալ հինգերորդ յարկը և, բանալով այդ փոքրիկ բնակարանի դուռը, լուսաճածանչ մի հայեացք քցել նրա ներսը: Ինչքան էլ մարդ հիասթափութիւններ տեսած լինի կեանքում, չի կարող չը շանալ այդ մողական շողքերից:

—Ա՛խ, եթէ հայրիկին յաջողէր... ասում էր ժամանակ առ ժամանակ տիկին ԴԵԼՈԲԷԼԸ, կարծես ուզելով ամփոփ կերպով արտայայտել այն հազար ու մի երջանիկ երազները, որոնց անձնատուր էր լինում նրա միավը:

—Կը յաջողի, մայրիկ, հաւատացած եղիր. պ. Ռիսլէրը այնքան բարի է, ես երաշխաւոր եմ նրա կողմից: Սիրոնին էլ շատ սիրում է մեզ, թէս ամուսնանալուց յետոյ կարծես մի քիչ մոռացութեան է տալիս իր բարեկամներին: Բայց դէ պէտք է ուշադրութեան առնել նաև մեր դրութիւնների տարբերու-

թիւնը... Ես որ, յամենայն դէպս, երբէք չեմ կարող մոռանալ ինձ համար արածը:

Եւ յիշելով, թէ ինչ էր արել Սիդօնին իր համար, խեղճ կաղիկը սկսեց աւելի ես տենդու կերպով աշխատել: Նրա էլեքտրականացած մատները սկսեցին շարժուել կրկնակի արագութեամբ: Կարծես նա վազում էր ինչ-որ մի խուսափող, անբռնելի բանի յետեից, ինչպէս օրինակ, բախտի յետեից կամ այնպիսի մարդու սիրոյ յետեից, որ ձեզ չէ սիրում:

«Ես ինչ է արել քեզ համար», պէտք է հարցնէր մայրը, բայց աղջկայ ասածները այդ բոպէին ամենեին չէին հետաքըրքրում նրան. նա մտածում էր միմիայն իր մեծ մարդու մասին:

— Հը՞ երևակայի՛ռմ ես, աղջիկս... Ա՛խ, եթէ հայրիկը սեփական թատրոն ունենայ, եթէ նորից սկսի խաղալ առաջուան պէս: Դու չես կարող յիշել, շատ փոքր էիր այն ժամանակ: Օհ, զարմանալի յաջողութիւն ունէր, անվերջ գուրս էին կանչում: Մի երեկոյ, Ալանսօնում, թատրոնի յաճախորդները ուկի պսակ տուեցին նրան... Օհ, նրքան փայլուն էր նա այն ժամանակ, որքան ուրախ ու երջանիկ: Ով որ այժմ տեսնում է խեղճ մարդուն, չէ ճանաչում նրան, այնքան փոխուել է նա անբախտ կեանքի չնորհիւ... Բայց ես հաւատացած եմ, որ բաւական է մի փոքր յաջողութիւն, որպէս զի նա նորից նոյն երիտասարդ և ուրախ մարդը լինի... Բացի այդ այնպիսի փողեր են աշխատում թատրոնապետները: Նանուում թատրոնապետը սեփական կառք ունէր: Երևակայի՛ռմ ես մեզ սեփական կառքում... Զէ, ասա, երևակայի՛ռմ ես.. Քեզ հէնց այդպիսի բան է հարկաւոր: Դու կը կարողանաս գուրս գալ տանից, մի քիչ կարուել այդ բազ կաթոռից: Հայրիկը մեզ ամարանոց կը տանի, և դու ջրի ու ծառի կարօտդ կ'առնես:

— Ա՛խ, ջնոր, ծառ... գողգողալով շնչաց գունատ ճգնակեացը:

Այդ բոպէին ներքեւի մեծ գուռը բացուեց ու պինդ խփուեց և գաւթում լսուեց պ. Դըլօբէլի կանոնաւոր քայլուածքի ձայնը: Սենեակում մի բոպէս անձկութիւն տիրեց. մայր ու աղջիկ ձայները կտրած ու շունչները բռնած չէին համարձակուում նոյնիսկ նայել իրար երեսի, և մօր մեծ մլրատը այնպէս էր դողդողում, որ արոյրի թելը բոլորովին ծուռ ու մուռ էր կտրատում:

Անկասկած, սարսափելի էր խեղճ գերասանի ստացած հարուածը: Ի դերև ելած երազներ, ստորացուցիչ մերժումն, ընկերների ծաղրը, սրճարանի հաշիւը իր թատրոնապետութեան ամբողջ ընթացքում պարագով կերած նախաճաշերի համար,—

հաշիւ, որ պէտք էր իսկոյն վճարել,—այդ բոլորը պատկերացաւ նրա առաջ հինգ յարկանի տան սանդուխների մթութեան և խաղաղութեան մէջ։ Սրտին որ դանակ խփէիր՝ արիւն չէր կաթիլ... Եւ սակայն, այնքան զօրեղ էր նրա մէջ գերասանական բնաւորութիւնը, որ, չը նայելով իր վշտի խորին անկեղծութեան, նա հարկաւոր համարեց ողբերգական և պատշաճական դիմակ հաղնել։

Մտնելուն պէս, նա կանգ առաւ, օրհասական հայեացքով նայեց արհեստանոցին, բանուածքով ծանրաբեռնուած սեղանին, իր փոքրիկ ընթրիքին, որ պատրաստ սպասում էր նըրան մի անկիւնում, և իր երկու անձկալից հարազատներին, որոնք սենենել էին նրա վրայ իրանց փայլուն աչքերը։ Դերասանը մի բոպէ մնաց անխօս, —իսկ դուք զիտէք, թէ որքսն երկար է թւում թատրոնում գերասանի մի բոպէ տեսող լոռութիւնը, —յետոյ երկը քայլ արեց, վայր ընկաւ սեղանի մօտ դրուած մի ցած աթոռի վրայ ու ասաց սուլելու ձայնով։

—Օ՛Փ, նզովք կայ իմ զիլինն \*։

Եւ այդ ասելով, նա բոռնցքով այնպիսի սարսափելի հարուած իջեցրեց սեղանին, որ մօդային թունիկներն ու ճանձերը շաղ անցան սենեակի չորս անկիւնը։ Կինը, վախուորած, վեր կացաւ տեղից ու երկշու կերպով մօտեցաւ նրան, մինչ Դէզիւրէն կիսով չափ բարձրացաւ իր բաղկաթոռի մէջ, անձկութիւնիդ ջղաձգաբար ծամածուած դէմքով։

Աթոռի մէջ ճկուած, կոնսերը ուժասպառ կախ քցած, զըլուխը կրծքին քաշ արած, դերասանը խօսում էր ինքն իր հետ։ Կցկտուր, ընդհատուազ մի մենախօսութիւն էր այդ, լի գրամատիկական հառաջանքներով ու հեկեկանքներով և նզովքներով անգութ ու եսամոլ բութուաների դէմ, որոնք հումհում ուտում են արուեստագէտներին ու ծծում նրանց արիւնը։

Յետոյ նա սկսեց պատմել իր ամբողջ գերասանական կեանքը, սկզբի ժամանակներում ունեցած յաղթանակները, Ալանսոնի հանդիսատեսների տուած ոսկէ պամակը, իր ամուսնանալը այդ «սուրբ կնոջ» հետ, —և այդ վերջին խօսքն ասելիս, նա մատով ցոյց տուեց խեղճ կնոջը, որ լացակրկնած և դողդոջուն շրթունքներով կանգնած էր նրա կողքին ու պառաւի նման գըլուխը տարուբերում էր նրա ամեն մի խօսքին։

Յիրաւի, հոչակաւոր Դըլօրէլին չը ճանաչողներն էլ այդ

\*). Ah! je suis damné. — Տրիբուլէի խօսքերը Վիկտօր Հիւգոյի „Le Roi s'amuse“-ից, որից է վերցրած Ոլդոլէտո օպէրալի նիւթը։

երկար մենախօսութիւնը լսելուց յետոյ կարող էին պատմել նրա ամբողջ կենսագրութիւնը մանրամասնորէն։ Նա նկարագրում էր իր Պարփղ գալը, իրան պատահած ձախորդութիւնները իր կրած զրկանքները... Սակայն, աւաղ, իսկապէս ինքը չէր եղել զրկանքներ քաշողը։ Այդ հասկանալու համար բաւական էր տեսնել նրա լայն ու փարթամ դէմքը այդ երկու խեղճ կանանց լզար ու փոս ընկած դէմքերի կողքին։ Բայց դերասանը այդքան խորը չէր դնում, և շարունակելով հարբել իր դէկլամացիայի խօսքերով։

—Օխ, բացականչեց նա, —այնքան մաքառելուց յետոյ... Տասը, տասնըհինգ տարի է, ինչ մաքառում եմ, նեցուկ ունենալով այս անձնուէր էակներին, ապրելով նրանց աշխատած հացով։

—Հայրիկ ջան, հայրիկ, լոիր... աղաչում էր Դէզիրէն, ձեռները իրար կցած։

—Այն, այն, ապրելով նրանց աշխատած հացով... և ես չեմ ամաչում այդ բանից։ Որովհետև սրբազն գեղարուեստի համար է, որ ես ընդունում եմ այդ անձնուէր ծառայութիւնները... Բայց էլ այստեղս է հասել։ Զափը արդէն անցել է։ Ես հրաժարւում եմ...

—Ախ, այդ ինչ ես ասում, սիրելիս, բացականչեց տիկին Դըլօրէլը, նետուելով դէպի նա։

—Ոչ, թող տուր ինձ... Այլ ես ոյժիցս վեր է։ Իմ մէջ ըստամսեցին արուեստագէտին։ Ամեն բան պրծած է... Ես հրաժարւում եմ թատրոնից։

Այն ժամանակ եթէ տեսնէիք, թէ ինչպէս մայր ու աղջիկ, փաթթուելով նրա վզովը, սկսեցին խնդրել, որ շարունակի մաքառումը, և ապացուցանել, որ նա իրաւունք չունի հրաժարուել թատրոնից, լացներդ չէիք կարող պահել։ Դըլօրէլը դիմադրում էր սակայն։

Ի վերջոյ նա անձնատուր եղաւ և խօսք տուեց մի ժամանակ էլ գիմանալ, քանի որ այդպէս էին ցանկանում նրանք, բայց դժուար է ասել, թէ նրբան աղաչանք ու պաղատանք, նրքան գգուանքներ պէտք եղան, մինչև որ նրանց յաջողեց այդ բանը։

Մի քառորդ ժամ անցած, մեծ մարդը, որ քաղցել էր իր ասած երկար մենախօսութիւնից և արդէն սփոփուել յուսահատութիւը զեղելուց յետոյ, սեղանի կողքին նստած կարգին ախորժակով ընթրում էր, և այդ բոլոր բանից միմիայն մի թեթև յոգնածութիւն էր մնացել մէջը, այնպէս, ինչպէս յոգնած է լինում մի դերասան, մի շատ երկար ու շատ զրամատիկական դեր խաղալուց անմիջապէս յետոյ։

Այդ գէպքերում դերասանը, որ յուզել է բոլոր հանդիսատեսներին և ինքը իսկական արտասունքներ թափել բեմում, թատրոնից գուրս գալուց յետոյ անմիջապէս մոռանում է այդ բոլորը։ Նա թողնում է իր յուզմունքը իր դերասանական օթեակում իր հագուստների ու կեղծ մազերի հետ, մինչդեռ աւելի միամիտ, աւելի սաստիկ կերպով տպաւորուած հանդիսատեսները վերադառնում են տուն կարմրատակած աչքերով ու ճմլուած սրտով և երկար ժամանակ չեն կարողանում քնել ջղերի չափազանց գրգռումից։

Խեղճ Դէղիբէն ու տիկին Դըլօբէլը շատ քիչ քնեցին այդ գիշեր։

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆ

(Կը տարունակուի)

## Գ Ի Ւ Ղ Ի Մ Ա Ր Դ Ի Կ

(Շարունակութիւն)

### Դ

Դաշնամուրի ձայները լոռութիւն հաստատեցին սեւ նեակում: Տիկին նուրեանը հեռացրեց երեխաներին, ամեն միջոց ձեռք առաւ, որպէս զի ոչ ոք չը խանդարէ նուագողին: Եւ նուագողը ճիշտ որ ածում էր զդաշմունքով, հետզհետէ գրաւում էր ամենքի ուշադրութիւնը: Հարա-Մուրագեանը իր ընկերների հետ տեղ էր գրաւել աջ անկիւնում: Նա լսում էր մեծ ուշադրութեամբ, ձեռքերը կրծքի վրայ խաչած, գլուխը կախ արած: Նա նման էր մի պարզամիտ հաւատացեալի, որ պերճախօս քարոզ է լսում եկեղեցու մէջ, քարոզ, որ գուցէ և միանգամայն անհասկանալի է, բայց մի ինչոք բարձր ու ջերմ վայելլութիւն է հաղորդում հոգուն, հիացնում, զգալ տալով որ մի լաւ, շատ լաւ բան է ասւում: Զարվագարեանը բերանը մօտեցրեց տիկին Գուլուբէկեանի փեսայի ականջին և ցինիկաբար շշնջաց.

—Վարժապետը սիրահարուած է կնոջդ վրայ:

Տիկին Գուլուբէկեանի փեսան ծիծաղեց. բայց դա ակամայ ծիծաղ էր, ձեւականութիւն միայն: Նրա ոչ խարային հայեացքի մէջ մի վայրկեան պլազ անհանգըստութեան և կասկածոտութեան նման մի բան: Բոյնը տաքացրած մի արու էր դա, որ անտարբեր լինել չէր կարող նոյն իսկ այն դէպքում: Երբ հանաքն էր գալիս ենթադրել տալու, թէ տաք ու յարմար բոյնի

կենդանական բարեկեցութեանը կարող է որ և է վտանգ սպառնալ:

Զարվադարեանը չը դիտեց այդ հայեացքը, որ համիանայ նրա միտքը: Նա յայտնեց, որ տնային երաժշտառթիւնը իրան շատ շուտ է ձանձրացնում և առաջարկեց Սամուէլ նուրեանին մի կանաչ սեղան բաց անել:

Սեղանը բացուեց. մոմերը վառուեցան: Բայց այդ միջոցին տեղի ունեցաւ անհամբերութեամբ սպասուող դէպքը. ներս մտաւ բժիշկը:

—Ա՞... այս բացականչութիւնները լսուեցին ամեն կողմից: Զարվադարեանը սկսեց շատախօսել և ծիծաղել, օրիորդները գնացին դէպի նորեկը, Ղարա-Մուրադեանը իր հիացած դէմքը դարձրեց նրա կողմը, մի երկու խօսքով ողջունեց նրան: Նուագող տիկինը կիսատ թողեց իր սկսած կտորը, վեր կացաւ, թէև Յով վասափեանը խնդրեց, նոյն խոկ աղաչեց նրան շարունակել: Տեսնելով, սակայն, որ իր պատճառած իրարանցումը չէ հանդարտում, բժիշկը հպատակուեց իրողութեան և ամենից առաջ մօտեցաւ տիկին Փուլուբէկեանին, իր գեղեցիկ հասակը քիչ թեքելով, շատ սիրալիր յարգանքներ յայտնեց, չը մոռացաւ հարցնել փոքրիկ ժօրժիկի առողջութիւնը, ապա գնաց դէպի նուրեան ամուսինները: Զարվադարեանը ձեռք չը տուեց նրան, բայց դրա փոխարէն մի երկու անգամ մտերմաբար խրփեց նրա ուսին, մի քանի խօսք ասաց և այնպէս տաք ծիծաղեց, որ նրա կողոր ու մսոտ դէմքը ամբողջապէս կարմրեց ու քրածինքով ծածկուեց:

—Արի,—կանչեց նա, երբ Յովասափեանը գնաց բարեւելու միւսներին:—Սամուէլ իսայիչ, հարկդ հանիր, աւելացրեց նա, մի բուռը ոսկի դնելով իր առջեւը:

—Իսկոյն խմղ, հարցրեց բժիշկը, նստելով կանաչ սեղանի մօտ դրած աթոռի վրայ:—Ես հրաժարում եմ...

Զարվադարեանը բացատրեց, որ նա իրաւունք չունի հրաժարուելու, իսկ պարօն նուրեանը, մատների մէջ

շուռ տալով ոսկիների մի հաստ շերտ, խնդրեց նրան  
նստել:

—Բայց ինչ կ'ասէ Մարիա Իվանօվսան:

Դա տիկին Գուլուբէկեանն էր, և Յովասափեանը,  
կամենալով անպատճառ իմանալ, թէ ինչ կ'ասէ նա, իր  
աթոռը նրա մօտ քաշեց և կրկնեց իր հարցը: Տիկինը  
երկու բառ արտասանեց, իսկ մնացածը լրացրին նրա  
դէմքի այն կնճիռները, որոնք բարեհաճութիւն յայտ-  
նելու համար էին կազմւում: Վրայ հասաւ և Զարգա-  
դարեանը, որ քաշում էր բժշկի թեկից ու ասում էր, թէ  
Մարիա Իվանօվսան ոչինչ չի ասի:

—Մարիա Իվանօվսան գիտէ, աւելացրեց նա.—  
գիտէ, որ մենք, գործի մարդիկս, ուժեղ զդացմունք-  
ների, ցնցումների ենք կարօտ. թղթախաղը մեղ համար  
այնքան պարապ ժամանակի գործ չէ, որքան պահանջ.  
մենք ամբողջովին ներփեր ենք... Այնպէս չէ, Մարիա  
Իվանօվսան...

Տիկին Գուլուբէկեանը նոյն բարեհաճ տրամադրու-  
թիւնն էր ցոյց տալիս և մինչև անգամ գլխով էլ հա-  
ւանութեան նշան արաւ: Միայն այդ ժամանակ բժիշկը  
վեր կացաւ: Բայց նոր յիշելով մի բան, նա մօտեցաւ  
Արտալեանին, շատ անոյշ կերպով յայտնեց նրան, թէ  
կարեոր խորհրդակցութիւն ունի երիտասարդների հետ,  
աւելացրեց, որ ինքը այժմ աղքատանոցից է գալիս,  
ապա գնաց խաղին մասնակցելու և ասաց, որ կէս ժա-  
մից աւել չի ուշանայ:

Մինչև այդ՝ Զարգադարեանը մի հարց վճռեց տի-  
կին Գուլուբէկեանի հետ: Նա նկատել էր, որ տիկինով  
փեսան, կանաչ սեղանը բաց անելու բոպէից, կանգնել  
է չորրորդ աթոռի ետեռում և լարուած հետաքրքրու-  
թեամբ նայում էր, կարծես ամեն վայրկեան պատրաստ  
ասելու, թէ ինքն էլ է ուզում, շատ է ուզում խաղալ:  
Եւ որովհետեւ ամենքին յայտնի էր, որ նրա ցանկու-  
թիւններից ամեն մէկը ոչինչ է առանց նրա զոքանչի  
վաւերացման, կամ առնուաղն լուռ հաճութեան, ուստի

Զարգաղարեանը ցած ձայնով, իբրև խոստովանք,  
հարցրեց.

—Կարելի՞ է, Մարիա Խվանօվնա, որ ձեր փեսան  
էլ նստէ. մեր չորրորդ ընկերը պակասում է:

Որքան և ժիր ու անյոզդողդ հրամանատար էր  
տիկին Գուլուբէկեան, բայց նա գիտէր ոսկեզօծել իր  
խստութիւնները, անշմարելի դարձնել նրանց, մանա-  
ւանդ հասարակութեան մէջ: Նրա անշարժ դէմքի վրայ  
աչքերը մի վայրկեան շուռ եկան սպիտակուցների վրայ,  
մի կողմնակի հայեացքով չափեցին փեսային, որ կար-  
ծես զգաց այդ հայեացքը և ուղղուեց տեղը, նայեց իր  
զոքանչին, մի բութ ու անմիտ ժպիտ ձևացնելով իր  
հաստ շրթունքների վրայ: Տիկինն էլ ժպտաց. բայց նրա  
դէմքը այլ ևս բարեհաճութեան ոչ մի նշոյլ չէր ցոյց  
տալիս:

—Նա քայրայում է իր ներվերը, երբ խաղում է,  
—պատասխանեց փառահեղ այրին: —Հարկաւոր չէ...

—Դնեւք համեցէք, Մարիա Խվանօվնա, ասաց Զար-  
գաղարեանը, լաւ զգալով, որ այլ ևս ոչ մի միջնորդու-  
թիւն չի օգնի:

—Եթէ պրեֆերանս լինի... Թաղէոսրէկի ժամա-  
նակ ամենքը այդ խաղն էին խաղում...

—Ա՛հ, Մարիա Խվանօվնա, ես ուժեղ ցնցումների  
մասին եմ խօսում, դուք տալիս էք պրեֆերանսի ա-  
նունը: Դա կանացի խաղ է... ինձ ներեցէք, ինդրեմ:

Նա վեր կացաւ. բայց տիկին Գուլուբէկեանը մի  
բան էլ ունէր յայտնելու:

—Կանացի էլ լինի, բայց հանդարտ խաղ է: Փե-  
սան, փառք Աստուծու, առողջ է և հանգիստ: Այդպէս  
էլ պէտք է պահպանել նրան...

—Երանի թէ մէկն էլ իմ մասին այդքան մոտածէր,  
Մարիա Խվանօվնա:

—Զեր մասին Աստուած է մտածում... Զեր թշե-  
րից իւղ է կաթում: Թաղէոսրէկին էլ... ջահէլ ժամա-

նակ այդպէս էր։ Բայց ծառայութիւնը... է՞հ... մաշեցրեց նրան...

Զարվադարեանը, սգաւորի դիրք ընդունելով, հաստատեց այդ բանը և նստեց իր տեղը։ Նուրեանը չէր հասկանում; թէ ինչ է ուզում նա ասել, սեղանի տակ մեղմ կերպով հրելով իր ոտքը. նա չը գիտէր, որ երիտասարդ տեխնիկը եթէ փափուկ ու տաք բոյն ունի, եթէ ապրում է երկնքի թռչունի նման, առանց մտածելու վաղուայ մասին, առանց հոգսերի, առանց տըրտմութեան, միշտ զգալով որ Թագէոսւթէկի մեծ հարլատութիւնը բաւական է իրան էլ, իր որդիներին էլ, —այդ բոլոր բարեբախտութիւնը այն պայմանով էր արուած նրան, որ նա լինի այն, ինչ կամենում է տիկին Գուլութէկեանը։ Նուրեանը այդ նուրբ դաշնադրութեան հանգամանքներին ծանօթ չէր և մի աւելորդ անդամ էլ առաջարկեց տիկին Գուլութէկեանի փեսային նստել ու խաղալ։ Եւ Զարվադարեանը ստիպուած եղաւ իր զարմանքը յայտնել, որ Նուրեանը չէ հասկանում; բացարձակ կերպով ասաց, որ պարոնը խաղալ չէ կարող, որովհետև տիկինը չէ թոյլ տալիս։ Երեք խաղացողները նայեցին բարձրագոյն դպրոցի նշաններով զարդարուած երիտասարդին մի տեսակ մեղմացնող, ակամայ կարեկցութեամբ։ բայց նա պատասխանեց մի անվրդով, ներողամիտ ժպիտով և մնաց կանգնած։

Ուկիներն ու հարիւրանոց թղթադրամները սկսեցին պտոյտներ գործել՝ ջղեր գրգռելու, խիստ զգացմունքներ ազդելու համար։ Բայց բժիշկը, ինչպէս Զարվադարեանն ասաց, անտանելի մարդ էր. էլի մի բան յիշեց, յանցաւորի պէս ափսոսանքներ յայտնեց և վեր թռչելով տեղից, գնաց տիկին Գուլութէկեանի աղջկայ մօտ։

—Նատալիա Ֆադդէեմսա, արտասանեց նա մի շատ յուզուած, աղաջաւոր ձայնով, համարեա քիչ էր մնում որ ծունկ չոքէ։—Ինձ ներեցէք, չէ՞ որ դուք նուագում էիք... Ես խանդարեցի, այն, ես...

Տիկին Նատալիան սաստիկ շփոթուեց—նա միշտ այդպէս էր, առաջին անգամից խօսք չէր գտնում, որ պատասխանէ իրան դիմողին. նրա լալիան աշքերը կարծես ասում էին. «ԱՌ, այդ ինչպէս էք խօսում»: Բայց Յովասափեանը իր թեր առաջարկեց նրան, տարառ մինչեւ գաշնամուրը և թախանձեց շարունակել: Դարձեալ հարկաւոր էր ինդրողների մի ամբողջ խումբ. օդնութեան հասան երկու օրիորդները, և մինչեւ որ նա մի ուրախ և աշխոյժ եղանակ չը սկսեց, Յովասափեանը չը վերադարձաւ իր տեղը, թէև Զարվագարեանը փրփրում էր գժգոհութիւնից ու անհամըերութիւնից: Նրա բանը առհասարակ լաւ չէր գնում, աջողութիւնը նուրեանի կողմն էր, որ հանդիսա կերպով ու բաւական աչքի ընկնող յաղթական ինքնագոհութեամբ դիտում էր, թէ ինչպէս եռում-եփում էր իր չաղ, քրարնած խաղընկերը, ինչպէս է դանդաստում ողորմելի կերպով, կամ երեխայի պէս հաւատացնում: Թէ սատանան նստել է իր աջ բազուկի վրայ և թղթերը շարունակ, գիտակցօրէն, խօսք տուած, դաւաճանում են:

Իսկ կանանց համար կատարեալ տօն էր: Տիկին Նատալիայի նուագածը մօգային մի եղանակ էր. նրան հրաշալի կերպով երգում էր օպերային երգիչներից մէկը, մի գանգրահեր, բարձրահասակ, քիչ մելամաղձոտ գէմքով երիտասարդ, որ այդ սեզօնին գեղարուեստապաշտ տիկինների և օրիորդների կուռքն էր գարձել, նրանց «հոգեակլը»:

Տիկին Նատալիայի մատների իւրաքանչիւր հարուածը հասնում էր նպատակին. մեղմ կերպով օրօրւում էին գլուխները, տղամարդիկ կանանցից յետ չը մնացին. թեթև, հաղիւ լսելի մումուցներ էին լսում բարակ ու հաստ ձայնով, իւրաքանչիւրն աշխատում էր կրկնել իրան ծանօթ մօտիվը: Երգչի անունը հիացմունքի և պաշտամունքի առարկայ էր այդ ըսպէին: Ո՞րպիսի սրտառուչ օգեւորութեամբ էին խօսում նրա մասին, որպիսի անկեղծ սրտաբացութեամբ էին աս-

տուածացնում նրան։ Ղարա-Մուրադեանի ընկերներն էլ ընկան ընդհանուր ոգեւորութեան ալիքների մէջ։ Նրանք էլ տեսել ու լսել էին, նրանք էլ գիտէին դատել։ Մենակ գիւղական ուսուցիչն էր, որ իբրև անհասկացող վայրենի, մեղմ կերպով շոյում էր մատներով իր միրուքը և լսում էր...

Փառաւորուել էր և տիկին Գուլուբէկեանը։ Թէեւ վերջին օրերը նրա աղջիկը տանը համարեա միայն այդ կտորն էր ածում և նա մի քանի անդամ ասել էր, թէ իրան էլ դուր են գալիս թէ այդ եղանակը և թէ օպերային երգիչը, բայց այժմ ուրիշ բան էր... Այժմ մարդկանց մէջ երեւում էր, թէ ինչ է նա պատրաստել իր մշտական հոգացողութիւններով։ մայրական հպարտութիւնը նրա խոշոր ու անշարժ ազքերի միջով կարծես հարց էր տալիս ամբողջ դահլիճին՝ կը լինէր այսպիսի երաժշտութիւն, եթէ նատալիային թադէոս-քէկ Գուլուբէկեանի կողակիցը չը լինէր ծնած...

Պակասը լրացրեց տիկին Աննան, որ բարակ ու մեղմ ձայնով կրկնելով այն, ինչ նուագում էր դաշնամուրը, նստեց այրիի կողքին։

—Ահ, ինչ սիրուն մատներ ունի նատալիան, —արտասանեց նա մի ձայնով, որ լի էր անկեղծ, սրտագին հիացմունքով։ Հրաշալի, աստուածային կտոր է...

Ունա էլ սկսեց այրիի հետ, ունկնդրի ուշագրութեամբ, նայել տիկին նատալիային, նրա փոքր ինչ առաջ թեքուած և հազիւնկատելի կերպով երերուող բարակ իրանին։ Գնալով, տիկին նատալիան աւելի և աւելի ոգեսորվում էր —այդ իսկոյն զգաց տիկին Աննան, որ նոյնպէս գիտէր նուագել, բայց միշտ խոստովանում էր տիկին նատալիայի գերազանցութիւնը։

Յանկարծ վագէվագ ներս եկաւ փոքրիկ ֆօրժիկը և կանգնեց իր մօր կողքին, երեսը դարձրած դէպի դաշնամուրը։ Երեխային ընկերական ուրախ և ազմկալի շրջանից խլել, դուրս էր հանել ծանօթ երաժշտութիւնը։ Դա մի շատ սրտաշարժ հանդամնով էր մանաւանդ

տիկին Աննայի համար, որ այնքան շատ մտածում էր երեխաների և նրանց ընդունակութիւնների մասին։ Նա տեսնում էր իր առջև ժառանգականութեան օրէնքի մի կենդանի ապացոյց։ իսկ երբ փոքրիկն սկսեց մանկական անուշ ու բարակ ձայնով երգել, ընդհանուր հրճուանք յարուցանելով, տիկին Աննայի համար այլ ևս ոչ մի կասկած չը մնաց, որ ժառանգականութիւնը կը տանէ երեխային, կը հասցնէ այն դրութեան, որ նա, ով գիտէ, նշանաւոր երգիչ կը գառնայ:

Ժպտալով գլուխը բարձրացրեց և երեխայի հայրը, բայց իսկոյն էլի ուշադրութիւնը կենտրոնացրեց կանաչ սեղանի վրայ, որովհետեւ խաղի մի շատ հետաքրքրական վայրկեանն էր սկսուել։ Զարվադարեանը, չը նայած իր նեղ դրութեան, երկու անգամ ժօրժիկ կանչեց. իսկ բժիշկը, օգտուելով առաջին յարմար րոպէից, կատարեց իր պարտքը, մօտենալով տիկին Գուլուբէկեանին և շատ սիրալիր կերպով յայտնելով նրան, որ ինքն էլ հիացած է։ Ժօրժիկը շփոթուեց, խառնում էր, զուր աշխատելով նուագի հետ գնալ։ Եւ նրա այդ ջանքերը այնքան սըրտառուշ էին, որ տիկին Աննան չը կարողացաւ չը բռնել նրա թեփց, ու դէպի իրան քաշելով, համբուրեց նրա լիքը դէմքը, դովեց ու փայփայեց։ Տատն էլ հարկաւոր համարեց խրախուսել, ձեռքը քաեց նրա դլիսին և ասաց, որ բաւական է երգելը։

—Քանի՞ տարեկան է, Մարիա Խվանօվսա:

—Դեռ վեց...

—Եւ այդքան շնորհալի՞... Ասա, ժօրժիկ, դու ուշ զնում ես, որ փոքրիկ եղբայր կամ քոյրիկ ունենաս, այ, ինչպէս մեր Լիլին...

—Ուզում եմ, իսկոյն պատասխանեց երեխան։

Նա չիմացաւ, թէ ինչ էին այդ խօսքերը իր տառի համար և ինչու նա յանկարծ մուայլու կերպարանք ընդունեց, նոյն իսկ խորը հառաչեց։

Այս, միայն այրին գիտէր իր ցաւը։ Երեսուն և հինգ տարուայ ամուսնական կեանքը միայն մի հատ

պտուղ էր պարգեւել նրան, և նա գիտէր, շատ տարիների փորձով գիտէր, թէ որպիսի նահատակ է մի հատիկ զաւակի տէր մայրը։ Միթէ իր աղջիկն էլ պիտի նոյն նահատակը լինի։ Այդ հարցի վրայ նա երկար ժամանակ գլուխ էր պատռել. և մի կողմից թագէոս-բէկի միակ ժառանգուհու առողջութիւնը, միւս կողմից նահատակ մօր դրութիւնը նրան երկու կրակի մէջ էին դրել։ Հոգ տանել, ահ, շարունակ մտածել, մինչեւ վերջին շունչը, մինչեւ գերեզման... Թագէոս-բէկի այրին այս է միայն վիճակուած։ Այժմ տիկին Աննան էլ ասաց, որ թէեւ ինքը նախապաշարուած չէ, բայց հաւատում է, որ գոյութիւն ունի չար աչքը և այդ աչքը մանաւանդ մի հատիկ երեխաներին է հալածում. Ժօրժիկը մենակ է և այդ մենակութեւնը ցանկալի չէ...

—Անկասկած, պատասխանեց տիկին Գուլուբէկեանը։

Մի շատ խոր մտատանջութիւն երեւան եկաւ նրա դէմքի վրայ։ Եւ նայելով դէպի խաղացողների կողմը, նա աւելացրեց։

—Այս անգամ ես լուրջ կերպով խորհուրդ կ'անեմ բժիշկի հետ...

## Ե

Երկրորդ անգամ յայտարարուել էր, որ ընթրիքը պատրաստ է և ամենքի ուշագրութիւնը դէպի սեղանատունն էր դարձել։ Բայց Զարվարեանը բողոքելով, խնդրելով կարողանում էր յետածգել տալ ընթրիքը։ Արդէն մօտ ինն հարիւր ոուբլի էր նա տանուլ տուել և աշխատում էր այդ գումարի գոնէ մի մասը յետ խլել։ Եւ շտապում էր, աւելի ջղային ու անհամբեր էր դարձել, աւելի մեծ գումարներ էր դնում, շուտ-շուտ կրկնելով, որ գետն ընկնողը անձրեւից չի վախիենայ։ Բայց որքան էլ շատ լինէր տանտէրերի ուշագրու-

թիմը դէպի նրան, անվերջ յետաձգել ընթրիքը չեր կարելիք եւ տիկին Աննան ստիսողաբար ասաց.

—Վերջացրէք, պարոններ: Մենք ամենքս ձեզ ենք սպասում:

Յովասափեանը դէն գցեց իր խաղաթղթերը, շտառով ոտքի կանգնեց և, վճռական կերպով յայտարարելով, թէ ինքը այլ ևս չէ խաղում, հաւաքեց իր առջեւ թափուած ուսկիները: Ապա սկսեց որոնել տիկին Աննային, որ ներողութիւն խնդրէ նրանից: Գուլուբէկեանի այրին, վերջապէս, վեր կացաւ տեղից և կանչելով Յովասափեանին, յայտնեց որ խորհուրդ պիտի անէ նրա հետ բժիշկը ժպտաց. ի հարկէ, նա շատ ուրախ էր, որ կարող է ծառայել յարդելի Մարիա Խանօֆնային. ասաց, որ պատրաստ է նոյն իսկ այս բոպէին լսել նրան: Բայց այդ վայրկեանին նա լսեց իր ետեւում.

—Պ. բժիշկ, իսկ մեր խեղճերը...

Նա յետ նայեց: Կանգնած էր Հարա-Մուրագեանը:

—Մենք համարեա ոչինչ չը վճռեցինք, սպասում էինք ձեղ. իսկ հիմա ընթրիքի են հրաւիրում: Մեր խեղճերը այժմ գուցէ երազում տեսնում են, թէ ինչ պէս ենք մենք աշխատում նրանց համար:

Նրա խօսքը սովորականի պէս բաց ու պարզ էր, ձայնը բարձր և փոքր ինչ կոսկիտ, համարեա յանդիմանական: Սալօններում պաշտուած բժիշկը իրան նեղ դրութեան մէջ զգաց և ակամայ, մեքենաբար, ուղեց արդարանալ այդ անտաշ գեղջուկի առաջ:

—Մենք... մենք հէնց նրանց համար ենք հաւաքուած, ասաց նա:

—Այդ շատ լաւ էր, ծիծաղելով պատասխանեց Հարա-Մուրագեանը նոյն վիրաւորական ուղղամտութեամբ: Նրանց համար ենք հաւաքուել, բայց ինչ ենք արել:

—Ահա... հիմա, հիմա...

Նա շտապով իր շուրջը հաւաքեց երիտասարդներին: Եկել էր և Մհերեանը, հրաւիրուեց տիկին Աննան

Էլ։ Բայց վերջինս չէր կարող երկար նստել և միայն իր պահանջները գրեց, թոյլ տալով որ խորհրդակցութիւնը քննէ ու վճռէ, թէ ինչպէս պէտք է կատարել այդ պահանջները։

—Ամեն օր կաթ, կարագ և սպիտակ հաց երեխաներին ու տկարներին, ասաց նա.—նոր հագուստներ, սպիտակեղին. անկողին ամենքի համար. բնակարանը զզուելի է. հարկաւոր է առատ, առողջարար մնունդ և կանոնաւոր հանդստութիւն։ Ուրիշ կերպ կենդանացնել այդ գիտակները չէ կարելի։

Եւ նա գնաց, յայտնելով ի տեղեկութիւն ամենի, որ ուշանալ չէ կարելի, ընթրիքը վաղուց է պատրաստ, առանց այդ էլ շատ է ուշացել։

Չարվագարեանն ու Նուրեանը, տիկին Գուլուբէկեանի փեսայի աջակցութեամբ, վերջացնում էին իրանց հաշիւները, երբ անկիւնում գումարուած ժողովն սկսեց քննել, թէ ինչպէս պէտք է կազմակերպել թշուառ փախստականներին օդնելու գործը։

Սենեակը դատարկուեց, ամենքը սեղանատանն էին։ Բժիշկը սաստիկ շտապում էր, աշխատում էր կարճ կտրել, խնդրում էր Ղարա-Մուրադեանին բաւականանալ այն կցկտուր բացատրութիւններով, որոնք տրւում էին նրա յարուցած հարցերի առիթով։ Օրիորդներն էլ փոխադրուեցին սեղանատուն։ Բժիշկը, կարծես, փշերի վրայ էր նստած։ Նրա ուշագրութիւնն աւելի դռներին էր նուիրուած և հէնց որ մէկը ներս էր դալիս, նա իսկոյն արտասանում էր։

—Մի երկու րոպէ... ոչ աւել...

Բայց րոպէներն էլ անչափ երկար էին երեւում սպասողներին։ Սկսուեց տրտունջ։ Երկու անդամ հէնց Չարվագարեանը գնաց Յովասափեանին յանդիմանելու, թէւ աւելորդ էր համարել համբերելը և միւմի կտոր վերցնում էր սեղանից, ուտում։ Կծելով ձեռքում բռնած կտորները և դանդաղ ծամելով, նա ծաղրեց այդ «բարեգործական ժողովը», ապա անցաւ և լուրջ յանդիմա-

նութիւններին։ Յանդիմանում էր Յովասափեանին այն պատճառով, որ նա ժամանակ ունի վարժապետների հետ այդքան գլուխ զնելու, իսկ խաղի ժամանակ չը կամեցաւ գոնէ աւելորդ կէս ժամ նստել։

—Ինձ համար չարիր, ինձ համար... որպէս զի իւ մանամ, թէ թղթերը վերջ ի վերջոյ մարդավարութիւն պիտի անեն, թէ հէնց մի գլուխ շուն շանորդի պիտի մնան...

Բժիշկը հաւանութիւններ տալով, իր մեղքը խօստովանելով, մի կերպ կարողացաւ ուզարկել նրան սեղանառուն, իսկ ինքը շտապեց գիմել ժողովականներին, որոնց մէջ մի ինչոր վէճ էր ծագել և հէնց այդ պատճառով էլ նրանցից ոչ ոք չէր լսել Զարվադարեանի խօսսակցութիւնը մինչեւ վերջը։ Ղարա-Մուրադեանը տաքացած մի ինչոր բան էր ապացուցանում և ընդհատեց վէճը միայն այն ժամանակ, երբ Յովասափեանը երկրորդ անգամ խնդրեց նրան յիշել, որ միւս սենեակում սպասում են հիւրերը, որ տանտիկինը ամեն իրաւունք ունի նեղանալու երիտասարդներից։

—Մենք ընթրիքի համար չենք հաւաքուել, պ. բը-ժիշկ, ասաց երիտասարդը, իր բոցավառ հայեացքն ուզելով նրա վրայ։—Այստեղ կարեւոր հացեր կան, որոնց պէտք է քննել, պարզել։ Սկզբունքի հարցեր... Մեղք չի լինի, կարծեմ, եթէ այս ամբողջ երեկոյից գոնէ մի աւելորդ ժամ էլ նուիրենք այն գործին, որ մեզ բերել է այստեղ...

Բժիշկը ներողամիտ ժպիտով պատասխանեց նրան։ Անփորձ էր գիւղական վարժապետը, նա չը գիտէր, որ այսպիսի շրջանում այս տեսակ գործերին չէ կարելի երկար ժամանակ նուիրել։ Զը գիտէր, որ սկզբունքի հարցեր չեն կարող լինել այստեղ, քանի որ նրանց մասին խօսք թոյլատրում է միայն այն բոպէին, երբ ուզում են ցոյց տալ, թէ այստեղ գիտեն դրսի ցաւերի վրայ մտածելը։ Քիչ, շատ քիչ են այդ բոպէները, որով-

հետեւ սաստիկ ձանձրացուցիչ են, որովհետեւ խորթ են այստեղ այդ սկզբունքները, անհասկանալի են: Եւ բժիշկը, երիտասարդին հանգստացնելու համար, արտասանեց միայն.

—Յետոյ, յետոյ...

Ու իր աժոռոը քաշեց Արտալեանի մօտ: Այժմ ամենալարեւոր հարցն էր: Հարկաւոր է մամուլի աջակցութիւնը. հարկաւոր է խօսել շատ, նկարագրել և ցոյց տալ, թէ ինչ են անում, ինչ պէտք է անել: Հարկաւոր է ոգեսորել անտարբերներին անձնազոհութեան օրինակներով: Մեծ նշանակութիւն էր ստանում լրագրի աշխատակիցը: Եւ Յովասափեանը սկսեց երկար ու բարակ պատճել նրան, «Նիւթ տալ»:

—Երևակայնում էք, պարոններ, այսպիսի եղելութիւն, ասաց նա, ձեռքը յաճախակի դնելով Արտալեանի ծնկան վրայ: —Քամու այնպիսի սարսափելի ժամանակ... այսօր նա չը տեսնուած կատաղութեան էր հասել. ինձ ասացին, որ այսօր «Վարդ» առադաստանաւը խորտակուել է ափի մօտ... Այդպիսի ժամանակ տղամարդըն անդամ դուրս դալու յօժարութիւնը չունի. իսկ Աննա Եգորօվսան դնաց աղքատանոց... որովհետեւ խօսք էր տուել...

—Ես գիտեմ որ «Վարդը» հէնց այդ ժամին է խորտակուել, աւելացրեց Մհերեանը: —Եղբայրս նաւատիրոջ գրասենեակում է ծառայում...

—Այն... ճիշտ... Թէև ես էլ խօսք էի տուել, բայց, խոստովանում եմ, չէի հաւատում թէ նա կը դնայ. հէնց այդ պատճառով էլ ուշացայ. ասում էի՝ անկարելի է, նա կը յետաձգէ: Յանկարծ իմանում եմ, որ նա գնացել է: Աստուած իմ... Շտապում եմ ինքս էլ պ. Մհերեանի և օրիորդների հետ և ինչ եմ իմանում; ի՞նչ եմ տեսնում:

Եւ բժիշկը ոչինչ չը մոռացաւ: Նրան օգնում էր Մհերեանը. ու լրագրի աշխատակիցի՝ ինչպէս նաև միւս լսողների առջեւ պատկերացաւ դժբախտութեան զար-

հուրելի կեղտուտ որջը, որի մէջ վշտում, կարգադրութիւններ էր անում քաղաքի առաջնակարդ, հպարտ և անմերձնալի լինելու բոլոր իրաւունքներն ունեցող տիկիններից մէկը։ Դոնապահ Յակոբը չէր միայն, որ այնքան յափշտակուել էր այդ օրը։ Այստեղ էլ նոյն անկեղծ, սրբազն ոգեսրութիւնն էր պատել լսողներին։ Ղարա-Մուրադեանը բուռն կերպով հիացմունը և բաւականութիւն էր արտայայտում։ Նա դժնում էր, որ Արտալեանը պարտաւոր է մեծարել այդ անձնազոհ բարերարութիւնը, օրինակ հանգիսացնել տիկնոջը՝ ուրիշների համար։

—Երևակայում էք, պարուներ, մի այսպիսի տեսարան,—շարունակեց Յովասափեանը աւելի ևս սրտառուչ ձեռվ.—մտնում է Աննա Եգորօվսան աղքատանոց։ Ոչ ոք չը կայ. և նրան գիմաւորում է, գիտե՞ք... ահագին շունը... Այն... նա և գաղանը մենակ են, երես առ երես ամայի բակում։ Այդքան սիրտ, այդքան անվախութիւն ես չէի ենթադրում տիկնոջ մէջ, թէև վաղուց եմ ճանաչում նրան։ Ի՞նչ էլ լինի, պարուներ, չը պէտք է մոռանալ մարդու գիրքը... Նրան ոչ ոք չէր հարկադրում, նա կարող էր իսկոյն կառք նստել և տուն վերադառնալ։ Բայց նա այդ շարաւ։ Շունը գնում է գէպի նրան, իսկ նա կանգնած է, չէ վախենում։ Այդքան նրա սրտին մօտ էր խեղճերի գործը։ Ես չը գիտեմ, թէ ի՞նչ կը գառնար վերջը... Բարեբախտաբար, գուրս է գալիս դռնապահը և վտանգն անցնում է։ Թէ չէ ես և այ, Մհերեանը այլ ևս երբէք չը պիտի կարողանալինը մարդկանց աշքին երևալ... Զէ որ մենք խօսք էին տուել յայտնի ժամին այնտեղ լինել և պարտաւոր էինք սպասել նրան, գիմաւորել...

Ամենքը համաձայն էին բժշկի հետ։ Եւ մինչդեռ մի քանիսները հարց ու փորձ էին անում իրանց հետաքրքրող մանրամասնութիւնների մասին, Արտալեանը նըշ կատողութիւններ գրեց ծոցի տետրակի մէջ։ Բաւական առատ նիւթեր ուներ նա իր յօդուածների համար։

## Զ

Էնթրիքը երկար տևեց, աղմկաւոր էր, ուրախ։ Նուրեանների խոհանոցի ճոխութիւնը հանրածանօթ էր։ Բայց չորս երիտասարդները նոր էին տեսնում այդպիսի մի փարթամ սեղան։ Անդադար բերում էին, մատուցանում։ Եւ խեղճ Ղարա-Մուրադեանը արդէն քրտինքի մէջ էր մտել, այնքան չը գիտէր, թէ ինչ վերցնել և մասաւանդ ինչպէս վերցնել։

Այժմ միայն նա ընկճուեց. խորթ, օտար տարրը այժմ յաղթահարուած էր։ Չարվադարեանը, որ սեղանի կառավարիչն էր, սկզբում խնայեց. աչքի տակովն էր նայում և կամացուկ էր ծիծաղում, տեսնելով թէ ինչպէս է նա անօգնականի պէս այս ու այն կողմն է նայում, վախվախելով, կարմրելով, երկար չարչարուելով մի բան վերցնում. իր այդ գիտողութիւնները նա շնչալով զեկուցանում էր տիկին Նուրեանին, որ նստած էր նրա կողքին և որ ծիծաղում էր երբեմն, իսկ Ղարա-Մուրադեանին չէր նայում։

Բայց Նուրեանների գինին անուշ էր և ազդող Չարվադարեանը կորցրեց իր բաժակի չափը և բացուեց։ Իզուր բժիշկ Յովասափեանը յաճախ ընդհատում էր իր հանդարտ խօսակցութիւնը տիկին Գուլուբէկեանի հետ և մեղմ կերպով կարգի էր հրաւիրում չաղ կառավարչին։ Շուտով ծիծաղը համարեա ընդհանուր գարձաւ և ոչ ոքի համար այլ ևս գաղտնիք չէր, որ ծիծաղի առարկան գիւղական ուսուցիչն էր։ Բայց Ղարա-Մուրադեանն էլ էր գինի խմնում, նա էլ տաքանում էր և խօսելու մի առանձին տրամադրութեամբ էր համակւում։ Բաւական համարելով իր կերածը, նա հրաժարուեց այլ ևս որ և է բան վերցնելուց, որպէս զի թոյլ չը լինի իր կողմը և սկսեց մի առանձին յամառութեամբ դիմադրել Չարվադարեանին։

Թէև այս վերջինիս կողմն էր տիկին Գուլուբէկեա-

նի փեսան, որ ամեն մի հանաքից յետոյ ծիծաղից թուլանում էր, հիացմունքի զանազան ցոյցեր էր անում գլխի շարժումներով, ձեռքով, բայց այդ հանգամանքն էլ չէր շփոթում երիտասարդին։ Տիկին Գուլուբէկեանը այս անգամ ուշադրութիւն չէր դարձնում իր փեսայի վրայ, որովհետեւ զբաղուած էր աւելի լուրջ մաքով. Յունիսավեանին նա հրաւիրել էր նստել իր կողքին, որպէս զի ընթրիքի վրայ, խօսքի մէջ, նախապատրաստական տեղեկութիւններ իմանայ իրան այնքան հետաքրքրող հարցի մասին, որ հանգստութիւն չէր տալիս տիկին Աննայի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ։ Ժօրժիկի մենակութեան հարցն էր դա։

—Համեցէք, վարժապետ, վերցրու, յանկարծ կանչեց կառավարիչը, երբ սպասաւորը մօտեցրեց վարժապետին մատուցարանը, որի վրայ ինչոր մանր բաներ կային։ —Դրան ուտելը հեշտ է, գիւղում դրանից շատ է լինում, զկեռ է, զկեռ...

Տիկին Գուլուբէկեանի փեսան այս անգամ աւելի անզուսպ ցոյցեր արաւ ձեռքերով ու ոտներով։ Սամուէլ Նուրեանը երեսը դարձրեց դէպի վարժապետը և ըմծիծաղ տուեց։ Նրա տրամադրութիւնն էլ լաւացել էր, թէեւ նա դարձեալ մնում էր իր վայելուչ դիրքի մէջ։

—Հաւատացնում եմ, զկեռ է... ճիշտ նոյնը, որ գիւղի կանայք բաղում են ծմակում և ծոցները լցրած տուն ըերում։ Դու էլ, անապատճառ, քո աշակերտների հետ շատ կը լինես զկեռ քաղելու գնացած։ Վերցրու, քանի հատ ուզում ես, այդ զկեռներից. դրանց հետ լաւ է լինում այն սպիտակ խմչչը, որ փոքրիկ ըմպանակի մէջ առջեղ է դրած։ Դա էլ... ի՞նչպէս ասեմ... ջաջի արագ է...»

Անզուսպ, խեղգող ծիծաղը թոյլ չը տուեց, որ նա շարունակէ այդ հանաքը։ Գլուխը կախ գցելով իր ափսէի վրայ, Զարվագարեանը ծածկեց ճակատը ձեռքով և ծիծաղում էր անձայն, ցնցուելով։ Ապա բարձրացրեց դէմքը և, համարեա հեկեկալով ծիծաղից, հարցրեց.

—Արադ... քաշած կամ, վարժապետ...

Ու նորից կախ արաւ գլուխը. ցնցւում էր ամբողջ մարմնով։ Նա վարակեց ամենքին։ Իսկ տիկին Գուլութէկեանի փեսան հասաւ այն աստիճանին, որ չը կարողացաւ այլ ևս նստած մնալ ու վեր կացաւ, գնաց դուրս, որպէս զի մի քիչ հանգստացնէ իր պատառուող թռքերը...

Հարա-Մուրադեանը անվրդով նայում էր ամենքին։ Նա ոչինչ չը վերցրեց, իսկ երբ ծիծաղը մի քիչ թուլացաւ, նա ձեռքը մեկնեց դէպի իր բաժակը, խօսեց այնպիսի բարձր ու խրոխոտ ձայնով, որ նոյն իսկ տիկին Գուլութէկեանն էլ թողեց իր խորհրդակցութիւնը բժշկի հետ և սկսեց լսել։

—Լաւ է, պարոններ, որ գիւղը այդքան զուարձութիւններ է պատճառում ձեզ, առաց նաև կեանքի մի անսպառ, անհուն առատ ազբիւր լինելով, գիւղը, այն, պիտի խօսեցնէ, միշտ և ամեն տեղ խօսեցնէ առմենքիս։ Ի՞նչ ասես որ չէ տալիս նաև թէ ուրախութիւն, թէ վիշտ, թէ խաւաք հասկացողութիւններ, թէ տաղանդներ կեանքի զանազան ասպարէզներում։ Նա ուղղակի հրաշքներ էլ է գործում։ Գիւղն է, որ իր միշից հանեց այն դժբախտներին, որոնց համար այսօր այստեղ ենք հաւաքուել մենք, այսքան տարբեր գիրքերի և դասակարգերի մարդիկու իսկ սա, գոնէ իմ կարծիքով, մի հրաշք է։ Գիւղից եմ և ես, որ չը գիւտեմ թէ ինչպէս պէտք է ուտել ձեր կերակուրները...

Թոյլ տալով որ նորից բարձրացած ընդհանուր ծիծաղը հանդարտուի, երիտասարդը շարունակեց.

—Այն, ինչու ծածկել։ Ես երբէք չեմ էլ ասի, թէ հաւասար եմ ձեզ այսպիսի բաների մէջ։ Բայց թոյլ տուէք հարցնել. միթէ գուք էլ ամեն բանի մէջ հաւասար էք գիւղացուն։ —Ոչ, այդպիսի բան չէ կարող լինել։ Ասելս այն է, որ ծաղրելու բան չը կայ այն հանգամանքի մէջ, որ կայ գիւղացի, կայ քաղաքացի։ Պ. Զարվարաբեանը ամբողջ երեկոյ գիւղը ծաղրելով էր

զուարճացնում հիւրերին։ Բայց ինքը, պ. Զարվադարեանը, որտեղից է դուրս եկել—Գիւղից։ Նրա հօրեղբօր որդին այժմ էլ հողագործ է։ Ապա թող պարոնն ասէ, թէ ես սուտ եմ ասում։..

—Սուտ չէ, պատասխանեց Զարվադարեանը։—բայց դրանից ինչ է դուրս գալիս…

—Մի վիրաւորուէք, պ. Զարվադարեան, ես միայն փաստն եմ բերում։ Անցնենք միւսներին։ Մեր յարգելի բժշկապետը… Մի տարի ես գնացել էի Դ… գաւառի թ… գիւղը՝ գպրոց բաց անելու։ Հենց առաջին երեկոյ ես հիւրընկալութիւն գտայ Յովաստիենց տանը։ այնաեղ գիտէին, որ այդ անդամներից մէկը բժիշկ է քաղաքում։ Տիկին Գուլուբէկեանի փեսան… նրա ծագման մասին հօ կասկած չը կայ։ Ինքն էր, որ ձեռքերով հանեց գիւղական տրեխները, հագաւ քաղաքի կօշիկներ, թէեւ այժմ ամենից շատ է ծիծաղում… էլ առաջ դընանք։ Պ. Նուրեան… այս ազգանունը գիւղական է։ Նուրի անուան այժմ էլ կարելի է տեղատեղ պատահել, մանաւանդ այն գիւղերում, որոնք մօտիկ են թիւրք գիւղերին։ Անշուշտ պ. Նուրեանի կամ հայրը կամ պապը նոյնպէս գիւղից է դուրս եկել։

—Պապը, պապը, ասաց Զարվադարեանը մի առանձին չարախնդութեամբ, տեսնելով թէ ինչպէս Նուրեանը կախ արաւ իր գլուխը և մռայլ կերպարանք ընդունեց։

—Բայց, զարժապետ, աւելացրեց նա,—լմացիր, Աննա Եգորօվսան գիւղից չէ, այլ իսկական քաղաքացի։

—Եւ այդպէս ահա. ուր որ նայում ենք, արմատը, հինուածքը գիւղն է։ Ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Մենք, հայերս, գիւղացի ժողովուրդ ենք, մշակ, աշխատաւոր ենք եղել միշտ։ Այս ահագին արդիւնաբերական քաղաքը ամենամեծ մասով այդ տարրից է բաղկացած։ Դուք, ի հարկէ, տեսել էք՝ ինչպէս է կաղմուռմ հեղեղը։ այս ու այն կողմից, հարիւր ու մի ձորերից ու ձորակներից հաւաքւում են փոքրիկ ջրեր և միանում մի ա-

ւելի մեծ ձորի մէջ։ Մեր գիւղական ժողովուրդն այս-  
պէս եղաւ. տարիների ընթացքում, կաթիլ-կաթիլ, նա  
հաւաքուեց այստեղ, հեղեղեց այս երկրի երեսը։ Նրա  
մէջ գոյացան ամեն տեսակ դիրքեր ու կարգեր. կայ  
տանջուող, կայ և վայելող, որը խփել է բարձրին, որը  
կէս քայլ էլ առաջ չէ գնացել և թաւալում է նոյն  
ցեխերի ու կեղտերի մէջ։ Նշանակում է սա, թէ դիւ-  
զացի է նա, ով առաջ չէ գնացել և գիւղացի չէ նա,  
ով ապարանքներ ունի—ի հարկէ, ոչ Բայց ինչպէս  
բացատրել այն հանգամանքը, որ այսպէս են դատում  
մարդիկ Ես կարծում եմ, որ պէտք է դիմել ժողովը՝  
դին. նա շատ լաւ հասկանում է դրութիւնը, նա հա-  
զարաւոր տարիների փորձ ունի։ Նա արհամարհում է  
այն ճտերին, որոնք ծաղրում են իրանց այն կճեպը,  
որտեղից դուրս են եկել։ Ճուտը, ի հարկէ, ծաղրել չէ  
կարող. նա, ուրեմն, մարդուն է ներկայացնում ժողո-  
վը պատկերաւոր փիլիսոփայութեան մէջ։ Մենք  
մի և նոյն կճեպից ենք դուրս եկել, մեր ամենքիս ծր-  
նողը մի հատ է—դիւղական հողը։ Կտրուել ենք այդ  
հողից, եկել ենք այստեղ։ Եւ եթէ իմ և պ. Զարվագա-  
րեանի մէջ տարբերութիւն կայ, պատճառն այն է, որ  
նա ծաղրում է իր կճեպը, իսկ ես... ինձ համար նրանից  
սուրբ բան չը կայ...

Զարվագարեանի երկու հաստ ձեռքերի ծափահա-  
րութիւնը ընդհատեց գիւղական ուսուցչի խօսքը.

—Մաշալլա, աֆէրիմ, վարժապետ, ասաց նա, իր  
սովորական կծու լրջութիւնն ընդունելով—Երեւում է,  
որ տէրտէր պիտի դառնաս. Ժուղթ որ ման ածելու  
լինես, բեր ինձ մօտ էլ. Կը դրեմ որ արժանի է, մեծ  
պասին երկար քարոզներ կ'ասէ մեր պառաւների հա-  
մար...

Յովասափեանը սաստիկ բողոքեց նրա դէմ։ Ասաց,  
որ անգաղաքավարութիւն է մարդուն ընդհատելը, մա-  
նաւանդ այն մարդուն, որ լաւ է խօսում։ Մի թեթեւ  
պայքար սկսուեց երկուսի մէջ։

—Թոհյլ տուէք, պարոններ, վերջացնում եմ, ասաց  
Հարա-Մուրադեանը:

Տիկին Գուլուբէկեանի փեսան, որ նոր ըիչ զուար-  
թացել և ծիծաղում էր վարժապետի տէրտէր դառնա-  
լու վրայ, նորից ընկղմուեց բուժ անտարբերութեան մէջ  
և յօրանջում էր: Նուրեանը քիչ էր մնում պահանջէ, որ  
վերջ տրուի այդ անկարգութեան. բայց աեսնում էր,  
որ իր կինը լսում է ուշադրութեամբ և մինչև անդամ  
միացաւ Յովասափեանի բողոքին:

Ես, պարոններ, ոչ ոքին վիրաւորելու միտք չու-  
նեմ; Ես միայն փաստը շեշտեցի, շարունակեց ճառա-  
խոսը: Ես այստեղ եկել եմ ոչ նրա համար, որ վե-  
րացնեմ այդ յափտենական անարդարութիւնը: Դա ան-  
կարելի էլ է մի անհատի համար: Բայց ես մի բան լաւ  
հասկանում եմ:—որ ես, մի դիւզացի մարդ, այստեղ  
եմ: Ես մտայ այս տան շէմքով, մտայ վստահ քայլերով,  
համոզուած, որ մանելու իրաւունք ունեմ; և այդ իրա-  
ւունքն ինձ տալիս է այն գործը, որի համար կանչուած  
եմ: Այսօր մենք դեռ ոչինչ չենք արել. մենք միայն  
սկիզբ դրեցինք, և ով դիտէ, վաղը, միւս օրը մեր ա-  
րածը այս ճոխ սեղանի արժեքի չափ կըլինի՞ արգեօք:  
Ոչ ոք այդ չը դիտէ. բայց այժմ մենք միասին ենք: Այ-  
երեկոյ, պարոններ, ինձ այստեղ ճնշում էր զգացմունք-  
ների մի ամբողջ բեռ. այս միջավայրը, այս շրջանը...  
Գուցէ ես շատ եմ միամիտ, շատ եմ դիւզացի: Բայց  
գլխաւորի մէջ ես, ի հարկէ, չէի սխալւում: ինձ համար  
միշտ պարզ կը մնայ, որ եթէ չը լինէր այստեղ մի զգայուն  
մարդասէր սիրտ, այս պատերի մէջ չէր կենդանանայ  
մի գործ, որ ինձ ու ինձ նմաններին իրաւունք տուեց  
վստահ քայլերով ներս մոնել: Նախապաշարմունքները  
դասակարգեր են ստեղծում: իրանց կծեալը ծաղրողնե-  
րը շատ հեռու պիտի մնային այնպիսիներից, որ չեն ծաղ-  
րում, որոնք կպած են իրանց կճեպին: Բայց կայ դու-  
ղափար և նա մեզ հաւաքել է այս սեղանի շուրջը: Այդ  
եղբայրացնող, անհարթութիւններ, թիւրիմացութիւններ

շտկող դաղափարի հեղինակը այստեղ է։ Ես խմում եմ  
նրա կենացը։ Խմում եմ յարգելի տիկին Նուրեանի կե-  
նացը...

Բուռն հաւանութեան ցոյցեր տեղի ունեցան. սպա-  
սաւորը շամպայն գինի ածեց բիւրեղեայ բաժակները։ Մին-  
չև խմելը Ղարա-Մուրադեանը երգեց «Եղբայր եմք» եր-  
գը։ Ամեն մէկը իր մտքում ասում էր, թէ վարժապետը  
այստեղ չափազանցութեան հասաւ։ Նա շատ աջողակ  
ձայն չունէր. երգը անարուեստ էր, ծակում էր լսողի  
ականջը իր սուր ու բարձր հնչիւններով։ Սենեակը ու-  
րոտում էր։ Եւ ամենքը, առանց բացառութեան, ուղղել  
էին իրանց հայեացքները իրանց առջեւ դրած ափսէ-  
ներին. կարծես ամաչում էին երգողի փոխարիէն. ոչ ոք  
չը նայեց դէպի նրա կողմը։ Զարվադարեանը մի քանի  
անդամ ձեռքերը սեղմեց ականջներին և հարցրեց իր  
դիմացը նստած Յովասափեանին.

—Ո՞նց է, ալ. բժիշկ...

Իսկ Նուրեանը... Նա հօ այս գիշեր իր կնոջ նա-  
հատակն էր... Եթէ ըլ լինէր Աննայի առողջութեան և  
բարեկեցութեան ձօնուած այդ բաժակը, որի մէջ ազնիւ  
խմիչքը գեղին սամի գոյներ էր ցոլացնում; Նա վեր կը  
կենար և իր ականջները կ'ազատէր այդ վայրենի ձայ-  
ներից...

Երգը վերջացաւ խորին լուսութեան մէջ... Ղարա-  
Մուրադեանը զգացուած էր. նրա դէմքը շառագունել  
էր, ծածկուել մի բարակ քրտինքով, աչքերը փայլում  
էին բոցավառուածի նման։ Խմելով իր բաժակը, նա  
նստեց, ոչ ոքի կողմից չարժանանալով զովասանքի...  
Միայն տիկին Նուրեանն էր, որ չնորհակալութիւն  
յայտնեց նրան՝ իր կենացը խմելու համար, և առաց, որ  
յոյս ունի, թէ հասարակութիւնը կ'օգնէ իրան այս սկը-  
սած գործում։

—Ես հաւատում եմ, ամբողջ սրտով հաւատում  
եմ, տիկին, աղաղակեց Ղարա-Մուրադեանը և նրա

ձայնը ցոյց էր տալիս, թէ նա չէ նկատել այն սառնութիւնը, որ առաջ բերեց նրա գիւղական երգը:

Առաջարկուեցան ուրիշ կենացներք Շամպայնը թափւում էր ջրի պէս: Հիւրերի տրամադրութիւնը գնալով լաւանում էր. խօսեցին և Արտալեանը, Մհերեանը, նոյն իսկ Սահակեանը: Բայց ամենից շատ խօսողը Չարվագարեանն էր: Առաջարկելով Նուրեան ամուսինների և նրանց երեխաների ընդհանուր կենացը, նա երկար գովում էր այս տունը, ներկայացնում էր նրան իբրև մի օրինակելի, մաքուր ընտանիք, փոխադարձ սիրով և ամուսնական ու ծնողական առաքինութիւններով շաղկապուտծ:

—Իմ առաջին բարեկամը նա կը լինի, ով ինձ էլ կը ցանկայ մի այսպիսի ընտանեկան բախտ: Բայց չը մոռանանք մի բան: Մեր յարգելի Աննա Եգորօֆնան սկսել է մի գործ: Ամենքս ենք հաւանում, ամենքս ենք հիացած. բայց նա քիչ է, մենք պիտի զգանք, որ Աննա Եգորօֆնան մեծ, շատ մեծ նեղութիւն է յանձն առել. և մենք չը պիտի մենակ թողնենք նրան այդ հագին ծանրութեան տակ. մեր պարտքն է օգնել նրան, ծառայել այս գործում:

Դիմելով ապա տիկնոջը, Չարվագարեանը աւելացրեց.

—Աննա Եգորօֆնա, խոնարհաբար աղաջում եմ ձեզ, ինձ էլ ընդունէք ձեր օգնականների, ձեր հրամանները կատարողների թւում: Ես ինձ ամբողջովին գնում եմ ձեր տրամադրութեան տակ: Փող էք կամենում, օգնութիւն... ամեն ինչ պատրաստ եմ կատարել...

Սեղանակիցները բռուն ուրախութիւն յայտնեցին: Շատ ուրախ էր մանաւանդ տիկինը, որ ասաց թէ այժըմ հաւատում է աջողութեան: Ծափահարութիւններ լսուեցին, առաջարկուեց Չարվագարեանի կենացը: Իսկ Ղարա-Մուրադեանը «կեցցէ» կանչեց, իր բաժակով գնաց նրա մօտ և ասաց, թէ պատրաստ է համբուրուել նրա հետ: Չար մարդը հրաժարուեց այդ «պատուից»,

բաւական համարեց և բաժակներ խփելը, ապա սեղանի վրայով առաջ թեքուելով, ասաց նուրեանին.

—Այս աւանակը շուտով մեզ դուրս կ'անէ մեր տներից...

Ոգեւորութիւնը այն աստիճանն վարակիչ էր, որ տիկին Գուլուբէկեանն էլ Աննայի տրամադրութեան տակ դրեց իր փեսային։ Բայց այդ առիթով ուրախութիւն յայտնող չեղաւ, մինչեւ իսկ տիկին Աննան շատ աննկատելի կերպով շնորհակալութիւն արաւ։ Կարծես իր առաջարկութեան տպաւորութիւնը մեղմացնելու համար էր, որ այրին բացատրութիւնների մէջ մտաւ։

—Նա կարող է օգնել տնտեսական գործերում, ասաց նա դանդաղ կերպով. —առնել-տալու մէջ գլուխ ունի...

Փեսան, երեւի գինու աղդեցութեան տակ, մի քիչ խիստ կերպով իր հրաժարականը տուեց։ Բայց այդտեղ այլ ևս լոռութիւն պահպանել չը կարողացաւ տիկին նատալիան, որ նստած էր նրա կողքին և սկսեց նրան խնդրել, որ չը հրաժարուի Ամուսինը, սակայն, պնդում էր իր հրաժարականի վրայ, որոնք սեղանի միւս ծայրից շամշկը բռում էին նրան։ Տիկին նատալիան վիճել, համոզել չի տէր։ Նա շուտ յոգնեց, սկսեց թախանձել, որ գոնէ իր համար անէ այդ բանը։ Նրա աչքերում նոյն իսկ արտասուքներ էլ երեւացին...

## Է

Մութ ու ամայի գիշեր էր, երբ հիւրերը ցրուեցան։ Յովասափեանը և Զարվադարեանը մտան մի երկար փողոց։

—Դու կառք ուզնում ես, հարցրեց վերջինս և, չը սպասելով պատասխանի, ինքն էլ վճռեց. —լաւ, հարկաւոր չէ. եղանակը զովացուցիչ է, ոտով գնալ է հարկաւոր այսքան ուտելուց և խմելուց յետոյ։ Գնանք...

Եւ իր թեւը տուեց բժշկին։

—Եւ վերջապէս ես քեզ հետ խօսել եմ ուզում։ ես քեզ յարգում եմ, սիրում։ Չասես թէ հարբած է... ես հարբած չեմ...»

Նա, ճիշտ որ, բոլորովին հարբած չէր, բայց գտըն-ւում էր այն դրութեան մէջ, երբ խմած մարդը մի առանձին սիրով դուրս է թափում իր սրտինը, իր գաղտ-նկաները, իր ցանկութիւնները։

Յովասափեանը իր պատրաստականութիւնը յայտնեց։ Նա միշտ այդպէս էր Չարվագարեանի հետ։ Եւ նրանք քայլում էին դանդաղ և խօսում։ Չարվագարեանը յաճախ կանգնեցնում էր նրան, մանաւանդ երբ քամին միւմի սաստկանում էր։ Այդ միջոցին նա վերցնում էր դլխարկը և մեծ հաճութեամբ թոյլ էր տալիս, որ սա-ռըն օդի հոսանքը ծեծէ իր տաքացած ճակատն ու դէմքը։

—Ես, Յովասափեան, քեզ շատ եմ նախանձում։ Դիտես դու այս բանը։

—Վաղուց դիտեմ։

—Եւ ինչու, գիտես Ո՞րտեղից եկար դու, եղբայր։ Ինքդ ես պատմում, թէ աղքատ գիւղացի էիր։ Հիմա... բոլոր տիկինների և օրիորդների խորհրդապահն ես։ Դու շօշափում ես նրանց մարմինները... Ահա ինչու եմ նախանձում։»

—Որովհետեւ փչացած մարդ ես...»

—Ե՞ս... Ընդունեցի։ Իսկ դու։

Նա քաշեց բժշկին փողոցային լապտերի առաջ և նայեց նրա աչքերին։

—Ես գիտութեան մարդ եմ և գիտութեանն եմ ծառայում։»

—Հա, այդ ճիշտ է, սատանան տանէ... Բայց գի-տութիւնը ինձ համար ոչինչ է։ Գրօշ, մի գրօշ չեմ տայ...»

—Եթէ ծախու լինէր, չէիր տայ...»

—Սպասիր։ Թէև ասում եմ, գիտութիւնը ոչինչ բան է և միայն վարժապետներին ու տիրացուներին

կարող է ապշեցնել, բայց ես կը կամենայի քո տեղը լինել։ Դու գերել ես ամենքին. գեղեցիկ սեռը քո սարուկն է... Սա այնքան նախանձելի է, որ կը կամենայի հէնց նոյն իսկ դիտութեան մարդ համարուել և քո տեղը բռնել։

—Ինչո՞ւ, քո տեղն էլ այնքան վատ չէ։ Դու հարուստ ես...

—Գիտեմ, այս, ինչ եմ ես... Հարուստ եմ, ճիշտ է. և բախտաւոր հարուստ։ Ամենքի նախանձն եմ դըրդըռում։ Իմ սուրը աջ ու ձախ է կտրում։ Հէնց այս երեկոյ մի քիչ խեղդեցի նուրեանին։ Նա առիւծ է, բայց էլի խեղդեցի...

—Վագրը երբեմն խեղդում է առիւծին։

—Ուրեմն ես էլ վագր եմ. աւելի լաւ, վագրը լաւ է յարձակում, թէև առիւծից ցած են դնում նրան։ Յիմար բան... Միայն մի բան ունի ձեր դիտութիւնը, որ ես ընդունում եմ ամբողջ սրտով. ընդունում եմ իբրեւ արդար ու ճշմարիտ իմաստութիւնն։ Գիտես որն է դա։ Այն, որ երբ կինը տեսնում է իր ամուսնու անհաւատարմութիւնը, նա ինքն էլ իրաւունք ունի անհաւատարիմ լինելու։ Այսպէս է ասում դիտութիւնը, չէ։

—Գիտութիւնը... բայց դա մի և նոյնն է... Ասում է։ Յետո՞յ։

—Կը կամենայի, որ տիկին Աննան, նուրեանի կինը, շատ լաւ հասկանար այս ճշմարտութիւնը։ Հարկաւոր էր դա, շատ հարկաւոր։

—Քեզ է հարկաւոր...

—Ես ուրիշների մասին չեմ մտածում։ 0՝, այն ժամանակ այդ կնոջ հեշտ կը լինէր մօտենալ։ Ես ապացոյցների մի ամբողջ կոյտ ունեմ, որ սուտ է, Սամուէլ նուրեանը սուրբ չէ, ճգնաւոր չէ, ինչպէս ցոյց է տալիս իրան։ Նրա երկու սիրուհիներին ինքս անձամբ ճանաչում եմ։

—Այստեղ։

—Ո՞չ, նա այդքան յիմար չէ։ Հասցէները ինձ մօտ  
են։ Նոյն իսկ մէկի լուսանկարն էլ ձեռքս եմ գցել։ Այս  
մասին յետոյց Այժմ ասան. ինչպէս է։

—Սովորական բան...

—Զէ, դու մի բան կարող ես ասել։

—Ես բժիշկ եմ. ես բժշկում եմ միայն. իմ գործը  
չէ մարդկանց ընտանեկան հարցերի մէջ խառնուել։

—Բայց ինչո՞ւ դատողութիւններ ես տալիս ամեն  
ինչի մասին։

—Որովհետեւ ես չեմ կարող փայտ լինել. խօսում  
են, ես էլ խօսում եմ...։

—Եւ ինչ որ լինի, քեզ համար մի և նոյն է։

—Մի և նոյն։ Ես պարտաւոր եմ բժշկել արդարին  
և մեղաւորին։

—Ուրեմն և արդար ու մեղաւոր չը կայ։

—Կայ, բայց ոչ ինձ համար։

—Տեսնում ես... Քո գիտութիւնը այդպէս է...։  
Բայց մի վախիր, ես առանց քեզ էլ կարող եմ հասցնել  
այդ բանը իմ ուղած ականջին...։

—Այն, այս երեկոյ դու քեզ նրա տրամադրութեան  
տակ դրիր։

—Լաւ ես հասկացել։ Եւ դու, երեխ, այդ ըոպէին  
կարծում էիր, թէ Թէոդորոս Զարվադարեանը ինչո՞ր բօ-  
շաներին բարեգործութիւն անելու մասին էր մտածում...։

—Ո՞րտեղից վերցրիր այդ։ Ես մինչև անգամ չը  
զարմացայ, երբ դու սկսեցիր փառաբանել Նուրեաննե-  
րի ընտանեկան սրբութիւնը...։

Զարվադարեանը բարձրաձայն ծիծաղեց։

—Ճիշտ որ ես այդ միջոցին բաւական զուարձալի  
էի։ Բայց ինչ անեմ, Յովասափեան։ Որ կողմից մօտե-  
նում ես, տեսնում ես դուռը փակ է։ Իսկ կտորը որ-  
քան համեղ։ Յանկարծ տեսնում եմ, գիւղական էլ վար-  
ժապետը գտել է ինչո՞ր գաղափարի դուռ, ներս է  
մտել այդ դռնով, ուտում է, խմում է։ Ես էլ նրա ե-  
տեից... .Երբ բաց է միայն գաղափարի դուռը, մենք,

մեղաւորներս, կը մտնենք այն տեղով, ինչ արած։ Գիտե՞ս, այս երեկոյ մանաւանդ ես շատ մօտ էի նրան։ Ի՞նչ թափանցիկ, անարատ կաշի ունի նա... Ոյժ էր հարկաւոր տղամարդութիւնը սանձահարելու համար։ Ես ունեցայ այդ ոյժը։ Բայց մինչեւ երբ։ Բօշաները, գաղափար գարձած բօշաները, երկու մարդու լաւութիւն պիտի անեն։ Գիւղի վարժապետը լիկեօրներ էր խմում։ Ես էլ նրա հերն անիծեցի. բայց ես էլ պիտի համեմ համեղ կտորին... Տեսնենք քո բօշաները...

—Բաւական է, եղբայր, նրանք բօշաներ չեն, հայեր են...

—Դա մի և նոյն է... ինձ համար Գնանք, Յովասափեան, մադամ Կլոտիլդայի մօտ...

—Ուշ է, չարժէ. նա քնած կը լինի։

—Ոչինչ... Ոսկին միշտ նրան վեր է կացնում։ Նորութիւններ կան մեր մադամի մօտ, նորութիւններ...

Նորութիւնները շուտ յաղթահարեցին Յովասափեանի թոյլ գիմադրութիւնը և նա էլ իր ընկերի հետ ծռուեց դէպի աջ։

—Հա կաշին էի ասում... Հարցը աւելի ազնւութեան, կուսականութեան մէջ է։ Աւելի գեղեցիկները, աւելի քնքոյները կան... Ես մինչեւ այժմ նրանց առել եմ փողով։ Բայց դա ձանձրալի է, որքան էլ առատ լինի։ Հեշտութիւնը, որով նրանք ձեռք են բերւում, ոչնչացնում է ամեն մի հետաքրքրութիւն։ Եւ իրաւ, այսքան էլ հեշտութիւն... Մադամը իր դռներից մի բանալի է տուել ինձ, որ նոյն իսկ զանգ քաշելու նեղութիւնն էլ չը կրեմ։ Ահա թէ ինչու ես այժմ աւելի դժուար որսերի ետեւից ման գալ եմ սիրում։ Հարկաւոր է անարատը, այնպիսին, որ ծախուչէ։ Եւ հօ տեսնո՞ւմ ես, թէ նրգան բարձրից եմ բռնել։ Վաղուց եմ հաւանել Աննա Եգորօվնային...

Նա բաց արեց մի դուռ և երկուսը անյայտացան նրա ետևում...  
I, է 0

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԽՍ-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

Դ.

Հինգերորդ դարը մեր հին պատմութեան հետաքրքրական ցըամներից մէկն է. այս շրջանում տեղի է ունենում մի երկարաժեք ընդհարում երկու զօրաւոր տարրերի—հոգեկան և մարմնաւոր ոյժերի մէջ. Մարմնաւոր ոյժը աշխատում է ճնշել, սպանել հոգին—մարդկային խիզճն ու համոզունքը. իսկ հոգին, որչափ էլ թոյլ և անօդնական, դարձեալ չէ մեռնում. Նա պաշտպանում է, յաղթում, յաղթւում, բայց չէ ընկճւում, մինչև որ մարմնաւոր ոյժը յոդնում է, համոզւում է որ հոգին անմեռ է, և թողնում է նրան ազատ: Հոգեկան ոյժի, խոճի յաղթանակ՝ կոպիտ, բռնի, նիւթական ոյժի դէմ—այս մխիթարական երեսյթըն է մեզ պատկերացնում մեր պատմութեան հինգերորդ դարը:

Մարմնաւոր ոյժը՝ Պարսկաստանն էր, Սասանեան հարստութեան ժամանակ: Նա այնքան հզօրացած էր հինգերորդ դարում, որ համարձակ կարող էր պարծենալ, թէ իրան հաւասարը չը կայ աշխարհում ոչ մի տեղ. Բիւզանդական կայսրութիւնը, ներքին կազմակերպութեան մէջ թուլացած, երկարակութիւնների և կրօնական վէճերի ասպարէզ դարձած, մի քանի անգամ պարտութիւն էր կրել պարսիկներից և զգուշանում էր նորանոր ընդհանրումներից, գուշակելով որ զրանց հետեանքը կարող են լինել նորանոր պարտութիւններ: Պարսկաստանի հիւսիսին, ճիշտ է, սպառնում էին Հեփթաղները, բայց սրանք աւելի առաջատակութիւններով էին նեղում Պարսկաստանը, քան իբրև կազմակերպուած աէլութիւն՝ քաղաքական ախոյեան հանգիստանում: Ուրիշ հակառակորդներ չունէր Պարսկաստանը այս ժամանակ:

Եւ նա, գիտակցելով իր անմուաձելի զօրութիւնը, մտածեց կուլ տալ պարսիկների հետ ձուկել հպատակ փոքր ազգութիւնները, որոնց մէջ ամենից նշանաւոր էին Հայերը: Հայա-

տան այս ժամանակ ունէր դեռ սեփական թագաւորներ, բայց նրանք ներքուստ բոլորովին թուլացած, հեղինակութիւնից զըրկուած էին, իսկ արտաքուստ՝ հպատակ էին Պարսկաստանի արքայից արքաներին, իբրև նրանց վասսալներ: Երեանի խաները 19-րդ դարի սկզբում աւելի իրաւունքներ էին վայելում իրանց իշխանութեան յանձնուած նահանգում, քան Հայոց Արշակունի թագաւորները չորրորդ դարի վերջերին և հինգերորդի սկիզբներին: Նախարարական բազմաթիւ տոհմերը, որոնք ներքին գլխաւոր պատճառն էին Սրչակունի թագաւորութեան թուլանալուն՝ աջակցեցին Պարսկաստանին՝ բոլորովին վերացնելու իրանց ազգային անկախութեան վերջին նշոյն էլ:

Հայ նախարարները միանգամայն զուրկ էին ազգային ինքնանանաչութիւնից. դրանցից ամեն մէկը իրան համարում էր առանձին ցեղ. նրանց մէջ չը կար ներքին, բարոյական կապ, իբրև նոյն հայրենիքի որդոց, իբրև նոյն ազգի զաւակների մէջ, այլ շատ յաճախ ցեղական անհաշտ թշնամութեամբ նրանք զինուում էին միմևանց դէմ և իրար ուժասպառ անում: Բագրատունիք, Սիւնիք, Ռշտունիք և այլն—առանձին անկախ աշխարհներ էին կազմում և այնպէս էլ գիտէին, որ իրանք Բագրատունի, Սիւնի, Ռշտունի են, բայց ոչ թէ հայ. ինչպէս այժմեան քուրդ աշխարհները, որոնք իրանց կոչում են աշխարհի անունով և ոչ թէ ընդհանուր ազգային անունով: Նրանց ցեղապետներն էլ, այսինքն նախարարները, ոչնչով չէին տարբերուում այժմեան քուրդ բէղերից—նոյն սովորութիւնները, նոյն բայց կայութիւնը քաղաքական և ազգային ճանաչողութեան: Արշակունի թագաւորները իսկապէս առաջին նախարարական տունն էին կաղմում միւս նախարարների մէջ և նրանցից գերիշխան՝ էին ճանաչւում: Նրանք ունենում էին անձնական քաջութիւն և քաղաքական տակու՝ կարողանում էին հաշտ և հպատակ պահել նախարարական տոհմերը. իսկ երբ նրանք թոյլ անձնաւուրութիւններ էին լինում, այն ժամանակ կազմը բոլորովին խըզւում էր, և իւրաքանչյուր նախարարական տոհմ հպատակուում էր միայն և միայն իր սեփական դիտուններին: Մի շաբք թոյլ և վատարարոյ թագաւորների օրերում՝ թագաւորի հեղինակութիւնը բոլորովին ընկաւ, և նրա լինել կամ չը լինելը արդէն կախումն ունէր նախարարների քմահաճոյքից: Եւ ահա նախարարները հինգերորդ դարի երեսնական թուականների սկզբին որոշեցին դիմել Պարսից Վուամ (Ե) թագաւորին և խնդրել, որ իրանց ընդմիշտ ազատէ Արշակունի թագաւորներից և Հայաստանը կառավարէ պարսիկ մարզպաններով (խաներով): Զուր էր աշխատում Սահակ կաթողիկոսը նրանց հասկացնուլ, թէ ինչ ազգա-

վնաս քայլ է, որ նրանք մտադիր են անել. սեփական թագաւորը որչափ էլ վատ լինի՝ այնու ամենայնիւ գերադասելի է օտարից. «Ե՞նչպէս փոխեմ իմ հիւանդ ոչխարը առողջ գայլի հետ, որի հէնց առողջութիւնը պատուհաս կը լինի մեզ համար», ասում էր նա. «Ե՞նչպէս անօրէնների ձեռքը մատնեմ իմ բնիկ թագաւորին»: Բայց իգներ. նախարարների մէջ պակաս էր մի կարևոր բան—այդ «իմը», «մերը», «ազգայինը» ըմբռնելը. Արշակունի հայ թէ Սասանեան պարսիկ կը լինի նրանց թագաւորը—այդ միևնոյնն էր նրանց համար. Հեռատես և ազգային ինքնաճանաչութիւն ունեցող կաթողիկոսի յորդորները անհետեանք մնացին, խրատները՝ անհասկանալի. Նախարարները իրանց մտադրութիւնը իրագործեցին: Վոամը Պարսկաստան կանչեց վերջին Արշակունի հայ թագաւորին, Արտաշէսին, զրկեց թագաւորութիւնից ու պահեց Պարսկաստանում, և մի պարսիկ խան ուղարկեց Հայաստանի կառավարից: Սահակ կաթողիկոսն էլ մեղադրուեց՝ իբրև Պարսկաստանի շահերին վնասակար և յոնասէր կուսակցութեան պարագլուխ, ուստի նոյնպէս զրկուեց կաթողիկոսութիւնից: Այս անցքը կատարուեց մօտաւորապէս 430 թուականին:

Սյսպիսով Պարսկաստանի ցանկութիւնը մասամբ հեշտութեամբ իրագործուեց, նոյն-իսկ հայ իշխանների ինդրանօք: Մնում էր մի քայլ էլ անել—Հայաստանից քրիստոնէական կրօնը վերացնել ու հայերին զրադաշտական կրօնին վերադարձնել. սրանով հայերը միանգամայն կը բաժանուէին քրիստոնեայ յոյներից և կը ձուլուէին պարսիկների հետ, որոնց կուլտուրական աղդեցութիւնը արդէն խիստ մեծ էր նրանց վրայ: Այս ձախող մտադրութիւնը որոշեց զլուխ բերել Յաղկերտ Բ-ը: Սա մի խրոխտ, հզօր և կրօնամոլ անձն էր. նա յաղթել, ահարեկել էր յոյներին այն աստիճան, որ Փոքր թէոդոս կայսը յանձն առաւ կտտարել նրա բոլոր պահանջները, նոյն-իսկ համաձայնեց նրա ձեռքը մատնել այն պարսիկներին, որոնք քրիստոնէութեան պատճառով փախել էին նրա վրէմինդրութիւնից և ապաւինել Բիւզանդիային: Նա մեծ յաղթութիւն տարաւ և Հեփթաղների դէմ, աւեր ու կոտորած սփուելով նրանց երկրում: Նա գոռողացաւ իր աջողութիւններով. վստահ էր, որ ոչ մի բան անկարելի չէ իր կամքի համար. կ'ասէ և կը կատարուի—այսպէս էր ինքը համոզուած. նոյն հաւատը արծարծում էին նրա մէջ և մոգերն ու իշխանները: Եւ ահա նա կամեցաւ իր հպատակ բոլոր ազգութիւնները մոգութեան (զրադաշտական կրօնին) դարձնել, արեգակի ու կրակի երկրպագուներ: Այս ցանկութիւնը ոչ միայն քաղաքական նպատակ ունէր—մանր ազգութիւնները ձուլել ու

պարսկացնելու և յոյներից հեռացնելու, այլ և բղխում էր նրա կրօնական մոլեուանդութիւնից, որի մէջ նրան աւելի ամրացնում էին պարսից հոգևորականները, մողերը: Նա խեղճ ասորիներին էլ հալածանքի ենթարկեց յոյն եկեղեցականների հետ կրօնական թղթակցութիւններ ունենալուն պատճառով. նու հրէաներին էլ նեղեց հաւատի պատճառով և արգելեց շաբաթօրը սուրբ պահել: Գլխաւոր ուշադրութիւնը նա դարձրեց հայերի վրայ, որովհետև նրանք ամենից ազդու և կարեւոր ազգութիւն էին կազմում պարսից հպատակ բոլոր ազգութիւնների մէջ, և երբ նրանք ենթարկուէին թագաւորի հրամանին՝ աւելի փոքր ազգութիւնները, ինչպէս վրացիք, աղուանները, ասորիք և շատ ուրիշները, հեշտութեամբ կը ձուլուէին, ոմանք երկիւդից, ումանք՝ հետեւելով հայերի օրինակին:

Եւ ահա օգտուելով այն հանգամանքից, որ հայ նախարարներն իրանց զինուորական ոյժերով Պարսկաստանումն էին, արքայի թշնամիների դէմ կոռուելու համար կանչուած՝ մի օր Յաղկերտը բացարձակ յայտնեց նրանց իր կամքը. «Եթէ վաղը, արեգակը ծագելու ժամանակ, ինձ հետ միասին նրան չերկըրպագէք և աստուած չը դաւանէք՝ բոլորիդ էլ բանտի ու աքսորի մէջ կը մաշեմ ու ձեր աշխարհը զօրք ուղարկելով քարուքանդ կ'անեմ»: Իշխանները չը զիջեցին ու բանտարկուեցին: Բանտում նրանք աւելի մեղմացան. նրանք որոշեցին, գոնէ երեսանց, մոգութիւնը յանձն առնել և աղատութիւն գտնելով հայրենիք վերադառնալ, իրանց տուն ու տեղը պաշտպանել: Յաղկերտը ուրախացած նրանց շատ պատիւներ տուեց, կադմակերպեց բանակներ՝ զօրքերի և մողերի, որոնց նախարարների հետ զբեց և ուղարկեց Հայաստան, որպէսզի այնտեղ բռնի մտցնեն արեգակի ու կրակի պաշտամունքը: Դեռ ճանապարհին մողերը վիճակ էին ձգում, բաժան-բաժան էին անում Հայաստանը, թէ որ մասը ովք պէտք է ստանայ, որքան ժամանակում նոր՝ լոյս հաւատը պէտք է տարածուի ու հաստատուի այնտեղ: Մանրամասն ծրագիրներ էին կազմում նոր հաւատացեալների նիստ ու կայի մէջ մոցնուելիք փոփոխութիւնների մասին՝ ինչպէս պահանջում էր նոր հաւատը:

Այսպէս մի հզօր թաղաւորի անդառնալի հրամանը, բազմաթիւ զօրքերը, որոնց հետ միացել էին Հայաստանի ուրացած առաջաւոր մարդիկը, մոլեուանդ ու շահասէր մողերի խումբը, հարստահարութիւնն ու մահը՝ միացան թով, անկազմակերպ, անառաջնորդ մի աշխարհի դէմ՝ նրան հաւատափոխ անելու համար:

Բայց կար մի զօրութիւն, որի նշանակութիւնը, նոյն-իսկ

գոյութիւնը ի նկատ չէր առել թշնամին, —այսքան աննշմարելի չնչին բան էր այս: Եւ սակայն այդ աննշմարելի փոքրիկ զօրութիւնը միկրօբային յատկութեամբ, ածեց, բաղմացաւ, լցրեց ամբողջ երկիրը, մտաւ վանքերն ու խուցերը, ապարանքներն ու խրճիթները, պատուասաթի հիւթի նման տոպորեց ժողովրդի հոգին, նրան անզգայ դարձրեց սպառնալիքների ու հալածանքների, մինչև անզամ մահի դէմ: Այդ հրաշալի զօրութիւնը, հոգիներ պատուասառող այդ միկրօբը, ցրուած, անկաղմակերպ ժողովուրդը միացնող, կազմակերպաղ այդ ոյժը հայերէն այբուրենն էր: Հայոց զիրը կուտելու գուրս եկաւ Սասանեան հզօր արքայի, Յաղկերտ Բ-ի բուռն հրամանի ու նրա զօրքերի դէմ:

Դեռ հինգերորդ դարի սկզբներին, մի տարօնեցի հայ մարդ, թողնելով աշխարհական սպաշտօններն ու զբաղմունքները՝ նույիսել էր իրան հոգեսոր կեանքի. դասնալսվ վարդապետ՝ թափառում էր նա գաւառից գաւառ, Հայաստանի հոսու ու մութ անկիւններում քարոզում էր Աստծու խօսքը: Հայոց եկեղեցիներում մինչև այդ ժամանակ ասորերէն լեզուով էր կատարւում ժամերգութիւնը, և ժողովուրդը, բացի անհասկանալի քրթմնջացից ու մասնուցից՝ ոչինչ չէր լսում իր հոգեսոր հովիւների բերանից ու արտօւմ, անմիտիթար դուրս էր գալիս եկեղեցուց, չը հասկանալով, թէ ինչու ինքը զրկուեց իր նախկին, պայծառ և ուրախ հեթանոսական կրօնից, ինչու իր շինքին փաթաթուեց անհասկանալի ասորերէն քրթմնջիւնը, ինչով նորամոյծ և օտար քրիստոնէական կրօնը լաւ է իր նախկին, պազային կրօնից: Բայց տարօնեցի քարոզիչը մի զարմանալի նորութիւն էր մայնում այն աւելիքում՝ ուր շընում էր քարոզելու. նա հայերէն լեզուով խօսում էր եկեղեցում ժողովրդի հետ. ժամերգութեան արգօթքները, ընթերցուածքները թարգմանում, բացատրում էր ժողովրդին մատչելի հայերէն լեզուով, և նկատում էր, ինչպէս ժողովրդը, ուրախութեան արտասուրով աչքերը լցուած, մվակիթարուած, գոհ արտավ մեկնում էր եկեղեցուց, ինչպէս զիմում էր իրան ու խնդրում, որ միշտ իր հետ մնայ, շարունակ բայցարէ, սովորեյնէ Աստծու խօսքը: Բայց ինչպէս անէր քարոզիչը, ինքը մի մարդ էր, իսկ կենդանի խօսքի ծարաւ էր ամրող Հայաստանը: Եւ ահա, Գովդան լեռների ու ձորերի մէջ թափառելիս տարօնեցի քարոզիչը երինեց իր հանձարեղ միսքը—ստեղծել հայոց լեզուի այբուբեն, թարգմանել Աստծուածունչի ու եկեղեցական գրքերը և բոլոր հայոց եկեղեցիներում մտցնել ժամերգութիւն ժողովրդին հասկանալի, մայրենի հայերէն լեզուով:

Այնուհետև քունն ու դադարը կտրւում է նրանից, թողնում է նա պաղառող ժողովուրդը և դիմում է Վաղարշապատ, Հայոց կաթողիկոսի, Սահակի մօտ. յայտնում է նրան իր խորհուրդը: Այս մեծ միտքը օգի մէջ պատւում էր Հայաստանում, մի ինչոր բանի պէտքը զգացւում էր, բայց դեռ ոչ ոք այնպէս պարզ, որոշ ձևակերպութեամբ չէր արտայայտել այդ կարիքը՝ ինչպէս տարօնեցի քարոզիչը կաթողիկոսը նրան ընդունում է գրկաբաց, յուսադրում, օգնութիւն խոստանում. Վուաշապուհ թագաւորը աջակցում է նրան: Գումարւում է ազգային ընդհանուր ժողով և վճռում է ազգային այբուբեն, ազգային լեզուով ժամերգութիւն ունենալ:

Այնուհետև քարոզիչը փոխարկւում է լեզուագէտրանասէրի. մի քանի տարի ճանապարհորդում է նա Ասորիքում, գիտնականների հետ խորհրդակցում, աշխատում, փորձել անում, ազօթում, գիշեր ու ցերեկ մտածում՝ իր երկնած միտքը մարմնացնելու մասին: Տոկուն աշխատութիւնը, մաքի լարումը, ոգևորութիւնը յաղթում են դժուարութիւններին. նա վերջապէս հնարում է ազգային այբուբենը, և 404 թուին առաջին անգամ մագաղաթի վրայ գծագրում են—«Ճանաչել զիմաստութիւն և զիսրատ, իմանալ զբանս հանճարոյ»:—Սա առաջին նախադասութիւնն է՝ հայերէն լեզուով, նորաստեղծ հայերէն տառերով գրուած: Գիւտի յաջողութեամբ անշափ ուրախացած, ապագայ ընդարձակ գործունէութեան հեռապատկերով թեատրուած՝ քարոզիչ-լեզուագէտը թուզում է դէպի Հայաստան, նման Մովսէս մարդարէին, որ տասն պատուիրանների տախտակները ձեռքին Մինայ լեռնից իջնում էր ժողովրդի մօտ: Վուաշապուհ թագաւորը, Սահակ կաթողիկոսը, հոգեորականներ, իշխաններ, անթիւ ժողովուրդ գիմաւորում են նոր Մովսէսին ցնծութեան աղաղակներով և երախտագիտութեամբ ընդունում նրա ստեղծած այբուբենը:

Այս հանճարեղ՝ քարոզիչ-լեզուագէտը ամենից նշանաւոր անձնաւորութիւնն է հայոց մի քանի հազար տարուայ պատմութեան մէջ, ազդի ամենամեծ բարերարն է, որի ստեղծած այբուբենը տուեց մեզ ազգային եկեղեցի, պահպանեց հայ լեզուն և տուեց ազգային հին և նոր մատենագրութիւն, այսինքն բոլորը՝ ինչ որ այժմ մենք ունենք: Այս անզուգական բարերարը—լաւ յիշենք նրա անունը—կոչւում էր Մեսրոպ կամ Մաշտոց: Նա ծնուել է Տարօնի Հայեկ գիւղում և թաղուել Օշտկան կիւղում, Վաղարշապատից ոչ հեռու: Նրա գերեզմանի վրայ եկեղեցի է շինուած և նրա յիշատակը ամեն տարի տօնում է Հայոց եկեղեցին սրբերի կարգում:

Այսուհետև մի նոր, չը տեսնուած գործունէութիւն է սկսուամ Հայաստանում. մէկը միւսի յետից բացւում են հարիւրաւոր դպրոցներ ընդարձակ երկրի զանազան մասերում. ամեն կողմից հաւաքւում են ընտիր, ընդունակ երեխաներ՝ թագաւորական ծախսով այդ դպրոցներում սովորելու. հայերէն թարգմանուում ու բազմաթիւ օրինակներով տարածւում է այդ դպրոցներում Սաղմուը—ընթերցանութեան առաջին դասագիրքը, և հետզհետէ Ժամագիրքը, Աստուածաշունչը: Խոքը Ս. Մեսրոպը դառնում է այսուհետև զլիսաւոր վերահսկող ազգային լուսաւորութեան գործին. անդադար շրջում է զանազան գաւառներ, հսկում դպրոցների վրայ, նոր ուսման դժուարութիւնները հարթում, ուսուցիչներ նշանակում, նոր դպրոցներ բաց անում, անձամբ սովորեցնում: Խոկ թարգմանական գործունէութիւնը, որ նստակեաց կեանք էր պահանջում՝ վիճակւում է զլիսաւորապէս Սահակ կաթողիկոսին, որին օգնում են թէ ինչքը այբուբենի հնարողը և թէ նորաբաց հայ դպրոցներից աւարտած ընդունակ սաները, որոնցից շատերը, իրքն ուսանող, ուզարկուել էին արտասահմանի մտաւոր կենարուները և կատարելագործուել գիտութիւնների և օտար լեզուների մէջ:

Անընդհատ երևուն և հինգ տարի տեսեց այս տենդային մտաւոր գործունէութիւնը, Ս. Սահակի և Մեսրոպի զեկավարութեամբ: Սյս միջոցում մի քանի սերունդներ հասան, աւարտելով հայոց դպրոցները, և իրքն քահանայ, ուսուցիչ, թարդմանիչ, գիտուն հեղինակ սփռուեցին մեր երկրում: Հայերէն թարգմանուեցին բոլոր եկեղեցական գրքերը, եկեղեցիներում հաշեց մայրենի լեզուով ժամերգութիւն և աղօթք. Եկեղեցին ազգայնացաւ, քրիստոնէական կրօնի լոյսը թափանցեց ժողովը զի հոգու մէջ, և ազգային ծագման ու ինքնաճանաշութեան գիտակցութեան փոխարէն, որ բացակայում էր՝ տարածուեց գիտակցութիւն՝ կրօնի միութեան: Երբ երկու մնձ լուսաւորիչները, Սահակ ու Մեսրոպ, վախճանեցան (439 թուին), գործը կանգ չառաւ: Նրանք հասցըկ էին արժանաւոր աշակերտներ ու գործիչներ, որոնք նոյն ոգով և եռանդով առաջ տարան ժողովրդի լուսաւորութեան գործը, հիմնեցին ազգային մատենագրութիւն, որի մէջ նուիրագործում էր Հայոց եկեղեցին՝ Գրիգոր Լուսաւորչի նահատակութեամբ, Հոփիսիմեան կոյսերի արիւնով, նուիրագործում էր ազգը՝ անցեալ թագաւորմների ու հերոսների տիրապէս պատմութիւններով: Մեսրոպի ճետերը, իրքն կաթողիկոս, եպիսկոպոս, քահանայ, մատենագիր՝ զլիսաւոր գործիչներն էին Հայաստանում, հինգերորդ դարի քառասնական և յիմնական թուականներին, և ահազին ազդեցութիւն

էին ձեռք բերել ժողովրդի մաքի վրայ։ Սրանց մէջ առանձնաւագէս աչքի ևն ընկնում Յովսէփ կաթողիկոսը, Ղեռնդ երէցը, Եղնիկ և Եղիշէ մատենազիր-եպիսկոպոսները։

Եւ ահա երբ պարսկական բանակը, ուրացած հայ նախարարներով ու մոգերի գնդով, Հայաստան էր շատապում՝ հայոց զրի այս պաշկերաններն ու ուստիցի մերը ժողով գումարեցին և միաբերան վճռեցին՝ դիմադրել Յազկերտի կամքին և արիւնի գնով պաշտպանել քրիստոնէութիւնը։ Անհաւասար, յուսահատ էր կոփեր, և նրանք գիտեցին չը տեսմուած, յուսահատ միջոցների։ «Եղբայրը թնդ ձեռք բարձրացնէ հարազատ եղբօր վրայ՝ որ ուրացնէ և Աստծու պատուիրանը. հայրը թնդ չը ինայէ որդուն, թնդ որդին չակնածէ հօր պատուից. թնդ կինը կոսուի իր ամուսնու դէմ, ծաւան զէնք բարձրացնէ տիրոջ դէմ. բոլորի վրայ տիրողը պէտք է լինի աստուածային օրէնքը»։ — այս բանաձեք, որ սանակոխ էր անում բոլոր մարդկացին օրէնքները և կատարեալ ասպասմբութիւն էր տիրող կարողերի դէմ՝ վճռուեց և ընդունեց այդ ժողովաւմ իրեր առաջին պայման։ Այսուհեան ժողովի մասդամները ցրուեցան երկրի բոլոր կողմերը և անձամբ ու ստորագրեալ հոգենորականութեան միջոցով քարողեցին կրօնական պատերազմ, ալէկոծեցին ժողովրդի սիրտը և ֆանատիկացրած մի մեծ բազմութիւն կազմակերպեցին, որի մէջ կային նոյն-իսկ կանացք։

Երբ բանակը Հայաստան հասաւ՝ այս նոյն հոգենորական-ները իրանց ազգեցութիւնը գործ դրին և ուրացած նախարարների վրայ։ Սրանք գրեթէ բոլորը արդէն հաշտուել էին կատարուած իրողութեան հետ, և արեւակին ու կրակին երկրապագելը այնքան տարօրինակ չէր թւում նրանց. ոմանք էլ քաղաքական անխոհեմութիւն էին համարում յայտնի ապասամբուել պարսիկների դէմ, զգալով նրանց անընկանելի զօրութիւնը և իրանց ակարութիւնը, ուստի լաւ էին համարում այն «առերես» ուրացութիւնը մի առժամանակ էլ շարունակել, մինչև հանդամնաքնները փոխուեն։ Այս վերջին հայեացքին կողմնակից ու քարողով էր զլաւառորապէս Սիւնեաց նախարար Վասակը, որ թէ իրեր մարդպան, թէ իրեր Սիւնիքի նախարար և թէ անձնական յատկութիւններով—իւելքով ու քաջութեամբ, մեծ աղեցութիւն ունէր միւս նախարարների վրայ։ Իսկ Մամիկոնեանների նախարար Վարդանը, որ չէր հաշտում այս երկու խմբերից և ոչ մէկի հետ՝ լաւ համարեց զլուխն առնել քաշուել Յունաստան և այնտեղ համարձակ պաշտել իր քրիստոնէութիւնը։ Եսանդուն հոգենորականութիւնը սակայն միջամտեց այս լքման բռպէին։ Թուլասիրտներին խրախուսեց, ժողովրդի բոր-

բրկուած պատրաստականութիւնը նրանց ցոյց տուեց, Բիւզանցիօնի օդնութեամբ զօրացրեց. Դեսնղին պատգամաւոր ուղարկելով՝ ճանապարհից յետ դարձրեց Վարդամնին, որպէս զի իբրև սպարապետ կազմակերպէ զօրքը և դիմադրութեան պատրաստէ: Այսպիսի անվնինքը և յուսալից գործունէութեամբ այդ մի բռւն հոգիորականները, որոնց սիրան ու հոգին կազմում էր Դեսնղը, կարողացան նախարարներից մօտ կէսը գրաւել իրանց կողմը, այնպէս որ ժողովրդից կազմուած կամաւորների խառնիճաշանձ բազմութիւնը ունեցաւ փորձուած առաջնորդներ, և կրթուած նախարարական զօրքերն էլ միացան նրանց հետ Կազմուեց մի բանակ, բաղկացած մօտ վաթսունիվեց հազար հոգուց— մի շատ մեծ քանակութիւն, Կթէ ի նկատ առնենք, որ նախարարներից հոգին թէ կէսը նրանց հետ էին, իսկ միւս կէսը, Վասակի թեւլադրութեամբ ու առաջնորդութեամբ, իր զօրքերով հաւասար մնաց պարափեներին:

Սւարայրի գաշտում, Հայաստանի սահմանագլխի մօտերը, աեղի ունեցաւ վճռական ճակատամարալ, որին ներկայ էին դարձեալ Դեսնղը, Յովոչի կաթողիկոսը և շատ ուրիշ հոգեսրականներ, որոնք իրանց հոգեշունչ քարոզներով սրտապահում էին ժողովրդական բանակը: Արիւնահել եղաւ կոիւը, որի մէջ ընկան քրիստոնեաց բանակի 22 իշխաններից ինը, որոնց թեւում և ինքը սպարապետ Վարդամը կոտորածը երկու կազմից շարունակուեց մինչև երեկոյ, բայց քրիստոնեանները, առանց առաջնորդի մնալով վերջապէս լքեցին սրտերազմի դաշտը և ցրուեցան, ամրացան անառիկ անդեր, գիմադրութիւնը նոյն եռանդով շարունակելու:

Երկիրը աւելի ևս ալէ կոծուեց, ապօտամբութիւնը, փոխանակ զսպելու, աւելի արծարծուեց. գիւղերից, քաղաքներից ժողովուրդը փախչում էր լսոններն ու անտառները և գունդեր կազմելով՝ յանկարծական յարձակումներ էր գործում պարսից զանազան գնդերի վրայ ու վնասներ տալիս: Սկսուեց մի կատարեալ հրոսակամարտ (պարտիզանական կարի): Յազկերու հասկացաւ, որ հայերը բռնի ոյժով իրանց հաւատը չեն ուրանայ, իսկ կոտորել մի ամբողջ ժողովուրդ— ենթազրելով թէ հնարաւոր լինէր այս—ամենին նրա հաշուին չէր գալիս: Այն դարում, երբ աղքալնակութիւնը շատ սակաւ էր, աշխատող, հարկ վճարող զլուխը թանգ էր գնահատուած: ուստի ձեռնատւ չէր Յազկերախն ծաղկած, մշակուած մի երկրի փոխարէն աւերակ ու ամայի ատրածութեան վրայ ալիքը:

Եւ Յազկերու սախառւեց աեղի տալ— թողութիւն չնորհեց հայ ժողովրդին և կատարեալ ազատութիւն տուեց իրանց հայ-

րենի կրօնը պաշտելու։ Միայն հայ հոգևորականներից 9 անձ քննութեամն ենթարկել հրամայեց, մեղադրելով նրանց երկու ամենամեծ յանցանքների մէջ, այսինքն որ նրանք ատրուշաններ են քանդել և հայոց ապառամբութիւնը կազմակերպողներն են եղել։ Մեղադրուածները, որոնց մէջ էին Դեռնդը, Յովսէփ կաթողիկոսը և ուրիշները, չուրացան իրանց արածները, ընդհակառակը, պարծենում էին նրանցով և զուարթութեամբ ու սրամտութեամբ ծաղրում էին դատաւորներին ու յանդիմանում նրանց կրօնի կեղծիքը։ Նոյնպիսի զուարթութեամբ ընդունեցին գլխատուելու պատիմը, և Դեռնդը, իբրև պատիւ՝ կաթողիկոսին էր առաջարկում, նախ ընդունել նահատակութեան պաակը, ու բովինետե աստիճանուով բարձր էր բոլորից։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ հայոց այբուբենը ծընունդ առաւ կրօնական անհրաժեշտ պիտոյքներից։ Նոյն պիտոյքների պատճառով հայոց անդրանիկ զարոցների աշակերտները հոգեորական դարձան, առաջին ընդհանուր աղքային շարժումը, որ միութեան գիտակցութիւն տարածեց ժողովրդի մէջ՝ կրօնական հողի վրայ ծագեց։ Ուրեմն հինգերորդ դարի կէսերին հիմք զրուեց այն կրօնական գրականութեան և հոգեորական տարրի գերակշռութեան, որ տեսեցին մինչև 19-րդ դարը, մինչև որ նոր ժամանակների հասկացողութիւնները կամաց կամաց արծարծուեցին և մեր մէջ, և աշխարհական մատենագրութիւնն ու ազգային գիտակցութիւնը եկան փոխարինելու նեղակրօնական դարաւոր ճաշակն ու հասկացողութիւնները։

Այս կրօնական պատերազմի պատմութիւնը գրել են երկու հեղինակ հինգերորդ դարում, Եղիշէն և Զաղար Փարզեցին։ Երկուսի ուղղութիւնն էլ նոյնն է, բայց ոգեսորութիւնը տարբեր էղիշէն, անդրանիկ հայ զարոցների առաջին պտուղներից մէկը, կրօնական պատերազմը պատրաստող եպիսկոպոսների խմբին է պատկանում։ Նա մասնակից եղաւ Արտաշատի ժողովին, որտեղ խմբագրուեց հայերի համարձակ և վճռական պատասխանը պարախ առաջարկութեան դէմ, և անունետե միւս նշանաւոր հոգեսորականների հետ եռանդով աշխատում էր կրօնական պատերազմը պատրաստելու։ Ուրեմն նա կուսակցական մարդ էր, կոռուզ կողմերից մէկի գործունեայ անդամը։ Վերը տեսանք, ինչ մոլեռանդութեան էր հասել եպիսկոպոսների ժողովը, որ թոյլ տուեց որսուն զէնք բարձրացնել հօր վրայ և կնոջը՝ կոռւել իր ամուսնու դէմ։ Այս փանատիկոս խմբին էր պատկանում և Եղիշէն, որ մինչև կոփւը՝ ամենայն եռանդով աշխատում էր զրդուել, պատրաստել ժողովուրդը։ իսկ կոռւց յետոյ, երբ քրիստոնեայ բանակի զօրավարն ընկաւ և զունդը

ցրուեց՝ նա իր սրտի բորբոքը թափեց մագաղաթի վրայ։ Բըռ-  
նութիւնը, որքան և ճնշող լինի՝ չի համարուի արդարութիւն,  
և համոզուած հոգին, թէպէտ յաղթուած՝ չի ընկճուի և միշտ  
կը պահէ մի բողոքի հառաջանք, մի խորին ատելութիւն ճնշող  
ոյժի դէմ։ Գեղեցիկ են այն խօսքերը, որ ասում են կապուած  
հայ նախարարները Շապուհին («Արշակ Երկրորդ», Խոր. Գալ-  
ֆայեանի)։

«Ըզ մարմին, միայն զայս մարմին  
Կարես գերել քեզ ի նախատ.  
Սակայն ոգիք մեր երկնային,  
Սիրտ հայկազանց են միշտ ազատ։  
Ազատ են, ազատ մեր լեզուք՝  
Մազթել ըզշանթս արդարութեան  
Ի դլուխ ձեր, ով արիւնարբուք,  
Որ աւերէք ըզ Հայաստան»։

Եւ Եղիշէի ազատ լեզուն շանթ ու թոյն է թափում ամ-  
բողջ պարսկական կողմի վրայ, սկսելով Յազկերթ թագաւորից  
մինչև Վասակ իշխանը, մողերից մինչև ուրացած հայ քահանա-  
ները։ Նա չէ կարող սաւնութեամբ յիշել Յազկերտի, Միհրներ-  
սէհի, Վասակի անունները, նախատական խօսքեր, որ հայհոյ-  
անքի են համում, մեղադրութիւններ, որոնք ճշմարտութեան  
սահմանից դուրս են գալիք՝ սովորական երևոյթներ են նրանց  
վերաբերմամբ։ Յազկերտը Եղիշէի գրչի տակ դառնում է կա-  
տաղի ցուլ, վիրաւորուած արջ, թունաւոր օձ, զայրացած ա-  
ռիւծ, ալէկոծուած ծով, խելազար, մտղով կոյր թագաւոր, սա-  
տանայի թոյնի աման եւ այլն։ Նոյնպիսի քնքոյց մակդիրներ  
կրում են պարսկական կողմի միւս պարագլուխներն էլ։ Բայց  
ամենից քստմելի է Վասակի նկարագիրը, Վասակի, որ բացի  
այդ ատելի պարսկական կուսակցութեան գործունեայ անդամը  
լինելուց՝ նաև ուրացեալ է, մատնիչ է և զէնք է բարձրացրել  
հայրենիքի դէմ։ Եւ Եղիշէն ծայրայեղ թշուառութիւններով լըց-  
նում է նրա կեանքի վերջին շրջանը։ Նրան դատի են ենթար-  
կում Պարսկաստանում, որովհետեւ ապացուցում է, որ նա ար-  
քունական հարկերից գողացել է, ամհնուատես քաղաքականու-  
թեամբ խոստացել է Հայոց աշխարհը մոգութեան դարձնել և  
պատճառ է դարձել աշխարհի աւերուելուն։ իսկ քրիստոնեայ  
նախարարները և մանաւանդ հոգեորականութիւնը ապացուցա-  
նում են, որ նա դաւաճան է եղել պարսից թագաւորի դէմ։  
Այս պատճառով նրան զրկում են պատիւներից և նախարարա-  
կան իշխանութիւնից, ամբոխի ծաղրի ու նախատինքի առար-  
կայ դարձնում ու բանտ ձկում։ Բանտում խեղճութեան մէջ է

նա. Սիւնեաց իշխանը հայի կարօտ է մնում, և մուրացած հաւցով նրան կերակրում են ծառաները. քրիստոնեայ նախարարնեւրը, որ նոյն բանառումն են՝ նրա հնու չեն խօսում, և նա երեկուաց բարեկամների մէջ ինքն իրան զգում է մենակ, ատուած: Նրա տոհմական ստացուածքները, կանանց զարդերը ծախում են, նրա պատերի շիրիմները բայց անում, սրպէսզի մի բան գտնեն, բերեն նրա պարագերը վճարելու: Թշուառութեան ծայրն հասած՝ նա անտանելի ախտերով վարակւում հիւանդանում է. փորք բորբոքւում է, գոզը տրորւում, մարմինը քայքայւում: Աչքերը որդնոսուում են և որդերը քթի ծակերից ներքի թափւում. ականջները խանում են, չրթուանքները ծակսուում: Ճեռների ջերը լուծւում են, անգամալոյծ են դառնում, ոտների կրունիները գէպի յետ ծուում: Մահուան հոտ է փչում նրանից, և ձեռնասուն ծառաները փախչում են նրանից: Միայն իւղուն է մնում առողջ նրա բերանում, բայց նա էլ ասլաշխարութեան խօսք չէ արտասանում: Խեղդամահ է լինում նա, և անտանելի տանջանքներով գժոխք իջնում:

Այսպիսի քստմնելի նկարագիրը զարձեալ բաւական չէ Եղիշէն. նրա տնհուն զարույթը չէ յագենում այսքանով. Վասակի դիակն էլ նրա անյապ վրէժինողրութեան են ենթարկուում.—«Նա շան պէս սատիեց և իշի նման քարշուեց»—այսպէս է վերջացնում Եղիշէն Վասակի թշտառութեան նկարագիրը, երբեմն երևելի Սիւնեաց նախարարի, որի խելքը, քաջութիւնը անուրանալի են և որի հայրենասիրութիւնը գովում է Ս. Մեսրոպի աշակերտ Կորիւնը:

Բոլորովին ուրիշ նկարագիրների ենք պատահում՝ երբ Եղիշէն խօսում է քրիստոնեայ բանակի և նրա պարագլուխների մասին: Այստեղ այլ ևս մարդիկ չեն գործողները, մարդկացին հաշիւներով, երկիւղով, թերութիւններով, այլ գերմարդկացին արարածներ են, անբիծ ամիսն բանով: Երկրաւոր կեանքը արհամարհուած է նրանց աչքում. ազգուկան, ստացուածք, փառք, իշխանութիւն, կեանքի ասլահովովութիւն—ոչինչ բաներ են նըրանց համար: Նրանք ապրում են միայն երկնայինի համար, լըցուած Աստոծու սիրով: Նրանք կռւում են՝ միայն եկեղեցաւ պաշտպանութեան համար: Ժողովուրդը, մի շունչ, մի հողի գարդած՝ դիմում է զէպի մահ՝ ինչպէս ոչխարները դիմում են զէպի աղը. ուկին ընկած է լինում, և ոչ ոք ձեռք չէ տալիս վերցնելու: Զօրավար Վարդանը՝ սուրբ, քաջ, ասաքինի, կորուի, նահատակ, մակղիրներն է կրում, սրան համապատասխան և միւս իշխանները: «Փափկասուն տիկնայք Հայոց աշխարհին», որոնց ամուսինները բանտարկուած էին Պարսկաստանում՝ կա-

տարեալ հրեշտակներ են, մոռացած իրանց նախակին փարթամ կեանքը, թողած իրանց իշխանական ապարանկները՝ բանջաւրեղնով են ապրում, գետնի վրայ, խորհներով քնում. ոչ մի տրոտնջ չէ դուրս գալիս նրանց բերանից, միշտ զուարթ ու հոգով միսիթարուած՝ նրանք անդադար սազմոններ են երգում և Սուրբ Գիրքը կարդում. առանց կերակրի, երգերի քաղցրութեամբ միայն ապրում են՝ ճպուռների նման եւ օդ ծծելով մը-նում են կենդանի:

Այսպիսի անհուն սիրով ու խանդաղատանքով լցուած է Եղիշէն քրիստոնեայ բանակի վերաբերմամբ և անծայր, անհաշտ ատելութեամբ ու զայրոյթով՝ պարսիկների և ուրացած հայերի դէմ: Նա, հետեւելով իր սրտի թելազրութեան, իբրև բորբոքուած ֆանատիկոս կոռուզ՝ ծայրայեղութեան մէջ է ընկնում երկու կողմների նկատմամբ էլ: Նա պատմական նիւթից կազմել է մի բանաստեղծութիւն, գործող անձնաւորութիւնները վերածել է գրական և բացասական տիպերի և նրանց զարդարել է իր գառ երևակայութեան ստեղծագործութեամբ: Այս յատկութեան չնորհիւ Եղիշէն ահազին ժողովրդականութիւն է ձեռք բերել, գարերով եղել է ազգի ամենասիրելի ընթերցանութեան գիրքը, որով բազմաթիւ սերունդներ են ոգեսրուել: Եւ եթէ Վարդանանց պատերազմը, բացի եկեղեցիներում զուտ կրօնական տեսակէտով տօնուելուց, գարձել է նաև ազգային տօն՝ դա Եղիշէի «ոսկեղինիկ» գրուածքի չնորհիւ է:

Եղիշէի բանաստեղծական գրուածքի գունաւորումները պարզւում են մեր առաջ, երբ նրան համեմատում ենք Ղազար Փարավեցու պատմութեան հետ: Ղազարն էլ, անտարակոյս, համակրում է քրիստոնեաներին եւ նրանց սրբացնում ու իդէալացնում է, մանաւանդ որ մօտ քառասուն տարի անցել էր պատերազմից՝ երբ նա գրում էր պատմութիւնը, ուրիշն և աւանդութիւնը նուիրագործել էր հաւատի համար նահատակուածների անունը և եկեղեցին նրանց գասել էր սուրբերի գասը: Բայց չը նայելով սրան՝ Ղազարի մօտ կենդանի մարդիկ են երկու կուսակցութեան գործող անձնաւորութիւնները, իրականին մօտ և բնական: Քրիստոնէութեան պարագլուխներն էլ, իբրև մարդ, ունեն թերութիւններ ու աշխարհական հոգսներ, մոգութեան կողմնակիցներն էլ ունեն արժանաւորութիւններ ու արդահատելի կողմներ: Մեծ է զանազանութիւնը մանաւանդ այս վերջին, պարակական կուսակցութեան, անձերի նկարագրութեան մէջ: Յազկերուը այստեղ հանդիսանում է իբրև իր պետութեան շահերը պաշտպանող, իր գաւանած կրօնին նախանձականդիր, շրջահայեաց, մինչև իսկ արդարագատ թագաւոր,

ոչ թէ մի հրէչ՝ ինչպէս Եղիշէի մօտ։ Իսկ Վասակը, որին նոյնապէս ատում է Ղազարը և կոչում է նենգաւոր՝ նրա պատմութեան մէջ դուրս է գալիս իբրեւ մի ակամայ զոհ հանգամանքների եւ ընթերցողի գութն է շարժում։ Իր նախատուած աղջկան պաշտպանելու համար նա թշնամանում է իր փեսայ Վարազվաղանի հետ։ Սա գնալով Պարսկաստան՝ ուրանում է հաւատը եւ թելազրում է Միհրներսէին, Յաղկերտի մեծ վէզիրին, որ քրիստոնէութիւնը աշխատի վերացնել Հայաստանից։ Այս կերպով, ինչպէս նա համողուած էր, իր ատելի աները կամ հոգով կը կորչի (երբ ընդունէ մոգութիւնը), կամ մարմուկ (եթէ զիմազրէ թագաւորի հրամանին), իսկ ինքը կը ստանայ նրա նախարարական իշխանութիւնը իբրեւ վարձատրութիւն իր տրւած օպտակար խորհրդին, ինչպէս եւ վերջիվերջոյ լինում է։ Ուրեմն Վասակը նախ և առաջ ամրաստանուում և որոգայթի մէջ է ձգւում ներքին թշնամու ձեռքով, Վարազվաղանի դաւաճան քսութեամբ։ Պարկաստանից, ուրանալուց յետոյ, երբ նախարարները վերադառնում են Հայաստան՝ Յաղկերտը իր մօտ պատանդ է պահում Վասակի երկու որդոցը։ Որ և է ապատամբութեան փորձ Վասակի կողմից բաւական էր, որ նրա զոյտ որդիքը մի օրում չարաչար մահով սպանուէին։ Զը նայելով այս բանին, երբ Վարդանը զլուխը առնում քաշում է Յունաստան՝ Վասակը առաջինն է լինում, որ նախարարներին խորհուրդի է հրաւիրաւմ և յորդորում է, որ մարդուզարկեն յետ կանչեն նրան, որովհետեւ առանց Վարդանի իւրանց մտածած գործը (ապատամբութիւնը) զլուխ չի գայ։ Իսկ թէ ինչ է այնուհետև կատարում, ինչու է Վասակը հակւում պարսիկների կողմը—այսոեղ մի անթափանցելի վարագոյր կայ, որ բաց չէ անում Ղազարը։ Պատերազմից յետոյ, երբ Վասակը իբրեւ յանդաւոր զրկւում է պատիւներից և իշխանութիւնից՝ բանտ չէ ձգւում, որդնոտում, այլ խեղճութեան մէջ ապրում և մեռնում է Պարսկաստանում, անդադար լալով, ծեծելով իր մեղաւոր զլուխը, խղճահարուած, որ երկրային փառասիրութեամբ երկնային կեանքից զրկուեց և Վարդանի մահուան պատճառ դարձաւ։

Այս տեղեկութիւններից, որնք շատ մեղմայնում են Վասակի յանցանքը և գրեթէ նրան արդարացնում մեր խղճի առաջ, մանաւանդ նրա վերջի անկեղծ, խոր զզումը,—սրանցից ոչ մէկը չը կայ Եղիշէի մօտ։ Եղիշէն որոշել էր Վասակից ստեղծել մի ամենաչար մարդու, ստոր զաւաճանի, սատանայի գործիքի, անզեղջ չարագործի տիպ, որ հէնց այս աշխարհում էլ դանում է սոսկալի հատուցում, այս պատճառով նա դէն է ձգել այն փառ-

տերը, որոնք նպաստաւոր էին Վասակի համար։ Իսկ չը հաւատալ Փարագեցուն մենք իրաւոնք չունինք, որովհետև նա ել անպայման ասում է Վասակին, ուրացեալ ու նենդաւոր կոչում և նրան համարում պատճառ Վարդան սպարապետի մահուան, ուրեմն նա չէր կարող իրանից հնարել չեղած հանգամանքներ՝ նրան արդարացնելու նպատակով։ Նա պարզապէս՝ աւելի անաշառ պատմիչ է, որ բնականապէս բացատրւում է նրանով, որ գրում է բաւական ուշ, երբ սուր կուսակցականութիւնը դադարել էր, կրքերը հանդարտուել էին, ուրեմն երևոյթները կարելի էր տեսնել ու գնահատել՝ իրականին աւելի մօտ։

Ուրեմն տեսնում ենք, թէ միենոյն բանակին պատկանող երկու հեղինակ՝ որչափ իրանց ոգով տարբերւում են միմեանց և ինչպէս Դազարի պատմութիւնը միջոց է տալիս ուղղագրելու Եղիշէի պատմութիւնը և կրօնական պատերազմի իրականութիւնը աւելի լաւ հասկանալու։ Բայց պէսք է նկատել, որ Ղազար Փարագեցին էլ պատերազմի բոլոր հանգամանքները չէ տալիս այնպէս՝ ինչպէս որ իրօք եղել են, և նա ինքն էլ—չը խօսելով Եղիշէի մասին, —զեռ կարօտ է ուղղագրուելու ուրիշ պատմական աղբիւրով, որ գժբախտաբար գոյութիւն չունի։

Ուրեմն որտեղից գիտենք, թէ Ղազարի պատմութիւնն էլ կարօտ է ուղղագրութեան, ևթէ հակառակ խօսող փաստեր չը կան մեր առաջ և չը կայ ուրիշ պատմաղիր, որ հերքէր նրա գրածները։ Այս հարցին պատասխանում է դարձեալ բանափրութիւնը, որ քննադատութեան չնորհիւ մի շատ հետաքրքրական երևոյթ բացեց մեր հին մատենագրութեան մէջ։

Մեր հին պատմազիր-հեղինակները իրանց պատմական աշխատութիւնները գրում էին ոչ թէ ինքնարերաբար, այլ որ և է ականաւոր անձի պատուէրով, որ և հանդիսանում էր հեղինակի մեկենասը։ Պատուիրողը սավորաբար լինում էր որ և է նախարար, կամ նախարարական տոհմի պատկանող բարձրաստիճան մարդ, և նա, պատուիրելով հեղինակ-վարդապետին այսինչ պատմական նիւթի մասին գրել՝ բնականապէս ցանկանում էր որ իր նախարարական տոհմի անցեալն ու ներկան որչափ կարելի է լաւ գոյներով գուրս գայ ու փառաբանուի այդ գրուածքում։ Այս ցանկութիւնը լաւ բացատրւում է այն տոհմասիրական զրութեամբ, որ վերը բացատրեցինք.—այդ հին ժամանակ չը կար ընդհանուր ազգային գիտակցութիւն, այլ տոհմային—աշխաթային, և ամեն մի նախարար բացառապէս հետաքրքրուում էր իր տոհմի պատմութեամբ, պարծենում էր իր տոհմական պարծմանքով և ոչ թէ ընդհանուր ազգի։ Հեղինակն էլ, որչափ և ամսկախ համոզմունքի տէր մարդ լինէր, դարձեալ

ի նկատի պէտք է առնէր իր բարձրաստիճան մեկենասի հաճոյքը և պէտք է նրա տոհմը շատ թէ քիչ փառաւորէր, առաւելապէս շեշտելով նրա տոհմի գործած քաջութիւններն ու առաքինութիւնները և մեղմացնելով կամ նոյն-իսկ լուելով նրա պակասութիւնները, աւելի ուշադրութիւն գարձնելով այդ տոհմի կատարած գործերի վրայ և անտես անելով միւս տոհմերի գործերը:

Այս կերպով գրել են Եղիշէն, Փարագեցին, (գուցէ և Փաւոսի հեղինակը)՝ Մամիկոնեան տոհմի պատմութիւնը, Դաւիթ և Վահան Մամիկոնեանների պատուէրով, Խորենացին, Սեբէոսը, Ղեղնդը, Յովհաննէս կաթողիկոսը՝ Բագրատունեաց տոհմի պատմութիւնը, Բագրատունի իշխանների ու թագաւորների պատուէրով, Թովմաս վարդապետը՝ Արծրունեաց պատմութիւնը, Արծրունի Գուրգէն իշխանի պատուէրով և այն: Ուրեմն սրանց պատմութեան մէջ հերոսացած ու փառաւորուած է իւրաքանչիւր հեղինակի մեկենասի տոհմը, և սրանց գրածը ոչ թէ ընդհանուր հայ ազգի պատմութիւն է, այլ տոհմային՝ Մամիկոնեան, Բագրատունի, Արծրունեաց և այլ տոհմերի, և ամեն մէկի գրուածքում պատմական ճշմարտութիւնը որոշ չափով այլայլուած է, որչափ այդ պահանջել է՝ մեկենաս տոհմի պատիւն ու պարծանքը: Նոյն-իսկ Խորենացին, որ ամբողջ զիսով բարձր է կանգնած միւս պատմագիրներից, որ առաջինը եղաւ ընդհանուր ազգային գիտակցութիւնն ունեցող ու արծարծող, որ նեղ-տոհմային սահմանափակութիւնը պատառելու համարձակութիւն ունեցաւ և ընդհանուր ազգային պատմութիւն գրեց, նոյն-իսկ այս լուսամիտ ու հեղինակաւոր պատմիչը չը կարողացաւ բոլորովին ազատուել տոհմասիրական յատկութիւններից և խունկ է ծխում երլեմն Բագրատունի տոհմին, սակայն պահպանելով որոշ չափ ու վայելչութիւն, աշխատելով, որ իր գովեստները հիմնուած լինին պատմական իրողութիւնների վրայ կամ ապացուցուին առողջ գատողութեամբ:

Մի քանի նմուշներ բերենք այս տոհմասիրական պատմութիւններից, որոնցից բացայացաւ կերեմի, թէ որչափ գունաւորում է իրողութիւնը տոհմային հեղինակի գրչի տակ:

Թովմաս վարդապետը (Ժ գար), որ Արծրունեաց տոհմի պատմիչ է, Արծրունիներին մինչև երկինք է բարձրացնում: Նրանք տկանաւոր անձնաւորութիւններ են, կատարեալ հերոսներ, որոնք մասնակցութիւն են ունենում համաշխարհային պատմութեան նշանաւոր անցքերում: Նրանցից մէկը Աղէքսանդրը Մակեդոնացու գէմ կոռուի է գուրս գալիս և նրա երեսի զօրավարներին յաղթում, ահաբեկում, նոյն-իսկ Աղէքսանդրի

հետ մնանարատել է սկսում. վերջը նշանակուում է Եգիպտոսի ու Հնդկաստանի թագաւորություն երկու Սրծրունիներ Հայկազեան Տիգրանին օգնուած են Աժդահակի դէմ պատերազմելիս. նրանցից հէնց մէկը բռնուած է Աժդահակին յետելիք, այնպէս որ Տիգրանին միայն մնուած է աէզը ցցել անպաշտպան Աժդահակի սիրառ. Նոյն Արծրունիներն են, որ առաջնորդուած են հրէից գերութեան, երբ սրանց ազատութիւն է տալիս Կիւրոսը. նրանք բերուած տեղաւորուած են գերիները Հրէաստանուած և Զօրաբարէլին առաջնորդ նշանակուած նրանց վրայ. Նոյն Արծրունի եղբայրները մասնակից են լինուած և Կիւրոսի պատերազմին Կրեսոսի դէմ և իրանք են, որ հնարագիտութեամբ որոգայթի մէջ են ձգուած Կրեսոսին և նրան ձերբակալուած: — «Ո՞հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել», կը բացականչէր դարձեալ Խորենացին, եթէ այս «պատմութիւններին» ծանօթ վնէր:

Մի ուրիշ օրինակ բերենք Ղետնդից (Հ. դար), որ Բագրատունեաց պատմիչ է: Ութերորդ դարի կէսերին, հայ նախարարները, արաբական լուծի ճնշման չը կարողանալով դիմանալ՝ խորհուրդ են անուած ապստամբուել և անկախութիւն ձեռք բերել: Խորհուրդի հոգին ու պարագլուխը լինուած է Գրիգոր Մամիկոնեանը: Հայաստանի իշխանապետ է լինուած այս ժամանակ Աշոտ Բագրատունին, որ իւր պաշտօնուած նշանակուած է արաբացց խալիքայից: Նախարարները իրանց խորհուրդը յայտնուած են և Աշոտին. սա նախ աշխատուած է յորդորել, որ նրանք յետ կանգնեն անիրազործելի, վնասակար մտքից, և հանգիստ նստելով փայելին իրանց այդիներն ու սնդաստանները. բայց տեմնելով, որ նախարարները հաստատ կանգնած են իրանց խօսքին և բոլոր զօրքն էլ նրանց հետ միաբան է՝ յակամայից համաձայնութիւն է յայտնուած: Եերուած են խաչ ու աւետարան ու երդուած: Աշոտնետի նախարարները պատրաստուած են, անառիկ տեղ քաշւուած և յայտարարուած են ապստամբութիւն: Այս միջոցին Աշոտը յարմար բռպէ գտնելով՝ մի քանի նախարարներով զաղանի փախչուած է ապստամբների բանակից, նպատակ ունենալով գնալ միանալ Արաբացցոց հետ և իւր հայրենակիցների դէմ կըռուել: Մամիկոնեան Գրիգորը լսուած է դաւը. համնուած, բռնուած է Աշոտին և աչքերը կուրացնել տալիս: Ապստամբութիւնն էլ զլուսի չէ գալիս, որովհետո Գրիգորը շուտով փորի հիւանդութիւնից մեռնուած է:

Այս պատմութիւնը շատ նման է Վարդանի ու Վասակի պատմութեան, այնպէս չէ. երկու դէպքուածն էլ Մամիկոնեան-

ները զլուխ են կամդնել ազգային շարժման, երկու դէպքումն էլ մի-մի նշանաւոր հայ նախարար, այնտեղ մարզպան Սիւնի Վասակը, այստեղ իշխանապետ Բագրատունի Աշոտը, երեսանց համաձայնութիւն են տալիս ու երդում, յետոյ գաւաճանելով ազգային շահերին՝ հեռանում ու թշնամիների կողմն ացնում։ Պէտք էր ուրեմն սպասել, որ երկու դէպքի գնահատութիւնն էլ հաւասար լինէր. կամ Աշոտն ու Վասակը գաւաճան, ազգուրաց հրատարակուէին, իսկ Գրիգորն ու Վարդանը հայրենասէր հերոսներ, կամ ընդհակառակը, այս վերջինները հրատարակուէին տաքուիս, վեսսակար գողոփչներ, իսկ առաջնները՝ խոհեմ, հեռատես հայրենասէրներ։ Բայց հէնց բանն էլ այն է, որ Վարդանի ու Վասակի ընդհարման պատմութիւնը գրել են Մամիկոնեան տան տոհմային հեղինակներ, իսկ Գրիգորինն ու Աշոտինը՝ Բագրատունեաց տան տոհմային պատմիչ Ղեռնդը։ Սա առանց քաշուելու խիստ խօսքերով պահսարակում է Գրիգոր Մամիկոնեանին (=Եղիշէի Վարդան Մամիկոնեանին), կոչելով նրան խորամանկ, նենզաւոր, բարեգրուժ, չարասէր, նմանեցնելով նրան ագռաւի և նրա մահը համարելով աստուածային պատուհան՝ նրա չարագործութեան արդար վրէժ, և նա «սատկում է և յիշտապակը անհետ ջնջում է»։ այն-ինչ Աշոտը (=Եղիշէի Վասակին) հանդիսանում է «իմաստուն», «Հայոց աշխարհի փառք և պարծանք», «պերճ պասկ հայ նախարարների»։

Այս օրինակները բաւականաշափ ցոյց են տալիս տոհմասիրական պատմութեան յատկութիւնը։ Սա—մի կուսակցական մատենագրութիւն է, որի մէջ որոշ տոհմի պատիւն ու պարծանքը պաշտպանելու համար զոհ են բերում աննպաստ պարագաները, նոյն-իսկ համոզմունքը, ճշմարտութիւնը։ Ուստի այսպիսի տոհմային պատմչի խօսքերի հիման վրայ չէ կարելի անսիալ դատողութիւն անել այնպիսի պատմական իրողութիւնների մասին, որոնց մէջ խառն է այն տոհմը, որի պատմութիւնն է գրւում։ Պէտք է հակառակ կուսակցութեան, ի հարկէ, նոյնպէս կողմանակն, պատմի գրուածքն էլ աչքի առաջ ունենալ և երկուսի համեմատութիւնից մի միջին եղբակացութիւն հանել։ —Մենք տեսանք, որ Փաւատոսի անծանօթ հեղինակը տալիս է մի շարք Մամիկոնեան պանծալի հերոսների անուններ. տեսանք, որ Եղիշէն ու Փարաւեցին հերոսացնում, անմահացնում են Մամիկոնեան Վարդանին։ Բայց այս հեղինակները՝ Մամիկոնեան տան տոհմային պատմիչներ են։ Պէտք էր, իբրև հակակիսո, ունենալ և Սիւնեաց տան մի պատմչի գրուածքը. պէտք էր, առածին համեմատ, լսել և միւս կողմը—audiatur et altera pars։ Բայց այդ միւս կողմից մեր ձեռքը չեն հասել պատմու-

թիւններ։ Խորենացին, որ Մամիկոնեան տոհմը այնքան էլ չէ սիրում՝ իւր պատմութեան վերջակէտը զնում է հէնց այնտեղ, որտեղ պէտք է սկսէր զրել կրօնական պատերազմի մասին։ Այս խորհրդաւոր լուլթիւնը կարող է բացատրուել նրանով, որ նա գուցէ շատ տարբեր բաներ պէտք է պատմէր այս պատերազմի մասին, բայց եկեղեցում նուիրագործուած սրբերի դէմ զրել դժուարանալով՝ լաւագոյն է համարել ոչինչ չը զրել։ Վեցերորդ դարում եղել է մի պատմիչ Սիւնեաց տոհմի Պետրոս եպիսկոպոս, որին շատ գովում են մի քանի հեղինակներ։ Սրա պատմութիւնն էլ անհետացել է, գոնէ մինչև այժմ գեռ գտնուած չէ։ Արդեօք այս կորուստի պատճառն այն չէ, որ «մատնիչ» Վասարէլ նրա մէջ բոլորովին տարբեր կերպարանքով էր դուրս բերուած և անհանոյ բաներ կային ուխտապահ կուսակցութեան մասին։ Այս հարցերը բնականաբար ծագում են մեր մէջ, երբ համեմատում ենք Եղիշէի ու Ղազարի պատմութիւնները և նկատում ենք այնքան զանազանութիւններ Սիւնեաց իշխան Վասարի նկարագրի մէջ, չը նայելով որ երկուսն էր Մամիկոնեան տոհմի պատմիչ են։

Ուրեմն բանասիրութիւնը մի նոր գիծ էլ նկատեց մեր հին հեղինակների մէջ—տոհմային կուսակցականութիւնն։ Եւ այս գիծը միշտ պէտք է ի նկատի ունենալ նրանցից օգտուելու ժամանակ։ Բաւական չէ գիտենալ միայն, թէ ինչ են ասում նրանք. անհրաժեշտ է ուշադրութեան առնել նաև, թէ ով են ասողները։

ՍՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ

## Վ Բ Ա 8 Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

1900 թուի վերջներում Թիֆլիսում հրատարակուող վրաց շաբաթաթերթ «Կվալին» տպեց պ. Ն. Փօրդանիայի մի շարք յօդուածները վրաց մամուլի մասին։ Այդ յօդուածները յետոյ լոյս տեսան առանձին գրքով—«Վրաց մամուլը կամ երէկ և այսօր» վերնագրի տակ։

Սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ մեր հարևան վրացիների ներքին կեանքի, մտաւոր հոսանքների ու ձգտումների մասին մենք, հայերս, շատ մակերևոյթային գաղափար ունենք։ Այդ պակասը լրացնելու համար աւելորդ չենք համարում, օգտուելով պ. Փօրդանիայի աշխատութիւնից, ծանօթացնել մեր հարևան վրացիների մամուլի հետ, որ հասակակից է հայոց մամուլին։

Մամուլի մէջ աւելի բնորոշ կերպով են արտայայտուում ազգերի մտաւոր կեանքը, նրանց յուզող խնդիրները, նրանց աշխարհայեցողութիւնն ու ձգտումները, նրանց վերաբերմունքը գէպի հարևանները։

Պ. Փօրդանիան իր գրքի առաջաբանում, ի միջի այլոց, ասում է. «Ո՞չ մի տեղ այնքան չեն խօսում անցեալն ուսումնասիրելու մասին, որքան մեղանում, և ոչ ոք այնպէս չէ մոռանում այս ճշմարտութիւնը, ինչպէս մենք։ Ապագան ծածկուած է, ներկան դժուար է հասկանալ, ուրեմն մնում է անցեալը, որ հեշտ է ուսումնասիրել, և եթէ այս էլ չենք կատարի—կը մնանք մթութեան մէջ։ Մամուլն է հասարակական զարդացման ամենաուժեղ գործօնը և այդ պատճառով էլ ամեն ժողովրդի մէջ մնած ուշադրութիւն են զարձնում զրա բարդաւաճման վրա։ Դրանից զրկուած է միայն վրաց մամուլը, որա և ուրիշ աղջերի մամուլի մէջ այնպիսի զանազանութիւն կայ, ինչպէս մեռած և կենդանի մարդու մէջ»...

«Ո՞չ մի տեղ, ոչ մի կուլտուրական երկրում, այնպիսի կեղծ կերպարանք չունի մամուլը, ինչպէս մեղանում», ասում է հեղի-

Նակը: «Մամուկը՝ հասարակութեան աւելամիսն է, ժողովրդի ապօքէն զաւակն է, կեանքի մէջ ստիպմամբ մտցրած զարդ է, բայց միևնոյն ժամանակ հարկաւոր և անխուսափելի է—մոռածում է վրացին: Նա սարսափելի ատում է իր մասին քննադատութիւնը: Նա իրան երեակայում է կատարեալ և նոյնը պահանջում է ամենքից: Նա ինքն իրան փաղաքչում ու խաբում է և նոյնանման փաղաքչանք ու կեղծիք է որոնում ամեն տեղ: Գովեցէք և մեծարեցէք նրան և դուք կը դառնաք նրա սիրելին: Մի դիպչէք նրան բոլորովին և նա ձեզ կ'ընդունի, եթէ ոչ իրրեսիրելի, զոնէ իրրես բարեկամ: Բայց եթէ համարձակուեցաք և նրա յատկութիւնները կշռքի վրայ գրեցիք, վայ ձեզ. նրա մէջ կը գտնէք մի մշտական թշնամի, և որովհետև ամեն մէկը փախչում է թշնամուց և որոնում է բարեկամ, այդ պատճառով էլ հասարակութեան մէջ տիրում է ընդհանուր փարիսեցիութիւն, երեսանց գովել-մեծարելը և յետեց հայնոյեց»...

«Ինչպիսին է շուկան, նոյնպիսին է և ապրանքը, ինչպիսին է պահանջողը, նոյնպիսին է և վաճառողը. մամուլն էլ փոխուեց վաճառանոցի համեմատ, մամուլն էլ ստիպուեց պահանջողներ զրաւելու: Սրան ձեռնտու եղաւ ընթերցողին գրաւելը և գուրգուրելը, սրա համար վնասակար դարձաւ ընթերցողին նեղացնելը և խրանացնելը: Հասարակութեան բնաւորութիւնը դարձաւ մամուլի բնաւորութիւն. սա էլ սկսեց փարիսեցիութիւն, երկերեսութիւն»...

«Լուսաւորութեան և պարզասրտութեան դրօշակը ցեխի մէջ նետուեց, իսկ խաւարի և երկմտութեան դրօշակը օդի մէջ ծածանուեց, և այս դրօշակի տակ միացան ոչ միայն ընթերցողների մի մասը, այլ և լանաստեղծների, ժուրնալիստների, հրապարակախօսների. սրանք, փոխանակ մոլորուած հասարակութիւնը հրապարակ հանելու, իրանք թողեցին հրապարակը և նրանց կողքին կանգնեցին, զօրքը քաշեց և գրաւեց առաջնորդներին և իր մէջ ոչնչացրեց»...

«Կրիտիկան վաղուց է մերժուած, սա աւելորդ բան է ճանաչուած, այդ պատճառով էլ նա գործածութիւնից դուրս մնաց գրականութեան մէջ, կորցրեց իր կոռուանը և զրողներն էլ նրանից յետ սովորեցին: Նրանց ձեռնտու եղաւ երեքից մէկը՝ կամ լուսթիւն, կամ գովասանք և կամ հայնոյանք, բայց յամենայն դէպս ոչ կրիտիկա»:

«Կրիտիկա և հայնոյանք, այս երկու միտքը իրար մէջ խառնուեց և ընթերցողը չէ կարողանում իմանալ, որտեղ է վերջանում մէկը և որտեղ սկսւում երկրորդը: Այս հանգամանքը բոլորովին անպատուեց մամուլը և ոտնակոփի արեց հասարա-

կական կարծիքը։ Ո՞վ որ իր սրտին բաւականութիւն տալու համար դուրս կը գայ գրականութեան մէջ և մի երկու անգամ կը հայհոյի, նրան կարծում են կրիտիկոս, բայց ով որ իր սրտի ցաւերը, իր գաղափարները, իր հայեցողութիւնը կրիտիկայի ձեռվ դուրս է բերում գրականութեան մէջ, նրան կարծում են հայհոյով... Եթէ հասարակութիւնն իսկապէս բարձրանայ իր ոչնչութիւնից, նա կը բարձրացնի գրականութիւնն էլ այնպէս, ինչպէս զցեց նրան և ստրկացրեց... Բայց միթէ մամուլը չէ կարող իսկական առաջնորդողի դերը յանձն առնել. անկասկած կարող է, և ոչ միայն կարող է, այլ ուղղակի նա հէնց զրա համար է կոչուած. բայց այստեղ հարկաւոր է այն, ինչ որ մեր մամուլը վաղուց կորցրել է։ Ամենից առաջ հարկաւոր է լուրջ ուղրութիւն, և հէնց այդ բանը մերժեցին բանասէրները. ուղղութիւնը—մօդա չէ, դա անդործ մարդու հնարած բան է—ահա վրաց ժուրնալիստների ամրող փիլիսոփայութիւնը»...

Վրաց ժամանակակից մամուլի զարգացման մէջ, որ հազիւ 40 տարեկան է, մենք նշմարում ենք երկու շրջան.

Արաջինը—այն շրջանն է, երբ մամուլն սկսուեց, ոտքի կանգնեց և հաստատ քայլով առաջ գնաց, նա այս շրջանում—նշմարտասէր, անկախ և անյողգողդ էր. նա վեր էր բարձրանում, քանդում էր ամեն տեսակ պարիսաներ. մաքառում էր խոշնդոտների հետ և այդպիսով հարթում էր գնալու ճանապարհը. այս անխոնջ կոռուպդ նա հասաւ զարգացման ամենաբարձր աստիճանին, հասաւ գաղաթնակէտին և յայտնեց աշխարհին՝ ահա ինչ կերպարանք պէտք է ունենայ քաղաքակրթուած մամուլ։

Երկրորդ շրջանը—այն շրջանն է, երբ մամուլը այս դագաթնակէտից վայր է ընկնում, իջնում է դարիվար, արդէն ձեռք բերած տեղից հրաժարւում և հեռանում է, իջնում է մինչ զարգացման ամենացածր աստիճանը և վերջը բոլորովին անդամալոյժ է դառնում։ Առաջին շրջանին առաջնորդում է «Դրօքան», իսկ երկրորդ շրջանին՝ «Ծվերիան»։

Վրաց մամուլի տարեթիւն սկսում է «Դրօքայի» հիմնուելով—1866 թ., հանգուցեալ Գիօրգի Շերեթելիի խմբագրութեամբ։ Առաջ էլ եղել է եթէ ոչ լրագիր, գոնէ ամսագիր, սակայն ոչ մէկը դրանցից մամուլի բնաւորութիւն չունէր։ Լաւագոյնը նրանցից, «Սաքարթվելոս Մօամբէն», որ հրատարակում էր 1863 թ. իշխան ծափճափածէի խմբագրութեամբ, աւելի ներկայացնում էր մի ալմանախ, նամակների հաւաքածու, քան թէ ամսագիր։ Նրա մէջ չէք գտնի ոչ մի յօդուած օրուայ չարիքի

վերաբերեալ, ինչպէս վերջը ինքը խմբագիրն էլ խոստովանեց. և այդ այն ժամանակն էր, երբ ճորտութեան հարցն էր լուծւում, որի մասին խօսում էր ամբողջ ոռու մամուլը:

Հանգուցեալ Գ. Ծերեթելին իր առաջնորդողում որոշեց իր ծրագիրը՝ չը ծածկել ոչ մի պակասութիւն. թողնել այն ամենը, ինչ որ անպէտք է, փառած է, և իւրացնել եւրոպական կեանը:

Այս անվախութիւնը և անինայ մտրակումը առաջ բերեց մեծ բողոք. սակայն առաջի տարին հանգուցեալը չը կարողացաւ իր ծրագիրը լրիւ կատարել, որովհետեւ նա մենակ էր և ոյժ չունէր. այդ նպատակով նա 1869 թ. հրաւիրում է նոր եկած Ս. Մէսիխին և Եւրոպայից վերադարձած Ն. Նիկոլաձէլին, և այսպիսով կազմում է «Դրօէբայի» նոր խմբագրութիւնը երեք հոգուց՝ Գ. Ծերեթելի, Ս. Մէսիխ և Ն. Նիկոլաձէ; Սրանց հետ միանում է վերջը և Ակակի Ծերեթելին և այս ոյժերի չնորհիւ «Դրօէբան» 1870 թ. մեծ աղմուկ է հանում: Սա մատնանիշ է անում ամենն տեսակ անկանոնութեան վրայ վրայ կնանքի մէջ, անինայ քննդատում է ամենքին—սրան առաջնորդում է լոկ կրիտիկան: «Դրօէբան» մտրակում է հասարակութեան անգործունէութիւնը, անհոգութիւնը, անտարբերութիւնը: Մաքառելու համար մեծ տոկունութիւն էր հարկաւոր այդ ոյժերին: Եւ սըրանք չէին ընկճառում, արթուն էին և արթնացնում էին ամենքին: Մի խիստ կորիւ էր սկսուել «որդոց և հայրերի» մէջ, «հին և նոր» սերնդի մէջ: Այդ նոր ուղղութեամբ գրուած առաջնորդող յօդուածներից մէկը այնքան է յուղում հասարակութիւնը, որ այդ վերջինը վճռում է ամեն ջանք գործ դնել այդ լրագիրը դադարեցնելու համար: Այդ տեղի է ունենում 1871 թ.: Սակայն խմբագրութիւնը աւելի ևս խիստ է զինւում նրանց դէմ, որոնք աշխատում են անուանարկել լրագիրը և վայր ձգել սրա պատիւը հասարակութեան աչքում: «Դրօէբան» պատերազմում էր այն իշխանների և ազնուականների դէմ, որոնք նեղացնում էին գիւղացիներին. նա մաքառում էր և վաշխառուների դէմ:

Նա պահանջում էր, որ վրացի գիւղացին ունենայ սեփական հող և ազատուի իշխանների ճանկերից: Օր ըստ օրէ լրագիրը զօրեղանում էր և արագութեամբ տարածում էր իր քարոզած լոյսը. իսկ միւս կողմից մեծանում էր անբաւականների թիւը, որոնք ուզում էին կռուել, սակայն զէնք չունէին, այդ պատճառով դիմում էին ստոր միջոցի—բամբասանքի՝ թէ լրագիրը անձնաւորութիւնների դէմ է, նոյն իսկ դիմեցին մատնութեան... Այս նոր, եւրոպական քաղաքակրթութիւն տարածող լրագրի ուղղութեան դէմ առաջ է գալիս մի խիստ դիմադրութիւն, մի կատարեալ բէակցիա, և այդ ոչ միայն հին սերնդի,

այլ և նոր ոյժերի կողմից։ Այդ ազատամիտների խմբին դիմագրելու համար աշխարհ է գալիս նոր պահպանողականների խումբը, իր սեփական օրդան «Խվերիայով», որի առաջին համարը լոյս տեսաւ 1877 թ.

Պահպանողականների պարագլուխ դարձաւ իշխ. Իլ. Ճավճակածն, զինուած «Խվերիա» լրագրով։ Խշանը պարտութիւն կրեց 1863 թ. իբրև առաջադիմական և վոլոսարէնը 1877 թուից նա պիտի յաղթող հանդիսանար իբրև «պահպանողական»։

Իլ. Ճավճակածն բացակայում է գրական ասպարէզից 13 տարի։ Մի տարի հրապարակախօսական գործունէութիւն ցոյց տալով, նա ինքն ապա հրաժարուեց իր ամսագրի վերջին համարում և հեռացաւ մամուլի ասպարէզից ու մտաւ արքունական ծառայութիւն Դուչէթում։ Նա եօթը տարի շարունակ ոչ մի տող չէ նուիրում գրականութեանը։ 1870 թ. նա գրում է երեք ուտանաւոր, իսկ 1872 թ. երկու մնացած բանաստեղծութիւնները, որոնք լոյս տեսան վերջը, իսկ գրուած են երիտասարդութեան ժամանակ մինչև 1863 թիւը։ Սրա զրուածները կամ բանաստեղծութիւնները որ և իցէ հասարակական երևոյթի մասին լոյս էր տեսնում այն ժամանակ, երբ արդէն փաստը վաղուց մոռացուած էր լինում ամենքից։ «Սպարթ. Մամբէ» ամսագրի դադարելուց յետոյ (1863 թ.) Իլ. Ճավճակածն անսպասելի կերպով առաջ է գալիս իբրև հրապարակախօս 1877 թ.։ Ի՞նչ է սրա պատճառը, Կոչումը. բայց միթէ կոչում ունեցող հրապարակախօսը տաս երեք տարի շարունակ ձեռքերը ծալած կարող է նստել և իր ժամանակակից գործողների վրայ սառնասրտութեամբ նայել։ Ի հարկէ ոչ։ Բայց ինչն է ստիպում նրան լրագիր հիմնել։ Ահա թէ ինչը. 1875 թուին Թիֆլիսումը հիմնւում է Վրաց ազնուակաների բանկը, որի պարագլուխ է ընտրում իշխ. Իլ. Ճավճակածն։

Նա այդ ժամանակ ընակութեան տեղը հաստատում է Թիֆլիսում և բարեկամանում է «Դրօէբա» լրագրի խմբագրութեան հետ, որ հրաւիրում է նրան մասնակցելու թերթին։ Այդպիսով 1876 թ. իշխ. Ճավճակածն դառնում է «Դրօէբայի» խմբագրութեան անդամ։ Պ. Նիկոլաձէն տպում է մի յօդուած Քուբայիսի բանկի կանոնադրութեան մասին։ Բայց որովհետեւ Թիֆլիսի բանկի կանոնադրութիւնն էլ նոյնն էր, ուստի իշխ. Ճավճակածն այդ յօդուածի մէջ տեսաւ և իր գործունէութեան քննադատութիւնը, այդ պատճառով էլ № 39 մէջ պատասխանեց պ. Նիկոլաձէն։ Այսպիսով խմբագրութեան երկու անդամների մէջ սկսուեց բանակոփւ, որի հետեանքը եղաւ Ճավճակածէի հեռանալը «Դրօէբայի» խմբագրութիւնից։ Այնուհեան «Դրօէբան» սկսեց անիմնայ մտրակել բանկային վարիչներին և զինեց նրանց

իր դէմ. և բանկիրները վճռեցին՝ կամ «Դրօէքային» քաշել իրանց կողմը, կամ հիմնել սեփական օրգան:

Այս առթիւ պ. Նիկոլաձէն \*) հարցեր է տալիս. «Ո՞ւր էին և ինչ էին շինում վրաց հասարակութեան և վրաց զրականութեան համար այն պարոնները, որոնք այսօր հոգում են մեր գրականութեան մասին. ինչու չէին համակրում և նպաստում գրականութեան բարգաւաճմանը այն ժամանակ, երբ նա կարեքի մէջ էր. ինչով ցոյց տուին, որ իրանք հոգս են տանում հասարակութեան ապագան բարւոքելու համար: Ո՞ւր էին այդ պարոնները, որոնք այսօր ցանկանում են մամուլը ոտքի վրայ կանգնեցնել: Նրանք բոլորն էլ ծառայում էին՝ մէկը հաշտարար դատաւորի պաշտօնով, միւսը տեսչի, երրորդը դիրեկտորի և այյն: Ինքը իշխ. իլ. ծավագամձէն էլ Դուշէթումն էր նստած հաշտարար դատաւորի պաշտօնով: Ի՞նչ զոհաբերութիւն արին այդ պարոնները հայրենիքի համար. ի՞նչ օրինակ ցոյց տուին մեր հասարակութեանը: Ոչինչ, բացի լաւ ոռնիկներ ստանալուց և չաղ տեղեր որոնելուց: Եւ այդ պարոնները այսօր մտածում են գրականութեան զրօշակը բարձր պահելու մասին. և ի՞նչ հարկաւոր է զրանց հին կամ նոր լրագիր. զրանք առանց այն էլ չաղ պաշտօններ բաժանելով կարող են իրանց կողմանկիցների թիւը մեծացնել. այսպիսի անձնատուր և անփոյթ հասարակութեան համար միթէ հարկաւոր է էլի նոր մեքենաներ հնարել: Բայց ժամանակի ոգուն համեմատ չաղ պաշտօններ կարելի է ձեռք բերել քուէնների չնորհիւ—ընտրողական սկզբունքով. իսկ քուէններ գտնելու համար հարկաւոր է երբեմն լրագիր՝ ոչ միայն սեփական անձը պաշտպանելու համար, այլ և թշնամիները ցրուելու համար. և զարմանալի չէ որ այդ պարոնները, որոնք ունեն լաւ պաշտօններ, որոնց մէջը գեռ երկար են ուղում մեալ, աշխատում են լրագիր ձեռք բերել՝ քուէարկութիւնը աջողացնելու և իրանց թեկնածութիւնը պաշտպանելու համար: Եւ միթէ ցանկալի է, որ մեր հասարակութեան և գրականութեան մէջ մուտք գործեն այդ տեսակ բարքեր: Բանկային հիմնարկութիւնները միթէ դրանով պէտք է նպաստէին մեր հասարակութեան բարյական զարգացման, որ առաջին քայլով մեր զրագէտների և ինտելիգենցիայի մէջ տարածէին Նապոլէօնի կաշագաններերը. այս «բանկային բանասէրների» առաջին քայլը կարող է ապականել հասարակութեան բնաւորութիւնն ապաւոյւմ»...

Այդ յօդուածներից պարզ երկում է, թէ ինչու հարկաւո-

\*) „Դրօէքա“ 1876, № 57, 58.

բուեց իշխ. ձավճավածէին նոր լրագիր. որովհետև նա բանկը կառավարիչ էր և ոչ հրապարակախօս. նոր հրատարակութիւնը պէտք է պաշտպանէր բանկը և բանկիրներին հակառակորդներից: «Իվերիան» բանկի մասն է, բանկը «Իվերիայի» աղբիւրն է, նրա մտաւոր և նիւթական կերակրողն է: «Իվերիան» սպասում է հրաման բանկից, բանկը «Իվերիայից» սպասում է պաշտպանութիւն: Բանկը «Իվերիային» և նրա խմբագրին տալիս է փող, փոխարէնը «Իվերիան» պէտք է տայ բանկին միտք, կարծիք:

Այսպիսով բանկի հիմնելը «Իվերիայի» հիմնելու պատճառ դարձաւ, և այդ առաջին օրինակն է վրաց գրականութեան մէջ, որ մի որ և է օրդան կապ ունենար «գործնական մարդկանց» հետ, կամ բանկային հիմնարկութեան հետ և նրանից ստանար խրատներ ու հրաման, թէս այդ տեսակ դէպքեր Եւրոպայում յաճախ կը տեսնէք: Ուրեմն վրաց գրականութեան մէջ ուրիշից կախումն ունեցող առաջին օրդանն էր «Իվերիան»: Այդ կախումը կապից «Իվերիայի», ոտքն ու ձեռքը և սրանով նա զանազանուեց «Դրօէրայից»: «Իվերիան» իր առաջնորդողում 1877 թ. 1 Ն յայտնեց իր ծրագիրը, այսինքն կրկնեց այն, ինչ որ իշխ. ձավճավածէն ասել էր մի քանի տարի առաջ իր առաջին ամսագրի մէջ. այն է՝ գիտութիւն տարածել հասարակութեան մէջ և ուսումնասիրել իրանց և օտար ազգերի կեանքը. այնուհետև աւելացնում է, որ իւրաքանչիւր լրագր կամ ամսագիր պէտք է պատուվ վերաբերուի դէպի առանձին անձնաւորութիւնները: Բայց ումն էր հարկաւոր այդ խրատը. նա միայն պէտք է յայտնէր, թէ ինքն ինչո՞վ կը զանազանուի ուրիշ հրատարակութիւններից: Սակայն այդ բանը նա ասաց գեռ 1873 թ.: Այն ժամանակ նա ասում էր՝ չը նեղանան, եթէ մենք մասնանիշ կ'անենք վատ և զգուելի երեսյթների վրայ, որ վրացոց մէջ նա կը սիրէ միայն լաւը, իսկ վատը ամեն տեղ զղուելի է, լինի նրա գործողը վրացին թէ անզլիացին: Մինչդեռ 1877 թ. \*) այլ խօսքեր ենք լսում: «Դժուար է մեղանում մի որ և է հարց արծարծել, որովհետև ստիպուած ենք լինում այս կամ այն հասարակական անձնաւորութեանը դիպչել և նեղացնել ու թշնամիներ ձեռք բերել»: Անա այս իսկ հանգամանքը հէնց սկզբից ցցեց նեղ զրութեան մէջ լրագիրը և այդ պատճառով մարդ չի էլ իմանում թէ ինչի մասին զրի: Այս նեղ կացութիւնից ազատում է «Իվերիային» ոռւստածկական պատերազմը և տալիս է նրան զրելու պաշար: Պատերազմը վեր-

\*) «Իվերիան» 1877 լուս էր տեսնում շարաթը մի անդամ, 1879 թ. դարձաւ ամսագիր, իսկ 1886 ամենօրեալ թերթ:

ջանալուց յետոյ «Խվերիայի» գործը աւելի ևս դժուարացաւ. լրագիրը դառնում է անբովանդակ, լիքն է թղթակցութիւններով, իսկ առաջնորդողներ շատ քիչ կան և վերջապէս 1879 թ. լրագիրը խոստովանում է, որ լրջապատող կեանքի մէջ նիւր ը կայ էննելու եւ կարծիք յայտնելու: Բայց մի մոռացէք, որ միւս լրագիրը՝ «Դրօէբան» մի և նոյն ժամանակ շատ է գտնում նիւթ: Ի հարկէ նիւթ միշտ կայ, բայց իշխան ձափճավաճէն զիտմամբ լուսմ է և խունկ է ծխում բանկի տէրերի—իշխան ազնուականների առաջ. և նրանց դուր զալու համար գրում է մի յօդուած 1877 թ. «կեանք և կանոն» վերնագրով, որ ընդհատեց 6 Նոռում, յետոյ շարունակութիւնը տպեց 1879 թ. այսինքն տարի ու կէսից յետոյ, իսկ վերջացրեց հազիւ 1881 թուին: Այդ յօդուածներում, ի միջի այլոց, ասում է, որ գիւղական հիմնարկութիւնը պէտք է ծառայէ բոլորին անխոտիր, առանց բաժանելու ժողովրդին դասակարգերի, և թէ այդպիսի բաժանում վրացոց մէջ տեղի չէ ունեցել. այն ինչ այս և այն հարցը իշխ. ձափճավաճէն հակառակ կերպով է լուծում իր «Կակօ աւաղակ» վերնագրով գրուածի մէջ: Իսկ այժմ աս գրում է այսպէս, որովհետև իրերի գրութիւնն այդ էր պահանջում, ուրիշ կերպ գրել չէր կարող: Այդ տեսակ կացութեան մէջ իշխանը կամ պէտք է դադարացնէր լրագիրը և կամ ուրիշ ճար գտնէր: Նա մտածում է միանալ ուրիշ, աւելի ուժեղ, խմբագրութեան հետ. այդ խմբագրութիւնն էր «Դրօէբան»: Իշխ. ձափճավաճէի ցանկութեանը օգնեց հետևեալ դէպքը. ուռւս-տաճկական պատերազմի ժամանակ և. Նիկօլաձէն թողնում է «Դրօէբայի» խմբագրութիւնը և զնում պատերազմ. ուրեմն բանկիրների վաղուցուայ ցանկութիւնը—Նիկօլաձէին վոնդել «Դրօէբայի» խմբագրութիւնից, ինքն ըստ ինքեան իրագործում է. ուրեմն այն պատճէը, որ կար երկու խմբագրութիւնների մէջ, վերանում է: 1878 թ. պ. Նիկօլաձէն հիմնում է ոռուսերէն նոր լրագիր «Օճօրք» և սրանով աւելի ևս հեռանում է վրաց գրականութիւնից: Նիկօլաձէն իր լրագրի մէջ շարունակեց գրել վրաց հասարակական գործերի մասին և շատ անդամ ասում էր այն, ինչ որ օտարների առաջ չը պէտք է ասուէր. օրինակ, նա դիպաւ վրաց և հայ մամուլին, որ գրանք բաւարարութիւն չն տալիս ընթերցողին: Եթէ այդ գրուած լինէր վրացերէն, կ'անցնէր առանց ուշագրութեան, բայց որովհետև ոռւսերէն էր, այդ պատճառով դա առաջ բերեց մի լրագրական ընդհարում: Ս. Մէսիսին պատասխանեց «Դրօէբայի» մէջ. սրան հետևեց «Խվերիան». այս բանակուլը Նիկօլաձէին աւելի հեռացրեց «Դրօէբայից», իսկ Ս. Մէսիսիին մօտեցրեց «Խվերիային»:

1879թ. վերջը «Դրոէքրայի» խմբագիրը յայտնում է, որ այս երկու հրատարակութիւնները կը միանան և յոյս կայ գործն աւելի լաւ տանելու, քանի որ կ'աւելանան գրականական ոյժերը և հրատարակութիւնը՝ ապահոված կը լինի նիւթապէս։ Այդ միացումը, կամ հարսանիքը, ինչպէս «Օճօրք»-ն անուանեց, կատարուեց 1880թ.։

Միութիւնն ոյժ է միայն այն դէպքում, երբ միանում են միատեսակ, մի ուղղութեան ոյժեր. հակառակ դէպքում սա առաջ է բերում թուլութիւն. այսպէս էլ պատահեց միացած «Դրոէքրա-իվերիայի» հետո թէն Ս. Մէսիխն հաւատացնում էր, որ իր և «Իվերիայի» ուղղութեան մէջ զանազանութիւն չը կայ, սակայն գործը ցոյց տուեց ընդհակառակը։ «Դրոէքրան» իշխ. ձափնավաճէի օդնութեամբ մնեացաւ և մնծացրեց ծրագիրը, բայց կորցրեց իր առաջուայ զօրութիւնն ու անվախութիւնը։ «Իվերիան» ատում էր «Օճօրք»-ը և նրա խմբագրին, որովհետո նա էր իշխ. ձափնավաճէի մշտական հակառակորդը, բայց ոյժ չունէր մրցելու և այդ պատճառով էլ որոնում էր կողմնակիցներ, որ և գտաւ «Դրոէքրայի» մէջ, և միացած ոյժով նոյն 1880թ. 16 Ն մէջ պատերազմ յայտնեց Ն. Նիկոլաձէին՝ ուսնատակ տալով ու ծաղրելով «Օճօրք»-ին։ Իսկ երբ «Օճօրք»-ը դադարեց «Դրոէքրան» ուրախութեամբ աւետեց այդ լուրը և գամբանականի մէջ գրեց՝ «Օճօրք»-ը վերին աստիճանի եւրոպականացրած լրագիր էր, իսկ այդ բանը մեզանում պէտք չի գայ» և շարունակում է, թէ լրագիրը պէտք է ունենայ մանկավարժական կրթիչ բնաւորութիւն. նա ամեն մի նորութիւն ծամծմած պիտի տայ հասարակութեանը։ Եւ այս ասողը նոյն Ս. Մէսիխն էր, որ քիչ առաջ քարոզում էր եւրոպական լուսաւորութիւն և աշխատում էր այդ լուսաւորութիւնը պատուասել վրաց հասարակութեան վրայ։ Մի խօսքով միանալը տարաւ դէպի անկումն և այդ բանը ինքը «Դրոէքրան» զգալով, բաժնառեց «Իվերիայից» 1881թուին։

«Իվերիան» դարձեալ ընկաւ լեթարգիական քնի մէջ, բայց նրան այդ քնից զարթեցրեց «Դրոէքրան», որ սկսեց նորից քըննադատել բանկային գործերը. բայց նախ քան պաշտպանել բանկը, իշխանը նորից խօսում է իր ուղղութեան մասին, այն է՝ ծառայել հասարակական շահերին... Այնուհետև գալով բանկի գործերին, նա գովում է իրան և վատարանում է Քութայիսի բանկի կանոնադրութիւնն ու կառավարիչներին.. իսկ «Դրոէքրան», բաժանուելուց յետոյ, դարձեալ գնաց իր առաջադիմական ուղղութեամբ։

1882թ. «Իվերիա» ամսագրի երկրորդ խմբագիր նշանակուեց իւխ. Իվ. Մաչաբելին. ամսաթերթն իսկոյն ուժի-

դացաւ և իր կերպարանքն էլ փոխեց. այդ տարուայ Ն և Ն մէջ աւելի շատ են հրապարակախօսական յօդուածներ, թէն ոչ մէկի վրայ պարզ չէ երևում իվ. Մաշաբելու «ես»-ը, դէմքը. այլ երեսում է մի ուրիշ ձեռքի—իշխ. իլ. Ճավճավաձէի աղդեցութիւնը իլիա Ճավճավաձէի հովանաւորութեան տակ երիտասարդ Մաշաբելու տաղանդն ընկճուեց: Այդ վիճակին են ենթարկուել բոլոր այն գրողները, որոնք բախտի բերմամբ ընկել են իշխ. Ճավճավաձէի հովանաւորութեան տակ. 40 տարուայ ընթացքում ոչ մէկը չը կարողացաւ առանձին գրականական ոյժ դառնալ, ընդհակառակը ամենաքը մանրացան և հեռացան ասպարէզից: Անկասկած իվ. Մաշաբելին էլ այդ վիճակին կ'ենթարկուէր, եթէ նա 1883 թ. չը հեռանար «Իվերիայից» և յանձն չանձէր «Դրօէբայի» խմբագրութիւնը Ս. Մէսիսու մահից յետոյ:

Իվ. Մաշաբելին այսուեղ ցոյց տուեց իր հրապարակախօսական տաղանդը և տարաւ «Դրօէբան» այն մտրակող ուղղութեամբ, ինչպէս տանում էր առաջուայ խմբագիրը: Զը մոռանաք մի հանգամանք, որ թէն Մաշաբելին էլ ծառայում էր բանկումը և գտնւում էր իշխ. Ճավճավաձէի ձեռքի տավ, սակայն նա իր գրօշակը բարձր է պահում և չէ դադարեցնում բանակոփէր «Իվերիայի» հետ: «Դրօէբայի» վրայ չէ նկատում, թէ նրա խմբագիրը բանկի դիրեկտոր է: Նա միստեսակ անխնայ քննադատում է թէ այն հիմնարկութիւնը, որտեղ ինքն է ծառայում և թէ ուրիշները. միով բանիւ իվանէ Մաշաբելին այս կարծ խմբագրութեան ժամանակամիջոցում (1883—1885, երբ «Դրօէբան» դադարեց) ցոյց է տալի իրան իր իսկական տոկուն, եռանդու և տաղանդաւոր ժողովնական ուժութեան էր խմբագիր, բայց իր գլուխը զոհեց բոլորովին ուրիշ բանի:

1885 թ. «Իվերիան» բոլորովին ուժասպառ է լինում և գանգատում ինքն իր անբովանդակութեան վրայ, գրելու նիւթ չը լինելու վրայ, մի խօսքով կրկնում է այն, ինչ իշխ. Ճավճավաձէն ասաց 1863 թուին իր առաջին դրականական փորձը դադարեցնելու ժամանակ:

Բայց յոյսի ճառագայթը նորից է ծագում «Իվերիայի» համար. 1885 թ. «Դրօէբան» դադարաւմ է և վրաց հասարակութիւնը մնում է առանց լրագրի. դրանից օգտուում է իշխ. Ճավճավաձէն և իր ամսագիրը 1886 թ. յունուարից դարձնում օրաթերթ, թողնելով հին վերնագիրը—«Իվերիա»:

Այդպիսով մէկի գժրախտութեամբ բախտաւորում է միւսը. «Դրօէբայի» մահը կեանք է տալի «Իվերիային», որ դառնում է ոչ միայն միակ օրաթերթ, այլ և միակ հրատարակութիւն վրաց հասարակութեան համար, որի կարծիքը, հոգսերն ու ներքին

կեանքը պէտք է արտայայտէր «Խվերիան»։ Ո՞վ ուզում էր գրել, կամ մի կարծիք յայտնել—այդ պէտք է անէր «Խվերիայի» միջոցով։ գուցէ գուք գրելու ընդունակութիւն ունենայիք, բայց այդ բանը «Խվերիայի» սրտովը չէր, գուք կը ոչնչանայիք, և ընդհակառակը՝ ոչ մի ընդունակութեան տէրը՝ ընդունակ կ'երևար. ընթերցողը պէտք է ամեն բան տեսնէր և կարդար «Խվերիայի», մէջ, նրա հաւանածը հաւանէր և նրա պախարակածը—պախարակէր։ Սյդպիսով «Խվերիան», իբր միակ գրականական և քաղաքական հրատարակութիւն, դարձաւ իր տիրոջ ձեռքում մի ուժեղ զինք. իշխ. Ճավճավաճէն ձեռք բերաւ վրաց հրատարակութեան մօնոպօլիան. մամուլը—«Խվերիան» է, «Խվերիան»—մամուլն է, որովհետեւ ուրիշ ոչ մի տեսակ հրատակութիւն գոյութիւն չունի. և սա իշխում է եօթը-ութը տարի վրաց հասարակութեան մէջ։

Ամենօրեայ «Խվերիան» ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամսագրի արունակութիւնը. այսուեղ էլ առաջնորդողում կրկնում է այն, ինչ որ առաջ. մի հարց է աւելացնում՝ ումը ծառայել—ժողովրդին թէ ինտելիգենցիային. եթէ գոհացնել մէկին, միւսն է անբաւական մնում. ուրեմն պէտք է ծառայել երկուսին միաժամանակ, իսկ եթէ այդ բանը չաջողուի՝ առաւելութիւն տալ ժողովրդին։ Ուրեմն, լրադրի ցանկութիւնն է—ժողովրդին մատչելի դառնալ, իսկ զրա համար հարկաւոր է թափանցել ժողովրդի ներքին կեանը, պարզել զանազան կենսական հարցերը, հոգ տանել նրա հոգսերի վրայ. բայց դա բաւական դըժուար գործ է, որից փախչում է «Խվերիան» իր սկսուելու օրից։ «Խվերիայի» բնաւորութիւնը լաւ է որոշում Նիկօլաձէն 1877 թ.:—«Խվերիան», ասում է նա, զրում է տափակ, ծանր, հին արծարծուած հարցերի մասին երկար ու բարակ, այնպէս որ ընթերցողը գծուարութեամբ է հասկանում զրողի յայտնած միտքը. ամենահետաքրքիր հարցերը լուծելիս իր ամբողջ ջանքը զործ է ածում տարրական միտքը հաստատելու համար։ 1886 թ. դարձեալ սկսում է «Խվերիայի» մէջ բանակոփւ Դ. Դիփիանու և Ճավճավաճէի մէջ բանկի վերաբերեալ, և երբ վերջանում է այս կոփւը, հանգստանում է և «Խվերիան»։ Յետոյ նորից ըսկում է արշաւանք Մաշարելիի և նրա խմբի դէմ 1891 թուին։ Բանկից գուրս նրա գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է զիւղական գործերի վրայ. նա Վրաստանում տեսնում է միայն գիւղ և եթէ զիւղն է ճանաչուած ներկայ ժողովրդեան հիմնաքարը, ուրեմն և զիւղասնտեսութիւնը պէտք է ընդունուէր նոր կեանքի հիմք. «Խվերիան» վրաց ազգի փրկութիւնը զիւղասնտեսութեան մէջ է որոնում նա առաջարկում է կապիտա-

լիզմի դէմ մրցելու։ Շարունակ յօդուածներ է գրում գիւղատընտեսական ուսման մասին և ցանկութիւն է յայտնում աղնուականների ուսումնարանը դարձնել գիւղատնտեսական դպրոց։ Մի խօսքով «Խվերիան» իր գրօշակի վրայ գրեց «միմիայն գիւղ»։ Եւ եթէ ժողովուրդը հաւատար նրա քարոզներին և ընթանար նրա ծրագրով ու տեղափոխուէր քաղաքներից գիւղը, նա այժմ կը լինէր կորստեան ափին և կը մնար անկիրթ։ Բայց ժողովուրդը չը լսեց նրան։

Բանկիրներից հիմնուած «Խվերիան» զբաղուեց միայն բանկով և այդ պատճառով էլ ժողովուրդի զարգացման գործը յետ մղեց տասը տարով։ լրագիրը ուշագրութիւն զարձրեց միայն ժողովրդական գրադարանների վրայ, այն էլ մի գիւղական ուսուցչի նախաձեռնութեամբ։ իսկ այնպիսի կարևոր հարցեր, ինչպէս են՝ պատմութեան և հնութեան ուսումնասիրելը, լրագրի համար գոյութիւն չունէին։ «Խվերիայի» առաջնորդողների նիւթըն է գլխաւորապէս բանկը, գիւղը և գիւղական հարցեր, և այս հարցերի վերաբերմամբ գրում էր ոչ միայն ինքը, այլ և գրել էր տալիս նաև նրանց, որոնք միացան «Խվերիային», վրաց միւս լրագիրների գաղաքելուց յետոյ։ Առաջնորդողների թիւը մեծանում է մանաւանդ՝ 1886—1889. այնուհետև լրագիրը թուլանում է, օրինակ 1891 դուրս է եկել 277 հ. 65 առաջնորդողով, որոնցից միայն 14 պատկանում է խմբագրին, իսկ մնացած՝ աշխատակիցներին։ իսկ 1892 թ. 80 յօդուածից 10 խմբագրինն է։ Հետզհետէ խմբագիրը քիչ է մասնակցուց և բաւականանում է նրանով, որ սրա մաքերը քարոզում են ուրիշները. բայց ամրող Վրաստանը չէր կարող մոռածել և գրել այնպէս, ինչպէս մոռածում և զրում էր «Խվերիան»։

Կարծիքների և ուղղութեան տարբերութիւնը կեանքի շարժման և զարգացման հիմնական յատկութիւնն է և միթէ այս յատկութիւնից զրկուած էր վրաց հասարակութիւնը։ Ի հարկէ ոչ։ Եւ ահա այդ շարժումը քանդեց «Խվերիայի» մօնօպօլիան և լոյս հանեց երկու նոր հրատարակութիւն։ 1893 թ. սկսուեց «Կվալի» շաբաթաթերթը, իսկ 1894 թ. «Մօսմբէ» (համբաւաբեր) ամսաթերթը։

---

«Կվալին», ի հարկէ, պէտք է մրցէր «Խվերիայի» հետ, որ ոչնչացնէր նրա մօնօպօլիան։ Այդպէս էլ եղաւ. նա դարձաւ վրաց հասարակութեան այն շրջանի օրգանը, որոնք համամիտ չէին «Խվերիայի» հետ։ «Կվալիի» մէջ խմբուեցին ընդդիմադիր կուսակցութեան ներկայացուցիչները. նրա գրօշակի վրայ գրուեց՝ «կարծիքների աղատութիւն»։

Առաջին հարցը, որի վերաբերմամբ վէճ բարձրացաւ նրա և «Խվերիայի» մէջ, վրաց ազնուականների ուսումնարանն էր:

«Խվերիան» այժմ էլ, ինչպէս և եօթը տարուայ ընթացքում, քարոզում էր վրաց ազնուականների դպրոցը դարձնել գիւղատնտեսական, որովհետո գիւղատնտեսութեան մէջն էր գտնում ժողովրդի փրկութիւնը. նա իր առաջնորդողում ասում էր (1893 թ. №-127). «Ես ինքս համալսարանական եմ և եթէ ինձ վաղը ծառայութիւնից արձակեն, քաղցած կը մեռնեմ»:

Բայց «Կվալին» նրան պատասխանում էր, որ հասարակութեանը հարկաւոր են գիտութիւնով զինուած մարդիկ, իսկ գիւղատնտեսութիւնը կազմում է առաջադիմութեան մի աստիճանը: Ահազին վէճ բարձրացաւ այս հարցի առթիւ և վերջը յաղթանակը տարաւ «Կվալին». 1895 թ. ազնուականներից ընտրուած մասնաժողովը որոշեց դպրոցը փոխել կլսաթիւականի:

«Խվերիան» այստեղ էլ ուզեց վախեցնել, ասելով՝ թէ բանկը այդ տեսակ գումարներ չէ կարող տալ առժամանակ իր դիմիդէնդից. բայց այս սպառնալիքը ոչ ոքի վրայ չազդեց, ուսումնարանը փոխեցին կլսաթիւականի, բանկը տալիս է ամեն տարի փող և ուսումնարանը չուտով էլ կ'ունենայ սեփական շինութիւն. իսկ եթէ լսէին իշխանին, ուսումնարանն այժմ հոգեվարք դրութեան մէջ կը լինէր:

«Կվալին» այս հարցի մէջ հակառակ էր և գրանով էր կանադանում «Խվերիայից», իսկ մնացած հարցերում առաջի տարուայ ընթացքում այնպիսի շօշափելի զանազանութիւն չէր ներկայացնում: «Խվերիան» էլ կարծես սթափուեց և յետ չէր մնում ժամանակի պահանջից. գրում էր աղնուականների պարտականութեան մասին, որի վերաբերմամբ տարիների ընթացքում լուել էր: Ժամանակի ընթացքում քննադատական ողին մեծանում է և այդ բանին նպաստում է «Կվալին»: Իսկ 1894 թուին «Մօսմբէ» նոր ամսագիրը իր առաջին համարում սկըսում է համարձակ խօսել այն բանի մասին, ինչի մասին երբէք չէր խօսել «Խվերիան». նա ուշագրութիւն է դարձնում երկրի և վրաց աղդաբնակութեան Տեսեսական կողմի վրայ: «Մօսմբէն» իշխան ծագմալաձէի հակառակն էր քարոզում և պնդում էր, որ վրացին չը պէտք է սկարագի միայն գիւղատնտեսութեամբ, այլ եւ լանառականութեամբ և ժողովրդի բարեկեցութիւնը տեսնում էր դրա մէջ: Այստեղ հանգէս է գալիս նորից պ. Նիկոլաձէն, որ 1879 թուից հեռացել էր վրաց մամուլից: Սա պաշտպան է հանդիսանութեամբ այդ նոր գաղափարին, բայց մի և նոյն ժամանակ բոլորովին չէ հեռանում հնից և իր ամեն յօդուածում պ. Նիկո-

լուծէն աշխատում է նստել երկու աթոռի վրայ: Հէնց այդ դրութեան մէջն էր և ամսագիրը. իսկ Նիկոլաձէի հեռանալուց յետոյ (1895 թ.) «Մօամբէն» թեքում է դէպի հին ուղղութիւնը և չոքում է «Իվերիայի» առաջ:

«Կվալին» աշխատում էր թողնել հին ընթացքը և մօտենալ նորին, իսկ «Մօամբէն» հակառակն էր անում: «Կվալին» առաջ էր գնում, ազատ տեղ էր տալի ամենքին գրելու, և դուք տեսնում էք 1895 և յետագայ թուերին բոլորովին նոր անձնաւորութիւններ, որոնք ուշադրութիւն դարձրին կապիտալիզմի վրայ, ուսումնասիրում էին ժողովրդի տնտեսական հարցերը: Այդ ուղղութիւնը մեծ վիճարանութիւն առաջ բերեց «Իվերիայի» և «Մօամբէն» մէջ, որոնք ապացուցանում էին, թէ կապիտալիզմը տեղի չէ կարող ունենալ վրայ կենաքում: իսկ թէ գրանցից ով տարաւ յաղթանակը, այժմ յայտնի է, քանի որ կապիտալիզմը գոյութիւն ունի վրաց մէջ և առաջ բերաւ որոշ շարժում:

Այսպիսով «Իվերիայի» մօնօպօլիան ջնջուելով, առաջ են դալիս նոր մաքեր: Վրաց մամուլը զբազւում է տնտեսական և քաղաքական հարցերով. ժամանակակից զաղափարները հետզհետէ տարածում էին հասարակութեան մէջ և յոյս կար, թէ այդ բոլորը երկար վիճարանութիւնից յետոյ կ'ընդունուէր վրաց գրողների կողմից, բայց այդպէս չեղաւ. հին գրողները վախենալով «Ավալիի» համարձակ հարցերից, յետ քաշուեցան և իրանց հետ քաշեցին նաև երիտասարդներից շատերին: Այս հին ուղղութեան օրդանն է «Իվերիան», իսկ պաշտպանը «Մօամբէն». մինչդեռ «Ավալին» ընդ միշտ թափ տուեց հին փոշին և կանգնեց նոր ձանապարհի վրայ:

Դ. Մ.

(Աերջը միւս եամարում)

## ՓՇՐՈՒԱԾ ԾԱՂԿԱՆՈԹ

(Ապուխտան)

Անփոյթ դիպար ք հովհարով անօրին,  
Ուր ծաղիկը պահում էիր դու բնենյ։  
Անօրը ճամփեց, բայց աննկատ բնալին...  
Այն օրից դէս շատ չի անցել,—անզգոյց  
Քո մանկական անհոգ խաղը մռացուեց.  
Իսկ անօրին սպառնում է դեռ աղէս։  
Զուրը գնաց, եւ ծաղիկը բառամեց...  
Ա՞հ, մի՛ դիպչիր, փերուած է նա յաւէս։

Այդպէս եւ դու դիպար սրշին ք ձեռքով,  
Ու ես պահում, սիրում էի ողջ հոգով,  
Ու այն օրից վիրաւորուած սրշին մէջ  
Մնաց մի հետք անջնջելի եւ անչէց։  
Առաջուայ պէս նա բարախում, ապրում է,  
Առանձնացած միւս իր գաղտնի վետի հետ։  
Բայց վերքն է խո՛ր, եւ օրէցօր անում է...  
Ա՞հ, մի՛ դիպչիր, փերուած է նա յաւէս։

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

# Ա.ՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Առողջապահական եշխոր)

## IX

### ԱԼԿՈՀՈԼԻԶՄ ԵՒ Ա.ՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ալկոհոլը բայն է. —Ալկոհօլիզմ կամ երկարատև քունաւորումն. — Ալկոհօլիզմից առաջացած վնասները. — Արքեցողի սերունդը. — Ցանկալի՞ է արդեօք ամուսնութիւն ալկոհօլիկի հետ. — Ժառանգական ալկահօլիկներ. — Ի՞նչ պայմաններում ալկոհօլիկները եւ երանց սերունդը կարող են ամուսնանալ:

Ալկոհօլը, սպիրտը կամ ոգին թոյն է և այնպիսի մի թոյն, որ հարուածում է մեր ամբողջ կազմուածքը, իսկ երկար գործածութիւնից առաջանում է ընդհանուր թունաւորումն: Թունաւորութիւնը լինում է սուր և յարատեւ: Սուր թունաւորութիւնը իսկական արքելն է:

Սակայն մարդիկ կարող են խմել ու թունաւորուել առանց արբելու. — այդ նրանք են, որոնք ամեն օր սովորութիւն են արել իրանց համար օրոշ քանակութեամբ գինի-արագ գործ ածել, թէկուզ իսկի չարբեն էլ:

Ժողովրդի մէջ այն կարծիքը կայ, թէ միայն արբել է զնաս, իսկ քանի մարդ չէ արբել — ոչինչ:

Այդ մի մեծ և կորստարեր սխալ է:

Մի մարդ, որ ամեն օր կամ յաճախ է խմում, նա կամաց-կամաց, դանդաղ կերպով թունաւորում է իրան, թէ ինքն իսկի ոչ մի անյարմարութիւն էլ չզգար. այդպիսիների կլանած սպիրտի քանակութիւնը տարուայ

ընթացքում ահագին է լինում \*): Հարուստ կովկասն արտադրում է մեծ քանակութեամբ գինի և օղի, որից մի մասը արտահանուում է, իսկ մեծագոյն մասը ծախսում է երկրի մէջ:

Դատ հետաքրքրական է իմանալ, թէ որչափ սպիրտ է ընկնում կովկասում իւրաքանչիւր բնակչին: Այդ քանակութիւնը ճիշտ որոշուած չէ, բայց մի քանի պաշտօնական տեղեկութիւնների նայելով, նա հաւասար է ամսական մի վեցրօի: Ուրեմն կովկասաբնակ չափահաս քրիստոնեայ բնակիչը (մահմեդականները, իբրև ըլ խըմողներ, հաշուի չեն առնուած) կլանում է տարին 12 վեդրօ մաքուր սպիրտ, գուցէ և աւելի:

Այդ մի չափազանց մեծ քանակութիւն է, և այդշափ թոյնը լցւում է մեր արեան մէջ, որ նրան տանում, տարածում է մեր կազմուածքի բոլոր անկիւնները: Այսպիսով թոյնը դիպչում է ամեն տեղ, գրգռում է, այրում ու հիւանդացնում մեր բոլոր գործարանները, մեր բոլոր մարմնամասերը—սկսած ստամոքսից մինչեւ ուղեղը:

Ցայտնի է, որ արբածը փսխում է. այդ նշան է ստամոքսի գրգռման: Եթէ խմիչքի քանակութիւնը մեծ չէ, խմողը չէ փսխում, բայց այսուամենայնիւ նրա ըստամոքսը գրգռում է, և ճշմարիտ որ, յարատել խմողը իր ամբողջ կեանքում տանջում է անմարսութիւնից, փորացաւերից:

Շուտով ակներև են լինում լերգի հիւանդութեան նշանները. առաջ է գալիս դեղնութիւն, ջրգողութիւն և այլն:

Շրջելով արեան հետ սրտի ու արեան անօթների մէջ (երակներում ու չնչերակներում), սպիրտը յարատել կերպով գրգռում է այլ գործարանները. սիրտն ու ա-

\*.) Ֆրանսիայում մի բնակչի ընկնում է 7, 7 միոր անարատ ալկօհոլ, Դանիայում—6, 2, Գերմանիայում—4, 4, Աստրիայում 4, 3, Բուսիայում 3, 3, Եվրոպայում 3, Խոտանիայում 1, 4, Անգլիան խմիչքների վրայ ծախսում է 84 միլիոն ֆունտ-ստերլինգ, Գերմանիան 21/2 միլեարդ մարկ, Բուսիան—400 միլիոն սուրբի:

նօթները հիւանդանում են, արեան շրջառութիւնը անկանոն է դառնում և առաջացնում է շնչարգելութիւն, ուռուցուրութիւն, երակների պայմանում ուղեղի մէջ—որից կաթուածներ, անդամալուծութիւններ և մահ:

Սպիրտը դուրս է մղւում մեր օրգանիզմից շնչառութեան միջով (ուրեմն նա հարուածում է նաև թոքերը) ու երիկամունքների (պլոճիկների) միջով (մէղի հետ): Այնպէս որ այդ գործարանները ևս անդադար գրգռուման ու բորբոքման մէջ են, մանաւանդ երիկամունքները, որոնց բորբոքումն առաջացնում է միզարգելութիւն, ջլրգողութիւն, ուռուցուրութիւն և այլն:

Ահագին ազդեցութիւն ունի ալկօհօլը նոյնպէս և ուղեղի վրայ: Խմողի բոլոր հոգեկան բարձր յատկութիւնները նուազում են, կամքի ոյժը թուլանում է, ինքնազսպումն անհետանում և մարդ գերի է դառնում թէ իր սեփական կրքերին և թէ շրջապատող հանգամանքների ազդեցութեան: Նրա մուաւոր ոյժը ճընշուած, թուլացած են, ընդունակութիւնները բթացած, բարոյական սկզբունքները նուազած կամ կորած: Այսպիսով ալկօհօլը հասցնում է մարդուս ընդհանուր ներվայնութեան, առաջացնում է զանազան ուղեղային ու ողնուղեղային հիւանդութիւններ (կաթուածներ, մոլութիւններ, խելագարութիւն), կամ դարձնում է նրան անբարոյական, յանցաւոր ու եղեռնագործ, ծոյլ ու անբան:

Այսպիսով ճշտում է մեր ասածը: — ալկօհօլը ուղղակի քայքայում է մեր ամբողջ կազմուածքը:

Այս դիտելիքը չափազանց մեծ կարևորութիւն ունի մեզ զբաղեցնող ամուսնութեան տեսակէտից:

Այն, ամբողջ կազմուածքը ընդհանուր թունաւորման հետքեր է կրում իր վրայ:

Արքեցողի ամբողջ մարմինը կարծես խոխոմուած է թոյնի մէջ: Նա նիհարում է, ուժակորուստ լինում, կորցնում է իր աշխոյժը, իր տոկունութիւնը, կորցնում է իր դիմացկոտութիւնն ու կենսականութիւնը, և ենթակայ է լինում ամեն տեսակ հիւանդութիւնների, ու

րոնցից ամենաթեթևն անդամ կարող է բարդուել ու սպանիչ ելք ունենալ. վարակիչ համաճարակ հիւանդութիւնների (խօլերա, ժանտախտ, ինֆլուէնցա) առաջին զոհերը ալկօհօլիկներն (արկօհօլով թունաւորուածներն) են:

Սա մի ընդհանուր օրդանային քայլքայումն է, որ յաճախ գինեմոլներին հասցնում է կենսասպառման ու բարակացաւի: Այս տեսակէտից ալկօհօլիկմը նոյնչափ աւերիչ ազդեցութիւն ունի ամբողջ կազմուածքի վրայ, որչափ սիֆիլիսն ու բարակացաւը. իսկ մենք գիտենք, (տես. գլ. ՎՊ. Ժառանգականութիւն), որ այդ հիւանդութիւնների սազմերը, որոնք հարուածում են ծնողների ամբողջ կազմուածքը, անցնում են ժառանգաբար զաւակներին:

Դրանով է բացատրում այն զօրեղ ժառանգական ոյժը, որ ունի ալկօհօլիկմը սերնդի վրայ:

Թունաւորուած օրդանիկմն անկարող է առողջ սերունդ արտադրել և ալկօհօլամոլի երեխաները կրում են իրանց վրայ ծնողների աւերիչ կնիքը:

Որդիքը սարսափելի կերպով տուժում են իրանց ծնողների և պապերի մեղքի համար:

Մի նշանաւոր բժիշկ ասում է հետևեալը.

«Արբեցողի սերունդը ոչ միայն թոյլ է ընդունակութիւններով, այլև բարոյական ու մտաւոր այնպիսի մի ողորմելի դրութեան մէջ է լինում, որ անկարող է դառնում ինքն էլ սերունդ ունենալու, և այդպիսով արբեցողի ցեղն սպառւում է»:

Մի ուրիշ գիտնական այսպէս է խօսում.

«Ալկօհօլիկմը մի պատուհաս է արդի հասարակութեան գլխին: Բարոյական տեսակէտից—նա ապականում, նսեմացնում և ապուշ է դարձնում մարդուն. Ֆիզիկական տեսակէտից—հարուածում է մարդու կազմուածքը և վատացնում գլխաւոր գործարանների գործունէութիւնը. սերնդի տեսակէտից—նա վատթարացնում է և ամուլ դարձնում»:

«Ալկօհօլիկը, ասում է բժ. Կազալիս, իր սեփական անձին, իր ընտանիքին, իր ծանօթներին ու շրջապատող՝ ներին վտանգաւոր լինելուց զատ, կործանում է նաև իր սերունդը։ Եւ, յիրաւի, նա արտադրում է ժառանգական արքեցողներ, որոնց մի ներքին, անդիմադրելի ոյժ մղում է դէպի այդ թոյնը. նա ծնունդ է տալիս քիչ թէ շատ ներվային արարածների, ներվոպատների, կամ նոյն իսկ ուղեղի ու առհասարակ ներվային սիստեմի օրգանական ֆլամների ու հիւանդութիւնների տէր սերնդի։

«Ալկօհօլիկի ժառանգները նոյնպէս թունաւորուած են դուրս դալիս, ինչպէս բարակացաւուինն ու սիֆիլիսուինը։

«Ամենից առաջ պէտք է յիշենք սաղմի հիւանդական կազմութիւնը. —ալկօհօլիկմը, ինչպէս և սիֆիլիսն ու բարակացաւը, սաղմասպան թունաւորումն է։ Բրետանի դեպարտամէնտում երկուներեք սերնդից յետոյ շատ ընտանիքներ սպառուել են ալկօհօլիկմից։ Բայց միայն Բրետանում չէ, որ նա աւերումներ է գործում։ պղծել է շատ երկրներ, օրինակ Պրօվանսը, որտեղ անյայտ էր առաջ, և որտեղ բնիկները շատ սակաւ էին խմում այն գինուց, որ առատօրէն տալիս է այդ նահանգը։

«Այնուհետեւ արբեցողի սերնդի մէջ մենք գտնում ենք այն արատաւորութիւնները (որ յիշել ենք սիֆիլիսի մասին խօսելիս), այն է. —աճման դանդաղութիւն, շեղումներ և վրիպումներ օրդանիզմի կանոնաւոր զարգացումից. օրինակ, մանկանմանութիւն, զանազան ֆիզիկական անկանոնութիւններ (գանգի անհամաշափութիւն, փոքրագլխութիւն կամ գլխի ջրգողութիւն). բացի այդ, նրանց մէջ նկատում են մտաւոր ու բարոյական անկատարելութիւն (թոյլ բանականութիւն, խելապակասութիւն, ապուշութիւն) և մի առանձին տրամադրութիւններ և այլն։

«Հիսուերիա և զգացողական ու հոգեկան շեղումներ չափագանց յաճախ են պատահում ալկօհօլիկների սերընդգի մէջ. դրանց հետ միասին նաև ընդունակութիւնների անհաւասարաշափութիւն, ուշադրութեան պակասութիւն, թուլակամութիւն կամ անդիմադրելի կրքային առաջնումներ (իմպուլս), ծայրայեղ բարոյականութիւն կամ անբարոյականութիւն, վաղաժամ դարթած հեշտասկիւթիւնների Յանցագործների ստատիստիկան մի կապ է ենթագրում երիտասարդների, պատանիների, նոյն իսկ երեխանների յանցանքների թուի աւելանալու և ալկօհօլիդի տարածման մէջ»:

«Բայց ասածներովս չէ սպառւում ալկօհօլիկների ժառանգների այլասեռումն.—Տուքերկովոզը (բարակացաւը) սպառնում է և յաճախ հարուածում նրանց մատաղ հասակում և թոքախտը վերջ է տալիս այդ հիւանդների, այդ վատասերուածների ողորմելի կեանքին: Ո՞րքան էլ ցաւալի լինի այս վախճանը, բայց և այնպէս ցանկալի է, որ այդ հիւանդութիւնն ստացած անհատները անհետանան, որպէս զի չը բազմացնեն ցեղի մէջ այլասեռուածների, արատաւորների թիւը, մտաւորապէս ու ֆիզիկապէս նսեմացածների սերունդները, որոնք ոչ միայն լցնում են գժատները, յիմարանոցները կամ բանտերը, այլև գեր են խաղում քաղաքական աշխարհի մէջ, գրականական ու գեղարուեստական շրջաններում, և որոնք բոլորն էլ ծանր բեռն են գառնում հասարակութեան վզին իրանց ապրելու անընդունակութիւնով, իրանց գատարկաշրջիկութեամբ, իրանց կրաւորական դիրքով, իրանց վասարերութեամբ և ողորմելիութեամբ իբրև վրիպածներ և անզօրներ, որոնք ամենուրեք և միշտ հանդիպում են անաջողութեան, մնալով միշտ սպառնացող ու միշտ վասակար հասարակութեան համար»:

Ցանկալի է արդեօք, որ այսպէս արատաւորուած, այլասեռուած սերունդը բարդաւածի, և հնարաւոր է

արդեօք երջանկութիւն ալկօհօլիկ ընտանիքի մէջ։

Հնարաւոր է արդեօք ընտանեկան խաղաղ կեանք այն ամուսնութեան մէջ, որտեղ ինքը ամուսինը կամ արբեցող է և կամ կրում է իր վրայ ժառանգական ալ-կօհօլիզմի կնիքը. ամուսնութիւն, որ կամ անպտուղ պիտի մնայ, կամ պիտի արտադրէ կիսախելեր, ու-պուշներ, ընկնաւորներ, գինեաների, բանտերի ու աբ-սորի ապագայ թեկնածուներ։

«Աղիկները,—ասում է Ռիբբինդ, յաճախ վստահա-նում են իրանց ձեռքը տալ այնպիսի մարդուն, որոնք խսկապէս վատ մարդիկ չեն, բայց արբեցողներ են, և այդ անում են այն յոյսով, թէ կարող կը լինեն ուղղել ի-րանց ապագայ ամուսիններին, նրանց ետ պահել այդ ախտից։

«Յաւակցաբար այդ բանը միշտ չէ աջողւում։

Ճշմարիտ է, մի առժամանակ նորապսակը թող-նում է խմելը, բայց կիրքը նորից զարթնում է նրա ներսում և արբեցողը վերադառնում է գինետուն։

---

Ահա այն վտանգները, որոնք կապուած են արբե-ցողների ամուսնութեան հետ։ Ո՞չափ ուրեմն զգոյշ պիտի լինեն ծնողները, երբ պատրաստում են իրանց երեխաներին պսակելու մի արբեցողի կամ արբեցողի որդու հետ։

Պէտք է միշտ յիշել, որ արբեցողութեան կիրքը մի հիւանդութիւն է, որից բժշկուելը շատ դժուար է։ Ֆրանսիական առածն ասում է. qui a bu, boira (ով սո-վորած է խմելու, նա միշտ կը խմի)։

Չը պէտք է մոռանալ և այն, որ արբեցողի որդին կարող է ժառանգել հօր ախտը, ինչպէս թոքախտառ-ուի զաւակը—թոքախտ է ժառանգում։ Այս ժառանգա-կան արբեցողների, այս դիպումանների մէջ արբեցու-թեան կիրքը նոյնպէս մի սոսկալի, համարեա անբու-ժելի հիւանդութիւն է դարձած։

Ասածներիցս երեռում է,

1) Արբեցողը, իսկական ալկօհօլիկը, չը պէտք է ամուսնանայ:

2) Չը պէտք է ամուսնանայ նոյնպէս և ալկօհօլիկի որդին, եթէ ինքն էլ ժառանգական արբեցող է, նոյն իսկ եթէ մի առժամանակ դադարած լինէր խմելուց, ուրովհետև կիրքը կարող է նորից բռնկել:

3) Չը պէտք է մոռանալ, որ ալկօհօլիկի զաւակը կարող է արբեցող էլ չը լինել, բայց այնու ամենայնիւ կրել ժառանգական արատներ ու տրամադրուած լինել դէպի բարակացաւ, թոքախտ:

4) Բոլորովին առողջ մարդը, որ թէկ մի ժամանակ արբեցող է եղել, բայց երկար միջոց թողել է խըմելն ու լրջակեաց կեանք է վարել, կարող է լաւ ամուսին լինել և լաւ սերունդ արտադրել:

5) Ալկօհօլիկի զաւակները, որոնց վրայ ժառանգական ալկօհօլիկմի ոչ մի նշան չէ երեռում և որոնք արամադրութիւն չունեն դէպի արբեցողութիւն, նոյնպէս պիտանի են ամուսնութեան համար:

## X

### ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶ (ԲԱՐՍԿԱՑԱԿԻ) ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Տուբերկուլօզի տարածումն եւ նրա զոհերի թիւը.—Նրա առայայտութիւնները.—Սա մի վարակիչ ու ժառանգարաւ փոխանցնող իիւանդուրիւն է.—Վարակիւմն ամուսնութեան մէջ.—Թոռքախտի նօանները.—Նրա նօանակութիւնը ամուսնական կիանի մէջ.—Նրա տւերի ազդեցութիւնը սերենդի վրայ.—Բարակացաւուի ու նրա զաւակների ամուսնութեան խնդիրը:

Տուբերկուլօզ, սիֆիլիս, ալկօհօլիկմ,—ահա այն երրորդութիւնը, որ կազմում է մարդկութեան երեք գլխանի ճիւաղը: Բայց այս ճիւանդութիւններից ոչ մէկը այնչափ աւերիչ զօրութիւն չունի, որչափ բարակացաւը \*): Մոսկալի կոտորած է անումնաւ: Բոլոր մահուան

\*.) Տուբերկուլօզ մենք թարգմանում ենք բարակացաւ բառով.

դէպքերի  $\frac{1}{6}$ , մի քանիսների կարծիքով, նոյնիսկ  $\frac{1}{5}$ -ը, գոնէ եւրոպական երկներում, բարակացաւից է առաջանում:

Միայն ֆրանսիայի մէջ տուբերկուլոզից մեռնում են տարեկան 150,000 հոգի. ուրեմն 27 բնակչից մէկը:

Եւ առհասարակ տուբերկուլոզը հարուածում է երիտասարգներին բեղմնաւորութեան շրջանի մէջ. ուրեմն նա արբեցողութեան հետ միասին կազմում են ազգաբնակութեան նուազման գլխաւորագոյն գործօնները»:

Եւ այս սարսափելի, անողորմ ցաւը մի տղուկ է դառել, որ ծծում է մարդկութեան արիւնը և որ բացի այն, որ հարուածում է անհատներին, իր աւերիչ ազդեցութիւնը տարածում է սերունդների վրայ եւս:

Այսպիսով բարակացաւը հանդիսանում է իբրեւ մի ահոելի թշնամի, որ աւելի մեծ զոհեր է տանում; քան ամենասարսափելի համաճարակ հիւանդութիւնները — խոլերան կամ ժանտախոր: Եւ յիրաւի, տուբերկուլոզը մի զօրեղ ժառանգական ախտ է: Ֆրանսիայում յիշած 150,000 բարակացաւուներից 50,000 բարակացաւու ցեղից են. ուրեմն այս հիւանդների  $\frac{1}{3}$ -ը ժառանգական հիւանդներ են:

Տուբերկուլոզը հարուածում է մեր մարմնի բոլոր մասերը, գլխաւորապէս օսկորները, ներքին բոլոր գործարանները, թաւթագեղձերը, ուղեղը և այլն, և ամենից յաճախ թոքերը, կազմելով զարհուրելի քոքախասը: Մենք չենք կարող նկարագրել այստեղ բարակացաւի բազմատեսակ արտայայտութիւնները:

Մենք ասացինք, թէ տուբերկուլոզը երկու սարսափելի յատկութիւններ ունի.—նա վարակիչ ու ժառանգական նիւանդութիւն է: Այսպէս, մի բարակացաւու մարդ ամուսնանալով, սպառնում է թէ իր կնոջը և թէ իր սերնդին:

Երևանում նրան կոչում են նաև ձիերք: Շատերը Տուբերկուլոզ սխալ թարգմանում են բռնախա, բայց թռչախտը տուբերկուլոզի արտալատութիւններից մէկն է միայն:

Թոքախտաւորի խորխի մէջ գտնւում են անհամար միկրօբներ (բացիներ), որոնք կարող են որ և է կերպով (կամ կերակրի հետ, կամ փոշու հետ) մտնել առողջի բերանը, այնտեղից արեան մէջ, բազմանալ—տարածուել մարմնի մէջ ու վարակել նրան:

Հասկանալի է, թէ ինչ հեշտութիւնով կատարուելու է թոքախտի այս փոխանցումը ամուսինների մէջ, չնորհիւ նրանց յարատե մտերիմ կեանքի:

Եւ ճշմարիտ որ, չափազանց յաճախ ամուսինները վարակում են իրարից այս ցաւով:

Սկզբում երեսում է մի տեսակ ուժապակումն, թուլութիւն. պակասում է աշխոյժն ու աշխատելու ընդունակութիւնը: Դէմքը գունատում է, երեկոները քիչ ջերմ է վրայ տալիս և վարակուածն սկսում է ցաւեր ու ծակոցներ զգալ կրծքում ու կոճակում, երբեմն չորշոր հազում է ու մի և նոյն ժամանակ գնալով նիհարում; և այն: Երբեմն հիւանդութեան առաջին երեսոյթը—արիւնհօսութիւնն է լինում:

Եւ հազուադիւտ չեն այնպիսի դէպքեր, երբ ծաղկափթիթ աղջիկը, որի առողջ կազմը երկար ու երջանիկ կեանք էր խոստանում, ամուսնանալով մի թոքախտաւորի հետ, կարծ տարիների, նոյն իսկ ամիսների ընթացքում ուղղակի հալում, նուազում, գունատում, մելամաղձոտ է դառնում; փախչում է այն ամեն բանից, ինչ որ առաջ նրան հրճուանք էր պատճառում; —մի խօսքով ընկճում է—ֆիզիկապէս ու բարոյապէս, և արագ բայլում դէպի գերեզման:

Ո՞վ դիտել է մի քանի այսպիսի դէպքեր, ո՞վ առիթ է ունեցել կարգալու թշուառ մատաղահաս կնոջ դէմքի վրայ ցաւի օրէցօր աւելցող աստիճանաչափը, ո՞վ նկատել է այն տարօրինակ, հիւանդին—իրան անհասկանալի, հոգեկան անորոշ ճնշումն, այն անմիտիթար յուսահատութիւնն ու հիասթափումն կեանքից, նրա սիրտը խորապէս խոցուել է կարեկցութիւնից և վառ-

ուել կատաղութեամբ դէպի այդ անսիրտ անարդարութիւնը, այդ գազանային անսրտութիւնը:

Բայց ենթադրենք, թէ կինը չէ վարակւում ու որ և է հրաշքով առողջ է մնում: Դարձեալ դառն ու անմիտար է նրա կեանքը:

Ամուսինը, հիւանդութեան զարգանալով, սկսում է կորցնել իր ոյժերը, աշխատանքի ընդունակութիւնը, —բանուոր ձեռը պակասում է, աղքատութիւնը վրայ է դալիս: Յետոյ հազը, այս անվերջանալի, անդադար հազը, մշտական ջերմի հետ միասին, քանդում են խեղճի ներսը, սպառում նրա վերջին ոյժերն ու անկողին դցում:

Այն ժամանակ սկսում է միւս ամուսնու համար երկար տանջալից տարիներ. կեանքը նրա համար դառնում է ամենօրեայ յուզմունը, լաց, յուսահատութիւն: Հիւանդութեան սկզբներում խեղճին դեռ ոյժ է տալիս բժշկուելու յօյսը, բայց շուտով նա իմանում է, կամ ինքն է հասկանում, որ իր ամուսինը, որին նա գուցէ սիրել է իր երիտասարդ սրտի բոլոր ոյժով, անդառնալի կերպով կորած է, որ վաղ թէ ուշ մահը խըլելու է նրան իր գրկից: Ահ, գոնէ շուտով կատարուէր ընութեան այս անխուսափելի վճիռը, գոնէ շուտով սև հողը ծածկէր հիւանդի քայլայուած մարմինը, գուցէ նրա հետ թաղուէր և կենդանի մնացած ամուսնու ամենօրեայ տանջանքների գոնէ մի մասը:

Բայց հիւանդութիւնը երբեմն երկար տարիներ է տևում, հասցնելով հիւանդին ամենասարսափելի դրութեան, դարձնելով նրան կմախք, մի ուրուական, զցելով նրան անկողին, որտեղ ողորմելին քայլայում է, փտում, ախորժակը կորցրած, անողոք հազը կրծքում, որի միջից անդադար դուրս է դցում վահրախառն, թոքախտային բացիլներով լի խորխը: Լաւ է, եթէ մի օր սոսկալի արիւնհոսութիւնը վերջ է տալիս այս տանջալից կեանքին:

Ահա թէ որչափ ողբալի և մի և նոյն ժամանակ  
զազրելի է թռքախտի պատկերը ընտանիքի մէջ:

Նա աւելի ևս մռայլ է դառնում, երբ այդ ընտա-  
նիքում զաւակներ կան:

**Ժառանգական տուբեկուլօց:**

Ո՞րչափ ողբերգութիւն է թագնուած այդ բառի  
տակ. ի՞նչքան սուդ և սիրտ ճմլեցնող լաց ու կոծ կայ  
այդպիսի ժառանգական ընտանիքի մէջ:

Ո՞վ մօտ ծանօթ է եղել այդպիսի մի ընտանիքի,  
նա կը հասկանայ այն յուզմունքը, որով բժիշկը խօ-  
սում է այդպիսիների մասին:

Տուբերկուլօզի ժառանգաբար փոխանցումը կատար-  
ւում է ուղիղ գծով: Հաւանական է, որ իսկապէս ժառան-  
գաբար անցնում է ոչ թէ միկրօբը, այլ մի առանձին տրա-  
մադրութիւն գէպի բարակացաւային հիւանդութիւններ:   
Տուբերկուլօզոտ ծնողի կազմուածքը այնպէս մի, մեզ  
դեռ անըմբունելի, այլափոխումն է ստանում բացիլի  
վնասաբեր ազդեցութեան ներքոյ, որ նրա արտադրած  
սերունդը շատ հեշտ հարուածելի (vulnérable) է դառ-  
նում այդ բացիլից: Ուրիշ խօսքով. բարակացաւոտ  
ծնողների որդին ժառանգում է ոչ թէ միկրօբ, այլ  
տրամադրութիւն այդ միկրօբը հեշտութիւնով ներըն-  
դունելու և սննդելու:

Առհասարակ մի որ և է միկրօբ կարող է մտնել ու  
բազմանալ այնպիսի օրգանիզմի մէջ միայն, որ տրա-  
մադիր է կամ (աւելի պարզ ասենք), որ պարարա հող  
է ներկայացնում նրա աճման համար: Եւ որչափ բազ-  
մազան են ինում ժառանգական տուբերկուլօզի արտա-  
յայտութիւնները: Սրանք ընդհանրապէս նոյն այլասեր-  
ման նշաններն են, ինչ որ յիշել ենք սիֆիլիսի ու ալ-  
կօհօլիզմի առիթով: Նոյն սաղմային աւերումն արգան-  
դի մէջ, նոյն յետքանդային մահացումն մանուկների,  
նոյն ֆիզիկական ու բարոյական նուազումն ու ոտորա-  
նումն այն զաւակների, որոնք կենդանի են մնում:

«Իբրև արտայայտութիւն ժառանգական տուբեր-

կուլօղի, պէտք է յիշենք, ասում է Լանդուչին, ընդհանուր թուլակազմութիւն, մանկայնութիւն (infantilisme), այսինքն—մանկական արտաքին (որ պահպանում է մինչև վերջ), կրծքի անկանոն կազմ (կործքը լինում է նեղ, սեղմուած կողերից, ինչպէս ասում են—հաւի կրծքի ձև ստացած), թոքերի կամ սրտի անկանոնութիւններ, շրթնահեղձութիւն (զայռա ցնա—վերին շրթունքի հեղձումն), արգանդային կեանքում առաջացած ազդրի յօդախախտումն, խուլ-համրութիւն, ողնաշարի կորութիւններ, բախիտիզմ (անգլիական հիւանդութիւն) և խլախտ, նոյնպէս և ներվային վնասումներ և այլն:

Տուքերկուլող ունեցողների զաւակները լինում են նրբակազմ, վերին աստիճանի նուազարիւն, նազուկ կը-մախքով, բարակ, թափանցիկ մաշկով, բարակ անդամներով, խուլախտուտ, ենթակայ զանազան տեսակ—մաշկի, գեղձերի, ազքի, ականջի հիւանդութիւնների:

Ընդհանրապէս տուքերկուլող ծնողների աղջիկն ու տղան չափազանց հետաքրքրական են լինում իրանց գունատ ու նրբագիծ դէմքով, բարի, թափանցիկ աշքերով, հեղ բնաւորութեամբ, արտակարգ ընդունակութիւններով, իդէալական հայեացքներով ու սրտի թոփշքներով, անձնուիրաբար սիրելու փափագով, մելամոզձոտ—բանաստեղծական բնաւորութիւնով:

Եյս պատճառով նրանք չափազանց համակրելի էակներ են եւ հետաքրքրական, և յիրաւի սրանք շատ գիւրալի են և վաղ են ամուսնանում, կարծես մահուան շունչն առնելով, մի կատաղի պահանջ են զգում ապրելու:

Ի՞նչ պատասխան պիտի տայ մի բժիշկ, որին դիմում է մի թոքախտաւոր կամ մի, կասկածելի առողջութեան տէր, թոքախտաւորի որդի այն հարցով, թէ կարող է ամուսնանալ, թէ ոչ։ Ո՞րչափ դժուար է արտասանել վճռողական ոչը, որ թելադրում է բժշկին ներքին համոզմունքն ու խիղճը։ Ի՞նչպէս փշրել մատաղ սրտի ամենագեղեցիկ յոյսերը. ի՞նչպէս մի խօս-

քով փլատակել ապագայ երջանկութեան հրաշակերտ պալատները, որ տարիների ընթացքում երազել է հիւանդի դիւրաբորբոք երևակայութիւնը...

Դժուար է դատապարտել ում և իցէ—միակեցութեան, ամուրիութեան, ընտանիքից զուրկ մնալու տախտկալից կեանքի: Ի՞նչ սոսկալի զոհաբերութիւն է, որ պահանջւում է թոքախտաւորից կամ նրա ժառանգից.—Խեղդել իր մէջ բուռն սէրը, կին, զաւակ ունենալու երջանկութեան բաղձանքը: Բայց միւս կողմից ի՞նչպէս դառն է մի առողջ, սիրած էակի մատնել վարակուելու սպառնալիքի, և ամբողջ սերունդներ—վաղաժամ մահուան կամ ֆիզիկական արատաւորման: Ի՞նչ աչքով պիտի նայէ մի ծնող իր նիհար, հիւանդ, կիսազարդացած զաւակին, որի ամբողջ կեանքը անընդհատ տանջանք պիտի լինի:

Յանուն ապագայ սերունդների բարօրութեան, յանուն մարդասիրութեան, յանուն ազնւութեան թոքախտաւորը չը պէտք է կապէ իր կեանքը ուրիշի հետ:

Պատժում են գողին, գլխատում են մարդասպանին, որ մէկի կեանքն է ոչնչացրել, այն էլ երբեմն ակամայ կերպով, բայց չէ որ թոքախտ ունեցողը գիտակցօրէն ոչ թէ մէկ, այլ մի քանի մարդկային էակներ, գուցէ և մի ամբողջ ցեղ անբախտութեան, տանջալից կեանքի ու սոսկալի մահուան է դատապարտում:

Եւ մեր առաջ մի դիլեմնա է դրած,—քաղցրացնել գոնէ ժամանակաւորապէս մի թոքախտաւորի կարճատեկեանքը, թոյլ տալով նրան պսակուելու, թէ մի կնոջ ու նրա զաւակների կեանքը փրկել:

Դեռ ոչ մի օրէնք չէ արգելում թոքախտաւորին ամուսնանալու. Գուցէ շուտով այդ ահագին պակասը լրացուի և վճռուի այս դիլեմնան, բայց մինչեւ այդ ցանկալի ժամանակները հիւանդը ինքը պիտի զոհէ իր երջանկութիւնը, և ամուրի մնայ, չը մոռանալով, որ մարդիկ յաճախ զոհաբերութեան մէջ են գտնում սփոփանք և հանգիստ!...

Բարեբախտաբար տուբերկուլոզը որոշ սկզբնական շրջաններում բուժելի հիւանդութիւն է։ Թո՞ղ բժշկուեն կասկածելիները, և երբ որ կ'առողջանան, վարուեն բժշկի խորհրդի համաձայն։

Նոյնը պէտք է ասել նաեւ ժառանդական տուբերկուլոզի մասին։

Իսկ ինչ վերաբերում է բարակացաւոտի որդուն, մենք չենք կարող արգելել նրան ամուսնանալու, միայն անհրաժեշտ է, որ նա մինչեւ 25—30 տարեկան հասակը բոլորովին առողջ եղած լինի և ոչ մի կասկածելի երեւոյթ չունենայ վրան։ Իսկ այդպիսի դէպրերը բարեբախտաբար հազուագիւտ չեն։

## XI

ՆԵՐՎԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄՈՒՍՆՈՒ-

ԹԵԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ<sup>\*)</sup>

**Մեր “ներվային դարը”**.—Հասարակական կեանքի զարգացումն ու մասն մրցումն, իրեւ զիստուր պատճառ բուլաներվութեան կամ ներվասրենիայի. —Ներվասրենիան եւ նրա բնորու գծեր. —Հիստերիա ու նրա համաները. —Ընկհաւորութիւն. —Խելազարութիւն. —Ներվային դրութիւնները եւ նրանց բացառութիւնն. —Հիպօփոնդրիան. —Ներվախտութիւն եւ ամուսնութիւն։

### Ներվային դար<sup>‡</sup>

Այդ անունն ստացաւ տասնիննորդ դարը, չնորհիւ այն անսովոր տենդային դործունէութեան, որ ցոյց տուեց նա։

Հասարակական կեանքը բարգուեց, պահանջները շատացան, մրցումը դժուարացաւ, և կեանքի կոխու սկսեց պահանջել մարդուց աւելի և աւելի մեծ լարումն մոքի, ընդունակութիւնների։

\* ) Մեր լեզուի մէջ ուրցուս, ուրեւ սիսալ թարգմանում է ջիղ, ուրեւնին—ջղային, այն ինչ ջիղ—ջայան է (tendon), որով մկանները կպշում են ոսկրին. գրում են և ներազ Մենք ընդունել ենք ամեն լեզու ներում դորձածուած լատինէրէն բառը—ներվ։

Միւս կողմից հազորդակցութիւնների հեշտացումն առաջ բերեց տարբեր քաղաքակրթութեան տէր ազգերի անդադար շփումն, որից բղխում է ընդօրինակման անդիմադրելի ձգտումն, և մարդիկ սկսեցին պատճէնել իրարից այն ամենը, ինչ որ զատում էր նրանց միմեանցից: Յած քաղաքակրթութեան աստիճանի վրայ գտնուած անհատները ճիգ էին թափում հաւասարուելու բարձրերին, իւրացնելու նրանց գաղափարները, ապրելու նրանց կեանքով, խօսելու նրանց լեզուով...

Մրցումն դադարել էր ֆիզիկական լինելուց. զէնքը—գիտութիւնը, արհեստն էին Մարդիկ կուռում էին հնարագիտութիւնով, ճարպիկութիւնով, գիտութեամբ, խելքի ճկնութեամբ: Եւ դպրոցն սկսեց կրթել նորանոր սերունդներ հէնց այդ ուղղութեամբ, հարստացնելով նրանց մտաւոր աշխարհը, ծայրայեղ զարգացման հաւցնելով նրանց հոգին ի վսաս մարմնին, որ, ընդհակառակը, առանց խնամքի թողուած, գնալով թուլանում էր ու նուաստանում:

Եւ, ճշմարիտ որ, մտաւոր զարգացման պահանջը կեանքի կոստի համար այնչափ մեծ էր, որ ֆիզիկականը բոլորովին բարձի թողի էր արուած և մոռացուած էր հին իմաստալից առածը, թէ—առողջ միտքը առողջ մարմնի մէջն է:

Վերջապէս քաղաքային կեանքի զարմանալի զարգանումն, քաղաքների արագ աճումն, որոնք դարձել են մարդկային մրջնանոցներ, որոնց մէջ խլատում են միլիօնաւոր էակներ մի կտոր հացի ետեւից ընկած, կամ անգործ, շուայտութեան ու զեղսութեան մէջ խրուած, ջլատելով իրանց կենսական ոյժերը, մէկը—արհեստանոցների թունաւոր օգի մէջ, միւսը—գինետներում, մի երրորդը—մտաւոր անչափաւոր աշխատութեան մէջ...

Եւ երեան եկան ներվային սիստեմի այս արտասովոր, այս անտանելի ճգման հետեանքները. — Յեվրաբենիան, կամ ներվաքուլութիւնը:

Ամեն գործարան, ամեն մարմնամասը և ամեն հա-

մակարգութիւն (լինի նա մկանային թէ ներվային), երկար արտասոյժ աշխատանքից յետոյ, ուժասպառում է: Նոյնն է լինում և ներվային սիստեմին նա թուլանում է, ընկճում, կորցնում է իր դիմացկոտութիւնը, և այդ թուլանումն, ի հարկէ, անմիջապէս անդրադառնում է մարդուս կազմուածքի վրայ:

Բայց այդ բոլորը չեն:

Մեր նկարագրած երեքդիմանի ճիւաղը—տուբերկուլոզը, սիֆիլիսը և ալկօհօլիզմը, սարսափելի դպրդիւն են գցում մարդուս ամբողջ կազմուածքի մէջ, չը խնայելով, ի հարկէ, և ներվային սիստեմը:

Ալկօհօլիզմը իրաւացի կերպով ներվային թոյն» է համարւում: սիֆիլիսը չափազանց յաճախ հարուածում է մարդուս ուղեղը, ողնածուծը, առաջացնելով մի շարք ներվային վնասումներ ու հիւանդութիւններ, հասցնելով խելագարման: Խոկ տուբերկուլոզը, ծծելով կեանքի հիւթերը, պակասացնելով արեան կենսատու ոյժը, նոյնպէս ընդհանուր թուլացման է հասցնում ներվային սիստեմը, կամ առաջացնում է ուղեղի սրբնթաց մահացու բորբոքումն:

Այս բոլոր ներվային խանդարումները (միևնոյն է, առաջացած լինեն նրանք տենդային արագընթաց կեանքից թէ հիւանդութիւններից) անցնում են ժառանդաբար սերնդից սերունդ. սրանք էլ, նոյն պայմանների մէջ գտնուելով, աւելի ևս ներվային են դառնում և այսպէս անդադար:

Ներվային հիւանդութիւնների արտայայտութիւնները այնչափ բազմաթիւ են, որ նրանց մանրամասն նկարագրութիւնը հատորներ են կազմում:

Մենք մի թեթև ակնարկ միայն կը ձգենք այս հիւանդական դրութիւնների վրայ:

Նեվրասթենիան կամ թուլաներվութիւնը, կարելի է ասել, ընորոշում է ներվային ոյժի սպառումով, որ հետևանք է ինելքի ու զգացմունքների (հոգսեր, մոտաւոր պարապմունք, սաստիկ կսկիծ, վիշտ) ծայրայեղ լարման:

Այս հիւանդները մի առանձին ճնշում ու ծանրութիւն են զգում գլխում, որ դժուարացնում է մտաւոր կանոնաւոր աշխատութիւնը։ Հիւանդները կրցնում են տոկունութիւն աշխատանքի մէջ։ Օրինակ, անկարող են լինում երկար ժամանակ գրել կամ կարդալ։ Յաճախ տանջւում են անքնութիւնից, որից, ի հարկէ, աւելի ևս յոգնածութիւն են զգում։ Բնաւորութիւնները վատանում են—դառնում են մույլու և մելամաղձոտ։

Թեթև ձեւի ներվաթուլութիւնը այնչափ տարածաւած է արդի հասարակութեան մէջ, որ հչեմուտ աչքը չէ կարող նկատել նրան, և մարդիկ շարունակում են զբաղուել իրանց գործերով։

Բայց ծանր գէպքերում հիւանդը բոլորովին կորցնում է աշխատելու ընդունակութիւնը և բարձի թողի է անում իր գործերը, այնչափ թուլանում են նրա ֆիզիկական ու մտաւոր ոյժերը։

Այս բոլորին աւելանում է ցաւեր (մէջքի, անդամների, գլխի և այլն), սրտի բարբախումն, մարսողական դանդաղումն, ընդհանուր անսննդութիւն։

Մենք այստեղ կանգ կ'առնենք աւելի խոշոր ներվային ու հոգեկան խանդարումների ու հիւանդութիւնների վրայ, որովհետեւ նրանք ահագին դեր են խաղում ամուսնութեան մէջ։

Այս կարդի հիւանդական գրութիւնների մէջ նկատում է մի հիմնական գիծ, այն է—ես-ի նուաստանումն ու ընկճումն ըրջապատող գրդիչների առաջ։ Ներվայնոտ մարդը այնքան ներքին ոյժ չունի, որ կարող լինի գիմագրել արտաքին երևոյթների ազդեցութեան։

Արտաքին գրդման ու ես-ի մէջ անընդհատ ընդհարումներ կան։ Բնական մարդու մէջ ես-ը աւելի ուժեղ է հանդիսանում և յաղթում է դրսից ստացած դրդման։ այդ է կազմում մեր կամքի ազատութիւնը, ինքնուրոյնութիւնը։ Թուլաներվոտի ես-ը հեշտութեամբ ընկճում է, նրա բնաւորութիւնը անհաստատ է, նա հեշտ ենթակայ է ըրջապատող անձանց կամ հանդա-

մանքների ազգեցութեան. գիւրաթեք է, հեշտ համոզուող, մի խօսքով—զուրկ համոզմունքից, կամքից, ես-ի անկախութիւնից:

Հիսերիան այս եսագրկութեան ծայրայեղ արտայայտութիւնն է։ Սա մի վերին աստիճանի բազմանշան հիւանդական գրութիւն է, որի գլխաւոր բնորոշ գիծն է արտաքին ազգեցութիւնների գերակշռութն ուղեղի (կամքի) վրայ։ Ուղեղն անզօր է կանգնեցնելու այն դպրիւնը, որ արտաքին դրդիչները (իմպուլսները) գցում են նրա ամբողջ ներփային սիստեմի մէջ。—Նա կորցրել է, ինչպէս ասում են, արգելաոյժը, որով առողջ մարդն ընդունակ է լինում կանգնեցնել իր շարժումները, կամ նրանց որոշ ուղղութիւն տալ ու որոշ սահմանների մէջ պահել։ Օրինակ, երբ բարկութիւնը բարձրացնում է նրա ձեռքը հարուածի համար, ուղեղը կարող է կանգնեցնել նրան, այն ինչ հիստերիկն անկարող է այդ անել, այս պատճառով յաճախ (ասենք համարեա միշտ) հիստերիկը գործում է բոպէի ազգեցութեան ներքոյ, թէև հասկանար էլ իր վարժունքի անտեղիութիւնը։ Այսպէս, աֆֆէկտի ազգեցութեան տակ նրանք յանցանքեր են կատարում, կամ ինքնասպանութիւն գործում և այլն։

Հիստերիկն ընդհանրապէս հեշտ է գրգռում, զարմանալի նրբազգաց է, ենթակայ բռնկումների, քմահաճ, պահանջող, հեշտ յուսահատուող ու հեշտ ոգեսորուող։ Նա յաճախ ու յանկարծակի փոխում է իր տրամադրութիւնը, մի ծայրայեղութիւնից միւսի մէջ ընկնելով, միշտ զանազան տարօրինակ բաներ է անում։ մէկը հրաժարում է ուտելուց, միւսը իրան միշտ սիրահարուած է կարծում, մի ուրիշը յափշտակւում է, օրինակ, երաժշտութեամբ, կամ տարօրինակ կոստիւմ է հագնում, կամ ծայրայեղ բարոյականութիւն ու անբարոյականութիւն ցոյց տալիս, ևայն ևայլն։

Զը նայելով կամքի թուլութեանը, հիստերիկները

զարմանալի ստախօս ու խորամանկ մարդիկ են։ Դրանք ընդունակ են երկար պատմութիւններ հնարել և նրանց հաւաստիութեան այնպիսի ձև տալ, որ նոյնիսկ գատաստանատները համոզւում են ու նրանց սխալ վկայութիւնների հիման վրայ դատապարտում անմեղ մարդկանց։

Հիստերիկը իրապէս անդադար տանջանկների մէջ է. ամեն տեսակ (գլխի, անդամների, ստամոքսի, կրծքի, ներքին անորոշ) ցաւեր հանգիստ չեն տալիս նրան, այն ինչ մարմինը տեղատեղ միանգամայն անզգայ է։ Աւելի բարդ դէպքերում յառաջանում են հիստերիկ ցնցումներ, կարկամումներ, ջղաձգութիւններ։ Խեղճերը վայր են ընկնում, թրփրտում։ Նրանց ոտեղն ու ձեռները ձգձգում են, կարկամում ևայլն Պակաս չեն նոյնպէս և հիստերիական կուրութիւն, խլութիւն, անդամալուծութիւն։

Դրանք զանազան խաբէական լսողական ու տեսողական ցնորքներ ունեն։ Լսում են տարօրինակ ձայներ ու տեսնում են օտարոտի բաներ ևայլն։

Հիստերիայով հիւանդանում են կանայք և տղամարդիկ, գլխաւորապէս երիտասարդ հասակում։

Հիւանդութիւնը ժառանգական է ( $25\%$ )։ Կարող է առաջանալ նաև ուրիշ զանազան տեսակ պատճառներից, որոնք մեծ դղրդիւն են դցում կնոջ կամ մարդու ներփային սիստեմի մէջ. — սաստիկ յուզմունք, վախ, սիրահարութիւն, կամ կսկիծ, վիշտ, յետոյ հիստերիկ են դառնում յղի կամ զաւակատան հիւանդութեան տէր կանայք, թռքախտաւորների զաւակները ևայլն։

Ընկնաւորութիւնը (էպիլեպսիա): Հեղինակները գըտել են, որ ընկնաւորների համարեա կէսը սերւում են ներփային ծնողներից։ Ալկօհօլիկ ծնողների զաւակները յաճախ ընկնաւոր են լինում (համարեա  $12\%$ ). պէտք է իմանալ նոյնպէս, որ արբած ժամանակ բեղմնաւորութիւնը յաճախ ընկնաւորներ է տալիս։ Յետոյ իբրև

պատճառ պէտք է յիշել—չափազանց հասակաւորների և մօտ ազգակիցների ամուսնութիւնը, երկիւղ յղութեան ժամանակ, կամ հարուած փորին ևայլու ինչ էլ լինէր պատճառը, հիւանդութեան բնորու գիծը (որովհա տարբերում է հիստերիայից), ուշագնացութիւնն է:

Երբեմն, յանկարծ հիւանդը ուշը կորցնում է, վայր է ընկնում, ուր որ պատահի (երբեմն իրան վսասում է ընկնելիս և նոյնիսկ մահանում), և սկսում է կարկամումներն ու ամբողջ մարմնի ձգձգոտումն, բոլոր մկանների կծկումն: Երթունքների վրայ երեսում է արնախառն փրփուր, հիւանդն ընկնում է ու միքանի ժամանակ մնում է անզգայ կիսաշունչ դրութեան մէջ, յետոյ ուշքի է գալիս, առանց որեւիցէ յիշողութիւն պահպանած լինելու պատահածի մասին: Երբեմն բոլոր հիւանդութիւնը կայանում է վայրկենական ուշագնութեան մէջ: Յանկարծ հիւանդը ձեռքի իրերը վայր է գցում, կամ խօսակցութիւնն ընդհատում, առանց այդ նկատելու: Ընդմիջումներում այդ հիւանդները բոլորովին առողջ են, թէև ներվային շտապող, այսպէս ասած, տենդային. Նազոլէօնը, Մահամեդը, Կեսարը, Փ. Փ. Բուսսօն, Դուստօնքսիլին և շատ ուրիշ հանճարեղ մարդիկ ընկնաւորներ էին:

Համարեա անբուժելի հիւանդութիւն լինելով, նա վերջ ի վերջոյ թուլացնում է մոտաւոր ոյժը, և մարդիկ դառնում են թուլամիտներ, ապուշներ, նոյնիսկ խելագալներ:

Սրանք առհասարակ ցնորքներ ունեն ու սարսափելի կրքոտ են: Ընկնաւորի կիրքը անսանձ է, կատաղի, իսկապէս գազանային, և այդպիսի բոպէներում նա սուկալի ոճիլներ է գործում:

Խելագարութիւն: Անկասկած, ամուսնութեան տեսակէտից խելագարութիւնը ամեն ներվային անկանոնութիւններից կարևորագոյնն է, և նա մեծ մասամբ

ժառանգական է (ըստ ոմանց մինչև 90%), այսինքն խելագարները հիւանդու ծնողների զաւակներ են:

Սարսափելի բան է, երբ լնտանիքի անդամներից մէկը խելագար է, և երբէք չը պէտք է յոյս գնել ժամանակաւոր ընդմիջումների վրայ: Այսպիսի հիւանդները կարող են առժամանակ առողջ երևալ, և յուսալով, որ բոլորովին ազատուել են իրանց ցաւից, ամուսնանալ, բայց կ'անցնեն միքանի ամիսներ ու տարիներ և մի օր հիւանդութիւնը կը նորոգուի:

Ահա այն գլխաւոր հիւանդական ներվային դրութիւնները, որոնք ահագին գեր են խաղում ամուսնութեան մէջ:

Այս հիւանդութիւնների տէր ծնողները, խօսք չը կայ, ոո կ'արտադրեն հիւանդու զաւակներ:

Պէտք է նկատել, որ մի հիւանդութիւն կարող է խսկօրէն չանցնել սերնդին, այլ փոխանցնել իբրև ներվային տրամադրութիւն: Այս արամագրութիւնը զանազան ազդեցութիւնների ներքոյ կարող է փոխուել ամեն տեսակ ներվային դրութիւնների, քանի որ բոլոր ներվային խանդարումների մէջ մի տեսակ ազգակցութիւն կայ:

Ժառանգական ներվախտատերերը (ներվային հիւանդների զաւակները) իրանց հիւանդ ծնողներից ստանում են կիսազարգացած, ինչպէս ասում են, մանկայնութեան մէջ մնացած ներվային սիստեմ, որ նոյնպէս անկատար կերպով է գործում, ինչպէս որ մանուկների ներվային սիստեմը:

Այսպէս պէտք է բացատրել, ճիշտ որ, այն զարմանալի դիւրազգացութիւնը, վախկոտութիւնը, ինքնասիրութիւնը, կամքի ոյժի թուլութիւնը, տոկոնութեան ու դիմացկոտութեան բացակայ լինելը, կամ յանկածակի, իմպուլսիվ ակտերը, կրքով վերաբերումն ամեն գործի, որոնք բնորոշում են ներվաստինիկին:

Հոգեկան հիւանդական կազմը շատ վաղ է արտայայտում; գեռ մանկական հասակում: «Ըստ երևոյթին, ասում է մի հոգեբան, երեխաները բոլորովին առողջ

են, սակայն անհանգիստ են քնի մէջ ու հեշտ գրգռուող։ Նրանք հակումն ունեն դէպի կարկամումներ և յաճախ լուսնուեն դառնում։ Միքիչ յետոյ նկատում է մի զարմանալի յակումն դէպի զառանցանք, —ամենափոքը ջերմը զառանցանքի մէջ է գցում նրանց։ Եեռական կեանքը չափազանց վաղ է զարթում։ ակներեւ են լինում մոքի զանազան տարօրինակութիւններ ու սեռական բնազգումի շեղումներ։ Նրանց միշտ սպառնում են հոգեկան հիւանդութիւններ։ կսկիծը, ծննդաբերութիւնը, հոգեկան ու մարմանական սյժերի լարումն կարող են առաջ բերել այս հիւանդութիւններից մէկը կամ միւսը։ Նրանք շատ զգայուն են, ցնորական մոքերով տոշորուող։ Նրանց սէրն ու զղուանքը ոչ մի հիմք չունեն, բայց չափազանց հեշտասէր են։

«Ծանր ժառանգական դէպքերում աչքի է ընկում զաւակների բնաւորութեան վատաշրջումն (dégénération — въирожденіе). Նրանք լինում են ծոյլ, կրքոտ, միշտ անբաւական ու ըստ բնականին հակուած դէպի չարը, լինելով անսիրտ ու հողարտ։ Ամենամատաղ հոսակում նրանք մի առանձին հակումն են ցայց տալիս դէպի սուտը, գողութիւնը։ Ոչ մի կարգապահութեան չեն ենթարկում; շատ դժուար են դիմանում ֆիզիկական ցաւերի և անտարբեր են մնում դէպի ուրախութիւնն ու կսկիծը, այն ինչ առանձին բաւականութիւն են զգում կենդանիների տանջանկները դիտելիս։ Մտաւոր ընդունակութիւնները շատ վառ են և յիշողութիւնը լաւ, բայց երբոր սեռական զարգացման են հասնում, դառնում են անընդունակ ու վատ են սովորում։»

Մտաւոր զարգացման շեղումները բնականից շատերին գցում է վերին աստիճանի անմիտիթար ու անբուժելի ներվային տանջալից դրութիւնների մէջ — հիպօխօնդրիայի (ախոնդացաւ) եւ մելամաղձութեան։

Հիպօխօնդրիկը միշտ զբաղուած է իր սեփական անձով, ոչ իբրև անձնասէր, որ ձգտում է ամեն ինչ և ամեն մէկին ժառայեցնել իրան, իր բարօրութեանը, այլ

իրրե մի երեակայական հիւանդ, որ միշտ մի որևէ հիւանդութիւն ու անկանոնութիւն է գտնում իր օրգանիզմի մէջ. ամենից շատ գանգատում են նրանք մարսողութիւնից: Սակայն մոտաւոր ոյժը, տոկունութիւնը աշխատանքի մէջ երկար ժամանակ պահպանուած է, մինչև որ այդ կասկածանքը, թէ նա հիւանդ է, չէ տիրապետում նրան ամբողջովին, — այն ժամանակ նա ծուլանում է, կամ աւելի ճիշտն ասած, զբաղւում է միայն երեւակայական հիւանդութիւններով:

Մելամաղձութիւնը աւելի լուրջ հիւանդութիւն է: Առաջի երեւոյթն այն է, որ հիւանդը բոլորովին անտարբեր է դառնում դէպի այն ամեն բաները և մարդկանց, որոնք նրա համար անհրաժեշտ էին առաջ: Աշխատանքը, զուարճութիւնները, հասարակութիւնը նրա համար կորցնում են իրանց արժեքն ու հանդստացնող ազգեցութիւնը: Նա սառնասիրտ է դառնում դէպի այն անձինք, որոնց սիրում էր: Նա կորցնում է զուարճանալու և տիրելու ընդունակութիւնը: Աշխարհը կորցնում է նրա համար իր հրապոյրը, իր գոյութեան իմաստը: Այս տրամադրութիւնը գնալով զարդարում է, առօրեայ կեանքը սաստիկ տաղտկալի է դառնում: մելանխոլիկը կորցնում է հաւատ դէպի գործը. այս պատճառով էլ նա կորցնում է աշխատելու աշխոյժը, և դառնում է մի «սառած էակ», որ զուրկ է սկզբնաւորութեամբ, որի բոլոր մաքերն ու հոգսերը պտոյտ են գալիս իր, իբր թէ, փչացած, քայլայուած անձի և շրջապատի ոչնչութեան շուրջը»: Այսպիսի հոգեկան դրութիւնը յաճախ մղում է խեղճ մելամաղձութիւն դէպի անձնասապանութիւն:

Այդպիսի հիւանդութեան տէր մարդիկ (կինարմատթէ տղամարդ) իրաւունք չունեն ամուսնանալու. առաջինն այն պատճառով, որ նրանց ներփախտային դրութիւնը անդադար յուզման ու անհանդստութեան մէջ կը պահի ամուսնուն:

Հիստերիկ կնոջ ամուսինը ոչ մի օր հանգիստ չունի. նեվրասթենիկ տղամարդու կինը ամենաանբախտ մի արարած է։ Ել չեմ խօսում խելադար և ընկնաւոր ամուսինների մասին։

Բայց մեզ այստեղ աւելի է հետաքրքրում՝ սերունդ-ների վիճակը։

Մենք գիտենք, որ ժառանգական ներվախտութիւնը շատ ձեւեր է ընդունում։ Գիտենք նոյնպէս, որ ներվախտային ժառանգականութիւնը կարող է թռչել մի սերունդ (ատավիզմ)։

Սերունդը կարող է լինել նեվրօպաթ, հիստերիկ, ապուշ, յիմար, թուլախելք կամ ուղղակի խելադար և այլն, ու կրել իր վրայ այն բաղմաթիւ ֆիզիկական արատները, որոնք մենք նկարագրեցինք իբրև այլասերման յատկանիշներ ժառանգական սիֆիլիսի, տուբերկուլոզի ու ալկօհօլիզմի մասին խօսելիս։

Սակայն ասենք ի մսիթարութիւն արդէն ամուսնայածների, որ կանոնաւոր և ուշադիր, զգոյշ կրթութիւնը կարող է, գոնէ մասամբ, ուղղել ժառանգական արատը, և (քանի որ զաւակները ժառանգում են ընդհանրապէս տրամադրութիւն դէպի հոգեկան հիւանդութիւններ) նոյնիսկ ոչնչացնել այդ բնածին տրամադրութիւնը։

ԲԺ.Պ. Վ. ԱՐԾՐՈՒԽԻՆԻ

(Անցը հետեւեալ եամարում)

## ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԽՎԻՆ ԴԱՅԱՐԵՄ

IV

Բաղեշը մեր յիշած ժամանակներում ներկայացնում էր մի ընդարձակ քրդական պետութիւն, որ տարածւում էր Վանից մինչև Դիմարբէքիր և համարեա անկախ էր; Բաղեշի քուրդ խանը նշ միայն ունէր իր սեփական մեծ գորքը (մօտ 75,000), այլ և նոյն իսկ պղնձի գրամ էլ էր կտրում. նրան հաղատակւում էին տեղական բոլոր քուրդ ցեղապետները կամ բէյերը:

Հասկանալի է, թէ նրան դառն, նրքան դժոխային պիտի լինէր իրականութիւնը մի քրդական պետութեան մէջ; Վայրենութեան մէջ մնացած մի հին ցեղ, որ մինչև այժմ էլ չէ կարողացել գիր ու զարդութիւն ունեցող ազգերի թիւը մտնել, որի պաշտամունքը յափշտակութիւնն ու կողովուան է, ունի իշխանութիւն, մի լայնարձակ երկրի տէրն է, նրա ճակատապիրը տնօրինողը: Կեղեքումները, հարստահարութիւնները չը պէտք է էլ յիշատակել, այնքան զրանք հասկանալի են ինքն ըստ ինքեան, այնքան առօրեայ, սովորական երեսի էին կազմում: Խանութիւնը մի կոռածաղիկ էր քուրդ իշխողների մէջ. թիւրք կառավարութեան ձեռնուու չէր մի մշտական կարգ հաստատել Բաղեշի երկրում և նա ամենայն հաճութեամբ թոյլ էր տալիս, որ խանական իշխանութեան թեկնածուները կրծեն միմեանց, որքան կամենում են: Այդ նպատակով էլ նա խանութեան թուղթ էր տալիս ամեն մէկին, որ կարողանում էր լաւ կաշառքներ բերել իրան: Եւ քրդերը խլում էին խանութիւնը իրար ձեռքից. ներքին խռովութիւնները, պատերազմները անպակաս էին լինում: Իւրաքանչիւր ուժեղ քուրդ, խլելով խանութիւնը իր հաւկառակրդից, պիտի հաստատուէր նրա տեղը արիւնահեղութիւնների միջոցով, և իսկոյն նոր հարկեր էր դնում հպատակների վրայ, որպէս զի յետ ստանայ թիւրք կառավարութեան

տուած իր կաշառքը \*): Երկիրը աւերտում էր աւազակների ձեռքով, թէպէտ պարսից և թիւրքաց կտուալարութիւնները աշխատում էին փոքր ի շատէ ապահովութիւն ստեղծել գոնէ այս առևտրական ճանապարհների վրայ, որոնք անցնում էին այդ երկրի միջով և տանում էին դէպի Բաղդադ, Հալէպ, Թաւրիզ և ուրիշ տեղեր, բայց մի քրդական պետութեան մէջ ոչինչ են ամեն տեսակ բարի մտքեր:

Ահա հէնց այս զաժան միջավայրում է գոյութիւն ստանում հայկական այն դպրոցը, որ արժանաւոր հոգեորականներ է հանում իր միջից և ուղարկում է Կ. Պօլիս, այստեղի բարբարոսական կարգերը փոքր ինչ մեղմացնելու համար:

Հայերը բուն Բաղէչի գաւառում մեծ թիւ էին կազմուեն: Բայց քրդական գծոփաքը հարկադրեց նրանց սակաւ առ աականուալ այդ գեղեցիկ, լեռնուա երկրից, որ հին ժամանակներում Հայաստանի Աղճանեաց նահանգի մի մասն էր կազմուեն: Հայաշատ էր մանսաւանդ Բաղէչ քաղաքը, նա բաժանուած էր չորս թաղերի, որոնցից իւրաքանչիւրը ունէր մի վանք և այդ վանքի թեմն էր կազմում: Դրանց մէջ նշանաւոր հանդիսացաւ Ամրոդւոյ կամ Ամրոդոլու վանքը: Նշանաւոր նրանուի, որ այդտեղ ՀVII դարում Բարսեղ վարդապետը երկար ջանքերի և աքնութիւնների միջոցով կարողացաւ նորից հասկանալի դարձնել էին հայկական թարգմանութիւնները յունական վիլիսոփաներից, քերականութիւնը, տրամաբանութիւնը, մի խօսքով այն ամենը, ինչ կոչւում է մեր հոգեւոր գրականութեան մէջ «արտաքին գիտութիւններ» \*\*): Բարսեղ վարդապետը դարձաւ Ամրոդոլուի դպրոցի լաւագոյն ժամանակների հիմնադիրը: Նա ունեցաւ շատ հետևողներ, որոնցից մէկն էր վերև յիշած Մելքիսէթ վարդապետը, որ Զուղացի գնքոցից ուսուցիչ հանդիսացաւ:

Քրդական իշխանութեան սաստիկ ճնշման տակ Ամրոդոլուի դպրոցը շարունակեց գրագիտութեան, վանական բարձր ուսման կայծերը պահպանել մինչև XVII դարի վերջերը: Այդ ժամանակներում վանահացը եւ ուսուցիչ էր Վարդան վարդապետը, մի, ինչպէս երեւում է, աշխատասէր, վարդացած վանական: Նրա աշակերաններն էին Քրիգոր և Յովհաննէս վարդապետները, յիշենք և սրանց ընկերակից Սարգիս վարդապետին, որ ծաղկաբարութեան (նկարչութեան) արուեստին հմուտ էր և որի աշակերտն էր Քրիգոր Մարզուանցի գպիրը, Կ. Պօլսում

\*) Խնճիձնան—Շնչարհագրութեան չորից մասանց աշխարհից, Վենետիկ, 1806, հատ. Ա., եր. 170.

\*\*) Առաքել պատմագիր, գլ. իթ.

ХVIII դարի սկզբում տպարաններ հիմնողներից մէկը, որ բաւական առաջ է տարել տպագրական գործը և նշանաւոր է հանդիսացել մանաւանդ «Յայսմաւուրք» ահազին գրքի տպագրութեամբ:

Իրանց վարդապետի մահից յետոյ, Գրիգորը և Յովհաննէսը, որ կոչում էր Կոլոտ, Մուշի ո. Կարապետ լինքն են տեղափոխուում: Բարենորոգութիւնների, գործի մարդիկ էին դրանք, ուստի և շատ էին հալածւում հայ հայկատակ վանականների կողմից, ինչպէս նաև այն աշխարհականների կողմից, որոնք վանքերին պարսպ էին տալիս, որպէս զի տուկոնների փոխարէն կլանեն նրանց եկամուտները Բայց աւելի մեծ չարքը էլ կար Մուշը Բաղէշի խանութեան մի մասն էր կազմում: Քրդերի անգթութիւնները անկարելի է նկարագրել, ասում է Յովհաննէս Կոլոտը \*). — «Նրանք ծծում էին մեր արիւնը. գիշատում էին մեզ, փախցնում էին ժմակները և ժայռերի ծերպերը և այդտեղ մաշում էին մեր կեանքը»: Այս սոսկալի հանգամանքների մէջ երկու ընկերակից վարդապետները, մաքառելով, որքան հնարաւոր է, ընտանի և դրսի գայլերի դէմ, վանքը բարեկարգելու, վերաշննելու հոգսերով էին զբաղուած: Գրիգորը ո. Կարապետի վանահայր գարձաւ, իսկ Յովհաննէս Կոլոտը ժողովարարութիւններ էր անում՝ վանքի պարտատէրերից ազատուելու և պակասութիւնները վերացնելու համար: Այդ ժողովարարութիւնները վերջ ի վերջոյ տարան կոլոտին թիւրքաց մայրաքաղաքը:

Այստեղ նա քարոզում էր, Մուշի տառապանքներն էր պատմում և օգնութիւն ինդրում: Նրա ընդունակութիւնները աննկատելի չը մնացին և նրան ուղարկեցին Երուսաղէմ, ուր մի բարեխիղճ և աղնիւ մարդու ներկայութիւնը շատ հարկաւոր էր: Մենք արդէն նկարազըրել ենք այն խայտառակ գրութիւնը, որի մէջ գտնւում էր Երուսաղէմի հայոց վանքը \*\*). գիտենք արդէն, որ այդ կողոպտուած, աւերուած հիմնարկութիւնը, բազմաթիւ անողոք պարտատէրերի պահանջով, պիտի ծախուէր: Յովհաննէս Կոլոտը վրայ է համում այդ օրհասական ժամին: Նա կարողանում է մի քանի բաներ ազատել պարտաւէրերից, բայց տեսնում է, որ աւելին անել անկարելի է և Փրկչի վանքը պիտի ծախուի: Ուրիշ ճար չը գտնելով, միաբանները սկսում են արտասուրք թափելով աղաչել պարտատէրերին, որ ժամանակ տան: Կողոտը երաշխաւոր է դառնում, չորս տարուայ յետաձգումն է ստանում և շտապում է Կ. Պոլիս, ուր

\*) «Ձենոր», տպ. Կ. Պոլիս, 1719, լիշատակարան:

\*\*) «Հայկ. Տպ.», I, էր. 226—233.

Պետրոս Անապատականի նման ողբում է Երուսաղէմի հայոց վանքի դրութիւնը և օգնութիւն է հայցում: Նա համոզում է Կ. Պօլսի ազդեցիկ հայերին, որ Երուսաղէմի միակ փրկութիւնն է՝ ունենալ առանձին, անկախ պատրիարքութիւն, ինչպէս եղել է առաջ: Բայց Կ. Պօլսի որ պատրիարքը յանձն կ'առնէր մի այլ պիսի բան անել, քանի որ Երուսաղէմը եկամուտների հարուստ աղբիւր էր: Եւ այն հայերը, որոնք համաձայն էին Կոլոտի հետ, հարցը հեշտ վճռեցին, հրաւիրելով նրան Կ. Պօլսի պատրիարք դառնալ և անձամբ բաժանել Երուսաղէմի պատրիարքութիւնը Կ. Պօլսից: Յովհաննէս Կոլոտ պատրիարք է դառնում 1715 թուականին և իսկոյն յայտարարում է իր ընկերակից Գրիգոր վարդապետին Երուսաղէմի պատրիարք:

Գրիգորը Կ. Պօլս է գնում 1717-ին և մնում է այդանոց չորս տարի: Երուսաղէմի «կեռնացած» պարտքերի վճարումը հսարաւոր դարձնելով համար նա դիմում է մի այսպիսի միջոցի: Իր վզին երկաթէ շղթայ անցկացնելով, նա կանգնում է եկեղեցիների դրաների առջև և ողորմութիւն է խնդրում: Այդ պատճառով էլ նա ստացել է Շղթայակիր անունը: Տպաւորութիւնը ահապին էր. շղթայակիր վարդապետին առաջ նուէրներ են տալիս, կանաքը իրանց թանկագին իրերը և գոհարներն էին բերում. Կոլոտը աջակցում էր Գրիգորին և չորս տարուայ ընթացքում այնքան զրամ հաւաքուեց, որ կարելի էր Երուսաղէմի պարտքերը եթէ ոչ լիովին վճարել, գոնէ շատ թեթևացնել: Գրիգորը գնաց Երուսաղէմ և այնտեղ մեծ խոանդով ձեռք զարկեց բարեկարգութեան գործին. մի կերպ կարգադրելով պարտքերի հարցը, նա սկսեց մաքրել այն աւաղականոցը, որ կազմուել էր Քրիստոսի գերեզմանի կողքին և ամօթ ու խայտառակութիւն էր բերում հայոց ազգին:

Պակաս չէին և Յովհաննէս Կոլոտի բարեկարգութիւնները Կ. Պօլում: Ամենից շատ Կոլոտի պատրիարքութիւնը նշանաւոր էր այն կողմից, որ երկարատև էր: Մինչդեռ պատրիարքները, ինչպէս տեսանք, այս կամ այն ազդեցիկ խմբի խաղալիքներն էին, շատ անգամ նոյն իսկ մի տարի էլ չէին կարողանում պահուել իրանց պաշտօնում և պատրիարք տապալելն ու նորը նստեցնելը մի բաժակ ջուր խմելու չափ հեշտացել էր,— Յովհաննէսը պատրիարք մնաց մինչև իր մահը, մօտ 26 տարի: Վաղուց անօրինակ դարձած այդ հանգամանքը նախ և առաջ մի վկայութիւն է Յովհաննէսի վարչական ընդունակութիւնների մասին, և երկրորդ՝ Կ. Պօլսի հայերի համար խաղաղացման և առաջադիմութեան մի համեմատաբար զգալի նշան կարող է համարուել: Իրեն ուսումնասէր մարդ՝ Կոլոտը սկզբից և եթ-

կրթական գործի մասին հոդ տարաւ և բաց արեց կ. Պօլում առաջին հայ բարեկարգ դպրոցը։ Զանազան կողմերից աշակերտներ հաւաքուեցան. ինքը, պատրիարքն էլ, ուսուցչութիւնն էր անում. բացի նրանից, ուսուցիչ էր և Դուկաս վարդապետ Խարբերացին, որ ժամանակակից հայ վանականների մէջ մի զարմանալի բացառութիւն էր կազմում. նա եղել էր Վենետիկում, ուր լաւ ուսումնասիրել էր լատինական և իտալական լեզուները և սաստիկ գրասէր մարդ էր։

Այսպէս ահա Ամրգուրի վանքի հին դպրոցը, Կոլոսի միջոցով, շարունակում է կ. Պօլում, բայց աւելի բարեկարգ դրութեամբ։ Դուկաս վարդապետը թարգմանութիւնների մի երկար շարք է սկսում լատիններէնից և իտալերէնից. նշանաւոր է, որ այդ գործի մէջ նրա աշխատակիցներն են Կոլոսի դպրոցի աշակերտները։ Թէս այդ բոլոր թարգմանութիւնները կրօնական բովանդակութիւն ունէին և անսոխ մնացին, բայց և այնպէս, այն հանգամանքը, որ թարգմանութիւններ են կատարւում եւրոպական լեզուներից, առաջադիմական մի նշանաւոր քայլ է կ. Պօլում. նա ցոյց է տալիս որ նեղ, սահմանափակ հորիզոնը փոքր ինչ ընդարձակուել է սկսում կ. Պօլսի հայ գրագէտների առաջ։ Այդ գրագէտները տրտնջում էին Դուկաս վարդապետի ձեռնարկութեան դէմ. նրանք սրբազնութիւն էին համարում եւրոպական գրքեր թարգմանելը, քանի որ եւրոպացիները պատկանում էին մի եկեղեցու, որ հերձուածող է համարում հայոց եկեղեցին։ Բայց Կոլոսը և նրա կողմնակիցները հակառակ էին այդ տեսակ գատողութեան։ Եթէ լատինական գրուածքների մէջ կան մի քանիսը, որոնց չէ ընդունում հայոց եկեղեցին, դա չէ նշանակում, թէ պէտք է արհամարհնել և անտես անել ամբողջ լատինական գրականութիւնը, ասում էին նրանք \*):

Ծորհիւ այսպիսի, համեմատաբար, լայն հայեացքների, բայց մանաւանդ այն հոգացողութիւնների, որոնց մէջ գրուած էր կ. Պօլսի դպրոցը, Կոլոսի հիմնած կրթական հաստատութիւնը բաւական նշանաւոր գեր կատարեց իր ժամանակին, պատրաստելով շատ հոգևորականներ, որոնք համեմատաբար հմուտ ու զարգացած էին, ունէին նոյն իսկ մատենագրելու չորհը։ Այսպէս որ Կոլոսի պատրիարքութիւնը համարում է մի շրջան, երբ սկսում է կ. Պօլսի հայերի կրթական և գրական զարգացումը։ Եւ դա միանգամայն ճիշտ է. բացի այսպիսի մի դպրոցի յարատեսութիւնից, Կոլոսի կառավարութեան զարդն

\* ) Հաննա վարդապետ—«Գիրք պատմութեան նրուսաղէմի», Ա. Պօլս, 1734, եր. 175—179։

է կազմում և այն ծաղկած դրութիւնը, որին հասաւ տպագրութիւնը կ. Պօլսում:

Մինչև Կոլոսի պատրիարքութիւնը եղած տպարաններից մենք յիշել ենք Լիվորնօից փոխադրած կջմիածնի տպարանը: Դարի սկզբից, որքան թոյլ էին տալիս ժամանակի տիսուր հանգամանքները, լոյս էին տեսնում տպագրութիւններ, որոնք ցոյց էին տալիս, թէ Ամստերդամի, Մարսէլի և Վենետիկի մէջ անցած դարում գործ դրած ջանքերը զուր չեն կորել: Դրա փայլուն ապացոյցներից մէկը կարող է համարուել 1705 թուին կ. Պօլսի Բէկոզլի թաղում տպագրուած Աստուածաշունչը: Տպագրողն է ոմն Պետրոս Լազինացի, որ իրան անուանում է Ռոկան վարդապետի ազգական: Այդ Պետրոսը, ինչպէս երեսում է, ստացած է եղել Ռոկանի տպարանի մասը. նրա Աստուածաշունչը պատկերազարդ է, տպուած Ռոկանեան մանր տառերով և ներկայացնում է Ռոկանի Աստուածաշունչի պատճէնը, այն զանագանութեամբ միայն, որ Ռոկանի տպագրութիւնը գեղեցիկ ու մաքուր է, խոշոր տառերով, մինչդեռ կ. Պօլսի տպագրութիւնը շատ ստոր է արուեստի կողմից: թէն այդպէս, Պետրոսի տպագրութիւնը արդէն մեծ առաջադիմութեան նշան է կ. Պօլսի համար:

Ռոկանի ազգականը միայն այդ տպագրութիւնն է արել կ. Պօլսում: Նրանից յետոյ նշանաւոր տպագրիչներ են հանգիստանում Գրիգոր Մարտուանցին, որ առանց ուսուցչի և զեկավարի նոր տեսակ տառեր է փորագրում և տպարան հիմնում, ապա Աստուածատուր դպիրը: Գրիգորը, ինչպէս ասացինք, Ամրդոլուի դպրոցի պտուղներից էր. տամն և մէկ տարի չարչարուելով, նա կարողացաւ տպագրել առաջին «Յայսմաւուրքը» (1706 թ.), ընկերանալով մի քանի մարդկանց հետ: Բայց այդ ընկերները խաբեցին նրան, խլեցին բոլոր տպագրած օրինակները. թէն այդքան զրկուած ու կողոպտուած, Գրիգորը չը յուսահատուեց և պահպանեց իր գործարանը: Յովհաննէս Կոլոտի ժամանակ աւելացան նաև Սարգսի, Բարսեղի և Աբրահամի տպարանները: Անկատակած, ինքը, պատրիարքը, խրախուսողի, նպաստողի գեր էր կատարում. մի քանի զրկերի մէջ տեսնում ենք նրա դրած յիշատակարանները, որոնցից իմանում ենք, թէ նա շատ մօտ էր տպագրական գործին: Այդ լուսաւոր հովանաւորութեան ենք պարտական, որ Կոլոտի պատրիարքութեան ժամանակ, ուրեմն մօտ 26 տարուայ ընթացքում, կ. Պօլսի հայ տպարանները լոյս համեցին աւելի քան 70 հատ գիրք:

Տպագրական այդ հարստութեան նշանակութիւնը հասկաւ Ապրիլ, 1901.

նալու համար պէտք է մի թեթև համեմատութիւն դնել հարկատու ստրուկների դիրքում գտնուող հայերի և նրանց գոռող տէր թիւրքերի մէջ։ Միայն 1726 թուականին էր, երբ Կ. Պօլսում բացուեց առաջին թիւրք տպարանը, այն էլ ինչ դժուարութիւններով։ Թիւրքաց մի գեսապանութիւն, որ ուղարկուած էր Գրանսիական թագաւորի մօտ, Պարիզում տեսնում է թէ ինչպէս են գրքեր տպւում. գեսապանը և նրա որդին սաստիկ զարմանում են և տուն վերադառնալով, «Գրէնիների» երկրում տեսած հրաշքի մասին պատմում են մահմեղականութիւն ընդունած մի ունգարացու, որ շատ զրասէր մարդ էր։ Ունգարացին մի ամբողջ շարադրութիւն է գրում տպագրութեան մեծ օգուաների մասին և ներկայացնում է մեծ վէզիրին։ Երկար ժամանակ այդ շարադրութիւնը ձեռքից ձեռք է անցնում թիւրքական բարձր շրջաններում, երկար ժամանակ խօսում, վիճում են, թէ ինչ անեն և վերջապէս չէյխ-իւլ-իսլամը տալիս է ֆէժվա, թէ կարելի է գրքերը տպագրել, միայն թէ դրանք կրօնական գրքեր չը լինեն։ Բացուած տպարանը գոյութիւն է պահպանում 28 տարի, տպագրում է 18 գիրք, յետոյ փակւում է, որովհետոն վարպետներ չը կային։ Քսան տարուայ ընդմիջումից յետոյ նորից բացւում է տպարան 1784 թուին, բայց տպագրած գրքերի թիւը զարձեալ շատ աննշան էր \*): Ֆանատիկոս, աւանդապահ թիւրքերը լուսաւորութեան, կուլտուրական զարգացման գործում միշտ յետ էին մնում իրանց հպատակ քրիստոնեաներից։ և աշքաբաց, առաջադիմող բայեան հէնց այդ պատճառով ահեղ ցնցումներ էր պատրաստում այդ անշարժ և փառող պետութեան համար...

Կ. Պօլսի հայերէն տպագրութիւնների ընդհանուր բնաւորութեան մասին մենք արդէն խօսել ենք. դրանք ամենամեծ մասով կրօնական—եկեղեցական գրքեր են։ Նշանաւոր է այն հանգամանքը, որ Կ. Պօլսը հետզետէ տպագրութեամբ լոյս է հանում հայոց հին մատենագրութեան յիշատակարանները։ Բացի Ագաթանգեղոսի պատմութիւնից, տպագրուեցան՝ Զենոք Գլակը 1719-ին Կոլոսի հրատարակութեամբ, տաճներորդ դարի հեղինակ Մեսրոպ Երէց 1737-ին, ինչպէս նաև Գրիգոր Լուսաւորչին վերագրուող «Յաճախապատումը», ներսէս Շնորհալու «Հանելուկները» Կ. Պօլսի տպագրութիւն է համարում և 1730 թուականին լոյս տեսած Փաւստոս Բիւզանդը, չորրորդ դարի հայոց պատմութեան այս նշանաւոր աղբիւրը, որ մի և նոյն

ժամանակ մեր գրականութեան պատմութեան մէջ մի շատ խոչը, շատ ինքնուրոյն, համարեա նմանը չունեցող գործ է:

Չորրորդ դարը մի շատ նշանաւոր ժամանակամիջոց է ընդհանուր պատմութեան մէջ, իբրև մի շրջան, երբ վերջնական կազմակերպութիւն է ստանում քրիստոնէական եկեղեցին: Հայաստանի համար այդ դարը աւելի ևս նշանաւոր է: Այդտեղ տեղի ունէին երկու առաջնակարգ մեծ երեսյթներ. մի կողմից հետզհետէ հաստատում էր քրիստոնէութիւնը, ինչպէս միւս տեղերում, զարգանում, պատրաստում էր եկեղեցական դասակարգը, իսկ միւս կողմից գնալով հալում, մաշտում էր Սրչակունեաց թագաւորութիւնը և Հայաստանը քաղաքական անկախութեան կողմից ոչնչութեան էր հասնում, դառնալով պարսկական և յունական աղղեցութիւնների, փոխագարձ մրցութիւնների ասպարէղ: Փաւստոսի պատմութիւնը մեզ ներկայացնում է այդ վերին աստիճանի հետաքրքրական ժամանակների բաւական մանրամասն նկարագիրը: Մեր աշքի առջև անցնում է պատմական մի աղմկալի կեանք, մենք տեսնում ենք թէ ինչպէս է եկեղեցական իշխանութիւնը ահապին ոյժ ձեռք բերում, տիրապետող նշանակութիւն ստանում, հետզհետէ յետ մղելով թագաւորական իշխանութիւնը, երկրորդականն զիրք յատկացնելով նրան: Գրիգոր Լուսաւորչի եռանդոտ, ընդունակ յաջորդները հաստատում են մի կղերական ժառանգական միապետութիւն: Քաջ ու աներկիւղ են նրանք, չնա քաշում նոյն իսկ հայոց թագաւորների հետ ընդհարուելուց, մինչդեռ Սրչակունիները թուլամորթ են, անբարոյական, գահի իրաւունքները պաշտպանել չը զիտեն: Եւ քաղաքական անկախութեան գաղափարն անդադար ստանակոխ է լինում, կորցնում իր ժողովրդականութիւնը, խաղալիք դառնում ուժեղների ձեռքին: Թէև Փաւստոսը իբրև պատմագիր չափազանց միակողմանի է, չափազանց տենդենցիօղ, որովհետեւ պատկանում է կղերական կուսակցութեան և ամբողջապէս նուիրուած Լուսաւորչի տոհմի շահերին, թէև նա ոչինչ ջանք չէ ինայում մի կողմը փառաբանելու եւ միւս կողմը վաստաբանելու համար, բայց և այնպէս, նրա նկարագրութիւնների մէջ շատ հեշտ է պարզել, մերկացնել պատմական ճիշտ իրողութիւնները: Այդտեղ մենք գտնում ենք այն մաքառականների արձագանքները, որոնք գոյութիւն ունէին եկեղեցական և աշխարհական իշխանութիւնների մէջ: այդտեղ մինչք տեսնում ենք թէ ինչպէս նոյն իսկ փոքր ի շատէ բարեխիղ Սրչակունի թագաւորը անկարող է լինում սանձահարել կղերականների անշափ ձգտումները, աղատուել կղերական ինամակալութիւնից և կարգաւորել երկրի գործերը այնպէս, ինչ-

պէս պահանջում էին պետութեան շահերը։ Մի խօսքով, այդ պատմագրութեան մէջ հանդէս է հանուած Արշակունեաց հարստութեան երկարատե, ցաւալի հոգեվարքը։ Եւ որովհետև Արշակունիներից յետոյ հայերը երբէք չը կարողացան մի համազգային, Հայաստանի բոլոր կողմերի համար ընդհանուր թագաւորութիւն հիմնել և պահպանել, ուստի հասկանալի է, թէ որքան մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Փաւստոս Բիւզանդը։

Բացի այս բոլորից, Փաւստոսը շատ նշանաւոր է և իրեն մի աղջային վիպասանութիւն, հիւսուած աւանդութիւններից, դիւցազնական երգերից։ Հայոց ոչ մի ուրիշ պատմագիր այնքան հետաքրքրական մանրամասնութիւններ չէ հաղորդել մեր հին ներքին կեանքից, նիստ ու կացից, ինչպէս Փաւստոսը։ ոչ ոք նրա պէս օգտակար շատախօսութիւնների մէջ չէ ընկեր, շատախօսութիւններ, որոնք թէև անպահոյց են և անմշակ, բայց հիւթալից և իրական փաստեր են պարունակում իրանց մէջ։ Միւն նոյն ժամանակ չը կայ և մի այնպիսի հայ մատենագիր, որ Փաւստոսի ճակատագիրն ունեցած լինի։ Հինգերորդ դարից նա հայոց գրականութեան խորթ զաւակ էր նկատուած և հեղինակութիւն չէր կացելում։ մի տեսակ ատելութիւն էր զգացւում դէպի այդ հեղինակը, իրեն դէպի մի անհարազատ, օտար, չարամիտ հեղինակ։ Այդ տեսակ վերաբերմունքը գոյութիւն ունէր և XVIII դարում, միայն նոր ժամանակներում, ՏIX դարի երկրորդ կէտում, փոխուեց այդ վերաբերմունքը և Փաւստոսը մեծ նշանակութիւն ստացաւ պատմագրութեան մէջ։

Յովհաննէս Կոլոտը հին գրականութեան մնացորդների տըպագրութեան հովանաւոր հանդիսանալով, իր ծախսով ատել տուեց և Դաւիթ Անյաղթի «Սահմանաց գիրք» աշխատութիւնը։ Յայտնի է որ հինգերորդ դարի հայ գրական գործիչների թւում համարւում է և Դաւիթ Անյաղթը, որ, եթէ հաւատալու լինինք ազգային աւանդութիւններին, հայոց միակ և ամենագիտուն փիլիսոփան էր, թարգմանեց յունաց փիլիսոփանների (Արիստոտէլ, Պորֆիր) գրուածքները, փիլիսոփայական լեզու ստեղծեց մեղանում։ Նոյն աւանդութիւնները պատմում են, որ Դաւիթը, Յունաստանից վերադառնալուց յետոյ, ոչինչ յարգանք ու պատիւ չը գտաւ Հայաստանում, թէև Աթէնքում և Բիւզանդիայում բաւական յայտնի անուն ունէր. հայերը այն աստիճան վատ, տմարդի ընդունելութիւն ցոյց տուին այդ զարգացած, փիլիսոփայ մարդուն, որ նա հարկադրուած եղաւ անցնել Վրաստան և այնտեղ սպասել իր մահուան։ Սյսպէս է եղել հայերի տղիտութեան դէմ գնացող ամեն մի հայ գիտնականի ճակատագիրը... «Սահ-

մանաց գիրքը» համարւում է Դաւթի ինքնուրոյն գրուածքը. դա մի գիտնական վիճաբանութիւն էր, ուղղած յունաց փիլսոփաների սկեպտիկ դպրոցի դէմ, որի հիմնադիրն էր Պիրրօն և որ մերժում էր փիլիսոփայական խոհերի և մտածումների օգուտը, քանի որ դրանցով մի դրական, անուրանալի ճշմարտութեան համանել չէ կարելի: Դաւթի հերթում է տարակուսանքների, բացասութիւնների այդ վարդապետութիւնը և ապացուցանում է փիլիսոփայութեան ճշմարտութիւնն ու կարեորութիւնը: Բայց XVIII դարի հայ ընթերցողը հազիւ թէ կարողանար հասկանալ Դաւթի Անյաղթի գժուար, յունաբանութիւններով լի լեզուն, որ աղճատուած էլ էր դարերի ընթացքում, արտապրոյների ձեռքով: Եւ, երկի, Կոլոտը այդ գիրքը տպագրել տուեց աւելի իր աշակերտների համար, որոնց աւանդուում էր և հին փիլիսոփայութիւնը:

Առանց ուշադրութեան չը մնացին և կրօնական բանաստեղծութիւնները: 1721 թուին տպուեց Առաքել Սիւնեցու «Աղամ» գիրքը, իսկ 1714-ին—Յովհաննէս Թլկուրանցու «Արարածածք»: Երկուսն էլ մի և նոյն բիբլիական նիւթի մասին են ճառում—Աղամի և աշխարհի ստեղծագործութեան: Բայց այդ հայ վարդապետներից ոչ մէկն էլ Միլտոնի տաղանդի հեռաւոր նմանութիւնն անգամ չուներ և նրանց պօչմաները միայն տեղ են գրաւում մեր անցեալի գրականութեան մէջ...

Դիմելով այժմ Կոլոտի ժամանակակից գրողներին, մենք այստեղ տեսնում ենք աղքատ, տափակ ու նեղլիկ իրականութիւնը: Յիշենք ամենից առաջ այն տաղերը, որոնք տպագրուեցան 1734 թուին. յիշում ենք լոկ այն պատճառով, որ այդ տաղերը յօրինել են Կոլոտի աշակերտները: Տաղեր է գրել ու մի քանի անգամ հրատարակել և Բարդասար դպիրը, որի ով լինելը յայննեցինք վերևում: Բայց Բարդասարը գոնէ միայն տափակ ուսանաւորներ չէ գրել, նա յօրինել է և «Քերականութիւն», բաղկացած երկու հատորից, որոնցից առաջինը լոյս է տեսել 1738 թուին և որի առաջին երեսներում հանդիպում ենք այս խրատին.

ԱՌ դու մանուկ, եթէ զայս արհեստ ուսանիս,

Յեկելեցով իբր զծաղիկ բռսանիս:

Աւելի ուշագրաւ հեղինակ է Յովհաննէս Հաննա վարդապետը, որ գրել է երուսաղէմի ու տեղերի նկարագրութիւնը և իր ժամանակի եղելութիւնները ու դրել է այդ բոլորը «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս» վերնագրի տակ: Այս գրքից մենք մի քանի անգամ առիթ ունեցանք վկայութիւններ բերելու: Հաննա վարդապետը առանձին ացքի ընկնող մատենագրական ընդունակութիւն չունի. լի-

նելով Երուսաղէմի միաբան, նա շատ սրտառուչ կերպով, իրրև հարստահարուած, տանջուած մարդ, նկարագրել է Կ. Պօլսի փը-չացած հոգեորականութեան այն զգուելի արարքները, որոնց զոհ էր դարձել Երուսաղէմի հայոց վանքը XVII դարի վերջեւ- րում և XVIII-ի սկզբում, ինչպէս նաև այն բարեկարգութիւն- ները, որոնք ակսուեցին ամենեղ Յովիաննէս Կորուաի և Գրիգոր Շղթայակրի ձեռքով: Երուսաղէմի ահուելի պարտգերի վճարու- մը հնարաւոր էր միայն առաս նուիրատութիւնների միջոցով և, ինչպէս տեսամնք, Գրիգոր պատրիարքը, մարդկանց սիրար շարժելու համար, շղթայ անցկացրեց իր վզին: Նոյն այդ նպա- տակով էլ Համնա վարդապետը գրել է իր պատմութիւնը: Երու- սաղէմի նուիրական վայրերի նկարագրութեամբ բարեպաշտա- կան եռամբ վառելով ընթերցողների մէջ, նա խորհուրդ է տա- լիս հոգու փրկութիւն որոնել ուխտագնացութեան կամ գոնէ պարզ նուէրներ ուղարկելու մէջ: Թէս գրուածքը այսքան մաս- նաւոր նպատակ ունի և անշափ ջատագովութիւններ է պարու- նակում իր մէջ, բայց հետաքրքրական է իրքն անկեղծ սրտի թելապրած մի յիշատակարան, որի մէջ արձանացած են հայ ան- արժան հոգեորականութեան աւազակային քաջագործութիւն- ները: Համնայի այս աշխատութիւնը լաւ ընդունելութեան ար- ժանացաւ. նա երեք տպագրութիւն ունեցաւ՝ 1727-ին, 1763-ին և 1782-ին:

Նախ քան միւս հեղինակների մասին խօսելը, պէտք է ի- մանալ, թէ Յովիաննէս Կոլոտը ինչպէս էր վերաբերում դէպի իր ժամանակի առաջնակարդ, դժուար ու ցաւալի իրողութիւնը, այն է կաթօլիկ և լուսաւորչական հայերի վէճերն ու ընդհա- րումները: Կոլոտը իր երկար պաշտօնավարութեան միջոցին, ի հարկէ, չը հետևեց Աւետիք պատրիարքի և Յովիաննէս Զմիւռ- նացու քայլերին: Իբրև ուսումնասէր, հասկացող մարդ, նա զի- տէր, որ կրօնական հարցերի մէջ ծեծից ու վայրենութիւնից ա- ւելի զօրաւոր է համոզումը. և այդ պատճառով էլ նրա ժամա- նակ լոյս են տեսնում մի շարք վիճաբանական գրուածքներ, ո- րոնց նպատակն է ապացուցանել հայոց եկեղեցու ուղղափա- ռութիւնը: Կաթօլիկ կղերի դէմ մարտնչող հեղինակների շար- քում մենք ամենից առաջ պիտի յիշատակենք Կոլոտի աշակերտ Յակոբ վարդապետ Նալեսմին, որ նրա մահից յետոյ դարձաւ Երուսաղէմի և Կ. Պօլսի պատրիարք: Նալեսմ 1733 թուակա- նին հրատարակեց իր «Վէմ Հաւատոյ» շարադրութիւնը: Նոյն տարին տպուեց Ստամբուլի Գէորգ Մխլէիմ վարդապետի «Վիճա- բանութիւնք» գիրքը: Փակագծի մէջ նկատենք, որ այս վարդա- պետը վեց տարի ուսում էր առել Պարիզի մէջ, լաւ տեղեակ

էր յունարէն, լատիներէն և ֆրանսերէն լեզուներին, բայց միայն կրօնական վիճաբանութիւններ հեղինակելու ախորժակն ու յօժարութիւնն ունէր: Վերջապէս Ղաղար Ջահկեցի վարդապետը (յետոյ կաթողիկոս) 1735-ին էջմիածնի ճախսով կ. Պօլսում տըպագրել տուեց իր «Դրախտ ցանկալի» մեծ աշխատութիւնը: Աւելի մանրամասն խօսել այդ հեղինակութիւնների մասին միանգամայն անօգուտ ենք համարում Հայոց գրականութիւնը չատ և շատ այդպիսի գրուածքներ ունէր սկսած այն ժամանակներից, երբ փառամոլ, ինտրիկան և կեղեցականները բաժան-բաժան արին Քրիստոսի եկեղեցին «տիեզերական» կոչուած այն ժողովների միջոցով, ուր երկրի գործերը, աչքով տեսանելի երևոյթներն անգամ հասկանալու պատրաստութիւն և զարգացում չունեցող մարդիկ հաւաքւում էին որոշելու երկնքի գործերը, Աստուծու յատկութիւնները: Ո՞րքան եռանդ, որքան աշխատանք է թափուել այդպիսի գրքեր յօրինելու համար. կ'ասենք աւելին—արեան և արտասուրքի քամին-քամնի գետեր են թափուել այդ վէճերը լուծելու համար: Եւ սակայն, ապարդիւն...

Նկատենք այստեղ դաւանական բանակուուի մի արդիւնքը: Ժողովրդին քրիստոնէական հաւատի սկզբունքները մատչելի դարձնելու համար Մխիթար Սեբաստացին 1727 թուին տպագրել էր Վէնետիկում մի աշխարհաբարը «Քրիստոնէական»: Հակառակորդից օրինակ վերցնելով, Յովհաննէս Կոլոտը պատուիրեց նաւելանին գրել աշխարհաբարը լեզուով այդպիսի մի գիրք: Եւ նաւելանի աշխարհաբարը «Քրիստոնէականը» լրյա տեսաւ կ. Պօլսում 1737. ին: Այդ երկու աշխատութիւնները մենք նշանակում ենք յատկապէս իրեր աշխարհաբար զրքեր, որովհետեւ երբէք չենք մոռանում, որ ունենալով գրականութիւն, հարուստ տպագրութիւն, մենք չունենք ժողովրդական, այսինքն հանրամատչելի գրականութիւն...

Սակայն կարողացաւ Կոլոտ պատրիարքը փակել կաթոլիկ և լուսաւորչական հայերի թշնամութիւններն ու հակառակութիւնները այդ վիճաբանական զրքերի մէջ. կարողացաւ հանդարատեցնել երկիրը, վերջ տալ եղբայրասպան պատերազմին:— Ո՞չ: Նրա ժամանակ էլ հալածանքներ յարուցուեցան թէ կ. Պօլսում և թէ գաւառներում. մարդիկ բանտերը նետուեցին, ահազին տուղանքների ենթարկուեցին: Բայց կարելի է գոնէ այս անգամ հանդիսատ խղճով խոստովանել, որ հայոց պատրիարքը չէր այդ դժբախտութիւնների պատճառը: Յովհաննէս Կոլոտը սկզբից և եթ խաղաղասիրութեան և հաշտութեան ճանապարհը բռնեց, նա սիրով համոզում էր կաթոլիկ հայերին գնալ հայոց եկեղեցիները, բարեկամական բանակցութիւններ էր վարում

լատին և պիտուղոսի հետ և կարողանում էր զսպել իրան շրջապատող մարդկանց, որոնք ստիպում էին նրան խիստ, կտրուկ միջոցների դիմել: Բայց լատին եպիսկոպոսը չունէր հայոց պատրիարքի անկեղծութիւնն ու ուղղամտութիւնը: Յենուելով ֆրանսիական և լեհական գեսպանների վրայ, նա աշխատում էր խոյս տալ խաղաղացնող միջոցներից և կաթոլիկ հայերի համար առանձին եկեղեցի և առանձին պատրիարքութիւն հիմնել: Այդ պատճառով խռովութիւնները շարունակուեցան և կոլոտը մի անգամ ստիպուած եղաւ դիմել թիւքը կառավարութեան, ինդրնով նրա օգնութիւնը:

Բայց այդ միջոցին նա այլ ևս չը դիմեց, երբ կաթոլիկների հակառակութիւնը մի քանի ժամանակից յետոյ զարձեալ զրգուց հայերին իրար գէմ: Կողոտը ամեն միջոց գործ էր դնում՝ խաղաղութիւն հաստատելու համար: Նա կատարեց լատին և պիտուղոսի և ֆրանսիական գեսպան Վիլնէօվի բոլոր առաջարկութիւնները: Շատ էր աշխատում մանաւանդ դեսպանը, և հայոց պատրիարքը անգաղար դիմումներ էր անում նրան: 1726 թուին Կ. Պօլսում ամենայն հայոց կաթողիկոս ընտրուեց և օծուեց Կարապետ Ռուբենյին, որ նախ քան էջմիածին ուղեռուելը՝ իր ջանքերը միացրեց Կողոտի ջանքերին խաղաղութիւն և սէր հաստատելու համար: Սակայն մեռած չէին եկուփանները և լատին եպիսկոպոսը այնքան լայն սրտի տէր չէր, որ թոյլ տար կաթոլիկ հայերին մտնել լուսաւորչականների եկեղեցիները: Բանը նոյն իսկ այն տեղին հասաւ, որ Կողոտը դաւանութեան թուղթ ուղարկեց լատին եպիսկոպոսին, լրացրեց այդ թուղթը այնպէս, ինչպէս ուզում էր եպիսկոպոսը և ասաց, թէ հայերի գաւանութիւնը նոյնն է, ինչ և լատինականը և տարբերութիւնը միայն բառերի մէջ է: Դարձեալ անօգուտ: Դեսպան Վիլնէօվը ոչինչ չը կարողացաւ անել՝ հաշտութեան համար. լատին կղերը, հայոց պատրիարքի այդ պատրաստակամութիւնը տեսնելով, ինչպէս միշտ, իր կողմից զիջողութիւն անելու պարտք չը զգաց, այլ, ի հարկէ, պահանջեց, որ Կողոտը ուղղակի պապին հպատակութիւն յայսնէ: Այդքան հեռու պատրիարքը չէր կարող գնալ. ժողովուրդն արդէն տրտնջում էր, թէ նա կաթոլիկանում է: Ինքը, ֆրանսիական գեսպանն էլ, տեսնում էր թէ անհաշտութեան գլխաւոր պատճանն ով է, ուստի և այնքան բարեկամութիւն էր պահպանում Կողոտի հետ, որ նրա թախանձանքին զիջանելով, միջնորդեց Բ. Դրան առջն և կարողացաւ երուսաղէմի ս. Յակոբի վանքը, որ խել էին յոյները, սորից հայերի վրայ հաստատել: Այդ առիթով Կ. Պօլս եկաւ Գրիգոր Եղիայակիրը, որ նոյնպէս ամեն ջանք գործ էր դնում կրօնա-

կան երկպառակութիւնները վերացնելու համար։ Բայց այս պատկառելի հոգեորականի ջանքերն էլ իզուր անցան։ Լատին կղերը ոչ մի զիջողութիւն չարաւ։

1741 թուականի փետրուարի 18-ին վախճանուեց Յովհաննէս Կոլոտը։ Նրա երկարատև պատրիարքութիւնը խոր հետքեր թողեց բարեկարգութեան, դիտութեան սիրահար մարդ, նա թողեց բարեկարգած պատրիարքարան և մի խումբ աշակերտներ, որոնք պատրաստ էին շարունակել նրա քաղաքականութիւնը։ Եւ շարունակեցին էլ։ Բայց մենք առայժմ թողնենք կ. Պօլսը և տեղափոխուենք միւս գրական խոշոր կենտրոնը—Վենետիկ։

## IV

Կ. Պօլսի գրական հրապարակում մենք տեսանք գլխաւորպէս հայկական հին գրականութիւնը, որ վերակենդանանում է տպագրական մամուլի միջոցով։ Սնցեալից մնացած երկերի հետ մի-մի լոյս են գալիս ժամանակակից հեղինակներ, որոնք, սակայն, թոյլ մոքի տէր են, ինքնուրոյնութիւն, ստեղծագործական ընդունակութիւն չունին։ Նրանք պտոյտ են դալիս անցեալի թողած ժառանգութեան սահմաններում։ արծարծում են կրօնական մտածողութիւնները, աստուածաբանական դատողութիւնները։ Կ. Պօլսը հայկական իրականութիւնն է նեղ, սահմանափակ, որ կերակրում է սեփական աղքատիկ հիւթերով և չունի իր առջև հանրամարդկային հորիզոններ։

Ուրիշ աշխարհ է ներկայացնում Վենետիկի գրական հրապարակը (մենք, ի հարկէ, միայն հայոց գրականութիւնն ունինք ի նկատի)։ XVII դարի վերջից այդտեղ մնացել է Անտօն Բօրտօլիի տպարանը, որ շարունակում է հայերէն գրքեր տպագրել, Եթէ ի նկատի ունենանք, որ մինչև XVIII դարի կէսը Վենետիկում լոյս են տեսել մօտ 85 հայերէն գրքեր և այդ քանակութիւնից միայն մի 7—10 գրքեր են տպուած ուրիշ իտալացիների տպարաններում, այն ժամանակ պարզ կը լինի այն գերը, որ կատարել է մեղ համար Բօրտօլիի տպարանը։ Վենետիկը, չնորհիւ այդ տպարանի, տալիս էր հայերէն ոչ միայն մեծ գրքերի, այլ և մաքուր ու գեղեցիկ տպագրութիւնների հասկացողութիւնը։ Եթէ վենետիկեան հրատարակութիւնները աւելի ընթերցողներ էին գրաւում, քան ուրիշ տեղերինը, պատճառներից մէկը, անշուշտ, պէտք է համարել գեղեցիկ արտաքինը։ այդ ժամանականերից են սկսում և վենետիկեան ուկեզօծ կազմերը, որոնք դնալով աւելի և աւելի գեղեցկանում են։

Հայկական մամուլին վենետիկում նիւթ տուողը զլխաւորապէս թարգմանական գրականութիւնն է: Թարգմանուում են գրքեր, ի հարկէ, եւրօպական լեզուներից, լատիներէնից, իտալերէնից, ֆրանսերէնից, նոյն իսկ սպանիական լեզուն էլ պաշար է տալիս հայերէն գրականութեամբ պարապողներին: Եւ վենետիկը, գոնէ XVIII դարում, կ. Պօլսի հակակշիռն է ներկայացնում իբրև թարգմանչական կենտրոն: Մինչդեռ կ. Պօլսում հայ ինքնուրոյն, հին թէ նոր, միտքն է պահպանուում, վենետիկը արևմտեան աշխարհի գրքերն է հայացնում: Բայց ինչն է թարգմանչական եռանդի ամենազլխաւոր գրդիշը:—Կրօնը, միայն նաև Աշխարհական որ և է գիտութեան հոգս այնքան չէ նեղացնում Ադրիական ծովի ափին գործող մարդկանց, որքան հոգեւոր կատարելագործութեան հոգսը: Ուրեմն, հիմնական յատկութիւններով, ընդհանուր գոյներով պօլիս-վենետիկեան գրականութիւնը մի է. թէ այստեղ և թէ այնտեղ—կրօնը, թէ այստեղ և թէ այնտեղ չույզութիւն չէ համարւում կրօնական գրքերի նոյն իսկ անչափ հարստութիւնը. երկու տեղերում էլ մի և նոյն միամիտ հաւատն է տիրում—իբր թէ հայոց ազգը կրօնական գրքերի մնձ կարօտութիւն ունի, թէ նրան միշտ պակասում են այդ տեսակ գրքեր և ոչ մի կրօնական գրուածք, որ տրում է նրա ձեռքը, աւելորդ չէ—սկսած ամենապարզ զասագրքից մինչև ամենախըրթին, հաստափոր և բազմահատոր հեղինակութիւնները:

Թարգմանութիւնները հետզհետէ նոր, զեռ չը տեսնուած գրքեր են աւելացնում, նորունոր անուններ են մտցնում հայոց գրականութեան մէջ: Երեան են գալիս «Փամագիրք Աստուածածնի», «Փամագիրք Լուսաւորչի», «Վարդարան» և այլ այդպիսի կաթօլիկ ծիսարաններ և տօնացոյցներ: Դրանք, ի հարկէ, նշանակուած են հայ կաթօլիկների համար. բայց տոատ են ընդհանուրապէս ամբողջ ազգի ընթերցանութեան համար նշանակուած թարգմանական գրքերն էլ: Դրանց մէջ առաջին տեղը յատկացրած է աստուածաբանութեան: Եւ որովհետեւ կաթօլիկ աշխարհի համար թէ ճրադ, թէ աստղ և թէ հրեշտակային վարդապետ աստուածաբանական հարցերում Թօմա Ակուխնացին է, ուստի և հայ թարգմանչներն ու համառոտողները նրան և նրա հետեղողներին են դիմում: Եւ մենք, առանց չափազանցութիւնների մէջ ընկնելու, կարող ենք ասել, որ տամանութերորդ դարը մեղանում—Թօմա Ակուխնացու զարն է:

Դարի սկզբում վենետիկում գործ են տեսնում զանազան պատահական հրատարակիչներ ու թարգմանիչներ: Շուտով անուն է հանում Միիթթար Սեբաստացին: Նրա հետ իրանց գրական աշխատութիւնների քանակութեամբ կանգնած են երկու ու-

րից վարդապետներ—Պետրոս Թիֆլիսեցի և Խաչատուր Էրգրումցի:

Կ. Պոլսից հեռանալուց յետոյ Մխիթարի առաջին հրատարակութիւնը եղաւ Վենետիկում 1715 թուականին, այսինքն ճիշտ այն տարին, երբ նա փախաւ Մեթօնից և աշխատում էր հաստատուել Վենետիկում: Մխիթարեան միաբանութեան այն շրջանը, որ անցաւ Մեթօնի վաճառում, ինչպէս ասացինք, անպուղ էր գրական գործունէութեան տեսակէտից. և Մխիթարը Վենետիկում հաստատուելուց յետոյ առաջին ժամանակներում հանդիսանում է աւելի իբրև ուրիշների գործերը հրատարակող, քան հեղինակ կամ թարգմանիչ: Բայց թէ իբրև հրատարակիչ, թէ իբրև հեղինակ և թէ իբրև թարգմանիչ նա մի ևնոյնն էր—վաճական ոգու տոպորտուած մի կղերական: 1715 թուին նրա հրատարակած գիրքը Թօմա Ակուխնացու ուսուցիչ Ալբերտ Մեծի «Աստուածաբանութիւնն» էր: Այդ գիրքը Մխիթարը հանել էր հնութեան փոշիների տակից. նա թարգմանուած էր Նախիջևանի գաւառում գեռ ՏՎ դարի առաջին կէսում, ունիթօրների ձեռքով: Արտագրողները աղաւաղել, աղճատել էին այդ թարգմանութիւնը, որ առանց այդ էլ ունիթօրների աղաւաղ ու անձոնի հայերէնով էր կատարուած: Մխիթարը, որքան կարողանում է, ուղղում, կարգի է բերում այդ թարգմանութիւնը, աւելացնում է Ալբերտի կենսագրութիւնը և զժուար իմանալի ու տարակուսական բաների բացատրութիւնը, առաջնորդ ունենալով Թօմա Ակուխնացուն, տպագրութեան է տալիս իբրև «մեղրածորան և ամենազավ» գիրք, որի վրայ ինքն էլ մանկութեան ժամանակ վարժուել է և որ այդ պատճառով էլ շատ սիրում է: Աւելի հրատարակչին, քան թէ հրատարակութիւնը, բնորոշելու համար, աւելորդ չենք համարում մի քանի մանրամասնութիւններ բերել այս գրքի մասին:

Ալբերտ Մեծի «Համառօտ Աստուածաբանութիւնը» մի ստուար հատոր է, 680 միջադիր երես, մանր տառերով: Նա երկար ու բարակ դատողութիւններ է տալիս միջնադարեան սիօլաստիկներին զբաղեցնող դատարկ հարցերի մասին: Թէ ինչ է նա ասում և մանաւանդ ինչպէս է ասում, այդ մասին մենք բաւականաշափ հասկացողութիւն կարող ենք կազմել, նայելով նրա երեսներից պատահարար մէկին: Ահա.

«Յիրաւի համեմատի նեռն սերաստէս օձին: Որպէս ասի ի ծննդոցն, տան՝ օձ դարանակալ. քանզի սերաստէս՝ է օձ եղջերաւոր, որ նշանակէ զնեռն՝ որ զինեացի չորիւք եղջերօք, այսինքն խորամանկ յորդորմամբ. սքանչելագործութեամբ. առաւելութեամբ պարզեաց. և խստութեամբ տանջանաց»: «Ի յա-

բութեան համահաւաքեսցին չորք պատճառք, այսինքն, առնողական, որ է աստուած. նիւթական, որ է հողն. տեսական՝ որ է միաւորութիւն հոգւոյ և մարմնոյ. կատարունական, այսինքն՝ զի ընդունեցի իւրաքանչիւր ոք որո ինչ արար մարմնով, եթէ չար և թէ բարից «Որպէս ի դատապարտեցնալս է զանազանութիւն մեղայ, այսպէս և զանազանութիւն պատժոց. ուստի մինչ ի մեղքն է յետո դարձումն ի ստեղծողին, և դարձումն առ փոփոխական բարին, և անկարգութիւն կամաց, որ է ընդդէմ ենթադրութեան բաւականին, յիրաւի և պատիժն վասն սոցին զանազանեցին. Ուստի վասն յետո դարձման՝ լինիցի զրկումն յաստուածային տեսութենէ, այլ վասն դարձման՝ լինիցի պատիժ նիւթական տոչորման. իսկ վասն անկարգութեան բանին, և կամացն լինիցի պատիժ ընդհանրական՝ որ կայանայ ի պէսպէս նեղութիւնս դժնդակս և յաւիտենականս: Հուր դժոխոցն՝ ոչ միապէս չարչարեսցէ զամնեսեւան. քանզի ի միոյ հրոյ՝ ոմանք առաւել, և ոմանք նուազ չարչարեսցին, ըստ այնմ որ առաւել կամ նուազ մեղանչիցին»:

Եւ այս բոլորը հալած իւզի տեղ է ընդունւում և «մեղրածորան» ճշմարտութիւնների պէս առաջարկեում է՝ Քրիւ—Տասնութերորդ դարում... Ակամայ պէտք է բացականչել. «Խեղճ հայ ընթերցող»... Այդ սիօլաստիքական զառանցանքները վաղուց էին լուսաւոր մարդկութեան ձեռքով թազուել տղիտութեան, նախապաշարմունքների գերեզմանոցում, իսկ մեզ մօտ նորնոր էին յարութիւն առնում, տարածւում, մեզ համար Եւրօպացից եկող ձայներ էին: Միսիթարը պատմում է ահագին հրաշքներ դժոխքի կրակների յատկութիւնը այդքան մանրամասըն կերպով նկարազրող Ալբերտի մասին: Դա սուրբ է, հրաշագործ է. արքայութիւնից եկած մի կին պատմել է մի վարդապետի՝ թէ Ալբերտը արքայութեան ամենաբարձր տեղումն է գտնուում: Հայ ընթերցողը ինչպէս չը հաւատար, որ ամեն իւմաստութիւն ծրարուած է այդ սուրբ մարդու գրած աստուածարանութեան մէջ, ինչպէս հասկանար որ այդ առասպեկները յօրինուել են Եւրօպայում զեռ ԽԱ դարում, տղիտութեան և նախապաշարմունքների այն խաւար ժամանակներում: Միսիթարի կենսագրութեան մէջ մենք շատ անզամ հանդիպեցանք հրաշքների և ասացինք, որ զրանց հաւատում էր ոչ միայն նա, այլ և նրա աշակերտները, Եւրօպայում կրթուած հոգևորականները: Այդ յատկութիւնը մենք զեռ շատ կը հանդիպենք Միսիթարից աւելի շատ զարգացած, շատ ընդունակ Միսիթարեանների մօտ...

Նոյն հայ ունիթօրների ձեռքով թարգմանուել էին և «Գիրք

Առաքինութեանց» և «Գիրք Մոլութեանց» անունով գրքերը։ Մխիթարը դրանց էլ թոյլ չէ տալիս հանգստանալ դարերի փոշու տակ և հրատարակում է 1720—1721 թուականներին։ Այն էլ որպիսի հրճուանկով։ Ընթերցողներին ուղղած իր խօսքի մէջ նա ասում է. «Ինչպէս որ մէկը իր վաղուց տեսչացածը գտնելու համար երկար թափառում է և գտնելուն պէս իսկոյն հրաւիրում է իր սիրելիներին և բարեկամներին, որ իր հրճուանքին կից լինեն, այնպէս էլ ես, գտնելով այս զիրքը և Աստուծու աջողութեամբ լոյս հանելով տպագրութեամբ, հրաւիրում եմ ուսաման ծարաւ և առաքինութիւն սիրողների բոլոր դասերը հրճուանքից լինել իմ նուաստութեան»։ Իսկ թէ որպիսի հրճուանք էին այդ գիւտերը ընթերցողի համար, բաւական է բերել նրանց վերնագիրները։ 1) «Առաքինութեանց զիրք...Նորում նախ ընձեռին զեօթանց առաքինութեանց, զհաւասոյ, զկուսոյ և զսիրոյ. զխոհեմութենէ, զողջախոհութենէ, զարիութենէ և զարդարութենէ։ Ապա զեօթանց պարզեաց Ռուսոյ սրբոյ. և վերջապէս զերանութեանց աւետարանականաց»։ 2) «Գիրք Մոլութեանց»։ այսինքն համառօտ համահաւաքումն վարդապետութեանց, զիւրաքանչիւրոց տեսակաց մոլութեանց։ և մանաւանդ զեօթանց զիսաւորաց մեղաց, թէ զինչ իցեն և որքան խորչելիք։ Ընդ որում և առակցին ումանք վարդապետութիւնք զպահպանմանէ հնդից արտաքնոց զդայութեանց, և պարզաբանութիւնք զտասանց պատգամաց»։

Բերենք մի երկու օրինակ էլ Մխիթարի «մեղրածորան» հրատարակութիւններից։ 1722 թուականին նա լոյս է հանում «Աղբիւր Բարի» անունով գիրքը, որ լատիներէնից թարգմանել է Պետրոս վարդապետ, Թիֆլիսեցի։ Այս վարդապետը, ինչպէս եւրեում է, ունեցել է թարգմանչական մեծ ջանասիրութիւն և հմուտ է եղել լատիներէն և իտալերէն լեզուներին։ Բայց երկու հանդամանք համարեա բոլորովին ապարդիւն են դարձրել նրա ջանքերը։ նախ՝ որ իբրև Հոռոմի դպրոցի աշակերտ, նա ի չարն էր գործ դնում լատինացրած հայերէնը, և երկրորդ՝ թարգմանում էր բացառապէս ամենաթունդ կրօնական զրուածքներ։ Մինք տեսանք, որ գեռ կ. Պօլսում Մխիթարը հրատարակեց Պետրոս վարդապետի երկու թարգմանութիւնը լատիներէնից։ Վերսկսելով հրատարակչական գործունէութիւնը վենետիկում, նա դարձեալ զիմեց այդ վարդապետին։ 1722 թուականին տպագրեց նրա «Աղբիւր Բարի», իսկ 1731-ին—«Յարացոյց ապաշխարողաց» թարգմանութիւնները։ Վերջին գրքին Մխիթարը կցեց իր մի ոտանաւորը, որի մէջ համոզում էր ընթերցողին շատ և միշտ կարգալ այդ գրուածքը, որ ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է

ապաշխարել մեղքերը և թողութիւն գտնել։ Բայցի դրանցից՝ Պետրոս վարդապետը ունի և ուրիշ թարգմանութիւններ, որոնց ցից մի երկուսը յիշատակելու առիթ կ'ունենանք։ Այժմ դիմենք Խաչատուր էրզրումցուն։

Դա նոյն վարդապետն էր, որ չը կամեցաւ Մխիթարի հետ միասին գործել և միաբանութիւն հիմնել։ Մենք գիտենք որ Խաչատուրը ժամանակի ամենազարգացած, զիտուն մարդն էր համարւում։ Կ. Պօլսում իր քարոզչական գործունէութիւնը վերջացնելուց յետոյ, Հռոմի գիտութիւններով բևոնաւորուած այդ կղերականը տեղափոխուեց Վենետիկի՝ իր աշխատութիւնները տպագրելու համար։ Իսկ տպագրելու բան նա շատ ունէր։ Օգտուելով Զուղայեցի Շէնրիմաննեանների առաւ նիւթական օժանդակութեամբ, նա սկսեց միմեանց ետենից հատորներ լրյու հանել։

1710 թուականին տպագրուեց նրա «Քարոզգիրքը», երկու հատոր. իսկ 1711-ին «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» աշխատութիւնը, նոյնպէս երկու հատոր։ Այն ժամանակուայ մեր կրօնամոլ գրականութեան մէջ այս աշխատութիւնը պէտք է մի փայլուն բացառութիւն համարուի։ Ինքը հեղինակը, այսպէս է դասաւորում իր այդ գործի բովանդակութիւնը.

«Համառօտական իմաստահրութիւնն, յորում պարունակին որք հետևին. այսինքն արուեստք, քերթողութիւն, ճարտասանութիւն, բանաստեղծութիւն և տրամաբանութիւն. ընականաբանութիւն ըստ ամենից իւրոց մասանց. այսինքն յաղագ մարմնոց, յաղագ աշխարհի և երկնի, յաղագ ծննդեան և ապականութեան. յաղագ տալերաց, յաղագ անկատար խառնեցելոց, յաղագ տնկոց, յաղագ կենդանեաց, յաղագ մարդոց, բժշկականութիւն, բարոյականութիւն և քաղաքականութիւն. մաթէմաթիքա, ըստ ամենից իւրոց մասանց. այսինքն թուաբանութիւն, երկրաշափութիւն, աստեղաբաշխութիւն, երածշտութիւն, ընդհայեցողութիւն, և կշորդաբանութիւն և մեթափիզիքայն։»

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել ցոյց տպլու, որ եթէ հայ կաթօլիկ վարդապետները, ուսում ստանալով Եւրոպայում, լեզուներ սովորելով և տարիներ անցկացնելով արևմտեան մտաւոր կենտրոններում, տալիս էին իրանց ազգին միայն կրօնական վիճարանութիւններ և եկեղեցական զրքերի թարգմանութիւններ, դրա պատճառը այդ կրօնաւորների անհուն ֆանատիկոսութիւնն էր, խաւար, անզարդացած հոգին, որ միայն մի նեղ սահման էր ճանաչում իր գործունէութեան համար։ Եւ իրաւ կաթօլիկ եկեղեցին, որքան էլ իր շահերի, տիրապետական ձգտումների համար օգտակար համարէր պահել մարդկութիւնը հնութեան խաւարի մէջ, բայց և այսպէս չէր կարող միանգայն արհամարհել ժամանակի գիտութիւնը, և քիչ չեն այսպիսի կաթօլիկ կրօնաւորներ, որոնք իրանց պեմբին անյարմար

զբաղմունք չեն համարել գիտութեամբ պարապելլը: Նոյն իսկ եղուխտական կարգը, որի գլխաւոր նպատակն էր պահպանել և տարածել պապականութեան թագաւորութիւնը աշխարհի վրայ, պարտք էր համարում գիտութիւնը մշակել, և տուել է մի շարք գիտնականներ: Կաթոլիկ հայ վարդապետներին մնում էր մի քիչ բարեխղճութիւն ունենալ, հասկանալ որ վերջապէս մեղք է խեղճ հայերի ուղեղը աստուածաբանական և վարդապետական անշափ ու անսահման շատախօսութիւններով սպանելը, և նրանք կարող էին, առանց իրանց պապական ուղղափառութեան վրայ մազի չափ անգամ ստուեր գցելու, մի քիչ էլ թարգմանել կամ պատմել գիտնական գրքերի բովանդակութիւնը: Այդ բանը հասկացաւ միայն Խաչատուր Էրզրումցին, և հազորդելով գիտութեան զանազան ճիւղերից տեղեկութիւններ, նա ոչինչ մեղք չէր գործում իր սխօսատիկ կրթութեան, իր կրօնաւորական հասկացողութիւնների և նախապաշարմունքների դէմ: Անշուշտ, հայեացքի լայնութեան և պարտաճանաչութեան մի պատուաբեր նշան էր դա, որի համար հայ ընթերցողը չէր կարող չնորհակալ չը լինել: Ուկան վարդապետը և Ղուկաս Վանանդեցին պատուել էին հայ վանականութեան այն կախարդական շրջանը, որի մէջ գրիչն ու միավը միայն երկնքին և հոգուն ծառայելու պաշտօնն ունեին: Նրանք կաթիւններ տուին և «արտաքին գիտութիւններից»: Խաչատուր վարդապետը աւելացրեց այդ կաթիւնները. եթէ մենք ունենայինք կրօնական նախապաշարմունքներից ազատ միտք, որ կարողութիւն ունենար ծառայելու գիտութեան, աւելի չնորհակալ կը լինեինք, որովհետև այդպիսի միավը ազատ գիտութիւն կը բերէր մեր մէջ, մի բան, որ չէ կարելի սպասել հոգեորական մարդուց: Բայց քանի որ չենք ունեցել այդպիսի մարդիկ, չնորհակալ պիտի լինենք, որ գոնէ կրօնական հասկացողութիւնների խիտ ցանցի միջով գիտութեան կաթիւններ էին անցնում դէպի ժողովուրդը:

Այդ հրատարակութիւնից երկու տարի անցած, 1713-ին, Խաչատուր վարդապետը տպագրում է իր «Ճարտասանութիւնը, և ապա լրում է ամբողջ 16 տարի: 1723-ին նա լոյս է հանում իր «Ընդարձակ Աստուածաբանութեան» առաջին հատորը: Դա մի մեծ գործ էր. յիշատակարանի մէջ Խաչատուր վարդապետն ասում է, թէ դրա վրայ աշխատել է համարես քսան և հինգ տարի, որ ու գիշեր: Եւ զարմանալի էլ չէ, որ այդպէս եղած լինի. «Աստուածաբանութիւնը» քաղուած է Թօմա Ակուբինացու ընդարձակ աշխատութիւնից. իսկ Ակուբինացու սիօլաստիկան այնքան նրբութիւնների է հասցրած, այնքան դժուարամարս է, որ նրան ուսումնասիրելը հեշտ գործերից չէ: Բայց դրանից,

Խաչատուր վարդապետը, երեխ իր ահագին գիտնականութիւնը ցոյց տալու համար, աստուածաբանական փիլիսոփայութիւնը պատմել է իր ընթերցողին... ոտանաւորով,—մի բան, որ ցոյց է տալիս, թէ որքան ողորմելի էր այն ժամանակուայ հասկացողութիւնը ոտանաւորի, բանաստեղծութեան մասին։ Ոտանաւորը աւելի ևս պիտի գծուար հասկանալի դարձնէր սիօլաստիկ չոր ու ցամաք փիլիսոփայութիւնը և շատ հասկանալի է, որ խեղճ էրզրումցին պիտի ամբողջ քառորդ գար գլուխ կոսրէր այդ՝ աւելի քան անհարկաւոր գործի վրայ։ Դրան երկրորդ հատորը տպագրուեց հինգ տարուց յետոյ։

Մենք ասացինք որ XVIII դարը մեզանում կարելի է անուանել Թօմա Ակուխնացու դար։ Խաչատուր Կարնեցին էր, որ բաց արեց այդ դարը. նա առաջինն էր, որ Ակուխնացու ամբողջ փիլիսոփայութիւնը մտցրեց մեր գրականութեան մէջ։ Առջևներումս ունենք այդ փիլիսոփայութեան ընդարձակ թէ համառոտ հրատարակութիւնների մի շարք։ Մեր կաթօլիկ վարդապետների համար դա իմաստութեան մի անսպառ աղքիւր է. Նրանք չեն կարողանում կշտանալ այդ աղքիւրից և չնորհիւ նրանց եռանդի՝ Ակուխնացին հայերի մէջ դառնում է մի բարձր հեղինակութիւն, գիտնականութեան մի շտեմարան, որից պաշար վերցնողները համարում են մեր մէջ բարձր զարգացում ստացածներ։ Ի նկատի ունենալով այդքան նշանաւոր աղջեցութիւնը, այստեղ, քանի որ գեռ Ակուխնացու դարի սկզբումն ենք, բնական պիտի լինի իմանալ, թէ ինչ ունէր այդ փիլիսոփայ աստուածաբանը, որ նրա վրայ այնքան սիրահարուած էին Եւրօպայում աշխատող հայ վարդապետները։

Թօմա Ակուխնացին ապրում էր XIII դարում (1227—1274)։ Դա մի նշանաւոր դար էր կաթօլիկ եկեղեցու համար։ Դեռ երբէք հերձուածներն ու աղանդները այնքան չէին բազմացել Եւրօպայում, ինչպէս այդ դարի սկզբներում և նախընթացի վերջերում։ Հոօմի պատր շատ ուժեղ էր, տիրապետութեան զագաթնակէտին էր հասել. բայց և այնպէս, նա հիմք ունէր վախենալու ազատ մժիյ, որ չը նայած կաթօլիկութեան ձեռք առած միջոցներին, տարածում էր մարդկանց մէջ և եկեղեցին պատրակտող հերձուածներ էլ ծնեցնում։ Նոր աղանդների մէջ ամենաշատ տարածուածը և ամենից վտանգաւորը այն աղանդն էր, որին հետևողները անուանում էին ալբիզեցիներ։ Իր դաւանած սկզբունքներով, իր բռնած դիրքով, այդ աղանդը մի անհանգիստ, եռուն յեղափոխական տարր էր ներկայացնում կաթօլիկ ուղղափառութեան դէմ \*։ Հոօմը, նկատելով աղանդը

\*.) Հայերիս համար շատ հետաքրքրական է ալբիզեցիների աղանդը

գնալով մեծ չափեր է ընդունում և գցում է պապականութեան ամբողջ նշանակութիւնը, XIII դարի սկզբում արիւնալից միշտոցներ ձեռք առաւ: Խնճուկենաթոս ՚III պապը խաչակրաց արշաւանք հանեց ազանդաւորների դէմ, որ տիեզ մօտ 20 տարի: Անդուժ աւերածութիւնների մի շրջան էր դա. հարաւային ֆրամսիան, ալբիգեցիների կրկիրը, քարուքանդ եղաւ, տասնեւակ հազարներով մարդիկ կոտորուեցան ի մեծ ուրախութիւն Հոօմի: «Եկեղեցին, ասում է Դրեպէր, չը ճնշեց ալբիգեցիների աղանդը—դա մի գթասրտութիւն էր լինէր չափազանց չափերով, —այլ բոլորովին ոչնչացրեց նրան»: Խաչակիրները ոչ հասակ էին իմայում, ոչ սեռ:

Ալբիգեցիների կոտորածը կաթոլիկ կղերին մեծ բաւականութիւն պատճառեց. այդ կոտորածից ծնուեց հերետիկոսներին և հերձուածողներին պատմելու միտքը: Ծնուեց ինքվիզիցիան: Դա կղերական մի դատաստան էր, որի առջև հանուում էին հերետիկոսութեան մէջ կասկածուողներն անգամ: Յայտնի է թէ ինչ սարսափիներ առաջացրեց նա, յայտնի է թէ ինչքան խայտառակ մի հիմնարկութիւն էր նա և յաւիտենական ինչ անջնջելի արատով ծածկեց Հոօմի եկեղեցին...

Բայց սուրն ու խարոյիները բաւական չէին. նրանք չէին կարող ոչնչացնել մարդկային մտքի աղատութիւնը, որ մանաւանդ

---

այն պատճառով, որ նա զուրս էր եկել Հայաստանից: Նրորդ դարում (Ք. 3.) պարսիկ Սանի փորձեց միացնել պարսկական մազդեզականութիւնը քրիստոնէութեան հետ և կազմեց մի աղանդ, որ կոչուեց մանիքէական աղանդ: Հալածանքները խեղեցին մանիքէականութիւնը, բայց ոչ ընդմիշտ: Նրանից ծնուեց ապավիկեանս աղանդը, որ VII դարի կէսում երևաց Հայաստանում: Պավիկեանները ընդունում էին զրադաշտականութեան հիմնական գաղափարը—բարի և չար սկզբունքների գոյութիւնը, մերժում էին ծիսական քրիստոնեալ եկեղեցին—պատկերները, քահանացութիւնը, խորհուրդները և այլն Յայտնի է որ պավիկեանները Հայաստանում անխնայալածանքների ենթարկուեցան, բայց աղանդը մնաց մինչև XIX դարի սկիլը և կոչում էր «Փոնդրակեցիների» աղանդ: Ազանդասորները շատ անհանգիստ մարդիկ էին. VIII դարում բիւզանդական կայսր Կոնստանտին V, տեսներով որ պավիկեանները յաճախ անցնում են արաբացիների կողմը, անյարմար համարեց պահել ալդ աղանդաւորներին սահմանագլուխ Հայաստանում և գաղթեցրեց նրանց Բալկանեան թերակզբին: Այդտեղ հայ աղանդաւորները սկսեցին տարածել իրանց կրօնը. բօլգարները իրացրին այդ կրօնը և նրանց մէջ առաջ եկաւ բրօգօմիլներից աղանդը, Խաչակրաց արշաւանքների ժամանակ երօպացիները ծանօթացան այդ աղանդի հետ և տարան նրանց Արևմտեան Երօպա, ուուր նու սկսեց տարածուել զանազան կողմերում: Հայաստային Ֆրանսիայում նա անուանուեց ալբիգեցիների աղանդ՝ Ալբի քաղաքի անունով: Ալդ աղանդը կարելի է նկատել իրեւ բոլոքականութեան նախնական ձև:

այդ ժամանակներում սկսել էր շարժուել և վախեցնել Քրիստոսի այն փոխանորդներին, որոնք իրանց իշխանապետական շահերի համար ուղղում էին որ ամենն տեղ թագաւորէ խաւարը, անշարժութիւնը, ծէսը միայն։ Սպանիայում մավրերը հալածանք հանեցին հրեաների գէմ, որոնք մեծ թուով անցան Թրանսիա, բերելով իրանց հետ արաբական գիտութեան հարստութիւնները։ Դրանց մէջ էին և Արիստոտէլի գործերը։ Մինչև այդ եւրօպան ժամօթ էր Արիստոտէլի հետ այն մի քանի հասուածներով, որոնք մնացել էին Քրիստոնէական գրականութեան մէջ։ Այժմ Ալէքսանդր Մակեդոնացու հռչակաւոր ուսուցչի բոլոր գործերը, թարգմանուելով արաբերէնից, մատչելի էին գարձել եւրօպացիներին և, ի հարկէ, պիտի գրաւէին մտքերը։ Հոօմը վախեց այս նոր, անկոչ հիւրից, որ իբրև հեթանոս մաքի ներկայացուցիչ և մահմեդականների մօտ մեծարուած հեղինակ, կարող էր վտանգաւոր ազատութիւն առաջ բերել մարդկանց մէջ և հարուածել կաթօլիկութիւնը։ Այդպէս էլ եղաւ. հերետիկուները Արիստոտէլի գիտուփայութեան վրայ էին հիմնւում. պարզւում էր սարսափելի ճշմարտութիւն—կային բաներ, որոնք ճշմարիտ էին գիլիստփայութեան անսակէտից, բայց սուտ էին հաւատի տեսակէտից։ Այդ հակասութիւնը գիտութեան և կրօնի մէջ սպառնալից հեռանկարներ էր բերում։ Իննուկենտիոս պապը հրամայեց Պարիզի համալսարանին, ուր աւանդուում էր աստուածարանութիւն, ընդունել Արիստոտէլից միայն անմեղ բաները, իսկ մնացած գործերը նկատել վնասակար և արդելուած։

Բայց եկեղեցականների վախերը շուտով փարաստուեցան։ Գտնուեց մի մարդ, որին աջողուեց դարձնել Արիստոտէլին կաթօլիկ եկեղեցու ամենահաւատատարիմ պաշտպան։ Դա Թօմա Ակուինացին էր։ Այս գօմինիկեան ամեղան խլեց հերետիկուների ձեռքից նրանց զէնքը—Արիստոտէլը և տուեց նրան եկեղեցու ձեռքը։ Արիստոտէլի վրայ նա հիմնեց կաթօլիկական աստուածարանութիւնը. բայց դրա համար պէտք էր որ Արիստոտէլը այս նոր գիտուփայութեան մէջ հին Արիստոտէլը չը մնար։ Եւ այդպէս էլ եղաւ. նա շատ տեղերում աղճատուեց, շատ տեղերում հսկատակեցրուեց Ս. Գրքին։ Ակուինացու համար հեղինակութիւն էր ոչ միայն Արիստոտէլը, այլ և եկեղեցական հայրերը։ Այսպիսով ահա քրիստոնէացրուեց հին աշխարհի հսկայ միտքը։ Ակուինացին դարձաւ սիօլաստիկ աստուածարանութեան հայր և անասելի հրձուանք պատճառեց Հոօմին։ Եկեղեցին բարձրագլուխ կտնդնած էր այդ աստուածարանութեան մէջ և գիլիստփայական գիտութիւնը նրա ստրուկը դարձաւ։ Ակուինացին օգտակար հրատարակեց մարդկային ստրկութիւնը, սրբագործեց ինք-

վիզիցիան, ասելով թէ հերետիկումներին կեանքից զրկելը եկեղեցական իշխանութեան իրաւունքն է և նոյնքան օրինական է ու արդար, որքան դրամ կեղծողներին պատժելը։ Պատվական իշխանութեան համար նա ստեղծեց մի ամուռ հիմնաքար. մարմնաւոր իշխանները պիտի հպատակուեն հոգեւոր իշխաններին այն բոլոր գործերում, որոնք հոգուն են վերաբերում. պապը իրաւունք ունի գահընկէց անել այդ իշխաններին, որովհետեւ նա թէ հոգեւոր և թէ մարմնաւոր իշխանութիւնների գլխին է կանգնած։ Մարմնաւոր իշխանութեան հպատակուած մարդու հոգին ազատ է. բայց եկեղեցու իշխանութեան տակ նոյն այդ հոգին ոչինչ ազատութիւն չը պիտի իմանայ, այլ պարտաւոր է անպայման հնազանդուել եկեղեցու օրէնքներին։

Նատ երկար կը լինէր խօսել այստեղ հոչակաւոր սխօլաստիկի ամբողջ վարդապետութեան մասին Բայց որպէս զի ցոյց տանք, թէ ինչ շաղախից էր կազմուած նրա իմաստութիւնը, բերենք, մի օրինակ էլ։ Խօսելով առաքինութիւնների մասին, Թօման դրանց թւում դնում է և յարգանքն ու խոնարհութիւնը, որ ամեն մէկը պիտի ունենայ դէպի Աստուած և դէպի մարդիկ։ Յարդանքի հետ է և հնազանդութիւնը, որ բոլոր բարոյական առաքինութիւններից բարձր է։ Բոլոր առաքինութիւնների նպատակն է արհամարհել երկրայինը և կապուել երկնայինին։ Առաքինութիւնները լինում են. աստուածաբանական, որոնց միջոցով մարդը համսնում է գերբնական երջանկութեան, և բարոյական, որոնց միջոցով նոյն մարդը ցոյց է տալիս իր արհամարհանքը դէպի երկրայինը. և, ի հարկէ, աստուածաբանական առաքինութիւնները բարձր են բարոյականներից։ Ամենաբարձր բարոյական առաքինութիւնը այն է, որով արհամարհանք է յայտնւում դէպի բարձր բարիքը. հոգու մէջ ամենաբարձր բարիքը կամքն է, որովհետեւ նրա միջոցով մարդը համսնում է ուրիշ բարիքների։ Ապա ուրեմն, ամենաբարձր բարոյական առաքինութիւնն է արհամարհել սեփական կամքը և հնազանդուել Աստուծուն։

Սիխուստիկան գործ չունէր փորձի, իրական ուսումնասիրութեան հետ. նա հիմնւում էր դատողութիւնների վրայ. հաստատել այդ դատողութիւնները իրական փորձերով աւելորդ էր համարւում. բաւական է որ կան հեղինակութիւններ, բաւական է որ Արքստուէլը այսպէս է ասում, ո. Գիրքը այս ինչ վկայութիւնն է տալիս, իսկ եկեղեցու այս ինչ հայրը այս կերպով է հասկացել և բացատրել այս ինչ տեղը։ Ահա սխօլաստիկայի ապացոյցները։ Ի՞նչ արժանաւորութիւններ կարող է ունենալ այդ տեսակ փիլիստիկայութիւնը։ Ամենալաւ քննադատութիւնը

մենք գտնում ենք Ակուխնացու ժամանակակից Ռօջէր Բէկօն անունով անգլիացի կրօնաւորի զրուածքներում։ Սա մի փայլուն միտք էր, որ նախատեսում էր, թէ մարդկութիւնը ինչ ճանապարհով պիտի առաջ տանէ գիտութիւնը։ Նա բոլորովին հերքում էր սխօլաստիկան, պահանջում էր որ գիտութիւնը հիմնուի փորձերի վրայ, որ մարդիկ, փոխանակ հեղինակութիւնների վրայ իրանց ամբողջ յայսը դնելու, քննեն բնութեան գաղտնիքները և այդպիսով միայն ապացոյցներ ձեռք բերեն։ Նա ասում էր. «Անկասկած, պէտք է յարգել հներին և ճորհապարտ լինել գէպի այնպիսիները, որոնք մեզ համար ճանապարհ բայցին. բայց չը պէտք է մոռանալ, որ նրանք էլ մեզ նման մարդիկ էին և յաճախ են մողորուել։ Ինքը Արիստոտէլը ամեն ինչ չը գիտէր. Նա արել է այն, ինչ կարելի էր անել նրա ժամանակ, բայց նա չը հասաւ իմաստութեան ծայրին։ Սուրբերն էլ անսխալական չէին։ Վկայ կանչել աւանդութիւնները—մի ողորմելի ապացոյց է, Հեղինակութիւնը ոյժ չունի, եթէ նրան չեն հաստատում. հեղինակութիւնը ոչինչ չէ բացատրում, նա միայն ստիպում է հաւատալ. նա հպատակեցնում է միտքը, բայց չէ լուսաւորում նրան։ Գոնէ մենք իմանայինք այն մարդկանց խոկական խօսքերը, որոնց հեղինակութիւն ենք համարում։ Բայց աւելի լաւ կը լինէր, եթէ Արիստոտէլի փիլիսոփայութիւնը երբէք թարգմանուէր այնպէս այժմ է թարգմանուած» \*):

Ահա ինչ բան էր սխօլաստիկան։ Թօմա Ակուխնացու մեթօտք Բէկօնն անուանում էր «երեխայական»։ Բայց այդ հոչակաւոր մարդը ժամանակից շատ վաղ էր ծնուել. մարդկութիւնը դեռ երկար պիտի խարիսափէր սխօլաստիկայի դատարկաբանութիւնների մէջ մինչեւ որ նոր ժամանակի մսորդը թօթափէր իրանից կղերականութեան գերի գարձած գիտութեան մոլորութիւնները և գործէր այնպէս, ինչպէս Բէկօնն էր պահանջում։ XІІ դարում Բէկօնին չը հասկացան։ Փորձի վրայ հիմնուած գիտնականը մի քանի դիւտեր արաւ, բայց գրանք վարդապետների համար գժոփիքի գործներ էին և խեղճ Բէկօնին բանտ նստեցրին։

Խակ Ակուխնացին։ Կաթօլիկ կեղեցեցականները ջուխտ ձեռքով սեղմեցին նրա փիլիսոփայութիւնը իրանց կրծքին։ Արիստոտէլը հրատարակուեց «Քրիստոսի նախակարապետո»։ Կային այնպիսիները, որոնք մտածում էին Արիստոտէլին սուրբերի դասը մտցնելու մասին։ Ինքը, Ակուխնացին, հօ շուտ դասուեց ուրբերի թւում։ Նրան անուանեցին «հրեշտակային և տիեզերական

\*.) Լավոս և Բամօ—„Վսօնաց Աշ.“, թ. II, էր. 513։

վարդապետ»։ Տրիգենտեան մողովը թօմայի աստուածաբանութիւնը գրեց եկեղեցու սեղանի վրայ, Ա. Գրքի կողքին։ Առատութեամբ ստեղծուեցին բարեպաշտական լինգենդաներ՝ այդ վարդապետի հեղինակութիւնը բարձրացնելու համար։ Պատմում էին այսպիսի բան։ Թօման, վերջացնելով իր «Բովանդակութիւն Աստուածութեան» աշխատութիւնը, ախ ու վաշով արտասուելով դիմեց Աստուածուն, կամենալով խմանալ, թէ արդեօք սիսաճներ գործիլ է իր գրուածքների մէջ. այդ միջոցին խաչելութեան պատկերի վրայից Քրիստոս պատասխաննց նրան. «Աս զրեցիր իմ մասին, Թօմաս. այժմ ինչ վարձ կ'ընդունեն քո վաստակների փոխարէն»։ Պատմելով այս հրաշքը, կաթօլիկ կղերը աւելացնում է. «Յայնի է որ թագաւորները իրանց ստորագրութեամբ հաստատում են այն գծինները, որոնց կամենում են պահել թագաւորութեան մէջ. այսպէս էլ երկնաւոր վարդապետը իր ծառայի վարդապետութիւնը այսպիսի նշանաւոր պատգամով կամեցաւ հաստատել, որպէս զի ամենքը ջերմադէս պահպանեն նրան» \*): Այսքան ահազին նշանակութիւն էր ստացել Թօման կաթօլիկ ուղղափառութեան համար \*\*):

Թօմա Ակուինացին, ի հարկէ, ունի իր տեղը վիլիսովիայութեան պատմութեան մէջ. նա ունեցել է իր նշանակութիւնը իր ժամանակի համար։ Սիօլաստիկան, ինչ էլ լինէր, այն ծառայութիւնը մատուցեց մարդկանց, որ վարժում էր նրանց միտքը, սովորեցնում էր մտածել. առաջ եկան հակառակ դպրոցներ, թօմայականները վէճեր էին վարում ուրիշ դպրոցների դէմ։ Այս բոլոր շատ լաւ էր այն հին, խաւար ժամանակի համար։ Տայց XVIII դարում, նորագոյն վիլիսովիաների այդ վայլուն դարում, ինչն էր ստիլում մեր վարդապետներին ամեն ջանք գործ գնելու, որ միջնադարեան սիօլաստիկը յարութիւն առնէ հայերի մէջ։ —Միայն այն, որ նրանք կաթօլիկ էին և իրրե կղերականներ, միայն ուղղափառութեան հիմք կազմով վիլիսովիայութիւնը կարող էին ներկայացնել հայ ընթերցողին, ասելով թէ զրա մէջ են բոլոր իմաստութիւնները։ «Բնդարձակ Աստուածաբանու-

\*) «Փիլիսոփայութիւն Կովոնի», Վենետիկ, 1751, հատոր Ա., եր. 16.

\*\*) Մեր ժամանակներում էլ Ակուինացին շարունակում է մնալ կաթօլիկ եկեղեցու յուսն ու ապաէնը։ 1879 թուին պապը առաջարկում էր համալսարանների մէջ մոցնել Թօմային և ըոլոր հաւասարիմ կաթօլիկներին յանձնարարում էր ուսումնասիրել նրա գրուածքները։ Կեռն XIII իր հաշուով սկսեց այդ գրուածքների փառահեղ հրատարակութիւնը։ Այժմ էլ նորոպայի կաթօլիկ երկիրներում հրատարակում են ամսագրեր և գրքեր, որոնց նպատակն է համաձայնեցնել ժամանակակից գիտութիւնը Թօմայի վարդապետութեան հետ։

թիւնը» բաւարարութիւն չը տուեց Խաչատուր վարդապետին. 1739 թուին նա հրատարակեց «Համառօտութիւն Բարոյականի Աստուածաբանութեան», հիմնած, ի հարկէ, գարձեալ Ակուինացու վրայ: Եւ չենք կարող ասել թէ այդ աստուածաբանութիւնները հրատարակւում էին կաթոլիկ հայերի համար: Կաթոլիկ վարդապետները իրանց հրատարակութիւնների վրայ, նրանց ընդհանուր ազգային դարձնելու համար, տպագրում էին էջմանի կաթողիկոսի անունը \*): Բայց այդ երկու գրքից, հայերէնի է թարգմանուել մի և նոյն Խաչատուրի «Բովանդակութիւն Աստուածաբանութեան» լատիներէն գրուածքը և տպագրուել է 1736 թուին:

Հարկաւոր է այստեղ ուշագրութիւն դարձնել այդ գիրքը թարգմանողի վրայ: Դա մի հայուհի է, Մարիամ Քարաքաշեան: Նա թարգմանել է նոյն Խաչատուրի մի ուրիշ լատիներէն գրուածքն էլ—«Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն» (տպուած 1733-ին): Նախ քան այդ թարգմանութիւնները, Մարիամ Քարաքաշեան տպագրել էր տուել և իր հեղինակած «Ակն հոգւոյ» գիրքը (1728): Մեր գրականութեան պատմութեան մէջ սա կարծեմ առաջին հայ կինն է, որի գրական գործերը յայսնի են մեզ: Կը կամենայինք աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ այդ առաջին հայ գրադիտուհու մասին, բայց, գժրախտաբար, միայն այն զիտենք, որ Մարիամ Քարաքաշեան պօլսեցի էր և կոչւում է «Լուսամուռնդ», ուրեմն կոյս էր: Բայց որտեղ է նա տպօրել այդքան լատիներէն և ուր է թարգմանել այդ գրքերը: Կարծում ենք պէտք է ենթադրել որ այդ կոյսը ապրում էր Վենետիկում, ուր XVIII դարում, իրաւ, հանդիպում ենք պօլսեցի Գարագաշեան հայ ընտանիքի: Վենետիկի կաթոլիկ կուսանոցներում քիչ չեն եղել և հայուհիներ, որմայ մէջ նոյն այդ գարում յիշուում է լաւրա Գարագաշեան

\* ) Միիթար Սեբաստացուն դիմակաւորուած հայ-լուսաւորչական համարողները իրակ ապացոյց բերում են այն, որ նրա և նրա յաջորդի ժամանակ տպագրուած բոլոր գրքերի վրայ նշանակուած է ժամանակի կաթողիկոսի անունը: Բայց սա վաստ չէ: Եթէ արդպէս դատելու լինենք, դուրս պիտի գալ, որ Խաչատուր Երզումցին էլ կաթոլիկ չէ, քանի որ նրա «Համառօտութիւն Աստուածաբանութեան» գրքի վրայ էլ տպուած է: «Ի հայրապետութեան հին Ձուղանցի Աղէքսանդրի ամենից հայոց կաթողիկոսի: Ուրիշ օրինակ, Եղուիտ Յակով Վիլլօտը իր «Պեհնութիւն զաւանութեան» գրքի մէջ (Հոօմ, 1711) գործ է ածում ած: Աղէքսանդր հայոց կաթողիկոս», «Յուրը էջմիածին» և այլ այդպիսի հաճոյական և շողաքորթական բառեր: Բայց ո՞վ կ'ասէ թէ Վիլլօտ եղուիտը հայ-լուսաւորչական էր:

կոյսը \*): Եւ իսկապէս, միայն հտալիայում, կաթօլիկ կուսանոցում կրթուած կոյսը կարող էր լատիներէն աստուածաբանութիւնը թարգմանել հայերէնի:

Աստուածաբանական գրուածքների ցանկում՝ յիշատակենք Պետրոս վարդապետ Թիֆլիսիցու թարգմանած «Շւզզ» և ծուծ Աստուածաբանութեան» (տպ. 1748թ.), դարձեալ մի հաստ հատոր, դարձեալ Ակուխնացու վկայութիւններով զարդարած։ Նոյն Պետրոս վարդապետի թարգմանութիւնն է եղութա Ռուզրիզվէց վարդապետի «Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորականի առաջինութեան», երկու հատոր (1741—1742), որ հրատարակեց Միիթար Սեբաստացին։

Առհասարակ Միիթարը ամենն ջանք գործ է դրել կրօնական կրթութիւնը ժողովրդականացնելու համար։ Մենք ասացինք որ այդ նպատակով նա հրատարակեց աշխարհաբար «Քրիստոնէական»։ Բայց հետաքրքրական է մանաւանդ նրա մի այլ գործը՝ կրօն սովորեցնել խաղի միջայով—այս նպատակն ունի 1737-ին հրատարակուած գրքոյկը՝ հետեւեալ վերնազրով։ «Քրիստոնէական վարդապետութիւն» որ ի գործ ունի ի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալայ»։ Գրքոյկի մէջ կան 46 պատկերներ՝ կրօնական բովանդակութեամբ, ցոյց է տուած խաղալու եղանակը, տանուլ տառողը պիտի ցոյց տուած աղօթքները կարդայ։ Խոկ տանողը—«Եթէ ոք հասանիցի ի 46, երթայ յարքայութիւն, և զինչ որ կայ ի գանձանակին, առցէ ինքն», այսպէս է ասում գրքոյկը։ Պատկերների մասին մի հասկացողութիւն տալու համար զնենք այսաեղ այն, ինչ գրուած է, օրինակ, 22-րորդ պատկերի տակ.

Որպէս մարմին գրադում անդամն ունի, բայց զմի միայն դուխ, որ ի վերայ ալլոց ընաւից անդամոցն ունի զբացարձակ իշխանութիւն, գոլով ինքն ի բարձրագոյն տեղուջ քան զնոսա։ Նոյնպէս և եկեղեցին է մարմին իմ խորհրդական, որոյ անդամութիւն են ամենայն հաւատացեալք, բայց ի վերայ նոյս է մի աներեսութ գլուխ, որ է թիսուս Քրիստոս։ և ի տեղուջ նորին այլ մի երեսելի գլուխ, որ է սրբազնն պատի Հռոմայ, փոխանորդն Զիսուսի Քրիստոսի, որ ունի ի վերայ ընդհանուր եկեղեցւուն զգիսաւոր իշխանութիւն պարզեալ ինքեան ի տեսանէ մերմէ Զիսուսէ Քրիստոսէ։

Աւելի հեռուն կերպուկան եռանդը չէր կարող գնալ. աստուածաբանութիւն—խաղի միջայով. այդ խաղը, զուարձութիւն պատճառելով խաղացողներին, թէ պիտի փրկէ նրանց հոգին և թէ անցողակի կերպով յիշեցնէ որ պալը Քրիստոսի փոխանորդն է, իշխանապետ ամբողջ եկեղեցւու գրայ։ Մենք չը զիտենք՝ այս խաղը Միիթարի հեղինակութիւնն է, թէ փոխա-

\*.) Հ. Ալիշան—«Հայլ—Վենետ», 1896, եր. 500, 515.

գրութիւն մի օտար լեզուից: Բայց հեղինակութիւններ էլ ունի նաև, ի հարկէ, այնպիսի հեղինակութիւններ, որոնք Մխիթարի ամբողջ գործունէութեան, ամբողջ աշխարհայեցողութիւններին են համապատասխանում: Նա հրատարակեց իր «Մեկնութիւն Ժողովովին» և «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին» (1736—1737). և եթէ այդ մեկնութիւնների վրայ աւելացնենք նաև Մխիթարի «Քերականութիւնը», որ լոյս տեսաւ 1730 թուականին, մենք շատ քիչ բան թողած կը լինենք նրա գրական դորժունէութիւնից: Քերականութեան մասին արդէն խօսել ենք: Այդ ստուար աշխատութիւնը ոչ միայն մի չը տեսնուած նորութիւն չէր ներկայացնում, այլ և զիջողութիւններ էր անում հայոց լեզուն աղճատող լատինամոլներին:

Եւ այսպէս ահա, սարերի ու ձորերի տարբերութիւն չը կար կ. Պօլսի և Վենետիկի մէջ. Եւրոպան և Սափան միացած են՝ հայերին միանման տաղտուկ, անմարս մտաւոր կերակուր տալու համար: Մխիթար Սեբաստացին թէ և շատ ժիր ու եռանդու հրատարուկիչ է, բայց Եւրոպայից նրա ուղարկած գրքերի և հօսֆօրի ափերում լոյս տեսածների մէջ չը գիտենք ինչ հիմնական տարբերութիւն, ինչ առաւելութիւն կարող են գըտնել, եթէ, ի հարկէ, հաշում չառնենք տպագրական արուեստի ներկայացրած տարբերութիւնը: Եթէ ո. Ղազարի վանքը Աղրիական ծովի մի կղզու վրայ գոյութիւն էր ստացել միմիայն աղօթագրքերի և աստուածաբանական հատորների պաշարը մեզանում ստուարացնելու համար, կարելի էր և չուրախանալ որ նա կայ: Մեր ընդհանուր առաջաղիմութեան տեսակէտից բոլորովին մի և նոյն էր թէ ով կը սովորեցնէ մեղ աստուածաբանութիւն—Ամրգուսի գալրոցը, թէ գոմինիկեան, եզուիտ կամ մխիթարեան վարդապետը: Այդ կողմից մենք հոգատարներ շատ ունինք և առանց կրօնական զրքերի չենք մնայ:

Օրինակ, զիտնական Խաչատուր վարդապետից կամ Մխիթար Սեբաստացուց ինչո՞վ էր պակաս եղուիտ պատեր Յակոբ Վիլլոտ: Այս կրօնաւորին մենք տեսանք նոր-Զուղայի կրօնական խոռվութիւնների մէջ \*), կաւ ուսումնասիրելով հայոց լեզուն, նա մի շարք հեղինակութիւններ գրեց, որոնց տպագրութիւնը սկսեց Եւրոպա վերադառնալուց յետոյ: Վիլլոտ ունի «Մեկնիչ սրբոյ Աւետարանին», «Մեկնութիւն դաւանութեան ուղղակառ հաւատոյ», «Զորք խոկմունք յաղագս յաւիտենականութեան» կրօնական շարադրութիւնները, «Քառզիրք Լատին-Հայ», որոնք

\*.) «Հայկ. Տպ.», I, ել. 248.

տպագրուեցան Հոօմում (1710—1714): Կեանքի մէջ Յակոբ Վիլլոս կրօնական խառնակութիւնների մասնակից և զեկավար մարդ էր, բայց իր գրքերի մէջ աշխատում է սիրաշահել հայերին, ձեւանալով նրանց բարեկամ և կարեկից, նոյն իսկ յանձն առնելով պաշտպանել հայոց եկեղեցին մի քանի մեղադրանքների դէմ: Նա գրել է նոյն իսկ «Պատմութիւն կաթողիկոսաց և թագաւորաց հայոց» փոքրիկ տետրակը, որ լոյս տեսաւ Վենետիկում 1713-ին և որի մէջ դաստորուած է հայոց կաթողիկոսների և թագաւորների յաջորդութիւնը կամ «գաւազանապիրպը»:

Երբ մի օտար մարդ, սովորելով հայոց լեզուն, կարողանում էր այդքան բան անել, կարող է մեղ զարմանք պատճառել այն կրօնական դրականութեան առատութիւնը, որ արտադրում էին հայ վարդապետները: Եւ Միսիթարն ու նրա միաբանութիւնը ոչինչ անուն և վաստակ չէին թողնի հայերի մէջ, եթէ նրանց գրական գործերը այնպիսի բաներ լինէին, որոնց տևամնք մինչև այժմ Բայց ս. Ղազարի վաճքը այդպէս չը պիտի մնար: Միսիթարը իր կենդանութեան ժամանակ ցոյց տուեց որ իր միաբանութիւնը բազմաթիւ անպէտք հրատարակութիւնների շարքում մի-մի անգամ այնպիսի մնացործութիւններ պիտի ցոյց տայ, որոնք հիացմունք պիտի ազգեն ամենքին: Ահա ինչ պէս.

1733 թուականին Միսիթար Աբբան Բօրտօլիի տպարանից լոյս հանեց իր հրատարակած Աստուածաշունչը: Դա մի հսկայ, հիանալի գործ էր, մի տպագրութիւն, որի նմանը գեռ մեր մէջ չէր եղած: Ոչինչ չէր խնայել Միսիթարը՝ այդ գործը ամեն կողմից կատարեալ դարձնելու համար—նշ անձնական աշխատանք, ոչ նիւթական միջոցներ: Պղնձի վրայ քանդակած նուրբ պատկերների առատութիւն, գեղեցիկ ծաղկագրեր, մազուր տպագրութիւն ազնիւ, թանգ թղթի վրայ, շատ խնամքով կատարուած սրբագրութիւն—ահա այդ գեղարուեստական հրատարակութեան զարգերը. մինչև այժմ էլ մեղանում մեծ հոչակ է վայելում «Աբբայի Աստուածաշունչը»: Միսակ սրբասութիւնը, ինչպէս գիտենք, այն է, որ Միսիթարը, ձեռքի տակ չունենալով գրչագիրներ, արտատպեց Ուկանի Աստուածաշունչը, կարողանալով շատ քիչ բան ուղղել նրա պակասութիւններից: Բայց զլխաւորը այդ չէ: Միսիթարը յիշատակարմնի մէջ մի առ մի նկարագրել է թէ ինչպէս է տպուել Աստուածաշունչը. կրկնապատիկ ծախսեր, աշխատանք, լարուած ուշագրութիւն—սրանք, ճիշտ որ, անխուսափելի էին, մանաւանդ այն ժամանակ, երբ տպարանական գործը գեռ այնքան թերի էր, չը կային կատարելագործուած մեղենաներ: Առհասարակ, «Աբբայի Աստուածա-

շունչի» տպագրութեան պատմութիւնը վկայում է որ Մխիթարը և նրա աշակերտները սովորել են եւրօպացու պէս աշխատել ու. Ղազարի վանքը պատկառելի, ակաղեմիական հրատարակութիւններ անելու ընդունակութիւնն էր ստանում:

Ահա, ամենից առաջ, Մխիթարեանների գերազանց յատկութիւնը, որին մեզանում դեռ ուրիշ ոչ մի հիմնարկութիւն չէ հասել: Մխարանութիւնը հայ ազգի մէջ ամենաբարձր, առողջակարգ տեղ գրաւում էր նաև և առաջ իբրև հրատարակիչ:

Տեսնենք այժմ նրա մի այլ յատկութիւնը: 1749 թուականին լոյս տեսաւ Վենետիկում «Պատմութիւն վարուց Գրիգորի Լուսաւորչին» գիրքը: Մեծ բան չէ այս աշխատութիւնը և Մխիթարը չէ նրա հեղինակը: Բայց գիրքը նշանաւոր է մի քանի կողմերով: Նախ և առաջ դա մի գեղեցիկ վկայութիւն է Մխիթարի գալոցի մասին, որովհետև պատկանում է նրա աշակերտներից մէկի, Մատթէոս վարդապետի, գրչին: Ի՞նչ է ցոյց տալիս այդ գրիչը:—Գրական ճաշակ, լեզուի կանոնաւորութիւն, հեղինակելու ոյժ, որու հասկացալութիւն ոճի ու չափի մասին: Գրական անկման այն տիպուր, երկարատև ժամանակներում Մխիթարեան դպրոցի այդ առաջին պատուղը գալիս էր աւետելու, որ պատրաստում է աւելի լաւ ու հարուստ ապագայ հայոց գրականութեան համար: Երրորդ նշանաւոր հանդամանքը այն ձիւզն է, որին վերաբերում է գիրքը—պատմագրութիւնը. դա այն ասպարէզն է, ուր Մխիթարեանները մեծ անուն հանեցին և ամենից մեծ ծառայութիւնը մատուցին իրանց ազգին. Մատթէոս վարդապետի հեղինակութեան մէջ արդէն տեսնում ենք այն առաւելութիւնները և պակասութիւնները, որոնք յատուկ են Մխիթարեաններին՝ պատմագրութեան մէջ: Առաւելութիւններն են պատմելու չնորհք, լայն ծանօթութիւն ազբիւրների հետ, մանրակրկիտ ուսումնասիրութիւն: Ս. Ղազարի վարդապետները շատ կարգացած, լեզուագէտ մարդիկ են. նրանց առջև միայն հայոց աղքային աղբիւրները չեն բացուած, այլ և յոյն, լատին, հին և նոր հեղինակները: Վենետիկից գուրս ոչ ոք չունի այդքան պատրաստութիւն և այդ պատճառով Մխիթարեանները հեղինակութիւն են: Բայց նրանք ունեն և հիմնաւոր պակասութիւններ, դա վանական պատմագրութիւնն է, միամիտ, ամենի ինչին հաւատացող, առանց խիստ քննադասութիւնն: Բաւականանք այս համառօտ դիտողութիւններով: Աւելի մանրամասն կը խօսենք այն ժամանակ, երբ կը համենք Զամչեանին, XVIII դարի այս առաջնակարգ, հսկայ գրագէտին:

Մխիթարեանների այս երկրորդ յատկութեան միացած է և երրորդը, որ արտայայտուեց նոյնպէս Մխիթարի ժամանակ,

Նոյն 1749 թուականի մայիսի 19-ին լոյս տեսաւ «Բառգիրք Հայկագեան Լեզուի» հակայական գործը, որ մի դարագլուխ է կազմում մեր գրականութեան մէջ։ Ամենից առաջ նա գալիս էր ցոյց տալու թէ ս. Ղաղարի վանքում ինչպէս լաւ գիտեն աշխատել, աշխատել հաւաքական ոյժերով, յամառ տոկունութեամբ, հիմնաւոր, գիտնական պատրաստութեամբ։ Գործը սկսուել էր զեռ 1727 թուականին, բայց ընդհատուեց երկար ժամանակով, նորից սկսուեց 1742-ին և վերջացաւ 1745-ին։ Այդքան ժամանակամիջոցում Մխիթարը և նրա աշակերտները ստեղծեցին մի հարուստ բացատրական բառարան, որի յատկութիւնները ուղղակի անդնահատելի են։

Մինչև այդ չը կար հայերէն բառարան, այս բառի իսկական նշանակութեամբ։ Մի քանի լստին վարդապետներ կազմել էին լատիներէն-հայերէն բառարաններ, որոնք տպագրուեցան զանազան ժամանակներում։ բայց դրանք չափազանց պակասաւոր, սիսալ ու աղքատ էին։ Կար և մի հայերէն բառարան, որ կազմել էր Երեմիա վարդապետը, դա էլ չափ համառօտ էր, այն պէս որ հարիւր բառից մէկը հազիւ կարելի էր գտնել նրա մէջ։ Այդ բառարանները ոչինչ օգուտ չէին կարող տալ Մխիթարին և նրանք միանդաման անտես առնելեցան։ Պէտք էր նորից կազմել բառարանի նիւթը, տալ մի ընդարձակ, գիտնական տշխատութիւն, որ ի նկատի պիտի ունենար մի չարք կարենոր նպատակներ։ Ժամանակը ստիպողաբար պահանջում էր մի այդ տեսակ գործ։ Հայոց լեզուն արդէն չափազանց աղաւաղուած էր և զնալով աւելի և աւելի ցած էր ընկնում, աղքատանում։ Իւրաքանչիւր հեղինակ գործ էր ածում բառերը այնպէս, ինչպէս ինքն էր հասկանում։ և այդ պատճառով մեծ քանակութեամբ բառեր կորցրել էին իրանց իսկական նշանակութիւնը, քերականական կանոնները շփոթուել էին։ Հայոց լեզուին սպառնում էր մի մեծ աղէտ, այդպէս զնալով, նա պիտի բոլորովին այլանդակուէր, կորցնէր իր կենսունակութիւնը։

Այդ աղէտի դէմ Մխիթարը ծրագրում է մի չափ հիմնաւոր, թէկ չափ էլ գժուար իրագործելի միջոց։ հաւաքել հին հայոց գրականութեան բառերը, բացատրել նրանց այն մաքով, ինչպէս հասկացել և գործ են ածել նրանց ամենայայտնի հայ հեղինակները։ Ծախս ու աշխատանք չը իննայելով, նա զանազան հայաբնակ տեղերից բերել է տալիս գրքեր։ գրանց մէջ գործ ածած բառերի բուն իմաստը որոշելու համար մանրամասն և բարեխիլճ ուսումնասիրութիւններ է կատարում։ Մեծ ծառայութիւն մատուցանում են մանաւանդ յունարէնից և լատիներէնից թարգմանած գրքերը։ Մխիթարը գտնում է այդ թարգ-

մանութիւնների բնագրերը, համեմատում է դրանց և գտնում է բառերի ճիշտ միտքը: Հին հայկական թարգմանութիւնների թագն ու պատկը, ինչպէս յայտնի է, Սահակի և Մեսրոպի աշխատութիւններով թարգմանուած Աստուածաշունչն է: Միմիթարը ամենից շատ այդ առատ ու անսպառ աղբիւրին է դիմում: Նա ձեռքի տակ ունի յունարէն բնագրերը և համեմատութեան միջոցավ գտնում է թէ Սահակի ու Մեսրոպի ժամանակ ինչպէս էր հասկացւում այս կամ այն բառը: Այդ, միանգամայն ճիշտ ու անսխալ միջոցով, Միմիթարին և նրա աշխատակիցներին աջողւում է վերականգնել հայոց լեզուի նախկին մաքրութիւնը: Նրանք բացատրում են բառերի նշանակութիւնը և որպէս զի այդ բացատրութիւնները քմածին չերեան, բերում են վկայութիւններ զբքերից, դնելով այն կտորները, ուր գործ է ածուած բացատրութեան կարօտ բառը:

Բաւական չը համարելով այդ կերպով պարզած բացատրութիւնները, Միմիթարը դիմեց և կենդանի լեզուին. հարց ու փորձ արաւ Վենետիկում եղած հայոցին և ժողովրդական լեզուից էլ շատ հարստութիւններ հանեց: Ըստութիւնը կատարւում էր շատ խիստ կերպով. պէտք է իմանալ որ այն ժամանակուայ ս. Ղազարի վանքը շատ ճեռագիրներ չունէր, որպէս զի շատ բառեր և շատ բացատրութիւններ քաղէր նրանց միջից. այդ պատճառով էլ բառարանի մէջ չեն մտցնելում այն բառերը, որոնց միտքը բաւականաչափ պարզ չէ կամ կասկածելի է: Այդպիսի բառերից կազմուեց մի ուրիշ բառարան, որ հրատարակուեց յետոյ:

Այսպիսի զարմանալի տոկունութեամբ տարած աշխատութիւնը մի շատ պատկառելի գործ տուեց մեզ: Բառարանը բաղկացած է 1273 երեսից. իւրաքանչիւր երես ունի երկու սիւնակ, իսկ իւրաքանչիւր սիւնակ բաղկացած է 62 մանրատառ տողերից: Ընդամենը, ուրեմն, մօտ 79,000 տող: Եւ եթէ չը մոռանանք որ դա բառարան է, որի իւրաքանչիւր բառը պիտի չափուած, կշռուած լինի, մանրակրկիտ ուսումնասիրութիւններից հանուած, այն ժամանակ կարող ենք երեակայել թէ ինչ վիթիսարի աշխատութիւն են գործ գրել Միմիթարը և նրա աշկերանները այդ առաջին հայերէն բառարանի վրայ:

Այն, մեզանում էլ տապագրական մամուլը սկսում էր մաքի և աշխատանքի հրաշալիքներ տալ: Միայն այդ գործը որքան է բարձրացնում Միմիթար Աբբային իր ժամանակակիցների մէջ: Դրանով աջողւում է լեզուն կենդանացնել, տալ նրան մի մեծ հարստութիւն, որի նշանակութիւնը հասկանալու համար

բաւական է նոյն իսկ մի թեթև հայեացքով չափել այն ժամանակուայ գրականութիւնը, նրա աղքատ ու անոտաշ լւզուն: Բառարանը Մխիթարեան միաբանութեան համար կատարեալ և վերջնական յաղթանակի մի հոյակապ կոթող էր: Նա տուեց ս. Ղազարի վանքին տիրապետութեան անսահման իրաւունք, վանքը այնուհետև մեր լեզուի տէրն է դառնում, զեկավարում է նրան իրքն բարձրագոյն հեղինակութիւն, իրքն ակադեմիա, որ օրէնքներ է արձակում և որին հպատակուում են ամենքը:

Բայց Մխիթար Սիրատացցուն չէր վիճակուած տեսնել իր սկսած հիմնալի գործի վախճանը: Բառարանի վերջին թերթերն էին տպւում, երբ նա ծանր հիւանդութիւնից վախճանուեց (1749 թուականի ապրիլի 27-ին), 74 տարեկան հաստկում, և թողուեց միաբանութեան վանքի մէջ:

Այդ երկարատև, եռանդու կեանքի զլխաւոր հանգամանքները մեզ արդէն ծանօթ են: Մենք գիտենք թէ որքան շատ չարչարուեց այդ մարդը, զիտենք թէ որտեղից սկսեց նա և ուր վերջացրեց իր զործունէութիւնը: Սիրաստիայի երկու անգրադէտ կայսերի աշակերտը մեռնում էր վենետիկում, իր ձեռքով հաստատած բարեկարգ, մեծագործ միաբանութեան զրկում. Աստուածաշունչը, Հայկազեան Բառարանը նրա մեծ գործերն են, կաթօլիկ աշխարհում նա այնքան հռչակ էր ստացել, որ երբ զնացել էր Հոօմ, կարդինալներից մի քանիսը արժանի էին համարում նրան պատրաստակ գահի վրայ բազմելու \*): Մահը վերջ էր զնում այդ եռանդու, բազմաչարչար կեանքին մի այնպիսի ժամանակ, երբ նրա միաբանութեան դոյութիւնը ապահովուած էր: Մխիթարը ամեն ինչ պատրաստել էր, կարգի բերել Նա պատրաստել էր ոչ միայն օթեան, որի մէջ պիտի յարատենէր միաբանութիւնը, այլ և այն հոգին, որ պիտի թագաւորէր այդ օթեանի մէջ, և նրան մնում էր միայն կտակ թողնել իր աշակերտներին, որ հաւատարիմ մնան իր սկսած գործին: Երջանիկ էր Մխիթարը և ժառանգների կողմից. գրանք զանցառու, վատանող և անընդունելի ժառանգորդներ չը հանգիսացան: Հայկազեան Բառարանի երկրորդ հատորը, որ բաղկացած էր մնացորդ բառերից, յատուկ անուններից, աշխարհաբարից գրաբար և գրաբարից աշխարհաբար թարգմանութիւններից, հրատարակեցին այդ աշակերտները: Բայց միայն այդքանը չէր Մխիթարի յաջորդների գործը: Նրանք ոչ միայն սըրբութեամբ պահեցին իրանց ստացած ժառանգութիւնը, այլ և աւելի հարստացրին, ճոխացրին նրան:

\*). Ագոնց, եր. 292:

Մխիթարի աբբայութեան շրջանը դեռ սկզբնաւորութիւնն էր, գարզայման առաջին աստիճանը, սաղմնային դրութիւնը: Դա կէս դարի մի շրջան էր: Մխիթարի մահուանից յետոյ սկըսւում է միաբանութեան ճոր, երկրորդ շրջանը, որ նոյնպէս կէս դար է շարունակւում: Այդ շրջանին մենք կը վերադառնանք յետոյ: Իսկ այժմ մենք պիտի տեղափոխուենք Արևելեան Հայաստան և տեսնենք թէ ինչիր էին կատարւում այնտեղ:

Լ Ե Օ

(Կը ռարուճակուի)

\*  
\* \*

(Ն Ե Կ Ր Ա Ա Օ Վ)

0, երգե՛ր, երգե՛ր, աշխարհի նամարթափած արցունիքիս վկա՛յ կենդանի,  
Դուք ծնւում կ' միւս ծանր ծամերին  
Հոգուս մէջ կիտուած փոքրիկների,  
Եւ զարկում մարդկանց կարծր սրերին,  
Որպէս ալիքը ժայռին ամայի:

Կ. ԿՐԱՍԻԿՆԻԿԵԱՆ

## ՄԱՍԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

15) ԲԺԻՇԿ Վ. ԱՐԺԱՐՈԽՆԻ. ԲԺԵԼԻ գրոյցներ. № 1. «Մի՛  
խմիր» Թիֆլիս, 1901 թ. 38 երես, գինը 5 կ.

Հեշտ բան չէ ժողովրդականացնել զիտութիւնը. դրա համար պահանջում է պարզ, պատկերաւոր լեզու, կենդանի ոճ, նիթը գասաւորելու խելացի սիստեմ, կարծորը, էականը՝ աննշան մանրամամնութիւններից զատելու ընդունակութիւն և լայն գիտական պատրաստութիւն։ Այդ յատկութիւնները ունի յարդելի բժշկագետը և հայ ընթերցողը զիտէ զնահատել այդ տաղանդաւոր ժողովրդականացնողին։ Բաւական էր մի լուր, թէ նա մտադիր է մի շարք «զրոյցներ» հրատարակել և ահա զանազան կողմներից շտապում են իրանց նպաստներով օգնել բժշկապետի ձեռնարկութեան։

Բժշ. Վ. Արծրունու նոր հրատարակութիւնների շարքը սկսում է «Մի՛ խմիր» գրքոյկով։

Գաղափար տալու համար այն սիստեմի մասին, որով զեկավարուել է հեղինակը, մենք առաջ կը բերենք «Մի՛ խմիր» գրքոյի համառօտ բովանդակութիւնը։—Արբած մարդը.—Խմիչքների միջի թոյնիր.—Յանկարծակի եւ դանդաղ թունաւորութիւն։—Ալկօնիլի ազդեցուքիւնը ուղեղի վրայ։—Ալկօնիլիզմի հետեւանեները մեր խելքի ու բանականութեան վրայ։—Մարտզուքեան խանգարումն։—Լեարդի եւ պլոնիկների հիւանդութիւնները։—Արքեցոյ մայրը եւ ծծմայրը։—Ալկօնիլիկը աւելի հետք է հիւանդանում ու աւելի դժուար առողջանում։—Երեխաններին ու պատանիններին զինի խմեցնելու վնասը։—Ալկօնիլամոլի սերունդը։

Հեղինակը իր վերջին խօսքում, ասում է.

«Մարդս հաղար տեսակ հիւանդութիւնների, միլիօն տեսակ վտանգների է հանդիպում իր կարճատե կեանքում։ Աղէտները միշտ անպակաս են եղել մարդկութեան գլխից։

«Միլիօնաւոր մարդիկ զոհ են զնում ամեն տեսակ հիւանդութիւնների։

«Ժանտախտ, խօլերա եւ զանազան ուրիշ վարակիչ հիւանդութիւններ սոսկալի աւերիչ հեղեղի նման անցնում են երկրիս վրայով եւ հազարաւոր, միջիօնաւոր մարդկանց սրբումտանում:

«Ես սարսափելի համաճարակ հիւանդութիւնները սարսափ են ազգում մարդկութեան վրայ. մենք ամեն միջացներով կուռում ենք նրանց դէմ, այս-ինչ մենք ինքներս զիտակցորէն տալիս ենք մեզ արբեցութեան ախտին, որ պակաս լիսաւ չի պատճառում, քան յիշած հիւանդութիւնները: Գոնէ նրանք սպանում են մարդկանց առանձին-առանձին և չեն դիպչում ժառանգներին, այս ինչ ալկօհօլիկմը հիւանդացնում ու անպէսք է դարձնում ոչ միայն առանձին մարդկանց, այլև ամբողջ սերունդներ:

«Միայն սիֆիլիսը (վատ ցաւը) ու թոքախտը կարող են հաւասարուել ալկօհօլիկմին այս կողմից:

«Ամեն մարդ իրաւունք ունի իր կեանքի վրայ, բայց սարսափելի չարագործութիւն է մի ամբողջ սերնդի հիւանդութեան ու մահուան պատճառ դառնալ:

«Թող ամենքը հասկանան այդ պատուէրը:

«Թող ամեն մէկը, երբ արազի թասը ձեռքն է առնում, հասկանայ, որ թոյն է խմում,—մի սարսափելի թոյն, որ ոչ միայն պիտի քայլացի նրա մարմինն ու դժբախտացնի նրան, այլև նրա երեխանների ու սերնդի կործանման պատճառը պիտի դառնալ:

«Մովսէս մարդարէն տասը պատգամներ տուեց մարդկանց: Եթէ նա մնր դարերում ապրէր, եթէ նա էլ տեսած լինէր ալկօհօլիկմի գործած սարսափելի աւերումները, անշուշտ նա մի տասնըմէկերորդ պատգամ էլ կը տար մարդկութեանը թէ. «Մի խմիր»:

լ. Ա.

16) Ез. Г. М. Тумановъ. Земельные вопросы и преступность на Кавказѣ. С. Петербургъ 1901 г. цѣна 60 коп.

Հեղինակը ի մի է հաւաքել զանազան ժամանակներում «Եվропы», «Русская Мысль» ամսագրներում և «Новое Обозр.» թերթում լոյս տեսած իր մի շարք յօդուածները՝ Կովկասի հողային, գաղթականային, դասակարդային հարցերի և տեղային աւաղակութիւնների, ինչպէս և վարչական մի քանի անկանոնութիւնների մասին:

Մեր աղքաբնակութեան ստուար մասի ապրուստի համար հողատիրական խճճուած հարցը առաջնակարգ կարսորութիւն ունի, մինչեւ նոյն իսկ վարչական շրջաններում այդ հարցի շատ կողմերը դեռ ևս պարզուած չեն: Տեղական հանգամանքներին լաւ ծանօթ անձանց կողմից այդ հարցերի հրապարակախօսական լուսաբանութիւնը մայրաքաղաքների մամուլի մէջ մեծ նշանակութիւն ունի և ցանկալի է, որ շատ յաճախ չօշափուեն այդ խնդիրները աղդեցիկ հրատարակութիւնների մէջ:

Թէս մեր զիւղացիների տնտեսական դրութեան մասին առատ նիւթեր հաւաքուել են դեռ ութսունական թուականներին (Матеріалы по изсл. экон. быта гоc. крест. Закавказск. епрая), բայց այդ բազմահատոր հետազոտութիւնները մատչելի են ընթերցողների շատ նեղ շրջանին: Իշխ. Թումանօվի զիրքը միայն մասսամբ կարող է լրացնել այդ պակասը, չօշափելով համառա ձեռվ հարցի միայն մի քանի կողմերը: Շատ ցանկալի է, որ ներկայումս, երբ ծրագրում է մեր զիւղացիների հողային գրութեան վերջնական օրէնսդրական կանոնաւորումը, մասմուլը աշխատի բազմակողմանի քննութեամբ պարզել մեր երկրի անտեսական կենաքի այդ հիմնական կողմը, մատնանիշ անելով այն ուղղութիւնը այդ խնդրում, որ աւելի շատ կ'ապահովի երկրագործ մասսայի բարեկեցութիւնը: Անշուշտ, աւելի նպատակայարժար է մայրաքաղաքների աղդեցիկ հրատարակութիւնների մէջ («ԵՅՍԹ. Եվրոպի», «С. Պետ. ԵՅԴ.» և այլն) արծարծել այդ հարցերը: Իշխ. Թումանօվի այս զրքից կարելի է եղբակացնել, որ նրա բռնած ուղղութիւնը հողային հարցում շատ համակրենի է և արդարամիտ: Ուստի ցանկալի է, որ նա աւելի եւս մեծ նունդով շարունակի իր հրապարակախօսական օդնութիւնը մեր խեղճ զիւղացիներին:

Լ. Ա.

17) ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵՍՆԻ ՍԱՌՋԱՎԱԽԱԿԱՆ ԳՐԺՈՂԱԿՆԵՐԸ

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵՍՆԸ այն հազուագիւտ հայ զիտնականներից է, որոնք ապրելով հեռաւոր հիւսիսում, մայրաքաղաքներում, չեն մոռանում իրանց պարագը—գոնէ զրչով մի բան անել իրանց հայրենակիցների համար: Նրա զործունէութիւնը մարմնացած հերքումն է ժողովրդի մէջ տարածուած այն զար-

մանալի կարծիքին, թէ մի բժիշկ, որ գրական աշխատութիւններով է զբաղուած, որ գրքոյներ է գրում, այդ բժիշկը լաւ բժիշկ չէ. որովհետեւ լաւ բժիշկը, ժողովրդի հասկացողութեամբ, նա է, ով կղզիացած է ապրում, ով իսկի հայ թերթի երեմն էլ չէ տեսնում, ու միշտ փակուած է լինում իր գրասենեակում, թէկուղ այնտեղ թղթախաղով պարապէր ամբողջ գիշերներ:

Էլ չեն մտածում, թէ ախար չէ որ մի գիրք զրելիս, մի յօդուած շարադրելիս, բժիշկը պէտք է մօտ ծանօթանայ այդ խնդրի հետ, ուսումնասիրի նրան ամեն կողմից, անքուն գիշերներ անցկացնի, քրքրի իր գրուածքին վերաբերեալ գրականութիւնը, հետևաբար աւելի ևս զարդանայ, աւելի ևս հմտանայ իր գիտութեան մէջ:

Բժ. Ա. Բուգուղեանը կենդանի ապացոյց է այն բանին, որ կարելի է համ հմուտ բժիշկ լինել, և «պրակտիկայով» պարապել, համ էլ աշխատել հասարակութեան, ժողովրդի օգտին:

Եւ նրա ցոյց տուած գործունէութիւնը արդէն պատկառելի ծաւալ է ստանում և ապահովացրել է նրան լայն ժողովրդականութիւն:

Բժ. Բուգուղեանը նպատակ է դրել իրան՝ ժողովրդականացնել հայերի մէջ առողջապահական գիտութիւնները և այդ նպատակով արդէն լոյս է ընծայել մի շարք կրքոյներ, որոնք իրանց գեղեցիկ արտաքինով ու հետաքրքիր պարունակութեամբ արժանի են ամենալայն տարածման ժողովրդի մէջ:

Բժ. Բուգուղեանի գրքոյները լոկ չոր ու ցամաք բժշկական—առողջապահական ձեռնարկներ չեն, այլ ամեն մի առողջապահական խորհուրդ այգտեղ լուսաբանուած է փիլիսոփայական և հասարակական խնդիրների մասին գոյութիւն ունեցող նորագոյն հայեացքներով: Այս է սլատճառը, որ նրա զրքերի մէջ ամեն երեսի վրայ շօշափուում են հասարակական խնդիրներ և հոգեբանական դիտակները: Այսպիսի զրքերի ընթերցանութիւնը օգտագուշ է ընդհանուր զարգացման տեսակէտից, թէև երբեմն էլ նա կարող է վնասել գործնական առողջապահական գաղափարների տարածուելուն: Այս է յարգելի բժշկի զրելու ձեւը: Շօշափած խնդիրները չափազանց հետաքրքրական են, ու կարևոր: Բաւական է յիշել մի քանի վերնադիրներ: Առաջին օգնութիւն մինչեւ բժեկի զալլ: Վարակիչ հիւանդութիւններ. Ի՞նչ է սիմֆիլիսը. Ի՞նչ է ժուժկալութիւնը. Ի՞նչ է անառակարգիւնը. Մեր նեարդերը. Առողջ նոզի աւողջ մարմնի մէջ:

Ահա մի շարք խնդիրներ, որոնք կենսական նշանակութիւն

ունեն և որոնցով հետաքրքրում է ժողովրդը, իսկ այդ ապացուցում է նրանով, որ այդ գրքերը համարեա բոլորը արդէն սպառուած են:

Այդ գրուածքները ակներե են անում հեղինակի մէջ մեծ գիտական ալաշար և ընդհանուր լայն զարգացումն. իսկ դըրանք այնպիսի յատկութիւններ են, որոնք անհրաժեշտ են ժողովրդի հետ խօսելու համար:

Պ. Բուդուղեանը աշխատում է իր գրքերն ընթերցանելի անել ամենքին, և ճշմարիտ որ իրանց բնաբանով ու շարադրութեամբ նրանք շատ հեշտ ընթերցանելի են և հանրամատչելի. այդ է երեխ նրանց արագ սպառուելու գաղտնիքը: Սակայն պէտք է ասել, որ նրանցից մի քանիսը անմատչելի կը լինեն բուն ժողովրդի համար (ևս ենթադրում եմ գիշացի, բանուոր գասակարգը), որին հարկաւոր է տալ որոշ ու պատգամների պէս պարզ խրատներ և խօսքը սահմանափակել միայն շօշափած հարցով: Ժողովուրդը չէ կարող ընդհանրացնել առողջապահական գիտելիքները և անընդունակ է ըմբռնել նրանց հասարակական նշանակութիւնը. նրան պէտք է ասել. «Այս բանը օգուտ է, իսկ միւսը մնաս, որովհետեւ... Մի ուրիշ անհրաժեշտ պայմանն էլ այն է, որ ժողովրդին պէտք է տալ այնպիսի մոռներ, որոնք լոկ անվիճելի ճշմարտութիւններ են և ոչ թէ պայմանական, այլապէս նա չի հաւատայ մեզ»:

Պ. Բուդուղեանի գրքերից մի քանիսը համապատասխան են այս պահանճներին, իսկ մեծագոյն մասը ընթերցանութեան պատուական նիւթ են մատակարարում աւելի զարգացած դասակարգի համար: Դժուար կը լինէր մի առ մի քըննադատել նրա 13 գրքոյները. բայց վերցնենք նրա վերջի գըրքոյլը Գեղձախտը (Յօլուցա): Այս հասարակ հիւանդութեան մասին բաւական կը լինէր մի քանի երես բան գրել: Բայց հեղինակը չէ բաւականանում հիւանդութեան լոկ չոր ու ցամաք նկարադրութիւնով, այլ նրան համեմել է հետաքրքրական տեղեկութիւններով և, օգտուելով ասիթից, մի շարք առողջապահական գիտումներ է արել. օրինակ, մանկան մննդատութեան, օդի, կերակրի նշանակութեան, լողարանների մասին եւ այլն:

Բայց քանի որ մարդկային գործը չէ կարող կատարեալ լինել, ալ. Բուդուղեանին կարելի է մի քանի կշտամբանք անել, գոնէ լուզուի վերաբերմամբ:

Լուզուն չունի այն պարզութիւնը, «անարուեստութիւնը», որ ժողովրդական գրքերի համար այնչափ մեծ կարևորութիւն ունի. նրա գրքերի մէջ կարելի է յաճախ հանդիպել այնպիսի նախադասութիւնների, որոնք շատ դժուար հասկանալի են նոյն

իսկ ինտելիգենտի համար՝ ծանկալի է, որ հեղինակը, կամ աւելի ճիշտ ասած նրա թարգմանողը, խուսափի դրաբար ոճերից ու երկար նախադասութիւններից և այնպիսի դարձուածքներից, որոնք պահանջում են ընթերցողից ուշի մեծ լարումն ու ճիգ։ Մենք այս բարեկամական խորհուրդը կը տանք յարգելի հեղինակին, մի և նոյն ժամանակ անկեղծօրէն ու սրտանց ողջունելով նրա հանրօգուաւ գործի բարի սկզբնաւորութիւնը։

Պ. Բուդուղեանը ունի պատրաստութիւն ու եռանդ, ունի նաև սէր գէպի այս գործը. ցանկանում ենք, որ նա մնայ ալդ չաւղի վրայ և տոկունութեամբ, առանց վհատելու շարունակէ։

Ի հարկէ մի մեծ բան չէ մեր ամեն մէկիս արածը, և մեր հատորիկներով անկարուղ ենք մի անդամից ցրել այն անթափանցելի խաւարը, որ պատուի է հայ ժողովուրդը. բայց մենք չնորհապարտ պիտի լինենք այն անձանց, որոնք ճգնում են իրանց ոյժերի չափով այս թանձր վարագոյրի գոնէ մի վոր մասը բարձրացնել։

Այդպիսի անձերից մէկը բժ. Բուդուղեանն է։

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

**18) ԶԵՅԹՈՒՆՅԻ. — Զեյրունի անցեալէն և Շիրկայէն. Ս. մաս. 1900 թ. Վիեննա:**

Այս գրքոյկում խօսւում է զիլսաւորապէս Զէյթունի անցեալի, մօտաւորապէս երկու դարի պատմութեան մասին և վերջանում 1890 թուի դէպքերով։ Սակայն այդ լուրջ, քննուած, փաստերով ու վկայութիւններով մի պատմութիւն չէ, այլ հեղինակը տալիս է աւանդութիւնների և աշուղական երգերի մի հաւաքածու, որոնցից ե' հետեւցնում է, և' կազմում իր պատմութիւնը։

Այդ գրքոյկը իր բովանդակութեամբ ոչ միայն չէ լրցնում հայոց գրականութեան մէջ զգալի պակասը Զէյթունի պատմութեան նկատմամբ, այլ և շփոթում է այն, ինչ վերաբերում է նրա անցեալին։

Այսպէս, զրքոյի երես 15-ում «Մուտք քրիստոնէութեան ի Զէյթուն», բոլորովին հակառակ է պատմութեան և եղելութիւններին։ Առաջին դարում, երբ Քրիստոսի աշակերտները զնում էին քարոզելու Եւրոպայի և Ասիայի զանազան երկիրները, Կիլիկիայում կամ, մասնաւորելով, Զէյթունում զեռ ևս հայեր չը կային, հայկական գիւղեր գոյութիւն չունէին, որպէս զի գաւառի այս կամ այն մասը կրէր հայ անուններ, ինչ-

պէս գրում է այդ գրքոյկի հեղինակը.—«Երբ Բարդուղիմէոս առաքեալ Հայաստան կ'երթար զ՞րիստոս քարոզելու, կը համնի Մարաշ ու քաղաքէն քառորդ ժամ հեռաւորութեամբ Քառասուն ակ (Գրք Կեօց) կոչուած տեղը, որ Ազբիւրի զլուխ (Փինար պաշի) էլ է ասուում...»: Այդ գարում կիլիկիան, այն էլ նրա դաշտավին մասերը միայն, գրաւած էին հոռվմայեցիների, գեռ ևս ոչ Բիւզանդիայի, կողմից, մինչեւ մինչև հայերի հաստատուելը այնտեղ՝ պարսկական, ասորական, արաբական և այլ արշաւող բանակները աւերում ու քանդում էին կիլիկիան սկարբերական կերպով: Քիչ վարը, շարունակութիւնը մենք կարգում ենք. «Յնտոյ Բարդուղիմէոս առաքեալ այս քաղաքէն հեռանալով կուղայ Զէյթունի հար. արեելեամ կողմը՝ Շէհէրձիկ կոչուած տեղը... և այստեղ բնակող կռապաշտ ժողովրդեան ալ կը քարոզէ իր վարդապետութիւնը, բայց նոքա մերժելով զայն՝ սաստիկ կը բարկաման անոր գէմ...»: Աւելի վերջ աւելացրած է ինչ որ պառաւական ու անմիտ աւանդութիւններ, իբր թէ ժողովուրդը բորսուութեամբ կը վարակուէ, հրեշտակ կ'ուղարկուէ և վերջապէս առաքեալի աղօթած «Աւագ» լերան ստորոտը լոյս կը ամուէ, քիչ վերջ ջուր կը բղինէ, ուր, մի աւազանի մէջ, նըրանց՝ կռապաշտ հայերին՝ կը մկրտէ և այդ տեղը կը կոչուէ «Փրկիչ»... Ի՞նչ մնեծ երջանկութիւն ընթերցողի համար: Դէպքեր, անուններ և անդեր, որոնք գարերից ի վեր պահպանել են և այժմ էլ գոյութիւն ունեն Զէյթունից քիչ հետո... Այդ պառաւական լէզէնգաները, որոնցով հայերը այնքան հարուստ են և որոնց կարելի է լսել անհաշիւ՝ Հայաստանի ամեն անկիւններում, կարող էին հրապարակ հանուել իբրև հէքիաթներ, առապելներ, որոնք պատմում են Զէյթունում, սակայն դրանց վրայ հիմնուած չէր կարելի եղբակացնել, թէ ովքեր էին Զէյթունի նախկին լնակիցները, կամ ինչպէս կատարուեց քրիստոնէութեան մուտքը Զէյթունում: Երբ խօսուում է կարեսոր հարցերի մասին, հարկաւոր է որ մարդկանց պատմածները լինեն լուրջ և ճիշտ ապացոյցներով: Շէհէրձիկը նշանակուած է թիւրքաց կողմից 16, 17-րդ դարերից յետոյ, մինչեւ հարց է, թէ դրանից առաջ ի՞նչ անուն ուներ այդ քաղաքը, կամ Երբ և ի՞նչ աղգից էր բնակուած: Բարդուղիմէոս կամ Թաղէոս առաքեալների Հայաստան կամ կիլիկիա զնաներն էլ գետ ևս հարց է. սակայն թէկուզ ճիշտ էլ լինէին, այդ գաւառները հայերսի բնակուեցին և հայերէն անուններ ստացման առաքեալներից աւելի քան մի տասնեակ գար յետոյ, XII և XIII դարերում:

Յաջորդ երեսներում պ. Զէյթունից շարունակում է իր առասպելները.—«Բայց ս. Փրկչէն՝ Բարդուութիւնը՝ առաքեալ

ս. Կարապետ անուամբ մենաստան մ'ալ շինեց Զերմուկի հիւս-  
արէմտեան կողմը, այժմ աւերակ, բայց ջերմեռանդ հայը չի  
մոռանալ երբէք իւր ուխտատեղին... անոր վկատակներն ալ  
կը յարգէ, անոր հողն ալ կը պաշտէ... Քրիստոս ու իւր խաչը,  
կրօնքն ու եկեղեցին հայուն համար եղած են միշտ անձեռնմը-  
խելք սրբութիւններ, նեղութեանց մէջ իւր միսիթարութիւնը  
և կոփւներու մէջ իւր զօրավիզը...» Սակայն ինչու, մենք չենք  
հասկանում, ալ. Զէյթունցին վեր է հանում այսուղ պատմա-  
կան բացարութիւնների հետ կրօնական այդ ալէլուները, ո-  
րոնք այլ ես տաղտուկ ու ձանձրոյթ են պատճառում: Բաւա-  
կան է, որ մարդիկ սողում են խաւարի և ցեխի մէջ: Ի լրումն  
այս առասպեկների, նա բերում է մի ոտանաւոր աղօթք, որպէս  
ապացոյց «Ա: Փրկիչ վանքի առաքելական հաստատութիւն մը  
ըլլալուն»:

Գրքոյլի երես 29-ում Զարմանուհու մասին խօսելուց յե-  
տոյ, որի թուականն ու ինչ աղբեւրից լինելն էլ գուցէ չէ յի-  
շում ինքը ալ. Զէյթունցին, շարունակում է պատմութիւնը  
ինչոր մի արուեստական հրովարտակի մասին, որ իւր թէ  
Զարմանուհու սերնդից Հեթում «ուսեալ և արիստիրո քահա-  
նան» գնում է Պօլիս և ձեւք բիրում Մուրադ IՎ-դ սուլթանից:

Նախ քան այդ շինծու հրովարտակի մասին խօսելը, մենք  
շատ ենք զարմանում, որ պ. Զէյթունցին ցոյց չէ տալիս, թէ  
ինչ աղբեւրից է իմանում, որ այդ Հեթումը Զարմանուհու  
սերնդից էր: Զարմանուհու գոյութեան մասին խօսող միայն  
մի յիշատակարան է գտուած, գրուած 1473 թուին ոմն կիրա-  
կոս վարդապետի կողմից, որի ամբողջութիւնը նուիրուած է  
Զարմանուհու գործունէութեան կանչի և կապսնի շրջակայ-  
քում: Դրանից յետոյ ուրիշ ոչինչ գրուած չէ այդ կնոջ մասին  
և յանկարծ, մօտատառորապէս երկու դար վերջ յիշատա-  
կուած Հեթում քահանան դառնում է նրա սերնդից: Իսկ  
ինչ վերաբերում է այդ հրովարտակի թիւրքերէն գրուածքին,  
որի խականը իւր թէ այրուել է 1884 թուի հրդեհում, և որի  
հայերէն թարգմանութիւնն էլ գրուած է միասին, պէտք է  
նկատնէք, որ սուլթանները այդպիսի հրովարտակներ ոչ մի  
ժամանակ չեն գրած: Թիւրքական, ինչպէս նաև պարսկական,  
Փէրմանները ունին մի ընդհանուր և առանձնայատուի ոճ և նա-  
խաղասութիւններ, որոնցով սկսւում են և մասնաւոր նախա-  
դասութիւններով էլ վերջանում: Բացի գրանից, սուլթանները  
երբէք չեն գրում ստորագրելիս՝ «այսպէս պէտք է գիտնան և  
կայսերական կնքոյս վատահին. Մուրատ»:

Սկսելով Զէյթունի մղած կոփւները միայն 1780 թուից, ալ.

Զեյթուցին հաւատացած է, որ թշնամական յարաքերութիւնները թուրքաց և հայոց մէջ առաջ եկան միայն «նախանձից»։ Գուցէ նա կարծում է, որ այդ թուականից առաջ զրախոր գտնուում էր Զեյթունի մէջ։ Նա այլ ևս չէ տեսնում անցեալ դարերի աւելի արիւնալի և տիսուր զրութիւնը, երբ ազգերի գոյութեան հիմունքները պահպանուում էին չառ աւելի գժուար պայմաններով և կոիրը ժողովուրդների մէջ աւելի անողորմ և աւելի վայրենի էր։

Երրորդ գլխում նա գրում է՝ «Ալի-Գայան» կոչուեց ինչ որ «Հազրէթի Ալի-Փաշայի» անունով. սակայն նա պէտք էր զիտենար, որ գեռ ևս այդ թուականից շատ առաջ յիշւում է Աւլա-Գայա, (ոչ Ալի-Գայա) և Ալի-Բաւ անունները։ Ալա նշանակում է բարձր և արաբական բառ է։ Օսմանյանները Արեգնին անուանեցին Ալա-Բաւ, որ նշանակում է բարձր զլուխ, իր աշխարհապրական բարձր դիրքի չնորհով, իսկ նրա սահմաններում գտնուած հսկայ ժայռին առանձին Ալա-Գայա, որ նշանակում է բարձր սար։

Երեսներ 95—98-ում Թէջերլի աշիրէթի (թիւրքմէն միցեղ) մասին խօսելիս, յայտնում է, որ 50-ական թուականներին, մինչև 59 թիւը, Զեյթունցինները կոուի մէջ էին զրանց հետ և այդ միհնոյն դարին ինչ-որ մի վարդապետ ու մի քահանայ գնում են Պօլիս և խնդրագիր տալիս, որի համաձայն սուլթան Մէլիթը հրամայում է Թէջերցիններին մշտապէս բնակեցնել Չուգուր-Օվայում (Կիլիկիայի գաշտային մասը, հարաւում) և արգելել նրանց սովորական լեռնազնացութիւնը Զեյթունի սահմաններում։ Դէպէը բոլորովին հակառակն է կատարուած։ Այդ թուականներում Զեյթունն արդէն սոսկալի տաղնապների մէջ էր Խուրշուտ փաշայի բանակի հանդէպ, որ ուղարկուած էր հէնց կենարոնական կառավարութեան կողմից, ուրեմն և չէր կարելի սպասել, որ Սուլթան Մէլիթը Զեյթունի նպաստաւոր մէկ այդպիսի կարգադրութիւն անէր, ինչպէս այդ գրում է պ. Զեյթունցին։ Նա բոլորովին սխալում է։ 59 թուից սուաջ արդէն Թէջերցիններն ու թիւրքմէնները չարաշար յաղթուած՝ տեղի էին տալիս և նրանց բնակուած գաւառները յանձնուում կովկասից գաղթող չէրքէզներին ու նօդայի թաթարներին։

Գօշանների մասին խօսելիս ինչ-որ աւանդութեան վրայ հիմնուած, պ. Զեյթունցին ընկնում է նմանապէս սպատմական մի այնպիսի սխալի մէջ, որ չը տեսնել կարելի չէ։ Նա գրում է. — «Այնթապու մէջ գտնուող մազագործ գնչուներէն, որոնք խրզան (չինկանէ, աղքատ) կը կոչուէին, երկու եղբարք՝ Քրիստոսի 1640 թուականին՝ կուզան Հաճին։ Ասոնք իրանց

արհեստը ժամանակ մը գործածելէ յետոյ՝ յանկարծ բաղդերնին կը բացուի: Հաճնցի հայերը այդ ժամանակ սաստիկ երկպառակատոն էին... և չարեաց դարման տամնելու համար կը խորհին այս նորեկ գնչուներն իրանց պետ ճանչնալ... Այդ ժամանակն է, որ իրանց խրզան անունը Դօչան-օղլով կը փոխին»: Ո՞րտեղից է գուրք եկել 1640 թուականը և Գօշանները, զրանոյ ծաղրւում և շփոթւում են պատմութիւնն ու անցեալի դէպքերը: Գօշանները ոչ գնչու են և ոչ էլ մազագործ, այլ թիւրքմէն մի յայտնի ցեղ, սրոնք XIII-րդ դարում Գօշան անուն նահապետի առաջնորդութեամբ Արևելեան-Թիւրքաստանի Խլզ-Յի Նահանգից Փոքր-Ասիա անցան Եփրատի հողիատի: Հէնց սրա անունով իր ցեղը ստացաւ Գօշան կամ Գօշան օղլի անունը: Դրա ցեղակիցներից մէկի՝ Ելւրեների սրդին էր Շամազանը, որի անունով էլ միւս ցեղը կոչուեց Շամազան-օղլի: Սրմաք, գեռ ևս տեղար, հայոց (Թուրբնեան) թագաւորներից խնդրեցին և ստացան արտօնութիւն՝ արածացնելու. իրանց հօտերը Տարոս լիրան ստորապետն: Քիչ վնրջ, օգտուելով հայերի քազաքական ընկած վիճակից, իրանց ցեղով հաստատուեցին այնտեղ, ուր բազմանալով նրանց յաջարդները տիրեցին Ագանան ու շրջականները և կազմնցին անկախ ու զօրաւոր իշխանութիւն: Դրանց վերջին ֆեացորդ մի քանի գէրէբէկիները, 19-րդ դարու սկզբում, իրանց մէջ բաժանած իշխում էին Կիլիկիայի զանազան գաւառները: Այս բոլորը հազորդում է պատմութիւննը, իսկ հայերէն կարելի է կարդալ հ. Ալիշանի Սիսուանում բաւական մանրամասն գրուած:

Կան նաև պատմական սիսաներ մի քանի կարևոր դէպքերի, ինչպէս Զափան-օղլու, ներքին կոխների, Ալէ-Դաղի և այլն, սակայն շատ երկար կը լինէր կանգ առնել ամեն մէկի առաջ: Միայն, նախ քան վերջացնելը յօդուածը, մենք աւելացնում ենք նաև այն, որ գրեթէ բոլոր դէպքերը հիմնուած լինելով աշուղական երգերի կամ աւանդութիւնների: Իւրաքանչիւր իշխանական տուն՝ ունէր, ինչպէս նաև այժմ, իր առանձին աշուղը, որ գրում էր, երգում, էր տարբեր մեկնութիւններով ու ոգով և շատ անգամ հակասական, երբ այս և այն թաղերը միմեանց թշնամի էին. այսպէս որ չէր կարելի պատմութիւնը կազմել զրանց վրայ հիմնուած, առանց ընդգարձակ ուսումնասիրութեան: Ցիշատակուած դէպքերից մի քանին էլ հաւաքական գործեր չեն, այլ այս կամ այն թաղի կամ խմբի ինքնուրոյն ձեռնարկներ, որոնց հարկաւոր չէր մասնաւոր ուշագրութիւն դարձնել:

**19)** S. Schneider: Die Deutsche Bagdad-Bahn und die projectirte Überbrückung des Bosporus<sup>4</sup>, Wien—Leipzig. Verlagsbuchhandlung L. Weiss.

Այս չքեղ հրատարակութիւնը բազկացած է 146 մեծագիր երեսներից և իր մէջ պարունակում է երկու քարտէզ (Փոքր-Ասիայի) և 5 պատկեր (Բոսֆորի կամուրջը, Զմիւռնիա, Անդրօրս, Կոնիա, Բազդաղու):

Հեղինակը մի առանձին ոգեսրութեամբ պատկերացնում է կուլտուրական այն մեծ նշանակութիւնը, որ ունենալու և այդ գիծը թէ Տաճկաստանի և թէ ամբողջ Եւրոպայի համար: Նու մի ուժեղ հարուած է տալու տեղական ժողովրդի կեսնքին և կենսատու ոյժ է ներշնչելու «հիւանդ մարդուն»:

Բազդաղի երկաթուղին ունենալու է 1600 կիլոմետր երկարութիւն և անցնելու է հետեւեալ ողութեամբ՝ Կոնիայից դէպի Աղանա, որ արգէն երկաթուղու գծով միացած է Միջնակարական ծովի հետ և պատերազմական մի նշանաւոր կենտրոն է ներկայացնում. Արանայից գիծը կուղուուի դէպի Ռւրիու (Նախկին Եղեսափա) և Դիլարբեկիր (Անթառի և Բերկչեկի վրայով), և այդանունից Տիգրիսի ափով, Մօսուլ, Երրիլ, Կերկու, Դելի-Աբասի վրայով դէպի Բազդաղ և Բասսօրա. այսուեղ գիծը կը բաժանուի երկու ճիւղի, որոնցից մէկը կ'առջուուի դէպի Երևանի Մուխամմերիխ, իսկ միւսը—դէպի արաբական Էլ-Կուվինա նաւահանգիստը:

Սակայն այդ բոլորը հակայական ձևոնարկութեան միայն մի մասն է կազմում: Պակաս ուշագրաւ չէ և միւս մասը, ոյս մինքն Բոսֆորի կամուրջը, որ ունենալու է 600 մետր երկարութիւն և միացնելու է Պոլիսը Փոքր-Ասիայի հետ: Այդ կամուրջը դառնալու է իր բաղմաթիւ մինարեաներով ու զիշերային հրավառութեամբ համաշխարհային մի նոր հրաշալիք, իսկ անընկելի պատերով.—աշտարականման ամրութիւններով, մի անյաղթելի պատնէչ «վաղիշահի» թէնամիների դէմ:

Բազդաղի երկաթուղու համաշխարհային մեծ նշանակութիւնը ցոյց տալու համար պ. Շնայդէրն ի միջի այլոց մատնանիշ է անում այն իրողութիւնը, որ այդ գիծը չափազանց հաշտացնելու. և կրօնատելու է Հնդկաստանի ճանապարհը: Նրա կարծիքով այդ ճիւղով կարելի է համնել կապշտատից և Զամբգիրարից մինչև Պետերբուրգ—16 օրում, Տօնկինից Փարիզ—15 օրում: և Կալկուտայից Համբուրգ 12 օրում:

Հեղինակը նկարագրում է երկաթուղու դիսաւոր կայա-

րանները, շրջապատող գաւառների բնական հարստութիւնները, աղջաբնակութեան բնորոշ առանձնայատկութիւնները, Գերմանիայի քաղաքականութիւնն արևելքում, և գալիս է այն եղբակացութեան, որ գերմանական կապիտալի և հնարագիտութեան միջոցով կարելի պիտի լինի Փոքր-Ասիան ծաղկած գրութեան հայցնել, նրա անստառապահութիւնը, երկրագործութիւնը բարեկարգել, հանգերն ու միւս բնական հարստութիւնները շահագործել, յաճախ կրկնուող խլրտումները վերացնել, —մի խօսքով Տաճկաստանին այժմեան մեռելային գրութիւնից քաղաքակրթութեան ու առաջապիմութեան գիրկը նետել...

Պ. Շնայդէրն իր գրքում նոյն խոկ փաստաբանի դեր է կատարում, աշխատելով արդարացնել թիւրքերի յետամնացութիւնն ու բանակալութիւնը:

Նրա կարծիքով թիւրքերը կենսունակ և ընդունակ ժողովուրդ են, միայն «ասիացիուրիւնն» է նրանց վատ յատկութիւնների պատճառը. խոկ թէ ինչ բան է կամ թէ ինչումն է կայանում այդ «ասիացիութիւնը»—միայն Ալլահը պիտէ, որովհետեւ ինքը հեղինակը չէ պարզում հարցը...

Գալով հայերին, հեղինակը վկայում է նրանց տոկունութիւնը, վաճառականական ընդունակութիւնը, աշխատասիրութիւնը և միւս յատկութիւնները. բայց միևնոյն ժամանակ չէ մոռնում հայկական սարսավիները քաղաքական առասպել անուանել և հայոց հոգենորականութիւնը մոլեսանդ ու քրիստոնէութեան անունն արատառորդ համարել: Նրա կարծիքով Երևանը «հայ փախստականների» բռնն է կազմում, խոկ եղմիածինն ու Հայոց կաթուղիկոսը—ոռուսաց քաղաքականութեան գործիքը:

Դժբախտաբար նա իր կարծիքները հաստատելու համար փաստեր ու ապացոյցներ չէ բերում, այնպէս որ բանիմաց ընթեցողին մնում է այդ երեսոյթի պատճառուը վերագրել կամ սուլթանական հիւրասիրութեանը \*), կամ հեղինակի ծայրայել շօվինիզմին:

Աւելի հաւանական է երկրորդը, որովհետեւ գրքի մէջ սկզբից մինչև վերջը գերմանական քաղաքականութիւնն ու առհասարակ գերմանացիները պատկերացրած են իբրև մի հզօր ոյժ, որ առանց աշխարհակալական ձգտումների աշխատում է միայն կուլտուրա տարածել (sic!), երկրի արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը զարգացնել և ընդհանրապէս Տաճկաստանի հետ յարեկամական առևտուր ունենալ:

Խոկ միւսիան, հեղինակի կարծիքով, ընդհակառակը չա-

\*) Հեղինակն իր աշխատութիւնը մշակել է Պօլսում—1900 թ. ամառը:

փազանց վտանգաւոր հարիսն է, որովհետև ձգտում է աիրապետել Հայաստանը և առասարակ ճնշել Տաճկաստանին:

Սակայն այստեղ էլ գերմանական ձեռնարկութիւնը մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ Տաճկաստանին, որովհետև շինելիք երկաթուղիների ցանցը պիտի բարձրացնէ նրա անստեսական ոյժը և անհրաժեշտ դէպքում արագ կերպով պիտի վոլխագրէ տաճկական զօրքն ու ռազմամթերքները դէպի սահմանը, դէպի պատերազմ ընդէմ կազակների:

Հեղինակի կարծիքով Տաճկաստանն այդ բարիքները հեշտութեամբ կը կարողանոյ վայելել, եթէ Փոքր-Ասիայում գերմանական գաղութներ հաստատուեն:

Ընդհանուր առմամբ պ. Շնայդէրի աշխատութիւնն արժանի է ուշադրութեան իր մի քանի հետաքրքիր տեղեկութիւններով, որոնք աւելի մեծ արժէք կ'ունենային, եթէ հեղինակի քարոզչական տօնն ու աղաւաղումները չը լինէին...

Ե. ԹՌՓԶԵԱՆ

## ՍՊԱՌՈՒԻԱԾ ԳՐՔԵՐ

Ընթերցողը չի գարմանալ արդեօք, եթէ ասենք, որ այժմս հայերէն պիտանի գրքերի սով է: Ամբողջ տարի է բոլորում, իսկ մեր աղքատիկ զրականութեան վրայ չեն աւելանում երեք կարգին դիրք, մինչդեռ՝ գրա փոխարէն, եղած չենք ու չնորհքով գրքերն էլ «մնաս բարեաւ» ասելով՝ այլ ևս չեն կենդանանում վերստին տպագրութեամբ:

Ներկայումս մեր մի քանի յայտնի հեղինակների գրուածները հրապարակի վրայ ծախու չունինք բոլորսին. զրանք սպառուած են թէ հեղինակների մօտ և թէ գրավաճառանոյներում: Փաստերին դիմնեաք. Բաֆֆու «Սամուէլ», «Կայծեր», «Դաւիթ բէկ», «Փունչ», «Ռուկի աքաղաղ», «Ղարաբաղի աստղագէտ», «Արծիւ Վասպուրականի», «Հայ կինը և հայ երիտասարդութիւնը» վէպերը սպառուած են. հատնելու վրայ են «Խենթ և Զալալէդզին», «Խամսայի մնլիքութիւններ», «Վէպիկներ և պատկերներ», «Խաչագողի յիշատակարան», «Մինն այսպէս, միւսն այնպէս» գրուածները: Պաօշեանցի «Հացի խնդիր», «Ոս և Վարդիթեր», «Շահէն» գրքերը չատ տարիներ է ինչ սպառուած են: Սմբատ Շահազիղեանի «Լեռնի վիշտը», «Հրապարակախօս ձայնը», «Ա-

մառնային նամակները՝ նմանապէս։ Ի. Պատկանեանի առանձին լոյս տեսած «Բանաստեղծութիւններ»-ը Մուկուայում՝ հանգուցավի որդու մօտ կայ, իսկ զրավաճառների մօտ երկու տարուց աւելի է ինչ վերջացել է։ Շիրվանզադէի «Արամբին», «Գործակատարի յիշատակարան»-ը, «Խնամատար», «Ցաւագար» նոյնպէս չը կան։ Թարգմանութիւններից սպառուել են «Դոն-Քիչոտ», «Մորիզան», «Խաւարից գէպի լոյս», «Գէորգ Մոլեստոն», «Կաշինգտոն», «Բենիամին Ֆրանկին» զրքերը։ Ատրակետի «Ալմաստ»-ը և Պետերուրդի ուսանողների թարգմանական «Լուսադէմին» և «Ռւսկոլիններ» գրքերը նորերս սպառունցին։ Յովի, Յովհաննիսեանի և Ա. Խասհակեանի «Բանաստեղծութիւններ»-ը նոյնպէս չը կան։ «Մուռուրէնից հայերէն բառարան»՝ խօ, գեղի համար չէ ճարտում։ Երեցիովսեանի «Մուռ-հայերէն բառարան»-ը 5—6 տարուց աւելի է, իսկ Արքս. Յովհաննիսեանի «Մուռ-հայերէն բառարան»-ը երկու ամրի է, որ սպառուել են։

Թերեւս մի կերպ տանելի լինէր, —իթէ գոնէ ուշագրութեան արժանի նոր զրքեր լոյս տեսնէին ու սպառուածների տեղը բըռնէին։ Թէին իւրաքանչիւր գրուածք իր համեն ու հոտն ունի, բայց որ ոչ նորերն են երեան գալիս և ոչ էլ հներն են արտասուլում, —ահա այս տխուր պարագան կարօտ է մեր հասարակութեան բանիբուն մասի լուրջ ուշագրութեան։

Հայերէն զրքերի պահանջ թէև թոյլ, բայց կայ իսկապէս։ 1900 թուականի ընթացքում Թիվլիսի յայտնի մի զրավաճառնոցին դիմել են «Սամուկլ» վեպի համար 176 հոգի, «Կայծեր»-ի համար 153 հոգի, «Գաւիթ բէկ»-ի՝ 147, «Փունջ»-ի՝ 73, «Ուկի աքաղաղ»-ի՝ 62, «Հայ կին և հայ երիտասարդութիւն»-ի՝ 43, «Հայի խնդիր»-ի՝ 92, «Շահնշահ»-ի՝ 78, «Սոս և Վարդիթեր»-ի՝ 75, «Լեռնի վիշտ»-ի՝ 52, «Հրապարակոս ձայն»-ի՝ 26, «Ամառնային նամակներ»-ի՝ 25, Գամառ-Քաթիսպայի «Բանաստեղծութիւններ»-ի՝ 218, Շիրվանզադէի սպառուած վէպերի համար դիմել են 25—62 հոգի, Յ. Յովհաննիսեանի և Ա. Խասհակեանի «Բանաստեղծութիւններ»-ի՝ 35, վերի յիշած սպառուած թարգմանական գրուածներին՝ 33—116։ Իսկ Երեցիովսեանի և Արքս. Յովհաննիսեանի բառարանների համար, համարեա, ամենայն օր։ Բերած թուերը գեռ մի զրավաճառանոցինն են, և այն էլ նկատի ունեցէք, որ շատերը հաստատապէս զիսենալով որ այդ գրքերը հրապարակի վրայ չը կան, սպառուած են, հետեւաբար չեն էլ գիմել։ իսկ աթէ գրքերը լինէին, անկասկած գրապահանջների թիւը կը կրկնապատկուէր և աւելի։ Պարզ է ուրեմն որ պիտանի գրքերի համար մշտական պահանջ կայ յիրաւի։

Պահանջներ եղել են աւելի Առվիտումի որչանից, որի հայ քնակիչները տաճկաստանցիներ են, Կովկասից դուրս Խուսաստանի և Ամերիկայի հայ գաղութներից: Ի դեպ՝ այս էլ պէտք է տաել—ընդհանրապէս զիտուած է, որ Տաճկաստանի վաճառական, արհեստաւոր և մշակ հայ գասակարգերի մէջ աւելի թուով դրաճանաչ և ընթերցաէրներ կան, քան Խուսաստանի և Պարսկաստանի համապատասխան դասակարգերում: Կովկասի քաղաքներում պահանջներ եղել են բաւարար չափով: Արարանի, Դաղասի, Նախիջևանի գիւղորագրը և Արարտահան գաշտի բնակիչները դեռ խարիսխում են նախնական տղիտութեան մէջ: Գրասիրութիւն տարածելու բարոյական պարտականութիւնը ծանրանում է աւելի բահանաների և երիտասարդների վրայ, որոնց անմիջական պարտքն է մայրենի լեզուի ընթերցանութիւնը հայի և ջրի չափով ընտանեցնել մատաղ սերնդի բերանաներում:

Մեր հեղինակների մեծ մասը միջոցներ չունեն նորից հրատարակելու իրենց սպասուած զբքերը: Պէտք է նրանց օդնեն մեր ուսներուները:

Բայց մեր հարուստները աւելի մեծ ուրախութեամբ անմիտ չուայլութիւնների վրայ հաղարներ կը վասնեն, քան մի քանի հարիւր կը դնեն և հրատարակիչ-մեկնամներ կը դառնան:

Մեր հարուստին շնոր հարկաւորն է, թէ հայերէն զրքերը սպասուում են և տարիներով չեն տպւում նորերը...

Մի հանգամանքի վրայ ևս կը ցանկացինք մատնանիշ անել:

Պէտք է խնդրել հրատարակազմներից, որ կարելոյն չափաշխատեն մատչելի զներ նշանակել զրքերի վրայ: Շատերը վափագում են ունենալ հանգուցեալ Բաֆֆու գրուածները, բայց ինչպէս վճարեն 4 ո. «Վէպիկներ և պատկերներ» գրքի համար, 3 ո. 50 կ. «Ալամուէլ» գրուածի համար, կամ 7 ո. Աբիս. Յովհանիսեանի Ռուս-հայերէն երկիատոր բառարանի համար, մինչդեռ Մակարովի Ռուս Դրանսներէն միջակ զիրքով բառարանը նոյն ստուարութեամբ արժէ միայն 2 սուբլի, թող Ռուս-հայերէն բառարանը 1 սուբլով աւելի լինի, ուրեմն 3 ո. արժենայ, բայց ոչ 7 ո.:

Տաճկահայոց մէջ տպուող գրքերի մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ յարմարութիւններ չը կան մօտից ծանօթանալու: Խակ Պարսկաստանի հայերը դեռ տհաս են տպագրութեան, հրատարակութեան մասին մտածելու: Թաւրիզում, Թեհրանում և Նոր-Զուլզայում եղած հայոց տպարանները կատարեալ անգործունէութեան մէջ մոռացուած են:

Տեսնենք հիմա մի ամբողջ տարում հրատարակուած հայ-

Կրէն գրքերի ստատիստիկան ինչ նորութիւն է հազորդում մեղ:

1900 թուականի ընթացքում լոյս են տեսել 52 դիրք, որից 7-ը (3-ը Հրատարակչական Ընկերութեանը, 4-ը մասնաւոր անձանց) նախորդ տարիներումն են տպուել, իսկ այս տարի արտատպուել են միայն. հետեւաբար հաջուի չը պէտք է տպնել: Ասել է թէ՝ մի ամբողջ տարուայ մէջ 45 դիրք է միայն աւելացնել մեր գրականութեան վրայ: Այդ 45 թուից 14 դիրք Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնն է լոյս ընծայել: Հրատարակչական Ընկերութեան 14 դրբից 10-ը թարգմանութիւն են և 4-ը ինքնուրոյն գրուած: Միւս 31 դիրքը մասնաւոր անհատներ են հրատարակել, որից 21-ը ինքնուրոյն են, 4-ը թարգմանական:

Վերև յիշուած 45 կառը գրքերը ըստ բովանդակութեան հետեւալ գասակարգութիւնն ունին.—9 դիրք գիտական-փողովրդական գրուածներ են, 5-ը կմսագրական, 5-ը մանկական, 4-ը թատերական, 3-ը կրօնական, 3-ը դասագիրք աշակերտների համար, 3-ը բժշկական, 3-ը վիպական, 3-ը երգարան, 2-ը ճանապարհորդական, 1-ը պատմական աօէմա, 1-ը գիւղատեսական, 1-ը առակաղիրք, 1-ը նշանագրեր ձեռագործի համար, 1-ը զուարձախօսութիւն՝ գաւառաբարբառով գրուած:

Հրատարակուած այդ գրքերի մեծամասնութիւնն ութածալ կամ՝ քառածալ բարակ բրոշիւրներ են՝ բաղկացած 35—62 եւրեսներից, բացի Արիս. եպս. Սեղրակեանի «Յահանայական խնդիր», Եր. Շահազդիլի «Մկրտիչ Յովսէփիւսն էմին», Կ. Կուսիկեանի և լ. Սարգսեանի «Մայրենի խօսք» դասագիրք, Կ. Ֆլամարիօնի «Ռւրանիա» աստղապիտական վէտպը՝ Հ. Առաքէլեանի թարգմանութեամբ, Նորայր Բիւզանդացու լուսաբանած «Կորիւն» վարդապետ և նորին թարգմանութիւնք համեմատական գրուածը և Պ. Վինոգրագովի «Դասագիրք ընդհանուր պատմութեան Նոր-Դար»՝ թարգմանութիւն Նիկ. Քարամեանի:

Զուր չէր ասուած յօդուածիս առաջին առղերում, թէ ամբողջ տարի է բոլորում, բայց մեր աղքատիկ գրականութեան մէջ չեն աւելանում երեւ կարգին դիրք:

Արդարէ՝ տիսուր պատկեր է ներկայացնում հրատարակչական գործը մեղանում: Ո՞ր մի գրականութիւն սիրող անհատի սիրտը տակն ու վրայ չի լինի, կարգալով վերանիշ սղմուած թուերը: Անյնի 366 օր և ընդհանուն 45 դիրք արտադրուի...

Ծննթերցանութեան գրքերից պակաս հոգս չէ պատճառում նաև դասագրերի պակասութիւնը:

Վերջին տարիներս զգալի կերպով նկատում է հայերէն դասագրերի պակասութիւն: Նոր դասագրեր չեն յօրինւում, սաւկաւաթիւ եղածներն էլ պակասում են միմեանց յետեից՝ չարժանամալով նոր տպագրութիւնների: Մի քանի առարկանների համար դասագրեր չը կայ բառիս բովանդակ նշանակութեամբ: Հապա՞ մատնացոյց արէք ներկայումս հրապարակի վրայ՝ Եկեղեցական պատմութեան, Բնական զիտութեանց, Հայաստանի և Հնդհանուր աշխարհագրութեան մի որ և է դասագրի, և կամ առաջին և երկրորդ բաժննմունքների համար Տարրական թուարանական խնդրագրի:

Մեր ս. Էջմիածնի ձեմարանը, թեմական դպրոցները, Պարսկաստանում եղած և լինելի երկանու ուսումնարաններն ինչով են կառավարուել վերջին տարիներս և ներկայումս: Յաճախ դպրոցական զանազան հաստատութիւններից գիմումներ են եղել և լինում են գրավաճառանցներին, դասագրեր են պահանջում, բայց միշտ էլ յուսախար բացասուել են՝ չը լինելու պատճառով:

Հրապարակի վրայ ծախու չը կան բոլորովին.—Մելք. արքեպոս. Մուրագեանի և Յուս. վրդ. Մովսիսեանի «Եկեղեցական պատմութիւնները», Սեղ. Մանզինեանի «Նահապետական և հայրենի աշխարհ», «Դիւցաղնական աշխարհ» և Հէնչէլի «Բանաւոր և գրաւոր հաշուելու ինդիքներ» ա. բ. և գ. մասերը, Կ. Կոստանեանի «Գրաբարի հոլովումն և խոնարհումը», իսկ «Եախաշաւիդը» սպասուելու վրայ է, Սրբահամեանի պատկերագարդ «Հայոց պատմութիւն» ստորին գասարանների համար, Ստ. Պալասանեանի և Նիկ. Մելք-Թանգեանի «Աշխարհաբար քերականութիւն», Ն. Սիմէօնեանի «Բնհանուր աշխարհագրութիւն», Գր. քահ. Երզնկեանի «Թուալանական խնդիրներ և օրինակներ, տարրական դասընթացք» ա. և բ. տարի, Մ. Սիմէօնեանի «Դասադիբը թուալանութեան, թուալանական խնդիրների մ. ա. ամբողջ թուեր և մ. բ. կոտորակներ», Յ. Գէորգէգեանի «Ժողովածութուալանական աշխարհագրիների» մ. բ. կոտորակներ, Եղ. քահ. Երզնկեանի «Դասագիրք հայկական ձայնագրութեան և ազգային ձայնագրեալ երգարան», Կամսար Տէր-Դաւթեանի «Русское Слово» ձեռնարկը, արժանագին (5—10 կոպ.) վոգրածաւալ այրբենարան, կտրտուած-շարժական տառերի հաւաքածու կարդունի վրայ, թղթէ արկղիկներով, մինոյնը՝ քառակուսի փայտերի վրայ յարմարեցրած և Հայաստանի քարտէզը:

Միջնակարգ դպրոցների բարձր դասարանների ուսանողները պակաս նեղութիւն չեն կրում Խորենացի, Եղիկ, Նարեկ,

Ղազար Փարսկեցի և այլն զրաբար ձեռնարկները ձեռք բերելում: Շատ դասարաններում 4—5 հոդի մի զրգով են կառավարուում: Յիշեալ դասազրերից Խորենացին, Ազաթանգեղոսը և Եղիշէն տպագրուել են Թիֆլիսում: Խորենացին սովառուած է, իսկ միւսները Վենետիկի տպագրութիւններ են, բայց մինչև զրանց սուսնալը աւելի շուտ ուսումնական տարին է վերջանում, քան այդ զրքերը՝ Վենետիկից աեղ են հասնում:

Հայ զրավաճառները միանգամայն անուշադրութեան են տուել Վենետիկի և Վենենայի Մխիթարեանների, Կ. Պօլսի, Զմիւռնիայի, Երուսաղէմի, Մոսկուայի և այլ տեղերի հրատարակութիւնները, որոնց չը լինելլ սակաւ մտատանջութեան չէ հնթարկում զրականութեամբ զբաղուող անձերին, երբ զրանք ձեռնարկում են մի որ և է աշխատութիւն զրելու և գրա վերաբերեալ աղբիւրներ չեն կարողանում գանել:

Ահա ինչ ողորմելի զրութեան մէջ է մեր հրատարակական և զրավաճառութեան գործը:

Խ. ԽԱԶԱՏՐԵԱՆ

### Ն Ո Ր Ս Ա Յ Ա Խ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Ի. Պոտապենկօ, Ֆարաջաւոր ուսանողը. թարգմ. Գ. Ազաթանսանց. Թիֆլիս. 1900 թ. գինը 15 կուգ.:
- 2) Հաշիւ Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցվոխ Ս. Յարութիւննացի. Բաթում, 1901 թ.:
- 3) Ահմեդ-բեկъ Агаева, Женщина по исламу и въ исламѣ. Тифлисъ, 1901, цѣна 30 коп.
- 4) Линцбахъ, Универсальная стенографія, усваемая въ 2 дня, Москва, 1901 г. цѣна 50 коп.

## ՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԱՆԳԱՆԷԶԻ ԱՐԴԻՒԽԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

Նաւթից յետոյ մանգանէզը այն հանքն է, որի արդիւնանութիւնը մեր երկրում խոշոր չափերի է հասել: Ինչպէս կովկասի նաւթի, այնպէս և մանգանէզի արդիւնաբերութիւնը իր քանակութեամբ ամբողջ աշխարհում առաջնակարգ տեղ է բռնում: Մանգանէզը ամենամեծ քանակութեամբ արտահանւում է արտասահման, ուր նա զործագրում է բազմաթիւ քիմիկական բաղադրութիւնների, սպիտակ թուջի և պողպատագործութեան մէջ:

Մանգանէզի արդիւնաբերութիւնը մեր երկրում, ինչպէս ցոյց ևն տալիս վերջերում լոյս տեսած աշխատութիւնները \*), հսկայական քայլերով է առաջ գնում: Այսպէս, օրինակ, 1898 թ. արտահանուած է 16,259,204 պ., իսկ 1899 թ. 34,052,432 պ., այսինքն մի տարուայ ընթացքում կրկնապատկուել է արդէն, իսկ 14 տարի առաջ, այն է 1885 թ. արտահանուած է ընդամենը 3,640,000 պ.:

Մանգանէզ արդիւնաբերողների ամենամեծ խումբը (62 ֆիրմա) պատկանում է 100,000—200,000 պուդ մանգանէզ ստացողների թուին և միայն 4 ֆիրմա ստանում է 400,000—500,000 պ., իսկ 10 ֆիրմա—ստանում է 500 հ. մինչև 1 միլ. պ.: Արդիւնագործների մեծ մասը վրացիներ են:

Մանգանէզի հանքերը զգաւորապէս գտնւում են Քութայիսի նահանգի Շորապանեան գաւառում, Կվիրիլի գետի երկու կողմի 11 զիւղերում:

Մեր երկրից այդ հանքը արտահանուած է 1899 թ. Անգլիա 7,781,555 պ., Գերմանիա 888,200 պ., Հոլլանդիա 7,652,338 պ., Բելգիա 489,900 պ., Ամերիկա 4,923,491 պ., Ֆրանսիա 439,312 պ.: Աչքի է ընկնում որ Անգլիայի ամենավտանգաւոր

\*) Труды III-го Съезда марганца.—въ г. Кутаисѣ, 1901.

մրցակիցը, Գերմանիան, Նրանից 8 անգամ պակաս է ներմուծում մանդանէղ. բայց այդ հանգամանքը բացատրւում է նրանով, որ Հոլլանդիայի վերցրած ամբողջ մանգանէղը գնում է Գերմանիա: Ուրիշ երկրներից մանգանէղ ստացւում է նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ամերիկայում: Այդ հինգ երկրների հանքերը միասին 1898 թ. տուել են, 8,058,813 պ., իսկ Կովկասը 16,159,204 պ., այսպիսով ամբողջ աշխարհում գործածուող մանգանէղի կեսից աւելին արտահանւում է Կովկասից:

Արտահանութիւնը մեզ մօս կատարւում է գեռ հին ձեռվ. ոչ մի կատարելագործութիւն չէ մտցրած: Թուենք այստեղ արտահանութեան հետ կապուած մի քանի հարցեր.

Առաջինը. երկաթուղու կայարաններում տախտամածների կամ պլատֆորմների հարցը մեծ դժուարութիւն է պատճառում հանգատէրերին. որպէս զի բոլոր արտահանողներին բաւարարութիւն տրուի, հարկաւոր է 190 սաժ. պլատֆորմ, այն ինչ այժմ կայ 152 սաժ., այնպէս որ արդիւնաբերողների մի մասը մշտական մնաւմ է առանց պլատֆորմի: Յանձնաժողովը քանիցս դիմել է երկաթուղու վարչութեան, բայց անհետեանք է մնացել. վերջառպէս արտահանողները համաձայնել են իրանց հաշուով շինել պլատֆորմներ. դրա փոխարէն երկաթուղու վարչութիւնը մշտկում է մի կամոն, որի հիման վրայ ով 30,100 պուդից պակաս մանգանէղ ունի՝ նա պլատֆորմ ստանալու իրաւոնքից զրկւում է: Բայց այժմ երկաթուղու վարչութիւնը արդէն համաձայնել է շինել պլատֆորմներ, այնպէս որ սրանից յետոյ բոլորն էլ պիտի ունենան տեղ: Անցեալ տարի 340 պլատֆորմ ինդրողներից միայն 41-ը ստացան, իսկ միւսները մերժուեցին:

Երկրորդ, տեղափոխելու պայմանները նահապետական են. մանգանէղը սայլերի վրայ բարձած տանում են Զիտուուրի կայարանը շատ վատ ճանապարհուի: Լեռնային ինժենէր պ. Միխայլովը առաջարկում է հանքը տեղափոխելու համար մտցնել օդային էլեկտրաշարժ վագոններ, (այդ տեսակ վագոններ մտցրած են Եկատերինոսալավի նահանգում և Դօնի աւագանում գտնուած հանքերի մէջ) փոխանակ խնուղու կամ երկաթուղու, որոնցից առաջինը կանում է մեծ ծախս, համեմատած իւր տուած օդատի հետ: Այն ինչ էլեկտրականութեամբ, ինչպէս փորձը ցոյց է տալիս մեզ, ձեռնուու է լինում, մանսուանդ ոյժ առաջացնելու համար էլ վառելիք հարկաւոր չէ, քանի որ կարելի է օգտուել Կվիրիլի գետից: Միենոյն ժամանակ ինժենէր Միխայլօվը առաջարկում է էլեկտրականութեամբ լուսաւորել և հանքերը. այդ բոլորի համար պահանջւում է  $1\frac{1}{2}$  միլ.: Պ. Միխայլօվը

մանրամասն հաշիւներով ապացուցանում է գրա օգուազը երրորդ՝ վաղօնների մեծ պահասութիւնն է զգացւում համբար փը փոխադրելու դէպի Բաթում և Փօթիք Արտահամովների տրամադրութեան տակ ընդամենը կայ 150 վագօն, հաշուելով իւրաքանչիւր վագօն 765 պուդ. հետեւապէս մի անգամից կարելի է տեղափոխել 114,750 պուդից ոչ աւելի, այնպէս որ մանգանէզի ահազին քանակութիւնը մնում է իր տեղում վաղօնների պակասութեան պատճառով:

Չորրորդ. մասնագէտների պակասութիւնը, որի լրացնելու համար 3 ծրագիր կայ. 1) բանալ լեռնային ուսումնարան Քութայիսում, որի համար դիմումն է եղել, ուր հարկն է. բայց որովհետեւ Բագում էլ է դիմել, հաւանական է որ բացուի վերջինում, 2) բանալ գործնական դասընթացներ յանձնաժողովի հսկողութեան տակ շտէյգէրներ պատրաստելու համար և 3) մինչև այդ երկուսի իրագործուելը ունենալ ինստիտուտներում ստիլենդիատներ այն պայմանով, որ աւարտելուց յետոյ ծառայեն մանգանէզի հանքերում:

Այժմ տեսնենք թէ ինչ է արուած հանքային բանուորների համար և ինչ զրութեան մէջ են գտնուում նրանք: Պէտք է յիշել այն պարզ ճշմարտութիւնը, որ դործի աջողութեան համար հարկաւոր է դրական և իմացական աշխատանք, իսկ այդ ձեռք է բերում, երբ աշխատողը ունի մարդավայել կեանք. լաւ մնունդ՝ իր կորցրած ոյժը կազդուրելու, լաւ բնակարան, չափաւոր աշխատանք, տաք հաղուստ, մտաւոր զարգացումն, միջոց բժշկուելու և վարձատրութիւն դժբախտութեան դէպեկուում:

Ներկայումս ծրագրում է բանուորական հիւանդանոցների դրամարկղ կաղմելու. իսկ բնակարանների, ուսումնարանների, ժողովրդական դասախոսութիւնների, դրադարանների մասին ոչ մի ծրագիր և խօսք չը կայ: Այս բոլորի բացակայութիւնը լաւ պատկերացնում է բանուորների դրութիւնը: «Հազիւ թէ չափազանցութիւն լինի, ասում է ալ. Զգանօվիչը, պնդել որ ուսուական արդինագործութեան որ և է ճիւղի մէջ այնքան քիչ ուշադրութիւն դարձրած լինեն բանուորների դրութեան վրայ, ինչպէս մանգանէզայինում»:

Մանգանէզի հանքերում բանուորների միջին թիւը հասնում է 2,000. դրանց ապահովելու համար հարկաւոր է 8-ից մինչև 10 հազար ոռութիւն:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսում լուր տարածուեց, թէ մեծ պասի երկրորդ շաբթին հիւր պէտք է գայ Բաղուցից հայ դերասանական խումբը. բայց, տարաբախտաբար, եկաւ մի մասը, այլապէս, երեխ չէր էլ կարող լինել, քանի որ սա հայկական խումբ էր. իսկ հայը, անթիւ անգամ տառած է՝ միութիւն չէ սիրում...

Կասկած չը կայ, որ Թիֆլիսի հայ հասարակութեան գոնէ այն մասը, որ հետաքրքրուում է հայկական բեմով, ի սրտէ ուրախայաւ այս աւետաբեր լուրին, բայց Բաղուի հայոց դերասանական խումբը կարծես դիմամամբ սառը ջուր ածեց նրանով հետաքրքրուողների վրայ և ուզեց ապացուցել, որ եթէ հասարակութիւնը չէ հետաքրքրուում հայոց թատրոնով—դրա պատճառը դերասաններն են:

Կար ժամանակ, երբ աջ ու ձախ մեր դերասաններից լուսում էին արտունջներ ու բողոք հայ հասարակութեան անտարբերութեան համար դէպի մայրենի բեմը և մայրենի գեղարուեստը... Վերջապէս այդ լաց ու կոծին արձագանք տուաւ Բաղուի հայ հասարակութիւնը, որ ապահովեց մեր դերասաններին. սակայն գնահատեց արդեօք այդ բանը հայ դերասանը. աշխատեց նա զարգանալ և առաջ գնալ... Մեր Բաղուի հիւրերին տեսնելով, մենք կարող ենք պատասխանել—նչ:

Շրջել թէ մեծ և թէ նոյն իսկ յետ ընկած գաւառական քաղաքները՝ ներկայացումների միջոցով ժողովուրդը զարգացնելու. նրան մայրենի բեմի գրուածների և տաղանդների հետծանօթացնելու նպատակով—զա գովելի, բայց միևնույն ժամանակ գժուար գործ է: Ժողովուրդը կրթելու համար նախ կը թողը ինքը պէտք է կրթուած և նախապատրաստուած լինի, որ ծաղր ու ծանձրոյթ չը յարուցանէ կրթուողների մէջ, պէտք է կարողանայ ըմբռնել ժողովրդի պահանջները. իսկ մեր դերասանները ցոյց տուին, որ չը գիտեն ի՞նչպէս հետաքրքրել հասա-

քակութիւնը, մինչեռ թատրոնական գործի աջողութիւնը անպայման կապուած է այդ հետաքրքրութեան չափից:

Կար ժամանակ, երբ թատրոնական գործը մեզանում յենուում էր մէկ կամ երկու անհատների վրայ. ժողովուրդը միշտ լցնում էր թատրոնը, որովհետև խաղալու էր մի Ադամեան կամ մի Հրաշեայ: Բացի այդ, կլասիկ պիէսների մէջ լինում էին մէկ կամ երկու կենտրոնական դերեր: Ժամանակը փոխուեց, այժմ մի կողմից աշքի ընկնող մեծ տաղանդներ չունենք, իսկ միւս կողմից էլ ընթացիկ դրամատիկական դրականութեան մէջ տիրում է մի նոր հոսանք. տարէց տարի պակասում են այնպիսի պիէսների թիւը, որոնց մէջ կայ մէկ կամ երկու կենտրոնական դեր՝ և հետաքրքրողը պիէսի ամբողջութիւնն է ու նրա մէջ արծարծուող ու լուծուող հասարակական խնդիրներն են դրաւում հասարակութեան ուշագրութիւնը: Ժողովուրդը նախ և առաջ ուզում է տեսնել պիէսը և ոչ այս կամ այն դերասանի խաղը. իսկ այդպիսի պայմանների մէջ ակամայ առաջ է գալիս ընթիւորի անհրաժեշտութիւնը, որ մեծ խնամքով պէտք է վերաբերուի դէսի ամբողջութիւնը, այսինքն տայ «անսամբլ», այլապէս ներկայ թատրոնական գործը միշտ կարող է կաղար:

Այդ ամբողջութեան, ի հարկէ, պիէտի նպաստեն նախ դերասանները իրանց մտածած խաղով, իսկ միւս կողմից՝ խմբի բեմիսօրը պէտք է լինի անաղայման բեմական գեղարուեսու իմացող և զարգացած մի անձնաւորութիւն. սակայն, տարաբախտաբար, ներկայ հայ խմբի մէջ յիշած պայմանները բացակայում են: Դերասանների մեծ մասը չունի մաքի և ճաշակի բաւականաչափ զարգացում, որ անդեկավար առաջ տանի գործը և լաւ բեմիսօրը կ'ազատէր շատ սիսակներից մեր դերասաններին: Զարգացած բեմիսօրը երբէք չէր ընտրի մի քանի ներկայացումների համար այնպիսի բեմպերատուար, որ ճանճրաւի է, անհետաքրքրական և անբեմական:

Թիֆլիսում խաղացած պիէսները հետևեալներն են՝ «Մեդէա», «Սաֆօ», «Վերսկնիչչ», «Իդէիլ», «Դօն-Բիշօտ», «Կեանքի արժէք» և «Մագամ-Սան-Ժէն»: Վերոյիշեալ եօթը պիէսից ոչ մէկը, բացի «Կեանքի արժէք»-ից, մեր կեանքի հետ կապ չունեն: Դրանցից մէկը հոռմէտական կեանքից է, միւսը՝ յունական, երրորդը՝ Բուդդայի, չորրորդը՝ Փրանսիական. մի խօսքով այնպիսի պիէսներ էին ընտրուած, որոնց մէջ մէկ կամ երկու նշանաւոր դեր կայ, իսկ բովանդակութեան կողմից (բացի երկուսից), եթէ կամնուում էք, բոլորուին անհետաքրքրական և անմարսելի հայ ժողովրդի համար: Այդ պիէսները, իբր «կլասսիկ», ի հարկէ, լիբն են ճռճռան ֆրազներով, որ արտայայտելու հա-

մար այնքան հարկաւոր է հին շկօլայի դեկլամացիան, բայց այդ բովոր Փրազներից խեղճ հանդիսականի գլուխը ոչինչ չէ մըտնում և սիրութ ոչինչ չէ զգում:

Մեզ թւում է որ այժմեան հայ թատրոնը պէտք է կրէ ժողովրդական բնաւորութիւն և խումբը պէտք է աշխատէ ամին կերպ մօտեցնել բեմական գործը ժողովրդին. բեպերտուարը պիտի կազմուած լինի ընտրութեամբ և միշտ մօտ իրական կեանքին:

Բայց գուցէ խումբը պիէսների պակասութիւնը լրացնում էր իր խաղով:

Տարաբախտաբար անսամբլի խաղն էլ շատ թոյլ էր, որովհետեւ գերասաններից ամեն մէկը չէր ստանձնում իրան յարմար գեր, այլ աշխատում էին զործը մի կերպ «Կօլատանել», իսկ ոյժերի պակասը լրացնում էին պատահական անձնաւորութիւնները: Այդ բաւական չէ, գերասաններից շատերը չէին կարողանում կամ չէին աշխատում զոնէ ըստ կարելոյն մօտենալ հեղինակի նկարագրած անձնաւորութեանը, մարմնացնել նրան:

Համարձակ կարելի է ասել, որ վերոյիշեալ եօթը պիէսից Բագուի խումբը վեցը տապալեց: Միայն «Կեանքի արժէլն» էր, որ թէ ժողովուրդը հասկացաւ և թէ իրանք գերասանները ըմբռնեցին իրանց խաղաւածը և բաւականութիւն պատճառեցին հասարակութեանը: Եւ դա շատ բնական է. պիէսը կմնական էր և մեզ բոլորիս ծանօթ կեանքից վերցրած:

Տիկին Սիրանոյշը անպայման տաղանդաւոր գերասանների է և, ըստ երեսոյթին, բեպերտուարը կազմուած էր տիկին Սիրանոյշի համար, այսինքն զրուած էին մի շարք այնպիսի պիէսներ, որտեղ մի ուժեղ կանացի գեր կայ, իսկ մնացած խումբը միայն իր խաղով պէտք է լրացնէր, մի տեսակ պարագաների գեր կատարէր: Հետաքրքրութիւնը կենտրոնանում էր տիկին Սիրանոյշի խաղի վրայ:

Կրկնում ենք, մեր գերասանների նիւթականը բաւականաշափ ապահովուած է. մնում է որ նրանք ինքնազարդացմանը կրթեն իրանց միագը և ճաշակը, կատարելագործեն իրանց ընդունակութիւնները, հասարակութեան համար հետաքրքրական պիէսներ ներկայացնեն և ունենան մի ընդունակ և լայն զարգացման տէր բնմիսօր, որ միացնէր և ուղղութիւն տար մեր գերասանական խմբին: Թէ ինչ ահազին նշանակութիւն ունի տաղանդաւոր բեժիսօրը, դրան փառաւոր ապացոյցը մենք տեսնում ենք Մոսկուայի Գեղարուեստական-Հասարակական թատրոնում, որ չնորհիւ պ. Ստանիսլավսկու բեժիսօ-

րութեան դարձաւ ամբողջ Ծուսաստանի ամենասիրուած բեմը։ Իսկ որ Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ մարած չէ հետաքրքրութիւնը գէպի մայրենի բեմը—զրան ապացոյց երիտասարդ Կ. Գալֆայեանի տուած ներկայացումը։ Ճիշտէ, որ պ. Գալֆայեանի բնմ գուրս գալը մի քիչ անսովոր առաջարան ունէր։ այդ գետ սկսնակ արտիստ-տրագիկի մասին շատ հակասական լուրեր և կարծիքներ էին տարածուել. պ. Գալֆայեանը նոյն իսկ լրագրական բանակոուի առարկայ էր դարձել... Այդպիսով գետ բեմ չը գուրս եկած, նա յայտնի էր արդէն։ Հասկանալի է, որ այդ հանգամանքներում ինչ անսովոր հետաքրքրութեամբ էր ապասում ապրիլի 6-ին, Թիֆլ. Արտիստ, Բնկ. թատրոնը լքցած հասարակութիւնը՝ վարագոյրի բացման։ Նրանք, որոնք տեսել էին «Համլէտ»-Ազամեանին, գուշակում էին Գալֆայեանի խայտառակուելը, կային և այնպիսիները, որոնք, ամէկօսէներից ազդուած, թշնամական դիրք էին բռնել և սրամաց ցանկանում էին, որ տապալուի «ցանդուգն» սկսնակը։ Գալֆայեանը մինչև այդ օրը բեմ էր գուրս եկել Պարիզ և Բադու «Համլէտի» և «Օթելօֆ» միայն մի քանի տեսարաններում. առաջին անգամն էր նա խազում մի ամբողջ գեր։ Անկասկած հեշտ բան չէր այդ պայմաններում աջող կատարել մի այնպիսի բարդ և նուրբ հոգեկան դիմագիծ, ինչպիսին է Շեքսպիրի «Համլէտը», սակայն պ. Գալֆայեանը իր մի քիչ ինքնուրոյն խաղով կարողացաւ գրաւել հասարակութեան ուշադրութիւնը և ցաց տալ, որ գուրկ չէ տաղմանգից։ Երիտասարդ գերասանին, բնականաբար ողակասում է փորձառութիւն. բայց նա իր առաջ ունի շատ ժամանակ՝ անխուսափելի թերութիւները լրացնելու և իր չնորհքը կատարելագործելու համար։ Մի բան, որի վրայ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել՝ դա գերասանի Փիլիկական թուլութիւնն է, որ կարող է լուրջ խոչընդուռ գառնալ բնմին ծառայելու համար։ Յամենայն դէպս հայոց գերասանական խումբը պէտք է զրկարաց իր մէջ ընդունի այդ նոր ոյժը։

Առհասարակ մի ընդունակ բեմիսօր կարող կը լինէր մեր ցիր ու ցան և անդեկավար բռնական ուժերից կալմակերպել բաղմակողմանի ուժերու օժտուած գերասանական մի խումբ, որ փոփոխակի խաղալով Բագուի և Թիֆլիսի բեմի վրայ, կարող կը լինէր հաստատ ոտի վրայ դնել հայոց թատրոնական գործը մեզանում։ Գլխաւոր խնդիրը հմուտ, զարգացած և գործին նուիրուած բեմիսօր գտնելն է։

Vox.

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹՅԻՒՆ

նվ. նվ. Սվեդէնցով. —Կօմպլոմիսներ չը ճանաչող հասարակական գործիչ. —Խվանօվիչի կարծիքը ասկետական օգտիւ մասին. —Նրա հակապատերը Կովկասում. —Անհեռառուս աղդայնական պայքար. —Քաղաքային ինքնավարութիւնների կազմը. —Եղբային և աղջականական ձգուում. —Եղբային տենդէնցիան քալուքային դործերում անհեթեթութիւն է. —Խսկական և շինծու կուսակցութիւններ. —Քաղաքային ինքնավարութեան գործունէութեան շրջանակը. —Մեր բոլոր քաղ. ինքնալի ընդհանուր ունչը. —Քուրժուայի ընդհանուր բնաւորութիւնը. —Ռւնեսոր և չքաւոր դասակարգերի շահերը. —Զանատութիւն՝ մի թէ՛ երկք ժողովներում. —Գործունէութեան որոշ ծրագիրներ և խսկական կուսակցութիւններ. —Զքաւոր դասակարգերին և կուտուրական բարիքներ են հարկաւոր. —Զուրացովի ժառանգների նկուերը ծողովրդական Տան համար. —Միիիօնների նպատակայարմար գործածութիւն. —Խարձրագոյն Հրովարտակ. —Փող. լուսաւորութեան նոր մինիստրի հրամանը. —Կառավարչական հաղորդագրութիւն բարձրագոյն գպացների մասին:

Թիվլիխում մարտի 14-ին վախճանուած ոռւս հրասլարակախոս-բելլետրիստ Խվան Խվանօվիչ Սվեդէնցովը իր ուղղամք-տութեամբ և հասարակական վեհ իդէաներով մի հաղուագիւտ անձնաւորութիւն էր մեր նիւթապաշտ դարում Խվանօվիչը (այդ անունով էր նա աւելի յայտնի) ընդունակ չէր իր խղճի հետ որ և է կօմպլոմիսի մէջ մանելու. փարիսեցութիւնը, սուտք, անարդարութիւնը և բռնութիւնը նրա անձնաւորութնան մէջ գտել էին մի անվեհեր և անհաշտ թշնամի, որ բորբոքւում էր և իր սրտի բոլոր կարողաւթեամբ զինուում հասարակական բարօրութիւնը վատանգող ամեն մի գործունէութեան դէմ. Նա «Խոհեմութիւն» չունէր ժամանակին լուել, իշխանաւորներին խնայել, եօլաւանել ու համակերպուել, ինչպէս անում են նըրանք, որոնք ուզում են համ կօմֆօրտ վայելել, համ էլ «հասարակական գործիչ» կոչուել: Եւ շրջապատող խաւորի ու եսաւսիրութեան մէջ նա նմանում էր մի վաս ճրագի, որ պլազում է աստանգական իր կեանքի ամբողջ ընթացքում, երբէք չուզենալով հաշտուել չարիքի հետ, մինչև որ մարում է, թողնելով

իր յետելց բարի յիշատակ: Նա գիտէր, որ կեանքի վայելքների և փարթամութեան հետ մեր պայմաններում կապուած են չատ կամ քիչ կօմպօմիսներ իշխող անարդարութեան հետ, ուստի գերադասեց զրկանքներով լի կեանք կրել և պահպանել անբիծ մի խիզճ:

Մեր նպատակից դուրս է այսուեղ բնորոշել այդ բիւրեղի նման մազուր հոգու գրական գործունէութիւնը. մնաք ուզում ենք միայն մատնանիշ անել նրա վրայ, իրոք մեր ժամանակներում հազուազիւտ դառած հասարակական մի տիպի և աւելցնել, որ թշուառ է այն ազգը, որի մէջ Դիօդինէսի լապտերով պէտք է փնտրել Խվանօվիչի հասարակական բնազդներով օժտուած անհատներ: Սակայն ի պատիւ ոռու ազգի պէտք է ասել, որ նա ամեն մի Վելիչկոյի դէմ կարող է և մի Խվանօվիչ դուրս բերել, ահա ոսի ներքին ոյժի գրաւականներից մէկը...

«Պետական օգուտը պետութեան մէջ ասլրող ազգալնաւկութեան օգուտն է—առանց ազգութեան և կրօնի խարութեան. պետութիւնը չը պէտք է աղդարնակութեան մի մասի բարօրութիւնը հաստատէ ի հաշիւ միւսի»<sup>\*)</sup>, —ասում էր Խվանօվիչը, ապրելով մեր երկրում, ուր բոլորովին այլ տեսակէտներ էր պաշտպանում մի Վելիչկոյ: Անշուշտ պետութեան բարօրութիւնը լայն հասկացող ամեն մի հպատակ, առանց կրօնի և ազգի խարութեան, կը համաձայնի, որ Խվանօվիչներն են այն տարրերը, որոնք համբաւածի և խաղաղ կուլտուրական կեանքի հիմքերն ամրացնելով նպաստում են երկրի ընդհանուր առաջադիմութեան և ոչ Վելիչկօները, որոնք սերմանում են ատելութիւն, կուդ ու կախ հարեան ազգութիւնների մէջ:

Դժբախտաբար հեռատեսութիւնը չատ քիչ մարդկանց է յատուկ և մեծամասնութիւնը մի քանի անգամ յիշարութիւն է անում, սայթաքում է, մինչև որ վերջապէս, դառն փորձերից սթափուած, տեսնում է ծշմարտութիւնը, հասկանում է իր օգուտը: Մի այդպիսի տիսմար անհեռատեսութիւն էր և վրացիների ու հայերի կոիւները Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների առիթով:

Աշխատենք պարզել մեր ասածը:

Պետական բարձր իշխանութիւնը քաղաքային ինքնավարութիւններին որոշ օրէնքով լատկացրել է դործունէութեան յայտնի շրջանակի: Այդ ինքնավարական մարմինը, համաձայն

<sup>\*)</sup> Տե՛ս. „Եվստ. Եվրոպ.“ 1900, № 1-ի մէջ Խվանօվիչի „Կոլոնիացիա Կավказա“ լոգուածը, որի մասին համառոտ տեղեկութիւն կարելի է գտնել և „Մշակի“ № 76-ում:

1892 թուի կանոնադրութեան, ընտրում են միայն նիւթական որոշ ցէնզ ունեցող քաղաքացիները, այսինքն նրանք, որոնք քաղաքում ունեն անշարժ կայք կամ առաջին և երկրորդ կարգի առետրա-արդիւնազործական ձեռնարկութիւն։ Այդ պահանջների չնորհիւ ընտրողներն ու ձայնաւորները լինում են միմիայն քաղաքի ունեոր դասակարգից։ Բնականաբար, օրինակ, Մոսկուայում քաղաքացին խորհրդարանի ահազին մեծամասնութիւնը պիտի բաղկացած լինի ուսւա ձայնաւորներից, Քութայիսում՝ վրացիներից, իսկ Թիֆլիսում էլ, ուր տնատէրերը և առետրա-արդիւնազործական ձեռնարկութիւնների վարիչները հայեր են, զարմանալի չէ, եթէ քաղաքացին ձայնաւորների մեծամասնութիւնը այդ ազգութեան է պատկանում։ Սակայն հետաքրքրական է իմանալ, թէ քաղաքացին գործերում ինչով է արտայայտուել այդ հայ ձայնաւորների ազգային տենգեղիան, ցանկալի էր լսել թէ ինչ մի առանձին զուտ հայկական գիծ է ցոյց տաւել Թիֆլիսի խորհրդարանը, ինչ մի առանձնայատկութիւն է ունեցել Թիֆլիսի բուրժուական խորհրդարանը, որով նա տարեկուել է Քութայիսի, Մոսկուայի կամ մի այլ քաղաքի «գումայից»։

Մեր բոլոր քաղաքների խորհրդարանների կազմը բուրժուայիական է, լինի դա Քութայիսում, Մոսկուայում թէ Թիֆլիսում։ Զեմ կարծում, որ մի շխտակ վրացի կամ ուսւա համոզուած լինի, որ վրացի բուրժուան տենի ալտրուիստ է, քան հայ կամ ուսւա բուրժուան։ Այդ դասակարգը ունի ամենուրեք ընդհանուր տնտեսական շահեր, բարեկեցութեան ընդհանուր մի տեսչ, իսկ ազգային տենգեղիա, եթէ ցանկայ անզամ, չէ կարող արտայայտել մեր քաղաքացին գործերում։ Ազգականական—բարեկամական կապերը գետ ևս կարող են որոշ գեր խաղալ այս կամ այն գրաւիչ պաշտօնը սրան կամ նրան ապաւուակում, բայց ինչ կապ ունի դա ազգային գաղափարի հետ ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ ազգային տեսակէտից, օրինակ, թէ Ռւսլանացի այս կամ այն անդամը եանց է, թէ ձե կամ օվ։ Պաշտօնների համար կարող են նոյն իսկ ամենակատաղի որցութիւններ լինել, ինչպէս, օրինակ, լինում են վըրաց ազնուականների բանկային ընտրութիւնների ժամանակ։ բայց միթէ այդ եսական ձգտումներին կամ աղղականականաբարեկամական համակրութեան ու հակակրութեան հետ կարելի է խառնել ազգայնութեան գաղափարը։ Պէտք է միամիտ լինել մի այդպիսի շինծու պատրուակին հուստ ընծայելու համար։ Դա մի խաղ է, որ հնարել են Թիֆլիսի ինտելիգենտ-բուրժուանները։ Ինչումն է կայանում քաղաքացին ինքնավարութեան գոր-

ծունէութիւնը. — Խորհրդարանը կառավարում է քաղաքի կայքերը և դրամագլուխները, հոգ է տանում քաղաքի արտաքին բարեկարգութեան, առողջապահական գրութեան մասին, խնամում է աղքատներին, նախազգուշական միջոցներ է առնում կրակի և ղանազան պատուհամների գէպքերում, ընդարձակում է ժաղավրդի կրթական միջոցները, միջնորդում է բարձրագոյն իշխանութեան առաջ տեղային պէտքերի մասին և այլն: Արդ, գործունէութեան այդ բոլոր ծիւղերում չէ կարելի ցոյց տալ մի բան, որի մէջ հայկական կամ վրացական տենգենցիա արտայալուէր: Մեր առաջ դրուած ևն միմիայն ընդհանուր քաղաքային գործեր և առողջ խելքը պէտք է թելագրէր ընտրել քաղաքային գործերի համար այնպիսի ղեկավարներ, որոնք եռանդուան, շիտակ և ընդունակ, բնաւ ուշք չը դարձնելով, թէ ընարուազը թաթախիսան երեկոները հայոց եկեղեցին է յաճախում (չէ որ հայ բուրժուա-ինտելիգենտների մեծամասնութեան «աղղային յատկանիշը միայն դրա մէջ է արտայալուաւմ...):

Միայն ամսաշառութեան պարագ կատարած կը լինենք յայտնելով, որ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը նչ միայն զուտ հայկական որ և է տենգենցիա չէ ցոյց տուել, այլ և գործել է հէսց այն ուղղութեամբ, որ բնորոշ է Ռուսաստանի բոլոր քաղաքային ինքնավարութիւններին: Անշուշտ, նախ և առաջ իշխող դասակարգը իր բեռը թեթեացնելու, իր յարմարութիւնները քաղմացնելու մասին է մուածում և ասկա նաև չքաւոր դասակարգի պահանջներն է ի նկատի առնում: Այդ բանում զուտ հայկական զիծ չը կայ. Քութայիսում նոյնն է, ինչ որ մի Օրեօլում, Թիֆլիսում նոյնն է, ինչ Պատերբուրգում: Համամարդկային զիծ է, որ կուշար քաղցածին դժուար է հասկանում, և այդ երեսյթի մէջ ինչոր ազգային դաւելի որոնել նշանակում է Դօմ-Քիշօափ նման հողմաղացների գէմ կատելի եթէ, օրինակ, վրացին, որի ձեռքումն է մեր երկրի մանգանէզի արդիւնաբերութիւնը, իր բանուարների համար առելի իդէալական կարգեր ստեղծած լինէր, քան հայ նաև թաղործը—մենք, զուցէ, համոզուէնք, որ վրացի բուրժուայի մէջ աւելի է զարգացած ալտրուիստական զիծը, քան նրա հայ եղբայրակցի. բայց չէ որ իրականութիւնը մեզ իրաւունք չէ տալիս մի այդպիսի եղբայրացութիւն անելու: Ուստի ժամանակ է արիսի. յանձնել ազգային անհամբերութեամբ արտատառուած հին գրօշակները և պարզել մի նոր զրօշակ, որի վրայ բացայայտ գրուած լինեն քաղաքային գործերը և անտեսութիւնը վարելու ծրագիրներ: Այն ժամանակ այդ ծրագիրների շուրջը կը խմբուեն մարդիկ, համաձայն իրանց ձգտումներին և աշխարհայեցողութիւններին

ևոչ ազգականական-բարեկամական կապերին... Խոկապէս մենք մինչև այժմ «հայկական» կամ «վրացական» ծրագիրներ էլ չենք տեսել, որովհետեւ չեն էլ կարող լինել այդպիսի ծրագիրներ քաղաքային դորձերում, բայց մենք մի և նոյն ժամանակ չենք էլ տեսել իսկական կուսակցութիւններով, տարբեր ծրագիրներով ու աշխարհայնողութիւններով, այլ աւելի շուտ եղել են լոկ ազգայնական դիմակով ծածկուած բուրժուական ախորժակներ, սառոր սնափառութիւն, խմբակային համակրութիւններ ու հակակրութիւններ:

Ո՞րն է, ասացէք, այն լայն գեմօկրատիկական ծրագիրը, որից հրաժարուէին լաւագոյն մարդիկ, լինեն դրանք ծագումով ուսու, հայ թէ վրացի: Այսպիսի ծրագիրներով կուսակցութիւններ չը կան մեր քաղաքային դորձերով հետաքրքրուողների մէջ. այդպիսի ծրագիրներ չեն արծարծւում և մամուլի մէջ, ուստի քաղաքի բնակիչների մեծամասնութեան շահերը շատ քիչ են ի նկատի առնելում:

160 Հազարից աւելի բնակիչ ունեցող թիֆլիսը մինչեւ այժմ պահպանում է միայն 17 սկզբնական դպրոց, մի արհեստաւորաց ուսումնարան, մի քաղաքային հիւանդանոց, մի հոգեկան հիւանդների ապաստարան, մի կանանց հիւանդանոց և անտուն-անտէր թշուառների համար գիշեր անցկացնելու 2 տուն... Սհաման ամենը, ինչ որ արուած է չքաւոր քաղաքացիների համար: Այդ եղած հիմնարկութիւնների մէջ անշուշտ ոչ մի խորութիւն չէ անւում հայի, վրացու կամ ոռուսի մէջ, և եթէ ընդհանրութեան մատչելի այդ հիմնարկութիւնների թիւը աւելացնուի, ոչ մի ազգութիւն չի արտնջալ:

Այն էլ չը մոռանանք աւելացնել, որ եթէ Սօլօլակի ներկայացուցիչները մի առանձին քնքշութիւն ցոյց տուած լինէին դէպի Հաւլարարը և մոռացուած Վերան կամ Խ-րդ քաղաքամասը, զուցէ այն ժամանակ զօհները իրաւունք ունենային ներկայ դումայի ձայնաւորներին մնողազրել ազգային տենդենցիա ունենալու մէջ: Բայց չէ որ մի այդպիսի բան ոչ ոք չի տեսել. ուրեմն ինչ միաք ունի դարձեալ ազգայնական հարց բարձրացնել, ինչպէս այդ արին վերջերումն, երբ պէտք է քննուեր՝ մի թէ երեք ժողովներում կատարել նոր ընտրութիւնները: Սկսեցին թուել, թէ որ քաղաքամասում որքան հայ տնատէր կայ, որքան վրացի կամ ոռու: Դրանով կարծես սրբագործում լինէին մի նախապաշտամունք, որ, ընդհակառակը, պիտի հիմնովին սչնչացնէին: Դժուար է հատկանալ, թէ ինչ կապ ունի տնատէրի ծագումը քաղաքային բարեկարգութեան հետ: Դա անմիտ և վնասակար մի սովորութիւն է դարձել և պէտք է բնաւ չը

գործադրել քաղաքային ինքնավարութեան մէջ։ Դա հին զաւերի խայտառակ մնացորդ է, որ գործիք է ճարապիկ ինտրիգան-ների ձեռքում։

Քաղաքացիներ, մի կողմ նետէք՝ ձեր առողջ խելքը մինացնող այդ թունաւոր ըմպելիքը, որ մատուցանում են ձեզ որոշ տիպի բուրժուացիներին և խնդրին նայեցէք քաղաքի ազգա-բնակութեան մեծամասնութեան շահերի տեսակէսից։ Ոչ մի օրէնք չէ խանգարում զեկավարուել հէնց այդ ուղղութեամբ, ուրեմն պէտք է աշխատել և ընտրութիւնների ժամանակ աջո-ղացնել յիշած նախապաշտունքներից աղաս և ժողովրդի շա-հերին նուիրուած ճախաւորներ ընտրել։

Այդ տեսակէտից եթէ նայելու լինենք հարցին, մեզ թւում է որ աւելի լաւ է ընտրութիւնները կատարել Յ ժողովներոմ, բայց քաղաքամասները բաժանելիս բնաւ չը պէտք է զեկավարուել տնատէրերի ազգութեան հարցով, այլ միայն տեղական պայ-մանների ընդհանուր յարմարութիւններով։ Քաղաքի ծայրերում խառն ապրում են տմեն ազգութիւնից ընակիչներ և չէ կա-րելի մտածել մի բարեկարգութիւն, որից օգտուէր հայը և զրկուէր վրացին։ Ուրեմն ինչ միավունի միամիտ մասսայի մէջ մոցնել այն շինծու խարութիւնները, որ հնարել են զանազան ինտրիգաններ և գրչակներ։

Դժուար է համոզուել, որ աւելի նպատակայարմար է մի ժողովում կատարել ընտրութիւնները, մինչեւ պարզ է, որ Եթէ Յ քաղաքամասներում կատարուի ընտրութիւնը, այն ժամանակ քաղաքի խորհրդարանի մէջ համեմատաբար աւելի լիակատար կերպով կ'արտայայտուի ամբողջ քաղաքի ներկայացուցչութեան գաղափարը։

Եթէ բնակարանատէրերին ես տրուէր ընտրութեան մաս-նակցելու իրաւունք \*), այդ ներկայացուցչութիւնը անկասկած աւելի կատարեալ կը լինէր, սակայն ներկայ կանոններով ան-գամ արդարութեան պահանջին աւելի համապատասխան պէտք է համարել այն միջոցը, որով զանազան քաղաքամասները (և ոչ ազգութիւնները) հնարաւորութիւն են ստամում ունենալ իրանց ներկայացուցչները գումայում։

Ցաւալին այն է, որ փոխանակ մոռացնել տալու և ջրելու ազգային նախապաշտունքը, տեղական մամուլը գեռ շարունա-կում է քրքրել ու հաշիւներ անել, թէ այս կամ այն քաղաքա-մասում որ ազգութիւնից քանի տնատէր կայ։ Այդ մի հրէշա-ւոր և լւասակար հայեացք է։ Եթէ, դիցուք, Խ-րդ քաղաքամա-

\* Համեմատիլ № 1 ներքին Տեսութիւնը

սում 1056 տնատէրերից 400 ոռու է, իսկ 281 հայ, 264 վրացի և 94-ը գերմանացի, միթէ դրանից պէտք է հետեցնել, որ անպատճառ պիտի ընտրել ոռու ձայնաւոր և ոչ գերմանացի, եթէ այդ վերջինը աւելի շիտակ, աւելի եռանդուս և ընդունակ անձ է և աւելի յարմար է ձայնաւորի պարտականութիւնների համար: Կամ եթէ Սօլոլակում 407 տնատէրերի մէջ 45 վրացի է, 33 ոռու, իսկ 328 հայ—միթէ դրանից հետեւում է, որ ընտրութիւնների ժամանակ անպատճառ պիտի մետրիկականի հարց առաջ գայ... Ախր, վերջապէս, ինչ օգուտ «հայութեան» համար, եթէ նոյն իսկ Հայաստանեաց եկեղեցու հաւատարիմ մի զաւակ ընտրուի Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր և ոչ մի շիտակ ոռու կամ վրացի:

Մի տարօրինակ մոլորութիւն է հէնց անպատճառ ծագման հարց յարուցանել նոյն իսկ այստեղ, ուր բնաւ նա տեղի չը պիտի ունենայ: Դրէք համոզմունքների, աշխարհայեցողութեան, տնտեսական ծրագրների հարց—այդ մենք հասկանում ենք, իսկ ազգայնական ոչ մի շահի հետ կապուած չէ քաղաքի ընդհանուր բարեկարգութեան հարցը: Դասակարգերի հարց քաղաքում մենք ընդունում ենք, իսկ ազգայնական—ոչ:

Եթէ մէկը պաշտպանի այն միտքը, որ ձիաքարշը, լուսաւորութիւնը, հեռախոսը, և այն, մասնաւոր կապիտալիսաների ձեռքից պէտք է խլել և կենտրոնացնել քաղաքի ձեռքում, եթէ մէկը առաջարկի, որ քաղաքը շինի արժան բնակարաններ չը քաւոր ընտանիքների համար, եթէ մէկը ցանկանայ, որ աւելի մեծ ուշք դարձնուի չքաւոր դասակարգերի յարմարութիւնների մասին և այն և այն, իսկ միւսը բոլորովին հակառակ հայեացքներ պաշտպանի—այդ դէպքում մենք հասկանում ենք կուսակցութիւն խօսքը, որպիսեաւ այդուղի ծրագրի, աշխարհայեցողութեան հարց կայ. իսկ թէ ոչ, ինչ, բայց ափսմուր մնափառութիւն կամ զրգուած ախորժակ կարելի է գտնել այն բոլոր վայնասունների մէջ, որ բարձրացնում են յանուն «ազգայնութեան»:

Անշուշտ քաղաքային ինքնավարութիւնների բիւգժէտի վրայ այնքան ծանրացած են զանազան պարտադիր ծախքեր, որ միջոցների սղութիւնը արգելք է զնում ընդարձակ ծրագիրների իրագործման, բայց, այնու ամենայնիւ, եթէ սրտադին և գիտակցական վերաբերմունք լինի դէպի գեմօկրատիկական բարենորոգումները՝ շատ աւելի բան կարելի էր անել, քան անւում է: Այդ գիտակցական հոսանքը անհետեանք չէր մնալ և հասարակութեան համար, որի մէջ կը գտնուէին հանգուցեալ Զուբալօվի ժառանգների պէս միլիօնատէրեր: Միթէ պատահա-

կան բան է, որ դրանք հէնց ժողովրդական տան համար նուիրել են 100 հազար և ոչ թէ մի եկեղեցու շնութեան կամ այլ նպատակի համար եթէ ժողովրդական տան մասին վերջին տարին ընթացքում այնքան չը խօսուէր, չը գրուէր, անկասկած չէր ել լինիլ հասարակութեան մէջ դրանց անհրաժեշտութեան մասին որ և է հասկացողութիւն:

Թնդ թէ մամուլը և թէ քաղաքային ինքնավարութիւնը միշտ չեշտին այդ ընդհանուր կարիքների մասին, արծարծեն, քննեն մասսայի բարօրութեան վերաբերեալ հարցեր և մի կողմ թողնեն ազգայնական հարցը և հաւանական է որ մեր մէջ ևս առաջ կը զան ժամանակով այնպիսի միլիօնատէրեր, որոնք ամերիկացի միլիօնատէր Անդրիւ Կարնիգի նման բացականչեն. «Մեռնել հարուստ—նշանակում է մեռնել անսպատուած»:

Եթէ Կարնիգին 30 միլիօն գոլլար է նուիրում գրադարաններ բանալու համար և 22 միլիօն մի պոլիտեխնիկումի վրայ, մեր միլիօնատէրերն էլ կը սովորեն գէթ տասնեակ հազարներ նուիրել, եթէ ըմբռնեն, թէ որքան այդ աւելի նորատակացարմար է, քան փուչ որդեկրանց զեղխութեան համար թողնել իրանց անբաւ հարստութիւնները...

### ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Լուսաւորութեան մինիստր Ն. Բօգոէպօվի մահից յետոյ Բարձրագոյն հրովարտակով լուսաւորութեան մինիստր է նշանակուած գեներալ-ադմիրալ Վահովսկին, որ ծնուել է 1822 թուին և 1881—1898 թիւը վարել է զեղխուրական մինիստրի պաշտօն, իսկ 1899 թուին նրան Բարձրագոյն հրամայուած էր բազմակողմանի քննութեան ենթարկել ուսանողական խառնակութիւնների սպառառներն ու հանգամանքները: Առաջ ենք բերում թէ Բարձրագոյն հրովարտակը, թէ նոր մինիստրի հրամանը և թէ վերջին կառավարչական հաղորդադրութիւնը՝ բարձրագոյն դպրոցներում ուսումնական կեանքի կանոնաւոր ընթացքը վերականգնելու մասին:

Բարձրագոյն հրովարտակ գեներալ-ադմիրանտ Վահովսկուն.

«Պետք Սեմեօնօվիչ: Ժողովրդական լուսաւորութեան կանոնաւոր կազմակերպութիւնը միշտ եղել է Ռուսաց Թագաւորների գլխաւոր հոգսերից մէկը, որոնք հաստատուն կերպով, բայց աստիճանաբար ձգտել են կառարելագործել այդ կազմակերպութիւնը ուսուաց կեանքի հիմնական սկզբունքների և ժա-

մանակի պահանջների համաձայն վերջին տարիների փորձը ցոյց տուեց, սակայն, մեր ուսումնարանական կազմակերպութեան մէջ այն աստիճան էական թերութիւններ, որ Ես բարեպատեհ համարեցի ձեռնամուխ լինել արմատապէս քննելու և բարւոքելու այդ կազմակերպութիւնը Բարձր դնահատելով ձեր պետական փորձառութիւնը և լուսաւոր միավը, Ես ձեղ Ինձ աշխատակից ընտրեցի ոռուաց դալրոցի վերանորոգման և վերակազմութեան գործի համար, և կոչում եմ ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի՝ այժմ առանձնապէս կարեոր պաշտօնին, հաստատ հաւատացած լինելով, որ դուք խստիւ և անշեղ կերպով կը դիմէք իմ որոշած նպատակին և ոռու պատահների կրթութեան գործի մէջ կը մտցնէք ձեր փորձառութեամբ իմաստնացած խնդըք և սրտապին հոգատարութիւն ոռու պատահների մասին։ Թողոք օրէնէ Աստուած Մեր աշխատանքները, թող օգնեն Մեղ այդ աշխատանքների մէջ ծնողները և ընտանիքները, որոնք աւելի մօտից պարտաւոր են հողալ իրանց զաւալիների մասին, և այնուհետեւ շուտով կը հասնի այն ժամանակը, երբ Ես և Ինձ հետ ամբողջ ժողովուրդը սարծանքով և սրտի մխիթարութեամբ կը նայենք երիտասարդ սերնդի վրայ, իբրև հայրենիքի հաստատու անվրէպ յոյսի վրայ, և կը համարենք նրան հայրենիքի տուկուն նեցուեկը ապագայում։ Իսկականի վրայ զրուած է։

«Զ ե զ ա ն կ ե ղ ծ լ ա ր գ ո դ Ն ի կ օ լ ա յ ։

**Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանը.**

«Թագաւոր Կայսրի Բարձրագոյն կամքով ես կոչուած եմ վարելու ժողովրդական լուսաւորութեան՝ այժմ առանձնապէս կարեոր նշանակութիւն ունեցող պաշտօնը Ես կը գործադրեմ իմ հասկացազութեան բոլոր ոյժերը արդարացնելու համար Միասների բարձր վստահութիւնը և կատարելու Բարձրագոյն ինձ վրայ գրած յանձնարարութիւնը։ Բարձրագոյն հրովարտակի մէջ, որին Նորին Կայսերական Մեծութիւնը համել էր արժանացնել ինձ այս տարուայ մարտի 25-ին, համառօտապէս ցոյց է տուած իմ առաջիկայ գործունէութեան ամբողջ ծրագիրը, ինչպէս, օրինակ՝ մեր ուսումնական մասի կազմակերպութեան հիմնական վերաբերնութիւնը և ուղղումը, մեր ոռուական ուսումնարանի վերանորոգումն և կարգաւորութիւնը և ոռու երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խելացիութիւն և սրտապին հոգատարութիւն մտցնելը։ Այս Բարձրագոյն նախադուած ծրագրի ճիշտ և անշեղ կատարումը պէտք է համարուի ինձ ենթարկուած հաստատութիւնների համար սրբազն պարտաւորութիւն, մի և նոյն ժամանակ ծրագրի առաջին, ամենակարեսր մասը, ուսումնական

կազմակերպութեան բարենորոգութիւնը, որին, ի կատարումն Բարձրագոյն կամքի, պէտք է ձեռնամուխ լինել առանց յետածութեան, յամենայն դէպս կը պահանջէ որոշ ժամանակ ամբողջ զվին իրագործելու համար. երկրորդ, նրա ոչ նուազ նշանաւոր մասը—երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խելացիութիւն, սէր և սրտագին հոգատարութիւն մացնելը—մշտապէս եղել է ուսումնական կազմի մերձաւոր կատարելիքը, որ և գործադրել է այն աւելի և կամ պակաս աջողութեամբ: Այսուհետեւ այդ բանը գրւում է նրա վրայ, որպէս առաջին, անշեղ գործադրելի և անհրաժեշտ պարտաւորութիւն: Յուսալով, որ իմ մերձաւոր աշխատակիցներս և այժմ ինձ յանձնուած մինիստրութեան մէջ բոլոր ծառայողները ցոյց կը տան ինձ լիակատար աջակցութիւն՝ Բարձրագոյն ինձ վրայ գրած յանձնարարութիւնը կատարելու համար, ես հրաւիրում եմ նրանց դէպի միարան, միասիրտ և անխոնջ աշխատանք Բարձրագոյն ցոյց տուած ծրագրի իրագործման հարցում: Ես հրաւիրում եմ ուսուցչական կազմին մերձաւոր շիման մէջ մտնել ուսանող երիտասարդութեան հետ, և անկախ դասաւութիւնից, նպաստել երիտասարդութեան դաստիարակութեան՝ սիրո և սրտագին հոգացողութեան յարակերտութեան վրայ հիմնուած: Ես հրաւիրում եմ ուսանողների ծնողներին և ընտանիքներին, ընտանեկան ազգեցութիւն գործ գնելով իրանց որդոց վրայ, օգնել ինձ յանձնուած մինիստրութեան՝ իրագործելու երիտասարդ սերնդի դաստիարակութեան մեծ գործը, միշտ յիշելով, որ դաստիարակութեան հիմքը ընտանիքի մէջ է և նրա առաջադիմութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակի, երբ ընտանիքը և գոլոցը փոխադարձաբար աջակցում են միմեանց և շիւում են միմեանց հետ: Ես հրաւիրում եմ ուսանող երիտասարդութիւնը վստահութեամբ վերաբերուել կառավարութեան ձեռնարկած միջոցներին, հաւատալ, թէ անգաղար հողացւում է նրա մասին, յիշել իր պարտքը, կատարել իր պարտաւորութիւնները և, հանգիստ պարապելով զիւտութիւնների ուսումնասիրութեամբ, տալ մեզ հնարաւորութիւն նույիրելու մեր ժամանակը և ոյժերը ուսւական դպրոցը և ուսումնական գործը կարգաւորելուն Ես խորապէս համոզուած եմ և սրբութեամբ հաւատում եմ, որ սրտագին միութեամբ և փոխադարձ աջակցութեամբ մենք, Աստուծոյ օգնութեամբ, մօտիկ ապագայում հնարաւորութիւն կ'ունենանք կատարելու սիրեցեալ Միապետի ցանկութիւնը—տեսմել ուսւ երիտասարդութեան մէջ հայրենիքի հաստատուն և հաւատարիմ յոյսը և նրա ամուր նեցուկը աղաղայում:

Կառավարչական հաղորդագրութիւն քարձագոյն դրա-  
ռցների վերաբերեալ

Սկսած անցեալ յունուար ամսի երկրորդ կէսից զանազան վարչութիւնների իրաւասութեան տակ զանուող բարձրագոյն դպրոցների մնամասնութեան մէջ տեղի ունեցան զանազան ժամանակներում ուսանողական անկարգութիւններ, որոնց հետեւնակը եղաւ ուսումնական սպարապետների դադարեցումը այդ դպրոցներում—զատկական տօներից առաջ: Պարագմունքների այս դադարեցումը, որ արգելք հանդիսացաւ նրանց սովորական լրմանը, ստեղծեց այնպիսի դրութիւն, որի սպասառով ուսանողները հարկադրուած պէտք է լինեն կամ կորցնել մի ուսումնական տարի, իսկ մինչև անգամ մի քանի դէպքերում, չնորհիւ այժմ գործող կանոնների, թողնել դպրոցը: Այսպիսի հետեւունքները պէտք է ծանր աղջեցութիւն գործեն ուսանողների վիճակի վրայ, իսկ նրանցից շատերի համար, նրանց անձնական և ընտանեկան գրութեան պատճառով, դա մի իսկական դժբախտութիւն կը լինի: Բարձրագոյն բարեհածութեամբ և ժողովրդական լուսաւորութեան մինհստրի նախագահութեամբ կազմուած խորհրդակցութիւնը այն մինհստրութիւնների ներկայացուցիչներից, որոնց վարչութեան տակ կամ բարձրագոյն դպրոցներ, անհրաժեշտ համարեց, յիշեալ դպրոցներում ուսումնական կեանքի կանոնաւոր ընթացքը վերականգնելու համար, ձեռք առնել հետեւեալ միջոցները.

1) Ապրիլ ամսի ընթացքում բարձրագոյն դպրոցներում վերական ուսումնական պարապմունքները կամ թէ, ուսումնական վարչութեան կարգադրութեամբ, անմիջապէս ձեռնամուխ լինել կուրսից կուրս անցնելու և վերջնական քննութիւնների կատարման այն ժամանակամիջոցներում, որոնք սովորաբար ընդունուած են քննութիւնների ցուցակներով:

2) Եթէ ուսումնական պարապմունքները վերջացնելու և քննութիւններ կատարելու համար քիչ ժամանակ մնայ մինչեւ ամարային արձակուրդների սկիզբը, այն ժամանակ ուսումնական պարապմունքները և քննութիւնները շարունակել և արձակուրդին յատկացրած ժամանակամիջոցում, թողնելով վարչութիւնների կամքին այս բանի համար միջոցներ որոշելու հարցը:

3) Առանց յարգելի պատճառների քննութիւններին չեկողներին և քննութիւն չը բռնողներին ենթարկել այն բոլոր հետեւանքներին, որոնք ցոյց են տուած այս խնդրի վերաբերմամբ առանձին վարչութիւնների մէջ գործող կանոններով:

4) Բարձրագոյն դպրոցներում, որպէս բացառութիւն, նշանակել այս տարուայ ընթացքում աշխանային քննութիւններ և վերաբերնութիւններ յարգելի դէպքերում առանձին անձանց համար, համաձայն վերջիններիս խնդիրների և կարգադրութեան ուսումնական վարչութիւնների:

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՔ

Երէցփոխանական հարցը գտառներում. — Նրա էոթինը. — Ժողովուրդ և նրա իրաւոնքները. — Օրինականութիւն. — Խնչից է առաջանում ընդհարումը. — Ախալցիայի դէպքը. — Ալիազօր» քննիչ. — Երկու կողմերը. — Գամառ-Քաթիսպայի մահարձանը. — Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութեան որոշումները. — Բագուի Մարդասիրական Ընկերութիւնը. — Խնտելի գենցիա և գաւառներ:

Երէցփոխանական հարցը գնալով աւելի և աւելի սուր կերպարանք է ընդունում: Միայն Թիֆլիսը չէ, որ տարիներից ի վեր ունի այդ շատ պարզ հարցը, որ խճճւում ու բարդուում է հոգեոր կառավարութեան բռնած ընթացքի պատճառով. մեր գաւառներից էլ շարունակ տեղեկութիւններ են ստացւում, ուրնք ցոյց են տալիս, թէ օրուայ չարիքը այս կամ այն կողմում նոյն այդ հարցն է: Ամեն տեղ, թէ Թիֆլիսում և թէ գաւառներում, մի և նոյն կերպարանքն է ներկայացնում այդ հարցը. Նրա էութիւնը արդէն պարզուած է «Մուրճի» այս տարուայ առաջին համարում: Մենք նորից չենք վերադառնայ նրան, այլ միայն կը նայենք երեսոյթին այն տեսակէտից, որ բնորոշում է հասարակութեան և եկեղեցական վարչութեան մէջ տեղի ունեցող յարաբերութիւնները:

Խնչալէս յայտնի է, երէցփոխանական հարցը առաջ է եկել մեղանում այն հանգամանքից, որ ծուխը ճանաչում է իր իրաւոնքները, աշխատում է պահպանել այդ իրաւոնքները, բայց այդ բանի մէջ զիմագրութեան է հանդիպում հոգեոր վարչութեան կողմից: Ահա ինչպէս է տեղի ունենում այդ ընդհարումը: Երէցփոխը ընտրուում է ժողովրդից: Ուր կայ քուէ, ուր զոյութիւն ունի ընտրութիւն, այնտեղ ընականաբար առաջ է գալիս և այսպիսի զրութիւն. ընտրուողը ընտրողների առաջ է պատասխանատու իր պաշտօնավարութեան մէջ. ընտրուողը ընտրողների հակողութեան տակ է գտնւում, պարտաւոր է նրանց հաշիւ տալ, և նթարկւում է նրանց գատաստանին, արձակւում է կամ միում է պաշտօնում ընտրողների ձևոքով, պա-

տըժւում կամ վարձատրում է նրանց քուէովի Այսպէս է օրէնքի տրամադրութիւնը, այսպէս է կարգը ամեն տեղ, ուր գործադրում է ընտրողական սկզբունքը: Դուք չեք կարող ցոյց տայ և ոչ մի դէպք, երբ հասարակական ընտրուած պաշտօնեան ուրիշ կերպ լինի, երբ ընտրողներին միայն ընտրելու իրաւունքը տրուած լինի, իսկ ընտրուողը աղատ լինի այդ ընտրողներին ճանաչելու, նրանց քուէի հետ կապուած իրաւունքները յարգելու պարտաւորութիւնից:

Մեղանում ժողովուրդը հէնց այդպէս էլ նայում է իր ընտրողական իրաւունքին: Նա պահանջում է, որ իր քուէով ընտրուածը ենթարկուած լինի իր հսկողութեան: Դա օրինականութիւնն է, մի սկզբունք, որ արմատացել է մեղանում մանաւանդ վերջին 10—15 տարիների ընթացքում: Անցել են այն ժամանակները, երբ հասարակական պաշտօնները «տնավարի» տրում էին այս կամ այն անհատին, որ ոչինչ հաշիւ ու պատասխանատութիւն չէր ճանաչում և մինչև իսկ կարող էր հասարակութեան քթից բռնած՝ ման ածել: Այժմ գիւղերում էլ տարածուած է այն միանգամայն արդարացի համոզմունքը, թէ տանուտէրը, երէցիսխը, դպրոցի հողաբարձուն, մի խօսքով ամեն մարդ, որ ընտրում է ժողովրդի քուէով, պարտաւոր է հրապարակական մանրամասն հաշիւ տալ յայտնի ժամանակամիջոցներում Եւ հաշուէտութիւնը չէ կատարելում ինսամիական կերպով, տնային միջոցներով: Մինչև այժմ սովորական բան էր տեսել մեր գաւառներում, որ եկեղեցուց դուրս եկող ծիսականներին ինսդրում էին ձեռաց, առանց դէս ու դէն նայելու, ստորագրել մի թուղթ, երէցիսխի հաշիւը, որ դրուած էր լինում եկեղեցու մուտքի մօտ, սեղանի վրայ: Այժմ ընտրում են հաշուէտեաններ, որոնք մանրամասն քննութեան են ենթարկում հաշիւները, պահանջում են վաւերաթղթեր և դրանց հիման վրայ ստուգում են այն թուանշանները, որ դրել էր պաշտօնեան մուտքի և եկբի սիւնակներում:

Դա, ի հարկէ, ուրախալի երևոյթ է, որ մեր հասունութեան,—ինքնաճանաչութեան մի յայտնի աստիճանն է ցոյց տալիս: Եւ եթէ այդ երևոյթի վերաբերմամբ դեռ Կարող է լինել որ և ցանկութիւն, դա այն պիտի լինի, որ օրինականութեան այդ սկզբունքը տարածուի ամեն տեղ, մարմին և արիւն ստանայ մեր կեանքի մէջ: Բայց մեղանում այդպէս չէ. մեր հոգեոր վարչութիւնը ջլատում է այդ համակրելի սկզբունքը, խեղդում է ընտրող ժողովրդի բոլոր իրաւունքները և ամեն կերպ աշխատում է պահպանել հին կարգերը, երբ մի համատարած լուսավորութեան և անտարբերութեան մէջ գառը յանձնուում

Էր զայլին։ Այդ երևոյթը ներկայումս յուզում է Ախալցխայի հայերին։

Այնտեղ ժողովուրդը ընտրում է հաշուէտեաներ՝ երէցփոխի հաշիւները քնննելու համար։ Ընտրուած հաշուէտեաները բաց են անում զեղծումներ։ Թիֆլիսի կոնսիստօրիան, իբրև հակող մարմին, իբրև եկեղեցու շահերի պաշտօնական ներկայացուցիչ, փոխանակ ամեն կերպ աջակցելու ժողովրդի ընտրեալներին, որպէս զի նրանք հիմնաւորապէս պարզեն եղելութիւնը, փոխանակ գործով ցոյց տալու, որ զեղծումները ինքը համարում է յանցանք, ամեն տեսակ խոչնդուներ է յարուցանում հաշուէտեաների դէմ, կապում է նրանց ձեռքերը և չէ թոյլ տալիս, որ իրողութիւնը հրապարակ հանուի։ Յուզում է ժողովուրդը, պատգամաւորներ է ուղարկում, բողոքներ է տալիս, պահանջելով, որ իրաւունքները չը խեղդունաւ Բայց ժողովրդական սկզբունքը, ժողովրդական իրաւունքները վաղուց են հալածուած մեր նոր Փօրմացիայի կղերականութեան միջից։ Թիֆլիսից Ախալցխան է ուղարկուում Բաթումի Մելեան քահանան իբրև «լիազօր քննիչ»։

Հոգեւոր կառավարութիւնը արգէն շատ փորձերով է ցոյց տուել թէ ինչ բաններ են նրա կողմից նշանակուած «լիազօր»։ պաշտօնեաները։ Շուշում և Երևանում երկար ժամանակ գործում էին «լիազօր» տեսուչներ։ Եւ լիազօր նշանակում էր կատարեալ միապետութիւն, կատարեալ արհամարհանք դէպի ժողովուրդը, մի խօսքով—անսահման իշխան և հրամանատար, որին պէտք էր միայն հպատակուել։ Այսպիսի հովեր ունէր և Ախալցխան ուղարկուած քննիչի լիազօրութիւնը։ Քննիչ քահանան առնում է հաշուէտեաներից մատեանները, թղթերը, առանձնանում է իր սենեակում և ապա, օրեր անցնելուց յետոյ, յայտարարում է եկեղեցում, թէ հաշիւները շատ մաքուր և օրինաւոր են, թէ երէցփոխից ոչինչ զեղծում չէ կատարել։

Այսպէս պիտի վերջանայ այդ աղմկալի գործը։ Բայց ի պատիւ Ախալցխայի հայ ժողովրդի պէտք է ասել, որ նա չէ բաւականանում այդպիսի վախճանով։ Նա զգում է, որ ինքը միայն կարող է վերջնական վճիռ արձակել այդ գործի մէջ։ գիտէ, որ հոգեոր իշխանութիւնը հաշուէտես չէ, այլ միայն հակող և ծըխական ժողովի որոշումները գործադրող։ Մենք զեռ կը տեսնենք, թէ ինչպէս նա կը կարողանայ վերականգնել իր արհամարհուած իրաւունքներ։ Այստեղ մենք միայն ընորոշում ենք երկու կողմերը։

Երկու կողմեր—ժողովուրդ և վարչութիւն։ Երկու հակառակ կողմեր։ Այսպէս չը պիտի լինէր։ Նրանք ընդհարուողներ։

չը պիտի լինէին, այլ փոխադարձաբար միմևանց օրինական իւրաւունքները յարգող և զրա մէջ միութեան, համերաշխութեան սերտ կապեր հաստատողների Բայց անտաղօնիզմը երկուսի մէջ աւելի քան պարզ է, աւելի քան սուր, աչք ծակող Ինչիցն է դա: Մենք տեսանք ժողովուրդը: Նա օրինականութեան ներկայացուցիչն է, նա պարտքի և իրաւունքի սահմանները խիստ որոշել զիտէ և չէ ուզում ոչխարների հօտ լինել, որովհետեւ եւ կեղեցին բանաւոր հօտ է: Այս կողմից նա իր հոգեոր հովիւներից շատ և շատ առաջ է գնացել: Հոգեորականութիւնը մը նացել է անշարժ, կաշկանդուած իր հին նախասլաշարմունքների մէջ. նա ոչ միայն չէ հասկանում ժամանակի պահանջները, այլ և ընկել է մոլորութեան խորխորասի մէջ. կարծում է, թէ իր նշանակութիւնն ու դիրքը պահպանելու համար պարտաւոր չէ զնալ ժողովրդի հետ և ապրել ժողովրդի համար, այլ ընդհակառակն, պէտք է կազմէ կղերական միապետութիւն, անսահման իրաւունքներով գործէ, անէ այն, ինչ իր նեղ, կաստայական շահերին է ձեռնառ և ոչ որ իրաւունք չունենայ նրա հրամանները անարդար համարել...

Այսպէս են երկու կողմերը: Եւ ընդհարումը սրանց մէջ, ի հարկէ, բնական, միանդամայն հասկանալի է: Բայց ինչ վկրջ պիտի ունենայ իրերի այս տեսակ ընթացքը.—ահա հարց, որի կարերութիւնը հասկանալի է ինքն ըստ ինքեան, առանց բացատրութիւնների, բայց որ արհամարհուում է կղերական միապետութեան կողմից: Աւելի վատ նրա համար...

\*  
\*\*

Մեր զաւառական քաղաքներից մէկը չուտով պիտի կատարէ մի համդէս, որ ընդհանուր ազգային ընաւորութիւն պիտի ունենայ: Մօտենում է Գամառ-Քաթիպայի մահուան տասնամեակը. այս առիթով արձան կը դնուի հանգուցեալ բանաստեղծի զերեզմանի վրայ, Նոր-Եալսիջեանի ո. Խաչ վանքում: Այդ արձանը ունի մի պատմութիւն, որի անտես առնելը կը նշանակէ աչք փակել՝ յաւալի իրողութիւններ չը տեսնելու համար:

Տասը տարի է ահա, որ երդուեալ հաւատարմատար պ. Գրիգոր Զալխուշեանը փող է հաւաքում այդ արձանի համար: Եւ ինչ են առել նրան: Մեղ ուղարկուած հաշուից երեսում է, որ առ 26 մարտի արձանի գումարը ոչ աւել և ոչ պակաս հասնում է... 2,637 ոռոբլի 76 կոպէկի: Ահա մեր հասարակական պարտաճանաչութեան չափը: Տասը տարտայ ընթացքում անընդհատ կրկնուող հրաւէրներին և թափանձանքներին մենք պա-

տասխանում ևնք այդպիսի մի չնշին գումարով։ Եւ այդ տուրքը հայ հասարակութիւնը տալիս է այն բանաստեղծի յիշատակը յարգելու համար, որ առաջինն է ու ամենամեծն է մեզանում, որի խրաքանչիւր տողը երգ է, տիտոր, ցաւագար երգ և հնչում է թէ զիւղական խրճիթում, թէ արհեստաւորի տանը։ Եւ այսպէս անում է մի աղջ, որի մէջ անթիւ են այնպիսի անհասներ, որոնք չը գիտեն թէ ինչպէս վատնեն իրանց ոսկիների կոյտերը, որոնց համար ոչինչ է մի զիշերուայ հածոցքի համար հազարներ դնելը... Զենք հասկանում թէ հայը ինչ երեսով պիտի հանդէսի օրը մօտենայ «Մայր-Արքափի»-ի հեղինակի գտմբարանին..»

Փոքր ինչ միսիթարութիւն մեր սև ապերախտութեան մէջ տալիս է Նոր-Նախիջևանի հայոց Բարեգործական Ընկերութեան որոշակի նա վճռել է հրատարակել Գամառ-Քաթիպայի հեղինակութիւնների երրորդ հատորը՝ իրրե գաւառական կեանքի քրօնիկազիր, մենք ողջունում ենք այդ որոշումը։ Դրանով երկու բարի գործ է կատարւում. մէկ որ՝ Գամառ-Քաթիպայի հեղինակութիւնները կորած չեն մնայ զանազան պարբերական թերթերի ամսկիններում, միւս որ՝ մի գաւառը մասնակցութիւն է ընդունում հայերէն զրքի հրատարակութեան մէջ։ Մի ժամանակ կար, երբ մեր գաւառներում այժմեանի պէս հազուազիւտ չէր հայերէն զրքի հրատարակութիւնը։ Այժմ ուրիշ բան է։ Այժմ խլացել են ոչ միայն գաւառները, այլ մեր մտաւոր կենարուն էլ-Թիֆլիսը—իսոր քնի մէջ է մտել... Մենք կը կամենայինք որ Նոր-Նախիջևանի այս նոր հրատարակութիւնը լինէր լիակատար, որ հրատարակելինները չը բաւականանային հանգուցեալ բանաստեղծի հեղինակութիւնները տպագրելու, այլ և տային բաւական նիւթեր՝ Ռափայէլ Պատկանեանի կենսագրութեան համար։ Թող հրատարակեն նրա նամակագրութիւնները և առասարակ այն բոլոր տեղեկութիւնները, որոնք հարկաւոր են պատութեան։ Սա կը լինի այն մեծ պատիւը, որ մենք կը մատուցանենք Գամառ-Քաթիպայի յիշատակին...»

Նոյն Բարեգործական Ընկերութիւնը որոշել է 10 հազար ոուրդի յատկացնել Նոր-Նախիջևանի հայոց թեմական գպրոցի վինութեան։ Արձանագրում ենք այս փասան էլ իրրե ապացոյց մեր հասարակական հիմնարկութիւններից մէկի կենսունակութեան։ Այդպիսի խոշոր գործով իր գոյութիւնը յայտնող ընկերութիւնը չէ կարող կենդանի չը լինել. համակրելի է մանաւանդ այն, որ ընկերութիւնը այդ նուիրատուութեան փոխարէն իրաւունք պիտի ունենայ որդեգիրներ պահել թեմական դպրոցում և այդ որդեգիրներին մտադիր է վերցնել զիւղական կրեստաներից։

Գիւղը, այն... Զը պէտք է նրան մոռանալ:

\* \* \*

Եթէ մշակը արժանի է երախտագիտութեան, մենք, հայերըս, ինչպէս տեսանք, շատ ողորմելի պարտաճանաչութիւն ունինք այդ կողմից: Որոնելով մեր հասարակական կեանքի մէջ լոյսի նշոյներ, մենք Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութեան այն որոշման մէջ, որ վերաբերում է Գամառ-Քաթիալայի գրուածքների հրատարակութեան, տեսանք մի միիթարական երեսյթ: Նոյն հայեացակէտը պարտաւորեցնում է մեղ յիշատակել և մի այլ գէտք, երբ խրախուսուողը, վարձատրուողը գարձեալ հասարակական անշահասէր, աղնիւ մշակն է: Այդ գէտքը մեզ փոխադրում է Բագու: Այնտեղի Մարդասիրական Ընկերութեան վարչութիւնը այս քանի օրերը պատուաւոր անդամի վկայագիր յանձնեց ընկերութեան անդամ պ. Աստուածատուր Կանկաճեանցին ի վարձատրութիւն այն ջանքերի, որ նա արել է աղքատների, որբերի և այրիների դառն վշտերը թեթեացնելու համար:

Թէ վարչութեան նախագահի ճառը և թէ նոր պատուաւոր անդամի պատասխանը խոր տպաւորութիւն են թողել ներկայ եղողների վրայ, և, ինչպէս վկայում է թղթակիցը, շատերի աչքերում արտասուքներ էլ երեացին Կարիք չը կայ այս տեսարանը բայցատրելու, գործողութիւններ կան, որոնք ամեն տեսակ խօսքերից պերճախօս են: Բագուի աղքատութեան և Մարդասիրական Ընկերութեան կատարելիք դերի մասին մենք խօսել ենք «Մուրճի» անցեալ համարում: Մի բոլք անգամ չէ կարելի կասկածել, որ իւրաքանչիւր հիմնարկութիւն կևադանի կարող է լինել միայն այն ժամանակ, երբ նրան նուիրուած են մարդիկ, նուիրուած են եռանդով, յափշտակութեամբ: Չեական բարեգործութիւնը, այն բարեկործութիւնը, որ գաղափար չէ, բարոյական պարտաւորութիւն չէ, այլ պիտի կատարէ մօռդային զգեստի պաշտօն, էժանազին փառքի մի աղբիւր, — այդ պիսի բարեգործութիւն մենք միշտ տեսնում ենք ի ցոյց հանուած, չպարուած, հարիւրաւոր չողոքորթ երկրագուներով շրջապատուած: Եւ մենք մի ծանր բան ենք զգում այդ տեսարանի առաջ, մեզ սիրելի է տեսնել բարեգործութիւնը իր անուան, մտքին և հոգուն համապատասխանող դիրքի մէջ: Ահա տարիների ընթացքում իր մերձաւորի ցաւերին նուիրուած մարդը գործում է անդադար, առանց աղմուկի, առանց իր մասին թմբուկներ զարնելու: Անում է նա այնքան շատ, որ նրան հարկաւոր են համարում բարոյապէս խրախուսել մի պատուա-

ւոր կոչումով։ Երբ հայը վճռում է վարձատրել իր մշակին, կարող ենք ապահով լինել, որ այդ մշակը շատ և շատ է գործել, շատ և շատ երախտիք ունի, որ այդպիսի ուշադրութեան է արժանանում։ Եւ ահա այդպիսի մի մշակ, ալ, Կաճկաճեանը, կանգնած է մեր առջև։ Ի՞նչ կարող ենք ասել։—Սրժանի է, ահա ինչ ենք ասում։ Բազուի Մարդուսիրական Ընկերութեան ամենամեծ բարիքը ցանկացած կը լինէինք, եթէ ասենք. Թող այդ ընկերութիւնը տաճնեակներով Կաճկաճեաններ ունենայ...»

Անցեալ տեսութեան մէջ մենք ասացինք, որ Ընկերութիւնը կամինում է հիւանդանոց բաց անել Բագւում։ Այժմ կ'աւելացնենք, որ վարչութիւնը արդէն խորհրդակցութիւն է ունեցել բժիշկների հետ և վճռել է գործադրել իր միտքը, սկսելով փոքր չափերից։ Ժողովին ներկայ 15—16 բժիշկները կատարեալ պատրաստականութիւն են յայտնել վարչութեան ցոյց առւած աղքատ հիւանդներին բժշկելու։ Ահա մի լուսաւոր երեսի ես, որ արձանագրում ենք ուրախութեամբ։

\* \* \*

Թէ բժշկական օգնութեան նրբան և որքան կարօտ է մեր ժողովուրդը—այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Բայց «հունացը առատ է, իսկ հնածուորները քիչ»—ահա մեր ողբալի իրականութիւնը։ Բժիշկներ շատ կան, բայց ուր են նրանք։ Որոնցիքը թիֆլիսում, Բագւում. այդ տեղերում թափուած են նրանք, գործ ու աշխատանք են որոնում։ Եւ ինչ է նրանցից շատերի զրութիւնը։ Անցեալներում մի յարգելի բժշկչ մեղ պատմում էր թէ թիֆլիսում կամ օրուայ հացի կարօտ բժիշկներ, բառի բուն նշանակութեամբ հացի կարօտ։ Իսկ մեր զաւառները... Ման եկէք այնտեղ, զուք կը ճանապարհորդէք ամբողջ օրեր, շարաթներ, կը տեսնէք մի մեծ ազգաբնակութիւն, ամեն տեսակ հիւանդութիւններ, համաճարակներ, իսկ բժշկի... Աւելի հեշտ է յուլիսի տօթերին ծիւն գտնել, քան բժշկչ ճարել մեր զիւղերում, նոյն իսկ գիւղաքաղաքներում։ Թշուառ գիւղը ոչինչ հրապուրիչ կողմ չունի. ոչ չաղ ոռնիկ կարող է տալ, ոչ առաջ գնալու, հոչակուելու ասպարէզ ունի, ոչ հարուստ հարսնացուներ։ Եւ նրանից փախչում են։ Փախչում են ոչ միայն քաղաքացիները, այլ և նրանք, որոնք զիւղում են ծննաել ու մեծացել։

Ահա այդ պատճառով ուշադրութիւն է զարձնում իր վրայ Վաղարշապատից «Մշակին» հաղորդած մի լուր։ Տեղացի երիտասարդներից մէկը, աւարտելով բժշկական ուսումը, փոխանակ մեծ քաղաքները վաղելու՝ հաստատուել է հայրենի գիւղում և առանց ոռնիկ ստանալու բժշկում է գիւղացիներին, բաւակա-

Նանալով հիւանդների տուածով։ Իսկ որ մի շատ ախորժելի բացառութիւն։ Մեր ինսելիգենցիան կորցրել է զաւառները տառող ճանապարհները և այդ ճանապարհներից գոնէ մէկի վրայ երևացող մարդք զարմանք է յարուցանում։ Ուրիշ կերպ չէ կարող լինել։ Բայց, դժբախտաբար, մի ծաղկով դարուն չէ լինում։ Ամենաչատը այդ ծաղիկը կարող է միայն այն ցոյց տալ, որ ինսելիգենցիան զաւառում շատ և շատ զործեր ունի։ Եւ իրաւ, միթէ միայն բժշկի օգնութեան են այնտեղ կարօտ։ Իսկ իրաւաբանը, իսկ զիւզաւնուեսը։ Քիչ մասնագիտութիւններ կան, որ զաւառում աւելորդ լինեն։ Եւ սակայն զնացողներ չը կան։ Եւ եթէ մի-մի էլ մի բժիշկ բացառութիւն կազմէ, այնքան տարօրինակ, աչքի ընկնող կը լինի այդ բանը, որ մենք արժանի կը համարենք այդպիսի երեսյթները հրապարակով արձանագրել։

Ահա թէ դեռ ուր ենք մենք...

Ա.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Չինացիներից տուգանք արիւնով և ոսկով, — Մանջուրական հարցը, — զալ կայ չարիք առանց բարիքի», — Մերձաւոր Նըելքի անշարժութիւնը, — Խալամական կղերականութիւնը, — Հայերի կատարելիք դերը Պարսկաստանի վերածնութեան դործում, — Պարսկահայերի դպրոցական հարցի կարեռութիւնը, — Հակակղերական ցուցեր Սպանիացում, — Ազատական մինիստրութեան առաջին քայլերը Սպանիացում, — Հակակղերական օրինագծի ընդունուելը Փրանսիական պարզամէնտում, — Հոգեգիրկութեան անունով հաւաքրուած գումարներով առևսուր, — Դիպլօմատիական հակասութիւններու

Այն օրից, երբ աւերուած ու անպատուած Զինաստանին պետութիւնները առաջարկեցին իրանց անդուխ պահանջները, անցան ամիսներ, որոնց ընթացքում անվերջ բանակցութիւններ էին տեղի ունենուած դեսպանների և Զինաստանի լիազօրների մէջ՝ պարզելու համար թէ ինչ միջոցներով հնարաւոր է ամոքել «կուլտուրական պետութիւնների» ցասումը՝ Քրիստոնեայ դեսպանները, մոռացած չափ ու սահման, արիւնարբու վազըրների նման մի գլուխ «արիւն» են գոչում. նրանք պահանջում են «յանցաւորներին» անպատճառ դիմուտել կամ ստիպել դրանց ինքնասպանութեամբ վերջ դնել իրանց գոյութեան — համար քաղաքակրթուած եւրոպացիների կամքը այն չինացի պարագլուխների նկատմամբ, որոնք յանդզնել էին այլ համոզմունք ունենալ իրանց հայրենիքի կարիքների մասին, քան քրիստոնեայ միսիոնարները և եւրոպացի ու ամերիկացի կապիտալիստները:

Բայց չինական կտրուած և կտրուող գլուխները, Զինաստանի աւերուած գիւղերն ու քաղաքները և նրան սպառնող սովոր բաւական չէին գոհացնելու համար ամեն բանի «արժէքը» լաւ ճանաչող եւրոպացիներին ու ևանկիներին. զրանք պահանջում են հատուցում նաև միծաքանակ ոսկով և այլ շօշափելի վարձատրութիւններով:

Մինչ չարունակում է այս սակարկութիւնը, Ռուսաստանը, իր սահմանները և շինած երկաթուղիները ազահովելու նպատակով, առանձին պայմանադրութիւն է առաջարկել Զինաստանին՝ Մանջուրիայի վերաբերեալ:

Մանջուրիայում պէտք է աւելացնուեն ոռուս պահակառ գորքերի թիւը, մինչև որ երկիրը բոլորովին խաղաղուի. Մանջուրիայի քաղաքացիական կառավարութիւնը առայժմ մնում է Ռուսաստանի ձեռքում. զէնքի ներմուծումը Մանջուրիա արգելում է. Ռուսաստանին անհաճոյ չինական պաշտօնեաները պիտի հեռացնուեն այդ երկրից. Մանջուրիայում չը պէտք է ուրիշ պետութիւնների հպատակներին արուեն երկաթուղային, լեռնային և այլն արտօնութիւններ. Չինաստանը իրաւունք չունի այդ մասերում ինքը երկաթուղի չինել. Մանջուրիայի երկաթուղիների ընկերութիւններին պիտի հատուցուին վնասները. Չինաստանը պիտի թոյլ տայ Ռուսաստանին իր երկաթուղու գլխաւոր գծից կամ ճիւղից՝ գիծ անցկացնել գէպի Զժիշիի սահմանը, մինչև Մեծ Պարիսալը, և այդ գիծը պիտի պահպանուի:

Յնականաբար այդ պայմանագրութեան երեան գալը մեծ իրարսանցման մէջ գցեց Անգլիան և Եավօնիան, որոնք ամեն կերպ աշխատում են համոզել Չինաստանին, որ նա մերժի Ռուսաստանի այդ պահմանջները:

Այդ թշուառ գրութեան մէջ է Չինաստանը, չնորհիւ իր գործերոր ինքնահաւան անշարժութեան և իր ներքին վատթար կարգերի: Բայց «չը կայ չարիք առանց բարիքի», ասում է առածը և չինացիներին մնում է միսիթարուել նրանով, որ վիրշին արքիների սարսափելի հարուածները կը սթափեցնեն նըրանց և կը համոզեն, որ անհրաժեշտ են ներքին կեանգում հիմնական բնիքութիւնը՝ երկիրը տպրուկ մանդարինների և կաշառակեր անխիզ գատաւորների ձեռքից աղատելու համար, հարկաւոր է իսկական դիտութիւն՝ չինական մնահաւատութիւնների փոխարէն, հարկաւոր է անհատի անբունաբարելի իրաւունք, պաշտօնեանների կամայականութեան փոխարէն: Եւ, ինչպէս երեսում է, այդ ճշմարտութիւնները ընբռնալ է և չինական արքունիքը...

Հեռաւոր արևելքից եթէ մեր ուշքը դարձնենք գէպի մերձաւոր երկիրները, Թիւրքիան և Պարսկաստանը, մենք կը տեսնենք նոյն մտաւոր անզործութիւնը, մասսայի նոյն թշուառ, նոյն իրաւաղուրկ գրութիւնը. Թիւրքիայի սուլթանը, չը նայած անցեալում կրած անթիւ հարուածներին և անազին երկրներ կորցնելուն, գեռ նս շարունակում է յամառութեամբ իր հին քաղաքականութիւնը: Մինչդեռ Թիւրքիայի և Բալկաննեան թերակղզու աղատուած երկրների մէջ համեմատութիւնը պիտի համոզէր նրան՝ իր ձեռքի տակ մնացած երկրներում վերանորոգութիւններ մտցնելու անհրաժեշտութիւնը: Ռումանիա, Բու-

դարիա, Սերբիա, Բոսնիա ի՞նչ վիճակի մէջ էին իսլամի լծի տակ և ի՞նչ են հիմա, չորհիւ եւրոպական սահմանադրական կարգերին. սակայն կարծես ովհնչ չէ կարող բուժել թիւրքիայի տիմար յամառութիւնը. նա իր հին սովորութիւնները շարունակում է գործադրել այժմ Մակեդոնիայում և երազում է ի՞նչ որ համիսլամական ուրուականով կանգնեցնել իր հին րեժիմի քայլացնումը: Նա կարծես չէ տեսնում, որ կղերականութիւնը մի չարիք է նոյն իսկ քրիստոնէութեան մէջ, որի հիմնադիրը խաղաղութիւն էր քարոզում բոլոր մարդկանց. ուրեմն էլ ի՞նչ կը լինի այդ կղերականութիւնը իսլամի մէջ, որ ամրողապէս ներշնչուած է ատելութեամբ դէպի բոլոր այն մարդիկ, որոնք չեն ընդունում նրա գերիշխանութիւնը:

Այդ իսրամ հոգեսորականութիւնը եղել է և Պարսկաստանի յետամսացութեան գլխաւոր պայմաններից մէկը: Այժմս էլ նրա մուշտէիցների և մօլլաների ֆանստիկոսութեան դէմ ստիպուած է իսրայ միջոցներ ձեռք առնել պարակական ներկայ կառավարութիւնը, ցանկանալով գէթ մի քանի եւրոպական բարենորոգումներ մտցնել խաւարի և բռնութեան մէջ թաղուած իրանում:

Ներկայ շահ Մուզաֆէր-էդղինը, մանաւանդ Եւրոպայում կատարած իր ճանապարհորդութիւնից յետոյ, տեսնում է թէ ի՞նչ ծայրայեղ յետաղիմութեան մէջ է իր երկիրը: Նա հետատեսութեամբ համականում է, որ միակ տարրը, որ կարող է կուլտուրական կեանք առաջայնել Պարսկաստանում—այդ իր հապատակ հայերն են, ուստի շատ բնական է որ շահը ամեն կերպ հովանաւորում է հայերին և դիւրութիւններ տալիս նրանց լուսաւորութեան դորձին:

Հայերը ցրուած են ամրող Պարսկաստանում. ուրեմն դրանք երկրի ընդարձակ տարածութեան վրայ կարող են մայնել շահի բեփորմները և նպաստել երկրի վերածնութեան: Սակայն, չը նայած որ հայերը համեմատաբար բարձր են կանգնած շրջապատող մահմեդակականներից, այնուամենայնիւ հայերը ես գեռ շատ խաւար են և անկուլտուրական. դրանք գեռ պէտք է լուսաւորուեն, որ աւելի պիտանի դառնան իրանի սուաջադիմութեան գործում: Հետեաբար ամենասուաջնակարգ նշանակութիւն ունի Պարսկաստանի առաջադիմութեան համար նախ և առաջ հայոց դպրոցների բարգաւաճումը, որ օրինակ կը լինի և բուն պարսիկների դպրոցական գործի զարգացման: Թէ են իրանում բնակուած բոլոր հայերի թիւը հազիւ 100 հազարից անցնի, բայց այդ տարրը, ի՞նչպէս առաջինքը ի՞նքն ըստ ի՞նքեան ունի ահապին նշանակութիւն երկրի տնտեսական և կուլտու-

բական կեանքի համար. Սալմաստ, Ղարադաղ, Նոր-Ջուղա իր շըականերով, Ուրմիա—մի-մի օազիսներ ևն բազմաթիւ հայ գիւղերով: Նոր-Ջուղայի շուրջ գտնուող գաւառներում մօտ 90 հայ գիւղ են հաշուում, ՅՇ հազար հայ ազգաբնակութիւնով, մօտ 30 գիւղ պիտի ընդունել Սալմաստում, նոյնքան՝ Ղարադաղ, մօտաւորապէս այդքան Ուրմիա լճի մօտերքում: Բայց հայեր կան և Թաւրիդում, Թէհրանում, Թէշտում և այլ քաղաքներում: Մինչեւ այժմ հայերը չունեին իրար շաղկապող մի կենդանի հասարակական գործ. ցանկալի է որ գարոցական գործը միացնէր պարսկահայերին և հայ ժողովրդի լուսաւորութեան վրայ առանձին խնամք տանէին այդ երկրի կարող անձերը, մոռանալով նպատակի վեհութեան առաջ՝ մանր-մունք անձնական միտումները: Այդ լուսաւորութիւնից է կախուած և Պարսկաստանի ընդհանուր ոռաջադիմութիւնը. առանց այդ գարոցական նախապատրաստութեան չէ կարող արմատ գցել երկրի մէջ ոչ մամուլը և ոչ կուլտուրական որ և է առաջադիմութիւն:

Այդ պատճառով պիտի ցանկալ, որ Թէհրանի նուխաձեռնող յանձնամոդովի հրաւիրած՝ պարսկահայոց պատգամաւորների համագումար առաջին ժողովը, ընդունելով գործի ամբողջ մեծութիւնը, զեկավարուի լայն, լուսաւոր և հետատես սկզբունքներով... Ամեն մի երկիր, որ ուզում է սթափուել քնից և նոր կեանք սկսել, պիտի առաջնակարդ նշանակութիւն դարձնի գարոցական հարցերի վրայ:

Ցայտնի է որ կղերը ամեն տեղ իրան ցոյց է տուել լուսաւորութեան թշնամի, ուստի միշտ գարոցական անձնուեր գործիներն ստիպուած են եղել իրանց բոլոր եռանդը և իրանց ոյժերը սպառել կղերի գէմ մղած մաքառման մէջ: Այդ ի նկատի ունենալով պիտի աշխատել միշտ սահմանափակել կղերի թունաւոր միջամտութիւնը և գերիշխանութիւնը լուսաւորութեան գործում:

Դառն հարուածներից յետոյ այդ վերջապէս հասկացաւ և հաւատաքննութեան հայրենիք Սպանիան: Հակակղերական շարժումը այդ երկրում այնպիսի ծաւալ ստացաւ, որ կառավարութիւնը ստիպուած եղաւ երկրի զերկը յանձնել ազատական մինիստրութեան: Այդ նոր կազմութեան մէջ լուսաւորութեան մինիստր կում Ռօմանօնէս յայտնեց, որ մտադիր է վերացնել կրօնական միաբանութիւնների զարոցներին տուած արտօնութիւնները. նա յայտարարեց մի շրջաբերական, որով վերացնում է կրօնի պարտադիր ուսուցումը զիմնապիսաներում և համալսարաններում և մացնում է դաւանութիւնների կատարեալ ազատութիւն: Ֆինանսների նոր մինիստրն էլ կազմել է առաջն Սպանիայի

վմնքերի և կր օնական միաբանութիւնների ցուցակ՝ պարզելու համար թէ դրանցից որոնք ևն զբաղուած առետրա-արդիւնագործական ձեռնարկութիւններով, օգտուելով հարկ չը վճարելու արտօնութիւնից: Զինու որական նոր մինիստրը ևս շրջարերականներով վերացրեց զօրքերում զինուորական քարոզիչների պաշտօնները, իսկ մինիստրների ժողովը որոշեց՝ յանդիմանել Սիվիլիայի արքեպիսկոպոսին, որ արգելել էր իր ծխականներին ներկայ գանուել «Ելեկարա» հակակղերական պիէսի ներկայացման:

Աւելի մեծ էր կղերականութեան կրած պարտութիւնը ֆրանսիայում: Զը նայած կղերականների և մելինիստների բոլոր ջանքերին, ֆրանսիական պարլամէնտը ընդունեց Վալգէկրուսոյի կազմած օրինագիծը կրօնական ընկերակցութիւնների և միաբանութիւնների մասին: Այժմ մնում է, որ այդ օրինագիծը անցնի և Սևանափակաց Երևի յուլիս ամսում պրոգէն կը վերադառնայ այդ օրինագիծը Սինատից պատրամաւորական ժողովը, որ և վերջնականապէս կ'ընդունի նրան:

Մինչդեռ այսուհետեւ աշխարհական ընկերակցութիւններ և միութիւններ կազմելու համար այլ ևս ոչ մի ձեւականութիւն չէ պահանջուելու, կրօնական միաբանութիւններ և ընկերակցութիւններ հիմնելու համար խստիւ պահանջուելու է օրէնսդրական թոյլաւութիւն, այսինքն պատղամաւորների ժողովի համաձայնութիւն: Կառավարութիւնն իրաւունք է ստանում լուծել ամեն մի կրօնական ընկերակցութիւն կամ միաբանութիւն, որ անհամապատասխան է նրա հայեացքներին: Փակուած մի արանութիւնների կազքը անցնում է կտակողների ժառանգներին, եթէ այզպիսիները երեան զան, իսկ մնացածը գործադրուելու է բարեկործական նպատակներով:

Կրօնական միաբանութիւնների հարցը երեան հանեց կաթոլիկ երկիրների ցաւերից մէկը, բանից գորս եկաւ, որ «բարեկործութեան» և «հոգևորկութեան» անունով հաւաքած գումարներով հայր սուրբերը հիմնում էին առետրական և արդիւնագործական զանազան ձեռնարկութիւններ, նոյն իսկ պահպանում էին զինեաններ, լուացաններ, կահաւորուած սենեկաններ և մինչև անդամ անառականոցներ... Ֆրանսիայի 2,500 կրօնական միաբանութիւնների մեծ մասը պարապելով առևտրով և վերև յիշած «աստուածահաճոյ» ձեռնարկութիւններով, ունէին այն արտօնութիւնն էլ, որ ոչ մի հարկ չէին վճարուած, և արժան ապրանքներ պատրաստելու համար սարսափելի կերպով հարստահարում էին երեխանների և կանանց աշխատաման-

ՔԸ: Այդ խեղճերի զրկանքներով ու չարչարանքներով այդ հայր սուրբերը արժան ապրանքներ էին պատրաստում շուկայի համար...

Մի բան ես բնորոշ է—այն, ինչ որ Վալդեկ-Շուսսօն վնասակար է համարում ֆրանսիական բուն ժողովրդի համար, նաև անհրաժեշտ է համարում պահպանել գաղութիւններում և արևելքում, ուր ֆրանսիական շահերը, նրա ասելով, պահանջում են այլ վերաբերմունք դէպի կրօնական միաբանութիւնները... Սակայն այդպիսի հակասութիւններով հարուստ են բոլոր երկրների գիպլօմատիական ձեռնարկութիւնները. զրանք երկու կշռ և երկու չափ ունեն իրանց և ուրիշների նկատմամբ:

Լ. Ս.

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա Յ Ի Ց

Բերդին, 1901 թ. մարտի 25-ին:

Ազրարների պահանջը մաքսի վերաբերմամբ:  
Արդեն մի ժամի տարի է, որ ազրարները (կալուածակերը)  
տրնջում են իրանց վիճակից, որովհետեւ Դերմանիայի արդինա-  
զութուրիւնը հսկայական բայլերով է զարգանում, երա վաճառա-  
կանութիւնը ընդհանուրի հափանձն է շարժում, բայց գիւղաքնի-  
տեսութիւնը միշտ կաղում, միշտ կրիայի բայլերով է առաջ շարժ-  
ում: Այստեղ բանուորական օրավարձը հետզինեւ բարձրանում է,  
այն ինչ գիւղաքնիսական մթերքների արժեկը արտասահմանան  
մեջման շնորհիլ համապատասխան փոփոխութեան չէ ենթակ-  
լում:

Ահա դրանից առաջ է զալիս հողատերերի—ազրարների  
համար չափազանց անձեռնութ հետեւանք, այսինքն րենքը, հողից  
սացուող տամբ, պակասում է եւ համեղ պատառը նուազում:

Դաս հասկանալի է, որ նրանից աշխատում են այդ չարիքի  
առաջն առնել, սակայն իրանց շահասիրական պահանջները միշտ  
էլ զանազան բարձր գաղափարներով են համեմում, որպէս զի  
համակրութիւն գրաւեն եւ կեղծ բողի տակից իրանց նայատակն  
առաջ տանեն:

Այսպէս օրինակ, իշխան Բիսմարկը (յայնի Բիսմարկի որ-  
դին) պատգամառների ժողովում մասքը բարձրացնելու մասին  
խօսելով, ոգեւորուած բացականչում է.

—Երեւ բանուորներ մարդիկ են եւ իրաւունք ունեն իրանց  
վիճակը բարուելու, մի՞րէ ազրարները նյուն տեսակ մարդիկ չեն  
եւ չեն կարող իրանց մարդկային իրաւունքները պաշտպանել-  
մի՞րէ արդարութիւնն ու մարդասիրութիւնը միայն բանուորների  
համար գոյութիւն ունեն...

Իսկ մամուլի մի մասը կառուից դուրս է զալիս ազրարնե-  
րի պահանջը փատաբանելու եւ արդարացնելու համար: Էլ ինչեւ

ասես, որ չէ գրւում այսեղ: Փասերի աղաւաղում, վիճակագրութեան տեղեկութիւնների յեղաւոզում, կեղծ ու շինծու լուրեր—այդ բոլորը սովորական եւնոյք են կազմում յիշեալ մամուլի համար:

Այդ համանարակով վարակուած թերթերից շատերը երեսն զիսուրեան օգնութեանն էլեն դիմում, Մարկս ու կնքելսին էլ են գերեզմանից վկայ կանչում, որպէս զի ապացուցանեն, թէ ազատ մքումը վճառակար է, թէ կառավարութիւնը միշտ պարտաւոր է բարձր մասուն պատասխանել իր արդիւնագործութիւնը, եւ այն եւ այն:

Եւ այդ ամբողջ աղմուկը, այդ ամբողջ հարայ-հրոցը նրա համար է, որպէս զի կառավարութիւնը զիւլատեսեական մքերենի մասու բարձրացնէ 3<sup>1/2</sup>-ից մինչև 7—7<sup>1/2</sup> եւ դրանով մի մեծ ժամ դնեալ արտասահմանեան ներմուծման առաջ:

Ազրարեների կարծիքով այդ միջոցն անհրաժեշտ է, որովհետեւ միայն դրանով կարելի է զարգացնել զիւլատեսութիւնը, իսկ այդ զարգացումն աւելի հան անհրաժեշտ է, որովհետեւ նա բարեւար ազդեցութիւն կ'ունենայ ամբողջ տեսեական կեանի վրայ, կը բարելաւ զիւլական ժողովրդի վիճակը եւ կ'իրազործէ այն դասակարգի—(իմա' ագրարեների) արդար պահանջը, որ միշտ էլ միապետական գանի ու հայրենիքի հաւատարիմ պատասխանն է եղիլ: Բայց բոլորովին այլ երգ է հնչում հակառակ բանակից, բոլորովին այլ փասեր ու եզրակացութիւններ են հրապարակ հանում սօցիալ-դեմոկրատները:

Եւ իսկապէս. զիւլատեսեական մքերեները Գերմանիա ներմուծում են զիստորապէս Ռուսասահմանից, որ մի եւ նոյն ժամանակ գերմանական արդիւնագործութեան համար մի մեծ ու օգտակար վաճառանոց է, իբրև ամենամօսիկ հարեւան իր լայն-արձակ հողերով, իսկ արդիւնագործութեամբ եւ բազմամիջիօն ազգաբնակութեամբ:

Իբրև ապացոյց բաւական է վեցցնել վերջին չորս տարեների ներմուծման ու արտահանութեան բուերը: Այսպէս՝

Ոռոսաստանը	արտահաննել է	Գերմանիան արտահաննել է
գէպի Գերմանիա.		գէպի Ռուսաստան.
1896 թ. 634,7 միլիօն մարկ.		364,1 միլիօն մարկ.
1897 » 700,1 » »	345,6 » »	
1898 » 727,1 » »	409,6 » »	
1899 » 767,1 » »	437,1 » »	

Այդ բուերի հետակութիւնն աւելի կը պարզուի, եթէ աչքի առաջ ունենանք, որ Գերմանիան արտահանում է մի այն զործարանական ապրանքներ, իսկ Ռուսասահմանը ընդհակառակը—այսինքն հում նիւրեր, զիւլատեսեական մքերեներ: Եթէ Գերմանիան

բարձրացնել հում նիւթերի մասսը, այն ժամանակ Ռուսաստանն էլ նոյնը կ'անէ ինդուստրիալի արտահանած ապրանքների վերաբերմամբ (նարգի այդ կողմը լուրջ ուշադրութիւն գրաւեց մահաւանդ «Տօրցո-պրոմապլենհայ գազետա»-ի յօդուածից յետոյ) — եւ այդ բոլորի ընդհանուր հետեւանքը կը լինի այն, որ յիշեալ բուերը հետզինետք կը նուազեն եւ զերմանական ինդուստրիան մի զգալի հարուած կրստանայ, առաջացնելով յանախակի կրիզիսներ, նըպասելով օրավարձի անկմանը, եւ այն:

Բայց զիւլատնեսեսութիւնը կամ աւելի նիշեն ասած՝ ապրանքները հասած կը լինեն իրանց նպատակին, այսինքն կը կարողանան աւելի իւղալի պատառ նաշակել, որովհետեւ արտասահմանան մրցումից ազատուելով, կը վաճառեն իրանց արտադրած նիւթերն աւելի քանզ զնով, աւելի ձեռնուու պայմաններով:

Իսկ ո՞վ պէս է լինի նրանց պատառին իւղ բոլոր, ո՞վ պէս է լինի նրանց ազահութեանը յազուրդ տուողը... Ի հարկէ ժողովուրդը, եւ ահա՝ քէ ինչպէս.

Վիճակագրական տեղեկութիւններից երեսում է\*), որ իւրաքանչիւր զերմանացի զործ է ածում տարեկան 200 կիլօ հաց, եւ երկ հացահատիկների մասս բարձրանայ մինչեւ 5, այն ժամանակ տարեկան հացի զինը կը քանզանայ 10 մարկով, երկ մասսը բարձրանայ մինչեւ 6, այդ աւելորդ զում. կը հասնի 12-ի.

»      »      »      7,      »      »      »      14-ի.

»      »      »      8,      »      »      »      16-ի.

Եւ այն. ուրեմն հինգ հոգուց բաղկացած ընտանիքը պիտի ունենայ տարեկան 60, 70, 80 մարկ աւելորդ ծախս, որպէս զի «զահի ու հայրենիի պատապան» ապրաները յազենան ու զնի մնան:

Ի հարկէ հարուս ընտանիքի համար այդ գումարը չնշին բան է. բայց ի՞նչ անէ քուառ բանուորը. նա ո՞րտեղից հայրայրէ այդ աւելորդ գումարը, երբ նրա զինին կախուած է եւ մի ուրիշ Դամօկլեան տուր, այն է՝ ինդուստրիական կրիզիս, անգործութիւն, օրավարձի սակաւութիւն, եւ այն:

Բարձր մասսի կողմնակիցներից տաերը խոստովանում էն այդ ամենը, բայց միւս կողմից պնդում են, քէ առանց այդպիսի զոհաբերութեան զերմանական զիւլատնեսութիւնը չէ կարող առաջադիմել, չէ կարող իր աննախանձելի վիճակից դուրս գալ: Բայց յայտնի տնտեսազէս Բերնեսէկնը ընդհանակառակը \*\*), օրինակ վեցնելով Անգլիայի անցեալ տնտեսական կեանքը, զիտնականօրէն հաստատում է, որ բարձր մասսը կը բարձրացնէ միայն հողավար-

\*.) Տե՛ս „Die Gleichheit“, № 4, 1901.

\*\*) Տե՛ս „Sozialistische Monats—Heftte“ № 3, 1901.

ձը եւ երբեք չէ կարող բարձրացնել գիւղանեսեսուրիւնը, չէ կարող զարգացնել նրա կողմուրան...

Այսպէս ուրեմն, գերմանական արդիւնագործուրիւնն ու ժողովուրդի բարձր մասսից միայն վճառ կարող են նաև առանալ եւ ոչ օգուտ:

Այժմ մի նոր հարց է առաջ գալիս. երեք իրողուրիւնն այդ է, երեք փաստերն այդպէս պարզ ու անհերենի են, հապա ինչո՞ւ են լուել ինդուստրիայի ներկայացուցիչները, եւ կառավարուրիւնն ինչո՞ւ է տալիս իր յօժառուրիւնը հացանաժիկների մասսը բարձրացնելու վերաբերմամբ։ Այդ հարցի համապատասխան լուծումը տալիս է «Die Neue Zeit.» շաբարքերը (№ 16) իր առաջնորդող յօդուածով։

Այդտեղ յօդուածագիրը գեղեցիկ կերպով պատկերացնում է այն միջնորդական դերը, որ խաղում է պետական կանցկէր գրաֆ Բիլովը, եւ ահա՛ թէ ինչպէս։ Մի կողմը կանգնած են ինդուստրիայի ներկայացուցիչներ՝ չարաքասիկ «ջրանցքային» նոր առաջարկով, իսկ միւս կողմը՝ ագրարներ՝ բարձր մասսի պահանջով։ Խաղամագէս գրաֆը մեկ ձեռքը մեկին տուած, իսկ միւս ձեռքը միւսին, ուզում է երկուսին ել անվտանգ անցկացնել ռեյխսագի ֆենուրեան բոլից։ Այդ նպատակով նա մի կողմից տենջում է կապիտալիսների ականչին։

—Զեր ցանկուրիւնը կը կատարուի, միայն համաձայնեցէք մասսը բարձրացնել։ իսկ միւս կողմից ագրարներին է հասկացնում։

—Զեր պահանջը կը կատարուի, միայն ռեյխսագում «Զըրանցքային առաջարկը» պատշաճնեցէք։

Սհա՛ այդպիսի նամապարհ են ընտել տիրող դասակարգերը, այդպիսի փոխադարձ զիջումներով են առաջ մղում իրանց տակերը։

Հասպա ի՞նչ անէ ինեղն ժողովուրդը, ո՞ւմ ձեռքը բռնէ աւխատառը դասակարգը, որին միւս շահագործում են, որի օրական չոր հացն ել բանգացնել են աշխատում...

Նա կարող է միայն բողոքել անարդարուրեան դեմ եւ այդ բանն անում է ամենալայն չափով։ Գերմանիայի մի ծայրից մինչեւ միւսը՝ թէ՝ առանձին ժողովներում եւ թէ մամուլի եզերում անընդհատ հնչում է այդ արդար բողոքի ձայնը, որ ըստ երեւոյրին դեռ աւելի զօրեղանալու է Զատկից յետոյ, այսինքն երբ մասսային հարցը ռեյխսագի ֆենուրեան նիւքը կը դառնայ։

—  
Պրօֆէսոր Զոմբարսը ներկայ սնսեսական կեանքի եւ անհատական ազատուրեան մասին։

Բրեսլարի յայտնի պրօֆ. Զոմբարտն ամսխս 18-ին բազմաքիւ ունկը նդիրների ներկայուրեամբ կարդաց (Բերլինում) մի հետաքրքիր դասախոսուրիւն, որի նպատակն էր մատնամիւ անել այն հակասուրիւնը, որ զոյուրիւն ունի ա և ն ս ա կ ա և ա զ ա ս ո ւ թ ե ա ն ե ւ ներկայ տնտեսական կեանքի մէջ, եւ այն հանապարհը, որով կարելի է օր առաջ վերացնել այդ վնասաբեր իրողուրիւնը: Անս' այդ ուշագրաւ դասախոսուրեան հակիրն բովանդակուրիւնը.

— Ամբողջ դարերի ընթացքում մարդկուրիւնը ձգտել է դեպի ազատուրիւն: Նա անքիւ ու անհամար զնիւր է տուել այդ նպատակին հասնելու համար, չաս ու չաս անզամ արեան գետեր է հոսեցրել, «Ելքայրուրիւն», հաւասարուրիւն եւ ազատուրիւն» բացականչելով:

Բայց ի՞նչ... Այժմ նա աւելի ժիշ անհատական ազատուրիւն է վայելում, բան եր եւ իցէ, աւելի ժիշ ինքնուրոյնուրիւն ունի, բան քե հին ժամանակներում:

Հնադարեան ընտանիքն ինքն աշխատում, ինքր վայելում էր իր քրինի արդիւնքը. միջնադարեան արհեստաւորն ազատ աշխատում էր իր սեփական զործիներով եւ ընդհատում այդ աշխատամբը իր կամքի համեմատ. նա ուներ իր անհատական կամքը, իր ազատուրիւնը...

Իսկ ա՞յժմ... Հանգամանեները փոխուել են, կեանքը բարդացել է եւ անհատական ազատուրիւնը զերօն հաւասարուել: Եւ խկացէն, խաղանակրուրիւնը հսկայական հայլեր է անում. ընզին ու ելեքտրականուրիւնը կատարեալ յեղափոխուրիւն առաջ բերին տնտեսական կեանքում. մի յեղափոխուրիւն, որի յաղբական ընթացքը դեռ շարունակում է: Հզօր կապիտալիզմն իր ազդեցուրիւնը տարածել է աշխարհի բոլոր կողմերը. եւ մենք, այդ ամենը տեսնելով, բացականչում ենք.

— Կեցցե՛ բաղամակրուրիւնը, կեցցե՛ գիտուրիւնն ու առաջադիմուրիւնը:

Այո՛, կեցցե՛ն այդ բոլորը, բայց ի՞նչ զնով, ի՞նչպիսի զնաբերուրեամբ... Ո՞ւր է այն անհատական ազատուրիւնը, որի համար մեր նախահայրենին արիւն էին բափում. նա չը կայ... Ներկայ տնտեսական կեանքն առաջ է շարժում բնական-մարդկային կամքից անկախ օրենքներով եւ իր անիւների տակ տրում է անհատի ինքնուրոյնուրիւնը: Ապացոյց—առօրեայ կեանքը:

Անա լուսանում է. աշխատաւորն արթանում է ժնից, բայց նա չէ կարող իր կամքի եւ տամադրուրեան համեմատ վարուել. նրա ականջին հնչում է մօսակայ զործարանի ըրուցք, որ կանչում է նրան դեպի զործ, դեպի աշխատուրիւն—վակուած զործարանում, անունչ մեքնաների թէլադրուրեամբ: Նա սլիսի

մնայ այդտեղ, պիտի աշխատի, մինչեւ որ նորից լսուի փրկարար ըրտոցը: Դրանք յետոյ նա ազատ է, բայց անընդունակ մի ուրիշ բան կատարելու, իր հոգեկան ու մտաւոր պահանջներին յազուրդ տալու: Նա պիտի հանգստանայ, որպէս զի հետեւեալ օրը նորից նոյն մեքենայական աշխատանքը շարունակի:

Սակայն միայն բանուորը չէ, որ տեսեսական կեանքի մեքենան է դարձել. կապիտալիստներն ու միւս անհատներն ել նոյն դրուքեան մեջ են, նոյնպէս գուրել են ազատուրիւնից: Դրանք ել անընդհատ պիտի հետեւեն վաճառանոցի ու բօսայի ելեւէջներին, իրանց կապիտալի գործունեուրեանը եւ այլն:

Ահա՝ այդպիսով այն մարդկուրիւնը, որ ամբողջ պատմութեան լինրացէն «ազատուրիւն, ազատուրիւն» եւ կանչում, այժմ տեսեսական կեանքի ստրուկն է դարձել:

Սակայն ի՞նչպէս գուրս գալ այդ դրուքիւնից ի՞նչպէս լուծել այդ Դորդեան հանգոյցը: Դրա համար մենք պէս է աշխատենի երե ոչ բալրուլին, գեր մասամբ ազատուել տեսեսական կեանքի իշխանուրիւնից, գեր մասամբ ինքնուրայն ու ազատ լինել: Իսկ այդ հազարակին հասնել կարող ենի, երե տեխնիկան բարելաւենի եւ մարդկային արտադրող ոյժը բանգ գնահատենի, այսինքն բանուորտկան օրավարձը բարձրացնենի: Այդ դեպքում մարդը կը կարողանայ իիշ աշխատել, ուստի բան արտադրել, ուստի ստանալ ու իր նիւթական պահանջներին յազուրդ տալ: Իսկ մնացած ազատ ժամանակը նաև կարող է եւ հանգստանալ եւ իր մտաւոր ու հոգեկան կարիքները նոզալ կամ ուրիշ խօսքով ասած՝ անհատական ազատուրիւն վայելել: Միայն այդ դեպքում մարդկուրիւնը կարող է բացականչել.

— Կեցցե՛ բաղախկրուքիւնը, որ մարդուն արժանավայել ազատուրիւն է տալիս:

## ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Daily News-ի հետ կատարուած փոփոխութիւնը. — Զինաստանը. Նոր ռազմական իրութիւններ նրա պատմութեան և քաղաքական կեանքի վերաբերեալ. — Մահմեդական երկիրների պատմութեան ռազմական իրութիւնը Անգլիայում. Բաղզաղը և Արքառեանների խալիքայութիւնը. — Եղիսաբետի տութիւնը և նորութիւններ այդ ճիշճի վերաբերեալ. — Հետաքրքրութիւն ռուսաստանի գրական երևոյթներով:

Ներկայ 1901 թուի յունուարի ընթացքում անգլիական լրագրութեան մէջ նշանաւոր փոփոխութիւն առաջ եկաւ, այն է՝ «Daily News» թերթի խմբագրութիւնը հիմունին փոփոխութեան և նիմունին ամսագրից Սյդ մասին Review of Review ամսագրից քաղում և նոր հետեւեալ տեղեկութիւնները: Լօնդոնի առաջնակարգ լրագրները իրանց խաղացած դերով աւելի կարևոր ոյժ են ներկայացնում, քան պարլամենտի տասնեակ անդամները: Եթէ վերցնենք այժմ ունիօնիստների թիւը պարլամենտում 402, նրանց ներկայացնում են մասմուկի մէջ՝ Times-ը, Standard-ը, Daily Telegraph-ը, Morning Post-ը և մասամբ Daily Chronicle-ը (Հարաւային Աֆրիկայի պատերազմի ինդրում), յետոյ Daily Mail-ը և Daily Express-ը, այսինքն նրանք ունեն 7 օրգաններ. իսկ ազատամիտ և իրանդական կուսակցութիւնը, որ ունի 268 տեղ պարլամենտում, արտայայտում է միայն Daily News և Morning Leader լրագրներով. այսպիսով, այն ինչ նախարարութեան կողմնակից իւրաքանչիւր օրգանը ներկայացնում է պարլամենտի 57 անդամներին, իւրաքանչիւր ազատամիտ թերթը ներկայացնում է 134 հոգի: Այս դէպքում ամեն մի օրգանի անցնելը այս կամ այն հոսանքի կողմը, մեծ կարևորութիւն է ներկայացնում... Սյդպիսի կարևորութիւն ունի և այն փոփոխութիւնը, որին նորերումս ենթարկուեց Daily News-ը... 50 տարի սրանից առաջ, երբ այդ թերթը, սկսեց հրատարակուել, նա պատկանում էր 29 բաժնետէրերից բաղկացած մի ընկերութեան: 80-ական թուերի վերջերում այդ բաժինների  $\frac{3}{4}$  մասը կենարունացաւ երկը անձանց ձեռ-

քը, իսկ մնացած  $\frac{1}{4}$  մասը յրուած էր զանազան ձեռքերում։ Վերոյիշեալ Յ անձինք էին պ. Ա. Մօրէյ, Հ. Օպպենհէյմ և յայտնի Հ. Լաբուշէրը։ Այդ եռապետութիւնը զեկավարում էր թերթը, հրաւիրում էր խմբագիր, աշխատակիցներ և տալիս էր նըրան ընդհանուր ազատամիտ ուղղութիւն։ Հանգուցեալ «Մեծ ծերունի» Գլազուոնի մահից յետոյ այդ թերթը Ռօգրերիի աղդեցութեան ներքոյ՝ հետզհետէ գրաւուեց ժամանակակից իմպերալիզմի հոսանքով, որին և հետեւում էր մինչև ներկայ Յունուարը։ Այդ էր պատճառը, որ արմատական Լաբուշէրը ստիպուած հեռացաւ թերթից, վաճառելով իր բաժինները միւս 2 ընկերներին 90,000 ֆունտ ստերլինգով... Այդ ժամանակը գեռ թերթի ամենատարածուած միջոցն էր. կավիտալիստ Օպպենհէյմը հրաւիրեց խմբագիր՝ Աֆրիկայի հերոս Միխէրի բարեկամ հրապարակախօս Կուլին, որ արագ քայլերով տանում էր թերթը նոր հոսանքով՝ ինչպէս երեաց, գէպի անկումը... Դա Զեմսօնի արշաւանքից անմիջապէս յետոյ էր. լրագիրը ջերմ կիրապով քարոզում էր Սեսիլ Ռօգրի զաղափարները, և գրանով նա միւս լրագրների հետ միասին՝ անփոխարինելի միաս հասցրեց Անգլիային։ «Daily News»-ը ունէր ընթերցողների որոշ և մեծ շրջան թէ Անգլիայում և թէ արտասահմանում, որոնց աչքում նա հեղինակութիւն էր վայելում, և ի հարկէ նրա հայեացքները մեծ ազդեցութիւն ունեցան... Բայց հետզհետէ ծայրայեղ իմպերիալիստական քաղաքականութիւնը սկսեց գրգռել զայրոյթ շատ զլադստօնականների մէջ, և շատերն սկսեցին հեռանալ լրագրից ու մտածել նոր թերթ հիմնելու, որ լինի իրանց հայեացքների արտայայտէց։ Դրանք վերջապէս կաղմում են մի նոր ընկերութիւն շատ բաժնետէրերից բազկացած, որոնց մէջ մտնում են շատ յայտնի գրիչներ զանազան ասպարէնցներում։ Բաժինների թիւը 200,000 է, իւրաքանչիւրը մի ֆունտ ս. (10 ս.) արժողութեամբ։ Դիլիաւոր հիմնադիրները 7 հոզի են, Բ. Լեմանի նախագահութեամբ։ գրանք որոշում են մի լրագիր հիմնել ազատամիտ-արմատական գափարների պաշտպանութեան համար։ Այդ միջոցին Օպպենհէյմը առաջարկում է գրանց գնել «Daily News»-ը. բանից երեսում է, որ ծայրայեղ իմպերիալիստ ուղղութիւնը լրագրի անկման պատճառ էր դարձել ընթերցողները փոքր առ փոքր յետ էին քաշուել թերթից, բաժանորդների թիւը սաստիկ նորազել էր, այնպէս որ մինչդեռ մի քանի տարի առաջ Լաբուշէրը իր մասը միայն (այսինքն 8 բաժին 27-ից) ծախել էր 90,000 ֆունտ ստերլինգի, այժմ բոլոր բաժինները անցաւ նոր խմբի ձեռքը 100,000 ֆունտով։ — Նոր հրապարակութիւնները հրաւիրեցին իբրև խմբագիր յայտնի Mas-

singham-ին, որ առաջ արմատական «Daily Chronicle»-ի խմբագիրն էր և հեռացել էր՝ այդ թերթից զրանից փռքը ինչ առաջ, երբ վերջինս հիմնովին փոխեց իր վերաբերմունքը զէպի պատերազմը... Նոր խմբագրութեամբ ներկայ յունուարից «Daily News»-ը գարձաւ խիստ զիմաղրող թերթ պատերազմի հարցում, և նրա բաժանորդների թիւը սկզբից աւելացաւ. մի ամիս չմնցած՝ խմբագրութեան փոփոխութիւնից յետոյ արդէն նա օրական տարածւում է 11,000 օրինակ աւելի, քան Օպլունհէյմի օրով... Երեսում է, թէ որքան ուժեղանում է անզիւական հասարակութեան մէջ հակաչարժումը իմակերիալիզմի դէմ...

Այժմ անցնենք զրականութեան և զիտութեան նոր երեւոյթներին: Ինչպէս և անցեալ մեր տեսութեան մէջ, այս անդամ էլ արևելքի ուսումնասիրութիւնը մեր պանձին ուշադրութեան առարկայ է լինելու: Եւ այս զէպքում մննք ի նկատի ունենք թէ Փոքր-Ասիան, Առաջաւոր-Ասիան ու Եգիպտոսը և թէ Հեռաւոր Արևելքը, այսինքն Զինաստանը, Եազօնիան:

Զինաստանի վերաբերեալ E. Parker-ը նորերումս հրատարակել է մի բազմակողմանի ուսումնասիրութիւն «China, her History, Diplomacy and Commerce from the Earliest Times to the Present day» վերնագրով («Զինաստանը, նրա պատմութիւնը, զիւանազիտութիւնը և առևտուրը հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը»): Այդ գիրքը «Atheneaeum» զիմանական հանդէսի վկայութեամբ անհրաժեշտ մի ձեռնարկ է այն բոլոր անձանց համար, որոնք ցանկութիւն ունեն հիմնաւորապէս ծանօթանալ Զինաստանի արդի զրութեան հետ: Սկզբում հեղինակը մի քանի զլուխ նուիրում է երկրի աշխարհագրութեանը և ապա անցնում՝ է առևտուրին, և կայսրութեան վարչական գործերի նկարագրութեանը:—Պատմելով օտար պետութիւնների յարաբերութիւնների մասին՝ Պարկէրը առանձնապէս շեշտում է, որ Կիազչուի վերցնելը Գերմանիայի ձեռքով ամենից շատ նպաստեց այժմնան ճգնաժամի առաջ գալուն:—Հեղինակի վիճակագրական տեղեկութիւնները՝ առետորի մասին առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում, ցոյց տալով, թէ 1880 թուից մինչև այժմ որ տէրութիւնը ինչ չափով առաջ է տարել իր գործառնութիւնները այդ երկրում:—Մի քանի ընդարձակ զորին նուիրուած է գրուածքի մէջ չինական զօրքի կազմակերպութեանը, հարկահանութեան եղանակի և ապա ժողովրդի կեանքին և բնաւութեանը...

Մի հետաքրքիր զօկումնատ է հրատարակուած անցեալ ամսին Լօնդօնում չինական քաղաքական կեանքին վերաբերեալ.

գա թարգմանում է չինարէնից և կրում է հետեւեալ վերնապերը. «China's only Hope: an Appeal by her Greatest Viceroy, Chang Chih-tung, with the Sanction of the Present Emperor, Kwang Su» (Չինաստանի միակ յոյսը. հրաւէր մեծ փոխարքայ Չանգ-Չի-տունգի, կայսր Կվանգ Սուի հսւանութեամբ»); Գրքի հեղինակը յառաջադէմ կուսակցութեան գլխաւոր պարագուիներից մէկն էր Չինաստանում և իր գործունէութեամբն ու լուսաւոր հայեացքներով մեծապէս նպաստել է վերանորոգչական շարժմանը այդ երկրում, միշտ պաշտպան հանդիսանալով եւրոպացիներին և նրանց կարգերին: Լի-խունդ-Չանգը, նրա գլխաւոր ախոյնանը, իր բոլոր ազգեցութիւնը գործադրելով պալատում, կարողացաւ Չանգ-Չի-տունգին նշանակել տալ փոխարքայ մի հետաւոր մասում և այդպիսով չէլուացնել նրա ազդեցութիւնը: Բայց այնտեղ էլ նա իրան այնպէս արժանաւոր կերպով պահեց, որ աւելի բարձրացրեց իր անունը կայսեր աջումը: Լինելով կողմանից բեֆօրմների և եւրոպական կարգերի, Չանգը միենայն ժամանակ մնում է չինացի և Կօնֆուցիոսին հետեւող. նրա նշանաբանն է. «Չինաստանը չինացոց համար»: Իր վերոյիշեալ հրաւէրի մէջ նա ապացուցանում է, որ Չինաստանը յեղափոխութիւնից ազատելու համար երկը անհրաժեշտ միջոցներ կան. «առաջին՝ պահել թագաւորող հարստութիւնը (դինաստիան). Երկրորդ՝ պահպանել սրբազնան կրօնը, և երրորդ՝ պահպանել չինական ցեղը»: Այդ երկը նպաստակներին համար նա առաջարկում է բաց անել զանազան տեսակի դպրոցներ արեմտեան ուսուցման եղանակով, հաստատ պահելով միենայն ժամանակ Չինական հիմունքները: Նա խորհուրդ է առաջի թարգմանել ընտիր եւրոպական գրքերը չինարէն լեզուով, մայնել կատարեալ կրօնական համբերողութիւն: Քննադատելով ներկայ չինական կարգերը, հեղինակն ասում է. «Բոլոր երկիրներից միակ Չինաստանն է, որ վերջին յիսուն տարուայ ընթացքում մնացել է խոր և քնած: Մեր պաշտօնեաների մէջ չը կայ գոնէ մէկ հասկացող անձն. մենք չունենք ոչ մի խոկական գիտական և ընդունակ գեղարուեստագէտ, մենք չունենք աչքի ընկնող ներկայացուցիչներ արտասահմանում, իսկ մեզ մօտ չունենք կամսնաւոր գլուցներ...»: Բայց նայելով պետութեան այս թոյլ կողմերին, նա մեծ յոյսեր ունի իր հայրենիքի ապագայի վրայ: Նա հաւատում է, որ գիտութիւնների զարգացումը կարող է վերածնել իր հայրենիքը, և հեռու չէ այն ժամանակը, երբ ներկայումս թոյլ և տկար կայսրութիւնը կը նորոգի իր ոյժերը իբրև մի հսկայ:

Մահմետական աշխարհի պատմութեան վերաբերեալ նոյնապէս հրատարակուել է մի շատ կարեոր ուսումնասիրութիւն հետևեալ վերնագրով.

«Baghdad during the Abbasid Caliphate»—  
by G. Le Strange. («Բաղդադը Աբբասեանների խալիքայութեան ժամանակ» Լ. Յ Սարանժ-ը); ինչպէս խոստովանում է «Athenaeum» զիտնական շարաթաթերթը, Արևելեան երկիրների ուսումնասիրութիւնը Անգլիայում մինչև վերջին ժամանակները շատ քիչ էր տարածուած, և ինքնուրոյն ու հիմնաւոր գրուածքներով այդ շրջանում Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը Անգլիայից բարձր էին կանգնած: Բայց նորերումս անգլիական արևելադէանները հրատարակեցին մի քանի գրքեր, որոնք կարող են մրցել յամաքային երկիրների ամենալաւ գրուածքների հետ: «Օրինակ՝ մահմետական Արևելքի վերաբերեալ, ասում է լրագիրը, մենք ունենք այնպիսի զիտնականներ, ինչպէս պրօֆ. Զիրք իր «Օսմանեան բանաստեղծութեան» ուսումնասիրութիւնը և Ե. Բրաուն, Կեմբրիջի համալսարանի պրօֆեսօր, որ «Ասիական ընկերութեան հանդէսից գլխաւոր աշխատակիցն է: Այդ թուին պատկանում է և պր. Լ. Յ Սարանժ-ը, որի վերոցիշեալ աշխատութիւնը ահազին նշանակութիւն կ'ունենայ մահմետական աշխարհի ուսումնասիրութիւն համար»:

Հիմնուելով բազմատեսակ մանրամասն աեղեկութիւնների վրայ, հեղինակը կազմել է 8 առանձին քարտէզներ կամ պատկերներ, որոնք ներկայացնում են Բաղդադը նրա զարգացման զանազան աստիճաններում: և այդ պատկերների համար հեղինակի գլխաւոր ուղեցոյցը եղել է Տիգրիս գետը, բայց ի նկատի ունենալով, որ Տիգրիսը վերջին հազար տարուայ ընթացքում նշանաւոր կերպով փոխել է իր հոսանքը՝ հեղինակը աշխատել է օգտուել և ուրիշ ազբէւրներից՝ այդ թոյլ կողմն ուղղելու և գետի սկրնական հոսանքը մօտաւորապէս նշանակելու համար: Ամբողջ զրուածքը բաղկացած է 27 գլուխներից, և բացի երեք վերջին գլուխները, ներկայացնում է, կարելի է ասել, մի տեսակ ընդարձակ կօմմենտար (բացատրութիւն) վերոյիշնել 8 պատկերների համար, տալով մանրամասն նկարագրութիւններ քաղաքի զանազան մասերի, ջրանցքների, պալատների, մղկիթների և փողոցների. միայն վերջին երեք գլուխ (22, 23 և 24) պարանակում են իրանց մէջ մի ամփոփ տեսութիւն Բաղդադի պատմութեան Աբբասեան խալիքաների շրջանում սկսած նրա հիմնագրութիւնից մինչև անկումը մօնղօլների աշխարհակալութեան ժամանակ 1258 թուին Քրիստոսից յետոյ Բաղդադի պատմութեան և տեղագրութեան համար այդ շրջանում (ՎIII—

XIII դար Ք. յ.) հեղինակի տրամադրութեան տակ կային բաւական թուռվ մահմեդական պատմագիրներ, մանաւանդ 9-որդ և 10-որդ դարերի վերաբերմամբ յայտնի են Եաղուրի և իբն Սերաբիօն արաբական պատմագիրները, որոնց գրուածքների վրայ առանձնապէս շնչում է հեղինակը: Եւ այս երեք գլուխը «Athenaeum»-ի ասելով ոչ-մասնագէտ ընթերցողի համար ամենահետաքրքրական մասն են կազմում այդ գրքի մէջ. այդտեղ գանուում են Բաղդագի հինգ պաշարումների պատմութիւնը, որոնք նկարագրուած են շատ կենդանի լեզուավ, մանաւանդ առաջին պաշարումը, երբ Հարուս Ալ Ռաշիդի որդի Ամինը 18 ամիս շարունակ պաշտպանուում էր իր եղբայր Մամունի զօրապետների դէմ: Թէ ինչո՞ւ Դամասկոսը թողած՝ Աբբասիանները ընտրեցին Բաղդագի իրանց մայրաքաղաք՝ պարզ և համառօտակի բացատրուած է գրքում: «Նոր մայրաքաղաքը, ասում է հեղինակը Միջագեաքի վերաբերմամբ, պէտք է աւելի դէպի արեւելք լինէր, մօտ Պարսկաստանին, և առեւտրական կարիքների համար պէտք է ունենար ջրային հաղորդակցութիւն ծովի հետ...»: Իններորդ դարում, մօտ 58 տարիների ընթացքում, թրքական պալատական զօրքերի բռնութեան չնորհիւ խալիֆաար տեղափոխուել էր Սամարրա, իսկ Բաղդագը մնում էր նաև հանգապետների իշխանութեան տակ, և այսպիսով եօթը թագաւորների ժամանակ Սամարրան եղաւ Աբբասիան խալիֆաների համար նոյնը, ինչ որ Ալինիոնը և զաւ միջնադարեան եօթ սպապերի համար 1309 թուից մինչև 1371 թիւը՝ Աբբասիան խալիֆաները ահազին գումարներ էին ծախսում պալատների վրայ և բոլորն էլ նոր չինութիւնների սիրահար էին: Սելջուկների գալուց յատոյ, երբ նրանք դարձան նուաճողերի ձեռքին լոկ խաղալիքներ, պալատներ կառուցանելը նրանց գլխաւոր զբաղմունքներից մէկն էր: Այն նկարագրութիւնները, որ թողել են ականատեսները նրանց պալատների և այդիների մասին, աւելի լիշեցնում են՝ Արաբական գիշերների էջերը, քան իրական երեսոյթներ... Իբրև դրան մի ասլացոց՝ հեղինակը պատմում է մի զարմանալի ծառի մասին, որ չինուած էր արծաթից և կշռում էր մօտ 160 փութ. գա կանգնած էր մի պալատի մէջ տեղում և շրջապատած էր մաքուր ջրի աւազանով... «Ծառը ունէր 18 ճիւղ, որոնք բաժանուած էին բազմաթիւ մանր ճուղաւորութիւնների, և զրանց վրայ նստած էին զանազան տեսակ արհեստական թուչուններ ոսկուց և արծաթից, մեծ և փոքր: Ճիւղերից շատերը արծաթից էին, մի քանիսը նոյն իոկ ոսկուց, և դրանք տարածուած էին օդի մէջ իրանց գոյնզգոյն տերեններով, որոնք շարժւում էին քամու հոսանքից, այն ինչ

թուշունները ծածուկ մեքենաների չնորհիւ խաղում էին և երգում...»:

Լօնդօնում վաղուց ի վեր գոյութիւն ունի եղիսաբեկան պարապունքների համար հաստատուած մի ընկերութիւն՝ «Egypt Exploration Fund» անունով, որ հրատարակում Արևելագիտութեան այդ ճիւղի վերաբերեալ ամենայն տեսակ ուսումնասիրութիւններ, չը խնայելով դրա համար ոչ մի միջոց. նա ուղարկում է զանազան զիտնական անձանց և խմբեր՝ տեղին ու տեղը պեղումներ անելու և նորանոր զիւտերով աւելի և աւելի լոյս սփռելու հին Սրեելքի այս խորհրդաւոր երկրի պատմութեան և բնակիչների ազգաբանութեան վրայ... 1900 թուի վերջերում և ներկայ տարոյս սկզբում հրատարակուել է այդ ընկերութեան նախաձեռնութեամբ և ողբօֆեսօրներ Գրեգֆիթի և Դէվլիսի աշխատութեամբ մի քանի հատորներ «Եգիպտոսի հնագիտական տեսութիւն» վերնագրով: Դրանցից առաջն հատորը տալիս է մեղմատ 400 հիերօգլիֆական նշաններ և զանազան պատկերներ, որոնք վերաբերում են Եգիպտոսի պատմութեան Վ-որդ հարստութեան շրջանին (մօս 5000 տարի Քր. առաջ): Հրատարակիչը իր հիմնաւոր բայցարութիւններով աշխատում է՝ յենուելով զրանց վրայ՝ վերականգնել Եգիպտոսի հնագոյն ժամանակների պատմութիւնը: Նոյն նպատակին ծառայում է և նոր գուրս եկած այդ սերիայի Վ-որդ հատորը, որ տալիս է բազմաթիւ կենդանիների, թոշունների և անօթնների նկարներ, որոնք գտնուած են զանազան չիրիմների մէջ, նոյնպէս և պարիսպների վրայ՝ գլխաւորապէս այսահեղ պատահում են այն թոշունները և կենդանիները, որոնք կրօնական նշանակութիւն ունեին: Բացի գրանցից, մի ընդարձակ հատոր «Հնագիտական շարժում» վերնագրով տալիս է այն բոլորը—ինչ որ 1899—1900 թուերի ընթացքում եղիպտագիտութիւնը կարողացել է ձեռք բերել զանազան խնդիրներում. մի քանի յայտնի զիտնականներ այստեղ զետեղել են իրանց ուսումնասիրութիւնները. զըրանցից մէկը խօսում է «Եգիպտոսի մասին Քրիստոնէական շրջանում», միւսը «Եղյն-Հռոմէական Եգիպտոսի մասին», երրորդը «Եգիպտոսը Սրաբների շրջանում». կայ մի առանձին հետազոտութիւն սրբագրերի (հիերօգլիֆների) մասին և այլն...».

«The Literature» չափաթաթերթը իր փետրուարի 16-ի համարում նուիրել է մի յօդուած Ռուսաստանի արդի գրականութեանը. Մի քանի խօսքով ծանօթացնելով ընթերցողներին գեներալ Սուվորօվի հետ, որի հարիւրամեակը տօնուեց անցեալ տարի Ռուսաստանում, հեղինակը բաւական ամփոփ տեղեկու-

թիւններ է տալիս մի քանի նորագոյն ոռւսաց հեղինակների և նրանց վերջին գրուածքների մասին, ինչպէս Վ. Կօրոլենկօ, Պ. Բօրօրիկին, կոմն Լ. Տօլստոյ և այլն. յօդուածի վերջում նա կանգ է առնում Կ. Ռ.-ի բանաստեղծութիւնների հրատարակութեան վրայ և նրա մեղմ լիրիքական տաղանդը» համեմատում է Լեռմօնտօվի հետ:

Ճանապարհորդական ուղեցոյցների յայտնի հրատարակիչ Բեղեկէրը, որ եւրոպական բոլոր նշանաւոր երկիրների մանրամասն նկարագրութիւնը ունի հրատարակած ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներով, այժմ ձեռնարկել է նոյնանման ուղեցոյցի հրատարակութեան Ռուսաստանի մասին վերոյիշեալ երեք դլխաւոր լեզուներով, և անգլիերէն հատորը այս օրերս լոյս է տեսել Լօնդոնում...

Յ. ՔՈԶԱՄԵԱՆ

## ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐ

Մատթէոս Մամուրեան. — Տիկին Սրբուհի Տիւսար. — Հ. Գարեգին վ. Զարբ-  
հանալեան. — Խոեփան Ռոկան:

Քասներողդ դարի առաջին տարին դեռ չենք կիսել, բայց  
արեւմտեան հայութիւնը արդէն երեք զգալի կորուս ունեցաւ.  
մեռան Մամուրեան, և Տիւսար, Հ. Զարբհանալեան եւ Ստե-  
փան Ռոկան: Չորսն էլ գրական գործիչներ:

Նրանք այնքան ինքնուրոյն դեմքեր ունեն, որ մեր նորագոյն  
գրականուրեան պատմութեան մի-մի էջն են ներկայացնում: Մա-  
մուրեան պատկանում է բիւրքահայ գործիչների այն սերնդին, որ  
XIX դարի կեսից իր եռանդուն գործանիկութեամբ անկեղծ ո-  
գեւորութեան մի շրջան բացեց հայկական գրականուրեան եւ  
կեանի մէջ, մի շրջան, որ զախս էր յաջորդելու հին կրեական  
սերնդին եւ, միանգամայն չը հեռանալով նրանից, աւելի լայն  
հանրամարդկային սկզբունքների, բաղաբակրութեան եւ ազ-  
գուրեան սկզբունքները բարողելու: — Տիկին Տիւսար նշանաւոր  
է ոչ այնքան իր գրական երկերով, որքան այն հանգաման-  
քի ժնորհիւ, որ նա առաջին վիազագրող հայուհին էր եւ կեն-  
սական ահագին նշանակութիւն ունեցող մի դատի — կանանց հար-  
ցի — ներկայացուցիչն էր: — Հ. Զարբհանալեան մեր կրեական  
բազմարիւ գրողների շարեւմ կարողացաւ բոլորովին առանձնա-  
կի տեղ գրաւել, ընտելով մի այնպիսի մասնանիւղ, որին շատ-  
թէրն են նույրուել եւ որի մէջ ոչ ոք երա չափ անուն չէ համեյ:   
Խոկ Ստեփան Ռոկանի մասին գաղափար է տալիս այս Ն-ի  
«Պարք. Հրատ.» մէջ տպուած նկատողորխներ:

Ծանօթանանք այս անհետացած դեմքերի հետ առանձին-  
ուանձին:

### I

Մատթէոս Մամուրեանը ծնուել է 1830 թուականին Զմիւռ-  
նիայում, աղքատ ընտանիքի մէջ: Մանկութեան հասակում իր

**Ճնողների** հետ տեղափոխուեց Եզիսպտոս, ուր երեք տարի մի յունական դպրոցում սովորեց յունարէն և արարերէն լեզուները: 1842 թուականին Մամուրեան ընտանիքը դարձեալ Զմիւռնիայումն է և 12 տարեկան Մատթէոսը մտնում է հայոց Մեսրոպեան դպրոցը:

Ժամանակը, միջավայրը այնպէս էին, որ առաջ էին քառշում ընդունակ, գործունեայ մարդկանց: Ժամանակը Գիւղանէի «Թանգիմաթի» ժամանակն էր, իսկ միջավայրը—Զմիւռնիայի պէս նշանաւոր հայկական գաղթականութիւնը:

1839 թուականին սուլթան Աբդիւլ-Մէջիդ Գիւղանէի պալատում հրատարակած Խաթթը-Շէրիֆով երաշխաւորում էր սանսուիր իր բոլոր հպատակների կեանքի, գոյքի, սեփականութեան ասլահովութիւնը և անխտիր ամենքին հաւասար իրաւունքներ էր խոսանում: Այդ նշանաւոր հրովարտակը նոր դարագլուխ էր բաց անում թիւրքահովատակ քրիստոնեաների համար. նրանց մէջ սկսւում է ազգայնական և առաջադիմական շարժում. շարժում են այն քրիստոնեայ տարրերը, որոնք կենսունակութեան և վերածնութեան ոյժ ունեին իրանց մէջ: Այդ ոյժից զուրկ չեն և հայերը: Կ. Պօլում նրանք արգէն նշաններ էին ցոյց տալիս, որ չեն ուղում յետ մնալ ժամանակի ու գուց և պահանջներից: Բայց կար մի ուրիշ տեղ էլ, ուր այդ նշանները աւելի շօշափելի էին: Եւ դա Զմիւռնիան էր:

Միջերկրական ծովի այդ կարևոր նաւահանգիստը վաղուց էր ծանօթ վաճառական հայերին. բայց փոքր ի շատէ նշանաւոր հայ գաղթականութիւն այնտեղ սկսեց կազմուել XVIII դարից: Մի այնպիսի տեղ, ուր Արևմուտքը անդադար շփւում էր Արևելքի հետ, հայերը թմրած ու մեռած չը մնացին: Երեսն են գալիս հիմնարկութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ էին Զմիւռնիայի հայերը: Նոյն դարի վերջում Զմիւռնիայում հիմնուած է Մեսրոպեան դպրոցը. 1801 թուականին ժողովրդական համգանակութեամբ բացում է Լուսաւորչեան հիւանդանոցը աղքատների համար: 1820 թուականին այնտեղ կայ օրիորդաց զպրոց. 1825-ին վերանորոգւում է Մեսրոպեան դպրոցի շնութիւնը, իսկ երեսնական թուականների սկզբում նոր շինուալութիւն է կառուցւում օրիորդաց դպրոցի համար: Կրթական գործը զարգանում է, նախանձելի դրութեան հասնում: Նոյն երեսնական թուականներին Մեսրոպեան դպրոցի տեսուչ է նըշշանակուում Անդրէաս վարժապետ Փափաղեանը, Եւրոպայում ճամապարհորդած մի ընդունակ և արդիւնաւոր մարդ, որ բարձրացնում է դպրոցի նշանակութիւնը, նրա ոսկեդարի սկիզբն է

դնում: Նա էր, որ գպրոցի մէջ մտցրեց խոալտկան, թիւրքական, յունական, ապա և ֆրանսիական ու անգլիական լեզուների գասաւամսդութիւնը: Դպրոցը այնքան մեծ հոչակ է ստանում, որ հեռաւոր քաղաքներից էլ՝ աշակերտներ են ուղարկում այսուհետ: Անա այդ ոսկեզարի ժամանակն էր, որ Մամուրեանը մտաւ Մեսրոպեան գպրոցը: Այդանու զատախարակուեցան և այն երիտասարդները, որոնք Զմիւռնիայում մի բնակչութեան գրական շրջան սկսեցին և ծաղկեցրին: Վերջապէս յիշենք, որ 1840-ական թուականներին Զմիւռնիայում հիմնուեցան «Սիւնեաց» և «Արագածունեաց» բարեգործական ընկերութիւնները: Հիմնադիրները Մեսրոպեան գպրոցի աշակերտներն էին, խրախուսողը, վեկավարողը—Անգրէսա վարժապետ Փափաղեանը: Առաջին ընկերութիւնը զուտ կրթական էր և նախատակ ունէր ուսում տարածել Զմիւռնիայի թեմի հայերի մէջ: Իսկ երկրորդը զուտ գրական-հրատարակական ընկերութիւն էր:

Դպրոցական առաջադիմութեան հետ Զմիւռնիան շատ նըշշանաւոր գեր էր խաղում և գրական առաջազիմութեան մէջ: Դա այն քաղաքն է, որ այնքան ահազին գործ է կատարել մասնաւոր մեր աշխարհաբար լեզուի պատմութեան մէջ: Վերին առողջանի հետաքրքրական է այն հանգամանքը, որ թէ թիւրքահայերի և թէ ոռուսհայնրի մէջ աշխարհաբարի առաջին կողմնակիցները, նրան գործնական լեզու գարձնողները բոլորական միախառներն էին \*): Նրանք համարեա միահամանակ են երևան գալիս Խուսաստանի և Թիւրքիայի հայերի մէջ: 1830-ական թուականներին Մալուա կրդուց Զմիւռնիա աեղափախուեցին ամերիկացի և ամերիկացի միախառները և մեծ նուանգով դործի կալան: Բացունց Գուլիքէլմոս Կոփֆիլիթի նշանաւոր արպարանը և կրօնական զրքերի մի երկար շարք սկսեց հրատարական աշխարհաբար լեզուով: Լաւ էին հասկացել այդ միսիօնարները թէ ինչպէս պէտք է քարոզել ժողովրդին: 1835 թուից նրանք սկսում են հրատարակել «Շտեմարան Պիտանի Գիւնեաց» ամսաթերթը. և զա մի այնպիսի ժամանակ, երբ

\*) Պատմական ճշմարտութիւնը պարտաւորեցնում է մեղ տակը լուեղ, որ աշխարհաբար լեզուն վաղուց գործ ածել էին սկսել Վենետիկի Միլիթարեանները Բայց զա մի ակտուայ հարկ էր, որ տալիս էին նրանք ժամանակին: Ամեն անգամ նրանք զանգաւում էին, թէ աղջը չը դիտէ զրաբար, ուստի իրանք հարկադրուած են աշխարհաբար զրել գռնէ մի քանի զրքեր, որոնք նշանակուած էին ժողովրդի համար Միլիթարեանները աւելորդ էին համարում մշակել աշխարհաբարը և մինչև 1840-ական թուականները նրանք գործ էին ածում Կ. Պոլսի զատախարաբառը, որ միքն էր թիւրքերէն բառերով:

ուրիշ որ և է անդ հայերէն պարբերական հրատարակութիւն չը կար: Առաջին համարի մէջ խմբագրութիւնն առում էր. «Քանի որ ան աղնիւ լեզուն (գրաբարը) աղգին մեծ մասը չի հասկը-նար, և քանի որ ծշմարիտ մարդասիրութիւնը միշտ շատերուն օգտատին կը նայի՝ քան թէ քիչերուն բաղձանքը կատարելու, արժան դատեցանք, որ մեր Շահմարանը ուսմիօրէն ըլլայ: Ա-տելի է մեղի գիտութիւնը կողազաքի տակ դնել, որ աղքատը և տգէտը չի կրնայ առնել անոր համը: Ասիկա ջուրը ու օդը առ նոնցմէ արգելել է \*):

Մրցակցութիւնը կինդանութեան աղբիւր է: Յաջորդ տա-  
րին Զմիւնիայի մէջ սկսում է հրատարակուել «Արշալոյս Արա-  
րատեան» նշանաւոր լրագիրը. դա առաջին քաղաքական և հա-  
սարակական լրագիրն էր մեզանում, որ գործ ունէր բնիթացիկ  
կեանքի հետ: 1843 թուականին վերև յիշած «Արագածունեաց  
ընկերութիւնը» սկսեց հրատարակիլ «Հայրենասէր» անունով լր-  
րագիրը և գրքեր տպել ժողովրդի համար:

Ահա այդպիսի միջավայրում էին անցնում Մատթէոս Մա-  
տուրեանի գործոցական սարբները: Բայց մննակ Զմիւնիան չէր  
նրան դաստիարակուղը: Այդտեղից Մատուրեանը դնաց Պարիզ,  
ուր մտաւ Մարագեան վարժարանը:

Հնդկաստանյի Սամուել Մուլագենանի միլիոններով բա-  
ցուած այս զոլորոցը, որ նոր էր Խոալիացից տեղափոխուել Պա-  
րիզ, նոյնպէս իր ամենալաւ, սկինզին օրերումն էր գանւում:   
Վենետիկի Մխիթարեանները, որոնց ձեռքին էր գանւում Մու-  
րագենան վարժարանը, պատրաստում էին այնպիսի աշակերտու-  
ներ, որոնք նշանաւոր համագուստացան թիւքքահայնրի կեանքում:  
Այդտեղից էին գուրս եկել այն լուսամիտ երիտասարդները, ու-  
րոնց առաջին գործը եղաւ հաշտութիւն և համերաշխութիւն  
մտցնել լուսաւորչական և հայերի մէջ: Այդ հաշտու-  
թիւնը անհնարին էր եղել գարնուից ի վեր. բայց մինչև այդ  
ամեն ինչ դանւում էր հոգիարականների ձեռքին, որոնք չէին  
կամննում հաշտուել: Այժմ ծնուել էր ընդհանուր աղգային գա-

\*). Մի բաղգատութիւն դնելու համար թէ ինչ էին մտածում նոյն աշխարհաբարի մասին Մխիթարեան հայութը, որոնք այն ժամանակնե-  
րում զեռ հալոց դրականութեան տեմբրն էին, բերենք մի կոտր չ. Աւ-  
գերեանի „Դեղ կենաց“ գրքի վերջանից (Աննեաթիկ, 1842). „Անոնկ է  
նէ մեր աղղին մէջն, որ կուղենք Խոտուծով ծաղկեցնել զներքին և զար-  
տաքին գիտութիւն, էն առաջ պիտ որ չանանք զբաղիտութեան գուոը  
բանալ, զուոը դո՞ց է նէ, ինչով կը բացուի. յախտ է թէ բալլիքով. զրոց  
գիտութեան բալլիքը ո՞րն է. յախտ է թէ զրոց լեզուն, որ առել է զրա-  
բառ կամ զրաբարբառ”:

զափարը և այդ ասպարէղում միմնանց հետ ձեռք-ձեռքի տուածաշխատելու համար հայ-կաթոլիկ երիտասարդութիւնը 1848 թուին հիմնեց կ. Պօլսում «Համազգեաց» բարեգործական ընկերութիւնը, որ ունէր շատ լայն ծրագիր և որի նպատակն էր նպաստել հայերի մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան։ Միսիթարեան վարդապետները եռանդուն մասնակցութիւն ունէին այդ համազգային գործի մէջ։ Բայց նրա դէմ զինւում է կաթոլիկ ֆանատիկոսութիւնը, որի ներկայացուցիչն էր Հասուն պատրիարքը։ Աշխատում են կործանել «Համազգեաց» ընկերութիւնը, բայց կրթուած երիտասարդութիւնը արիաբար դիմադրում է կղերի սև արարքներին և ընկերութեան չուրջը բորբոքում է մի շատ տաք պայքար, որի մէջ արծարծւում են ազգայնութեան խնդիրը, կրօնական խորութիւնների վնասներն են ապացուցում։ Սա մի գեղեցիկ կրթարան էր ժողովրդի համար, այն ժողովրդի, որ երկար-երկար ժամանակ այնքան տառապանքներ ու տանջանքներ էր կրել կրօնական երկապառակութիւնների պատճառով։ Հասունը, վերջապէս, կարողանում է մատնութեան միջոցով փակել տալ «Համազգեաց» ընկերութիւնը, բայց կրթուած երիտասարդութիւնը շարունակում է կոփւը նրա դէմ։ Կազմուում են հասունեան և հակահասունեան կուսակցութիւնները, որոնց ընդհարումները տեսում են երկար տարիներ։ Հասունեանները օտարամոլ, փանատիկոս կաթոլիկ հայերն էին, իսկ նրանց հակառակորդները հիմնում էին ազգայնութեան վրայ, ասում էին թէ կաթոլիկ լինելը ոչ ոքին չէ արգելում ճշմարիտ հայ լինել Եւ հայութեան գաղափարը հասունանում էր այդ վէճերի մէջ, բաժանուելով դաւանական հարցից, որ զրանից առաջ աղջութեան միակ նշան էր համարւում։

Այսպէս էր այն երիտասարդութիւնը, որ կրթուում էր Եւրոպայի հոգի վրայ, գլխաւորապէս Մուրադեան վարժարանում։ Այդ գպրոցում գործում էին այնպիսի նշանաւոր Միսիթարեաններ, ինչպէս էին Գարրիէլ Այլալովսկի, Սարգիս Թէոդորեան և ուրիշները։ Բայց Մուրադեան վարժարանը, այնուամենայնիւ, մի փակ կղերական հիմնարկութիւն էր, որի մէջ ամեն միջոց գործազրում էր, որպէս զի երկրորդ հանրապետութեան ժամանակի Պարիզը իր ազատարար, հակակղերական հոսանքների մէջ չառնէ աշակերտներին։ Հոկողութիւնը այն աստիճան խըստութեան էր համանում, որ եթէ մէկի ծնողները Պարիզում էին ապրում, նա կարողէր այցելել նրանց միայն դպրոցի վերակացուի հետ միասին։ իսկ գիշերը մնալ նոյն իսկ ծնողների մօտ

չեր թոյլատրւում \*): Ահա այդ հանգամանքի չնորհիւ կրթութիւնը գպրոցում զլսաւորապէս կրօնական էր և այսունդից դուրս եկածները չափաւոր մտածմունքների տէր մարդիկ էին. մի կողմից սաստիկ հայրենասէր, միւս կողմից եւրոպական լուսաւորութեան կողմնակից, բայց, ի հարկէ, չափաւոր աստիճանով. կրօնը շարունակում էր մնալ նրանց համար ամենակարեսր բանը:

Այսպէս էր Մամուրեանը. այսպէս էր և նրա ընկեր և հայրենակից Մարկոս Աղաբէկեանը: Կեանքի մէջ այդ երկուսը միշտ մի և նոյն ուղղութեան հետևեցին. ընդունելով կրօնական երկպառակութիւնների վեասակարութիւնը, ընդունելով որ եւրոպական լոյսը պիտի հայերի վերածնունդը պատրաստէ, նրանք ազգայնութեան հիմք և միակ ապաւէն հրատարակում էին լուսաւորչական կրօնը, հակառակ էին իրանց ուսուցիչ Մխիթարեաններին \*\*): և օտարագաւան հայերի վերաբերմամբ միայն այդ ցանկութիւնն ունէին, որ նրանք վերադառնան մայրենի եկեղեցու գիրկը, որովհետեւ լուսաւորչական կրօնն է, որ պահել է և պիտի պահէ հայութիւնը: Դրօշակ դարձնելով «կրօն և ազգութիւն», նրանք պահանջում էին, որ կրթութիւնը ունենայ այսպիսի նշանաբան. «Բարգաւաճումն հայրենասիրութեան. Զարգացումն Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ. Ծաւալումն ազգային լեզուի՝ ուսմանց և զիատութեանց միջոցով»: Այս ուղղութեան բնորոշ ներկայացուցիչ հանգիստացաւ մեզանում «կըռունկ» ամսաղիրը, որին աշխատակցում էր և Մամուրեանը: Դա, ինչպէս յայտնի է, բռնում էր հին սերնդի և նոր, ազգատ մտածող երիտասարդութեան մէջտեղը. դա խաւարամիտ «Մեղուն» չէր, բայց ոչ էլ համարձակախօս, արմատական վերանորոգութիւններ պահանջող «Հիւսիսափայլը»: Վերջինիս խիստ պահանջներից «Կոռունկը» վրդովլում էր, բայց «Մեղուի» կրօնամոլ ու հնամոլ քարոզների վերաբերմամբ հանգիստ, նոյն իսկ բարեհաճ էր մնում:

Բայց և այսպիսի դաւանութիւնների տէր երիտասարդութիւնը նշանաւոր առաջադիմութիւն էր իր ժամանակի համար Մտնելով ասպարէզ, նա ընդհարուեց հին սերնդի հետ, որովհետեւ ունէր աւելի լայն աշխարհայեացքներ, չէր խնկարկում աղայական և ամիրայական դասակարգին, այլ պահանջում էր, որ

\*): „Յայտարարութիւն Մուրագեան վարժարանին որ ի Փարիզ“: Վենետիկ, 1847.

\*\*): Պէտք է ասել որ Մխիթարեաններն ել չը կարողացան պահուել իրանց բռնած պատուաոր դիրքում. նրանք հպատակութեան հռոմի պահանջներին, հաշտուեցան Հասունի քաղաքականութեան հետ և զցեցին իրանց վարկը:

ժողովուրդը դառնայ իր եկեղեցական և կրթական զործերի տէրը  
և կառավարողը, Մի երիտասարդութիւն էր դա, որ մեղք չէր  
համարում կարգալ վօլտէրը, Մօնտէպքէն, երբեմն խօսում էր  
Նրանց անունից: Հին սերնդի ամենանշանաւոր ներկայացու-  
ցիչներից մէկը, Չամուրծեան, «անկրօն» անունն էր տալիս  
Մամուրեանին:

Վերջացնելով ուսումը 1850 թուականին, Մամուրեանը  
մինչև իր կեանքը վերջը նուիրուած էր գպրոցական և զբական  
դործունէութեան: Երկար ժամանակ նա ուսուցչութիւն է արել,  
20 տարի Զմիւռնիայի Մեսրոպեան գպրոցի տեսուչն է նղել:  
Նրա մանկավարժական գործունէութեան մասին մնաք երկար  
խօսելիք չունենք, այնքան աղքատ են մեղ մօտ եղած տեղեկու-  
թիւնները: Կը ըերենք մի կտոր Մեսրոպեան գպրոցի մի տեղեւ-  
կազրից, որից երեսում է, թէ ինչպիսի ուղղութիւն էր տալիս  
Մամուրեան կրթական զործին:

Նարգն երբորդ բարձրագոյն անուանեալ պարտնակէ քառակակ դա-  
սաբանս, բարոց առաջինն և երկրորդ հրահանգին յառաջին մասն զրարառ  
քերականութեան, երրորդն ի հոմաձայնութեան, իսկ չորրորդն պարապի  
ի կրթութիւնս հոետորական շարադրութեանց և բարձր թարգմանութեանց  
և ճաշակի հայացի ոճոյ հանդերձ ուսմամբ նախնեաց ընտիր մատենա-  
գրութեանց: Ուսումն կրօնի և պատմութեան և աշխարհազրութեան և թուո-  
գիտութեան և եկեղեցական և ազգային երգոց աւանդի ըստ կտրդի և աս-  
տիճանի զառարանաց: Նոյնպէս հրահանգին աշակերտք ի վարժո բնակի-  
տութեան, տոմարակալութեան, զաղղիերէն, անզիերէն և տաճկերէն լի-  
դուսց:—Յաւորս սուրբ Զատկի և սուրբ Ծննդեան աշակերտք բնոր հակողու-  
թեամբ ներքին վարժապետաց մատչեն ի սուրբ Հաղորդաթիւնի \*):

Սյդ տողերը կարգացուել են 1875 թուին, գպրոցի յիս-  
նամեայ յօթելեանի օրը:

Դիմենք այժմ Մամուրեանի զրական գործունէութեան, որ  
սկսուել է ուսուցական զործունէութեան հետ միաժամանակ:

Մենք դարձնեալ չը պիտի աչքից հեռացնենք ժամանակը,  
հանգամսնքները: Ցիմնական թուականների առաջին կէսում  
սկսուեց Նրիմի պատերազմը: Թիւրքիան դաշնակից էր անզիա-  
ցիների և ֆրանսիայիների հետ: Պատերազմը Բօնփօրի ափերն  
է բերում մեծ քանակութեամբ եւրոպացիների: Սկսում են բար-  
քերի և հասկացողութիւնների փոփոխութիւններ: 1856 թուա-  
կանին, երբ դեռ չէր կնքուել Պարփզի դաշնազրութիւնը, սուլ-  
թան Արդուլ-Մէջիդ հրատարակեց իր Խաթթը-Հիւմայունը, ո-  
րով դարձեալ իրաւունքներ և հաւասարութիւն էր չնորհւում  
քրիստոնեաներին: Այդ թուղթը հարկաւոր էր Թիւրքիային, որ-  
պէս զի Պարփզի վեհաժողովում խօսք չը բացուի քրիստոնեա-

\*) Հ. Քոսեան—«Հայք ի Զմիւռնիա», Վիեննա, 1899, էր. 157:

ների դրութեան մասին: Բայց և այնպէս, Արգիւլ-Մէջիղի կառավարութիւնը բաւական համբերով և երկայնամիտ էր. և բարեկարգութիւնների մի հոսանք առաջացաւ Թիւրքիայում: Բանն այնտեղին հասաւ, որ նոյն խակ ծրագիր կազմուեց քրիստոնեաներից էլ զիսուոր վերցնելու մասին: Մամուլը շատ աղատութիւններ ունէր, արծարծւում էին աղղային հարցեր:

Այդ ժամանակամիջոցը մի նոր խթան հանդիսացաւ, որպէս զի կ. Պօլսի հայ ժողովուրդը առաջ մզէ իր իրաւունքների գամալը, որ սկսել էր վազուց: Կովուր ժողովրդական տարրերի և ամիրայական բռնակալ դասակարգի մէջ ընդունեց աւելի տաք կերպարանք: Կրթուած երիտասարդութիւնը ժողովրդի հետ էր և փառաւոր յաղթանակ տարաւ, խօմբագրելով և ընդունել տալով Թիւրքիայի հայոց Սահմանադրութիւնը: Դա, ի՞նչպէս յայտնի է, վարչական մի բարդ պիստեմ էր. հայ ժողովուրդը իր ընտրած պատգամաւորների միջոցով կարգադրում էր մինչի այդ որատիւրքի իրաւուսութեան ենթարկւած աղղային-եկեղեցական գործերը: Իրեն մի նոր, լուսաւոր երեսյթ, Սահմանադրութիւնը ահապին վէճներ և պայքարներ բացաւ: Բայց հին, հակածողովրդական սիրունդը ջարդուած մնաց և Սահմանադրութիւնը գործադրուեց 1860 թուականից: Թիւրքաց մայրաքաղաքում չը անսնուած բան էր 220 երեսփոխաններից կազմուած այդ մասնաւոր հայակական պարլամենտը, որ կուչում էր Ազգային ժողովը. և թիւրք կառավարութիւնը ոչինչ չունէր զրա դէմ: Յայտնի է թէ այդ հիմնարկութիւնը որքան բարձրացրէց թիւրքահայերի աղղային սպիտի հրճուանկների և տօնախմբութիւնների առարկայ էր նա առաջնորդի ընթացքում:

Այդ մէծ, թէ ոչ միանգամայն կատարեալ զործը պատրաստող երիտասարդութեան մէջ էր և Մամուլնեանը. նա աշխատում էր թէ զործով, իբրև պատրիարքարքունի պաշտօնեայ և թէ գրչով, իբրև հրապարակախօս: Նրա զրիչը բաւական յայտնի էր գարձել յիսնական թուականների կէսից թէ ինքնուրոյն յօդուածներով և թէ թարգմանութիւններավ: 1870 թուականից աշխատակայում էր «Կուտնիին» և միաժամանակ զրում էր և կ. Պօլսի ու Զմիւռնիայի թերթերում: 1864 թուականին նա Զմիւռնիայից կ. Պօլիս է փոխազրում «Ծաղիկ» հանդէսը և սկսում է ինքը խմբագրել, մնալով պատրիարքարքունի պաշտօնեայ: Այդ ժամանակներում նա զրում էր «Վրոյր» կեղծ անունով: 1865 թուին հեռանում է կ. Պօլիս և ընդ միշտ հաստատում Զմիւռնիայում: Այստեղ մննք ներկայ ենք մի զբական վերին աստիճանի եռանդուն չարժման:

Շարժման գլուխ կանդնած է մի հայ ապարանատէր Տիգ-

րան Յարութիւն Տէտէեան, որ 1853 թուականից սկսել էր հայերէն հրատարակութիւնների շարքը։ Դամի անխոնջ եւ երախտաւոր հրատարակիչ էր, որի նմանը հայերիս մէջ չէ տեսնուած։ Նա ինքն էլ գրապէտ և լոզուագէտ մարդ էր, լուսաւորուած, գրական ճաշակի տէր։ 1853-ին նա հրատարակեց «Արփի Արարատեան» ամսագիրը, որի մէջ իբրև յաւելուած տպւում էին թարգմանութիւններ Շէքսպիրից, Մօլիկերից և այլ ինքնուրոյն ու թարգմանական գործեր։ Այդ յաւելուածները յետոյ առանձին գրքեր կազմվեցին։ Հետոհետէ Տէտէեան տպարանից հրատարակուեցան բազմաթիւ գրքեր։ Արևմտեան աշխարհաբարի մշակման մի փայլուն ժամանակամիջոցն էր դա։ Թարգմանուում էին եւրոպական առաջնակարգ հեղինակներ, հայերէն գիրքը ժողովրդականանուում էր, որովհետև թարգմանութիւնները մեծ մասամբ վիպական էին։ Տէտէեան հրատարակութիւնները տարածուեցան ոչ միայն Թիւրքիայում, այլ և Ռուսաստանում, մատակարարելով ընթերցանութեան նիւթ։ Թարգմանուեցան Վիկտոր Հիւգօֆ «Թշուառները», «Նօտր Դամ Պորիկու», Մուփիսի «Գիւլիվէրի ճամբորդութիւնը», Միւսէի «Դարուս մէկ զաւակի խոսանվաննքը», Մօլիկի «Ազան», «Ակամայ բժիշկ», «Տարտիւֆ», Շէքսպիրի «Հոսմէոս և Զուլիէտ», Լամարտինի «Ռաֆայէլը» և այլն և այլն Զմիւռնիայի թարգմանիչներից յիշատակութեան արժանի ևն Դրիգոր Զիլինկերեան, Սարգիս Տէր-Գասպարեան, Մեսրոպ Լազարեան, Տէտէեան եղբայրներ, օրիորդներ Լիւսի Պալասաննեան, Մարիամ Ճերմակեան, Կոռնելիս Փափաղեան։

Այս բոլոր հրատարակութիւնները, ի հարկէ մի կամ երկու տարուայ գործ չեն։ Տէտէեան տպարանը երկար դոյտութիւն պահպանեց։ Հիմնադիրը վախճանուեց 1868-ին, բայց նրա եղբայրները շարունակեցին գործը և եօթանանական թուականներին։

Մամուրեանին Զմիւռնիայի թարգմանական հրատարակութիւնների մէջ պատկանում է մի պատուաւոր տեղ։ Նա թարգմանել է Եօժէն Սլուի «Գաղանիք Պարիզու» (8 հատոր), Դիւմայի «Երկը հրացանակիրք» (3 հատոր) և «Քանն տարի եսք»։ Վալտէր Սկոտտի «Իվանոէ» (3 հատոր), Գէօթէի «Վէրժէր», Վոլտէրի «Միքրօ-Մեղաս»։ Թարգմանել է Նաև «Բրաժլօն գերկոմս» (12 հատոր), «Ամօրի», «Ամուրի» մը կեանքը» և այլն։ Թէև նիւթերի ընտրութեան մէջ Մամուրեանը չէ կարտղացել մի յայտնի ուղղութեան, քննական հայեացքի հետեւել, բայց և այնպէս, մեր կարծիքով, թարգմանութիւնները նրա զրական գործունէութեան մէջ ամենակարենոր աելն են բռնում։ Նշանաւոր է մանաւանդ արաբական հոչակաւոր «Հազար և մէկ գիշերներ»-ի թարգմանութիւնը (6 հատոր), որ երկու հրատարակու-

թիւն ունեցաւ և կարդացւում էր յափշտակութեամբ։ Մամուրեանի լեզուն առհասարակ հարուստ է, հարթ և ճկուն։

Մի երկար չաքը են կազմում Մամուրեանի և ինքնուրոյն հեղինակութիւնները. բայց այսուել այլ ես լաւ յատկութիւններ շատ քիչ ենք գտնում։ Ի՞նչ ասէք որ գրած չը լինի նա. և անաջող, չոր ու ցամաք դասագրեր, և «Առողջաբանութիւն» աղջկանց, և «Իրաւաբանութիւն», և «Առտին անտեսութիւն», և «Հայոց պատմութիւն», և վէպ, թատերագրութիւն...

Առհասարակ Մամուրեանը չէ թողել մի ինքնուրոյն գործ, որ ցոյց տար նրա մէջ մեծ տաղմանդ, որին վիճակուած լինէլ երեւոյթ կազմել մեր գրականութեան մէջ։ Փոքր ի շատէ ուշագրութեան արժմանի են նրա երիտասարդական հասակի գրուածքները։ «Կոռունկի» մէջ տպուած նրա «Անդլիական Նամականի» յօդուածները խօսում են գլխաւորապէս հայերի պատմական անցեալի մասին և տալիս են թոռուցիկ լուսաբանութիւններ, որոնք նոյն իսկ այն ժոմանակները մեծ նորութիւն չէին կարող համարուել։ Աւելի հետաքրքրական է «Հայկական Նամականի» գիրքը, որի մէջ Մամուրեանը հաւաքել է զանազան տեղերում տպագրած իր յօդուածները։ Այդտեղ շօշափում են ժամանակակից հարցեր և հեղինակը ցոյց է տալիս քննական կարողութիւն, լայն հայեցքներ։ Գրաւիչ է այդտեղ մանաւանդ լեզուն, տպաւորող, պարզ, կիսավիպական։ Մամուրեանը Սահմանադրութեան կոյք երկըրպագուներից չէր. պայտապահնելով ժողովրդական քուէի սկզբունքը, նա մի և նոյն ժամանակ կենդանի գործ էր պահանջում, մարտնչում էր քարացնող ձևականութեան գէմ և միշտ առաջ էր քաշում առամանադրական բարիքներից զուրկ զաւառները։ Բայց այդ նամակների մէջ գուշ իզուր կ'որոնէք խոր ուսումնասիրութիւն, հարցերի բազմակողմանի լուսաբանութիւն, մի լան, որ միշտ պակասել է թիւրքահայ հրապարակախօսութեան։ «Հայկական Նամականին» ֆէլիէտօնական փոքրիկ գրութիւններ են, կարդացւում են հետաքրքրութեամբ, բայց խոր, համոզիչ տպաւորութիւն չեն թողնում։

Մնում է այժմ խօսել Մամուրեանի խմբագրութեան գործունէութեան մասին։ 1871 թուականից նա սկսեց «Արենելեան Մամուլ» ամսագրի հրատարակութիւնը, որ շարունակ ւում է և այժմ։ Մենք չենք կարող մանրամասն խօսել նրա մասին, որովհետեւ լաւ չենք ճանաչում նոան։ Սակայն ընդհանրապէս յայտնի է, որ ամսագրին մանաւանդ հօթանամական թուականների ընթացքում, լուրջ օրգանի համբաւ ունէր արևմտեան հայերի մէջ։ Քանի տպագրական պարմանները նպաստաւոր էին աղատ գատելու համար, Մամուրեանը գրում էր ինքնարոյն յօդուածներ։

որոնք ազգու էին և չէին կարող տպաւորութիւն չը թողնել։ Խմբագիրը յայտնի էր մանաւանդ «Շահնուր» ստորագրութեան կրող իր նամակներով։ Թէև ամսագիրը, չը նայած իր փոքր ծառալին, լցւում էր մեծ մասամբ թարգմանական գրուածքներով բայց և այնպէս իրրե զրական մի ժողովածու նա աւելի լաւ բազմագակութիւն ունէր, քան միւս, ժամանակակից պարբերական հրատարակութիւնները։

Մի հիմնական պակասութիւն, սակայն, չէր կարող իր խոր կնիքը չը գնել «Արևելեան Մամուլի» վրայ. որքան առաջ էր զընում ժամանակը, այնքան յետ էր մնում ամսագիրը. Մամուրեանը ծերացող հրատարակախօս էր. առանց այդ էլ նա հրապարակ էր իջել սահմանափակ հայեացքներով, և շովինխատական տենդինցիաներն սկսեցին խեղդել նրա գործունէութիւնը, քանի որ կեսանքի մէջ տուած էին դալիս նոր հոսանքներ, նոր զաղափարներ։ 1884 թուականի կաթողիկոսական ընարութիւնների ժամանակ նա այնպիսի զիրք բռնեց, որ տապալեց նրան էլ, նրա ամսագիրն էլ։ Իսկ Թէւրքիայում վերջին տամնեալ տարբիներում տիրող իրականութիւնը բոլորովէն սպանեց ամսագիրը, գարձնելով նրան լոկ տպագրած թուղթ, ինչոքս և առնասարակ բոլոր միւս պարբերական հրատարակութիւնները։ Այսաւել, ի հարկէ, հանգամաննքներն են մնալաւոր Բայց խղճմտանքով դատելով, Մամուրեանը նոյն իսկ տմնեալաւ. հանգամաննքների մէջ էլ չը կարողացաւ խոչըր, լուսատու գործիչի, դեկավարող հրապարակախօսի զիրք զրաւել։

Դա զրական մի միջակութիւն է, բայց զարմանալի աշխատանքը, բնողմնաւոր մի զրիչ Երկար, շատ երկար է նա մնացել մեր զրական ասպարէզում, արել է շատ բան, մնացել է մինչև կեանքի վերջը մի յայտնի շընանի հասկացողութիւնների ներկայացուցիչ։ Այս հանգամաննքներն էլ բաւական են, որ նա արեմտեան հայերի զրական պատմութեան մէջ իր տեղն աւնենայ։

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սղբիւր», 1900 թ.—իրրև մանկական թերթ «Ազգիւրը» միակն է մեր մասնակի մէջ և շատ կարևոր է մեր ընտանիքներում և զպացներում։ Դժբախտաբար ձնդրիւրը չէ հասնում իր նպաստակին։ Տա շատ պատճառներով, նոյն և առաջ մանկական թերթի խմբագիրը պիտի լինի ամենանուրբ հոսուսութեամբ մի մանկալարժ, որ կարողանաւ իր առաջը ձգուած ձեռագիրներից ջոկիլ պիտանի նիւթերը աւելորդ և վեասակար բաղլաստից։ Հմուտ և ձեռընհաս խմբագրութեան բացակայութիւնը ակներմ է ներկայ «Ազգիւրը»։ Գրամէջ համազաւելու համար բատական է ծանօթանալ «Ազգիւրի» մի քանի համարների հետո։

№ 1-ը ունի մի պատճութիւն՝ «Խաղացածուն», որի մէջ նկարագրուած էն չար մանուկի արարքները։ Հարութեան բոլոր ձեռքը և անսակեները այսակը են հաւաքուած։ Հարսածին լսելով, ինչպէս քոյլը մի առ մի կարգում է նրա բոլոր արարքները իր լիշտակարանի միջից, աւելի ու աւելի խճահարուում է և քրոշ ընթերցանութեան առարտումով վերջանում է չարաճճի անկարգ կեանքը։ Սա մի պատճուծք է անբանկան իր վերջարանով։ Բացի այն որ չը պէտք է կարդալ տալ չարերին, իսկ պէտք է նաև լս վարքի մանուկների ձեռքից, պատվինում մանուկների աչքը ամսից առաջ կ ընկնեն այն հերոսութիւնները, որ արել է հերոսը։ Նըրանք կը ծիծաղեն այդ բոլոր ա-

բարքների վրայ, իսկ վերջարանը կը սպազի նրանց աչքից։

Ապրացէ՞ք „Allegro“-ից թարգմանուած սոսանատը, ալզեօք ո՞րուեղ էր սպազած ոչդ բանաստեղծութիւնը, որի իմաստն անհասկանալի է ո՛չ միայն 10—12, ալլ և 14—16 տարեկան տղի համար, ևս հաւատացած եմ՝ որ „Ազգիւրի“ ընթերցողների համար անհասկանալի է։ Դա մանկական սոսանատը չէ, բայց ինչը է մասել „Ազգիւրի“ մէջ։

Նոյնպէս անաջող է „Ազգատը“ սոսանատը, անաջող ոչ թէ ընթերցութեան, ալլ զրութեան կողմից։ և զա նման շատ սոսանատըների կը պատճենիք „Ազգիւրի“ մէջ։ Քաշքաշուած, անհամ, անչափ և անհաշակ բանաստեղծութիւններ ո՞րքան կամիք։

№ 2-ում է „Գող վիսիկ“ հէքիաթը, որ մի անդամ թարգմանել ու հրատարակել է Վ. Հ. Ա. Ը. իր ուղրս առակ «զրում» ուստի բոլորին աւելորդ էր մի անդամ աըպուածը նորից լուս հանել, քանի որ նրա տեղը կարելի էր մի որիշը զետեղել։ Նո վիշում եմ Ալֆօնս Գօղեի „Վեստ Չուտալ“ պատճուածքը, որ 2 անդամ է տպուել „Ազգիւրի“ մէջ, նախ 1887 թ. № 2-ում և ապա 1882 թ. № 4—5-ում. . .

№ 3-ում տպուած է մի բոլորովին անմիա զրուածք „Փողը բաժանեց“ վերնոպրով։ զարմանում է մարդ, ի՞նչպէս են կարողանում մանուկների ընթերցանութեան համար աչղափիսի նիւթ մատակարարել։

Քոյլը և եղբայրը „հայրիկ-մալրիկ“ են դառնում. քոյլը անդադար փողինդերվ „տան ծախսերի համար“ զգուցնում է եղբօրը. սա բարկանում է և անտեղի անպատճում է քրոջը. նրանք խովում են, իսկ ձառայ Գրիգորը „մտքումը ծիծաղելով“, խորիմաստ կերպով առում է. „Դրանց—փողը բաժանեց“ Սիթէ. երբ մենք փոքր էինք՝ այդ տեսակ դիմասուռինների“ տեղեակ չենք, չը զիսէինք որ փող անուանուած ինչ-որ մետաղի կոտրների համար „հարազատը հարազատից“ կարող է հեռանալ Այդ „եղբայրը“ որի դէպի քոյլը ունեցած „աէրը չափ ու սահմանից անցել էր“, մոռանում է սէրը և փողի համար անպատճում քրոջը: Ցաւալին էլ այն է որ եղբայրը չէ պատժում, այլ ուրակացած (օհօ) փողոց է զուր զալիս՝ ասաւչի հանդիպողին՝ ամեն բան պատմելու զիսուռութեամբ:

„Փողը բաժանեց“-ի նման վնասակար չէ, բայց օգտակար էլ չէ՝ № 4-ի „Դթասիրտ արշը“. սրա միջից մանուկները չեն ծանօթանալ արշի կեանքի և սովորութիւնների հետ, սա հէքախթ էլ չէ, այլ մի գրուածք է, որ կարգալոց յետոյ մարդ ինքն իրան հարցնում է՝ „ինչի՞ համար է զրուած սա“, Այդ անօգուտ“ պատմուածքները միայն սովորեցնում են թէթէ վերաբերուել զէսի ընթերցանութիւնը և փշացնում են ընթերցադների հաշակը:

№ 4-ի մէջ կայ մի երկար ոտանաւոր՝ «Եղբատի երգերից» վերնագրով. մի երկար, իիստ երկար դատուութիւն, որին հեղինակը անհարմար դատաւելով արծակի ձեւ տալ, տաշել-տաշուղորել է՝ ոտանաւոր զարձնելու համար:

Ընդհանրասպէս „Աղրիւրը“ չափանց շատ տեղ է տալիս „բանատեղծութիւններին“, որոնցից մեծ մասը անաջող է գրուած և դուցէ յարմար լինեն ու ծարազում՝ տպուելու,

բայց երբէք մանկական թէրթում եւ ինչ հարկ կայ այդքան շատ ուսանաւոր տպել; Անա օրինակ, „Բոհուակ“ „Դետսկօ Կտեայ“, „Յալուտիօ Սլովօ“ երեքը մէկտեղ առած մի տարրայ ընթացքում հայլի այնքան թուով բանաստեղծութիւն են տուել, որքան տպել է անդրիւրը 1900 թուին, թո՛ղ Քիշլինեն, բայց՝ ընտիր բաներ:

№ 5-6-րդ „Մալր և աղջիկ“ բանաստեղծութեան մէջ մայրն ու աղջիկը երկար խօսակցութիւն են անում. աղջիկը հարցնում է՝ ի՞նչն է պատճառը, որ մալրը տխուր է, շատ չեմ ու չումից յետոյ մալրը յայտնում է իր գաղտնիքը. ասում է, թէ պթէքել են երես ինձնից բարեկամ, աղջական ամեն, այլ ևս չեն ուզում վրաս նայել անզամ... Նա աղջիկը մեծ զիստ արածի նման սփոփում է մօրը, ասելով թէ որաց երկնի նստածած... Նա մեզ չէ թողած... Ինչու են աղջականները թողել այդ զժրախտ ամօրը. զոյէ նա վաստ կին էր. իսկ աղջիկը չի հարցնում մօրը թողուած լինելու պատճառը և իսկոյն, համոզուածի նման, նստածուն է կանչում:

№ 8-9. Չը հասկացան բանատեղծութիւն. ոտան իր մեռած մօր ուղոր բարուական խրատները կատարում է և շահում «ատելութիւն, հալածանք, չար մատնութիւն, զառը նախանձ, դաւող եղբօր թշնամնքն, նզան հիասթափուել է, նրա թեկները ծալսում են, նա չէ կարողանում զործել, մօրը օգնութեան է կանչում, բայց անյուս Խիստ շոտ է հիասթափուել նա և տէր-հայրը (ք. Մկրտումեանց) խիստ շտապել է մանկական թէրթի միջոցով ծանօթացնել կեանքի զանուութիւնների հետ իր մատաղ ընթերցողներին: Ինչու էք շտապում մանկան աշքը վախեցնում ապազալի ապաշնորհ շրջապատռվ. թո՛ղ մանուկը այժմ երգէ, զուարձանաց,

աեսնէ կեանքի միայն լաւը. նրան գեռ կանուխ է հիասթափութեան հետ ծանօթանալ, թո՞ղ նրա թեսերն ամրանան, առանց նախօրօք կազմուած կարծիքների մոնէ ասսպարէզ, գուցէ նա չը հիասթափուի, գուցէ բարերարուածները չը դաւաճանեն նրան...

Այս համարի մէջ կան Յ արձակ բանաստեղծութիւններ, որոնք գուցէ շատ պատուաւոր տեղ կը բռնէին «Ճարագիշ» կամ «Ըլլիւարասիօնի», բայց ոչ «Աղեիւրի» մէջ...

№ 10. «Պոչառ կատուի պատմութիւնը»—մի հեքիաթ է, որի մէջ իրար ինուկից պատմում են կատուի արկածները. կատուն ասում է. «Կը պատմեմ... թէ ինչու զրկուած եմ պոչից և ականջներից»: Կարդում եմ մի էջ, երկու էջ, երեք, չորս էջ՝ ականջի ու պոչի մասին ոչինչ. կատուն պատմում է իր զլիսին եկած բալորովին ուրիշ արակածներ, և ապա վերջում արդէն, իրբ երկրորդական բան՝ և ալդ իր անպոչութեան և անական ջութեան պատճառը: Այս կատուի արարքները կարդալու զուարձութիւն կը տայ միայն չարսածի մանուկներին. կատուն կարծես պարծենում է իր արածներով, եռլորովին անպէտք մի հեքիաթ է դա, որ եթէ չը տպուէր, աւելի լու կը լինէր:

№ 11. «Ծմբուա այծերն ու խանարհ ոչխարները». ոչխարներից մինը երկար ճառախօսութեան մէջ յորդորում է իր ընկերներին լեռները փափէկ՝ ապաս լինելու համար: Մարդ զարմանում է, թէ ո՞ր քան զարգացած է եղել այդ ոչխարը, որ պատուածական ամենաթունդ զաղափարները նրան յախոնի են... Այդ խելօքները լեռներն են փախչում, բայց յետոյ երկու այծերից զատ լոլորը յուսահատում են և մերգաց զալիս հովուի առաջ. ածեր ոչխարները դողդողալով ամեն ինչ պատմեցին նրան, բայց ինչպէս պատմեցին նրանի օրինակներով կը կարուրանայ տալ մի լրիւ գործ, որ ազգեցութիւնը կը թողնէ մանկան վրայ:

պատմեցին, ո՞ր լեզուով. ոչխարի. իսկ հովիները չեին հասկանում ալդ լեզուն... Դեռ պատմութեան սկզբում ջահէլ ոչխար-ճառախօսն ասում է. «...մենք լեզու չոնենք՝ մեր սրտերը նրանց առաջ բանալու»: Հակասութիւններ, որ ամեն մի ուշիմ և փոքրի շատու սրամիտ մանուկ կը նկատէ:

№ 12 „Ծննդեան օրերը“ փոքրի շատէ տանելի և «մանկական» անունը կրելու արժանի բանաստեղծութիւն է. բայց սրա մէջ էլ արտաքայտուել է մեր «մանկական բանաստեղծների» ընդհանուր թուլութիւնը՝ ամենավերջում դնել բարոյախօսութիւն: 12 տողից յետոյ բանկարծ, այն էլ առանց կապի, գրուած է. «բայց, սիրելիք, երբեք չը մոռնաքմեր որրեւին սոված ու տնանկ»: Զը կամ համարեա մի բանաստեղծութիւն մեր մանկական զրականութեան մէջ, որ չը վերջանայ բարոյախօսութիւնով: Եկնպէս են կարծում, թէ մանուկը խրառը կարդալիս կամ բերանացի կրկնելիս պիտի համակուի մարդասիրական, բարոյական, աստուածասիրական և այլ բարձր ու վսիմ գաղափարներով. որ նա այդ ոբայց, սիրելիք և այլն՝ տողերը յշշելով խոկոն կը դնոյ փողոց և իր բոլոր ոչիր ու չամիչը՝ կը տայ զբումը սառած ու քայցած որրեւին: Ոչ երբեք, ալդ չի եղել և լինելու էլ չէ, որովհետև ալդ բանաստեղծութեան գործը չէ. ալդ գործը յառկացրէք ո՞չ թէ բանաստեղծութեան, այլ արձակին. որովհետեւ այստեղ, արձակի մէջ միայն հեղինակը պատկերաւոր կերպով և կենդանի օրինակներով կը կարուրանայ տալ մի լրիւ գործ, որ ազգեցութիւնը կը թողնէ մանկան վրայ:

„Քաղաքիկինների պատմութիւնից“ (Քննական զդուարձալիք) բան չը՝ հասկացանք: Զինական երկու խաղափարիկին սիրահարուում են և ո-

ըոշում պասկաւել, տուն զնելը հայց չը թողին մարդիկ նրանց հասնել այդ բաղդին։ Մեռաւ խեղճ Դաֆօ-  
ֆէլը, սրտի մէջ ջապի սէրը ամուր  
պահած։ Ջապն էլ կոկից մաշ-  
ուած գերեզման մուաւ, խոկ նրա  
զնած տունն այժմ վարձու է տրում։  
Այս փոքրիկ պատմութիւնը մէնք  
փորձի համար կարդացինք 8 տորե-  
կան մի տղի և նա խոկոյն հարց-  
րեց. „Ի՞նչից մեռաւ, ո՞վ մեռցրեց,  
ինչո՞ւ, և մենք պատասխան չը գը-  
տանք տալու..”

Բնական գիտութիւնից տոլուած  
յօդուածներին ուղղակի անհամեշտ  
է կցել նկարագրած փորձերի և ա-  
ռարկանների պատկերներ ու ձևեր

Վերջացնելով մեր տակելիքը, պէտք  
է նկատենք, որ մի տարուայ ընթաց-  
քում „Սպրիւր“ չէ տուել ո՛չ մի ինք-  
նուրուն աջող գրուածք։ Թարգմանա-  
կանների մէջ լս են. „Քիկի-սիկի-  
տարի“, „Ծոռի միջին“, „Մրջենը  
րժշկի մօտ“։

«Եղրիւրի» համարները առանց  
այն էլ վտառ են, իսկ եթէ նրանց  
բոլմարկութիւնից մի երկու ան-  
պէտք մասերն ու ոտանառուները  
զուրս զցենք՝ թերթը շատ խոճալի  
կը զառնաց։ Յատրի է, որ „Սպրիւրի“  
խմբգրութիւնը չէ ուզում խոստո-  
վանել իր կատարեալ ապիկարու-  
թիւնը և յանձնել աւելի կարող  
անձանց ձեռքը մեր միակ մանկա-  
կան ամնադրի զեկավարութիւնը։  
Մանկական թերթ խմբագրել կա-  
րող է միայն մանկավարդը, պէտ-  
պէս կ'արդարանայ։ “ԵՇՆԱ, ԿՈՂ  
ԵԱՊՈՒԱԿԵ...” և այլն առածը։

### ՀԱՅԹ.

Հանիկս Ամեօրեայ, փետըր-  
ուար Վիեննայի տրս ամսաթերթը  
զնալով աւելի և աւելի անհետա-  
քրքրական է զառնում նոյն խոկ  
մասնացիւազան տեսակէտից։ Մէնք  
այս համարի մէջ մատնացուց կա-  
նենք միայն մի յօդուած, որ փոքրի

շատէ նորութիւն է ներկայացնեսում։  
Դրա վերնապիրն է. անակարի—Ռեբար-  
տուի պատմութիւնն ըստ Ասորես-  
տանեան և պալատիկ սեպագիր արձա-  
գրաթեանց։ Առ այժմ տպուած է  
միայն „Յառաջարանութիւննը“, ո-  
րի մէջ յօդուածաղիրը, օգոստեալի՛  
Գերմանիացում վերջերս լուս տե-  
սած հետազոտութիւններից, ամ-  
փուում է այն տեղեկութիւնները,  
որոնք վերաբերում են Ռեբարտեան  
թագաւորութեան ժամանակներին։  
Մատնացոյց Ենք անում այս յօդ-  
ուածը այն պատճառով, որ մենք  
հայերս, պիտի արմատական փոխա-  
խութիւնների ենթարկենք մեր հին  
պատմութիւննը, քանի որ սեպագիր  
արձանագրութիւնների ուսումնակի-  
րութիւննը այժմ շատ հանուատոնն  
փաստել է ձեռք բնել, որոնք մեր  
աղջացին աւանդութիւններին բոլո-  
րվին այլ կերպարունք Են տայիտ  
և պարզում են պատճառական այն-  
պիսի հանգամանքներ, որոնք յայտ-  
նի չեն եղել Խորենացուն։ Մեր հին  
պատմութիւննը նոր պիտի ըրուի. և  
նրա աղջիւնները այլ ևս չեն կա-  
րող լինել հայկական, դիսուկոն  
ուսումնասիրութիւնները պիտի հիմք  
գառնան արդ նոր պատմութեան։  
Հասկանալի է, որ որքան լու և  
բազմակողմանի կերպով ուսումնա-  
սիրուեն սեպածկ արձանագրութիւն-  
ները և նրանց յամանակները,  
այնքան կը հեշտանայ մեր ապա-  
գալ պատճառը դործը։

Բազմավելէպ, ապրիլ։ «Մկրտիչ  
Անձմենան» յօդուածի մէջ կենա-  
գրական տեղեկութիւններ են հա-  
զորդում թիւրքանայ բանաստեղծ  
Անձմենանի մասին։ Մէնք չենք հա-  
նաչում այդ բանաստեղծին, զոնէ  
նրա ուսունառուների որ և է յոզ-  
գածու չենք տեսել. բայց թիւրքա-  
հայերը շատ են գովում այդ բանա-  
ստեղծին։ Ներկայ կենսագրական  
յօդուածից շատ դժուար է մի հատ-

Կացարութիւնն կազմեւէ թէ ինչ տեսակ բանաստեղծ է պ. Աճէմեան, որովհետև դա աւելի քույցակի ծառայութեանն է, քանի գրական չօգոսած մի գրական մարդու մասին։ Քույցակի ծառայութիւննը մեզ իմաց է տալիս որ պ. Աճէմեանը ուսում է առել Տիբիթարեանների մօտ, ծառապատմ է թիւրքաց հեռովորական վարչութեան մէջ, ունի Յամանինեան շքանշաններ և պատմանցութիւնն չէ ուրեմն երբ Աճէմեան էֆիլուտին ալ գտասակարգելու լլլանքի ի շարս այն հաւատարիմ հայ պաշտօնատարներու, որոնց ստ Օսմ. գահն ու պետութիւնը մատուցած ծառայութիւնները միշտ և ամեն ժամանակ զնահատուած են վեհ։ Սովորաններէն և օսմաննետն Աւագանիին։ Արքանը շատ լու Աճէմեան էֆիլուտի համար բարց երբ դուք ներկայացնում էք Նրան ոչ իրբե հեռազրական պաշտօնեաչ, այլ իրբե անոնչ ունեցող մի բանաստեղծ, մի՞թէ ուրիշ բան չէք գտնում առելու լացի նրանից, որ այդ բանաստեղծը օսմաննեան պետութեան նույրուած մի որոշունեաչ է։ Մխարն ծանօթութիւնն մէջ, մանր տառերով քերառած է մի հեղինակի կարծիքը Աճէմեանի մասին. արդ հեղինակը, համեմատելով Աճէմեանին Պէշկիթացիւնի հետ, գտել է, որ Աճէմեանը չէ կարող հասնել Պէշկիթացւեանին։ «Մին (Պէշկիթացւեան) բանաստեղծ լինելու համար հնած, միաը բանաստեղծութիւնն սիրող մէկ եղած. մին՝ Պահնասեան աղոյ գաշնակը կը լորինէ, միան՝ անոր հեշտընկալ եղանակները կածէ. սու տակզող մըն է, նու լորդարող մը»։ Ես վեհապութիւնից լեռոյ մենք չենք կարողանաւմ հասկանալ թէ էլ ինչո՞ւ Աճէմեանը Կ. Պօլսի հայ բանաստեղծութիւնն վատոքն է համարում։ Յամենայն դէպս, այս կենսագրական լոյսուածը մի աւելյորդ փաստ է թէ արևմբ-

առան հայերը ինչպէս են վերաբերութէ դէպի դրական մարդիկ. փոխանակ փառաքը տալու - դպրասանք և ներքոցներ, փառանակ քննական հայեացքների - տեղեկութիւններ հեղինակի ծառայութեան և շքանշանների մասին; Այսպիսի հանդամանքների մէջ, այն մարդիկ, որոնք չեն կարգոցել այս կամ այն հեղինակին, ի հարկէ չեն կարող մի ամփոփ, պարզ հասկացողութիւն կազմել նրա մասին:

թէ Մխիթարեանների դէմ զրողները „զգական սրբիկալ“ էին։ Ամեններն ոչ Սուենիան Ռականը աղաստամիտ, առաջադէմ հայ մամուլի համար մի երախոսար գործիչ է։ 1859-ին նա սկսեց հրատարակել Պարիղում «Արևմուտք» լրագիրը։ Մեր «Հիստիսափայլ» խորին համակրութին էր ցոյց տալիս «Արևմուտքին» և համանուշ էր գրում Միքայէլ Դավթանդեանը Ռականի մասին («Հիստիսափայլ», 1859, № 9)։ «Աղնին հայը զոհելով իր ժամանակը կամակար ընդունում է այս հրատէրը և համար «Արևմուտքը» երևում է հայերի աշքին։ Մենք գիտենք մի աղաստախօս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մէջ։ Արդպիսի հեղինակը ոչ թէ միայն պիտի կուրծք մաշէ, աչքի լոյսը թափէ ազգին նոր զաղափարք տալու համար, այլ և պիտի տանի այն սե-սե բամբասանքներին, որ անխօրհուրդ խաւարասէրքը անշուշտ ուղղելու էին մի արդպիսի հեղինակի վրայ։ Ասիացին չէ կարող մերկանդամ տեսնել հշմարտութինը... այս պատճառըվ ևս տեսնում ենք զանազան խլրամանք և թշնամական բարձակմունք «Արևմուտքի» թէ հիմնադրերի և թէ շարագրալի ջանքը և աշխատանքը ունախնացնելու համար աղիտներ, թէ մինչև ե՞րբ պիտի յարատու է Հայ-Ճիդլիթիների աղդեցութինը մեր ազգի վրայ... Ոհ, օրերով, ամիսներով և տարիներով ողբալու նիւթ։« Ահա ինչ է առունույն Ռականի մասին Վիեննայի Մխիթարեան միարան Հ. Գալլէմֆեարեան։ Ա. Ռականներն իրութիւնը ցուցընեն զրողին սուր միտքը, զգացմանց աղնութիւնն ու դատողութեան անկեղծութինը, վիճական ճարտարար ձեւեր, և բաւական մաքուր աշխարհաբարդ («Պատում. հայ լրագր., եր. 191»)։ Մենք մի ուրիշ անգամ պիտի խօսենք Ռականի մասին։ առաջմ մեղ հետաքրքրողը

այն անարդ վարմունքն է, որ թուլ է տուել «Բաղմակէսոլ» դէպի մի մարդու ցիշատակ, որ այնքան պատուաւոր տեղ ունի լրագրութեան պատմութեան մէջ։ Եւ մենք բողոքում ենք վրէժինդրութեան այդքան ստոր միջոցի դէմ... —

«Կավազսկի Յետնիել», ապրիլ։ Հետաքրքրական է Ավգէնիլի «Հայերը Ռումանիայում» փոքրիկ չօգուածը, որի մէջ նկարագրուած է, համառու գծերով, ալդ հայ զաղթակարութեան պատմութիւնը։ Որքան էլ համառու լինի նկարագրութիւնը, բայց նրա մէջ տեսնում ենք հայ ազգի զարաւոր գծրափառութիւններից մէկը, երբ նա անբարեկածող հանգամանքների պատճառով չէր կարողանում մնալ իր արիսնաներկ հայրենիքում և վախչում էր օսուար երկիրների Օսուար երկնքի տակ էլ նա, իրեմ անտուն և անզլուի ազգ, ստիպուած էր դէս ու դէն թափառել հանգստութիւն գոնելու համար և ենթարկում էր հարիւր մի զրկանքների, բռնութիւնների։ Ռումանիայի հայ զաղթականութեան պատմութիւնն ունի մի քանի արիսնու էներ։ Կրօնի համար մի քանի անգամ հայածանքներ են հոմնուել նրա զէմ և կատարուել են բարբարոսական ամօթալի արարքներ, որոնց հեղինակներն էին ռումանական իշխանները։ Հետաքրքրական նորութիւններ են նախ այն, որ Մօղավիալի իշխան 1572 թուին ընտրուել է մի հայ, որ լուտնի է Ցովհաննէս Հայ կամ Ցովհաննէս Ահարկու անունով, և երկրորդ այն, որ Խոչչավալի հայոց եկեղեցու միակ զանգակի վրայ արձանագրուած է։ «Նուէր Գիտրացի Առաքելից Ս. Տաթելի վանքին 693 (1244) թուին։ Այդ զանգակը, ուրեմն, տարուած է Խումանիա Տաթելի վանքից։ Խումանիայի հայերի ներկայ գրութեան մասին լոգուածազիրը ասում է. «Յարույական տեսակէտից,

ռումանահայերը անհամեմատ բարձր են իրանց մօլդալ-վալախացի համաքաղաքացիներից. աշխատասպիրութիմնը և երեխաների բարոյական զաստիարակութիւնը ամեն մի ընտանիքի զիլաւոր հոգմն են կազմում։ Հայ աղջկեներն ու կանայք զանազանում են թեթևամիտումնունում հիմներից ոչ միայն իրանց տնարարութեամբ և տնտեսական փորձառութիւնների, այլ և առևտասրակ իրանց գարքով։ Առհասարակ Խումանիայի հայ աղջարնակութիւնը մտաւորի կողմից աչքի է ընկուում թէ մասնաւոր և թէ հասարակական կետնքի մէջ։ Ի պատիւ Խումանիայի հայերի պէտք է աւելացնել, որ ուրիշ աղջարութիւնների և կրօնների ներկայացուցիչների վերաբերմամբ նրանք, ընդհանրապէս, համբերող են և չեն ցուց տալիս իրանց բնաւորութեան մէջ այնպիսի կոշտ դժկու, ինչպէս այդ կողմից հռչակուած ռումանացիները, որոնց երակների մէջ հսուամ է կասապի պօլուգինների և հսումէական այն բանցաւրների արինը, որոնք աղջուածում էին հուսի այս զալթականացիները, որոնց երակների մէջ հսուամ է կասապի պօլուգինների և հսումէական այն բանցաւրների պարմանիայի և Գերմանիայի համալսարանները։ Ամսագրի այս համալսարաններից ուշադրութիւն են դրաւում թարգմանականները։ Դրանց թարգմանականները մատնանիշը կ'անենք

զրացի բանաստեղծ իշխաններ Օլբէլիանիի և Երիսթօվի ոտանատորները, ինչպէս նաև պարսից բանաստեղծ Օմար-Խաջիամի ոտանաւորները, (վերջիններս թարգմանել է պ. Աւմանեց)։ Բոլոր այդ թարգմանութիւնները շատ լաւ տպաւուրութիւն են թողնում իրանց հիւթալից, ազդու բանաստեղծութեամբ և մտքով։ Մեր հայ բանաստեղծները զնալով, մանրանում են, զառնում են արևմտեան բանաստեղծութեան նիհար հետեղներ, բայց մենք մենք էլ պիտի ունենանք մեր վաս երեակացութիւնը, մեր տանզութիւններն ու իդէալները, մեր սոխակն ու վարզը։ Ընթերցովի ուշադրութեան ենք յանձնում նորմերս վախճանուած իշխան Երիսթօվի մասին գրուած յօդուածը։ Նշխան Երիսթօվը, այդ ըլաւագոյն վրացին, ճշմարիտ հայրենանէրը, իր հուրենիքի և ժողովրդի տիպիկական ներկայացուցիչը։ Կէս զարից աւել հանդիսացել է իր մալրմնի լեզուի և զրականութեան անխնչ մշակ։ Նա սիրել է տուել այդ լեզուն, նա երգել է որ օտարի զրախաւարի չի փոխի հայրենի մի հատ ժամանակի հայրանիքի կ'անդիմանի մասին այս արարութեան մասնակի կարող է կարող կ'ինք մենք սովորել մեր հարեաններից, եթէ նայելու և այդ լար օրինակ վերցնելու բնորնակութիւն ունենալիք...»

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1901 թ. 5 ապր., Նոր-Նախիջևան:

Խնդեմ տեղ տալ հետեւեալ երկտողիս ազգօգուտ ամսագրիդ էջերում.

«Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մտադիր է մօս ժամանակում առանձին հրաշարակութեամբ լոյս ընծայել ազգիս բանասեղծ հանգուցեալ Ռաֆայէլ Պատկանեանի բոլոր անհիպ եւ նրա երկասիրութիւնների երկիատոր ժողովածուի մէջ չը մտած աշխատութիւնները, իքրեւ երրորդ հասոր։ Ուստի խնդրում է այն անձանց, որոնց մօս գտնուում են հանգուցեալի ինքնաձեռագիր նամակները, ուսանաւորները եւ կամ արձակ գրուածները, ըստ կարելոյն շուրջով ուղարկել նրանց Գրիգոր Զալխուցեանին հետեւեալ հասցեով՝ *Խաչուցեան ու Ջոնy, Ղրիգորիո Կալխանյանy, որոնց փոխարէն անյապաղ կը ստանան նրանց պատճենները՝ իսկ որոնի չեն կամենալ բնագրերը բողնել Ընկերութեանս, այնպիսիններին դրանք, ընդօրինակուելուց յետոյ, անպատճառ կը վերադարձնուեն»։*

Նախագահ՝ ԳՐ. ԶԱԼԻՔՈՒՇԵԱՆ

Քարտուղար Մ. ՊՈՊՈՎԵԱՆ

Պ Ա Տ Ա Ս Ի Ն Ե Բ Ը

**Նիւ-Եօրկ.** Հ. Գ. Մ. Վերադարձրէք սխալմամբ Զեզ ուղարկուած աւելորդ  
համարը:

**Խաւելօվ.** Ա. Մ.—Կարգացէք խմբագրական կանոնների Զ-րդ յօդուածը:

**Թաւերիզ.** Ա. Գ.—Թարգմանոթիւնը կարող էք լետ ստանալ:

**«Մուրձի»** հիմ բաժանորդներին. — 1900 թոփ բաժանորդները թո՛ղ բա-  
րեհաճեն շուտով լրացնել բաժանորդագնի մնացորդը, որպէս  
զի խմբագրութիւնը վայօօօֆ իմանալ իր տարեկան բաժա-  
նորդների թիւը:

Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ Ը

«Մուրձի» մարտի համարում մասել են ի միջի այլոց  
հետեւեալ վրիսպակները.

Երես Տալ	Տաղաւած է	Ավել է լինի
64. 6 վ.	<b>Տիկ. Յօկերառ</b>	<b>Տիկ. Ակրէ:</b>
75. 12 "	ալդ զիւկերը	չորս իշխանները
144. 5 ն.	... նսկոյն հրաշք պատահեց. ... նսկոյն հրաշք պատահեց. Բուղդհան...	Որպէս զի նրանք տիրեն գո- հարին, Բուղդհան...
199. 17. վ.	շողշողուն	շողշողաց

Հրատարակիչ Եւ Ժամանակաւոր իմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵՍՆ

Նուէրներ Գամառ-Քարիպայի մահարձանի համար

Առ 13 դեկտեմբերի 1900 թ. Գամառ-Քաթիպայի մահարձանի գումարն էր 2,521 ռ. 81 կ.:

Ստացանք՝ տոկոս 56 ռ. 65 կ. պ. Ա. Գեանջեցեանից, պ. Յ. Թումայեանի և ընկ. ծառայողներից հանգանեակած 36 ռ. 50 կ., պ. Մ. Շորշորեանից և պ. Խաթրանեանից տաս-տասոը ոռութի, պ. Ա. Յարութիւնեանից և վ. Մելիքեանից 2 ռ. 80 կ., ընդամենը՝ 115 ռ. 65 կ.:

Ուրեմն ողջ գումարը առ 25 ապրիլի կը լինի մեր մօտ 2,637 ռ. 76 կ.:

Անմահ բանաստեղծի լիցատակը յարգողներից սպասում մնք գեռ նուէրներ՝ Հախչեան և Դոն, Գրիգորի Չալխովյանը.

1—1.

ԳՐ. ԶԱԼՅՈՒՇԵԱՆ

Մ ա մ ո ւ լ ի ս ա կ է  
Ա լ է Ք Ս Ա ն Դ Բ Ծ Ա Տ Ո Ւ Բ Ե Ա ն ի

## ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ

Ընթացութիւնը:

Գրքի երեսը զարդարուած կը լինի նկարիչ վ. Սուրենեանցի նկարով:

Դինն է 50 կողէկ

Դիմու հեղինակին՝ Մոսկա, Садовая—Կարետная, մեբ. Կոմ. Խօսալսկաց, Ալ. Պատուանու. 1—3

Բ Ա Զ Մ Ա Վ Ե Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Բ Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Տարեկան գինն է 10 ժրանկ:

Դիմու Rédaction du «Bazmavet» St. Lazare Venise.

Բ Ա Ն Ա Ս Ե Ր

Հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական  
եւ հնական

կը հրատարակուի երեք ամիսը մի անգամ, տարեկան չորս  
գիրք, միօրինութեամբ կ. Հ. Բասմաճեանի:

Տարեկան գինն է 20 ֆր.—8 ռուփի:

Դիմու. Basmadjian, 112. B. d Rochechouart. Paris

ինքնավ. ընդհանուր տեսչը. . Բուլժուադիսվի ընդհանուր բնաւորութիւնը.—Անեւոր և շքաւոր զառակարգելի շահնշահ. —Զայնատութիւնն մի—թէ երկար ժողովներում. —Գործունէութեան որոշ ծրագիրներ և խմական կուսկցութիւններ. —Զքաւոր զառակարգերին ևս կուստուրական բարիներ են հարկաւոր. —Զուրացուի ժոտանդների նույն նույն ժողովներում առաջարկութիւն. —Յարձագոյն Հրաժարակական բարութիւն. —Ֆիլիժնների նպաստակայտմար գործածութիւն. —Յարձագոյն Հրաժարակական բարութիւն. —Ֆող. լուսաւորութեան նոր մինհատրի համանը. —Կառավարչական հազարդագրութիւն բարձրաւոր գոյն գործադների մասին, Ա. Ա.

220

18. ԳԱԼԻՍՈՒԱԿԱՆ ԿԵՑՆՔ. Կրէցիսիանական հարցը զաւատներում. —Նրա էտիթիւնը. —Ժողովուրդ և նրա իրաւունքները. —Օրինականութիւն. —Խնչից է առաջանաւմ ընդհարումը. —Միասնացիք դէպրու. —„Վազօր“ քննիչ. —Երկու կողմերը. —Գամմա. —Քամթիզաւի մահարձանը. —Նորհամսիչնանի Բարեգործական Ընկերութեան որոշակները. —Հայպահ Մարզասիրական Ընկերութիւնը. —Բնաւոր կողենցիս և զաւաները, Ա. Ա.

222

19. ԱՐՏՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԻԹԻՒՆ. Զինացիններից տուգանք արինով և սոկով. —Մանջուրական հարցը. —«Չը կու չարիք առանց բարիքի». —Մերձաւոր Սրենելքի անշարժութիւնը. —Խոլամական կրերականութիւնը. —Հուերի կասարելիք դերը Պատկաստանի վերածնութեան գործում. —Պարականայնի բարոցական հարցի կարմորութիւնը. —Հակակերական ցուցիր Սորմնիաբում. —Սպասական մինիստրութեան սուաջին քայլերը Սպանիաբում. —Հուկական կողերական օրինագծի ընդունուելը Գուսնիական սրարամինաւում. —Հոգեիրիութեան համար հաւաքուած գումարներով առեսուր. —Դիպլոմատիստական հակասութիւններ, Ա. Ա.

240

20. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏՈՒՐՈՂՄՈՒՆԻՑ. Նամակ Բերլինից,  
Ե. Թովիչեանի . . . . . 246

21. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ,  
Յ. Քոչարեանի . . . . . 252

22. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ. Լ. Ա. Մամուրեան, Լ. . . . . 260

23. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 271

24. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ . . . . . 278

25. ՊԱՏՍԱԽԱՆՆԵՐ . . . . . 279

26. ՅԱՅՏԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 280

27. ՅԱԼԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», Վէպ Լ. Տօլսովի, Բարգմ.  
Տ. Յովիաննիսեանի . . . . . 81—112

ՃԱՐՈՒՆԱԿԻՑԻՄ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

# ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄԱՆԳԵԼԻ

Խորագործական տեսաբանութեան ԵԲՀ՝ պ.պ. Լեհուն ՍԱՐԳՍՅԱՆ, և լիօն:

«ՄԱԼԻՔ» ամսագիրը ունի հայոց և հետեւեա բանակիցներ

1. Վէպեր, պատմուածքներ, գրաման, 2. Բանաստեղծութիւններ, 3. Գրական-պատմական և հրապարակիական լուսածներ, 4. Բնանապատմթիւն և Մատենախօսութիւն, 5. Նորութիւններ ոռաց և արտասահմանեան գրականութիւններ, 6. Գիտութեան, գեղարվեստի և աւելինիկալի աշխարհից, 7. Ծրետեսական հարցեր, 8. Ներքին տեսութիւն, 9. Գառանկան կիւննք, 10. Արտաքին տեսութիւն, 11. Նամակներ արտասահմանից, 12. Պարբերական հրատարակութիւններ, 13. Յաղաքարութիւններ ամեն իրուուի:

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

**Առանձակագույն տարիեկան՝ 10 սուր.**      **Առանձակագույն՝ 30 դրամներ.**  
 "                  **կըս տարիին՝ 6 ս.**                  "                  **18**

կես տարին 6 18

" 1 മിസ്റ്റർ 1 " 3 "

աՄՈՒՐԵՆ տնտեղին կրտելի է զրուել Թիմբիսում—խմբողբատանը  
(Երևանին հարապարակ, ու Խարսցեանիլ):

Чиагичерѣніи тајъ съѣѣвѣнѣи ѿѣтѣре ѣ тѣмѣрѣ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

**Արևումինհանգ**՝ Tiflis, Rédaction de la revue *Mourteh*“

**Դասօպուրիւս.** Ով զժուարաններ է ստրեկան բաւանդրութիւնը (10 ա.) վճարել միանուագ, կարող է առ վրա-քան (պահանջ է) -

մարտի 1-ին 3 ա. կ մայիսի 1-ին 2 ա.);

» ՅԱՅՏՈՐՄԱՐՈՒԹԻՒՆԵՐ զետեղելու համար պէս

Մի երես բանող լոյսարարութեան համար . 15 ս

$\frac{1}{2}$  " " " " " 8 "

• 22 22 22 22 22 22 22

**ԱՊԻԱԹԻԿ կամ ԶԲԻ** ոչ ո՞վի չէ ուղարկելու «Մուշ»:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

թերթի 1. Խմբագրութիւնը խնդրում է լոգուածաղկիքներից՝ զրել սարպ և

2. Զենքունուած միջ լոգուածները սահման էն խմբագրասանը  
6 ամբակ ինչ փոքր լոգուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-  
պարձնուած, 2ևսպիրը չետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանա-  
պարհածախորդ

3. Φημιωδέλευρη φαρδωστρούθιαν χωθήρ προπονιμ ή θεραπευτήριν ρ.  
4. Αριθμαργούθιβαν ρήγαν ή φερωφαντούμ πικαρκούαδ γοητειαδέλευρη  
φυσικούσιετο λημήδην διαδικασίαι προσαρτήσει.







